

ՀՐԱՉԻԿ ՍԵՎՈՅԱՆ

# ՓՐԿՈՒԹՅԱՆ ԽԱՐԻՍԻՆ



---

ԵՐԵՎԱՆ 2007

**ՀՏԴ** 891.981–8 Սևոյան : 891.981.0  
**ԳՄԴ** 8437 + 83.33  
**Ս** 417

**Սևոյան, Հրաչիկ**

**Ս 417** **Փրկության խարիսխ:** Հրաչիկ Սևոյան.– Եր.:  
«Զան ակ–97», 2007:– 416 էջ + 1 թերթ կավճ. ներդիր:

Հեղինակի ներկա ժողովածուն ընդ րկում է արծակ ստեղծա ործությունները վեպ, դրամա և Սայաթ–Նովայի ծննդյան տարեթվի առեղծվածը վերծանող աշխատություն: Հեղինակը ցուցաբերել է եղարվեստական յուրովի մոտեցում դրանով հանդերձ հարազատ մնալով պատմությանը:

**Ս**  $\frac{4702080206}{0003(01)-2007}$  2007 թ.

**ԳՄԴ 8437 + 83.33**

**ISBN 978–99941–378–1**

© Սևոյան Հ. Ե. (ժառանգ ներք), 2007 թ.

# ՓՐԿՈՒԹՅԱՆ ԽԱՂՐԻՍԽ

(Վիպակ)







## ԳԼՈՒԽ Ա

### ԵՐԿՈՒ ԿՐԱԿԻ ԱՐԱՆՔՈՒՄ

*Եվ երկու թագավորները՝ Հուենաց և Պարսից, իրար հետ խորհուրդ արին և համաձայնություն եկան: Նրանք հարմար համարեցին նախ Հայոց աշխարհը երկու բաժին անել իրար մեջ: Նրանք ասում էին. «Մեր երկուսիս միջև ընկած է այս հզոր և հարուստ թագավորությունը. լավ կլինի, որ այս միջոցով թուլացնենք ու խանդարենք այս թագավորությանը՝ նախ երկու մասի բաժանենք այս երկու Արշակունի թագավորներով, որոնց նշանակեցինք, հետո կաշխատենք նրանց էլ կրճատել, աղքատացնել և մեր ծառայության ենթարկել, որպեսզի մեր մեջ չկարողանան գլուխ բարձրացնել»:*

#### ՓԱՎԱՏՈՍ ԲՈՒՋԱՆԴ

Ճակատագրի դաժան բերումով՝ Հայաստան աշխարհը ռազմական տեսակետից կարևոր դիրք էր գրավում Արևելքի և Արևմուտքի հզոր տերությունների՝ Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև, որի պատճառով դարձել էր արյունահեղ պատերազմների թատերաբեմ: Հայոց աշխարհի համար հատկապես կործանարար հետևանքներ ունեցան չորրորդ դարում պարբերաբար կրկնվող պարսկա-բյուզանդական ընդհարումները:

Չորրորդ դարը Հայոց աշխարհի համար սկսվեց մեծ իրադարձությամբ. 301 թվականին հայ Արշակունիները Հայաստանում քրիստոնեությունը հռչակեցին պետական կրոն և Պարսկաստանի դարավոր

ձնշումից ազատվելու նպատակով իրենց հայտարարեցին Բյուզանդական հզոր կայսրության դաշնակից: Բնականաբար, հայերի այդ քայլը Պարսկաստանի համար ձեռնտու չէր, և երկու աշխարհակալ ախոյանների՝ Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև պատերազմը բորբոքվեց մի նոր ու կատաղի ուժով: Սակայն դարակեսին Բյուզանդական կայսրությունն ընկրկեց Պարսկաստանի հսկայաթիվ բանակների առաջ, որի հետևանքով Բյուզանդիան 363 թվականին ամոթալի պայմանագիր կնքեց Պարսկաստանի հետ, որով պարտավորվեց չօգնել հայերին, եթե նրանք պատերազմեն Պարսկաստանի դեմ:

Բյուզանդիայի այդ ստոր արարքը ստիպեց հայերին վարել երկդիմի քաղաքականություն. բյուզանդական վտանգի դեպքում դիմել պարսկական օգնությանը, իսկ պարսկական վտանգի դեպքում՝ բյուզանդական օգնությանը: Եվ երբեմնի հզոր ու անկախ Հայոց աշխարհը, անկախ իր կամքից, ձոճվելով աջ ու ձախ, դուրս էր գալիս հավասարակշռությունից, որը լավ բան չէր խոստանում նրա սպագային:

Աշխարհակործան այդ վիճակը իր բացասական կնիքն էր դրել նաև երկրի ներքին կյանքի վրա: Հայ նախարարական տները բաժանվել էին երկու հակադիր բևեռների: Նրանց մի մասը գերադասում էր երկիրը ենթարկել պարսկական տիրապետությանը և այն ազատ պահել բյուզանդական նվաճումներից, իսկ մյուս մասը, վախենալով, որ այդպիսով Պարսկաստանը հեշտությամբ կիրականացնի իր վաղեմի նկրտումները՝ Հայաստանը Պարսկաստանին ձուլելու ցանկությունը, ձգտում էր զգուշորեն դաշնակցել Բյուզանդիայի հետ: Այդ երկպառակությունը տեղիք էր տալիս անդադար եղբայրասպան ընդհարումների, որոնք ուղեկցվում էին ներիշխանական դավադրություններով ու քստմենելի ոճիրներով: Մանր ու մեծ դավաճանությունները երկիրը տանում էին դեպի կործանում:

Չորրորդ դարը հազիվ էր թևակոխել իր երկրորդ կեսը, երբ բյուզանդացիները դավադրաբար սպանեցին հայոց Պապ Արշակունի թագավորին: Որոշ ժամանակ անց դավադրաբար սպանվեց նաև հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը... Մանվել Մամիկոնյանին հաջողվեց Պարսկաստանի օգնությամբ գահ բարձրացնել Պապի պատանի որդուն՝ Արշակին, իսկ ինքը դարձավ պատանի թագավորի խնամակալն ու սպարապետը: Պարսիկները, օգտվելով այս առիթից, ցանկացան Հայաստանը վերջնականապես ենթարկել իրենց: Մանվել Մամիկոնյանին օգնող 10 000-անոց պարսկական բանակի հրամանատար

Սուրեն պարսիկ զորապետը պարսկական արքունիքի կողմից հռչակվեց իբրև Հայաստանի մարզպան: Այդ քայլով Տիգրանը խորամանկորեն Հայաստանը դարձրեց Պարսկաստանի մարզ: Մանվել Մամիկոնյանը, կռահելով Տիգրանի այդ խարդախ մտադրության վտանգավոր հետևանքները, իր շուրջը համախմբեց բյուզանդական կողմը պահող հայոց նախարարներին և նրանց օգնությամբ Հայաստանից դուրս քշեց պարսկական բանակն ու նրա հրամանատարին: Սակայն շուտով մահացավ Մանվել Մամիկոնյանը: Արշակ թագավորը, չկարողանալով ղեկավարել երկիրը, իր դեմ գրգռեց պարսկական կողմը պահող հայ նախարարներին: Վերջիններս դիմեցին պարսկական Շապուհ թագավորին և խնդրեցին, որ նա Հայաստանին նոր թագավոր կարգի:

Շապուհը նման հարմար առիթի էր սպասում: Նա դեռ չէր մոռացել Մանվել Մամիկոնյանի «երախտամոռ» արարքը, ուստի անմիջապես ձեռնամուխ եղավ Հայաստանին նոր թագավոր կարգելու գործին: Նրա նպատակը դարձյալ մնում էր նույնը՝ Հայոց աշխարհը դարձնել Պարսկաստանի անբաժանելի մասը: Սակայն նա այս անգամ ընտրեց Հայաստանին տիրելու նոր՝ ավելի խորամանկ ուղի: Շապուհը առաջվա նման Հայաստանին մարզպան չնշանակեց, այլ այնտեղ Արշակունիների տոհմից թագավոր ուղարկեց:

Բյուզանդական ոսնձգություններից ապահով լինելու նպատակով հայ Արշակունի թագավորները հաճախ էին դիմում Պարսկաստանի հովանավորությանը և, որպես հավատարմության երաշխիք, պարտավորվում էին Պարսկաստանին ռազմական օգնություն ցույց տալ նրա մղած պատերազմներում: Այդ նպատակով Պարսկաստանի մայրաքաղաք Տիգրանում պահվում էր որոշակի քանակությամբ հայկական այրուձի (հեծելազոր)՝ Արշակունի որևէ սեպուհի գլխավորությամբ: Շապուհ Գ-ի օրոք Տիգրանում գտնվող հայոց այրուձին ղեկավարում էր Վռամշապուհ Արշակունին, որը երկար ժամանակ իր ընտանիքով ապրում էր Տիգրանում: Վռամշապուհն ուներ մի կրտսեր եղբայր՝ Խոսրով անունով:

Խոսրովը պատանեկան հասակից կրթություն էր ստացել Պարսկաստանում, ծառայել էր հայոց հեծելազորում: Երիտասարդ հասակում աչքի էր ընկել իր խելքով ու համարձակությամբ, որի համար էլ ընդգրկվել էր պարսից թագավորի թիկնապահ զորախմբում, մտիկից մասնակցել արքունական գործերին և այդ հարցերում ցուցաբերել մեծ հմտություն: Խոսրովը նոր էր բոլորել իր քսան տարին, երբ հայ նախարարները նոր թագավորի պահանջ ներկայացրին Շապու-

հին: Շապուհը առիթի էր սպասում, որպեսզի վրեժ լուծի հայերից՝ Մանվել Մամիկոնյանի «անխոհեմության» համար: Առիթը կար. մնում էր ընտրել նոր թագավոր կարգելու այնպիսի տարբերակ, որը տեղիք չտար հայերի կողմից մի նոր «անխոհեմ» քայլի: Նա որոշեց Հայոց աշխարհին տիրանալ «բարեկամությամբ»:

Շապուհը խնամիական կապեր հաստատեց Արշակունիների թագավորական տան հետ: Իր քրոջը՝ Զարմանդուխտին, կնության տվեց երիտասարդ Խոսրովին, վերջինիս հայոց թագավոր կարգեց և ուղարկեց Հայաստան: Սակայն երիտասարդ արքայի անձեռնմխելիությունը ապահովելու համար չնոռացավ նրան խնամակալ կարգել Զիկ գորապետին, որը 10000-անոց պարսկական բանակով Խոսրովին բերեց Հայաստան:

Շապուհը չնոռացավ նաև երիտասարդ թագավորին «օգնող ձեռք» ուղարկել՝ երկրում տնտեսական հարաբերությունները «կարգավորելու» համար: Նա Հայաստանի հազարապետ նշանակեց դարձյալ պարսիկ բանիմաց գորավարներից մեկին՝ Առավանին:

Արշակ Գ թագավորը, լսելով, որ պարսկական բանակի ուղեկցությամբ Հայաստան է գալիս նոր թագավոր, հանձին Խոսրովի, և հույս չունենալով, որ կկարողանա դիմադրել, թողեց հայոց արքունի բուն կալվածքները՝ Արարատյան երկիրը, վերցրեց արքունի գանձերը և տեղափոխվեց Եկեղյաց գավառը՝ հետագայում վերադառնալու հույսով:

Բյուզանդիայի կայսր Թեոդոսը Արշակին պաշտպանելու պատրվակով անմիջապես զորքեր մոցրեց Հայաստան: Թվում էր, թե կսկսվի պարսկա-բյուզանդական նոր պատերազմ: Սակայն պատերազմ չեղավ:

Շապուհն ու Թեոդոսը 384 թ. համաձայնվեցին «հաշտվել» Հայոց աշխարհում երկու հայ թագավորների գոյության փաստի հետ: Փաստորեն, Հայաստանը բաժանվեց երկու մասի: Բաժանման սահմանը մի ուղիղ գիծ էր, որի ծայրակետերն էին՝ հյուսիսում Կարին և հարավում՝ Մծբին քաղաքները: Երկրի արևելյան մասը, որը հինգ անգամ մեծ էր արևմտյան մասից, ենթարկվեց Պարսկաստանին, իսկ արևմտյան մասը՝ Բյուզանդիային:

Բազմաթիվ արհավիրքներից անցած Հայոց աշխարհի համար այս հարվածը ճակատագրական եղավ:

Մեկ տարի անց՝ 385-ին, Արշակը պատերազմ հայտարարեց Խոսրովին, և Վանանդ գավառի Երևել դաշտում տեղի ունեցավ հայոց պատմության մեջ աննախադեպ եղբայրասպան մի ճակատա-



մարտ, որտեղ հայերը, առանց արտաքին միջամտության, կոտորեցին միմյանց: Թեոդոս կայսրն ու Շապուհ արքան դիտավորյալ չկանխեցին այդ արյունահեղությունը: Նրանք շատ լավ գիտեին, որ անկախությունը կորցրած Հայոց աշխարհն այդ ձևով ավելի շուտ կթուլանա և կգնա դեպի կործանում...

Հանգամանքները Արշակ թագավորին համոզեցին, որ, թերևս առայժմ, նրա գործադրած ջանքերն իզուր են, ուստի նա որոշեց արքունական գանձերը տեղափոխել Ծովագ աշխարհ, որը, նրա կարծիքով, ավելի ապահով տեղ էր:

Արշակի կողմնակից երեք նախարարներ՝ Սուրեն Խորխոռունին, Վահան Առավելյանը և Աշխադար Դիմաքայանը, աննպատակ համարելով Արշակի այդ քայլը, գաղտնի կապեր հաստատեցին Խոսրով թագավորի հետ և խոստացան արքունիքի գանձերը վերադարձնել հայոց մայրաքաղաք Վաղարշապատ:

Խոսրով թագավորի հայոց զորքերի սպարապետ Սահակ ասպետ Բագրատունին նրանց օգնելու նպատակով մի պատկառելի զորաբանակով մտավ Արևմտյան Հայաստան՝ պատրվակ բռնելով, թե հալածում է ինչ–որ ավազակախմբի:

Պայմանավորվածության համաձայն՝ վերոհիշյալ երեք նախարարները, հափշտակելով արքունական գանձերը, բռնեցին հետդարձի ճամփան:

Արշակին հավատարիմ նախարարները, իմանալով այդ մասին, Սամվել Մամիկոնյանի գլխավորությամբ, իրենց զորագնդերով հետապնդեցին փախստականներին և նրանց պաշարեցին անանցանելի մի ձորում:

Սահակ ասպետ Բագրատունին, որն ակնդետ հետևում էր գործերի ընթացքին, իր զորագնդերով շարժվեց դեպի Սամվելը: Երեկոյան Սահակ սպարապետի զորքերը մոտեցան այն ձորին, որտեղ Սամվելի կողմից պաշարված էին փախստականները: Սակայն Սահակ ասպետը նոր եղբայրասպան արյունահեղությունից խուսափելու համար որոշեց ճակատամարտ չտալ, այլ համոզել Սամվելին և գործը վերջացնել խաղաղությամբ...

— Տյարք, ո՞ւմ ուղարկենք բանագնաց՝ Սամվելի մոտ,— դիմեց իր հրամանատարներին Սահակ Բագրատունին:

Ոչ ոք չխոսեց: Մի պահ տիրեց խոր լռություն: Բոլորը գիտեին, որ սպարապետի առաջարկը բավականին հանդուգն է: Սամվել Մամիկոնյանը երդվյալ պարսկատյաց էր: Տարիներ առաջ նա, բացա-

հայտ դուրս գալով սեփական քեռու՝ Մերուծան Արծրունու և հարազատ հոր՝ Վահան Մամիկոնյանի դեմ, որոնք, ամուսնանալով Շապուհի հորաքույրերի հետ, պարսկական զորքերով վերադառնում են Հայաստան՝ հայոց գահին և սպարապետությանը տիրանալու նպատակով, սպանեց իր՝ հայրենիքի դավաճան հորը: Սամվելը անսահմանորեն ատում էր ոչ միայն պարսիկներին, այլև այն հայ նախարարներին, ովքեր պարսկական կողմնորոշում էին ցուցաբերում:

Այդ էր պատճառը, որ Սահակ ասպետ Բագրատունու առաջարկին նրա զորապետները պատասխանեցին լռությամբ: Նրանք գիտեին, որ այսօրվա բանագնացը, ըստ էության, Խոսրով թագավորի բանագնացն է, իսկ Խոսրովը Շապուհ արքայի փեսան է. մի հանգամանք, որը Սամվելի աչքում ժամանակին դիտվել էր որպես հայրենիքի դավաճանություն և արժանացել էր ամենադաժան պատժի...

Լռությունը խզեց Սահակ սպարապետը.

— Ուրեմն, ինչ եք առաջարկում: Նորից արյո՞ն թափենք:

Հրամանատարներն անվճռական իրար նայեցին:

— Դե լավ, ես կգնամ,— ասաց Սահակ սպարապետը,— միայն որոշե՛ք, թե մինչև իմ վերադարձը ով կստանձնի զորքի հրամանատարությունը...

— Դա անկարելի է, տե՛ր սպարապետ,— գրեթե բորբոքված բացականչեց քսանհինգամյա, սևագանգուր մազերով, միջահասակ ու ամրակազմ մի զինվորական, որը Մամիկոնյան տան սեպուհական համազգեստ ուներ հագին,— ես կգնամ:

— Դու՞, բայց ինչու՞ դու,— զարմացավ սպարապետը: Նրա հարցի մեջ կարծես այն միտքը կար, թե դու շատ երիտասարդ ես: Սամվելը քեզ ոչ կհավատա, ոչ էլ կվստահի:

— Այո, տե՛ր սպարապետ,— համարձակ պատասխանեց երիտասարդ սեպուհը,— Սամվելի մոտ ես աջակից կունենամ՝ հանձին իմ քեռի Կենան Ամատունու, որը Սամվելի ամենամոտ բարեկամն է և ինձ սիրում է հարազատ զավակի պես: Բացի այդ, ես Մամիկոնյան եմ, եթե Սամվելին չհամոզեմ, գոնե հույս ունեմ, որ անվնաս ետ կվերադառնամ:

— Սամվելի հայրը նույնպես Մամիկոնյան էր,— զգուշորեն միջամտեց Տաշիրի իշխան Վրթանեսը՝ վաթսունին մոտ, հաղթանդամ մի այր՝ ցանկանալով արդարացնել իրենց վախը:

— Բայց Սամվելի հայրը դավաճան էր,— կտրուկ պատասխանեց երիտասարդ սեպուհը՝ չնայելով Վրթանեսի կողմը:

Սահակ սպարապետը հանդիմանող հայացք նետեց Վրթանեսին: Ալեգարդ իշխանը մեղավոր ժպտաց և գլուխը կախեց:

— Տե՛ր սպարապետ, եթե Դուք չուղարկեք էլ, միննույնն է, ես պիտի գնամ: Ես պիտի խոսեմ Սամվելի հետ: Նա ինձ կհասկանա, ես մազաչափ անգամ չեմ կասկածում: Ախր Սամվելը լավ մարդ է, հայրենասեր է: Դուք բոլորդ լավ գիտեք, որ նա հայրենիքից զատ ուրիշ սրբություն չունի,— ասաց սեպուհը մի այնպիսի ձևով, որն ավելի շուտ խնդրանք էր, քան պահանջ:

— Փորձենք,— ասաց սպարապետը,— իսկ ո՞վ պիտի գա քեզ հետ:

— Ի՞նչ է, չե՞ք հավատում ինձ,— նեղացավ սեպուհը:

— Ո՛չ, ի՞նչ եք ասում, տե՛ր սեպուհ, Աստված մի արասցե,— ասաց սպարապետը և ձեռքը գորովանքով դրեց երիտասարդ սեպուհի ուսին,— ես պարզապես ուզում եմ, որ մեր բանազնացությունը ավելի լուրջ և պատկառելի տեսք ունենա: Ես նպատակահարմար եմ գտնում քեզ հետ ուղարկել նաև մեր տարեց իշխաններից մեկին:

— Այդ դեպքում, թող ինձ հետ գա նաև Տաշիրի իշխան Վրթանեսը: Վրթանեսը շփոթված նայեց երիտասարդի կողմը:

Սպարապետը զգաց, որ անախորժ բան է կատարվում, ուստի դարձավ դեպի սեպուհը և հրամայեց.

— Ո՛չ, տե՛ր սեպուհ, դու կգնաս մենակ՝ թիկնապահ ջոկատի ուղեկցությամբ: Միայն ասա՝ գնալուց առաջ ում ես նշանակում Մամիկոնյան գնդի հրամանատար:

— Իմ թիկնապահ հարյուրապետ Վահրիճ Խաղունուն,— կտրուկ պատասխանեց սեպուհը:

— Դեհ, հաջողություն եմ ցանկանում, տե՛ր սեպուհ,— ասաց սպարապետը՝ սեղմելով նրան իր կրծքին,— բարի՛ վերադարձ:

— Վերադարձը բարի կլինի,— ուրախ բացականչեց սեպուհը, գեղեցիկ ուստյունով թռավ նստեց նժույգին և խրոխտ հրամայեց,— ջոկանտ, իմ հետևից...

\* \* \*

Սամվել Մամիկոնյանը պատրաստվում էր բանազնաց ուղարկել ձորում դիրքավորված փախստական իշխանների մոտ, երբ նրան հայտնեցին, որ հեռվից՝ ձորի հակառակ կողմից, զորաբանակ է մոտենում: Սամվելը մի փոքրիկ խմբով բարձրացավ մոտակա բլրի վրա, որպեսզի իմանա, թե ինչ զորաբանակ է: Երբ նա բլրի գագաթը

հասավ, հեռվից առաջացող զորաբանակը կանգ առավ: Մայր մտնող արևը դեռ լրիվ չէր հավաքել իր վերջին շողերը: Սամվելը պարզ նկատեց, որ զորաբանակում, ի թիվս բազմաթիվ նախարարական դրոշների, փողփողում է Բագրատունիների առյուծակիր բոսորագույն դրոշը: Նա անմիջապես կռահեց, որ զորաբանակը Խոսրով թագավորինն է, որը ղեկավարում է նրա սպարապետ Սահակ ասպետ Բագրատունին: Սամվելը սպարապետին լավ էր ճանաչում: Նա գիտեր, որ Սահակ Բագրատունին, մեծ հայրենասեր լինելով հանդերձ, ունի նաև մարդկային մի շարք այլ առավելություններ՝ համեստություն, խորաթափանց միտք, կշռադատված համբերություն, բայց և անկասելի վճռականություն: Սամվելը գիտեր, որ եթե Սահակ ասպետը այստեղ է եկել ոչ թե պատահաբար, այլ գանձերը Վաղարշապատ տանելու մտադրությամբ, ապա ամեն կերպ կձգտի հասնել իր նպատակին: Այս վերջին միտքը փչացրեց Սամվելի տրամադրությունը: Նա դեռ լրիվ չէր ամփոփել իր մտքերը, երբ նկատեց, որ դիմացի զորաբանակից մի խումբ ձիավորներ առանձնանալով սրընթաց մոտենում են իր զորակայանին: Սամվելն անակնկալի չեկավ. նա անմիջապես կռահեց, որ դրանք բանագնացներ են: Բայց ո՞վ է բանագնացը: Այս հարցը սկսեց տանջել նրան...

— Տե՛ր Մամիկոնյան, բանագնացի դրոշակին Մամիկոնյան զինանշան է,— ուրախ բացականչեց Սամվելի կողքին կանգնած իշխան Կենան Ամատունին: Նա ներքուստ ցանկանում էր, որ ամեն ինչ վերջանա խաղաղությամբ: Նա յուրովի փափագում էր, որ թագավորական գանձերը վերադարձվեն Հայոց մայրաքաղաք, քան թե անորոշ հեռանկարով տարվեն Ծոփաց երկիր:

— Մամիկոնյան զինանշան,— զարմացավ Սամվելը, թեև ինքն էլ պարզորոշ տեսնում էր, որ դրոշի զինանշանը իրենցն է,— բայց ո՞վ կլինի բանագնացը:

Քառորդ ժամ անց բանագնացների խումբը բարձրացավ այն բլրի գագաթը, որտեղ համախոհ իշխաններով ու թիկնապահ զորախմբով շրջապատված՝ կանգնած էր Սամվել իշխանը՝ ոտքից գլուխ սպառազինված: Արևախանձ դեմքին և սլացիկ կեցվածքին մի չքնաղ վեհություն էին տալիս տարուբերվող ալեխառն մազերն ու խիտ բեղերը. նրա տարիքը վաթսուներեք մոտ էր:

Բանագնացների խումբը կանգ առավ պատշաճ հեռավորության վրա: Խմբին առաջնորդող երիտասարդ սեպուհը վայելուչ շարժումով ցած թռավ նծույզից, սանձը հանձնեց թիկնապահ զինվորին և գրե-

թե վազելով մոտեցավ Սամվելին, փաթաթվեց նրան ու դեմքը սեղմեց նրա հզոր կրծքին՝ անվերջ կրկնելով...

— Սամվել, սիրելիս, թանկագինս, տառապայալս, հարազատս...

Սամվելի դեմքը հուզմունքից շառագունեց, աղամախնձորը սկսեց անհանգիստ վերուվար անել: Նա ձախ ձեռքով ամուր գրկեց կրծքին սեղմված սեպուհի գլուխը, իսկ աջով քնքշորեն շոյեց նրա գանգուրները և հագիվ կարողացավ ասել.

— Դե լավ, լավ, դե լավ...

Բոլորը զգացին, որ Սամվելը խուսափում է երկար բառեր արտասանելուց, որ հանկարծ չմատնի հուզմունքը, հանկարծ չփղձկա: Նրանք նույնպես հուզվեցին: Կենան Ամատունին գլուխը կախել էր, որպեսզի չմատնի արցունքները, իշխանական համազգեստի թավշյա թևքով թաքուն սրբեց աչքերը:

Սեպուհը բաց թողեց Սամվելին, մի քայլ ետ քաշվեց: Նրա աչքերում նույնպես արցունքներ կային: Հեռվից ուշադիր զննեց Սամվելին և ասաց.

— Տե՛ր իմ Աստված, մեկ տարում լրիվ ծերացել է: Այս ի՞նչ ճակատագիր է բաժին ընկել մեզ, Սամվել, եղբայրս:

Սամվելն անմիջապես չպատասխանեց: Մի պահ գլուխը կախ՝ կուլ տվեց արցունքները, ապա վեհորեն բարձրացրեց ալեխառն գլուխը և հարցրեց.

— Ինչո՞ւ ես եկել, Մեսրոպ:

— Նախ թո՛ւյլ տուր ողջագուրվեմ հարազատ քեռուս հետ, որին նույնպես կարոտել եմ, ապա նոր հարցիդ պատասխանեմ,— ասաց Մեսրոպն ու գրկախառնվեց Կենան Ամատունի իշխանի հետ:

Կենանը ամուր գրկեց նրան և երկար ժամանակ բաց չէր թողնում: Դրանով նա կարծես ուզում էր ասել. «Լավ ես արել, որ եկել ես, թանկագինս...»:

Վերջապես ազատվելով Կենան իշխանի գրկից՝ Մեսրոպը ձեռքով առանձին–առանձին բարևեց Սամվելին շրջապատած իշխաններին ու սեպուհներին:

— Դե այժմ ասա՛, ինչո՞ւ ես եկել,— հարցրեց Սամվելը՝ հպարտ կեցվածքով, բայց մեղմ ձայնով:

— Ես կարո՞ղ եմ բոլորի ներկայությամբ խոսել քեզ հետ, Սամվել:

— Այստեղ կանգնած են իմ բարեկամները, Մեսրոպ, ես նրանցից գաղտնիքներ չունեմ, խոսի՛ր:

— Ավելի լավ,— խոսքն առաջ տարավ Մեսրոպը,— քանզի այն, ինչ որ պիտի ասեմ քեզ, ինչի համար եկել եմ, հավասարապես վերաբերում է նաև այստեղ կանգնած մեր բարեկամներին:

— Եթե այդպես է, մենք լսում ենք:

— Սամվել, սիրելի՛ եղբայրս, դու և քո համախոհ իշխանները ոչ միայն չպիտի խանգարեք, այլև պիտի օգնեք, որպեսզի հայոց թագավորական գանձերն ապահով վերադառնան Հայոց մայրաքաղաք:

— Դա անկարելի է, Մեսրո՛պ,— խստորեն ասաց Սամվելը:

— Ինչո՞ւ,— ոչ պակաս խստությամբ հարցրեց Մեսրոպը:

— Թագավորական գանձերը Վաղարշապատ կվերադառնան միայն Արշակ թագավորի հետ,— նույն խստությամբ պատասխանեց Սամվելը:

— Իսկ դա ե՞րբ է լինելու, Սամվել:

— Չգիտեմ՝ երբ է լինելու, բայց պիտի լինի:

— Դու մոլորության մեջ ես, սիրելի՛ եղբայրս: Արշակն այն թագավորը չէ, որ կարողանա վերադառնալ և նորից նստել հայոց գահին: Կամ քեզ համար ի՞նչ տարբերություն՝ հայոց գահին Արշակն է նստած, թե Խոսրովը. չէ՞ որ երկուսն էլ Արշակունի են: Ներկա պարագայում արդարացին այն է, որ հայոց թագավորական գանձերը վերադարձվեն Հայոց մայրաքաղաք և ծառայեն ի շահ Հայոց աշխարհի: Մի՞թե այս մասին երկընտրանք կարող է լինել...

— Խոսրովը հայոց թագավոր չէ:

— Ինչո՞ւ ես այդպես կարծում:

— Նա պարսիկ Շապուհ արքայի փեսան է, նրա կամակատարը: Իսկ պարսիկ բոլոր արքաների կամքն է եղել տիրանալ Հայոց աշխարհին, Մեսրո՛պ...

Մեսրոպը մի պահ մտատանջության մեջ ընկավ: Նյարդային շարժումով ձախ ձեռքի մատների ծայրերով շփեց ձակատը: Նայեց շուրջը կանգնածներին, ժպտաց և սևեռուն հայացքով նայեց Սամվելի աչքերի մեջ:

— Ի՞նչ կա մտքումդ, ասա՛ լրիվ,— իր հերթին նյարդայնացավ Սամվելը:

— Սամվել, եղբայրս, դու դատապարտում ես մի մարդու, որի ով լինելու մասին ոչ մի գաղափար չունես:

— Ես հաստատ գիտեմ, որ Խոսրովը պարսիկ թագավորի փեսան է,— ձայնը բարձրացրեց Սամվելը:

— Բայց ո՛չ նրա կամակատարը,— հանգիստ պատասխանեց Մեսրոպը:

— Ես չեմ հավատում, ինձ փաստեր ներկայացրու:

— Ա՛խ, դու փաստեր ես ուզում: Այն, որ այսօր Սահակ Պարթևը Ամենայն հայոց կաթողիկոսն է և բացահայտ գործում է ի շահ հայրենիքի, փաստ չէ՞, որ Խոսրովը, Հայաստան գալով, պահանջեց հայ նախարարներից՝ իրեն թագադրեն հայ Արշակունիների ավանդներով, փաստ չէ՞, որ նա Շապուհի քրոջ՝ Զարմանդուխտի հետ վերապասակվեց հայկական եկեղեցում՝ քրիստոնյային վայել ծեսով, փաստ չէ՞... Էլի՞ փաստեր ես ուզում...

— Հետաքրքիր է,— ուները վեր քաշեց Սամվելը:

— Շանտ,— ոգևորված խոսքն առաջ տարավ Մեսրոպը,— իսկ եթե իմանաք, թե երկիրը շենացնելու և հզորացնելու ինչ հոյակապ ծրագրեր ունի... Խոսրովը դեռ երիտասարդ է, երբ հասուն այր դառնա, համոզված եղեք, որ նա Հայոց աշխարհի լավագույն թագավորներից մեկը կլինի:

— Ների՛ր ինձ, Մեսրո՛պ, դու ինձ վախեցնում ես: Եթե ասածների իսկապես ճշմարիտ են, Շապուհը չի թողնի, որ Խոսրովը հասուն այր դառնա, ոչ էլ՝ հայոց լավ թագավոր:

— Թերևս մինչև այժմ Շապուհը նրա արարքներին արգելքներ չի դնում,— ոչ առանց տարակուսանքի ասաց Մեսրոպը:

— Դա նրանից է, որ Շապուհը քո թված փաստերը, այսինքն, ինչպես դու ես ասում, Խոսրովի այդ արարքները դեռ Պարսկաստանի համար վտանգավոր չի համարում:

— Չէ՛, չէ՛, դու շատ թերահավատ ես, Սամվել:

— Աստված տա՛ քո ասածը լինի, Մեսրո՛պ: Դու գիտես, որ ես ամեն ինչ տվել եմ, և եթե պահանջվի, կյանքս էլ կտամ, միայն թե մեր հայրենիքը տեսնեմ պարսկական խարդավանքներից զերծ, մի բան, որն, ավանդ, անհնարին է:

— Սամվել, եղբայրս,— ընկճված ասաց Մեսրոպը,— դու մի մտածիր, որ ես պարսիկների մասին լավ կարծիքի եմ: Քավ լիցի: Ես, թեև երիտասարդ եմ, բայց իմ ծնված օրից գիտեմ մեր տարաբախտ հայրենիքի պատմությունը: Նրան շարունակ բզկտել են իր գիշատիչ հարևանները: Պարսկաստանն ու Բյուզանդիան այսօր հասել են իրենց ստոր նպատակին. նրանք մեր հայրենիքը բաժանել են, որ տիրեն: Մենք, փոխանակ այս ամենից հետո հասկանանք միմյանց, իրար սատար կանգնենք, սուր ենք բարձրացնում մեկս մյուսի վրա:

Խնդրում եմ՝ ինձ լավ հասկանաս, Սամվել: Պարսկաստանի ու Բյուզանդիայի այսօրվա համերաշխությունը խոսում է այն մասին, որ նրանք հասել են իրենց վաղեմի նպատակին՝ մեր հայրենիքը բաժանել են երկու մասի և ձգտում են զանազան գաղտնի ու բացահայտ միջոցներով մարսել այդ համեղ պատառները: Դրա դեմն առնելու համար պետք է ուղիներ փնտրենք միավորվելու համար:

— Ասա՛, ի՞նչ ես առաջարկում,— մեղմացավ Սամվելը:

— Ներկա պահին ես ուրիշ առաջարկ չունեմ, Սամվել: Դու ինքդ պետք է կշռադատես կոնկրետ իրավիճակը: Հայոց արքունի գանձերը պետք է անպայման վերադարձվեն Հայոց մայրաքաղաք: Ներիր ինձ, եղբայրս, դրա իրականացումը ոչ միայն անհրաժեշտություն է, այլև անխուսափելի, նույնիսկ եթե դու չուզես էլ, քանզի քո և իշխան Ամատունու փոքրաթիվ զորքերի դեմ կանգնած են հայոց թագավորական մի քանի զորագնդեր՝ սպարապետ Սահակ ասպետ Բագրատունու գլխավորությամբ: Անխոհեմությունը սուկ նոր եղբայրասպանության տեղիք կտա...

— Այո՛, եղբայրս, ակնարկդ դաժան է, բայց ճշմարիտ,— ասաց Սամվելը և մտքի ծովն ընկավ...

— Տե՛ր Մամիկոնյան,— միջամտեց իշխան Կենան Ամատունին,— Մեսրոպն իրավացի է: Մի՞թե այս մեկ տարվա ընթացքում մենք չհամոզվեցինք, որ նենգամիտ Բյուզանդիան մեզ վրա նայում է որպես իր ամենացածր հպատակի...

— Ցավոք սրտի, տե՛ր Ամատունի, Դուք նույնպես ճշմարիտ եք,— մտքերից սթափվեց Սամվելը,— իսկ կյանքը ցույց է տվել, որ ով փորձում է դեմ գնալ ճշմարտությանը, նա գնում է դեպի կործանում... Այս երեխան ինձ զինաթափ արեց իր ճշմարտությամբ:

— Նա երեխա չէ, տե՛ր Մամիկոնյան, նա եկող մի նոր սերունդ է, որն ավելի առողջ է դատում, քան մեր սերունդը: Արի՛ լսենք նրանց...

— Ուրեմն, ի՞նչ է հրամայում երիտասարդ տե՛ր Մամիկոնյանը,— գորովալից աչքերով Մեսրոպին դիմեց Սամվելը:

— Հարազանս, եղբայրս, Սամվել... Ես գիտեի, որ դու ինձ կհասկանաս,— ուրախացավ Մեսրոպը:

— Դե բավական է: Շողոքորթ: Ասա՛, ի՞նչ ես առաջարկում,— ժպտալով ասաց Սամվելը:

— Սահակ սպարապետն ասաց, որ համաձայնության դեպքում ձեր զորագնդերը կարող եք միացնել թագավորական զորքերին և վերադառնալ մայրաքաղաք:



— Սահակ–սպարապետը միշտ էլ ազնիվ է եղել: Ես ընդունում եմ նրա առաջարկը,— ուրախացավ Ամատունին:

— Ես էլ չեմ կասկածում նրա վեհանձնությանը, բայց չեմ կարող գալ,— տխուր ասաց Սամվելը,— դուք գնացե՛ք:

— Ինչո՞ւ, տէր Մամիկոնյան,— տխրեց նաև իշխան Ամատունին:

— Տե՛ր Ամատունի, ես չեմ կարող լքել տարաբախտ Արշակ թագավորին:

— Իսկ թագավորական գանձերը,— հարցրեց Մեսրոպը:

— Գանձերը տարե՛ք, ես դեմ չեմ: Ես կվերադառնամ թագավորի մոտ և կսփոփեմ նրան:

— Դու այլևս ոչնչով չես օգնի նրան, Սամվել: Նա, որպես թագավոր, այլևս գոյություն չունի: Ինձ ասացին, որ նա նույնիսկ վատառողջ է, և երկար ապրելու հույս չկա: Նրա գոյությունը այսուհետև լոկ նոր եղբայրասպան ընդհարումների առիթ կարող է դառնալ,— ասաց Մեսրոպը:

— Այնուամենայնիվ, կա մի հանգամանք, որն ինձ ստիպում է վերադառնալ Արշակ թագավորի մոտ: Արշակին պետք է պահպանել: Եթե նա մեջտեղից վերանա, Բյուզանդիան մեր աշխարհի արևմտյան մասի հետ կվարվի ինչպես անտեր երկրի հետ և ցանկացած ձևով կտիրի նրան:

— Թող քո կամքը լինի, եղբայրս,— համաձայնվեց Մեսրոպը:

\* \* \*

Սահակ ասպետ Բագրատունին առանց դժվարությունների թագավորական գանձերը վերադարձրեց մայրաքաղաք և հանձնեց Խոսրով թագավորին: Պալատում պատմեցին նաև այդ գործում Մեսրոպի դերի մասին, որն արժանացավ Սահակ Պարթև կաթողիկոսի դրվատանքին և Խոսրով թագավորի ուշադրությանը...

## ՍԻՐՈ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Վարդավառի տոն էր: Քասաղ գետի հովտում տոնահանդեսի էին դուրս եկել Հայոց աշխարհի մայրաքաղաք Վաղարշապատի և շրջակա շեների բնակիչները: Ժողովուրդը ամենուրեք մեծ ու փոքր խմբերով, երգ ու պարով և զանազան զվարճալի խաղերով ուրախանում էր: Այս ու այն տեղ՝ հանպատրաստից վառած օջախների վրա, քթքլթում էին զոհի մսով լցված կաթասները: Թեև արևը նոր էր մարդահասակ բարձրացել, և ամառային շոգը դեռ զգացնել չէր տալիս, բայց դեռատի տղաներն ու աղջիկները մոտակա գետից ու առուներից իրար վրա ջուր էին ցանում՝ աղմուկ-քրքիջով մերթ հետապնդելով, մերթ էլ փախչելով միմյանցից:

Գետահովիտը լցված էր երաժշտության ձայներով: Դիմացի բլրալանջին՝ նորաշեն վանքի եկեղեցու բաց դռնից, ալիք տալով հորդում էր հոգևոր տաղերգության հոգեպարար մեղեդին, որը երբեմն ուղեկցվում էր վանքի եկեղեցու զանգերի ծորուն դողանջներով:

Եկեղեցում պատարագ էր մատուցվում: Ժողովուրդը հոծ բազմությամբ խոնավել էր եկեղեցու շուրջը: Եկեղեցու գավթում ասեղ զցելու տեղ չկար: Հավաքվածներից շատերի նպատակը ոչ այնքան եկեղեցի մտնելն էր, որն արդեն անհնար էր դարձել, այլ Հայոց աշխարհի հոգևոր ու աշխարհիկ տերերին մոտիկից տեսնելու ցանկությունը:

Խանդավառված երիտասարդները ձգտում էին սեփական աչքերով տեսնել իրենց հասակակից հոսրով թագավորին, իսկ հասակավորների հետաքրքրության կենտրոնում Սահակ Պարթև կաթողիկոսի անձն էր, որը, չնայած դեռ չէր բոլորել իր կյանքի չորրորդ տաս-

նամյակը, բայց իր կատարած գործերով արդեն իմաստուն նահապետի համբավ ու հեղինակություն ուներ ամբողջ Հայոց աշխարհում: Նա այժմ ոչ միայն Ամենայն հայոց կաթողիկոսն էր, այլև նրան էր վստահված Հայոց աշխարհի գերագույն դատավորի պաշտոնը: Որպես երկրի հոգևոր դասի առաջնորդ՝ նա անխտիր մասնակցում էր երկրի առաջ ծառայած խնդիրների լուծման գրեթե բոլոր գործերին: Արքունիքում հարցերը քննարկվում էին նրա մասնակցությամբ, և նրա կարծիքը վճռորոշ նշանակություն ուներ...

Ընդամենը մի քանի տարի առաջ, երբ նա դեռ կաթողիկոս չէր, Հայոց աշխարհը ճաշակում էր իր համար այնքան սովորական դարձած հերթական ոճրի դառնությունը: Նենգավոր Բյուզանդիայի ու խարդախ Պարսկաստանի լարած մի նոր դավի հետևանքով Բաթ Սահառունին խնջույքի ժամանակ դավադրաբար սպանեց հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանին՝ նրա տեղը գրավելու նպատակով:

Բաթ Սահառունու արարքը ոչ միայն քստմնելի ոճիր էր, այլև մի անմիտ դավ էր Հայոց աշխարհի նկատմամբ: Բայց եթե նա կարողանար իրականացնել նպատակը, դրանով կջարդեր այն բազուկը, որ հանապազ հավատարիմ լինելով հայոց գահին՝ անձնվիրաբար սուր էր կրել հանուն հայրենիքի պաշտպանության և միշտ հաղթել էր օտար թշնամիներին՝ դառնալով նրանց ահ ու սարսափը: Այդ բազուկը Մամիկոնյան քաջակորով սպարապետական տոհմն էր...

Երևի Հայոց աշխարհի դավադիրներին այդ բանը հաջողվեր, եթե մղձավանջային այդ պահին չհնչեր Գրիգոր Լուսավորչի երիտասարդ թոռան՝ Սահակ Պարթևի անբեկանելի վճիռը՝ ջնջել Բաթ Սահառունու գերդաստանն ու համախոհներին՝ ի սարսափ բոլոր ազգադավների ու դավադիրների... Նա իր շուրջը համախմբեց Մամիկոնյաններին, քաջալերեց նրանց: Երբ Մամիկոնյանները վճիռը ի կատար ածեցին, Սահակ Պարթևը ջբաշվեց մի կողմ և հանդես չեկավ որպես սոսկ չեզոք դատավոր, այլ իր վրա վերցրեց վճռի ամբողջ պատասխանատվությունը: Նա որդեգրեց Մուշեղ Մամիկոնյանի անչափահաս որդուն՝ Համազասպին, և զբաղվեց նրա կրթությամբ ու դաստիարակությամբ: Իր այդ քայլով նա համարձակորեն մեկընդմիշտ կանգնեց հայրենիքի պաշտպանության դիրքերում՝ ի դերն հանելով նրա ներքին ու արտաքին բոլոր տեսակի թշնամիների հետագա նկրտումները:

Վարդավառի այդ օրը Համազասպը նոր էր բոլորել քսան տարին: Նա իր զինվորներով պարեկություն էր անում գետահովտում՝ միշտ կապ հաստատելով թագավորի թիկնապահ զորախմբի հետ:

Երբ պատարագը մոտեցավ ավարտին, Համազասպը կարգադրեց զինվորներին կարգ ու կանոն հաստատել եկեղեցու զավթում ու շրջակայքում, որպեսզի թագավորն ու կաթողիկոսը կարողանան հեշտությամբ դուրս գալ: Համազասպը գեղեցիկ էր զինվորական համազգեստի մեջ: Նրա գեղեցկությունը կատարյալ էր դառնում դեմքի մշտաժպիտ արտահայտությամբ:

Այդ պահին կարծես դիտավորյալ նրա մոտով անցան երկու իշխանադուստր՝ շրջապատված ընկերուհիներով: Նրանք ժպտալով բարևեցին Համազասպին: Վերջինս նրանց բարևին պատասխանեց հավուր պատշաճի լուրջ:

— Գեղեցիկ է, բայց տարիքին համեմատ շատ է զուսպ, թեև միշտ ժպիտը դեմքին է,— ասաց բարձրահասակ ու թխափեր իշխանադուստրը՝ Խորխոռունյաց Գարեգին իշխանի դուստր Աշխենը:

— Գոռոզ է,— պատասխանեց Բագրատունյաց սեպուհ Մանվելի դուստր Սաթենիկը:

— Այդ ո՞ր Մամիկոնյանը գոռոզ ու ինքնասածի չէ,— ասաց Աշխենը,— ասում են՝ մինչև հիմա ընտրած աղջիկ չունի:

— Կունենա, մենք չգիտենք,— պատասխանեց Սաթենիկը,— Մամիկոնյանները նաև ծածկամիտ են:

— Ես այսօր նրա վրա ջուր պիտի ցանեմ,— չարաձճի ասաց Աշխենը,— տեսնես՝ ինչ վերաբերմունք ցույց կտա:

— Կժպտա,— հեզնեց Սաթենիկը:

Նրանք, ուրախ ծիծաղելով, իջան գետափ:

Գետափին մի խումբ աղջիկների հետ թև թևի տված՝ մարգագետնում շրջում էր Սահականուշը՝ Սահակ Պարթևի միամորիկ դուստրը:

Նա նոր էր բոլորել 18 տարին: Հոր նման կապույտ աչքեր ուներ ու խարտյաշ մազեր, որոնք փարթամորեն թափված էին ուսերին և հասնում էին մինչև գոտին: Ճակատի մոտ մազերն ամփոփված էին արծաթե ակնակուռ վարսակալի մեջ: Նա սլացիկ հասակ ուներ, և շարժումների մեջ յուրահատուկ նազանք կար: Շատ իշխանագուններ էին ցանկանում մոտերնություն հաստատել նրա հետ, բայց ապարդյուն. նա ժառանգել էր ոչ միայն հոր արտաքինը, այլև նրա հպարտությունն ու վճռական կամքը: Թեև երկու տարեկան հասակում կորցրել էր մորը, բայց դաստիարակվել էր խստաբարո հոր ձեռքի տակ: Այն օրից, ինչ Սահակ Պարթևը որդեգրել էր Համազասպին, նրանք Սահականուշի հետ քույր ու եղբայր էին:

Երբ Աշխենն ու Սաթենիկը մոտեցան Սահականուշին, Սաթենիկը ծիծաղելով ասաց.

— Անուշ (մտերմաբար այսպես էին կոչում Սահականուշին), Աշխենն ուզում է այսօր ջուր ցանել Համազասափ վրա:

— Ի՞նչ,— մի տեսակ տագնապով հարցրեց Սահականուշը և մտատանջության մեջ ընկավ:

Բանն այն է, որ հին հեթանոսական սովորությամբ, երբ Վարդավառի տոնին երիտասարդները ջուր էին ցանում մեկը մյուսի վրա, դա սիրո խոստովանություն էր նշանակում: Այդ ավանդությունը շարունակում էր իր գոյությունը նաև քրիստոնյա հայերի մեջ, նրանց կենցաղում:

Աշխենի աչքից չվրիպեց Սահականուշի թաքուն տագնապը, ուստի այդ բանում հաստատ համոզվելու համար ծիծաղելով ասաց.

— Իսկ ինչու՞ չպիտի լցնեմ: Համազասափը ինձանից սիրունին պիտի ընտրի:

Սահականուշը Աշխենի ասելու ձևի մեջ թեև դիտավորության շեշտ զգաց, բայց հոգու տագնապը չանցավ: Սիրտը սկսեց արագ բաբախել: Ի՞նչ իմանաս, Աշխենը և՛ գեղեցիկ է, և՛ համարձակ. կարող է դուր գալ Համազասափին: Չէ՞ որ նրանց խանգարող հանգամանքներ չկան:

— Աղջիկներ, արտաքուստ հանգիստ ու ժպտալով՝ ասաց Սահականուշը,— վախենում եմ՝ ձեր ջանքերը զուր անցնեն: Եղբայրս այսօր ծառայության մեջ է: Նա դժվար թե մասնակցի տոնական խաղերին...

Սահականուշի կեղծ հանգստությունը ավելի գրգռեց խորամանկ Աշխենի հետաքրքրասիրությունը, և նա վրա բերեց.

— Ես շմտ գիտեմ, թե նա այսօր ծառայության մեջ է: Գետափի իջավ թե չէ, իսկույն ջուր եմ լցնելու վրան... Սա այսօր թույլատրելի է...

Սահականուշի հոգու տագնապն ավելի ուժեղացավ: Նա սիրում էր Համազասափին, բայց ոչ մի կերպ չէր կարողանում արտահայտել իր զգացմունքները, քանզի մանկությունից Համազասափը եղբայր էր համարվում, նա Սահականուշի հետ վերաբերվում էր հարազատ եղբոր պես: Ինչ վերաբերում է Համազասափին, նա դեռևս ընտրած աղջիկ չուներ: Տարված քաղաքական նպատակներով (Սահակ Պարթևը ջանում էր նրան հոր փոխարեն սպարապետ դարձնել)՝ կարծես մտքով էլ չէր անցկացնում ամուսնության հարցը: Շրջապատում եղած իշխանադուստրերից ոչ մեկը չէր գրավում նրա սիրտը: Նա մեկ-մեկ

մտածում էր Սահականուշի մասին, բայց երբ գիտակցում էր, որ Սահականուշն իր քույրն է, հեռու էր վանում այդ միտքն իրենից...

Չնայած որդու այդ մտորումներին՝ նրա մայրը՝ իշխանուհի Վարդենին, և Սահակ Պարթևը հենց սկզբից հույսեր էին փայփայում նրան Սահականուշի հետ ամուսնացնելու համար, սակայն այդ հարցում ցուցաբերում էին մեծ զգուշավորություն՝ մինչև նրանց հասունանալը:

Աղջիկները հանկարծ նկատեցին, որ Համազասպը մի փոքրիկ զինվորական խմբի հետ գետափ է իջնում: Նա ուրախ տրամադրությամբ մեջ էր: Դա երևաց այն բանից, որ նա մոտակա առվից բռով ջուր ցանեց իր զինվորների վրա, որոնք ուրախ այս ու այն կողմ փախան:

— Աղջիկներ, պատրաստ,— շշնջաց Աշխենը և գետնից խլելով դատարկ սափորը՝ սկսեց գետից ջուր լցնել:

Աղջիկները դիմեցին նրա օրինակին:

Իր սափորը լցրեց նաև Սահականուշը:

Համազասպի խումբը մոտենում էր աղջիկներին: Աշխենն առաջացավ դեպի նա և պատրաստվում էր ջուրը ցանել, սակայն Համազասպը սաստող հայացքով կանխեց նրան:

Սահականուշը սրտատրոփ հետևում էր դեպքի ընթացքին ու հետևանքին: Աղջիկների խումբը կանգ առավ: Հանկարծ աղջիկների խմբից մոտ երկու քայլ ետ կանգնած Սահականուշը թեթև քայլվածքով առաջացավ և կանգնեց Համազասպի դիմաց, թիկունքով՝ դեպի աղջիկները, ապա ուղիղ նայեց Համազասպի աչքերի մեջ:

Համազասպը խանդաղատանքով ու գորովով լի գեղեցիկ աչքերը հառեց «քրոջ» հետզհետե շառագունող դեմքին, որն առաջանում էր ներքին հոգեկան խռովքից:

Համազասպը դեռ չէր զգում, թե ինչ է կատարվում, երբ Սահականուշն իր ձեռքում պատրաստ պահած սափորի ամբողջ ջուրը թափով լցրեց նրա վրա: Աղջիկների խումբը սկսեց ուրախ աղմկել՝ իրար խառնելով հիացմունքի ու զարմանքի բացականչություններ:

Ջարմացավ նաև Համազասպը:

— Անուշ,— տարակուսած բացականչեց նա:

— Ի՞նչ,— խռովկան երեխայի նման հարցին հարցով պատասխանեց աղջիկը և ըմբոստ դեպի ետ թեքելով գլուխը՝ շեշտակի նայեց տղայի աչքերի մեջ:

Համազասպը նրա աչքերի մեջ քնքուշ մի թախիծ նկատեց և զգաց, թե ինչպես է հուզմունքից աննկատ ցնցվում նրա ներքին շրթունքը: Տղայի սիրտը սկսեց ականա բարբախել:

Աղջիկների խումբը ուրախ քրքիջով հեռացավ: Ոմանք իրար վրա դեռ ջուր էին ցանում:

Համազասպը սթափվեց, թափ տվեց համազգեստի թրջված մասերը, մեղավորի պես ժպտաց Սահականուշին, ապա լրջանալով մի անսովոր քնքշանքով հրամայեց.

— Գնա՛, հասի՛ր աղջիկներին:

Սահականուշը շուտ եկավ և փութալով գնաց դեպի աղջիկների խումբը, որոնք, հեռվից նկատելով, ուրախ բացականչություններով եկան ընդառաջ:

\* \* \*

Համազասպը շուտ վերադարձավ տուն և փակվեց իր առանձնասենյակում: Նա երկար ժամանակ ծանրութեթև էր անում Սահականուշի վերաբերմունքը և հոգու խորքում զգում մի հաճելի զգացում, միևնույն ժամանակ վերլուծում այդ փոքրիկ պահի մանրամասնությունները... Հանկարծ նրա աչքերի առաջ եկավ այն պահը, երբ Սահականուշը իր վրա ցողեց սափորի ջուրը... Հիշեց նրա հայացքը, երկնագույն աչքերի վճռականությունը... Նրան թվաց, որ ինքն այդ աչքերի վճռականությունը վաղուց է տեսել... բայց է՛րբ, ինչ առիթով... թե՛ երազում է տեսել... Եվ հանկարծ նրա միտքը փայլատակեց, այո... ինքը չի սխալվել, ինքն այդ վճռականությամբ լի աչքերը տեսել է բազմաթիվ անգամ, բայց ո՛չ Սահականուշի դեմքին... Նա այդ նուրբ աղջկա դեմքին առաջին անգամ նկատեց... Ա՛յ քեզ բան... Արյունը մնում է արյուն... Եվ Համազասպին պարուրեց հաճելի մի միտք, ուրեմն, եթե ինքը ամուսնանա Սահականուշի հետ, իր զավակները, հատկապես տղաները, կունենան այդ վճռական հայացքը՝ Սահակ Պարթևի իմաստուն և պողպատյա հայացքը... Նա տարված էր այս մտքերով, երբ իշխանուհի մայրը, իմանալով, որ որդին վերադարձել է վաղաժամ, մտավ նրա մոտ, որ իմանա պատճառը: Մոր հարցին, թե որդին ինչու է շուտ վերադարձել, Համազասպը պատասխանեց, որ ոչինչ չի պատահել: Որդու այդ խուսափողական պատասխանից մայրը ավելի անհանգստացավ: Համազասպը, որպեսզի փարատեր սիրելի մոր հոգու խռովքը, ժպտալով ասաց.

— Մայրի՛կ, երդվում եմ քո արևով, որ ոչ մի վատ բան չի պատահել: Հետո էլ ինչու՞ ես անհանգստանում ինձ համար: Ես հո երեխա չեմ...

Որդու խոսքերից մայրը ներքին ձայնի թելադրանքով զգաց, որ նա սիրահարված է:

Այս միտքը առավել տագնապահար արեց մորը. «Չլինի՞ թե մեկ ուրիշին է սիրահարվել իմ մինուճար որդին... Իսկ իմ Սահականո՞չը... որին հարազատ մոր նման իմ ծոցում եմ մեծացրել և գիտեմ, որ նրա նմանը աշխարհում չկա... Իսկ եթե նա չէ՞... Հապա ո՞վ է գողացել որդու սիրտը... Այս մտքից մայրը գրեթե իրեն կորցրեց: Չէ՞ որ իր որդին գտարյուն Մամիկոնյան էր, և ինքը՝ մայրը, լավ գիտեր Մամիկոնյաններին: Նա գիտեր, որ գոռոզ Մամիկոնյանները ինքնասածի են. անհնար է նրանց ետ պահել իրենց որոշումներից ու համոզմունքներից... Տեր Աստված, ո՞վ է գրավել զավակիս հոգին. ես կխելագարվեմ...

Սթափվելով մտքերից՝ մայրը հարցրեց.

— Անո՞շն էլ վերադարձավ:

— Ո՛չ, մայրի՛կ, աղջիկները դեռ զվարճանում են:

— Մեսրոպն այնտե՞ղ էր, — հանկարծ հարցի ուղղությունը փոխեց մայրը:

— Այո՛:

— Նա էլ մնա՞ց:

— Ո՛չ:

Որդու կտրուկ պատասխանները ավելի էին գրգռում մոր երևակայությունը:

— Վերջապես պիտի ասես, թե ինչ է պատահել քեզ, — թախանձեց մայրը:

— Իսկ ի՞նչ պիտի պատահեր, մայրի՛կ, — ասաց որդին և, կանգնելով մոր դեմ, թախժոտ ժպտաց:

— Չէ՛, զավանկս, քո հոգում խռովք ու տագնապ կա, դու իզուր ես թաքցնում հարազատ մորիցդ, — ասաց մայրը՝ սևեռուն նայելով որդու աչքերի մեջ, — ի՞նչ ունես սրտումդ, պատմի՛ր ինձ, թեթևացի՛ր: Գուցե մի օգտակար խորհուրդ տամ: Մոր սիրտը լավ խորհրդատու է, զավանկս...

— Հետո, մայրի՛կ, հետո...

— Իսկ եթե հետոն ո՞ւշ լինի...

— Ո՛չ, մայրի՛կ, ուշ չի լինի, համբերի՛ր, չէ՞ որ դու ես միշտ ինձ սովորեցրել, թե համբերությունը հաջողության գրավականն է, — կատակեց որդին:

— Մեսրոպը ու՞ր գնաց, — հարցրեց մայրը:



- Գնաց զորանոցները:
- Ե՛րբ կվերադառնա:
- Երևի արդեն վերադարձել է:
- Մայրը ուները վեր քաշեց, գլուխն օրորեց ու դուրս գնաց: Նա սպասավորին ուղարկեց և շտապ իր մոտ կանչեց Մեսրոպին: Երբ Մեսրոպը ներկայացավ, տիկինը փորձեց նրա հայացքում փնտրել իրեն հուզող հարցի պատասխանը. երկար ժամանակ զննում էր Մեսրոպի դեմքը:
  - Ի՞նչ է պատահել, իշխանուհի՛,— հարցրեց Մեսրոպը տարակուսած:
  - Նախ դո՛ւ պետք է ասես, թե ինչ է պատահել,— ասաց իշխանուհին:
  - Չեմ հասկանում, ի՞նչ պիտի պատահեր,— զարմացավ Մեսրոպը:
    - Ի՞նչ է պատահել Համազասպիս:
    - Ա՛,— ուրախ բացականչեց Մեսրոպը,— պատահել է այն, ինչ որ մի օր պիտի պատահեր: Երևի սիրահարվել է մեր տղան:
    - Իսկ դու գիտես՝ ով է աղջիկը,— տագնապեց իշխանուհին:
    - Եվ տիկին Մամիկոնյանը ցանկանում է, որ ես առանց նվեր ստանալու հայտնեմ այդ գաղտնիքը: Չէ՛, իշխանուհի՛, դա չեղած բան է. մի լավ նվեր կխոստանաք, ես էլ կասեմ,— կատակեց Մեսրոպը:
      - Մեսրո՛պ, սիրելիս,— կերկերուն և հուզված ասաց իշխանուհին,— եթե իմ ուզած աղջիկը լինի, ես խոստանում եմ քեզ տալ Մուշեղի զինանոցի ոսկեպատ սուրը:
      - Եթե այդպես է, իմացի՛ր, իշխանուհի՛, հենց քո ասած աղջիկն է:
      - Չեմ հավատում:
      - Հավատա՛:
  - Իշխանուհին նոր միայն մոտեցավ գահավորակին և նստեց: Մեսրոպին առաջարկեց նստել: Մեսրոպը նստեց:
    - Դե հիմա պատմի՛ր,— կարգադրեց իշխանուհին անհամբեր: Մեսրոպը համառոտ պատմեց եղելությունը՝ ինչքան որ լսել էր ականատեսներից:
      - Իսկ Համազասպս սիրո՞ւմ է նրան,— հարցրեց մայրը:
      - Սիրում է, բայց չի հավատում: Չէ՛ որ նրանք քույր ու եղբայր են,— ասաց Մեսրոպը ծիծաղելով:
      - Այդ արդեն ոչինչ,— հանգիստ շունչ քաշեց իշխանուհին:

Տիկին Մամիկոնյանը ցանկացավ տեսակցել նաև Սահականուշի հետ և որոշեց անձամբ գնալ նրա մոտ:

Աղախինը Սահականուշին հայտնեց, որ տիկին Մամիկոնյանը եկել է և ուզում է տեսնել նրան: Սահականուշը, գահավորակին նստած, մազերն էր սանրում, հավաքում: Երբ աղախինը նրան հայտնեց իշխանուհու այցելության մասին, վարսակալը ձեռքից վայր ընկավ: Նա տագնապահար կանգնեց տեղում և աղախինին հրամայեց ներս հրավիրել:

Տիկինը ներս մտավ: Սահականուշը ընդառաջ վազեց: Երեխայի պես փաթաթվեց տիկնոջը, գլուխը սեղմեց փարթամ կրծքին և չկարողացավ զսպել փղձկոցը.

— Մայրիկ, անուշիկ մայրիկ...

— Հանգստացիր, աղջիկս,— գորովանքով ասաց տիկինը՝ գրկելով աղջկա գանգրահեր գլուխը և շոյելով խարտյաշ մազերը: Տիկնոջ աչքերում արցունքի կաթիլներ հայտնվեցին: Նա երկար ժամանակ չէր խոսում, որ չհեկեկա: Հանկարծ նա երկու ձեռքով կրծքից պոկեց աղջկա գլուխն ու սկսեց համբույրներ տեղավ ձակատին, աչքերին, այտերին...

Երբ քիչ հետո երկուսն էլ հանդարտվեցին, աղջիկը երեխայի պես թևքով սրբեց աչքերն ու այտերը: Տիկինը գրկեց նրա իրանը և գրկած մոտեցավ գահավորակին: Նրանք նստեցին գրկախառն:

— Դե՛, այժմ հանգիստ պատմիր,— ասաց տիկինը՝ մետաքսյա գոտուց դուրս բերելով մետաքսյա թաշկինակն ու նախ սրբելով աղջկա աչքերն ու այտերը, ապա՝ իր աչքերը:

— Մայրիկ, նա ինձ չի սիրում,— կերկերուն ձայնով ասաց աղջիկը՝ ձեռքով սրբելով արցունքի կաթիլը, որ այդ միջոցին այտի վրայով գլորվում էր ցած...

— Դու այդ որտեղի՞ց գիտես,— հոնքերը քնքշանքով խոժոռեց տիկինը:

— Նա ինձ ոչինչ չասաց,— հեկեկաց աղջիկը,— երբ ես նրա վրա ջուր ցանեցի... նա ոչինչ չասաց...

— Իսկ ի՞նչ պիտի ասեր:

— Չգիտեմ:

— Դու չգիտես, թե ինչ պիտի ասեր, և պահանջում ես, որ նա ասեր, իսկ եթե նա՞ էլ չգիտեր, թե ինչ պիտի ասեր...

- Տասը տարի է... իսկ դու ասում ես, թե...
- Տասը տարի ինչ,— կատակի անցավ տիկինը:
- Սիրում եմ:
- Ու՛մ:
- Նրան:
- Նա ո՞վ է:
- Մայրիկ, խնդրում եմ ինձ ձեռք մի՛ առնի, առանց այդ էլ նա ինձ վիրավորեց:
- Քեզ վիրավորեց, ինչպե՛ս,— լրջացավ տիկինը:
- Այո՛, միթե վիրավորանք չէ աղջկա համար, որ ինքն է առաջինը տղային սեր խոստովանում,— աչքերը խոնարհած՝ խոսեց աղջիկը:
- Դու շտապել ես, թե չէ նա՛ առաջինը քեզ առաջարկություն կաներ...
- Աղջիկը շեշտակի բարձրացրեց խոնարհած գլուխը և սևեռուն նայեց տիկնոջ աչքերի մեջ, ուզում էր իմանալ՝ տիկինը դարձյալ կատակո՞ւմ է, թե՛ լուրջ է խոսում:
- Տիկինը թուխ ու երկար թարթիչներով եզերված կոպերը ամուր փակեց, ժպտաց և գլխով դրական նշան արեց:
- Իսկ հիմա ինչ է լինելու:
- Ի՞նչը:
- Ես ինչ պիտի անեմ, ինչպե՛ս պիտի նայեմ աղջիկների երեսին:
- Ես նրան կուղարկեմ, որ գա իր մեղքերը քավի, և դրանից հետո ամեն ինչ լավ կլինի...
- Չէ՛, չէ՛, իշխանուհի՛,— տագնապեց աղջիկը,— ես սեր մուրալ չեմ ուզում:
- Խենթո՛նկա, ես նրան չեմ ուղարկում, որ նա գա քեզ սեր խոստանա: Ես նրան կստիպեմ, որ գա քեզանից ներողություն խնդրի,— խորամանկեց իշխանուհին:
- Ինչի՞ համար,— զարմացավ աղջիկը:
- Հենց թեկուզ նրա համար, որ նա չի կարողացել նույն պահին իրեն դրսևորել այնպես, որ քո արարքը դիտվի որպես քրոջական կատակ:
- Իշխանուհի՛, նա մեղավոր չէ. նա հանկարծակիի եկավ: Մեղավորը ես եմ,— ասաց աղջիկը և նորից գլուխը խոնարհեց:
- Զինվորն իրավունք չունի հանկարծակիի գալու,— խստորեն ասաց իշխանուհին,— ես նրան կպատժեմ:
- Հա՛մ,— զարմացավ աղջիկը:

— Իհարկե,— խորամանկ ժպտաց իշխանուհին և ոտքի ելավ,— դե վերջ տուր, լավկան: Ով, ով, Սահակ Պարթևի դուստրը իրավունք չունի սոգտալու: Ես քո կողքին եմ և քեզ հետ, դու հպարտ կաց, թող տղամարդն իր սխալն ուղղի...

Աղջիկը, ամեն ինչ մոռացած, ժպտաց:

Իշխանուհին դուրս եկավ Սահականուշի սենյակից և միջանցքում հանդիպեց կաթողիկոսին:

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց կաթողիկոսը՝ իր տանը պատահաբար տեսնելով իշխանուհուն:

— Առանձնապես ոչինչ, տեր կաթողիկոս,— մեղմ ժպտալով՝ ասաց տիկինը,— Անուշը թեթև գլխացավ ուներ, կանչել էր, եկա, գրուցեցինք, անցավ:

Կաթողիկոսը մտավ աղջկա սենյակը:

Տիկինը հետևեց նրան:

— Ի՞նչ է պատահել, աղջիկս,— տազնապով հարցրեց կաթողիկոսը:

— Ոչ մի բան, հայրիկ:

— Դու լա՞ց ես եղել,— անհանգստացավ հայրը:

— Հայրիկ, գլուխս թեթևակի ցավում էր, իշխանուհին դեղ տվեց, խմեցի, անցավ, հիմա լավ եմ:

Կաթողիկոսը թեքվեց և հարցական նայեց իշխանուհու աչքերին:

— Այո՛,— ասաց իշխանուհին,— Անուշիկս մի թեթև մրսել էր, հագուստը թրջել էին, դեղ տվեցի, անցավ... Այս ասելով՝ իշխանուհին սևեռուն նայեց կաթողիկոսի աչքերի մեջ, որով ուզում էր ասել՝ «Ես քեզ առանձին կպատմեմ...»:

Կաթողիկոսն ու իշխանուհին դուրս եկան աղջկա առանձնասենյակից: Աղջիկը նրանց ուղեկցեց մինչև դուռը:

Միջանցքում իշխանուհին կաթողիկոսին համառոտ պատմեց եղելությունը, կաթողիկոսը ներքուստ ուրախացավ, բայց ցույց չտվեց:

— Իշխանուհի՛,— ասաց նա,— ես գործերով զբաղված եմ և չեմ կարող, ինչպես հարկն է, զբաղվել մեր երիտասարդներով, խնդրում եմ՝ դու անձամբ հետևես, որ նրանք կանգնեն ճիշտ ուղու վրա...

— Տեր կաթողիկոս,— պատասխանեց տիկինը,— ինձ թվում է, որ կամոքն Աստծո, մեր երիտասարդները վաղուց կանգնած են ճշմարիտ ուղու վրա...

— Աստված պահապան, իշխանուհի,— ասաց կաթողիկոսը և իշխանուհուն ուղեկցեց մինչև դրսի դուռը:

Ուշ երեկոյան իշխանուհին նորից այցելեց որդուն: Որդին չէր հանվել: Նա միայն արձակել էր սուրը և հագուստով պառկել էր չբացված անկողնու վրա: Երբ մայրը ներս մտավ, որդին ընդոստ ոտքի ելավ և շորերն ուղղելով՝ գնաց նրան ընդառաջ:

— Ի՞նչ է պատահել, մայրիկ, ինչո՞ւ ես եկել գիշերով:

— Զավակս,— ասաց մայրը,— երջանկությունից աչքերիս քուն չի գալիս: Այս ի՞նչ օր էր ինձ համար...

Մայրը դանդաղ մոտեցավ և նստեց գահավորակին: Որդին մոտեցավ, նստեց նրա կողքին և գորովանքով համբուրեց մոր քունքի այնխառն մազափունջը, որն իջնում էր նրա երեսին:

Նրանք մի պահ լուռ մնացին: Որդին ցանկանում էր, որ մայրը խոսի, բայց մայրը չգիտեր՝ ինչից սկսեր:

— Ես խոսեցի Սահականուշի հետ,— վերջապես լռությունը խզեց մայրը:

— Ինչի՞ մասին:

— Նա սիրում է քեզ, Համազանսպ:

— Մայրիկ, ես նրան տարիներ շարունակ քույր եմ համարել:

— Հետո՞ ինչ,— խստահայաց ասաց մայրը,— միայն դա՞ է քեզ մտահոգում:

— Էլ ուրիշ ի՞նչ:

— Ես ի՞նչ իմանամ, գուցե նա քեզ դուր չի գալիս:

— Ի՞նչ ես խոսում, մայրիկ, ես միշտ էլ իմ հոգում նախանձել եմ այն երիտասարդին, ով որ բախտ կունենա արժանանալ Անուշի սիրուն...

— Ուրեմն, իմացիր՝ դու նախանձել ես քեզ:

— Ես չեի սպասում... Ուրիշներն ի՞նչ կասեն...

— Զգիտեմ, թե ուրիշները ինչ կասեն, մի բան, որին ես երբեք կարևորություն չեմ տվել, քանզի ուրիշները երբեք մեր լավը չեն ցանկանում... ես հիմա միայն մի բան կասեմ. առավոտ կանուխ կգնաս Անուշի մոտ և կբացատրվես:

— Ինչի՞ մասին, մայր:

— Տղամարդ եղիր, Համազանսպ, և մի՛ մոռանա, որ դու Մամիկոնյան ես և իմ որդին,— ասաց մայրն ու պատրաստվեց գնալու:

— Մայրիկ, մեկ օր առաջ ես Անուշի հետ կխոսեի անվերջ, ամեն ինչի մասին... բայց վախենում եմ՝ վաղը ոչինչ չկարողանամ ասել...

— Փանք Աստծո, տղաս, վախս անցավ... Ուրեմն դու էլ ես սիրում, իսկ իսկական սերը շատ խոսքերի կարիք չի զգում: Եվ մի՛ էլ

մտածիր, թե դու առավոտյան ինչ կարող ես ասել... Պարզապես քեզ պետք է գնալ նրա մոտ, և ուրիշ ոչինչ: Ինչ որ ասելու են՝ ձեր սրտերը կասեն...

Մայրը, որդուն բարի գիշեր մաղթելով, հեռացավ:

Համազասպը երկար ժամանակ չէր կարողանում քնել: Նրան տանջող խառնիխուռն մտքերի առանցքը Սահականուշն էր: Համազասպի մտքից չէին հեռանում նրա երկնագույն ու խոշոր արցունքոտ աչքերը, «պոռչ արած» մանկան նրա ներքին շրթունքի դողը... Եվ նա մի անգուսպ ցանկություն զգաց համբուրելու դրանք, համբուրելու այնքան, մինչև այդ երկնագույն ու ջինջ աչքերը ժպտան... Ամբողջ գիշեր Համազասպին չհաջողվեց քնել: Ավելի շուտ, նա զգաց, որ չի քնել, որովհետև դեռ նրա մտքերը չէին կոնկրետացել, երբ ականջին հասավ առաջին աբլորականչը...

\* \* \*

Սահականուշը նույնպես կարողացավ քնել միայն լուսաբացին: Նա արթնացավ, երբ ամռան արևն արդեն զգացնել էր տալիս իր այրող շունչը: Երբ աչքերը բացեց, իր գլխավերևում տեսավ կանգնած աղախինին՝ սպասողական վիճակում:

— Ինչ է պատահել, Նանն,— հարցրեց նա աղախինին:

— Իշխանը լուսաբացից սպասում է քո արթնանալուն,— եղավ պատասխանը:

— Ո՞ր իշխանը:

— Իշխան Համազասպը: Նա ուզում է քեզ տեսնել:

— Վաղու՞ց է սպասում:

— Ասացի՞ լուսաբացից:

— Հավաքիր անկողինը,— կարգադրեց Սահականուշը,— նախ օգնիր՝ հագնվեմ:

Նա արագ հագավ ամառային թեթև ոսկեկար խալաթը: Առատ մազերն անփույթ հավաքեց սևադրվագ արծաթե վարսակալի մեջ, հագավ գեղեցիկ տնային մաշիկները: Մինչ այդ աղախինը հավաքել էր անկողինն ու տարել, լվացվելու համար ջուր բերել, որով Սահականուշը մի երկու բուռ հապճեպ լվացվեց և աղախնի մատուցած սրբիչով չորացրեց դեմքը, մոտեցավ պատից կախված հայելուն և զրեթե առանց նայելու կարգադրեց.

— Ներս հրավիրիր իշխանին:

Աղախինը հրավիրեց Համազասպին և դուրս գնաց:

— Բարի լույս, քույրիկ,— ներս մտնելով և ետևից դուռը ծածկելով՝ քնքշորեն ողջունեց Համազասպը:

— Բարի լույս,— ժպտաց Սահականուշը և զգաց, որ այտերը վառվում են: Նա շռտագունեց:

Համազասպը նրան դեռ այդքան գեղեցիկ չէր տեսել: Մոտեցավ, բռնեց նրա ձեռքերը և մի քանի անգամ համբուրեց:

Աղջիկն այդ միջոցին թեքվել էր առաջ և դեմքով քնքշորեն գուրգուրում էր նրա գանգուրները: Տղան, առանց աղջկա ձեռքերը բաց թողնելու, ուղղվեց տեղում, անհուն կարոտով նայեց աղջկա աչքերի մեջ, և նրանք համբուրվեցին:

\* \* \*

Շուտով հայտնի դարձավ ամենքին, որ մոտակա ձմռանը հարսանիք է լինելու:

Իսկ ձմեռվա հարսանիքը իսկապես գեղեցիկ էր ու ճոխ:

## ՄԵԾ ՐԱԲԲԻՆ

Արշակ թագավորը, պարտություն կրելով Խոսրովից, քաշվեց Եկեղյաց գավառը և մեկ տարի հետո վշտաբեկ կնքեց իր մահկանացուն: Սամվել Մամիկոնյանը վերադարձավ Տարուն՝ իր պապենական կավածքը, որպեսզի այնտեղ կարողանա գեթ հանգիստ անցկացնել իր տառապած կյանքի վերջին տարիները: Թեոդոս կայսրը, օգտվելով պատեհ առիթից, Հայոց աշխարհի արևմտյան մասում այլևս թագավոր չկարգեց. այն դարձրեց բյուզանդական կայսրության մի ծայրագավառ, որը ղեկավարում էր Բյուզանդիայի կողմից նշանակված կուսակալը:

Բյուզանդահպատակ Հայաստանի հայ նախարարներից շատերը, տեսնելով Թեոդոս կայսեր նենգամիտ քաղաքականությունը, Խոսրովի հորաքրոջ որդի Գագավոն Կամսարական իշխանի գլխավորությամբ կապեր հաստատեցին Խոսրով թագավորի հետ և ձգտում էին նրա իշխանությունը տարածել նաև բյուզանդահպատակ Հայաստանի վրա: Այդ միջոցին Պարսկաստանում դավադրաբար սպանվեց Շապուհ թագավորը, և նրան հաջորդեց Քիրմանշահ արքան: Պարսկական արքունիքը զբաղված էր իր ներքին գործերի կարգավորմամբ:

Խոսրովը, որ հենց սկզբից երազում էր Հայոց աշխարհը տեսնել վերամիավորված, առիթը բաց չթողեց: Նա կապեր հաստատեց բյուզանդահպատակ հայ նախարարների հետ և Սահակ կաթողիկոսի միջոցով սկսեց գաղտնի սիրաշահել Բյուզանդիային՝ խոստանալով վերամիավորումից հետո դաշնակցել նրան:



Բյուզանդական արքունիքը սկսեց արտաքուստ խրախուսել Խոսրովի այդ քայլը՝ հավատացնելով, որ կօգնի նրան, մինչդեռ ներքուստ դեմ էր Հայոց աշխարհի վերամիավորմանը: Եվ շատ շուտով լուրը հասավ պարսկական արքունիք:

Քիրմանշահին հայտնեցին, որ Խոսրովը ձգտում է վերամիավորել Հայոց աշխարհը, այն էլ՝ Բյուզանդիայի օգնությամբ: Բյուզանդական արքունիքը չհապաղեց հավաստիացնել պարսկական արքունիքին, որ թեև լուրը ճիշտ է, բայց ինքը՝ Բյուզանդիան, ոչ մի պայմանով մտադիր չէ օգնել Խոսրովին...

Քիրմանշահը 392 թվականի գարնանը Խոսրովին հրավիրեց Տիգրոն: Խոսրովը, որևէ վատ բան չկասկածելով, մի քանի հավատարիմ նախարարների ուղեկցությամբ մեկնեց Պարսկաստան և ներկայացավ Քիրմանշահին՝ որպես բարեկամի: Սակայն պարսիկ արքան նրան չընդունեց բարեկամաբար: Նա Խոսրովին ամբաստանեց անհավատարմության մեջ և պահեց Տիգրոնում՝ որպես գերի: Նա գերի պահեց նաև Խոսրովի հետ Տիգրոն մեկնած Գազավոն Կամսարականին, որին մեղադրում էր Խոսրովին դեպի Բյուզանդիա կողմնորոշելու մեջ:

Անվավեր ճանաչվեցին Սահակ Պարթևի կաթողիկոսությունը և այն հայ նախարարների արտոնագրերը, որոնք շնորհված էին Խոսրովի թագավորության օրոք:

Սակայն Քիրմանշահը, վախենալով հայերի հնարավոր ըմբոստացումից, հայոց գահը չթողեց թափուր. նա անմիջապես Խոսրովի ավագ եղբայր Վոամշապուհին հռչակեց հայոց թագավոր և մեծ շուքով ուղարկեց Հայաստան...

\* \* \*

Վոամշապուհ արքան դեռ նոր էր բազմել հայոց գահին, երբ Քիրմանշահը Տիգրոն կանչեց հայոց հազարապետ Առավանին: Ոչ ոք չգիտեր հրավերքի պատճառը: Առավանը հազարապետ էր նշանակվել Խոսրովի թագավորելու շրջանում: Հինգ տարի շարունակ նա մեծ պատասխանատվությամբ կատարել էր հազարապետի պարտականությունները: Նրա գործունեությունից գոհ էին ոչ միայն հայոց թագավորն ու կաթողիկոսը, այլև հայ նախարարները, որոնք շփվել էին պարսիկ բարեհամբույր հազարապետի հետ: Ըստ հասած լուրերի՝ նրա աշխատանքից գոհ էր եղել նաև ինքը՝ պարսից Շապուհ Գ արքան:

Հազարապետը Հայոց աշխարհում ուներ խելացի մարդու համբավ: Կարճ ժամանակաընթացքում տիրապետել էր հայոց լեզվին և հարկ եղած դեպքում հայերեն էր խոսում նրանց հետ, ովքեր չէին կարողանում խոսել պարսկերեն: Հինգ տարի աշխատելով Հայոց աշխարհում, ինչպես ասում են, հինգ մատի պես գիտեր հայոց պետական ու հոգևոր նշանավոր գործիչներին, ինչպես նաև հայտնի նախարարներին... Եվ ասի այդ խելացի մարդը Հայաստանից հայրենիք էր վերադառնում Քիրմանշահ արքայի կանչով, այն էլ՝ մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ ամբաստանված էր հայոց Խոսրով թագավորը, որի հետ հինգ տարի համերաշխ աշխատել էր ինքը...

Առավոտը Տիզբոն հասավ գրեթե հուսահատ: Միակ լուսավոր շողը, որն աղոտ կերպով առկայծում էր նրա մտքի հորիզոնում, այն էր, որ Քիրմանշահը նրան Տիզբոն էր կանչել մենակ՝ առանց ընտանիքի: Այդ հանգամանքը հույս էր ներշնչում, որ արքայից արքան հայոց հազարապետին Տիզբոն է կանչել ոչ պատժելու համար: Հակառակ պարագայում ինչ միտք ուներ նրա ընտանիքը թողնել օտար աշխարհում. մի բան, որ նման դեպքերում չէր արվում...

Քիրմանշահը Առավանին ընդունեց բարձր տրամադրությամբ, նույնիսկ կատակեց.

— Ի՞նչ է պատահել քեզ, տեր հազարապետ, ոնց որ վախեցած լինես, չլինի՞ հայերը նեղում են քեզ:

Առավանը չիմացավ՝ ինչ պատասխանի, ուստի լուռ ու հարցական հայացքը հառեց ժպտացող Քիրմանշահին:

— Դե լավ, լավ, գիտեմ, որ դու վախեցողներից չես, նստիր գրուցենք, — մտերմաբար ասաց արքայից արքան՝ ձեռքով ցույց տալով գահամերձ գահավորակը:

Առավանը մի կերպ ուշքի եկավ: Արքայի մտերմական վերաբերմունքը թեև սրտապնդեց նրան, բայց նա անմիջապես չնստեց:

— Նստիր, նստիր, — այս անգամ գլխով գահավորակի կողմը նշան տվեց արքայից արքան, — քեզ հետ այսօր շատ կարևոր խոսելիք ունեմ:

Առավանը նախ մոտեցավ, երկու ձեռքով շնորհավորեց նրա գահակալությունը, հաջողություն մաղթեց, ապա զգուշությամբ նստեց իրեն առաջարկված գահավորակին և սպասեց, թե ինչ կհարցնի նոր գահակալը:

Արքայից արքան, գահի վրա նստած, որքան հնարավոր էր թեքվեց Առավանի կողմը, որ իրենց գրույցին մտերմական տեսք տա և ասաց.

- Ինչպէ՞ն է հայոց նոր թագավոր Վռամշապուհը:
- Առայժմ տխուր է,— պատասխանեց Առավանը:
- Ինչու՞:
- Շատ է մտահոգված Խոսրովի ճակատագրով:
- Խոսրովին արդեն նշանակել եմ Վռամշապուհի փոխարեն Տիգրանի հայոց հեծյալ գնդի հրամանատար, երբ վերադառնաս, նրան հայտնի՞ր այդ մասին:
- Իսկ Խոսրովն ինչպէ՞ն է,— այս անգամ հարցրեց Առավանը:
- Շատ լավ,— ծիծաղեց Քիրմանշահը,— նա ամեն կերպ ձգտում է ապացուցել, որ ինքը հավատարիմ է եղել մեր արքունիքին, որ ինքը սուկ բանսարկության զոհ է...
- Իսկ դուք ինչպէ՞ն եք ընդունում այդ:
- Շատ սովորական,— ժպտաց Քիրմանշահը,— ես էլ ձգտում եմ նրան ապացուցել, որ «հավատում եմ» իրեն, համոզում եմ, որ Տիգրանը իր համար ավելի ապահով է, քան Վաղարշապատը, քանզի բանսարկուները վաղ թե ուշ դավադրաբար կարող էին սպանել նրան, եթե նա շարունակեր մնալ հայոց գահին, և ես, որպէս «հարազատի», այդ ամենն արել եմ իր անձի ապահովության համար...
- Ներեցե՛ք, արքայի՛ց արքա,— ձայնը իջեցրեց Առավանը,— իսկ ինքը համոզվու՛մ է...
- Այս պարագայում դա քիչ նշանակություն ունի: Ինձ համար կարևորն այն է, որ նա «հավատում է»...
- Դա լավ է:
- Դե, նա խելք ունի: Հայոց աշխարհի համար նա լավ արքա կդառնար... բայց դա ո՞ւմ է պետք...
- Ձեր կամքն օրենք է, արքայի՛ց արքա:
- Միշտ էլ այդպէս է եղել և այդպէս կլինի՝ հզորների կամքը օրենք է, հազարապետ. աշխատի՛ր, որ Հայաստանում քո կամքը նույնպէս օրենք լինի...
- Տե՛ր արքա, ես հզոր տերության ներկայացուցիչ եմ Հայաստանում... Այս դեպքում ես իմ տերության կամքն եմ ներկայացնում...
- Կեցցե՛ն, հազարապետ, հասկացող զրուցակից ես,— խոսքն առաջ տարավ արքայից արքան,— գիտե՛ս՝ ինչու եմ քեզ Տիգրան կանչել:
- Դա Ձեր իրավունքն է, արքայի՛ց արքա:

— Դե հիմա լսիր: Վռամշապուհի գահ բարձրանալուց հետո անցել է շուրջ երկու ամիս: Ես քեզ Տիգրոն եմ կանչել, որ ինձ մանրամասն տեղեկություններ տաս Հայաստանում տիրող իրավիճակի և խոշոր նախարարական տների տրամադրությունների մասին: Մի խոսքով, դու պետք է ինձ կողմնորոշես այնպես, որ մեր հետագա քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ լինի որքան հնարավոր է ձիշտ:

— Արքայից արքա, ինչ որ Ձեզ հետաքրքրում է՝ մեկ-մեկ հանրոց տվեք, և ես կարելվոյն չափ կպատասխանեմ:

— Դե լավ,— ասաց Քիրմանշահը,— սկսիր կաթողիկոսից, ինչ է անում նա այժմ: Ինձ ասա՛, թե այդ գոռոզ Պարթևը ինչպես ընդունեց իմ հրամանը:

— Ինքը անձամբ Ձեր հրամանը ընդունեց իրեն յուրահատուկ սառնասրտությամբ, բայց իր առիթով մի շարք անվանի նախարարական տներ, հատկապես Մամիկոնյանները, գրգռված են: Ձե՛ որ Սահակ Պարթևը Մամիկոնյանների զարմիկն է ու վայելում է նրանց սերն ու հարգանքը, հատկապես հովանավորությունը՝ բառիս ամենալայն իմաստով: Եթե իմ կարծիքն եք հարցնում, պետք է կաթողիկոսի հարցում շատ զգույշ լինենք: Մանավանդ՝ նա տատի կողմից զարմիկն է նաև Արշակունիների:

— Ո՛վ է նրա տատը:

— Սահակ Պարթևի հոր՝ Ներսես Մեծի մայրը Տիրան թագավորի քույրն է, այսինքն՝ Արշակ Երկրորդ թագավորի հորաքույրը, և դա էր պատճառը, որ Ներսես Մեծը երբեմն հանդուրժում էր Արշակ թագավորի ոչ ցանկալի արարքները...

— Իսկ Մամիկոնյանների հետ Սահակը ինչ ազգակցություն ունի:

— Ամենամոտիկ: Նրա մայրը՝ Ներսես Մեծի կինը, Մամիկոնյան Վարդանի դուստրն էր:

— Ո՛ր Վարդանի:

— Ձեր պապ Շապուհ արքայից արքայի հավատարիմ բարեկամ Վարդանի:

— Այն Վարդանի՞, որին սպանեց իր եղբայր Վասակ սպարապետը:

— Այո՛, հենց նույն Վարդանի:

— Հետաքրքիր է,— ասաց Քիրմանշահը և ուղղվեց գահի վրա:

— Տե՛ր արքա, այսօր մենք առավել ևս չենք կարող հաշվի չառնել անհնազանդ Մամիկոնյաններին,— լռությունը խզեց Առավանդը:

— Այո՛,— ծոր տվեց Քիրմանշահը,— ինձ ասել են, որ Սամվել Մամիկոնյանը ոչ միայն ինքն է անցել հունաց կողմը, այլև իր հետ է տարել նաև հայոց ազդեցիկ շատ նախարարների:

— Արքա՛, կարող եմ ասել, որ Սահակի պարագայում Սամվելը երրորդական անձ է Մամիկոնյանների մեջ: Սահակ Պարթևը այժմ առավել ամուր կապերով է կապված Մամիկոնյանների հետ: Այսօր Մամիկոնյանները նրա խոսքով են նստում ու վեր կենում: Նրա խոսքը Մամիկոնյանների համար օրենք է:

— Որո՞նք են այդ կապերը:

— Ձեզ արդեն հայտնի է, որ Սահակը տարիներ առաջ որդեգրել էր Բաթ Սահառունու կողմից դավադրաբար սպանված Մուշեղ Մամիկոնյանի անչափահաս որդուն՝ Համազասպին:

— Լսել եմ այդ մասին:

— Այժմ Համազասպը Սահակ Պարթևի փեսան է՝ միակ դստեր՝ Սահականուշի ամուսինը:

— Վաղու՞ց է փեսայացել:

— Սահակը երկու տարի առաջ երկրորդ արու թոռն ունեցավ, որին մեծ հանդեսով մկրտեց և անունը կնքեց Վարդան...

— Ինչպես տեսնում եմ, Սահակը ի հիշատակ իր պապի է թոռան անունը Վարդան կոչել, ուրեմն, կարելի է ենթադրել, որ նա մեր նկատմամբ բարյացակամ է: Չէ՞ որ նրա պապ Վարդանը մեր գահին հավատարիմ էր, և եթե չեմ սխալվում, հենց այդ պատճառով էլ զոհվեց հարազատ եղբոր ձեռքով:

— Սահակը մեծ անհատականություն է, արքայից արքա: Նման փաստերով դժվար է որոշել՝ նա մե՞զ է կողմնակից, թե՞ Բյուզանդիային: Ես հավատացած եմ, որ նա հավասարապես ատում է ինչպես մեզ, այնպես էլ Բյուզանդիային: Բայց նա այնքան մեծ դիվանագետ է, որ ոչ ոք չի կարող ապացուցել այդ: Նա ոչ միայն հզոր կամքի տեր, այլև անսահման հեռատես դիվանագետ է: Բերեմ միայն մի օրինակ: Ամենքին հայտնի է, որ նրա պապին՝ Վարդանին, սպանեց եղբայրը՝ սպարապետ Վասակ Մամիկոնյանը, բայց դա չխանգարեց Սահակին, որ նա ջերմորեն որդեգրի Վասակի թոռանը՝ Համազասպին: Իսկ գիտե՞ք, արքա՛, դրանով նա իր հրամանին ենթարկեց նաև հայոց սպարապետական սուրը, որի ուժը վաղուց ծանոթ է մեզ... մի խոսքով, Սահակ Պարթևը այսօր չթագադրված արքա է Հայոց աշխարհում:

— Բայց ես նրան կարգալույծ եմ արել:

— Ներեցե՛ք, տներ արքա, Սահակը նույն հեղինակությունն ու ուժն ուներ նաև կաթողիկոս դառնալուց առաջ: Այդ էր պատճառը, որ Խոսրովը նրան կաթողիկոս ձեռնադրեց, որպեսզի հզոր աջակից ունենար...

— Այնուամենայնիվ, նրա աջակցությունը Խոսրովին չօգնեց...

— Տեր իմ, Սահակը ավելի շուտ աջակից է հայոց գահին, քան թե գահակալին: Եթե նա զգա, որ վտանգ է սպառնում գահին, անմիջապես ոտքի կհանի ամբողջ հայ ժողովրդին: Գիտե՛ք, թե նա ինչ ասաց, երբ լսեց Ձեր հրամանը՝ Խոսրովին գահազրկելու և իրեն կարգալույծ անելու մասին:

— Ի՞նչ ասաց:

— Ասաց. «Ձկա չարիք առանց բարիքի: Իմ կարծիքով, կյանքի դաժան հնոցում թրծված Վռամշապուհը հայոց գահի ապահովության համար ավելի շրջահայաց կլինի, քան երիտասարդ Խոսրովն էր...»:

— Ի՞նչ ես կարծում, հնարավոր չէ՞ Սահակի և Մամիկոնյանների միջև սեպ խրել:

— Դրա համար կպահանջվեն հսկայական ժամանակ, ջանքեր ու միջոցներ, որոնք, վախենում եմ, ապարդյուն լինեն...

— Ինչո՞ւ:

— Սահակը առանց Մամիկոնյանների էլ հզոր է:

— Ինչու՞մ է կայանում նրա ուժը:

— Հնավանդ օրենքներով նա Հայոց աշխարհի գերագույն դատավորն է և արտակարգ լիազորություններ ու իրավունքներ ունի: Այդ իրավունքները գործադրելու համար երկրով մեկ ունի գործակալների լայն ցանց: Բացի այդ, Հայաստանի ցանկացած մասում հիմնել է քրիստոնեության վարդապետություն դավանող միաբանություններ, որոնք մոլեռանդորեն հավատում ու սիրում են Սահակին, պատրաստ են նույն մոլեռանդությամբ կատարել նրա ցանկացած հրամանը: Այդ մարդկանց թիվը Հայոց աշխարհում այժմ մի քանի հարյուրի է հասնում: Միաբանություններին կից և նրանցից գատ հիմնել է դպրոցներ, որոնցում հունարեն ու ասորերեն լեզուներով քրիստոնեական վարդապետություն են սովորում հազարավոր հայ աշակերտներ: Նա իր ձեռքի տակ ունի վաթսուն հոգուց բաղկացած տքնողների հավատարիմ մի գունդ, որոնք «ակումիտ» են կոչվում: Սահակը այդ գնդի միջոցով հսկում ու կարգավորում է երկրի կրոնական ու կրթական գործերը: Նրանք զբաղվում են նաև բժշկությամբ ու դատական գործերով:

— Իսկ ովքե՞ր են այդ ակումիտները,— մտազբաղ ու գրեթե զարմացած հարցրեց Քիրմանշահը,— Ի՞նչ ծագում ունեն:

— Ակումիտները ծագում են բնակչության տարբեր խավերից: Նրանց մեջ կան և՛ շինականներ, և՛ իշխաններ, որոնք օգտվում են տքնողի հավասար իրավունքներից: Ակումիտները ժողովրդին համոզում են, որ իբրև իրենք աշխարհաթող են եղել, և աշխարհիկ կյանքը իրենց չի հետաքրքրում, որ իրենց կոչումն է՝ տքնությամբ հետևել Քրիստոսի սուրբ խաչին և դրանով ժողովրդին բերել սուրբ հավատի... Բայց համոզված եղեք, տե՛ր արքա, որ այդ «աշխարհաթող» տքնողները իրենց ժողովրդաշահ գործերով ավելի մեծ ազդեցություն ունեն ժողովրդի մեջ, քան որևէ հայ աշխարհիկ նախարար կամ իշխան:

— Ի՞նչ միջոցներով են ապրում այդ ակումիտները:

— Նրանք իրենց վարժեցրել են սակավապետության, ապրում են գրեթե ճգնավորի կյանքով, որի համար էլ ժողովուրդը շատ հաճախ նրանց ճգնավոր է կոչում: Հազնում են հասարակ մագեղեն հագուստ: Մնվում են այնքան, որքանով հնարավոր է պահպանել առողջությունը: Թվում է, թե զբաղվում են միայն աղոթքով, բայց նրանց տքնանքի էությունն այն է, որ գրքեր են գրում, օգտակար խորհուրդներ տալիս բնակչությանը, բժշկություն անում, օգնում են կարոտյալներին, տեղն եկած տեղը պատժում չարագործներին՝ իհարկե տեղի իշխանությունների օգնությամբ: Բնակչությունը ամենուրեք նրանց հավատում և օգնում է: Ակումիտների ապրուստը հոգում է Սահակը իր կավածքների հասությից, իսկ միաբանությունները իրենց հողն ու միջոցներն ունեն, որոնց հասությից երբեմն օգնում են նաև իրենց մոտ ժամանակավորապես հանգրվանող տքնողներին...

— Հնարավոր չէ՞ դրանք վերացնել:

— Մեր կողմից արված նման թույլ փորձն անգամ Հայոց աշխարհը շուտ կտա դեպի Բյուզանդիա...

— Դու համոզված ես...

— Այո՛, տե՛ր արքա: Մենք այսօր ոչ թե պիտի մտածենք դրանք վերացնելու մասին, որը, իմ համոզմամբ, մեր ուժերից վեր է, այլ նրանց սիրաշահելու...

— Բանից պարզվում է, որ մենք սխալ ենք թույլ տվել, հազարապեն:

— Երբ սխալն ուղղում են, այն դադարում է սխալ լինելուց, տե՛ր իմ,— ասաց Առավանք:

— Դե ի՞նչ, եթե անհրաժեշտ է, պետք է ուղղել:

— Որքան շուտ, այնքան լավ, տե՛ր արքա,—սրտապնդվեց Առավանը:

— Նույնիսկ այդպե՛ս:

— Այո՛, տե՛ր իմ: Մեր հապաղելու դեպքում Սահակ Պարթևը կարող է եպիսկոպոս դառնալ Հայաստանի բյուզանդական մասում...

— Իսկ եթե՞...

— Ո՛չ, տե՛ր իմ, միայն ո՛չ այդ,— ահաբեկվեց Առավանը,— գաղտնիքը հանկարծ կբացվի, իսկ դա նշանակում է մի նոր պատերազմ՝ ոչ մեր օգտին...

— Համոզեցիր: Սահակին մեր կողմում պահելու գործը թողնում եմ քեզ: Հայաստան վերադառնալով՝ անմիջապես գործիր:

— Ես պետք է վերադառնամ իմ գործին:

— Բա էլ ո՞վ,— ծիծաղեց Քիրմանշահը.— արքունիքը քո աշխատանքից շատ գոհ է: Քեզ Տիգրբոն եմ կանչել կոչումդ բարձրացնելու համար: Դու կարող ես այսուհետև ադամանդակուռ բազալանդ կրել: Եթե քո անհրաժեշտությունը այստեղ չզգամ, դու կմնաս Հայաստանում՝ որպես հազարապետ, իսկ եթե բախտը մեզ ժպտա, և ինչու չէ, գուցե և ավելի բարձր պաշտոնում...

— Ես միշտ պատրաստ եմ Ձեր հրամանին ծառայելու,— երախտագիտությամբ ասաց Առավանը:

— Եվս մի փոքրիկ հարց, և դրանով սահմանափակենք մեր այսօրվա շատ հաճելի զրույցը:

— Սիրով լսում եմ, արքայից արքա:

— Մամիկոնյան տնից, բացի Համազասպից, Սահակի աջակիցների մեջ կա՞ ազդեցիկ ուրիշ մեկը:

— Կա, տե՛ր իմ:

— Ո՞վ է:

— Սահակի հարազատ քեռին, այսինքն՝ Վարդան Մամիկոնյանի կրտսեր որդին, որը Սահակից երիտասարդ է գրեթե հինգ տարով: Մեծ խելքի տեր, համարձակ անձնավորություն է: Փայլուն կերպով տիրապետում է մի քանի լեզուների, հմուտ զորահրամանատար է, դիվանագետ: Վայելում է Սահակի արտակարգ վստահությունը և Սահակի համար կզոհի սեփական անձը, եթե հարկ լինի:

— Ինչո՞վ է զբաղված:

— Հայոց թագավորական թիկնապահ զորքի՝ Մամիկոնյան գնդի հրամանատարն է: Մամիկոնյան այրուձին նրա արևով է երդվում:

— Անունն ի՞նչ է:



— Մենք, տներ արքա: Դուք, անշուշտ, նրա անունը լսած կլինեք: Դա այն երիտասարդ զորականն է, որը Խոսրով թագավորի օրոք առանց կռվի ու արյունահեղության հայոց թագավորական գանձերը վերադարձրեց Վաղարշապատ:

— Այո՛, այո՛, լսել եմ: Ես այն ժամանակ Քիրմանում էի,— աշխուժացավ Քիրմանշահը,— բայց ես չգիտեի, որ նա մեր հավատարիմ Վարդան իշխանի որդին է: Նրա վերաբերմունքը մեր նկատմամբ ինչպիսին է...

— Չես իմանա, տներ իմ, արտաքուստ հարգալից է ու զուսպ...

— Իսկ Բյուզանդիայի նկատմամբ:

— Նույնն է, թեև բարձր կարծիքի է հունաց մշակույթի մասին: Ներսես Մեծը նրան հունական կրթության է տվել:

— Ի՞նչ տարիքի է:

— Երեք տասնամյակից քիչ ավել: Նա ծնվել է իր հոր՝ Վարդան իշխանի սպանության օրը: Ինչպես գիտեք, սպարապետ Վասակը Վարդանին դավադրաբար սպանեց իրենց հայրենի կալվածքում՝ Տայոց աշխարհում՝ Էրուխանի բերդի մոտակայքում: Այդ ժամանակ Վարդանի տիկինը հղի էր և ապրում էր բերդի ապարանքում: Լսելով ամուսնու սպանության գույժը՝ Մամիկոնյան տիկինը հանկարծ բռնվում է երկունքի ցավերով և ծնում է իր երկրորդ արու զավակին: Ներսես Մեծը, լսելով աներոջ հետ կատարված դժբախտության լուրը, շտապում է Հայոց աշխարհի և սեփական նախաձեռնությամբ վշտահար զոքանչին անչափահաս որդու և նորածին մանկան հետ տեղափոխում է Մամիկոնյան Տարոնի Հացեկաց գյուղի իր ամառանոց-դղյակը, որը Լուսավորչի տունը ժամանակին նվեր էր ստացել Մամիկոնյաններից: Ներսես Մեծը այսպիսով ապահովում է Վարդանի ընտանիքի անվտանգությունը, որովհետև գծոված լինելով Արշակ Երկրորդ թագավորի հետ՝ ապրում էր իր պապենական տոհմի Աշտիշատ կալվածքում, իսկ Աշտիշատից մինչև Հացեկաց մի ցերեկվա ճանապարհ էր: Ներսես Մեծը Աշտիշատի վանքում մկրտում է դժբախտ նորածինն և նրան կնքում հոր անունով՝ Վարդան...

— Վարդան, — զարմացավ Քիրմանշահը, — բայց քիչ առաջ դու նրան այլ անունով կոչեցիր:

— Ճշմարիտ է, արքայից արքա, — մի տեսակ խորհրդավոր ժպտաց Առավանը, — բանն այն է, որ Վարդանի դժբախտ այրին, այսինքն՝ երեխայի մայրը, ոչ մի կերպ չի հաշտվում ազդեցիկ փեսայի կնքած անվան հետ, չի կարողանում որդուն կոչել ամուսնու անունով, բայց և չի ցանկանում ընդդիմանալ Ներսես Մեծի կամքին...

— Հետո՞:

— Հետո մայրը շուրջ մեկ տարի որդուն կնքած անունով չի կոչում: Եթե հարկ է լինում որդու մասին խոսել, նա ասում է՝ սա, սրան, դրան... Յուրայինները, զգալով մոր վերաբերմունքը և, որպեսզի չվշտացնեն նրան, իրենք էլ են խուսափում մոր ներկայությամբ Վարդան կոչել արդեն թոթովախոս մանկանը: Սակայն մի պատահական դիպվածով երեխան վերջապես սեփական անուն է ստանում: Մի անգամ Մամիկոնյան տիկինը հյուր է լինում Աշտիշատում՝ փեսայի տանը, որտեղ հյուր է լինում նաև մի ասորի եպիսկոպոս, որը քիչ ու միչ հայերեն խոսել է իմանում: Ասորի եպիսկոպոսը, օրորոցում տեսնելով խելացի աչքերով ու աշխույժ երեխային, որի ծննդյան պատմությանը անշուշտ տեղյակ էր, քնքշորեն կատակելով երեխայի հետ՝ դիմում է Մամիկոնյան տիկնոջը. «Լավ նայեք սա տղան, տիկին, սա խելոք աչքեր ունի, սա մեծ մարդ դառնա, սա դառնա Մեսրոպի»: Մամիկոնյան տիկինը գլխով շնորհակալություն է հայտնում և ամուսնու մահվանից հետո առաջին անգամ ժպտում: Ներսես Մեծը, որ ամեն կերպ աշխատում էր բարձրացնել վշտահար զոքանջի տրամադրությունը, նկատում է, որ ասորի եպիսկոպոսի «Մեսրոպի»-ն ուրախություն պատճառեց նրան: Ուստի մեկ ժամ անց՝ եպիսկոպոսին ճանապարհելուց հետո, տուն մտնելով՝ տեսնում է, որ աշխույժ մանուկը թոժվում է մոր գրկում, և զոքանջի տրամադրությունը բարձրացնելու նպատակով կատակում է. «Մայրիկ, հապա ի՛նձ տուր այդ Մեսրոպին...»: Ներկաները ծիծաղում են: Ծիծաղում է նաև Մամիկոնյան տիկինը: Այդ օրվանից նրան կոչում են Մեսրոպ:

— Իսկ ի՛նչ է նշանակում «Մեսրոպ»,— հարցնում է Քիրմանշահը:

— Մեսրոպ ասելով՝ եպիսկոպոսը ցանկացել է ասել՝ Մեծ Բաբբի:

— Ահա թե ինչ, և նա արդարացրել է իր անունը:

— Իմ կարծիքով, այո, տե՛ր իմ: Նա այսօր Սահակ Պարթևի ամենամոտիկ և ամենախելոք խորհրդատուն է:

— Ի՛նչ զավակներ ունի Մեսրոպը, կինը ո՞ւմ դուստրն է,— հարցրեց Քիրմանշահը:

— Կինը Սահակ ասպետ Բագրատունու դուստրն է: Ասում են՝ աննման գեղեցկության տեր օրիորդ է եղել: Բայց ամուսնանալուց հետո հիվանդացել է անբուժելի ցավով և 7–8 տարի է՝ անկողնային հիվանդ է: Բժիշկներն ասում են, որ օրերը հաշված են... Ջավակներ էլ չունի: Երեք ամիս է, ինչ ծերունական հիվանդությամբ պառկած է նաև նրա հայրը՝ Սահակ ասպետը: Ասում են, որ նա էլ չի ապրի:

— Հավանական է՝ նրան կփոխարինի փեսան՝ Մեսրոպը:  
— Ո՛չ, արքայից արքա,— կտրուկ պատասխանեց Առավանը,—  
Սահակ Պարթևը ցանկանում է իր փեսային՝ Համազասպին, դարձ-  
նել սպարապետ:

Քիրմանշահը մի պահ մտածելուց հետո դարձավ Առավանին.

— Դե՛, հազարապետ, քեզ հաջողություն եմ ցանկանում: Գործե-  
լու համար քեզ տալիս եմ անսահմանափակ լիազորություններ: Գոր-  
ծիր այնպես, ինչպես քո խելքն է թելադրում... Մի բան էլ իմացիր. կու-  
զեի անձամբ խոսել Սահակ Պարթևի հետ: Ի՞նչ ես կարծում, նա Տիգ-  
բոն չի՞ գա...

— Այդ բանը ես գլուխ կբերեմ, արքայից արքա: Մանավանդ,  
ինչպես հասկացա, Դուք դեմ չեք, որ Սահակ Պարթևը նորից նստի  
կաթողիկոսական աթոռին:

— Ճիշտ ես հասկացել,— հազարապետ,— ուրախ տրամադրու-  
թյամբ ասաց Քիրմանշահը,— գնա՛ և գործիր...

## ՊԱՐՏՔԻ ՁԱՅՆԸ

Սահակ Պարթևը կարգալույծ արվելուց հետո չհուսալքվեց: Այդ օրերին անձնուրաց հայրենասերի նրա ոգին ավելի մարտական էր դարձել, և ներքին մի անընկճելի ձայն նրան մղում էր հայրենիքը զորացնելու նոր, ձկուն միջոցներ որոնելուն: Նա գրեթե ամեն օր խորհրդակցում էր Մեսրոպի հետ ապագա անելիքների մասին, ուրախանում, որ նման լրջմիտ ու զգոն համախոհ ունի: Նրան ուրախացնում էր հասկապես Մեսրոպի անաչառ վերաբերմունքը. նա վերլուծում էր Սահակի մտահղացումները և անկեղծորեն հայտնում իր կարծիքը: Լինում էին դեպքեր, որ Մեսրոպը անհնարին էր համարում Սահակի մտահղացման իրականացումը: Որոշ խնդիրների շուրջ վիճում էին օրերով, մինչև մեկնումեկը փաստերով համոզում էր մյուսին:

Օրը կիրակի էր, բայց Մեսրոպը տրամադրություն չունեի զորանոց գնալու: Նա սպասյակին ուղարկեց՝ իմանալու, թե Սահակ Պարթևը եկեղեցուց վերադարձել է տուն: Քիչ հետո գրեթե հևասպառ ներս ընկավ սպասյակը և հաղորդեց, որ սրբազանը այսօր եկեղեցի չի գնացել, որ նրան առավոտ կանուխ արքան պալատ է կանչել, և նա մինչև այժմ չի վերադարձել:

— Արքան կանչել է պալատ, — կարծես լսածին չհավատալով՝ հարցրեց Մեսրոպը:

— Այո՛, տեր Մամիկոնյան: Ինձ այդպես ասաց եկեղեցու ավագ քահանան: Նա ասաց, որ սրբազանին կանչելու համար եկել էին նրա փեսա Համազասպն ու մի անձանոթ իշխան:

Մեսրոպը շտապ կապեց գոտին, որից կախված էր արծաթագարդ պատյանով դաշույնը, և դուրս եկավ տնից: Սպասյակին հրամայեց անմիջապես մեկնել զորակայան և տեղյակ պահել իր տեղապահին, որ ինքը այսօր զորակայան չի գնալու, ապա բռնեց Համազասպի տան ձանապարհը: Նա խիստ զարմացավ, երբ Համազասպին գտավ տանը:

— Ի՞նչ կա,— բարևելուց հետո հարցրեց Մեսրոպը:

— Դեռ հայտնի չէ,— պատասխանեց Համազասպը,— ես պատրաստվում էի քեզ մոտ գալ:

— Ինչի՞ համար:

— Թագավորի մոտ գնալիս հայրիկը կարգադրեց, որ այդ մասին քեզ տեղյակ պահեմ:

— Հիմա ես ի՞նչ անեմ, գնամ պալատ:

— Ի՞նչ ասեմ,— ուսերը վեր քաշեց Համազասպը,— այդ մասին մայրիկը ոչինչ չասաց:

— Գալի՞ս ես ինձ հետ,— կտրուկ հարցրեց Մեսրոպը:

— Ու՛ր:

— Պալատ:

— Գնանք,— համաձայնվեց Համազասպը:

Մեսրոպին հայտնի էր, որ մեկ ամիս առաջ Սահակը եղել էր Վռամշապուհ արքայի մոտ՝ իր հետագա անելիքների մասին խորհրդակցելու համար: Արքան նրան ընդունել էր շատ ջերմ: Մոտ մեկ ժամ հետո զրուցել էր և վերջում խորհուրդ տվել՝ առայժմ չշտապել: Հրաժեշտի պահին արքան ասել էր.

— Տե՛ր Պարթև, Դուք առավել, քան որևէ մեկը շատ լավ գիտեք, որ համբերությունը ամենաբարձր առաքինություններից է մարդուս համար:

— Տե՛ր արքա, ասել էր Սահակը,— պարապ համբերությունը վայել չէ բանական մարդուն:

— Իսկ ինչու՞ պարապ: Փառք Աստծու, Դուք այնքան անելիքներ ունեք...

— Բայց ես այլևս կաթողիկոս չեմ:

— Հետո՞ ինչ: Դուք հինգ տարի առաջ նույնպես կաթողիկոս չէիրք: Միթե պարապ էիք... Դուք առայժմ մնացե՛ք մայրաքաղաքում, քանզի ինձ պետք էք, ես Ձեր խորհրդի կարիքն եմ զգում: Մի խոսքով, անհրաժեշտության դեպքում Ձեզ կկանչեմ:

Եվ ահա արքան այսօր իր մոտ է հրավիրել Սահակ Պարթևին: Մեսրոպը ցանկանում էր ժամ առաջ իմանալ պատճառը: Անհամբերությունից կարծես շնչառությունը կանգ էր առել: Պալատում նրանց

ասացին, որ Սահակ Պարթևը քիչ առաջ տուն գնաց: Նրանք շտապեցին տուն: Երբ ներս մտան, Սահակը նախաձաշում էր: Ողջունելուց հետո Սահակն ու Մեսրոպը մի պահ սևեռուն նայեցին իրար:

— Հը՞, ի՞նչ կա,— անհամբերությամբ հարցրեց Մեսրոպը և նստեց Սահակի ուղիղ դիմացը՝ սեղանի հակառակ կողմում:

— Տեսնում ես՝ նախաձաշում եմ,— կատակեց Սահակը:

— Դա ես տեսնում եմ, դու ուրի՞շ բան ասա,— խոռվածի տեսք ընդունեց Մեսրոպը:

— Երևի դու կուշտ ես,— նորից կատակեց Սահակը:

— Այո՛, խնջույքից եմ գալիս,— նույն տոնով շարունակեց Մեսրոպը,— ասա բերանս բան դրե՞լ եմ:

— Դե, ուրեմն հաց կեր, էլ ի՞նչ ես իրար անցել:

— Համազասպ, նստիր,— դիմեց Մեսրոպը Համազասպին,— այս մարդը մեզ կխենթացնի:

Համազասպը տեղավորվեց սեղանի կողքին:

— Գինի՛ լցրեք ձեզ համար,— ասաց Սահակը՝ շարունակելով հանգիստ նախաձաշել:

Համազասպը գինի լցրեց գավաթները:

— Ես չեմ խմում,— ցուցադրաբար մի կողմ հրեց գավաթը Մեսրոպը:

— Ինչու՞,— հարցրեց Սահակը:

— Մինչև չհնամամ՝ ինչ է եղել, չեմ խմի:

— Ազնիվ խոսք, վատ բան չկա, Մեսրոպ, խմիր: Պարզապես արքայի հետ մտքեր փոխանակեցինք մեր անելիքների մասին:

— Հետո՞:

— Հետո խմենք արքայի կենացը, Մեսրոպ, նա արժանավոր մարդ է... Մենք նրան ամեն կերպ պիտի պահպանենք... Ես նրա վարքի մեջ մի այնպիսի բան տեսա, որը պատիվ է բերում ոչ միայն իրեն, այլև կրեթի մեզ և մեր տառապյալ հայրենիքին...

— Եվ ո՞րն է այդ բանը:

— Խելքը, Մեսրոպ, խելքը: Նա մեծ ու շրջահայաց խելքի տեր է...

— Գործից խոսիր,— կտրուկ ասաց Մեսրոպը:

— Գործից կխոսենք երեկոյան: Այժմ ես եկեղեցի պիտի գնամ: Այնտեղ գործեր ունեմ կարգավորելու: Մի քանի օրից գնում եմ՝ շրջելու երկիրը: Արքայի կենացը...

— Արքայի կենացը,— ասացին Մեսրոպն ու Համազասպը՝ գավաթները խփելով Սահակի գավաթին...

Արևը նոր էր թեքվել դեպի մայրամուտ, երբ Մեսրոպը թակեց Սահակի կացարանի դուռը: Դուռը բացեց ինքը՝ Սահակը: Կացարանում ոչ ոք չկար: Սահակի տրամադրությունը բարձր էր:

— Ինչու՞ ես շուտ եկել, ես դեռ գործերս չեմ վերջացրել,— ներս հրավիրելով Մեսրոպին՝ ասաց Սահակը՝ ցույց տալով մազադաթներով ծանրաբեռնված սեղանը:

— Էլ չեմ դիմանում: Գործերդ հետո կանես: Ինձ ասա, ինչի՞ համար էր քեզ կանչել արքան:

— Վերջերս շատ ես անհամբեր դարձել:

— Համբերելու բան չի մնացել:

— Մարդս համբերող պիտի լինի, Մեսրո՞պ: Ինձ այդ մասին հիշեցրեց նաև արքան:

— Ուրեմն քեզ կանչել էր համբերություն քարոզելու՞:

— Ոչ միայն:

— Հապա էլ ի՞նչ:

— Նստի՛ր՝ հանգիստ խոսենք:

Նրանք նստեցին դեմ դիմաց դրված գորգապատ բազկաթոռներին:

— Դե խոսի՛ր,— ասաց Մեսրոպը:

— Ինչի՞ց սկսեմ:

— Ինչից կուզես: Միայն թե առանց որևէ բան թաքցնելու:

— Երդվում եմ հարազատ քեռուս առաջ,— ձեռքերի ավերը իրար միացնելով՝ կատակեց Սահակը:

— Ասոված վկա, քեզ չեմ ճանաչում: Քեզ հետ ինչ—որ բան է կատարվում: Դու այսօր լուրջ չես...

— Ուզում ես ասել, որ խենթացել եմ:

— Դե, ես այդպիսի բան չասացի,— նեղացավ Մեսրոպը:

— Փոխանակ ես նեղանամ, դու՞ ես նեղանում, մարդ աստծո:

— Վերջապես պիտի ասես, թե արքան քեզ ինչու էր կանչել,— համբերությունից ելավ Մեսրոպը:

— Արքային դիվանապետ է հարկավոր, Մեսրո՞պ:

— Հուսով եմ, որ այնքան խոհեմ եղավ, որ քեզ չառաջարկեց:

— Եթե ես գործեր չունենայի, չէի հրաժարվի, եթե նա առաջարկեր: Պարզապես նա թեկնածուի ընտրության հարցում դիմեց իմ օգնությանը:

— Եվ դու օգնեցի՛ր:

— Տեղնուտեղը, առանց վարանելու, քանզի ես վաղուց ունեի այդ թեկնածուն:

— Ո՞վ է նա:  
— Ինքդ կռահիր:  
— Արծրունյաց տեր Վաչէն:  
— Վատ թեկնածու չէ, բայց ունի երկու պակասություն՝ ծեր է և լեզուներ քիչ գիտի:

— Եթե այդպես դիտենք, ապա հարմար թեկնածու դժվար թե գտնվի:

— Կա:

— Ո՞վ է:

— Դու:

— Ես,— նյարդայնացած դեպի Սահակը ձգվեց Մեսրոպը:

— Այո՛, դու: Էլ ուրիշ ո՞վ:

— Ուրեմն, քո կարծիքով, ես ուրիշ անելիք չունեմ, ռազմական գործը քիչ է...

— Մեսրոպ,— նրա խոսքը կտրեց Սահակը,— մի՛ բորբոքվիր, հանգիստ խոսենք: Ես էլ եմ կարծում, որ ռազմական գործը շատ կարևոր է: Բայց դրանով այսօր թող զբաղվեն ուրիշները: Դու ավելի անհրաժեշտ բանով պիտի զբաղվես:

— Քո կարծիքով, հայրենիքի պաշտպանությունը կարևոր չէ՞,— ավելի բորբոքվեց Մեսրոպը:

— Դե ի՞նչ է՝ «քո կարծիքով, քո կարծիքով»... Այո՛, ոչ միայն ես, այլև բոլորը գիտեն, որ հայրենիքի պաշտպանության գործը ամենակարևորն է, բայց եթե իմ կարծիքն ես հարցնում, ապա մենք հայրենիքը զենքով ու զորքով պաշտպանելու գործը վաղուց տանով ենք տվել...

— Այդ ինչպե՞ս:

— Հենց այնպես: Եթե քո զենքն ու զորքը կարող լինեին հայրենիք պաշտպանելու, ապա այսօր այն պատառ-պատառ արված իր հարևանների գիշատիչ բերաններում չէր լինի...

— Ինչ էլ որ լինի, ես, որպես Մամիկոնյան, եղել եմ ու կմնամ հայրենիքիս զինվորը,— ասաց Մեսրոպը և ոտքի կանգնեց:

— Ի՛նչ է, հիմա էլ եմ քեզ ասեմ: Քո կարծիքով, ես հայրենիքիս զինվորը չեմ, թե՛ քեզանից քիչ ծառայություններ ունեմ հայրենիքի հանդեպ:

— Ո՞վ է նման բան ասել,— վրդովվեց Մեսրոպը, այդ հարցում ո՞վ կհամեմատվի քեզ հետ...

— Դե ուրեմն նստիր և հանգիստ լսիր:

Մեսրոպը մեղավոր հայացքով նայեց Սահակին և խոռված երեսայի պես նստեց քազկաթոռին:



— Մեսրոպ, սիրելիս,— մեծի իրավունքով ասաց Սահակը,— յուրաքանչյուր ազգ գոյատևելու երկու հիմնական պայմաններ ունի. դրանցից մեկը լեզուն է, մյուսը՝ երկիրը, որոնք անքակտելիորեն պայմանավորվում են մեկը մյուսով: Դրանցից մեկի գոյությունը առանց մյուսի անիմաստ է դառնում, քանզի, եթե ժողովուրդը կորցրեց երկիրը, կկորցնի նաև լեզուն, և հակառակը՝ կորցրեց լեզուն, կկորցնի երկիրը: Ապա կկորչի ինքը՝ ժողովուրդը: Մեր երկիրը այսօր մահացու խոցված է՝ բաժանված երկու մասի: Եվ գիտե՛ս, թե ինչու, քանզի թույլ է մեր լեզուն: Մենք ավելի շատ պարսկերեն, հունարեն կամ ասորերեն խոսեցինք, քան մեր մայրենի լեզվով: Մեզանից յուրաքանչյուրը մեր երկիրը ձգում էր և այսօր էլ ձգում է դեպի այնտեղ՝ դեպի այն երկիրը, որի լեզուն ինքը ավելի վարժ գիտի... Իսկ որքան էլ ամուր լինի որևէ բան, այն վաղ թե ուշ կպատառոտվի, եթե անընդհատ քաշքշվի այս ու այն կողմ... Հետևաբար մեր երկիրը միայն այն ժամանակ կդառնա միասնական, երբ մենք կունենանք միասնական ու կուռ մայրենի լեզու: Եվ եթե, Աստված մի արասցե, մենք կորցրինք մայրենի լեզուն, որն այսօր իրոք վտանգի տակ է, ապա մեզ կործանումից չի փրկի բանակն անգամ, եթե նույնիսկ արևն ունենա ձեռքին որպես զենք...

Սահակի խոսելու ընթացքում Մեսրոպը հմայված ու հափշտակված լսում էր նրան: Հետևելով Սահակի խոսքի ընթացքին՝ նա մերթմոռյվում էր, մերթ գոհունակ դեմք ընդունում: Դա նշանակում էր, որ նա լրիվ համաձայն էր Սահակի մտքերին: Երբ Սահակն ավարտեց ասելիքը, Մեսրոպը հանկարծ հարց տվեց.

— Դուք այդ մասին էիք խոսում արքայի հետ:

— Այո: Եվ գիտե՛ս, Մեսրոպ, ուրախալին այն է, որ արքան ինքը գրույցը տարավ այդ հունով:

— Զարմանալի է:

— Զարմանալու ոչինչ չկա: Ամեն մի խելոք գործիչ պետք է հասկանա ժամանակի պահանջը և նոր միայն գործի... Իսկ Վռամշապուհը շատ խելոք է, Մեսրոպ, Աստված է նրան ուղարկել մեզ...

— Ես միշտ հավատացել եմ քեզ, Սահակ, քանզի դու միշտ ճիշտ ես եղել քո որոշումներում... Միայն ասա՛՛ ես ինչ դեր եմ խաղալու պալատում, և որն է դրա նշանակությունը:

— Ա՛յ, դա արդեն ուրիշ խոսակցություն է,— ուրախացավ Սահակը,— Մեսրոպ, թագավորն ինձ խոստովանեց, որ իր համար շատ է դժվար երկիրը ղեկավարել առանց խելացի ու գործիմաց աջակցի,

մանավանդ մի այսպիսի խառնակ ժամանակներում: Նա ավստսանք հայտնեց, որ ներկա դրության մեջ կղժվարանա օգտվել իմ աջակցությունից, ուստի ինձ խնդրեց, որ ես երաշխավորեմ այնպիսի մեկին, որը, երկրի անցողարձին քաջատեղյակ լինելով հանդերձ, հավատարիմ լինի ինչպես հայրենիքին, այնպես էլ գահին: Բացի այդ, նա ասաց, որ այդ մարդը պիտի այնպիսին լինի, որ կարողանա անքակտելի կապ հանդիսանալ իմ և իր միջև և կարողանա այնպես անսխալ գործել, որ մեր թշնամիները չկարողանան նորից դավեր նյութել...

— Եվ դու համոզեցիր թագավորին, որ այդ «ամենակարող» մարդը ես եմ՝ մի գինվորական, որը շուտով կբոլորի իր քառասուն տարին, բայց դեռ նույնիսկ մի փոքրիկ ճակատամարտ չի շահել, չունի մի կարգին հեղինակություն: Ո՛չ, Սահակ, ես դեռ խելքս հացի հետ չեմ կերել, որ իմ ուսերին վերցնեմ այդպիսի ծանր պարտականություն...

— Բայց քիչ առաջ դու՞ չէիր, որ խոսում էիր հայրենիքի պաշտպանության գործերից,— կշտամբեց Սահակը:

— Ես գինվոր եմ և պատրաստ եմ զոհվել հանուն հայրենիքի:

— Խելքի՛ արի, երիտասարդ, հաղթանակը տոնում է ապրող գինվորը... Բավական է, ինչքան զոհվեցինք... Սրանից հետո մենք պիտի ապրենք: Վերջապես պիտի հասկանանք, որ հաղթանակն ապրողն է տեսնում: Աստված մեզ բանականություն է տվել, իսկ բանականությունը աստվածատուր ուժ է, բանականությունն անմահ է, մեզ անհրաժեշտ է պինդ բռնել այդ ուժից... Մենք պետք է կրթենք մեր ժողովրդին, պետք է համախմբենք նրան...

Մեսրոպը նորից մատնելով տրորեց ճակատը և սկսեց հոնքերի տակից լուռ նայել Սահակին:

— Հը՞, գինվոր,— հեզնեց Սահակը,— հրամայված է՝ կատարիր...

— Դա արքայի՞ հրամանն է,— դիրքը չփոխելով՝ հարցրեց Մեսրոպը:

— Ոչ միայն: Դա նաև իմ կամքն է: Մենք պետք է հոգ տանենք մեր լեզվի մասին: Եվ դրա համար դու պետք է առժամանակ լինես պալատում՝ թագավորի կողքին... Քո սուրը առայժմ կվերցնի մի այլ Մամիկոնյան, որի բազուկը քո բազկից հաղթ է: Դու պետք է մարտի գնաս աստվածատուր այն հզոր սրով, որը քչերին է տրվում...

— Ո՞վ է իմ փոխարեն ղեկավարելու Մամիկոնյան այրուձին:

— Դու ղում ես հարմար գտնում:

— Համազասպին:

— Ինչու՞:

— Մինչև բանականության լրիվ հաղթանակը, տեր Պարթև, երկիրը անպայման պետք է սպարապետ ունենա...,— այս անգամ հեզնեց Մեսրոպը:

— Տեսնում ես, Մեսրո՞պ, իսկ դու ինձ մեղադրում ես, որ ես չափից ավելի եմ սիրում քեզ...

— Դե լավ, լավ: Ե՞րբ եմ անցնելու իմ նոր պարտականություններին:

— Վաղվանից:

— Իսկ դու՞:

— Ես առայժմ շրջելու եմ երկրով: Պիտի այցելեմ միաբանություններն ու դպրոցները: Անհրաժեշտ է դպրոցների գործը լավ հիմքի վրա դնել:

— Միայն այդքա՞նը:

— Պիտի այցելեմ նաև մեր երկրի բյուզանդական մասի միաբանությունները...

— Նպատա՞կը:

— Անհրաժեշտ է շոշափել Տիգրանի տրամադրությունը... Կաթողիկոսական աթոռը պետք է նորից նվաճել... Դա այսօր օղ ու ջրի պես անհրաժեշտ է մեր ժողովրդին ու հայրենիքին: Առանց իշխանության ու իրավունքի դժվար կլինի բուժել մեր հայրենիքի կրծքում բացված վերքը...

\* \* \*

Սահակ Պարթևը մի ամբողջ տարի շրջագայեց Հայոց աշխարհի արևելյան մասի նախարարությունները: Չնայած պարսկական արքունիքի կողմից նա պաշտոնապես կարգալույծ էր արված, բայց հայ նախարարական տները նրան ընդունում էին որպես կաթողիկոս: Հարգանք ու պատիվ տալուց բացի, նախարարները Սահակին օգնում էին նրա կրթական ձեռնարկումների մեջ: Սահակը երիտասարդական ավյունով շրջում էր քաղաքից քաղաք և գյուղից գյուղ, մեծ համբերությամբ ծանոթանում տեղի միաբանությունների ու դպրոցների գործերին, տեղական իշխանությունների օգնությամբ բավարարում նրանց պահանջները, նոր հանձնարարություններ տալիս նախարարություններում բնակվող իր ակումբիստներին, նրանցից տեղեկություններ քաղում քրիստոնեական ուսմունքի տարածման ու ամրապնդման հաջողությունների մասին, քարոզներով հանդես էր գալիս ժողովրդի առաջ, հորդորում էր ամենքին՝ ամեն ինչ անել ի շահ հայրենիքի:

Հայաստանի արևելյան մասում մեկ տարի շրջագայելուց հետո Սահակը հաջորդ տարվա գարնանը ոտք դրեց Հայոց աշխարհի բյուզանդական մասը: Նա առավել հարգալից ընդունելության արժանացավ Սահակ ասպետ Բագրատունու կրտսեր եղբոր՝ Սմբատի կողմից, որը երիտասարդ հասակում կրթություն էր ստացել Տիգրանում: Շփվել էր պարսկական արքունիքի հետ: Նա հայոց ամբաստանված Խոսրով թագավորի հասակակիցն ու ընկերն էր և իր խիզախ վարքի համար մեծ համարում ուներ պարսկական արքունիքում: Սմբատը իր ավագ եղբայր Սահակ ասպետի՝ Արևելյան Հայաստան տեղափոխվելուց և հայոց գործերի սպարապետ դառնալուց հետո մնացել էր պապենական կալվածքի տեր ու տնօրեն և ժամանակավորապես բնակվում էր պապենական Սմբատավան ամրոցում: Նա գաղտնի կապեր էր պահպանում գահագրկված Խոսրովի, իր եղբայր Սահակ ասպետի և Արևելյան Հայաստանի համախոհ մի շարք նախարարների հետ: Հետևում էր Հայոց աշխարհի երկու մասերում կայացող քաղաքական անցուղարձերին՝ փայփայելով մի նվիրական հույս՝ պատեհ առիթի դեպքում ուժերը նվիրաբերել հայրենիքի միավորման գործին:

Սմբատ Բագրատունին Սահակ Պարթևին ընդունեց կաթողիկոսին վայել ծեսով ու հանդեսով: Մեկ շաբաթ տևող տոնախմբություններին մասնակցելու էին եկել ոչ միայն բյուզանդահպատակ Հայաստանի բոլոր նախարարները, այլև մերձակա պարսկահպատակ Տարոնի, Վանանդի, Բասենի նախարարները:

Տոնախմբությունների ընթացքում ներկա գտնվող հայ նախարարները ոչ մի առիթ բաց չէին թողնում երդվելու Սահակ Պարթևին, որ իրենք առանց վերապահումների նրան ընդունում են որպես Հայոց աշխարհի կաթողիկոս, և նրա համաձայնության դեպքում պատրաստ են միջնորդելու բյուզանդական Թեոդոս կայսեր առջև՝ Սահակ Պարթևին կաթողիկոս ձեռնադրելու համար:

Խորագետ ու հեռատես Սահակ Պարթևը ներքուստ ուրախանում էր, որ հայ նախարարների մեծամասնությունը մտահոգված է հայրենիքի ճակատագրով, քանզի հանձին իրեն՝ նրանք տեսնում են այն մարդուն, որի հետ հույս ունեին կապելու հայրենիքի ապագա բախտը: Նա շատ լավ գիտեր և համոզված էր, որ ներկա պարագայում ինքը հեշտությամբ կարող է Հայոց աշխարհի բյուզանդական մասում դառնալ կաթողիկոս, սակայն նրա նպատակը այդ չէր: Դա նշանակում էր Հայոց աշխարհի հիմնական մասը թողնել անտե-

րունչ Պարսկաստանի ամենակոյ երախում: Նրան պետք էր այդ առիթը օգտագործել Քիրմանշահի վրա ազդելու համար: Այդ պատճառով էլ տոնախմբությունների ընթացքում դիվանագիտական նկատառումներով նա տուրք էր տալիս նախարարների ցանկությանը, որ իբրև ինքը դեմ չէ նրանց կարծիքին: Միայն Բագրատունին, լավ ճանաչելով Սահակ Պարթևի բնավորությունը, նրա բռնած դիրքը ընկալում էր յուրովի և ներքուստ ուրախանում, որ նա այդ հարցում իրեն դրսևորում է այնպես, ինչպես ինքը՝ Սմբատ Բագրատունին է ցանկանում:

Ընդունելության տոնախմբություններից հետո նրանք առանձնացան, և նրանց միջև տեղի ունեցավ հետևյալ խոսակցությունը:

— Իշխան,— մտերմական ժպիտով սկսեց Սահակ Պարթևը,— չնայած Ձեր հասուն տարիքին՝ Դուք գործում եք երիտասարդական ավյունով:

— Քառասուն տարին այր մարդու համար գործելու իսկական հասակ է, եթե նա նվիրական նպատակներ ունի,— նույն մտերմական տոնով պատասխանեց Սմբատ Բագրատունին՝ շեշտելով վերջին միտքը:

— Ձեզ տեսնելով, իշխան, իմ մեջ կասկածի նշույլ չի մնում, որ Ձեր ասածը կատարյալ ճշմարտություն է:

Նրանք զուսպ ծիծաղեցին:

— Դե՛, այժմ պատմե՛ք, թե ինչպիսին է նոր թագավորը,— ասաց Բագրատունին:

— Փառք Աստծո, խելացի է:

— Ասում են՝ վախկոտ է:

— Դա ճիշտ չէ: Նա պարզապես չափազանց զգույշ է, իսկ այսօրվա պայմաններում նրա բնավորության այդ գիծը մեր աշխարհի համար օգտավետ է:

— Լսել եմ, որ քեզ մերժել է:

— Ի՞նչ հարցում:

— Ինձ պատմեցին, որ մի քանի անգամ դիմել ես նրան, որ միջնորդի Քիրմանշահի առաջ՝ քեզ կաթողիկոսական աթոռը վերադարձնելու և Համազասպին սպարապետ կարգելու համար, իսկ նա մերժել է:

— Ձեզ ճիշտ են պատմել: Բայց նա ինձ ոչ թե մերժել, այլ համոզել է:

— Ի՞նչ է համոզել:

— Համոզել է, որ առայժմ բարենպաստ հանգամանքներ չկան այդ հարցերի լուծման համար...

— Ուրեմն Վռամշապուհի մասին դրական կարծիքի՞ եք:

— Ավելի, քան սպասում էի:

— Փառք Աստծո, — խորը շունչ քաշեց Սմբատ Բագրատունին և գոհ ժպտաց:

— Այդ ի՞նչ է նշանակում, իշխան,— խոժոռվեց Սահակ Պարթևը,— Դուք ի՞նձ էիք փորձում:

— Ո՛չ, Աստված վկա, ես ուզում էի իմանալ ճշմարտությունը, և փառք Աստծո, որ ամեն ինչ իմ ուզածի պես է:

— Չեմ հասկանում Ձեզ, իշխան, պարզ խոսեք:

— Հիմա կհասկանաք,— ասաց Բագրատունին և վեր կենալով պատի ծածկապահարանից դուրս բերեց մագաղաթյա մի փաթեթ ու մեկնեց Սահակ Պարթևին,— կարդացե՛ք՝ կիմանաք:

— Սա ի՞նչ է,— վերցնելով փաթեթը՝ հարցրեց Սահակ Պարթևը:

— Նամակ:

— Նամակ: Ո՞վ է գրել:

— Եղբայրս՝ Սահակ ասպետը:

— Եվ ի՞նչ է գրել:

— Կարդա՛՛ կիմանաս:

Սահակ Պարթևը սկսեց կարդալ.

*«Սիրելի եղբայր Սմբատ. վերջին ժամանակներս ես չափազանց անբարամաղիբ եմ, երևի պարճառը իմ առաջացած տարիքն է: Մեծ փափագ ունեմ թողնելու սպարապետությունը, վերադառնալու հայրենի եզերք և կյանքիս ծերունական օրերն անցկացնելու մանկությունս օրերի սիրելի վայրերում: Սակայն երկու հանգամանք կաշկանդում են՝ իրականացնելու իմ երազանքը: Առաջինն այն է, որ Վռամշապուհ արքան ինձ չի ազատում սպարապետի պաշտոնից, թեև մի քանի անգամ նրան խնդրել եմ, իսկ երկրորդը՝ դուստրս անմխիթար վիճակում է, ես հույս չունեմ, որ նա կապաքինվի. շատ է մաշվել: Մեսրոպը՝ փեսաս, խոր վիշտ է ապրում... բայց ի՞նչ կարող ես անել, երբ հայրենիքի վիճակը ավելի անմխիթար է, քան յուրաքանչյուրիս անձնական դրությունը:*

*Երեկ գաղտնի նամակ արացա Խոսրովից: Նա էլ, թեև գերության մեջ է, բայց պարբար է իր անձը զոհել հանուն հայրենիքի: Նա գրում է, որ թեև Տիզբոնում ինքը ազատ է և նշանակված Տիզբոնի արքունա-*

կան գորաքանակի հայոց գնդի հրամանատար, բայց խիստ հսկողությամբ րակ է և գրկված է Տիգրանից բացակայելու արտոնությունից: Նույն վիճակում է իմ հարազատ և Ձեր բարեկամ Գազավոն Կամսարական իշխանը: Երևի Ասրժո կամքն է, որ նա ինձ հետ պիտի լիներ: Առանց նրա ես երևի վաղուց անձնասպան եղած լինեի: Այդ ազնիվ իշխանն իր փորձառությամբ իմ ամենամեծ սատարն է Տիգրանում: Նա իր վարքով համակրելի է դարձել նույնիսկ Քիրմանշահին, բարեկամական հարաբերություններ է հաստատել շար պալատական ավագանիների հետ: Ծերունի իշխանն այնքան լավարես է, որ ես էլ եմ երբեմն լցվում լավարեսությամբ: Նա ամեն ջանք գործ է դնում՝ գեթ մի բանով օգտակար լինելու մեր դժբախտ հայրենիքին: Հայրենիքից մեզ հասած ամեն մի լավ լուր ոգևորում ու գուրեպնդում է: Նրա խորհրդով լուրեր ենք փարածում Տիգրանում, որ Թեոդոս Մեծը մրադիր է Սահակ Պարթևին կաթողիկոս ձեռնադրել Հայոց բյուզանդական մասում, և պարկերացնո՞ւ մ ես, Քիրմանշահը այժմ ձգտում է այդ հարցում ուղղել իր պահլը: Հույս ունենք, որ շուրով հայոց կաթողիկոսական աթոռին նորից կնարի Սահակ Պարթևը: Չէ՞ որ Սահակի ինչքն ու պողպատյա կամքը այսօր շար են պետք մեր փարաքախտ հայրենիքին և նրա նոր գահակալ, իմ եղբայր Վռանշապուհին: Եթե նա աջակցի եղբորս, նրանք միասին հրաշքներ կգործեն... Բայց, ավա՛ղ, մեզ վերջերս լուրեր հասան, որ Պարթևը գժրված է թագավորի հետ: Այդ լուրը կայծակի պես շանթեց ինչպես իմ, այնպես էլ Գազավոն իշխանի սիրտը: Նա դրանում րեսնում է հայոց գահի վերջնական կործանում: Ի սեր Ասրժո, սիրելի՜ր իմ ասպետ, եթե հնարավորություն և միջոց ունես, հաշտեցրո՞ւ նրանց: Դա հայրենիքի համար շահած քո ամենամեծ ճակատամարտը կլինի: Իսկ եթե այդ հարցում կպահանջվի իմ կյանքը, ես պարտասար եմ: Սիրելի՜ իմ ասպետ, դու նրանց հորդորիր, որ համբերաբար լինեն: Տիգրանում և ամբողջ Պարսկաստանում ծավալվող դեպքերը Քիրմանշահի օգրին չեն. մեզ համար փրկության դուռ է բացվելու: Ո՛ղջ եղիր»:

Սահակ Պարթևն ավարտեց նամակի ընթերցանությունը, բայց երկար ժամանակ հայացքը չէր հեռացնում նամակից: Կողքից նայողը կզգար, որ նա մտքում վերլուծում է նամակի բովանդակության մանրամասները:

Լռությունը խզեց Սմբատ Բագրատունին.

— Հը՛, ի՞նչ կասես, տեր կաթողիկոս:

— Եթե հնարավորություն ունես, հայտնի՜ր նրան, որ մեր գժտության լուրը սուտ է, որ դա մեր թշնամիների սարքածն է: Գրի՛ր, որ ես նույնքան հավատարիմ եմ Վռամշապուհ արքային, որքան հավատարիմ էի իրեն, իսկ ինչ վերաբերում է արքայի ունեցած վերաբերմունքին իմ հանդեպ, ապա նա անձամբ ինձ կաթողիկոս է ճանաչում...

— Շնորհակալ եմ, տն՛ր կաթողիկոս,— ուրախացավ Սմբատ Բագրատունին,— այսօր իմ կյանքի ամենաերջանիկ օրերից մեկն է, ինչ լավ է, երբ մեր բոլորիս և հատկապես քո անսասան հոգում անմար է հայրենիքի նկատմամբ ունեցած պարտքի ձայնը...



## ՏԻԶԲՈՆՈՒՄ

Հայոց հազարապետ Առավանը մեկ շաբաթ Տիգրանում մնալուց հետո վերադարձավ Հայաստան: Վռամշապուհ թագավորը նրան դիմավորեց հավուր պատշաճի: Նույնիսկ եղան տոնախմբություններ ի պատիվ հազարապետի:

Առավանը արքայից արքա Քիրմանշահից ողջույնի նամակ էր բերել հայոց Վռամշապուհ թագավորին, որի մեջ հարգալից ողջույնի խոսքեր կային նաև հայոց մի շաբթ անվանի նախարարների, այդ թվում՝ Սահակ Պարթևի և Մեսրոպ Մամիկոնյանի մասին: Բացի այդ, Առավանը հայոց մեծերին բանավոր հայտնեց, որ մեծափառ Քիրմանշահը հարգալից վերաբերմունք ունի Քրիստոս աստծու հավատի հանդեպ, նույնիսկ ցանկություն ունի ծանոթանալու նրա էությանը: Հետո իմիջիայլոց ասաց, որ Վռամշապուհին հայոց գահին բարձրացնելուց իր եղբայր Խոսրովի փոխարեն արքայից արքան հետապնդել է դիվանագիտական նպատակներ: Նա այդ բանն արել է ի շահ հայ ժողովրդի, որ դրանով Հայոց աշխարհը գերծ է պահել բյուզանդական դավերից ու խարդավանքներից, քանզի Վռամշապուհը փորձված ու տարիքավոր է, քան նրա կրտսեր եղբայր Խոսրովը: Այնուհետև Առավանը Վռամշապուհին հասկացրեց, թե՛ վատ չէր լինի, որ Սահակ Պարթևը անձամբ ներկայանար արքայից արքային՝ իր կաթողիկոսական գործերը կարգավորելու նպատակով...

Վռամշապուհ արքան այդ մասին առանձին խորհրդակցեց Սահակ Պարթևի հետ: Վերջինս համաձայնեց: Բայց քանի որ աշուն էր,

և շուտով սկսվելու էին ձմռան ցրտերը, նրանք որոշեցին Սահակի Տիգրան մեկնելը հետաձգել մինչև գարուն:

Մեսրոպի կինը մահացավ ձմեռնամուտին: Մեկ ամիս անց վախճանվեց նաև կնոջ հայրը՝ Սահակ ասպետ Բագրատունին: Վշտի այդ օրերին Սահակ Պարթևը գրեթե ամեն օր լինում էր Մեսրոպի հետ. մերթ ինքն էր այցելում նրան, մերթ նրան էր կանչում իր մոտ: Մխիթարում էր, սփոփում: Առիթը բաց չէր թողնում հորդորելու, որ նորից ամուսնանա: Սակայն նման պահերին Մեսրոպը տխուր պատասխանում էր, որ դեռևս վաղ է այդ մասին մտածելը...

Մեկ ամիս անց Սահակի ու Մեսրոպի գրույցներն ու հանդիպումները սկսեցին խիստ գործնական բնույթ կրել: Նրանք ձմեռվա ամիսներին քննարկում էին առաջիկա գարնանը Սահակի՝ Տիգրան գնալու հանգամանքները, վերլուծում դրա առավելություններն ու թերությունները և գալիս այն եզրակացության, որ Սահակը այնուամենայնիվ պետք է մեկնի Տիգրան: Նորաթուխ արքայից արքայի վերաբերմունքը հուսադրում էր նրանց: Եվ նրանք ծրագրեր էին մշակում իրենց ապագա անելիքների մասին: Հատկապես լավ էին նախապատրաստում Սահակի՝ Տիգրան մեկնելու մանրամասները: Աշխատում էին անել ամեն բան, որպեսզի Սահակի այցը Քիրմանշահին լինի պատշաճ, լավ տպավորություն թողնի արքայից արքայի վրա...

Այդ տարի թեև ձմեռը ձյունապատ էր, բայց գարունը շուտ բացվեց: Սահակը պատրաստվեց Տիգրան մեկնելու: Որոշվեց, որ նրան պետք է ուղեկցի Մեսրոպը՝ իր զինվորների մի դասակով:

Սահակ Պարթևն ու Մեսրոպը Տիգրան հասան հայոց հոռի ամսի վերջերին (մայիսի կեսերին): Նրանք Տիգրանում չհանգրվանեցին իջևանատներում, այլ հյուրընկալվեցին հայոց նախկին թագավոր Խոսրովի տանը: Այդ մասին կար նախօրոք պայմանավորվածություն: Խոսրովը իր կնոջ և փոքրիկ աղջնակի հետ ապրում էր ճոխ կահավորված և պարտեզով շրջապատված մի մեծ ու գեղեցիկ առանձնատանը՝ բաղկացած բազմաթիվ ճաշասենյակներից ու ննջարաններից, որը, որպես սեփականություն, ժառանգաբար մնացել էր Վռամշապուհից: Նա թանկագին հյուրերին ընդունեց սրտաբաց ու կարոտով: Հանդիպումը սրտառույ էր: Ողջագուրվելիս արտասվում էին գրեթե բոլորը: Հուզմունքը չէր կարող զսպել նույնիսկ Խոսրովի տիկին Զարմանդուխը, որը Քիրմանշահի հարազատ քույրն էր: Այնուհետև Խոսրովը ցավակցություն հայտնեց Մեսրոպին՝ նրա սիրելի տիկնոջ և աներոջ մահվան կապակցությամբ:

Մեսրոպը խորին ակնածանքով շնորհակալություն հայտնեց՝ իրեն վշտակցելու համար:

Սահակ Պարթևը Վռամշապուհ թագավորից ու հազարապետ Առավանից միջնորդագրեր էր վերցրել, որոնցով հայոց թագավորն ու հազարապետը խնդրում էին արքայից արքա Քիրմանշահից Սահակ Պարթևին կաթողիկոսական աթոռը վերադարձնել, իսկ նրա փեսա Համազասպին՝ վախճանված Սահակ ասպետ Բագրատունու փոխարեն հայոց զորքերի սպարապետի պաշտոնում հաստատել:

Խոսքովի միջոցով Սահակ Պարթևը Քիրմանշահից տեսակցություն խնդրեց: Արքայից արքան խոստացավ ընդունել մեկ շաբաթից՝ նշանակելով ընդունելության օրը և ժամը:

— Սահակ Պարթևը մենանկ է եկել,— հարցրեց Քիրմանշահը Խոսրովին:

— Ո՛չ, նրան ուղեկցում է իր քեռին՝ Մեսրոպ իշխանը, Մամիկոնյան տնից,— պատասխանեց Խոսրովը:

— Այո՞,— ներքուստ ուրախացավ Քիրմանշահը,— ես նրա մասին լսել եմ... Հայտնեցե՞ք նրան, որ Սահակի հետ ինքը նույնպես կարող է ներկայանալ...

Այս լուրն ուրախացրեց Սահակին ու Մեսրոպին: Չէ՞ որ նրանց բաղձանքն էր միասին ներկայանալ արքայից արքային, բայց թե ինչպես պետք է արվեր, ուղիներ չէին գտնում, թեև Խոսրովը խոստացել էր հաջողեցնել...

Արքայից արքան Սահակին ու Մեսրոպին ընդունեց առավոտյան իր գահասենյակում՝ արքայական արդուզարդով ոսկեհուռ գահին բազմած: Գահասրահի աջ ու ձախ պատերի տակ հերթով շարված էին գահավորակներ: Աջ կողմի գահավորակները զբաղեցրել էր պալատական ավագանին՝ ըստ դիրքի ու պաշտոնի, իսկ ձախ կողմի գահավորակները ծածկված էին մետաքսյա շղարշ-ծածկոցներով: Երկու զույգ պճնված դրանիկներ կանգնած էին դրանց ետևում՝ պատի տակ: Երբ Սահակն ու Մեսրոպը Խոսրովի ուղեկցությամբ և արքայից արքայի սենեկապետի առաջնորդությամբ գահասրահ մտան, արքան ուղղվեց գահի վրա, թեթևակի ժպտաց և գլխի աննշմար խոնարհումով ու աջ ձեռքի ազատ շարժումով հյուրերին մոտենալու նշան տվեց: Ներկաների հայացքները ուղղվեցին դեպի հյուրերը: Նախ Սահակն առաջացավ, ապա նրանցից մի քայլ ետ՝ աջից ու ձախից, մոտեցան Խոսրովն ու Մեսրոպը: Գահից մոտավորապես երկու մետր հեռավորության վրա նրանք կանգ առան և արևելյան սովորու-

թյամբ՝ աջ ձեռքը կրծքերին դրած, գլխի թեթև խոնարհումով, ողջունեցին արքայից արքային: Վերջինս, ի պատասխան նրանց, նույնպես աջ ձեռքը դրեց կրծքին և տեղում նստած՝ գլխով ողջույնի նշան տվեց:

Մի պահ գահասարահում լռություն տիրեց: Ամենքը սպասում էին արքայից արքայի խոսքին: Արքայից արքան երկար սպասել չտվեց: Բավականին հաճելի առոգանությամբ դիմեց Սահակ Պարթևին.

— Ինձ՝ պարսից արքայից արքայիս համար, շատ հաճելի է մեր արքայական պալատում տեսնել մի այնպիսի նշանավոր հյուրի, որպիսին Սահակ Պարթևն է, քանզի նրա տոհմի, այսինքն՝ Սուրեն Պահլավունիների նախնիները, միշտ էլ հարգալից վերաբերմունք են ունեցել մեր՝ Սասանյաններիս արքայական տան նկատմամբ, և եթե չեմ սխալվում, Սուրեն Պահլավունիները մեր արքայական գահասարահում միշտ զբաղեցրել են չորրորդ գահը:

Այս ասելով՝ նա նշան տվեց գահավորակի ետևում կանգնած դրանիկին, որը ճարպիկ ու կիրթ շարժուձևերով վերցրեց չորրորդ գահավորակի շղարշ-ծածկոցը և խոնարհումով Սահակ Պարթևին հրավիրեց նստել: Սահակը նույնպես խոնարհումով արքայից արքային հայտնեց իր շնորհակալությունը և մոտենալով նստեց իր համար հատկացված գահավորակին:

Քիրմանշահի դեմքին արտացոլված էր ներքին մի ուրախություն, քանզի իրեն հաջողվել էր կոտրել Սուրեն Պահլավունիների անհնազանդ հպարտությունը՝ հանձին Լուսավորչի տան ամենանշանավոր գործիչներից մեկի՝ Սահակ Պարթևի: Սահակ Պարթևը ներքուստ դա զգում էր, բայց աշխատում էր արտաքուստ դրան ոչ մի նշանակություն չտալ, քանզի այդ պահին նրա միտքը զբաղված էր շատ կարևոր խնդրով, որը պետք է լուծեր ամեն գնով: Նա այդ օրերին ամեն ինչ կտար, միայն թե կարողանար կայունացնել կիսված հայրենիքի միասնությունը, ամրապնդել երկրի ներքին դրությունը, համախմբել հայ ազդեցիկ նախարարներին, ժողովրդի մեջ հաստատել միասնական ոգի...

Այդ ընթացքում Մեսրոպը խորագնին ուսումնասիրում էր գահասարահը, նրանում եղած պարսիկ ավագանուն, հատկապես նրա տիրակալին, որը առաջին իսկ հայացքից Մեսրոպի վրա թողեց խորամանկ մարդու տպավորություն: Նա հագիվ հիսուն տարեկան լինեք, բայց բունքերը լրիվ ձերմակած էին: Թեև Քիրմանշահը ջանք էր թափում բարեկիրթ երևալու, Մեսրոպը դրա ետևում թաքնված

տեսավ մի գոռոզություն, որը բխում էր ոչ թե նրա անձնական առավելություններից, այլ զբաղեցրած դիրքից: Վերջին մտքից Մեսրոպը հոգում ակամա ասելություն զգաց, որ առանձնապես արժանիքներ չունենալով՝ արքան իր կամքն է փորձում թելադրել Սահակ Պարթևի նման իմաստուն մեկին... Երևի այդ զգացումը արտահայտվել էր Մեսրոպի դեմքին: Քիրմանշահը անմիջապես դարձավ դեպի նա.

— Մամիկոնյան իշխանը կարող է զբաղեցնել հինգերորդ գահը: Մամիկոնյանները արժանի են դրան:

Դրանիկները նույն ծեսով հինգերորդ գահը մատուցեցին Մեսրոպին, որը նույնպես շնորհակալություն հայտնեց ու նստեց:

— Իսկ Արշակունյաց տերը,— դարձավ Քիրմանշահը Խոսրովին,— կարող է զբաղեցնել իր նախնիների ավանդական գահը:

Այդ խոսքի վրա դրանիկները Խոսրովին մատուցեցին երրորդ գահավորակը:

— Դե՛, այժմ սիրով լսում եմ իմ մեծարգո հյուրին, որը միննույն ժամանակ իմ եղբայրն է,— արևելյան քաղցրախոսությամբ Քիրմանշահը դիմեց Սահակ Պարթևին:

Սահակ Պարթևը կանգնեց, մետաքսյա սքեմի օձիքը արձակեց, ծոցագրպանից հանեց արծաթյա դրվագազարդ մի տուփ և ակնածանքով դիմեց արքայից արքային.

— Թո՛ւյլ տվեք, ո՛վ արևափայլ արքայից արքա, Ձեր տեսքին արժանանալու թույլտվության համար, ի նշան շնորհակալության, Ձեզ հանձնել Հայոց աշխարհի ճարտարագործ վարպետների համեստ, բայց սքանչելի ստեղծագործությունը:

Այս ասելով՝ Սահակ Պարթևը երկու քայլ մոտեցավ արքայական գահին և տուփը մեկնեց Քիրմանշահին:

Արքայից արքան թեթևակի նայեց մեծ վեզիրին, որ այդ ամբողջ ընթացքում անխոս կանգնած էր արքայի ձախ կողմում և ուշադիր հետևում էր իրադարձությունների ընթացքին: Մեծ վեզիրը երկու քայլ առաջացավ և Սահակ Պարթևից խիստ հանդիսավոր կերպով ընդունեց արծաթյա տուփը, ապա ետընթաց կանգնեց իր նախկին տեղում և արքային ու գահասենյակում ներկա պալատականներին տեսանելի՝ բացեց արծաթե տուփը: Տուփի պարունակությունը մոզական ազդեցություն թողեց դիտողների վրա: Դա դրվագազարդ ոսկե շքեղ մատանի էր, որի բավականին մեծ, ադամանդյա ակը շողշողում էր արտակարգ ցուլքերով: Մեծ վեզիրը հայացքը ուղղեց ար-

քայից արքային և դիմախաղով հիացական նշան տվեց, որը նշանակում էր, թե՛ արժանի նվեր է: Քիրմանշահը մի պահ հայացքով գննեց մատանին, ապա դարձավ դեպի Սահակ Պարթևը:

— Մեր կողմից հաղորդեցե՞ք Հայոց աշխարհի ոսկերիչներին, որ մենք շատ հավանեցինք իրենց նվերը:

Քաջալերվելով նվերի ընդունելությունից՝ Սահակ Պարթևը քաղաքավարությամբ ասաց.

— Ես համոզված եմ, որ Հայոց աշխարհի վարպետների ուրախությունը անսահման կլինի, երբ իմանան, որ իրենց աշխատանքը հավանության է արժանացել տիեզերական շահի կողմից...

— Արքայից արքա, թույլ տվե՞ք հայտնել, որ տիեզերակալ Պարսկաստանի հազարապետը այսօր կարող է մեզանից ստանալ հարյուր դահեկան ոսկի, որը Հայոց աշխարհի անվանի նախարարները մեզ հետ ուղարկել են աշխարհակենտրոն Տիզբոն՝ ի նպաստ ամենահաղթ արքայի գանձարանին:

Քիրմանշահի դեմքին գոհունակության ժպիտ խաղաց:

— Միևնույն ժամանակ թույլ տվե՞ք, արքայից արքա, — խոսքն առաջ տարավ Սահակ Պարթևը, — Ձեր ամենատես ուշադրությանը հանձնել Հայոց աշխարհի տեր, թագավոր Վռամշապուհի և հազարապետ տեր Առավանի ողջույնի նամակները՝ հղված Ձեր ամենակարող անձին:

Քիրմանշահը թույլտվության նշան տվեց: Այդ միջոցին Մեսրոպը ոտքի կանգնեց, երկու քայլ առաջացավ, ձեռքի մագաղաթյա զույգ պարույրները, որոնք կնքված էին Հայոց թագավորի ու հազարապետի կնիքներով, հանդիսավորությամբ մեկնեց մեծ վեզիրին: Վերջինս վերցրեց կնքված մագաղաթյա պարույրները, հանդիսավոր ծեսով քանդեց կնիքները և կիսաբաց նամակները, մեկնեց իրենից մի քայլ հեռավորության վրա կանգնած արքայական քարտուղարին և կարդալու նշան տվեց:

Քարտուղարը երգեցիկ ձայնով նախ կարդաց Վռամշապուհ թագավորի ողջույնի նամակը, որն ըստ էության մի խնդրագիր էր՝ ուղղված արքայից արքային՝ Սահակ Պարթևին, հայոց կաթողիկոսական աթոռը վերադարձնելու և նրա փեսա Համազասպ Մամիկոնյանին հայոց գորքերի սպարապետ նշանակելու մասին: Հայոց թագավորը խնդրում էր նաև թողություն շնորհել Ամատունյաց ու Կամսարական իշխանական տներին և թույլատրել նրանց՝ տիրելու իրենց պապենական կալվածքներին, որոնք արքայից արքայի կող-

մից մեղադրվել էին՝ հայոց նախկին թագավոր Խոսրովին դեպի Բյուզանդիա կողմնորոշելու համար: Գրեթե նույնպիսի բովանդակություն ուներ նաև Առավան հազարապետի ողջույնի նամակը: Միայն նամակի վերջում հազարապետը հավաստիացնում էր արքայից արքային, որ հայերի հավատարմությունն ավելի կատարյալ կդառնա պարսկական Բարձր դռան հանդեպ, եթե արքայից արքան բարեգութ ու ներողամիտ լինի նրանց նկատմամբ և կատարի Սահակ Պարթևի համեստ խնդրանքը...

Քիրմանշահը համակ ուշադրությամբ լսեց երկու նամակների ընթերցումը: Երբ նրան հայտնի դարձավ նամակների բովանդակությունը, գոհունակությամբ ժպտաց և ձեռքով նշան տվեց, որ մեծ վեզիրը տնօրինի դրանք: Վեզիրը քարտուղարից ետ վերցրեց նամակները, խնամքով փաթաթեց ու ամփոփեց իր լայն մետաքսե գոտում: Քիրմանշահը այդ միջոցին անսպասելի դարձավ դեպի Մեսրոպը.

— Մեզ հայտնի է, որ այս ձմռանը Ձեզ՝ երիտասարդ Մամիկոնյան իշխանիդ հետ մեծ դժբախտություններ են պատահել. վախճանվել են Ձեր տիկինը և նրա հայրը՝ մեծահամբավ սպարապետ Սահակ-ասպետ Բագրատունին: Մենք այդ առիթով Ձեզ պետք է նվեր մատուցենք. ինչ կցանկանար վշտացյալ երիտասարդ Մամիկոնյան իշխանը, որպեսզի պարսկական մեծագոր արքունիքն աներ նրա համար:

Ո՛չ Մեսրոպը, ո՛չ էլ Սահակը նման բանի չէին սպասում: Մի պահ նրանք հարցական իրար նայեցին: Մեսրոպն իսկույն ոտքի կանգնեց և ի նշան շնորհակալության՝ աջ ձեռքը դրեց կրծքին ու գլուխ խոնարհեց: Արքայից արքան, խորամանկ ժպիտը դեմքին, նայում էր նրան: Տարակուսանքի մեջ էր Սահակ Պարթևը. «Ի՞նչ կպատասխանի արդյոք Մեսրոպը»:

Մեսրոպը, ձեռքը կրծքին, գլուխը բարձրացրեց, ընդունեց հպարտ կեցվածք, ապա պատասխանեց.

— Անմիջապես կապաքինվեին իմ վշտերը, ես ինձ լիովին մխիթարված կզգայի, եթե արեգակնափայլ արքայից արքան իրականացներ դեպի Տիգրոն մեր առաքելության նպատակը. այն է՝ Սահակ Պարթևին վերադարձներ կաթողիկոսական աթոռը և հովանավորեր իր ամենակարող հզորությամբ...

— Թող ինձ ների Մամիկոնյան երիտասարդ իշխանը,— լայն ժպտալով՝ ասաց Քիրմանշահը,— ես կարող եմ արտոնել, որ Սահակ Պարթևը վերադառնա հայոց կաթողիկոսական աթոռին, բայց ես՝ զրադաշտս, ինչպես կարող եմ հովանավորել քրիստոնեությունը:

Մեսրոպը մտքերի մեջ ընկավ: Քիրմանշահը ժպտում էր: Նա գոհ էր իր տված հարցից և ցանկանում էր իմանալ, թե երիտասարդ հայ իշխանն ինչ կպատասխանի: Ներքուստ լարված էր նաև Սահակ Պարթևը: Սակայն Մեսրոպի մտածմունքը երկար չտևեց: Նրա դեմքը նորից պայծառացավ, և վստահ հնչեց պատասխանը.

— Թող ինձ ների տիեզերահռչակ արքայից արքան, որ ես իր ունկը ծանրաբեռնում եմ վաղուց հայտնի ճշմարտությամբ, բայց և այնպես, չեմ կարող չասել, քանզի Ձերդ արեգակնափայլ մեծության հարցի միակ պատասխանը սա է. մեծ տիրակալները, արքայից արքա, կոչված են մարդկային պատմության ընթացքին ուղղություն տալու... Ձեզ նման մեծերին ճակատագրով է տրված ողորմած լինել մարդկային բոլոր դավանանքների նկատմամբ: Իմ կարծիքով, Դուք, հովանավորելով քրիստոնեությունը, Ձեր պարտքն եք կատարելու...

Մեսրոպը խոսում էր ընտիր պարսկերենով, գեղեցիկ առոգանությամբ՝ խոսքը համեմելով արևելյան հաճոյախոսություններով: Սահակ Պարթևը հայացքով հետևում էր Քիրմանշահին և պալատական ավագանուն, որպեսզի իմանա, թե ինչ ազդեցություն է թողնում Մեսրոպի պատասխանը: Մեծ եղավ նրա ուրախությունը, երբ նկատեց, որ Մեսրոպի պատասխանը դուր է գալիս բոլորին:

— Ուրեմն ինչ,— գոհունակ ժպտալով՝ ասաց Քիրմանշահը,— հայոց երիտասարդ իշխանը, մեզ հիշեցնելով մեր պարտքը, առաջարկում է հովանավորել քրիստոնեությունը, որի մեջ, անկեղծ ասած, առաջադիմական քիչ բան կա... Ինձ համար հաճելի կլինի իմանալ՝ հայ երիտասարդ իշխանն ինչ առաջադիմություն է տեսնում քրիստոնեական դավանանքի մեջ, մի դավանանք, որը քարոզում է միամուսնություն... Չէ՞ որ դուք՝ հայերդ, առանց այդ էլ սակավաթիվ եք և հետևելով քրիստոնեությանը՝ ավելի կնվազեք, մինչդեռ գոյատևման համար զորք է հարկավոր, այն էլ՝ մեծաքանակ ու հզոր... Հակառակ պարագայում մեծաթիվ զորքերը ձեզ կտրորեն ոտքի տակ...

Հարցը բավականին խորամանկ էր ու խարդախ: Պարսկական ավագանին փայլում էր ուրախությունից, իսկ Սահակ Պարթևը մոայլված հետևում էր այդ ոչ հաճելի խոսակցության ընթացքին և չէր կարողանում կռահել, թե ինչով կվերջանա: Այդ պահին Մեսրոպին սանձելն արդեն անհնար էր, բայց նա հնարավորին չափ զուսպ և քաղաքավարությամբ ասաց.

— Հազար անգամ ներողություն եմ խնդրում, արքայից արքա, որ հանդգնում եմ անկեղծ լինել և ասել իմ կարծիքը. Ալեքսանդր Մա-



կերոնացու զորքերը իրենց մեծությամբ աշխարհ էին սասանեցնում, բայց այսօր նրանց հետքն անգամ չկա...

— Դրանով ի՞նչ է ուզում ասել Մամիկոնյան երիտասարդ իշխանը,— մռայլվեց Քիրմանշահը:

— Ճշմարտություն, տիեզերահռչակ արքայից արքա,— ասաց Մեսրոպը,— չե՞ որ բազկի ուժը մարդկային կարողությունների մի մասն է միայն, մարդկային կարողությունների հիմնական հզորությունը նրա միտքն է, նրա բանականությունը, նրա ոգին... Բազուկը մահկանացու է, միտքն է անմահ... Կգա ժամանակ, որ մարդկային միտքը կատեղծի այնպիսի հզոր զենքեր, որ հազար ու բյուր բազուկների ուժը անզոր կդառնա նրանց նկատմամբ...

Մեսրոպն այնքան էր համոզված իր խոսքերի ճշմարտացիության մեջ, որ կարծես մոռացել էր, թե ինքը որտեղ է գտնվում: Գնալով նրա խոսքը դառնում էր անկաշկանդ... Ներկաները լարված լսում էին: Լարված էր նաև Քիրմանշահը: Սահակն այդ լարվածության մեջ անբավականության նման մի բան տեսավ: Մեսրոպն ինքն էլ զգաց այդ լարվածությունը, ուստի իր խոսքն ավարտեց մեղայականով.

— Արքայից արքա, ներեցե՛ք համարձակությանս համար, որը ստացվեց իմ նկատմամբ Ձեր վեհանձն վերաբերմունքի հետևանքով...

Քիրմանշահը մեծահոգաբար ժպտաց: Ժպտացին նաև պալատականները: Սահակ Պարթևը թեթևացած շունչ քաշեց: Մեսրոպը զգաց, որ տանուլ չի տվել...

— Իշխան,— արքայից արքան քմծիծաղելով դիմեց Մեսրոպին,— Ձեր ասածը գուցե և ճշմարտություն է, բայց այն շատ հեռավոր ապագայի համար է, առայժմ մեծաքանակ բանակներն են որոշում երկրների բախտն ու ճակատագիրը: Սա է մեր օրերի ճշմարտությունը...

Մեսրոպը ցանկանում էր ասել, որ՝ «Մենք միայն այսօրվա համար չենք ապրում», սակայն իրեն զսպեց և բարձրաձայն ասաց.

— Իրավացի է արքայից արքան, քանզի այդ ճշմարտությունն է մեզ այսօր Տիգրոն բերել...

Սահակ Պարթևը ներքուստ նորից տագնապ զգաց: Չէ՞ որ եթե Մեսրոպը նույն ձևով շարունակեր, գուցե և Քիրմանշահին դուր չգար... Բայց Քիրմանշահին էլ ձեռնառու չէր գրույցը նման հունով տանելը, քանզի նա ինքն էր ապասպրել, որ Սահակ Պարթևը ներկա-

յանա իրեն, և նպատակը նրան սիրաշահելն էր, ուստի Մեսրոպի վերջին խոսքը, թեև լավ ընկալեց, բայց թողեց անհետևանք:

— Եթե մեծ տիրակալների պարտքն է,— գրույցի ընթացքը փոխեց Քիրմանշահը,— ինչպես նկատեց Մամիկոնյան երիտասարդ իշխանը, բայց թող նա համոզված լինի, որ մենք՝ պարսիկներս, միշտ էլ եղբայրաբար ենք վարվել հայերի նկատմամբ և այսօր էլ մենք պատրաստ ենք մեծահոգաբար կատարել մեր պարտքը... Ապա դարձավ դեպի Սահակ Պարթևը,— տե՛ր Պարթև, Ձեր պատվիրակության առաքելության նպատակը լրիվ կրավարարվի, կհարգվի նաև Հայոց թագավորի ու հազարապետի միջնորդագրերը և որպես իմ արքայական խոսքի հավաստիացում՝ վաղը ես Ձեր պատվիրակությանը հրավիրում եմ ճաշի...

## ԱԿԱՄԱ ՎԱՐԴԱՊԵՏԸ

Աղոթարանը շառագունել էր: Թռչունները նոր էին սկսել իրենց վաղորդյան օրհներգը: Հայոց սահմանամերձ Բաղեշ բերդաքաղաքից դուրս եկան մի խումբ հեծյալներ և գառիթափ ձանապարհով շարժվեցին դեպի Ձորապահակ լեռնանցքը: Թեև ամառնամուտ էր, բայց օդը բավականին սառն էր: Բզնունյաց ծովից փչում էր պաղ քամի: Նեմրոսը սարի և շրջակա լեռների կատարներին սև-սև ամպեր էին կուտակված: Հեծյալներից առաջինը, որը սեպուհական հագուստով էր, դանդաղեցրեց ձիու ընթացքը՝ մինչև նրան հավասարվեց խմբի կենտրոնում ընթացող վեղարավոր հեծյալը: Հեծելախումբը նույնպես դանդաղեցրեց ընթացքը:

— Վահրի՛ձ, առջևի՛ց գնա,— կարգադրեց սեպուհը իր կողքից ընթացող զինվորականին, որը նույնպես սեպուհական համազգեստ էր կրում:

— Վարզո՛վ, տե՛ր Մամիկոնյան,— հարցրեց Վահրի՛ձը:

— Ո՛չ, սովորական ընթացքով,— եղավ պատասխանը:

Հեծելախումբը հանգիստ ընթացք ընդունեց: Օրը լուսանում էր: Գարնանային գիշերվա հորդ անձրևից հետո լեռներն ու դաշտերը շողշողում էին կանաչ գմբուխտի պես: Թխպոտ երկինքն ու վաղորդյան խոնավ օդը ավելի մուգ գույն էին հաղորդել համատարած այդ գմբուխտին: Հեռվում՝ անծայրածիր կապույտի վրա, սպիտակափրփուր ալիքներով ծփում էր Բզնունյաց ծովը: Տեսարանը դյուրիջ էր:

Սեպուհը, որին զինվորականը տեր Մամիկոնյան կոչեց, մոտեցավ վեղարավոր հեծյալին և գվարթ հարցրեց.

— Չե՞ք մրսում, տե՛ր կաթողիկոս:

— Մի՞թե այսպիսի բնության գրկում մարդը կմրսի, Մեսրոպ,—  
ասաց կաթողիկոսը՝ ձեռքի շարժումով ցույց տալով շրջակայքը:

— Իրավ գեղեցիկ է մեր աշխարհը, տե՛ր կաթողիկոս: Ես շատ  
երկրներում եմ եղել, բայց հավատացե՛ք ինձ, ես ոչ մի տեղ այսպիսի  
բնություն չեմ տեսել:

— Այո՛, չքնաղ է մեր երկիրը: Դրա համար էլ բոլորը ձգտում են  
տիրանալ նրան,— հարեց կաթողիկոսը և տխուր հոգոց հանեց:

— Քանի ապրում ենք, չենք թողնի՛, տե՛ր կաթողիկոս,— վստահ  
ասաց Մեսրոպը և ուղղվելով թամբի վրա՝ այնպես նայեց հեռուն, կար-  
ծես այնտեղ էր գտնվում նա, ով ուզում էր տիրանալ Հայոց աշխարհին,  
որ ինքը հենց հիմա կհարձակվի ու իր սրով վերջ կտա այդ ստահակին:

Կաթողիկոսը նայեց Մեսրոպին և բարի ժպտաց:

— Ինչո՞ւ եք ժպտում, տե՛ր կաթողիկոս,— հարցրեց Մեսրոպը՝  
նույնպես ժպտալով:

— Սիրում եմ քեզ, Մեսրոպ: Չգիտեմ ինչու, բայց միշտ քեզ հետ  
գրուցելիս հոգիս թեթևանում է: Ա՛յ, դու այնպիսի վստահությամբ  
ասացիր, թե՛ չենք թողնի՛ ուրիշները տիրեն մեր երկրին, որ ես ակա-  
մա հավատացի: Մինչդեռ նրանք արդեն տիրել են:

— Ո՛չ, դեռ չեն տիրել: Ժողովրդին տիրելը այդքան հեշտ չէ:

— Այո՛, Մեսրոպ, դու ճիշտ ես՝ միայն այն դեպքում, երբ ժողո-  
վուրդը ունի առողջ մարմին և միասնական հզոր ոգի: Մինչդեռ մեր  
մարմինը բզկտված է, իսկ ոգին՝ թույլ...

— Համաձայն չեմ Ձեզ հետ, տե՛ր կաթողիկոս, բորբոքվեց Մես-  
րոպը,— ճիշտ է, մարմինը բզկտված է, բայց մենք այսօր ունենք մի  
այնպիսի հզոր ու միասնական ոգի, որ նմանը չենք ունեցել նույնիսկ  
Տիգրան Մեծի օրոք:

— Ո՞րն է այդ միասնական ոգին,— հարցրեց կաթողիկոսը:

— Մեր հավատը՝ Քրիստոս աստծու անաղարտ վարդապետու-  
թյունը, որին ծառայում եք Դուք՝ Սահակ Պարթևը՝ թողը Գրիգոր Լու-  
սավորչի և որդին Ներսես Մեծի՝ Ամենայն հայոց դպրապետի...

— Ասածներդ, Մեսրոպ, լավ են հնչում, բայց իրականում այդ-  
պես չէ:

— Ի՞նչը այդպես չէ:

— Այսօր Քրիստոսի վարդապետությունը շատ քչերն են հասկա-  
նում, հատուկենտ մարդիկ, ովքեր հունարեն կամ ասորերեն գիտեն,  
մնացածների համար այն մնում է անհասկանալի: Ես գրեթե երկու

տարի շրջեցի ամբողջ Հայոց աշխարհը և ցավով նկատեցի, որ մեր դպրոցները չեն ծառայում իրենց նպատակին, նրանք ի վիճակի չեն բարձրացնելու ժողովրդի ոգին, որովհետև այդ դպրոցները ժողովրդին չեն կրթում սեփական լեզվով... Այս վերջին երկու տարում ես եկա այն հաստատ համոզմանը, որ մեզ անհրաժեշտ է սեփական լեզվով դպրություն, սեփական գիր...

Սահակն իր խոսքը չավարտեց, երբ հանկարծ հորիզոնում փայլատակեց կայծակը, և երկինքն ասեղ որոտով դղրդաց:

— Այսքան էլ ձիշտ,— կատակեց Մեսրոպը՝ ականարկելով ամպրոպի ճայթյունը,— մենք սեփական գիր և դպրություն կունենանք, քանզի այդ բանին մտադիր է ինքը՝ Սահակ Պարթևը...

— Սահակ Պարթևը միայնակ անկարող է անել, Մեսրոպ: Նրան գրագետ ու լեզուներ իմացող օգնողներ են պետք...

— Լսիր, տեր կաթողիկոս,— հասկանալով նրա ականարկը՝ ասաց Մեսրոպը,— հո մտադիր չես ինձ վարդապետ օծել:

— Ինչո՞ւ չէ, եթե դա պահանջում է հայրենիքի շահը:

— Դու դեռ ինձ ձգնավոր էլ կդարձնես...

Այդ պահին ասեղ որոտով նորից դղրդաց երկինքը:

— Այսքան էլ ձիշտ,— այս անգամ կատակեց կաթողիկոսը:

Մեսրոպը նայեց երկնքին: Անձրևի մի քանի խոշոր կաթիլներ ընկան նրա դեմքին:

— Շուտով տեղատարափ է սկսվելու: Արագացրե՛ք ընթացքը. թրջվելու ենք,— ասաց Մեսրոպը և խթանեց ձին:

Հեծելախումբը թեթև վարճով հետևեց նրան: Անձրևը գնալով ասատկացավ:

— Եթե այսպես շարունակվի, մենք այսօր Աշտիշատ չենք հասնի,— մտահոգվեց կաթողիկոսը:

— Կհասնենք, տեր կաթողիկոս,— ուրախ բացականչեց Մեսրոպը,— եթե Տիգրանից անփորձանք հասել ենք այստեղ, այստեղից Աշտիշատ հասնելն ի՞նչ է...

Հեծելախումբը Աշտիշատ հասավ ուշ երեկոյան, ինչպես ասում են՝ մինչև ոսկորները թրջված ու հոգնած: Անձրևը դադարել էր: Բեռնաթափված ամպերը ծվատվելով թեթև քամուց քշվում էին դեպի լեռնազագագաթները: Գարնանային լիալուսինը մեկ երևում, մեկ ծածկվում էր չվող ամպերի քուլաներով: Եկվորներին դիմավորեց վանքի միաբաններով շրջապատված հիսունն անց, միջահասակ, լայնաթիկունք, ալեխառն բեղ ու մորուքով մի վարդապետ: Նա Մեսրոպի մեծ եղբայր

Վահրամն էր, որը, Տարոնի իր հայրական կալվածքը տնօրինելուն զուգընթաց, Սահակ Պարթևի պահանջով վարդապետի վեղար էր կրում և գլխավորում էր Աշտիշատի վանքի միաբանությունը: Նա ի պաշտոնն վերակացուն էր նաև վանքի հոգևոր դպրոցի: Վահրամը Մեսրոպից մեծ էր: Նա համարյա հասակակից էր Սահակ Պարթևին: Վահրամը, Սահակի հարազատ քեռին լինելով հանդերձ, նաև նրա ամենասրտամոտ ընկերն էր: Նրանք օտար ափերում միասին էին կրել ուսումնառության տարիների բոլոր տառապանքները:

Վահրամը, չնայած կրտսեր եղբորը գրկելու մեծ ցանկությանը, առաջինն ընդառաջ գնաց կաթողիկոսին: Նախ բարևեց ձեռքով, ապա ամուր սեղմեց կրծքին: Նրանք երկար ժամանակ ողջագուրվում էին:

— Սրբազան հայրեր, արագացրե՛ք, — ուրախ կատակեց Մեսրոպը, — մենք թրջված ենք, մրսեցինք:

Կաթողիկոսը Վահրամին իր գրկից հրեց դեպի Մեսրոպը՝ զվարթորեն կատակելով, — *ան*, հերթը տալիս եմ քեզ:

Վահրամն ու Մեսրոպը կարոտով գրկախառնվեցին: Դիմավորողները, ուրախ աղմկելով, սկսեցին հերթով բարևել կաթողիկոսին ու նրա շքախմբի անդամներին: Վանքի սպասավորները շտապով տեղավորում էին իրերը և բակում պտտեցնում քրտնած ու թրջված ձիերին, որպեսզի թամբերը ցած բերելիս չմրսեն:

Այդ ուրախ իրարանցման մեջ ոչ ոք չէր նկատում, որ Մեսրոպն ու Վահրամը, իրար գրկած, լուռ արտասվում էին: Կաթողիկոսը մոտեցավ նրանց և կատակեց.

— Հարգելի՛ քեռիներս, դուք իրար գրկում ջերմանում եք, իսկ ես ու իմ մարդիկ, հագուստի մինչև վերջին թելը թրջված, համբերատար մրսում ենք:

Եղբայրները սթափվեցին: Վահրամը սպասավորներին կարգադրեց՝ հյուրերին կացարաններ հատկացնել և հոգալ նրանց հագուստների մասին:

— Իսկ Դուք, մրսած կաթողիկոս, — կատակեց Վահրամը, — Մեսրոպի հետ միասին կգիշերեք իմ առանձնատանը, այսինքն՝ Ձեր հայրական ամառանոցում:

— Ես չեմ առարկում, — բարձր տրամադրությամբ ասաց կաթողիկոսը, — միայն թե որքան կարելի է շուտ, թե չէ, եթե մի քիչ էլ ուշացնես, ստիպված կլինես շապիկս դանակով պոկել մաշկիցս:

— Գնացի՛ք, — կտրուկ պատասխանեց Վահրամը:

— Վահրի՛ձ,— կանչեց Մեսրոպը սեպուհին,— խմբի ապահովությունը թողնում եմ քեզ: Մենք Վահրամի հետ տուն ենք գնում: Հարկ եղած դեպքում կա՛յ հաստատիր: Իսկ առավոտյան մեզ մոտ արի:

Սահակն ու Մեսրոպը Վահրամի ու էլի մի երկու բարձրաստիճան վանականների հետ ոտքով քայլեցին դեպի Վահրամի առանձնատունը, որ ժամանակին կառուցել էր Ներսես Մեծը՝ որպես ամառանոց: Ամառանոցը, թեև հեռու չէր վանքից, բայց նրանից առանձնանում էր մի փոքրիկ ձորակով և գտնվում էր մրգատու ծառերով շրջապատված ցածրադիր բլրակի վրա: Վահրամը, թեև Հացեկացում ուներ սեփական ընդարձակ ու շքեղ տներ, բայց աշխատանքի բերումով՝ արդեն տասը տարի էր, ինչ ընտանիքով տեղափոխվել էր Աշտիշատ և բնակվում էր Ներսես Մեծի ամառանոցում:

Դրսում հյուրերին դիմավորեցին Վահրամի կինը՝ տիկին Զարուհին, և նրա երկու զավակները՝ քսանամյա Ներսեսը, որն արդեն Մամիկոնյան տան սեպուհական համազգեստ էր կրում, և տասնյոթը նոր բոլորած դուստրը՝ Այծեմնիկը: Նրանցից պատշաճ հեռավորության վրա խմբով կանգնել էին տան սպասավորները և պատկառանքով նայում էին մեծանուն հյուրերին:

Նախ տիկին Զարուհին մոտեցավ կաթողիկոսին և համբուրեց աջը: Կաթողիկոսին մոտեցավ Ներսեսը: Նա այնքան ամուր սեղմեց կաթողիկոսի աջը, որ վերջինս, ձևացնելով, թե ձեռքը ցավեց, կատակով ասաց.

— Տե՛ր սեպուհ, հո դու Մամիկոնյան տնի՛ց չես: Ներկաները ծիծաղեցին, իսկ Ներսեսը շիկնեց:

Այդ պահին Այծեմնիկը փաթաթվել էր Մեսրոպի պարանոցին և համբուրում էր նրա մեկ աջ, մեկ ձախ այտերը:

— Բա՛ց թող ինձ, ես քո ուժը չունեմ,— կատակեց Մեսրոպը,— էս է՛րբ մեծացավ էս ճպուռը, երկու տարի առաջ մի մատ չկար, հիմա օրիորդ է դարձել, սրան մտիկ...

Այծեմնիկը բաց թողեց Մեսրոպին և նազանքով մոտեցավ կաթողիկոսին: Կաթողիկոսը մեկնեց աջը: Այծեմնիկը խոնարհվեց և ջերմորեն համբուրեց: Կաթողիկոսը խաչակնքեց և շոյեց մազերը:

— Սովորում էս,— հարցրեց կաթողիկոսը:

— Ավարտել եմ,— համեստորեն պատասխանեց Այծեմնիկը:

— Քանի՞ լեզու գիտես:

— Պարսկերեն, հունարեն, ասորերեն...

— Իսկ հայերն:

— Գիտեմ,— կտրուկ պատասխանեց Այծեմնիկը:

— Հայերեն գրել–կարդալ գիտեմ:

Այծեմնիկը շփոթված նայեց հորը:

Մեսրոպը, որ տիկին Զարուհուն և Ներսեսին բարևելուց հետո հետևում էր նրանց խոսակցությանը, տեսնելով աղջկա շփոթահար դեմքը, միջամտեց.

— Տեր կաթողիկոս, հայերեն գրել–կարդալ մենք չգիտենք, երեսան որտեղից իմանա: Ներս գնանք, մրսեցինք:

— Այո՛, ցավոք սրտի...— հոգոց հանեց կաթողիկոսը:

Երբ ներս մտան, Մեսրոպը հարցրեց.

— Ի՞նչ ենք հագնելու: Չե՛ որ մենք ամբողջովին թրջված ենք:

Ներսեսը մեղավոր նայեց Մեսրոպին: Կարծես թե ինքն էր մեղավոր, որ իր հագուստը դեռևս շատ նեղ է Մեսրոպի համար:

— Երկու ձեռք տոնական զգեստ ունեմ,— միջամտեց Վահրամը,— մեկը Սահակը կհագնի, մյուսը՝ դու:

— Դառնամ վարդապետ,— ծիծաղեց Մեսրոպը:

— Ի՞նչ կա որ: Գեթ մի օրով դարձիր վարդապետ, որ իմանաս, թե ինչպիսի լուծ է դրված մեր վզին:

— Առանց դառնալու էլ գիտեմ,— ասաց Մեսրոպը և սկսեց փոխել հագուստը,— դպրոցդ ինչպե՛ս է, քանի՞ աշակերտ ունես:

Վահրամը կարծես սպասում էր այդ հարցին, քանզի տվեց չափազանց կտրուկ պատասխան.

— Դպրոցը կա, աշակերտներն էլ լավ են, բայց արդյունքը մխիթարական չէ:

— Ինչու՞,— Մեսրոպը կնճռոտվեց:

— Օտար լեզվով սովորելը դժվար է, Մեսրո՛պ: Քսան–երեսուն աշակերտից երկուսը կամ երեքը հազիվ են կարողանում մի կերպ գրուի հանել: Մնացածները պարզապես հաղորդակից են դառնում: Ասենք, եթե բոլորն էլ կարողանան սովորել, էլի արդյունքը գոհացուցիչ չի լինի, որովհետև նրանց սովորածը էլի օտար է մեր ժողովրդին: Մի խոսքով, մի քան պիտի մտածել: Ես՝ որպես ուսուցիչ, գոհ չեմ...

— Ես էլ գոհ չեմ,— նրան ընդհատեց կաթողիկոսը,— իսկ դու՞, Մեսրո՛պ:

— Ես ի՞նչ անեմ,— ուսերը վեր քաշեց Մեսրոպը:

— Բա ո՞վ անի,— զայրացավ կաթողիկոսը,— ես չունեմ, դու չունես, նա չունի, բա ո՞վ ունի...



Առավոտյան, դեռ արևը չծագած, բոլորը ոտքի վրա էին: Քանի որ Մեսրոպի հագուստը դեռևս պատրաստ չէր, նա դարձյալ հագավ եղբոր վարդապետական շորերը: Երեկվա տեղատարափից հետո երկինքը ջինջ էր ու մաքուր: Սահակ Պարթևը Մեսրոպին առաջարկեց դուրս գալ՝ թարմ օդ շնչելու: Նրանք իջան պարտեզ:

— Մենք քանի՞ ժամից կարող ենք մեկնել,— հարցրեց կաթողիկոսը:

— Ամենաուշը՝ կեսօրին,— պատասխանեց Մեսրոպը:

— Ինչու՞ այդքան ուշ:

— Հազիվ: Մինչև մեր հագուստները հարդարեն, մինչև մեզ ուղեկցողները իրենց կարգի բերեն, մինչև ձիերին կերակրեն, ժամանակ է պետք: Բացի այդ, ես ուզում եմ ծանոթանալ դպրոցի գործերին: Տեսա՞ր, Վահրամը բողոքում էր... ինչքան էլ ուշ դուրս գանք, երեկոյան Մանագկերտում կլինենք:

— Օրը շոգ կլինի,— ասաց կաթողիկոսը:

— Տարվա այս եղանակին շոգը հաճելի է,— եղավ պատասխանը:

Նրանք պատրաստվում էին պարտեզից դուրս գալ, երբ մոտեցավ Վահրամը և մի տեսակ քաշվելով՝ դիմեց կաթողիկոսին.

— Ներեցե՞ք, տե՛ր կաթողիկոս, Մեսրոպը ցանկանում էր հանդիպել իմ աշակերտներին: Ես նրանց հայտնել եմ այդ մասին: Եթե նպատակահարմար եք գտնում, Դուք նույնպես եկեք: Խնդրեմ, գնանք: Աշակերտները սրտատրոփ սպասում են Ձեր այցին:

— Այս հագուստով,— զարմացավ Մեսրոպը՝ ցույց տալով իր վարդապետական սքեմը:

— Ես սիրով կգամ,— ասաց կաթողիկոսը և դարձավ Մեսրոպին,— իսկ ինչ վերաբերում է քո հագուստին, ապա դա դպրոց այցելելու ամենահարգի հագուստն է: Իսկ եթե ամաչում ես, մի արի, ես մենակ կգնամ:

— Ամաչելու ի՞նչ կա,— նեղացավ Մեսրոպը,— պարզապես...

— Ոչ մի պարզապես: Գնացի՞նք,— ասաց կաթողիկոսն ու առաջ անցավ:

Դպրոցն իրենից ներկայացնում էր վանքին կից մի ընդարձակ սրահ: Մուտքի մոտ աջ և ձախ պատերի երկայնքով ձգվում էին քարից շարված մոտ երկու ոտնաչափ բարձրություն և հինգից վեց ոտնաչափ լայնություն ունեցող երկու թմբեր, որոնք ծածկված էին խսիր-

ներով, որոնց վրա խնամքով փռած էին թաղիքներ: Թմբերի արանքում՝ դիմացի պատի մեջ, կար քարակերտ բուխարիկ, որի միջոցով ձմռանը տաքացվում է դպրոց-դասարանը: Բուխարիկի աջ կողմում՝ թամբի վրա, դրված էր ցածր ոտքերով փայտաշեն մի գրակալ, որի վրա ուսուցիչը դնում էր մագաղաթ, մելան, գիրք և ուսուցման այլ պիտույքներ: Դպրոցում սովորում էին տարբեր հասակի շուրջ քսան տղաներ, որոնցից կրտսերները նստում էին ձախակողմյան թմբին, իսկ ավագները՝ աջակողմյան: Դասն ավանդելիս ուսուցիչը չէր նստում: Նա, երկու թմբերի արանքում առաջ ու ետ քայլելով, աշակերտներին պատմում ու բացատրում էր դասը:

Երբ հյուրերը Վահրամ վարդապետի հետ ներս մտան, աշակերտները զգաստ շարվեցին ձախ թմբերին: Նրանք զարմացած հայացքներ էին փոխանակում, քանզի սպասում էին մեկ, այն էլ գինվորական հյուրի՝ Մեսրոպին, ինչպես հայտնել էր Վահրամ վարդապետը: Մինչդեռ նրանց այցելության էին եկել երկու բարձրաստիճան հոգևորականներ: Աշակերտները գիտեին, որ գիշերն Աշտիշատ է եկել նաև կաթողիկոսը, բայց նրանք չէին ենթադրում, որ Վեհափառը կայցելի դպրոց: Այդ անակնկալն էր պատճառը, որ կրտսեր տարիքի աշակերտներից մեկն ինքնամոռաց բացականչեց.

— Տեր կաթողիկոսը:

Աշակերտները մի պահ աշխուժացան, բայց իսկույն լռեցին: Սահակ Պարթևը նկատեց, թե ինչպես ուրախությունից շողում էին պատանիների աչքերը:

— Այո՛, տղաներ, — հանդարտ խոսեց Վահրամ վարդապետը, — դուք Հայոց աշխարհի ամենաերջանիկ աշակերտներից եք. ձեզ հյուր է եկել հայոց իմաստուն Վեհափառը, դուք անձամբ տեսել ու լսել եք նրան...

— Բարև՛ ձեզ, զավակներս, — ողջունեց կաթողիկոսը:

— Բարև, — խրոխտ ու միահամուռ հնչեց աշակերտների ձայնը:

Վահրամ վարդապետը մի պահ ընկավ անհարմար վիճակի մեջ: Նա չէր կողմնորոշվում, թե ինչ ձևով ներկայացնի Մեսրոպին: Նույնիսկ չգիտեր՝ կաթողիկոսի ներկայության դեպքում հարկ կա՞ այդ անելու, թե՞ ոչ: Տեղում անհանգիստ շարժումներ էր անում: Մեսրոպն իսկույն կռահեց ավագ եղբոր շփոթմունքի պատճառը, ուստի թեքվելով դեպի նա՝ հագլիվ լսելի շնջաց.

— Վարդապետ, եթե հարկ լինի, ինքս կներկայանամ աշակերտներին, Դուք մի անհանգստացեք:

Վահրամը թեթևացած շունչ քաշեց:

— Սա ո՞վ է,— կողքի համեմատաբար տարիքավոր աշակերտի ականջին շնչաց այն աշակերտը, որն առաջինը ճանաչեց կաթողիկոսին:

— Չգիտեմ՝ ով է, բայց շատ խիստ վարդապետ է երևում: Կաթողիկոսն անընդհատ աչքի պոչով նրան է նայում, իսկ մեր վարդապետն էլ շատ է ակնածում...— փսփսոցով պատասխանեց տարիքավոր աշակերտը:

— Թող տղաները նստեն, վարդապետ,— դիմեց Վահրամին կաթողիկոսը:

Վահրամի կարգադրությամբ աշակերտները նստեցին: Նստեց նաև կաթողիկոսը:

— Դուք նստե՛ք, վարդապետ,— հարգանքով դիմեց Մեսրոպը Վահրամին,— եթե կարելի է, թո՛ւյլ տվե՛ք՝ ես վարեմ դասը:

— Խնդրեմ, խնդրեմ, տեր վարդապետ, ամենայն սիրով,— ասաց Վահրամն այնպիսի մի ժպիտով, որի մեջ տազնապ կար, և նստեց կաթողիկոսի կողքին: Իրենց ուսուցչի այդ վիճակը չվրիպեց աշակերտների խորագնին աչքերից:

— Վարդապետից է վախենում,— գրեթե լսելի փսփսաց մի աշակերտ մյուսի ականջին:

Այդ չարագուշակ փսփոսը մի տեսակ տազնապ զցեց նաև աշակերտների սրտերը: Չլինի՞ թե հանկարծ այս նոր վարդապետը իրենց այնպիսի բաներ հարցնի, որ չիմանան ու խայտառակվեն:

— Հապա՛, զավակներս,— քնքշորեն ու մտերմաբար աշակերտներին դիմեց Մեսրոպը,— ո՞վ կարող է ասել տերունական աղոթքը:

Մեսրոպը նկատեց, որ բոլորն էլ պատրաստակամ ձեռք բարձրացրին: Վահրամն իրեն լավ զգաց և ուղղվեց տեղում:

Մեսրոպը հարցրեց տարբեր տարիքի երեք աշակերտների: Երեքն էլ շատ վարժ հունարենով և գեղեցիկ առոգանությամբ երգեցին «Հայր մերը», սակայն Մեսրոպը զգում էր, որ նրանք տերունական աղոթքը երգում են զոց արած՝ առանց ըմբռնելու նրա իմաստը, ուստի դիմեց վերջին երգողին.

— Կարո՞ղ ես բացատրել աղոթքի միտքը:

Աշակերտը հարցական նայեց իր ուսուցչին՝ տեր Վահրամ վարդապետին: Նրան ուղղեցին իրենց հայացքները նաև մյուս աշակերտները: Նրանք իրենց այդ հայացքով ուզում էին ասել, որ

հարցը իրենց համար նորություն է: Մի պահ տիրեց անհարմար լռություն, որը խզեց կաթողիկոսին ճանաչող աշակերտի համարձակ ձայնը.

— Տեր վարդապետ,— դիմեց նա Մեսրոպին,— մենք հունարեն դեռևս լավ չգիտենք, ինչպե՞ս բացատրենք տերունական աղոթքի իմաստը:

— Անունդ ի՞նչ է,— քնքշանքով հարցրեց Մեսրոպը:

— Եղիշե,— նույն համարձակությամբ պատասխանեց պատանին:

— Լսի՛ր,— Եղիշե՛,— ասաց Մեսրոպը մտերմաբար,— իսկ դու կարո՞ղ ես երգել տերունական աղոթքը:

— Այո՛, տեր վարդապետ: Ես զոց գիտեմ նաև սաղմոսները, բայց ի՞նչ օգուտ, որ դեռևս լրիվ չեմ հասկանում հունարենը և չեմ կարող բացատրել դրանց միտքը:

Մեսրոպն աջ ձեռքը տարավ դեպի լայն ճակատը, մատներով շոշափեց այն և ժպտալով դարձավ աշակերտներին.

— Եղիշե՛, իսկ դու փորձի՛ր հասկանալ և բացատրել հայերեն՝ մայրենի լեզվով:

— Հայերե՛ն,— զարմացավ աշակերտը:

— Այո՛, հայերեն, ի՞նչ կա որ:

Եղիշեն, լայն ժպիտը դեմքին, հայացքով չափեց ամբողջ դասարանը, ապա դարձավ Մեսրոպին.

— Տեր վարդապետ, Դուք հարցնի՛ր տվեք, ես պատասխանեմ:

— Համաձայն եմ,— ասաց Մեսրոպը,— դու ինձ ասա՛, Եղիշե՛, երբ մենք՝ մարդիկս, տերունական աղոթքով դիմում ենք ամենակարող արարչին և խնդրում, որ նա մեզ տա «Հացն հանապազօրյա», դա ի՞նչ է նշանակում:

— Մենք ամենօրյա սնունդ ենք պահանջում:

— Ինչպիսի՞ սնունդ:

Եղիշեն անզոր շուրջը նայեց:

— Դե՛ լավ,— նրան այդ վիճակից դուրս բերելու համար օգնող հարց տվեց Մեսրոպը,— մարդուս ապրելու համար քանի՞ տեսակ սնունդ է պետք:

Եղիշեն ավելի շփոթվեց:

— Ո՞վ կարող է պատասխանել,— դարձավ Մեսրոպը մյուս աշակերտներին:

Ոչ ոք ձեռք չբարձրացրեց: Եղիշեն, զգալով, որ ինքը մենակ չէ, արտապնդվեց և դիմեց Մեսրոպին.

— Տեր վարդապետ, մենք չգիտենք, բացատրե՞ք մեզ:

— Դե ուրեմն լսե՛ք,— մեղմաձայն սկսեց Մեսրոպը,— մարդս ապրում է ոչ միայն հացիվ, այլ նաև բանիվ: Մենք մյուս կենդանի էակներից տարբերվում ենք նրանով, որ մեզ, մարմնական սննդից բացի, հարկավոր է նաև հոգևոր սնունդ, քանզի մենք բանական էակներ ենք, այսինքն՝ մենք միտք ունենք, ուստի մեզ պետք է նաև մտավոր սնունդ: Դա մարդուս համար առավել կարևոր է, քան մարմնական սնունդը: Բանն է մարդուն դարձնում հասուն, հակառակ պարագայում նա կդառնա անասուն: Բանն է այն «Հացն հանապազօրյա»: Նա է ամենահաղթ ուժը տիեզերքում...

Աշակերտները հմայված լսում էին Մեսրոպին: Նրանց աչքերը կարծես բոցավառվում էին: Վահրամը, աչքերը լայն բացած ու զարմացած, հետևում էր Մեսրոպի ամեն մի խոսքին: Կաթողիկոսը հիացած ժպտում էր:

— Տեր վարդապետ,— Մեսրոպին ընդհատեց Եղիշեն,— Դուք Ձեր դպրոցում դասը հայերեն եք ավանդում:

Մեսրոպը չէր սպասում նման հարցի: Շփոթվեց, չիմացավ՝ ինչ պատասխանի: Նայեց կաթողիկոսին: Կաթողիկոսը կանգնեց տեղում և դիմեց աշակերտներին.

— Սիրելի՛ զավակներս, վարդապետը դեռ դպրոց չունի: Երբ նա դպրոց ունենա, անպայման դասը կավանդի մայրենի լեզվով...

— Մենք էլ ենք ուզում,— միաբերան գոչեցին աշակերտները:

— Վարդապետ,— դիմեց կաթողիկոսը Մեսրոպին,— երդվիր տղաներին, որ կկատարես նրանց ցանկությունը:

Աշակերտները սպասում էին Մեսրոպի խոսքին: Մեսրոպը ելք էր փնտրում անհարմար դրությունից դուրս գալու համար: Վերջապես վճռեց աշակերտներին ասել ճշմարտությունը:

— Տղաներ,— ասաց նա ժպտալով,— եթե վեհափառը պարտավորեցնում է, ես խոսք եմ տալիս: Բայց... ես զինվորական եմ...

— Դուք տեր Մեսրոպ Մամիկոնյանն եք,— զարմացած բացականչեց Եղիշեն:

— Նույն ինքը,— ասաց Մեսրոպը:

— Հապա ինչու՞ եք վարդապետի վեղար կրում:

— Գիշերվա անձրևն էր մեղավոր, Եղիշեն: Իմ հագուստը թրջվել էր, ես էլ Ձեր ուսուցչի սքեմը հագա:

— Երբ ես դպրոցն ավարտեմ, Դուք ինձ կվերցնե՞ք Ձեր գորագնդում,— հարցրեց Եղիշեն:

— Անպայման,— ասաց Մեսրոպը՝ փաղաքշելով Եղիշեի գլուխը:  
— Իսկ Ձեր խոստովմը,— աշակերտների միջից բացականչեց մի պատանի:

Աշակերտները, ի հավանություն իրենց ընկերոջ հարցին, աղմուկ բարձրացրին:

— Ինչպէս է Ձեր անունը,— Մեսրոպը դիմեց հարց տվող պատանուն:

— Ղևոնդ,— կտրուկ պատասխանեց պատանին:

— Կաշխատեմ օգտակար լինել Ձեզ,— մեղմորեն ասաց Մեսրոպը:

Աշակերտներն այս անգամ ուրախ աղմկեցին:

Սահակ Պարթևն ու Մեսրոպը հրաժեշտ տվին աշակերտներին և դուրս եկան դպրոցից:

— Այսօր տուն գնացեք,— կարգադրեց աշակերտներին Վահրամ վարդապետը:

Աշակերտները, խումբ-խումբ մտքեր փոխանակելով, հեռացան:

Ճանապարհին Վահրամը ցանկանում էր իմանալ կաթողիկոսի և Մեսրոպի կարծիքները իր դպրոցի մասին, սակայն հարցնելու ձևը չէր գտնում, ուստի մտազբաղ քայլում էր նրանց կողքով: Մտազբաղ էին նաև կաթողիկոսն ու Մեսրոպը:

— Ի՞նչ ես մտածում,— դարձավ կաթողիկոսը Մեսրոպին:

— Հազար ու մի բան,— պատասխանեց Մեսրոպը:

— Դա լավ է,— ասաց կաթողիկոսը:

— Ի՞նչն է լավը,— մտքերից սթափվեց Մեսրոպը:

— Այն, որ դու մտածում ես:

— Ես միշտ էլ մտածել եմ:

— Այո՛, դու միշտ էլ մտածել ես, բայց միշտ մտածել ես մի բան, իսկ այսօր դու մտածում ես հազար ու մի բան: Դա նոր որակ է, չէ՞:

Մեսրոպը խեթ նայեց կաթողիկոսին:

— Այդպես մի՛ նայիր ինձ: Ասա՛ կարծիքդ դպրոցի մասին,— ասաց կաթողիկոսը, բայց ներքուստ վախ զգաց, որ չլինի թե հանկարծ Մեսրոպը աննպաստ կարծիք հայտնի և վշտացնի Վահրամին:

Վահրամը նույնպես ներքին տագնապ ապրեց: Նա զգաց, որ դժվարանում է շնչել: Մեսրոպը ուշացնում էր պատասխանը, իսկ Վահրամի համար յուրաքանչյուր րոպեն դար էր թվում:

— Բարեբախտաբար, տեր՛ կաթողիկոս,— հանդարտ սկսեց Մեսրոպը,— Դուք միշտ իրավացի եք: Այսօր օդից ու ջրից առավել

մեզ անհրաժեշտ է սեփական գիր, սեփական լեզու և մտածողություն...

— Կեցցեն, «վարդապետ»,— ուրախ կատակեց կաթողիկոսը,— ես միշտ էլ ասել եմ ու այսօր էլ պնդում եմ, որ Հայոց աշխարհի կաթողիկոս Սահակ Պարթևը հրաշքներ կգործի, եթե քեզ նման պայծառամիտ ու հավատին նվիրված աջակից ունենա...

— Գուցե կիրամայես, որ այլևս հագուստս չփոխեմ,— կատակին կատակով պատասխանեց Մեսրոպը:

— Ոչ, ինչու՞,— խոսքն առաջ տարավ կաթողիկոսը,— նախ՝ դու իրավունք չունես ուրիշի հագուստը սեփականացնելու, երկրորդը՝ դու ինձ հետ Տիգրան ես մեկնել որպես իշխան և զորական, պարտավոր ես հայոց արքունիք ներկայանալ նույն տիտղոսներով և ինձ ապահով տեղ հասցնել, իսկ երրորդը՝ քեզ հրամայողը ես չեմ, տե՛ր Մամիկոնյան, վաղը քեզ կիրամայի հայրենիքի շահը...

— Սահակ,— զարմացած միջամտեց Վահրամը,— դու ցանկանում ես, որ Մեսրոպը նոյնպես դառնա հոգևորական:

— Իսկ ինչու՞ ոչ,— խիստ ասաց Սահակը,— նա մեզանից լավն է, ինչո՞վ է ավել...

— Բայց նա փայլուն զինվորական է, Սահակ,— գրեթե աղաչական բացականչեց Վահրամը:

— Զինվորի փայլը երևում է մարտի մեջ, իսկ մեր մարտադաշտը այսօր ուրիշ տեղ է... դու մի՛ խառնվիր մեր գործերին, Վահրամ:

— Տե՛ր Աստված, Տե՛ր Աստված... — մրմնջաց Վահրամը և խաչակնքեց:

— Վահրամ, եղբայրս, դու մի՛ վիճիր այս ահավոր մարդու հետ. նա որ մի բան մտքում դրեց, կանի,— ասաց Մեսրոպը՝ գորովալից հայացք զցելով Սահակի վրա:

— Աստված ձեզ օգնական,— այս անգամ խաչակնքելով նրանց՝ շնջաց Վահրամը:

## ՍԵՐ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ

Արևը դեռ չծագած՝ Աշտիշատը եռուզեռի մեջ էր: Բնակիչները մեծ խանդավառությամբ նախապատրաստվում էին ըստ արժանվույն հարգանք մատուցելու Հայոց աշխարհի հոգևոր տիրոջը՝ Սահակ Պարթևին:

Ներսես սեպուհը ամբողջ գիշերը գրեթե աչք չէր փակել: Տանուտերի իրավունքով նա ամեն ինչ արել էր, որպեսզի հյուրասիրության տոնախմբությունը ձուխ ու գեղեցիկ լինի: Առավոտ կանուխ նրան շրջապատել էին Աշտիշատի աշխարհիկ և հոգևոր անվանի անձինք, լսում ու կատարում էին նրա կարգադրությունները: Սպասավորները երիտասարդների օգնությամբ մի տեղ ոչխարներ էին մորթում ու խորովածի պատրաստություն տեսնում, մի այլ տեղ սեղաններ էին հարդարում, հացթուխները, թեժ թոնդիրների շուրջը կռթնած, թարմ լավաշ էին թխում: Կանայք նոր մորթած հավեր էին փետրում ու զանազան խորտիկներ պատրաստում, աղջիկները դաշտ էին գնացել՝ թարմ ծաղիկներ ու բանջարեղեն բերելու: Մի խումբ ձարպիկ տղաներ գիշերը մեկնել էին ծովափ՝ ձուկ որսալու, բայց դեռ չէին վերադարձել: Ներսեսը անհանգստանում էր: Վերջապես եկան նաև նրանք և ձուկը հանձնեցին խոհարարին:

Ներսեսի թույլտվությամբ աղջիկների աշխատանքներին հսկում էր Այծեմիկը, որը չնայած տոնական հանդերձանք էր հագել, բայց ամեն ինչ մոռացած, աղջիկների հետ հավասար աշխատում էր: Նա ձգտում էր, որ ամեն ինչ լավ ու գեղեցիկ լինի: Այս ու այն տեղ վազվզելուց ու շտապելուց դեմքը շառագունել էր: Քրտնացողը



նրա դեմքին տվել էր ցողաթաթախ վարդի հմայք: Ոսկեհուռ, բարակ գոտին այնպես գեղեցիկ էր գրկել մեջքը, որ աղջկական սլացիկ իրանին տվել էր վայելչություն, նորափթիթ կուրծքը թրթռում էր ծիրանագույն մետաքսյա հագուստի տակ, ակնագարդ մանյակը ավելի էր ընդգծել շիկազանգուր մազերի տակից երևացող նուրբ պարանոցը: Նա այնքան էր տարված իր աշխատանքով, որ բնավ ուշադրություն չէր դարձնում իրեն դարձող փեսացու տղաների կարոտավառ հայացքներին:

Ներսեսը տղաների խմբին նոր հանձնարարություն էր տալիս, երբ զինվորական թեթև քայլվածքով մոտեցավ Վահրիճ Խաղունին:

— Ողջո՛յն Մամիկոնյան տիրոջը,— ասաց նա՝ ձեռքը մեկնելով Ներսեսին:

— Վահրիճ,— բացականչեց Ներսեսը՝ ամուր սեղմելով նրա ձեռքը,— դու երեկոյան շուտ գնացիր. չտեսնվեցինք...

Վահրիճը Ներսեսից մեծ էր վեց-յոթ տարով: Նրանք իրար հետ ծանոթացել էին ուղիղ հինգ տարի առաջ, երբ Վահրիճը, քսաներկու տարին նոր բոլորած, զինվորագրվել էր Մեսրոպի գնդին և նրա հետ եկել Հացեկաց: Այն ժամանակ Ներսեսը դեռ տասնհինգ տարեկան պատանի էր: Վահրիճը հիշեց, թե Ներսեսը որքան էր ուզում շուտ մեծանալ և զինվորական համազգեստ կրել:

— Լավ մեծացել ես, Ներսես: Արդեն հասուն այր ես դարձել: Երազանքդ կատարվել է: Ե՛րբ ես զինվորագրվելու:

— Դեռ չի հրամայված,— նորածիլ բեղերի տակից ժպտաց Ներսեսը մի այնպիսի ձևով, որ կարծես այդ բանում ինքը մեղք ուներ:

Վահրիճն ամուր գրկեց նրան: Նրանք ողջագուրվեցին: Այդ պահին Վահրիճը տեսավ Այծեմնիկին, որը, աղջիկներով շրջապատված, հետաքրքրությամբ նայում էր իրենց կողմը:

— «Ո՞վ կլինի,— անցավ Վահրիճի մտքով,— մի՞թե Ներսեսն արդեն ամուսնացել է: Ինչո՞ւ՝ այսքան շուտ»: Եվ ինքն էլ մտովի տվեց իր հարցի պատասխանը. «Շատ էլ ձիշտ է վարվել. նման աղջկա համար ամեն ինչ կարելի է անել»:

— Հարսնացուդ ո՞ւմ աղջիկն է,— հարցրեց Վահրիճը:

— Դեռ հարսնացու չունեմ,— պատանու նման շիկնեց Ներսեսը:

— Իսկ ո՞վ է նա,— գլխով Այծեմնիկի կողմը ցույց տվեց Վահրիճը:

— Ի՞նչ է, չճանաչեցի՞ր: Մեր ձպուռն է:

— Այծեմնիկը,— զարմանքից այնպես բարձր արտասանեց Վահրիճը, որ աղջիկները լսեցին:

Այծեմնիկը, լսելով իր անունը, ժպտալով մոտեցավ նրանց: Վահրիճը նրան տեսել էր տասներկու տարեկան հասակում: Այն ժամանակ Այծեմնիկը մի շատ սիրուն ու չարաձճի աղջնակ էր, որի համար յուրայինները նրան ճպուռ էին անվանում:

— Բարն՝ ձեզ, տեր՝ Խաղունի,— ողջունեց Այծեմնիկը՝ նազանքով ձեռքը մեկնելով Վահրիճին:

— Բարն, Այծեմնիկ,— հազիվ կարողացավ ասել Վահրիճը և քնքշորեն բռնեց աղջկա ձեռքը: Նա մի պահ ուզեց ասել՝ ճպուռ, բայց չհամարձակվեց: Միայն հնայված հայացքով ոտքից գլուխ չափեց Այծեմնիկին:

— Ինձ չճանաչեցի՞ր, տեր՝ Խաղունի,— ասաց Այծեմնիկը և փորձեց ձեռքը դուրս քաշել տղայի ափից: Վահրիճն ակամա բռնեց աղջկա ձեռքը և ինքնամոռաց պահեց ափի մեջ:

Ներսեսին դուր չեկավ քրոջ հանդգնությունը և խեթ նայեց նրան:

— Մեզ կներե՞ք, տեր՝ Խաղունի, մենք զբաղված ենք, գնանք մեր գործին,— եղբոր հայացքից ընկձված՝ ասաց Այծեմնիկը և գրեթե ուժով փորձեց Վահրիճի ափից դուրս քաշել ձեռքը:

Վահրիճը մի պահ ցանկացավ բաց չթողնել, բայց Ներսեսի ներկայությունը ճնշեց նրան. բաց թողեց աղջկա ձեռքը և ափսոսանքով ասաց.

— Խնդրեմ, խնդրեմ:

Այծեմնիկն աղջիկների խմբի հետ հեռացավ: Վահրիճը չէր կարողանում հայացքը կտրել նրանից: Ներսեսը նորածիլ բեղերի տակ խորամանկ ժպտում էր:

— Սատանան ինչ շուտ մեծացավ,— ասաց Վահրիճը,— կարգին օրիորդ է դարձել: Դեռ փեսացու չունի՞:

— Դեռ ոչ,— ասաց Ներսեսը մի այնպիսի ձևով, որ նշանակում էր, թե՛ արի վերջ տանք այս խոսակցությանը:

Այդ պահին նրանց մոտեցան Սահակն ու Մեսրոպը: Վերջինս զգեստափոխվել և հազել էր զինվորական հագուստը: Վահրիճը պատիվ առավ և զեկուցեց Մեսրոպին, որ ամեն ինչ կարգին է. զինվորները կազմ ու պատրաստ սպասում են հրամանի:

— Ապրենս,— եղավ Մեսրոպի պատասխանը:

— Ի՞նչ կիրամայեք, տեր՝ Մամիկոնյան,— հարցրեց Վահրիճը՝ մի տեսակ ցրված:

— Առայժմ ոչինչ,— ասաց Մեսրոպը՝ գննելով նրան,— քեզ ի՞նչ է պատահել: Հո հիվանդ չես: Անհանգիստ ես երևում:

— Միանգամայն առողջ եմ, տե՛ր Մամիկոնյան, ինչո՞ւ եք այդպես կարծում,— ասաց Վահրիճը՝ գլուխը խոնարհած: Ներսեսը խորամանկ ժպտաց, որը չվրիպեց Մեսրոպի աչքերից: Նրանք թաքուն հայացքներ փոխանակեցին: Ներսեսը հոնքերի խաղով ցույց տվեց Այծեմնիկի կողմը: Մեսրոպը հագիվ սքողեց ժպիտը և դարձավ Վահրիճին:

— Տե՛ր Խաղունի, քեզ պի՛նդ պահիր, դեռ մենք անելիքներ շատ ունենք:

Խաղունին մեղավորի պես նայեց Մեսրոպի աչքերի մեջ, բայց, ի գարմանս իրեն, նրանցում հուսադրող ժպիտ նկատեց:

— Տե՛ր կաթողիկոս, հորեղբայր,— դարձավ Սահակին ու Մեսրոպին Ներսեսը,— ժողովուրդը ձեզ է սպասում:

Նրանք քայլեցին դեպի սեղանատուն:

Խնջույքը բացեց Վահրամը: Նա, բարձրացնելով գինու գավաթը, հակիրճ թվարկեց Սահակ Պարթևի ծառայությունները հայրենիքի հանդեպ, հաջողություն ցանկացավ նրան և խոսքը վերջացրեց այսպես.

— Տե՛ր կաթողիկոս, այսօր, առավել քան երբևէ, Հայոց աշխարհը Ձեր իմաստուն գործունեության կարիքն ունի: Կցանկանամ, որ Աստծո ամենակարողությամբ կարողանաք արդարացնել մեր հույսերը: Իսկ ինչ վերաբերում է ձեր ձեռնարկումների մեջ մեր օգնությանը, ապա վստահորեն մե՛զ հրամայիր: Մենք պատրաստ ենք ծառայելու՝ ի շահ մեր տարաբախտ հայրենիքի:

Վահրամը գավաթը դատարկեց մինչև վերջ: Ներկաները հավանության բացականչություններով ծափահարեցին:

Խնջույքը մտավ հունի մեջ: Անարատ ու հին գինին, ուրախ երաժշտության հետ դաշն կապած, գնալով բորբոքում է ուրախության հուրը...

Հայրենասիրական բաժակաճառերը «ծաղկեցվում էին» ոգեշնչող հոգևոր և աշխարհիկ երգերով, երաժշտությամբ, ուրախ կատակներով:

Վահրիճը տեղ էր գրավել Մեսրոպի կողքին և անընդհատ հայացքով հետևում էր Այծեմնիկին, որ ուրախ շրջում էր սեղանատան մեջ և կարգադրություն անում սպասավորներին: Վահրիճը մի քանի անգամ որսաց Այծեմնիկի հայացքը: Նրա սիրտն ուռչում էր ուրախությունից, զգում էր, որ Այծեմնիկը ժպտում է իրեն և անտարբեր չի իր նկատմամբ:

Նվազախումբը սկսեց մի աշխույժ պարեղանակ: Երիտասարդներն իսկույն նետվեցին պարի մեջ: Տղաներից մեկը պարի հրավիրեց Այծեմնիկին: Այծեմնիկը կարծես դրան էր սպասում: Թւերը նազանքով բարձրացրեց և երաժշտության հնչյուններին համաչափ շարժելով սլացիկ իրանը՝ խառնվեց պարողներին: Լավ էր պարում: Անմիջապես գրավեց ներկաների ուշադրությունը: Հուզմունքից Վահրիճի դեմքը շիկնել էր: Նա կանգնել էր տեղում և հմայված նայում էր պարողներին, բայց նկատում էր միայն Այծեմնիկին: Նա ձգտում էր որսալ Այծեմնիկի հայացքը, որպեսզի իր հիացմունքը հայտնի նրան: Բայց Վահրիճի համար տեղի ունեցավ սպասվածից ավելին. Այծեմնիկը պարելիս նայեց Վահրիճի աչքերի մեջ և նազեց. դա պարի հրավեր էր: Վահրիճի սիրտը թարտաց:

Մեսրոպը, որ ամբողջ ժամանակ հետևում էր նրանց, նույնպես կռահեց Այծեմնիկի միտքը: Նա շուռ եկավ, ուսի վրայով նայեց կողքին կանգնած Վահրիճին:

— Գնա՛, — ասաց Մեսրոպը և գլխով ցույց տվեց պարող Այծեմնիկին:

Վահրիճը կարծես դրան էր սպասում: Իսկույն մտավ պարի մեջ: Երաժշտախումբը ավելի զլեց պարեղանակը: Ծափերը սաստկացան:

— Տե՛ր սեպուհ, — դարձավ կողքին կանգնած Ներսեսին կաթողիկոսը, — Դուք մտադիր չե՞ք մեզ ճանապարհ գցելու:

— Վաղը, տե՛ր կաթողիկոս. այսօր արդեն ուշ է:

— Մեսրոպը գիտի՞ այդ մասին:

— Գիտի:

— Դե ի՛նչ: Ի՛նձ մնում է ենթարկվել:

Ներսեսը խանդաղատանքով գրկեց կաթողիկոսի ուսերը և երեսը քսեց նրա ալեխառն մազերին: Կաթողիկոսը հարգանքով շոյեց նրա գլուխը:

Պարեղանակը դադարել էր: Պարողները ցրվել էին այս ու այն կողմ, ոմանք զբաղեցրել էին իրենց տեղերը սեղանի շուրջը: Մեսրոպը հայացքով որոնեց, բայց Վահրիճին չգտավ սեղանատանը: Ուշադիր նայեց չկար նաև Այծեմնիկը: «Ամեն ինչ պարզ է», — անցավ նրա մտքով:

Վահրիճն ու Այծեմնիկը անցել էին պարտեզի խորքը և եղրևանու թփի ետևում քողարկված՝ զրուցում էին.

— Այծեմնիկ, դու ի՛նձ հիշո՛ւմ էիր, — եղավ Վահրիճի հարցը:

— Միշտ: Ես այս հինգ տարիների ընթացքում երազում էի քեզ նորից տեսնել, — շիկնելով ասաց Այծեմնիկը:

— Ինչու՞:

— Չգիտեմ: Հինգ տարի առաջ, երբ դու հորեղբայր Մեսրոպի հետ առաջին անգամ մեր տուն եկար, հորեղբայրը քո բացակայությամբ մերոնց մոտ քեզ շատ գովեց, ասում էր, որ դու խիզախ, ազնիվ ու նվիրված տղա ես: Ես էլ ուզում էի, որ դու իմ ընկերը լինես, իսկ դու ինձ կամ չէիր նկատում, կամ երեխայի տեղ էիր դնում...

— Ախր, դու շատ փոքր էիր, ճպո՞ւռ,— ասաց Վահրիճը և ավերի մեջ առավ օրիորդի քնքուշ ձեռքը:

— Թո՛ղ, հանկարծ կնկատեն,— ձեռքն ազատելու փորձ արեց Այծեմնիկը:

— Այծեմնիկ, ես այլևս այս ձեռքը բաց չեմ թողնի մինչև իմ կյանքի վերջը, իհարկե, եթե դու կամենաս:

Այծեմնիկը թախծոտ նայեց տղայի աչքերի մեջ:

— Դու ինձ չե՞ս հավատում, Այծեմնիկ:

— Հավատում եմ, բայց...

— Բայց ի՞նչ:

— Դու գնում ես հեռու՝ ծառայության: Ի՞նչ իմանամ՝ մեկ էլ երբ կգաս:

— Երբ էլ լինի, ես կգամ քո ետևից, Այծեմնիկ: Միայն մահը կարող է կանխել իմ վերադարձը: Ուզո՞ւմ ես՝ երդվեմ:

— Ո՛չ, պետք չէ, դու արդեն մի անգամ երդվել ես...

— Ե՛րբ, ու՞մ եմ երդում տվել,— զարմացած ու տարակուսած հարցրեց Վահրիճը:

— Հայրենիքին՝ որպես զինվոր:

— Այծեմնիկ, սիրելիս, դու ինձ կխենթացնես: Դու այդ ե՛րբ այսքան հասունացար... Ես ընդամենը մեկ տարով էի քեզանից մեծ, երբ երդում տվեցի հայրենիքիս, բայց խոստովանում եմ, որ լրիվ չէի պատկերացնում իմ երդման կարևորությունը:

— Իսկ այժմ հասկանո՞ւմ ես,— ժպտաց Այծեմնիկը:

— Լրիվ: Ես այսօր հասկացա, որ արժե կյանքը նվիրել այն հայրենիքին, որի զարդն ես դու, Այծեմնիկ:

Այծեմնիկը գլուխը փարեց տղայի կրծքին:

Վահրիճն ինքնամոռաց համբուրեց նրա մազերը:

— Գնանք, հիմա մեզ են փնտրում,— տղայի կրծքից պոկվեց Այծեմնիկը և առաջ անցավ: Վահրիճը հետևեց նրան:

Պարսկական արքունիքի կողմից Ամենայն հայոց հայրապետական աթոռին վերահաստատված Սահակ Պարթևին հայոց մայրաքաղաք Վաղարշապատում դիմավորեցին մեծ շուքով: Հայոց թագավոր Վռամշապուհը և պարսիկ հազարապետ Առավանը ամեն ջանք գործ էին դրել, որպեսզի կաթողիկոսին դիմավորելու և օժելու արարողությունները փառահեղ լինեն: Տոնակատարությանը մասնակցելու համար նախօրոք մայրաքաղաք էին հրավիրվել Հայոց աշխարհի գրեթե բոլոր նշանավոր նախարարներն ու հոգևոր հայրերը: Նրանք մեծ ոգևորությամբ տոնախմբությունների ընթացքում իրենց աջակցությունն էին առաջարկում կաթողիկոսին նրա առաջիկա հայրենաշեն ձեռնարկումների մեջ: Երեք օր անընդմեջ կատարվող տոներից հետո հազարապետ Առավանը իրեն հատկացված պալատի մեծ սրահում ձոխ ճաշկերույթ տվեց հայոց մեծաց` ի պատիվ կաթողիկոսի գահակալման, և հանդիսավոր կերպով խոստացավ իր բոլոր ջանքերն ու եռանդն ի գործ դնել` Պարսկաստանի ու Հայաստանի բարեկամական կապերը առավել ամուր դարձնելու համար: Կաթողիկոսը նույնպես հավատարմության երդում տվեց հայ-պարսկական բարեկամության ամրապնդման համար, հորդոր կարդաց հայոց թագավորին ու նախարարներին` աջակից լինեն այդ հարցում:

Այդ տոնակատարությունների ընթացքում իր եռանդով աչքի էր ընկնում Մեսրոպը: Նա իր վրա էր վերցրել տոնակատարությունն անցկացնելու ամբողջ հոգսը և այնպես լավ էր վարում գործերը, որ արժանացավ Սահակ Պարթևի հիացմունքին: Այդ օրը Սահակ Պարթևը բացահայտել էր Մեսրոպի բնավորության մի նոր գիծը և ուրախանում էր դրանով: Կաթողիկոսը Մեսրոպին գիտեր որպես զտարյուն Մամիկոնյան, որոնք երբեք չէին հանդուրժում օտարի լուծը: Դեռ ավելին, եթե Մեսրոպի նախնիների մոտ այդ գիծը տրվում էր հայրենասահրական մղումներով, ապա Մեսրոպի մոտ այն զուգակցվում էր բարձր գիտակցությամբ: Սակայն տոնակատարությունների ընթացքում Մեսրոպը գործերն այնպես էր վարում, որ ցայտուն կերպով դրսևորում էր այն հանգամանքը, որ այդ ամենի համար հայ ժողովուրդը պարտական է պարսիկ արքային: Թեև տոնահանդեսները կատարվում էին կաթողիկոսի օժման առիթով, բայց Մեսրոպի ջանքերով հավասարապես փառաբանվում ու սիրաշահվում էր նաև հազարապետ Առավանը: Այն նախարարները, ովքեր մոտիկից չէին ճա-

նաչում Մեսրոպին, ներքուստ մեղադրում էին նրան, իսկ ուլքեր գիտեին, գոհունակությամբ էին ընդունում նրա այդ քայլը՝ որպես դիվանագետի ճիշտ մոտեցում: Իսկ ինչ վերաբերում էր կաթողիկոսին, ապա նա հիացած էր Մեսրոպի լայնախոհությամբ: Մեսրոպն այդ օրերին այնպիսի լիազորություններ էր ձեռք բերել, որ կարգադրություններ էր անում նույնիսկ իրենից բարձրաստիճան իշխաններին ու զորականներին: Երբ տոնակատարության առաջին խնջույքում նա բաժակ բարձրացրեց և մաքուր պարսկերենով փառաբանեց Պարսկաստանի ու նրա արքայի օգնությունը Հայաստանին, դարձավ հաջորդ բոլոր խնջույքների թամաղան:

Հազարապետ Առավանին միշտ էլ դուր էր եկել միջահասակ, թիկնեղ, լայն ճակատով ու գանգուր մազերով այդ երիտասարդ գինվորականը, որն իր գիտելիքներով իշխում էր ամենքի վրա:

Հազարապետի պալատում տրվող ճաշկերույթի ընթացքում Մեսրոպն իրեն դարձյալ պահում էր անկաշկանդ, սակայն պատշաճ չափի սահմաններում: Պալատական պարսիկ զորականների հետ մտքեր էր փոխանակում ռազմական արվեստի մասին և ռազմական ու քաղաքական գործի իր իմացությամբ զարմացնում նրանց:

Հազարապետ Առավանը Մեսրոպին լավ չէր ձանաչում, ուստի զարմացավ, երբ Սահակ Պարթևը ցանկություն հայտնեց Տիգրոն մեկնող իր ուղեկիցների խմբի ղեկավարը նշանակել նրան: Առավանն այն ժամանակ կարծում էր, թե Սահակը նման ընտրություն է կատարել՝ ելնելով Մեսրոպի հետ ունեցած ազգակցական կապից: Սակայն տոնակատարության օրերին համոզվեց, որ նա այդ վստահությանն էր արժանացել շնորհիվ իր արտակարգ խելքի ու գործիմացության:

Ճաշկերույթի ժամանակ կաթողիկոսը և հազարապետը նստած էին կողք կողքի: Առաջարկված էր խմել պարսիկ և հայ ժողովրդի բարեկամության կենացը: Երբ հերթը հասավ Մեսրոպին, դահլիճը խաղաղվեց. բոլորը ցանկանում էին լսել նրան, իսկ նա այնպես գեղեցիկ էր ներկայացնում այդ բարեկամությունը, որ ամենաքմահաճներն անգամ հիացմունքով էին լսում: Երբ Մեսրոպը վերջացրեց բաժակաձառը, դահլիճում թնդացին ծափահարությունները: Առավանը թեքվեց Սահակի ականջին, շշուկով հարցրեց.

— Մեսրոպը որպես ո՞վ ներկայացավ արքայից արքային:

— Որպես Մամիկոնյան,— նույնպես շշուկով պատասխանեց կաթողիկոսը:

— Արքայից արքան խոսնց հետը:

— Այո՛,— եղավ Սահակի պատասխանը:

— Ես պատկերացնում եմ, թե ինչպիսի տպավորություն է գործել Մեսրոպն արքայից արքայի վրա:

— Արքայից արքան զարմացավ, երբ իմացավ, որ Մեսրոպը, ունենալով հունական կրթություն, հավասարապես տիրապետում է նաև պարսկերենին ու ասորերենին:

— Ես լավ եմ ձանաչում արքայից արքային. նա գնահատում է նման մարդկանց:

— Այո՛,— ասաց կաթողիկոսը ժպտալով,— նա նույնիսկ առաջարկեց Մեսրոպին գալ և ծառայության մտնել արքայից արքայի արքունիքում:

— Իսկ Մեսրոպն ի՞նչ պատասխանեց,— հանկարծակիի եկավ Առավանը:

— Մեսրոպը սիրով ընդունեց այդ առաջարկությունը,— հանգիստ պատասխանեց Սահակը,— որից արքայից արքան շատ գոհ մնաց:

Իսկ Մեսրոպն իսկապե՛ս կվերադառնա Տիգրն,— լսածին չհավատալով՝ հարցրեց Առավանը:

— Ո՛չ անմիջապես,— ասաց կաթողիկոսը,— նա արքայից արքային խնդրեց, որ ժամանակ տա իրեն որոշ փորձ ձեռք բերելու:

— Ի՞նչ փորձ,— հարցրեց Առավանը:

— Վռամշապուհ արքան ցանկանում է Մեսրոպին դիվանապետ կարգել պալատում,— հանգիստ պատասխանեց Սահակը դարձյալ շշուկով:

— Իսկապե՛ս,— զարմացավ հազարապետը:

— Այո՛, առաջարկը եղել է, և Մեսրոպը համաձայնվել է,— անտարբեր ձևանալով՝ շնչաց կաթողիկոսը:

— Լավ է մտածված,— հավանություն տվեց Առավանը:

\* \* \*

Մեկ շաբաթ անց ամբողջ Հայոց աշխարհում իմացան, որ Մեսրոպ Մամիկոնյանը կարգվել է Հայոց աշխարհի թագավորական արքունիքի դիվանապետ...



## ՀԱՄՈՋՄԱՆ ԵՎ ԵՐԴՈՒՄԻ ԳԻՇԵՐ

*Մաշտոց էր անունն այն մարդու... Նա տեղյակ ու հմուտ էր աշխարհական կարգերին, իր զինվորական արվեստով սիրելի էր դարձել իր զորականներին...*

*Եվ զբանից հետո նա, ըստ ավետարանական կանոնի, դարձավ մարդասեր Աստծու ծառայությանը, այնուհետև մերկացավ իշխանական ցանկություններից... խառնվեց Քրիստոսի խաչակիր գնդին ու շուտով մտավ միայնակեցական կարգի մեջ...*

**ԿՈՐԾՈՒՆ**

Միջագետքում բյուզանդական զորքերը նախապատրաստվում էին պատերազմ սկսել Պարսկաստանի դեմ, երբ Բյուզանդիայում վախճանվեց Թեոդոս Մեծ կայսրը, և նրան փոխարինեց Արկադիոսը: Պարսկաստանի արքա Քիրմանշահը, օգտվելով հանգամանքից, հրամայեց հայոց թագավոր Վռամշապուհին հայոց այրուձիով մեկնել Միջագետք և միջնորդ հանդիսանալ Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև խաղաղություն հաստատելու համար: Եթե այդ բանը չհաջողվեր, նա պետք է օգներ պարսկական զորքերին՝ ընդդեմ Բյուզանդիայի:

Քիրմանշահի հրամանը խորը մտածված, դիվանագիտական խորամանկ քայլ էր: Նա դրանով մի կողմից ուզում էր ցույց տալ Բյուզանդիայի նոր գահակալին, որ հայերը ոչ միայն դաշնակից են Պարսկաստանին, այլև հյու-հնազանդ կատարում են իր՝ Քիրմանշահի հրամա-

նը, մյուս կողմից՝ Հայաստանից հեռացնելով հայոց թագավորին ու թագավորական զորքեր՝ բացառում էր այդպիսի խառնակ ժամանակներում հայերի ինքնորոշման և անկախության հնարավորությունը: Դրանից բացի, եթե Միջագետքում պատերազմ ծավալվեր, ապա հայկական զորքերը, մասնակցելով դրան, եթե հաղթանակ էլ չտանեին, գոնե կոչնչանային, որը նույնպես ձեռնադրում էր պարսիկ տիրակալին:

Հայոց աշխարհը տազնապի մեջ էր: Վռավապուհը նախապատրաստություն էր տեսնում այրուձին Միջագետք տանելու համար: Քանզի թագավորը Միջագետք էր մեկնում, ամենից առաջ, դիվանագիտական առաքելությամբ, իր հետ տանում էր նաև արքունիքի դիվանատան բանիմաց ծառայողներին. այդպես էր հրամայված Քիրմանշահի կողմից: Բնականաբար, Միջագետք պետք է մեկներ նաև արքունի դիվանապետ Մեսրոպը:

\* \* \*

Արևը թեքվել էր դեպի մայրամուտ, և զարնանային մի թեթև զեփյուռ խաղում էր ծառերի նորաբաց տերևների հետ: Մեսրոպը կանգ առավ վեհարանի մուտքի առաջ, թաշկինակով սրբեց քրտնած ձակատը, կարգի բերեց համազգեստը և կամաց քաշեց դրան կոչնակը: Դռների մեջ իսկույն երևաց վանքի սպասավորը:

— Բարև ձեզ,— ողջունեց Մեսրոպը և անմիջապես հարցրեց,— կաթողիկոսը վեհարանում է:

— Այո, իշխան,— պատասխանեց սպասավորը,— բայց նա հոգևոր խորհուրդ է հրավիրել:

— Ե՞րբ կվերջանա:

— Արդեն մեկ ժամ է, ինչ խորհուրդը սկսվել է, բայց թե երբ կվերջանա, չգիտեմ:

— Կարո՞ղ եք կաթողիկոսին հայտնել, որ ես հույժ կարևոր գործով իր մոտ եմ եկել:

Վանքի սպասավորը գիտեր, որ Մեսրոպը կաթողիկոսի մերձավոր բարեկամն է, որի հետ կաթողիկոսը կիսում է ամենագաղտնի մտքերը, գիտեր նաև, որ Մեսրոպն անտեղի չէր անհանգստացնի կաթողիկոսին, ուստի պատրաստակամությամբ ասաց.

— Տե՛ր իշխան, ներս եկեք, ես հենց հիմա կաթողիկոսին կհայտնեմ Ձեր գալու մասին:

— Շնորհակալ եմ,— ասաց Մեսրոպը ներս մտնելով:

Երբ սպասավորը վանքի ժողովատուն մտավ, կաթողիկոսը հանձնարարություններ էր տալիս վարդապետներին, վանականներին ու եկեղեցու ներկայացուցիչներին: Տեսնելով սպասավորի անակնկալ մուտքը ժողովատուն՝ մի պահ ընդհատեց ասելիքը:

— Տեր Մամիկոնյանը, Վեհափառ,— ասաց սպասավորը՝ ի պատասխան կաթողիկոսի հարցական հայացքի:

— Ո՞ր Մամիկոնյանը:

— Դիվանապետը:

— Ես շուտով վերջացնում եմ, թող ներս գա,— ասաց կաթողիկոսը՝ ներքուստ անհանգստացած: «Տեսնես՝ ինչ է պատահել»,— անցավ կաթողիկոսի մտքով:

Կաթողիկոսը ամփոփեց խոսքը, հաջողություն մաղթեց ժողովականներին, և նրանք ցրվեցին:

Մեսրոպը ներս մտավ, ձեռքով բարևեց: Կաթողիկոսը հարցական նայեց նրա աչքերի մեջ:

— Ասելիքս երկար է,— ասաց Մեսրոպը,— գնանք վեհարան, նստենք խոսենք. շատ եմ հոգնած:

Կաթողիկոսն այլևս ոչինչ չհարցրեց, մինչև մտան վեհարանի իր առանձնասենյակը: Երբ նստեցին, հարցրեց.

— Կարգադրեմ՝ ուտելիք բերեն:

— Առայժմ ոչ,— ասաց Մեսրոպը դժկամությամբ,— մի քիչ խոսենք, հետո:

— Չէ, ինչպես կոահում եմ, դու լավ բանի համար չես եկել:

— Լավ բան: Ուրեմն դու դեռ լավ բանի՞ ես սպասում:

— Մեծ է Աստվածը,— ասաց կաթողիկոսը հանգիստ,— լավ բանի չպետք է սպասել, այլ ձգտել...

— Ձգտել,— ծոր տվեց Մեսրոպը: — Կձգտես, ինչպե՞ս չէ, միանգամից բորբոքվեց Մեսրոպը: — Ձգտի՛ր, տեսնեմ՝ ինչպես ես ձգտելու, երբ գլխիդ տերը չես...

— Ինչու՞ ես բորբոքվում,— հանգիստ ասաց կաթողիկոսը,— նախ պատմի՛ր, իմանամ՝ ինչ է պատահել:

— Այսօր Քիրմանշահից հրովարտակ եկավ:

— Եվ ի՞նչ:

— Հրաման է եկել Վռամշապուհ արքային, որ այրուձին մարտական դրության բերի և ամենաուշը մեկ ամսից շարժվի դեպի Միջագետք. այնտեղ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև նորից սահմանային շնակոծիվ է սկսվելու...

- Գայլակոիվ,— նետեց կաթողիկոսը:
- Ավելի վատ, ուրեմն մեր կորուստը ավելի մեծ կլինի:
- Թագավորն ինքը պիտի առաջնորդի զորքին:
- Այդպես է հրամայված:
- Տեսնես՝ ինչ է մտածել Քիրմանշահը,— ինքնիրեն խոսեց կաթողիկոսը,— երևի ցանկանում է Բյուզանդիային ապացուցել, որ ինքը Հայաստանի լիիրավ տերն է: Մի՞թե պարզ չէ:
- Այո՛, ցավոք, դա իրողություն է: Հայոց աշխարհի մի մասը դարձավ բյուզանդական խղճուկ նահանգ, իսկ այսօր կամ վաղը այս մասն էլ կդառնա պարսկական մարզ:
- Եթե արդեն չի դարձել,— դառնացած ասաց Մեսրոպը,— քո թագավորի հետ Քիրմանշահը վարվում է այնպես, ինչպես կվարվեր իր մի հասարակ զորավարի հետ: Մի՞թե դրանից վատթարն էլ կա:
- Կա,— կտրուկ պատասխանեց կաթողիկոսը,— թագավորի կորուստը չարիքի փոքրագույնն է...
- Ապա ո՞րն է մեծագույնը, տե՛ր կաթողիկոս,— առավել բորբոքվեց Մեսրոպը՝ շուռումուռ գալով նստած տեղում:
- Մեծագույնը ժողովրդի կորուստն է, Մեսրո՛պ, ազգի կորուստը, առանց որի թագավորը ոչինչ է: Ազգով է պայմանավորված թագավորը: Եթե մենք հզոր լինեինք, հզոր կլինե՛ր նաև մեր թագավորը: Թույլ ազգն ու ժողովուրդը հզոր թագավոր ունենալ չեն կարող... Դու երբևիցե մտածե՛լ ես այդ մասին...
- Ազգն ու ժողովուրդը հզոր են նաև թագավորով:
- Այո՛, նաև: Բայց առաջնայինը ժողովրդի հզորությունն է, սա է ձշմարտությունը:
- Հետաքրքիր է, դու ի՞նչ ես առաջարկում:
- Ես առաջարկում եմ նախ ժողովրդին դարձնել իսկական ժողովուրդ, ազգին դարձնել իսկական ազգ: Եթե մենք կարողանանք հասնել դրան, կունենանք նաև իսկական թագավորություն, ապա և թագավոր:
- Ուրեմն, մենք իսկական ժողովուրդ չե՞նք, իսկական ազգ չե՞նք, մեր թագավորը իսկական չե՞՛...
- Դեռևս ոչ,— նույն սառնասրտությամբ պատասխանեց կաթողիկոսը:
- Սահակի սառնասրտությունից ու խրատական տոնից Մեսրոպը վիրավորվեց:

— Եթե այդպես է, էլ ինչի՞ն ես սպասում, տներ կաթողիկոս, դու էլ իշխանություն ունես, ժողովրդին դարձրո՞ւ իսկական ժողովուրդ, ազգին՝ իսկական ազգ,— ասաց Մեսրոպը, ընդոստ կանգնեց տեղում և թիկունքով շուռ եկավ դեպի կաթողիկոսը:

Սահակ Պարթևը, մոր կողմից լինելով Մամիկոնյանների զարմիկ, նրանցից ժառանգել էր ըմբոստ ոգի և երբեմն հպարտանում էր դրանով, սակայն բոլորին հայտնի էր, որ Գրիգոր Լուսավորչի թոռ Սահակի բնավորության հիմնական գիծը իր նախապապերի՝ Սուրենյան Պահլավունիների պողպատյա հաստատակամությունն ու լրջախոհ սառնասրտությունն էր: Մեսրոպի խոսքերը դիպան նրա սրտին, ուստի նրա մեջ մի պահ ծառու եղավ Մամիկոնյանների անհնագանդ արյունը, նա ուղղվեց տեղում, բառերը հատ–հատ շեշտելով՝ ասաց.

— Այդ դու՞ ես սպասում, տներ Մամիկոնյան, ես գործել եմ, գործում եմ և կգործեմ:

Մեսրոպը շուռ եկավ դեպի Սահակը: Նրանց հայացքները դիպան իրար: Երկուսն էլ զայրացած էին, սակայն Մեսրոպի սև աչքերը լցված էին անհուն թախիծով, իսկ Սահակի կապույտ աչքերն ամպամած էին ինչպես ամառվա ամպրոպածին երկինք:

— Դու գործելու ասպարեզ ունես՝ գործում ես: Ես ի՞նչ անեմ,— գղջալով ասաց Մեսրոպը:

— Գործելու ասպարեզներ շատ կան, գործող է պետք:

Ու՞ր է այդ ասպարեզը կամ եթե կա էլ, ես ինչպե՞ս գործեմ, երբ մի քանի շաբաթից թագավորի հետ մեկնելու եմ Միջագետք, այն էլ՝ ո՞վ գիտի՝ կվերադառնամ, թե՞ ոչ...

— Դու չես գնա Միջագետք,— կտրուկ պատասխանեց Սահակը:

— Այդ ի՞նչ հրաշքով,— թերահավատորեն ասաց Մեսրոպը և շուռ եկավ դեպի պատուհանը: Նա անքթիթ ու անորոշ նայում էր դուրս: Հետզհետե մթնող երեկոյի խավարում երևում էին դիմացի զանգակատան գմբեթի ու խաչի ուրվագծերը: Սահակը վառեց կացարանի չորս աշտանակների վրա ամրացված մոմերից մեկը, ապա դանդաղ մոտենալով՝ կանգնեց Մեսրոպի կողքին:

— Դու ուզու՞մ ես չգնալ,— հարցրեց Սահակը:

— Դա անկարելի է:

— Ի՞նչն է անկարելի:

— Չգնալը:

— Ինչու՞:

— Նախ՝ թագավորը չի համաձայնվի, և երկրորդը՝ ես չեմ կարող դասավիք դառնալ:

— Թագավորին ես կհամոզեմ,— կտրուկ ասաց Սահակը,— իսկ ինչ վերաբերում է դասալքությանը, դա պարզապես հիմար միտք է, որը նստած է, իմիջիայոց, ոչ միայն քո գլխում, այլև բոլորիս...

Մեսրոպը շուռ եկավ և հայացքը հառեց Սահակի աչքերի մեջ, բայց նրանց մեջ վճռական զայրույթ նկատելով՝ բացականչեց.

— Ինչպե՞ս թե...

— Այո՛, այո՛: Ես չեմ հասկանում, թե Դուք այդ ում եք դասալքում: Հայոց թագավորին, որը, ինչպես քիչ առաջ ասացիր, միայն անունով է թագավոր, իսկ իրականում մի հասարակ զինվոր է պարսիկ արքայի համար, որի հետ նա կարող է վարվել ինչպես կամենա, թե՛ պարսիկ այդ արքային, որն իր խարդախությամբ ու խորամանկությամբ արդեն թքել է մեզ վրա: Մենք ազնվություն ենք խաղում, իսկ այդ անմիտ ազնվությունը այլ բան չէ, քան ոչխարային մտածողություն...

— Սահակ... — վախեցած կանչեց Մեսրոպը,— Աստծուց վախեցիր:

— Հանգիստ թող Աստծուն... Աստված ոչխարներին կեր է ստեղծել գայլերի համար... Մի՞թե այդքան կույր եք, որ չեք նկատում, թե ինչպես այսօրվա հանգամանքներում մեր կրած սրից մենք ավելի շատ տուժում ենք, քան օգտվում, քանզի այդ սուրը մենք օգտագործում ենք ուրիշի թելադրանքով: Մենք այդ սուրը ավելի շատ իրար դեմ ենք մերկացրել, քան օտարների: Միայն իմ աչքի առաջ քո հարազատ հորեղբայրը՝ Վասակը, սպանեց քո հորը, քո հորեղբոր որդի Սամվելը՝ իր հորը՝ Վահանին, Պապ թագավորը՝ իմ հորը՝ Ներսես Մեծին, Բաթ Սահառունին՝ Մուշեղ Մամիկոնյանին, քո հորեղբայր Մանվել Մամիկոնյանը՝ Բաթին... Եվ այսպես՝ անվերջ... Այսպես իրար մորթելով ու՛ր եք գնում, էլի՛ թվեմ մեր սրի զորությունը: Մեսրոպ, ինձ լավ հասկացիր, այսօր մեզ ուրիշ զենք է պետք, ավելի հզոր զենք, քան սուրը: Մեր ժողովուրդն անմիաբան է, իսկ մեր թշնամիներն օգտվում են դրանից: Մեզ անհրաժեշտ է ազգը համախմբել, իսկ դրա համար հարկավոր է ժողովրդին կրթել, լուսավորել ճշմարիտ գաղափարներով...

— Ես միշտ էլ այդ հարցում համաձայն եմ եղել քեզ հետ, բայց կյանքը ուրիշ բան է ցույց տալիս:

— Ի՞նչ է ցույց տալիս,— զարմացավ Սահակը:

— Կյանքը ցույց է տալիս, որ մենք, քրիստոնյա դարձնելով մեր ազգը, նրան մաքրում ենք արատներից, նրան ավելի կատարյալ ենք

դարձնում, բայց դրանով զրկում բազմանալու հնարավորությունից, իսկ ոչ քրիստոնյա ազգերը բազմակնության շնորհիվ աճում են մորեխի պես: Վաղը նրանք մորեխի պես կբնաջնջեն աշխարհը, մեզ էլ՝ աշխարհի հետ...

— Նախ՝ ավելի լավ է բնաջնջվել որպես բանական էակ՝ որպես մարդ, քան գոյատևել որպես մորեխ՝ որպես անասուն, և երկրորդը՝ վերջին հաշվով դու սխալ ես...

— Ո՞րն է այդ վերջին հաշիվը:

— Այն, որ մարդս բանական էակ է, վաղ թե ուշ նրա բանական ուժը հազարապատիկ հզոր կդառնա, քան ձեռքի ուժը, և այն ժամանակ վայ թո «մորեխներին»...

— Ընդունենք, որ այդ ամենը ճիշտ է, ասենք, որ ես էլ եմ համոզված դրանում, բայց ինձ ասա՛, ես՝ զինվորս, այսօր ինչո՞վ կարող եմ ծառայել հայրենիքին:

— Նախ ինձ անկեղծ ասա՛, դու ուզո՞ւմ ես ծառայել հայրենիքի:

— Դու արդեն ինձ վիրավորում ես:

— Դե ուրեմն լսի՛ր ինձ. դու չպիտի գնաս Միջագետք, այդ գործում քեզ փոխարինողներ շատ կգտնվեն, իսկ թո գիտելիքներն օդի ու ջրի պես պետք են մեր տարաբախտ ժողովրդին:

— Ասենք թե համաձայն եմ քեզ հետ, — խեղճացավ Մեսրոպը, — բայց ի՞նչ պատճառաբանությամբ կարող եմ խուսափել Միջագետք գնալուց:

— Պատճառը կա, միայն հարկավոր է այն խելացի օգտագործել:

— Աստված վկա, նորից եմ կրկնում, դու հրաշքների ես հավատում:

— Այո՛, մի հրաշք կա, որին ես հավատում եմ:

— Այդ ի՞նչ հրաշք է, որի մասին ես չգիտեմ:

— Ես այս հրաշքին եմ հավատում, սիրելիս, — Սահակը հանդիսավոր ցուցամատը դրեց Մեսրոպի ճակատին:

— Պարզ խոսի՛ր՝ բան հասկանամ, — վրդովվեց Մեսրոպը:

— Այստեղ ի՞նչ կա չհասկանալու: Մինչև այժմ հավատարիմ ծառայել ես տեր թագավորին, սրանից հետո կծառայես Տեր Աստծուն:

— Ի՞նչ է, դու ուզում ես ինձ կրոնավոր՞ ձեռնադրել:

— Շատ եմ ուզում, բայց դժբախտաբար դա իմ ուժերից վեր է: Այդ հարցում Վռամշապուհն ինձ կրնդառաջի, սակայն մեջտեղը պարսիկ հազարապետ Առավանը կա, որն այդ բանի համար կարող է ինձ չներել կամ պարզապես կարող է դեմ լինել...

— Ուրեմն, ես էլ ի՞նչ ձևով կարող եմ ծառայել Աստծուն:

— Որդյանկ իմ,— ձայնին կատակի տոն տալով՝ ասաց Սահակը,— ամեն մի քրիստոնյա իրավունք ունի իր գործած մեղքերը քավելու, իսկ դու առավել իրավունք ունես մաքրելու քո հոգին,— այս ասելով՝ Սահակը խաչակնքեց Մեսրոպին,— ամեն:

— Ի՞նչ, դու ինձ ուղարկում ես ձգնությանմ,— տարակուսեց Մեսրոպը:

— Առայժմ քեզ ուրիշ ճանապարհ չկա, զավակս,— նորից կատակեց Սահակը,— քանի ուշ չէ, մերկացիր իշխանական ցանկություններից, միայնակեցական կյանք մտիր, տանջիր մարմինդ՝ հանուն հոգուդ փրկության...

— Լսիր, դու լուրջ ես խոսում:

— Նստիր, ասեմ:

Մեսրոպը նստեց: Սահակը նստեց ուղիղ նրա դիմաց, դեմքը մոտեցրեց դեմքին և ցածր ասաց.

— Լսիր՝ Մեսրոպ, դու որոշ ժամանակ պիտի «ձգնես», մինչև քաղաքական շրջանները քեզ մոռանան:

— Հետո՞:

— Հետո ակոմիտ կդառնաս: Փառք Աստծու, դու ավելի լավ գիտես, որ իմ վաթսուն ակոմիտներից յուրաքանչյուրն այսօր երկրի համար ավելի մեծ գործ է կատարում, քան մեր նախարարներն իրենց գորքերով... Ակոմիտներն իրենց օրինակով ու քարոզներով ժողովրդի մեջ տքնաջան աշխատասիրություն և կրթություն են սերմանում, իսկ կյանքը ցույց է տվել, որ գոյատևում են միայն աշխատասեր ու լուսավորված ազգերը... Հասկացա՞ր ինձ:

— Հասկացա:

— Դե, փառք Աստծո: Հարկ է, որ հենց հիմա նշանավորենք մեր՝ իրար հասկանալը:

— Դեմ չեմ,— ուրախացած ասաց Մեսրոպը:

Կաթողիկոսը ներս կանչեց պաասավորին և ընթրիք պատվիրեց: Սպասավորը մնացած մոմերը վառեց և դուրս գնաց:

Սահակն ու Մեսրոպը տեղավորվեցին ընթրիքի սեղանի շուրջ: Մեսրոպը հանդարտվել էր: Սահակը նայում էր նրան ու ժպտում:

— Իսկ որքան պիտի «ձգնեմ»,— հարցրեց Մեսրոպը:

— Գուցե մեկ տարի, գուցե տասը տարի, դա կախված է հանգամանքներից: Առայժմ ժամկետի մասին ոչինչ ասել չեմ կարող,— հանգիստ ասաց Սահակը: Ճգնավորի հովանավորը Աստվածն է, նա էլ «կորոշի» ժամկետը...



Ներս մտավ սպասավորը և սեղանին դրեց սկուտեղը, որի վրա՝ տարբեր ամանների մեջ, ճաշակով դասավորված էին հաց, տապակած ճուտ, կանաչի, մի անակ սառը դավուրմա, թթու կաղամբ և էլի ուրիշ բաներ: Սկուտեղի կենտրոնում չինական փոքրիկ փարչով մածուն էր դրված: Երբ սպասավորը բերածները դասավորեց սեղանին և ուզում էր հեռանալ, կաթողիկոսը մատով թխկթխկացրեց չինական փարչիկը և սպասավորին ասաց.

— Սրա ընկերոջը մառանում մենամկ թողեցիր:

— Այո՛,— ժպտաց սպասավորը:

Սպասավորը փութաջան դուրս գնաց և քիչ անց բերեց համանման մի փարչ՝ բերանը պինդ կապած: Փարչը և երկու գավաթները դրեց սեղանին և բացեց բերանը: Իսկույն սենյակը լցվեց հաճելի բուրմունքով:

— Մի գավաթ խմիր,— կարգադրեց սպասավորին:

— Տե՛ր կաթողիկոս,— ամաչելով ծոմովեց սպասավորը:

— Խմիր, խմիր, մեղք է, երբ գինի պատրաստողը իր գինուց չխմի,— այս ասելով՝ նա լցրեց իր գավաթը և մեկնեց սպասավորին:

— Չէ՛, Վեփահան,— ձեռքով գավաթը հետ հրեց սպասավորը,— ես ինձ համար ուրիշ գավաթ կբերեմ:

— Ի՞նչ է, ուզում ես մեզ հետ հավասար խմել,— կատակեց Սահակը և գավաթը դրեց սեղանին,— դե գնա՛ բեր:

Սպասավորը չկողմնորոշվեց. շփոթված մնաց տեղում կանգնած:

— Դե վերցրո՛ւ խմիր, ես քեզ շատ եմ չարչարում, և դու համբերությամբ տանում ես այդ ամենը,— ասաց կաթողիկոսը և նորից իր գավաթը մեկնեց նրան:

Սպասավորը մեծ ակնածանքով վերցրեց գավաթը, դրեց շուրթերին, բավականությամբ խմեց և շուռ եկավ դեպի ելքը:

— Ու՛ր ես գնում,— հարցրեց կաթողիկոսը:

— Գավաթը լվանամ, բերեմ:

— Ի՛նձ տուր գավաթը,— գինու գավաթն ինչո՞վ պիտի լվանաս, որ գինուց մաքուր լինի,— գրեթե զայրացած հրամայեց Սահակը:

— Վեհափան՛, — ծոր տվեց սպասավորը և երախտապարտ հայացքով գավաթը մեկնեց նրան:

Կաթողիկոսը ձախ ձեռքով վերցրեց գավաթը և աջ ձեռքում պահած հավի տապակած ազդրը մեկնեց նրան: Սպասավորը վերցրեց ազդրը, շնորհակալություն հայտնեց և դուրս գնաց:

Սահակը լիքը լցրեց գավաթները և ասաց.

— Արի այս մի—մի գավաթը խմենք մեր տարաբախտ հայրենիքի փրկության կենացը, մեր ուժերի չափով ծառայենք այդ փրկության գործին ու երբեք չերկնչենք այդ գործի համար սեփական անձը ողջակիզելուց:

— Ամեն,— ասաց Մեսրոպը՝ գավաթը խփելով նրա գավաթին:

Մոտ կես ժամ նրանք լուռ ընթերցեցին: Թեև փարչում գինի շատ կար, բայց բավարարվեցին միայն երկուական գավաթով:

Ընթրիքից հետո Մեսրոպը ցանկացավ սեղանը հավաքել, սակայն Սահակն արգելեց: Նա անկյունի պահարանից դուրս բերեց մի ասեղնագործ սփռոց և ծածկեց սեղանի վրա եղած ամաններն ու աննդի մնացորդները:

— Առավոտյան սպասավորը կհավաքի,— ասաց Սահակը,— աթոռդ մոտեցրո՞ւ պատուհանին, այստեղ նստենք. պատուհանից զով է գալիս:

Երբ նրանք տեղավորվեցին, Մեսրոպն ասաց.

— Իսկ ես այդ մասին ինչպե՞ս պետք է հայտնեմ թագավորին ու հազարապետին:

— Դու անհոգ մնա: Վաղը Համբարձման տոնն է: Ես թագավորին կնախապատրաստեմ: Դու մյուս օրը նրան խնդրագիր կգրես: Թագավորը համաձայնություն կտա և տեղյակ կպահի հազարապետին: Մի շաբաթ հետո դու կմեկնես ձգնության: Մնացածը հետո:

— Ես ուզում եմ՝ ինձ բացատրես այդ «մնացածի» միտքը:

— Սիրով: Եթե բացատրեմ, դու այնքան կուրախանաս, որ հարկ կհամարես ձգնել նույնիսկ ամբողջ կյանքում:

— Եթե այդ ասում է Սահակ Պարթևը, ես չեմ կասկածում:

— Մինչև բացատրելը ուզում եմ մի հարց տալ, միայն պետք է պատասխանես անկեղծ:

— Ի՞նչ հարց է:

— Դու ուզում ես անձնվիրաբան՞ր գործակցել ինձ:

— Ինչո՞վ ես ուզում երդվեմ:

— Երդում պետք չէ, Մեսրոպ: Իմ ամբողջ կյանքի փորձը ցույց է տվել, որ մեծ մտքի տեր մարդկանց խոսքը հազարավոր երդումներից հզոր է:

— Դու գերագնահատում ես իմ ուժերը:

— Ոչ, չեմ գերագնահատում: Դու ոչ միայն գիտակ ես բազմաթիվ լեզուների, այլև պայծառ ու խորաթափանց միտք ունես: Դու այ-

սօր կարող ես ավելի մեծ ծառայություն մատուցել մեր հայրենիքին, քան մատուցել են Մամիկոնյան տան բոլոր զորապետները միասին վերցրած:

— Պարզ խոսիր, Սահակ:

— Ավելի պարզ խոսելու հարկ չկա: Ինքդ ես տեսնում, որ մենք այսօր անկարող ենք սրով սատար կանգնել հայրենիքին: Մենք պետք է ուրիշ՝ ավելի հզոր ուժ գործադրենք՝ մեր ժողովրդին միավորելու, հայրենիքը հզորացնելու համար: Երկրի ուժը, Մեսրոպ, ժողովրդի մեջ է, համախմբված ու միավորված ժողովրդի: Մեր դժվարությունները և մեր դժբախտությունները բխում են այն բանից, որ մենք միաբան չենք: Մեր մի մասը հակված է դեպի Պարսկաստան, քանզի ստացել է պարսկական դպրություն և տիրապետում է նրա լեզվին, մյուս մասը՝ դեպի Բյուզանդիա՝ դարձյալ նույն պարզ պատճառով: Մեզանից շատերը դադարել են հայրենիքը սիրելուց հենց այդ պատճառով: Եթե դրան էլ ավելացնենք իր դարն ապրած և այլասերված հեթանոսական բարքերը, որը հյուծում է մեր ժողովրդին, ապա պարզ կդառնա մեր անելիքը: Ժամանակն է, որ մենք միաբանվենք, համախմբենք մեր ժողովրդին, նրա կենցաղը մաքրենք անցյալի արատավոր բարքերից: Հակառակ դեպքում մեր կործանումն անխուսափելի է:

— Անկեղծ ասած, Սահակ, ես նույնպես երկար եմ մտածել այդ մասին:

— Եվ ինչ, — կտրուկ հարցրեց Սահակը:

— Եվ այն, որ հեթանոսությունը՝ մեր նախնիների այդ արնապաշտ ու սրբազան դավանանքը, որը դարեր շարունակ ուժ ու եռանդ էր ներշնչում մեր ժողովրդին՝ աշխատելու և ապրելու համար, այսօր իսկապես իր մեջ է առել այլ դավանանքների զանազան ախտավոր գծեր և նեխում ու քայքայում է մեր ժողովրդին, այլասերում նրան ոչ միայն բարոյապես, այլև ֆիզիկապես: Այսօրվա հեթանոսությունն է ծանտաբարո շատ հիվանդությունների պատճառը:

— Ես ավելին կասեի, Մեսրոպ, այդ բարքերը խանգարում են մեր ժողովրդի նաև մտավոր զարգացմանը: Չէ՞ որ այդ բարքերը մինչև այսօր էլ խանգարում են քրիստոնեական դավանանքի տարածմանն ու ամրապնդմանը մեր երկրում, իսկ Քրիստոսի դավանանքը՝ որպես միասնականության հավատ, այսօր օդի և ջրի պես անհրաժեշտ է մեր ժողովրդին: Մեր ժողովրդի համար պետք է մեկ Աստված, մեկ հավատ, մի խոսքով՝ միաբանություն:

— Ավանդ,— հոգոց հանեց Մեսրոպը,— դրան հասնելու համար պետք է կարողանանք Քրիստոսի դավանանքի առավելությունները տարածել մայրենի լեզվով և ոչ թե հունարեն ու ասորերեն, որոնք անմատչելի են մեր ժողովրդի մեծամասնությանը...

— Կեցցեն, Մեսրոպ,— նրան ընդհատեց Սահակը,— բա որ ասում եմ՝ դու չես հավատում:

— Ինչի՞ն,— պատասխանեց Մեսրոպը:

— Նրան, որ դու պայծառ ձակատ ունես:

— Դու էլ բան գտար ինձ գովելու համար: Այն, ինչ ես ասում եմ, այսօր արևի լույսի պես պարզ ու հասկանալի է բոլորին:

— Ա՛յ, տեսնո՞ւմ ես, եթե մի բան բոլորին պարզ է դառնում, ուրեմն դարձել է բոլորի համար անհրաժեշտ պահանջ, իսկ նման պարագայում գործելը հեշտ է, որովհետև եթե ոչ բոլորը, ապա մեծամասնությունը կօգնի այդ գործին: Իսկ եթե մեկին օգնում է ժողովրդի մեծ մասը, նրա գործը կհաղթի:

— Ուրեմն ի՞նչ է այդ դեպքում մեր անելիքը:

— Ստեղծել սեփական լեզվով դպրություն:

— Ես պատրաստ եմ կատարելու քո բոլոր հրամանները,— ոգևորված ասաց Մեսրոպը: — Այդ քո՛ ձակատն է պայծառ, ոչ թե իմը, այդ դու՛ ես կարողանում ձանաչել ժամանակի ոգին...

— Ձանաչելը քիչ է,— ընդհատեց Սահակը,— գործադրելն է կարևոր: Իսկ այս հարցում դու այն մարդն ես, Մեսրոպ, որը ձակատագրով է կոչված:

— Շնորհակալ եմ:

Նրանք սկսեցին ծրագրեր կազմել: Խոսեցին այն բոլոր հնարավոր միջոցների մասին, որոնք պետք է գործադրվեին սեփական դպրություն ստեղծելու համար: Այնքան էին ոգևորված ու տարված այդ գաղափարով, որ չնկատեցին, թե ինչպես անցավ ամառնամուտի կարճ գիշերը: Նրանց սթափեցրեց հեռվից եկող աքլորականչը:

— Լույսը բացվեց,— զարմացավ Մեսրոպը:

— Աքլորները կանչում են ադամամութին, լույսը հետո է բացվելու,— երկիմաստ կատակեց Սահակը:

— Սահակ, վաղը ժողովուրդը դուրս կգա տոնախմբության. ես ինձ ինչպե՞ս պիտի պահեմ:

— Խիստ մտազբաղ,— ասաց Սահակը,— քեզ կպահես նախ բոլորի աչքի առաջ, բայց մինևույն ժամանակ բոլորից «մեկուսացած», այնպես, որ բոլորը նկատեն քո այդ «տարօրինակ» վարմունքը:

— Հատկապես թագավորն ու հազարապետը,— ժպտալով լրացրեց Մեսրոպը:

— Հազարապետը՝ երիցս առավել,— ծիծաղեց Սահակը:

Հաջորդ օրը Համբարձման տոնն էր, ժողովուրդը, խմբեր կազմած, դաշտերում, այգիներում ու գետահովիտներում տոնում էր զարնան զարթոնքը և ուրախանում: Արքայական նորաբողոքոջ ու լայնածավալ այգում՝ բացօթյա տաղավարներում էր նաև հայոց պալատական ավագանին: Այնտեղ էր նաև արքունիքի դիվանապետ Մեսրոպը, մտազբաղ շրջում էր այգում և գրեթե չէր խառնվում զվարճացողներին:

— Տե՛ր արքա, մեր դիվանապետը շատ մելամաղձոտ է,— ասաց հազարապետ Առավանը՝ Մեսրոպի վրա հրավիրելով ոչ միայն թագավորի, այլև կաթողիկոսի ուշադրությունը:

Թագավորն ինքն էլ էր նկատել, բայց չէր արտահայտվում, իսկ կաթողիկոսը, որ դեռ առավուտից հետևում էր Մեսրոպի «խաղին» և ներքուստ հրձվում, կարծես հանկարծակիի եկած և «անտեղյակ»՝ հարցրեց.

— Ի՞նչ է պատահել:

— Տրամադրությունն ընկած է: Չի խառնվում մարդկանց, քիչ է խոսում: Մի՞թե չէք նկատում,— ասաց հազարապետը:

— Ես դա վաղուց եմ նկատել,— անփույթ ասաց կաթողիկոսը,— կնոջ մահից հետո նա մի տեսակ փոխվել է: Մտադրվել է նույնիսկ աշխարհաթող լինել: Եթե չլինեին իմ հորդորները, նա վաղուց ձգնավոր էր դարձել:

— Հիմարություն,— նետեց Առավանը,— միայն խելագարը կարող է փայլուն գիտելիքներ ունենալով՝ նման քայլի դիմել... Թերևս Մեսրոպին դա վայել չէ: Նա կարող է փայլուն ապագա ունենալ քաղաքական ասպարեզում...

— Ճգնավոր,— տարակուսանքով հարցրեց թագավորը՝ նայելով Սահակի աչքերի մեջ:

— Այո՛, տե՛ր արքա,— արհեստանքով ասաց Սահակը և այնպիսի մի հայացք նետեց թագավորի աչքերի մեջ, որ միայն թագավորը կարողացավ այդ հայացքի մեջ կարդալ. «Դա խիստ անհրաժեշտ է, արքա՛...»

— Ամեն ինչ կատարվում է Արարչի ամենակալ կամքով,— ասաց թագավորը՝ ուները վեր քաշելով,— բայց շատ կոժվարանանք առանց Մեսրոպի նման դիվանապետի:

— Ի՞նչ արած, մեծ է Աստծո զորությունը,— հանգիստ ասաց կաթողիկոսը,— եթե նա հաստատ որոշել է ծառայել Աստծուն, ապա ոչ ոք չի կարող նրան ետ պահել այդ նվիրական ճանապարհից:

— Այլ կերպ էլ լինել չէր կարող,— հեզնանքով նետեց հազարապետը,— նա այնքան գրքեր կարդաց, որ կարող էր նույնիսկ խելագարվել: Փառք Աստծո, որ միայն ճգնավոր է դառնում...

\* \* \*

Շատ տարիներ անց Մեսրոպի լավագույն աշակերտներից մեկը՝ Կորյուն պատմիչը, որը և նրա վարքագիրը եղավ, այդ մասին գրեց.

«Եվ դրանից հետո նա, ըստ ավետարանական կանոնի, դարձավ մարդասեր Աստծու ծառայությանը, այնուհետև մերկացավ իշխանական ցանկություններից և պարծանքի խաչն առնելով՝ դուրս եկավ ամենակեցույց խաչվածի ետևից: Եվ (հավատի) հրամանին հավանելով՝ խառնվեց Քրիստոսի խաչակիր գնդին ու շուտով մտավ միայնակեցական կյանքի մեջ...»:

## ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

Երեկոն ամպամած էր ու մութ: Արքան կաթողիկոսին հրավիրել էր «ընթրիքի»: Կաթողիկոսը պալատ ներկայացավ երկու անծանոթ վարդապետների ուղեկցությամբ, որոնց կարելի էր ճանաչել նրանց վեղարները հանելուց հետո միայն: Թագավորը կաթողիկոսին ու նրան ուղեկցող վարդապետներին ընդունեց պալատի իր առանձնասենյակում, որի մի անկյունում դրված էր ընթրիքի փոքրիկ սեղան՝ ծանրաբեռնված զանազան ուտեստներով, գավերով ու գավաթներով: Թագավորը, ընդունելով նրանց, առաջարկեց նստել, միևնույն ժամանակ կարգադրեց բարապանին ոչ ոքի ներս չթողնել: Բարապանը, ի նշան համաձայնության, գլուխը խոնարհեց ու դուրս գնաց, ետևից ծածկեց դուռը:

Պայմանավորվածության համաձայն՝ կաթողիկոսը թագավորի մոտ պիտի գար Մեսրոպի հետ, բայց Մեսրոպի փոխարեն երկու վարդապետներ տեսնելով՝ թագավորը հարցական նայեց կաթողիկոսին: Չէ՞ որ հույժ գաղտնի խոսակցություն պետք է լիներ, որը վերաբերում էր Մեսրոպին:

Կաթողիկոսի նշանով վարդապետներից մեկը հանեց վեղարը:

— Վահրիճ, — զարմացավ թագավորը:

— Այո, տեր արքա, — ասաց կաթողիկոսը, — մեր անձն էլ ապահովության կարիք ունի: Նա կսպասի նախասրահում:

— Դուք իմ մարդկանց չե՞ք վստահում:

— Ավելորդ յուրը ձաշը չի փչացնի, — կատակեց կաթողիկոսը, — ես Ձեր մարդկանց վստահում եմ, բայց զգուշությունը լավ բան է:

— Իսկ եթե մեր խոսակցությունը երկամբ տևի...

— Ոչինչ, մեր «վարդապետը» իր հետ գիրք է բերել և չափազանց էլ ընթերցասեր է, եթե նախասարահում նրան «խանգարող» չլինի, նա ժամերով կարող է կարդալ...

Արքան քաշեց կոչնակը: Մետրոպոլիտոսն ու Վահրիճը շտապ ծածկեցին վեղարները: Դռների մեջ երևաց բարապանը:

— Նախասարահում վարդապետի համար անկյուն հատկացրեք,— կարգադրեց թագավորը:

Վահրիճը բարապանի հետ դուրս գնաց:

— Համա թե գաղտնապահ եք, տներ արքա,— նկատեց կաթողիկոսը:

— Ի՞նչ արեցի,— զարմացավ թագավորը:

Մետրոպոլիտոսը նորից հանեց վեղարը և ժպտաց թագավորին:

— Ա՛յ քեզ բան,— ծիծաղեց թագավորը,— մտքովս չանցավ... բայց, Մետրոպոլիտոս, դու կեցցես...

— Ի՞նչ անեմ, տներ արքա, այս ահավոր մարդն ինձ ամեն ինչի վարժեցրել է,— կիսակատակ ասաց Մետրոպոլիտոսը,— այլ կերպ հնարավոր չէ...

— Դժգոհ ես,— հարցրեց կաթողիկոսը Մետրոպոլիտոսին:

— Բնավ,— կտրուկ պատասխանեց Մետրոպոլիտոսը:

— Փանք Աստծո, — ասաց կաթողիկոսը,— ուրեմն ամեն ինչ կարգին է:

— Սահակ, լսում ենք քեզ,— մտերմիկ ասաց թագավորը,— այժմ ծանոթացրո՞ւ քո ծրագրին:

— Ծրագիրը շատ է համառոտ, արքա՛, բայց նրա իրականացումը չափազանց մեծ ջանքեր է պահանջում: Այն իրականացնողը, հանձին Մետրոպոլիտոս, կա: Ես դրանում վստահ եմ: Բայց առանց մեր աջակցության, նա դժվար թե արդյունքի հասնի:

— Սահակ, ես բազմիցս ասել եմ, որ իմ աջակցությունն անպակաս կլինի, միայն թե պետք է գործեք զգույշ...

— Արքա՛, հավատացնում եմ, որ խնդրի լուծման այս ձևը ճիշտ է ընտրված: Մետրոպոլիտոս իր խնդրանքով, իմ միջնորդությամբ և Ձեր կամքով կաթողիկոսի դիվանապետի իր պարտականությունները, կամավոր կմերկանա իշխանական ցանկություններից, ձեռքը կառնի միայնակների ցուպը և կխառնվի Քրիստոսի խաչակիր գնդին: Իր շուրջը կհամախմբի հավատակից եղբայրներին, որոնց հետ ձգնելով ու աղոթելով՝ մեր սուրբ հավատը կտարածի դեռ հեթանոսությունն իսպառ



չմոռացած ժողովրդի մեջ և նրանց դարձի կրերի: Մի երկու տարի ձգ-նելով ու աղոթելով, երբ իր վարքով ու քարոզով հաճելի կդառնա Աստծուն ու մարդկանց, ցավով «կհամոզվի», որ օտար լեզվով անհնար է ժողովրդին բերել Քրիստոսի հնազանդությանը, ուստի հանուն հավատի՝ կմտածի մայրենի լեզվով գիր ու գրականություն ստեղծելու մասին...

— Հնարավոր չէ՞ ավելի հեշտ ճանապարհ ընտրել,— հարցրեց թագավորը:

— Արքայ՛, ցավոք, սա միակ ճանապարհն է: Ուրիշ ճանապարհ չկա:

— Ինչու՞:

Միայն այս ճանապարհով է հնարավոր հաղթահարել այն խոչընդոտները, որոնք խանգարում են սեփական գիր ունենալու մեր գործին: Դեռ ավելին՝ այս ճանապարհով ոչ միայն կարելի է վերացնել խոչընդոտները, այլև խոչընդոտող ուժերը ծառայեցնել մեր գործին:

— Որո՞նք են այդ խոչընդոտները և դրանց հաղթահարման հանգամանքները:

— Առաջին խոչընդոտն այն է, որ մենք չենք կարող պետականորեն սեփական գիր ստեղծել: Մեր «քարեկամներ» Պարսկաստանն ու Բյուզանդիան դրանում անպայման ազգի ինքնամաքրման խնդիրը կտեսնեն և կհամարեն քաղաքական շարժում՝ ընդդեմ իրենց շահերի: Նրանք կսկսեն նորանոր հալածանքներ ու սադրանքներ մեր երկրի դեմ, որից ավելի շատ կտուժենք, քան կշահենք: Իսկ եթե այդ բանն անում է հավատացյալը՝ հանուն հավատի, ուրիշ բան է...

— Ես դա գիտեմ,— ասաց թագավորը,— լավ է մտածված:

— Երկրորդ խոչընդոտը,— շարունակեց կաթողիկոսը,— ասորի հոգևորականության դիմադրությունն է: Նրանք մեր երկրում ապրում են փառավորապես՝ շնորհիվ այն բանի, որ քրիստոնեությունը քարոզվում է հիմնականում ասորերեն: Եթե մեր երկրում քրիստոնեությունը քարոզվի ոչ թե ասորերեն, այլ մի ուրիշ լեզվով, իրենք անելիք չեն ունենա: Ուստի նրանք ամեն կերպ կաշխատեն, որ իրենց գիրը մնա միակը...

— Այո,— ասաց թագավորը,— դա լուրջ ուժ է:

— Բայց այսօր հանգամանքներն այնպիսին են, արքայ՛, որ մենք կարող ենք ոչ միայն վերացնել այդ ուժը, այլև ծառայեցնել մեր շահերին:

— Ինչպէս:

— Շատ հասարակ: Մենք պետք է ասորի հոգևորականությանը համոզենք, որ մեր երկրի արևմտյան մասում քրիստոնեությունն այսուհետև քարոզվի հունարեն, հետևաբար իրենք այնտեղ ավելորդ կդառնան: Արևելյան մասում ժողովուրդը, ասորերեն չիմանալով, քրիստոնեությունը արմատներ չի գցի, և կարճ ժամանակում իրենք այդ մասում ևս անելիքներ չեն ունենա: Մի խոսքով, որպեսզի իրենք գոյատևեն, անհրաժեշտ է, որ գոյատևի քրիստոնեությունը, իսկ դրա միակ պայմանը հայերեն լեզվով գիր ու գրականություն ստեղծելն է: Այս պարագայում նրանք անպայման մեզ կօգնեն...

— Կեցցեք, — ուրախացավ թագավորը, — ամեն ինչ ճիշտ է հաշվարկված: Մյուս խոչընդոտը ո՞րն է:

— Մյուսը Պարսկաստանի ու Բյուզանդիայի չկամությունն է: Նրանք երբեք չեն հանդուրժի, որ մենք սեփական գիր ունենանք: Բայց այդ խոչընդոտը վերացնելու համար ժամանակը դարձյալ գործում է մեր օգտին: Մենք Բյուզանդիային կհամոզենք, որ եթե հայերս սեփական գիր չունենանք, ապա Հայաստանի մեծ մասում, որը պարսկահպատակ է, քրիստոնեությունը արմատներ չի գցի, և շուտով կձուլվի Պարսկաստանին, մի բան, որ ձեռնտու չէ Բյուզանդիային: Իսկ Պարսկաստանին էլ հակառակը կհամոզենք: Նրան կասենք, որ մենք՝ հայերս, հավատով քրիստոնյա ժողովուրդ ենք, իսկ քրիստոնեությունը քարոզվում է հունարեն, եթե մենք սեփական գիր չունենանք, ապա կարճ ժամանակում մենք կսկսենք հունարեն խոսել... Իմ կարծիքով, նման պարագայում թե՛ Պարսկաստանը և թե՛ Բյուզանդիան ոչ միայն չեն խոչընդոտի, այլև շահագրգռված կլինեն, որ մենք ունենանք մեր սեփական գիրը:

— Թեև ամեն ինչ լավ է մտածված, բայց մի հանգամանք կա, որը կարող է կասկածի տակ առնել մեր ձեռնարկումը, — ասաց թագավորը:

— Ինչ հանգամանք:

— Մեսրոպի անձը... իշխան, զորապետ և վերջապես թագավորական դիվանապետ, ու հանկարծ...

— Վաղվանից Մեսրոպ Մամիկոնյան չկա, իսկ մեկ կամ երկու տարուց հետո կմոռացվեն նաև նրա կոչումները, — ասաց կաթողիկոսը, — նա այսուհետև կրոնական սքեմի հետ կկրի նաև կրոնավորի նոր անունը:

— Ինչպէս է կոչվելու:

— Մաշտոց:

— Ի՞նչ է նշանակում:

— Իմ նախնիների՝ Պահլավների լեզվով նշանակում է Մածոց, այսինքն՝ աստվածասեր: Այդպես էին կոչում բարեպաշտներին,— բացատրեց կաթողիկոսը:

— Բայց ինչու՞ Մաշտոց և ոչ թե Մածոց,— հարցրեց թագավորը:

— Մեսրոպն ինքը այդպես կամեցավ՝ պատճառաբանելով, թե Մաշտոցն ավելի խորհրդավոր է...

Երեքն էլ ծիծաղեցին:

— Ճգնության վայրը որոշված է,— հարցրեց թագավորը:

— Այո՛,— պատասխանեց կաթողիկոսը:

— Որտեղ:

— Գողթն գավառում:

— Ինչու՞ հատկապես այնտեղ:

— Վայրի քնտրությունը, արքա՛, խիստ նպատակային է: Սյունյաց աշխարհի այդ մասը մեր երկրի ամենաանկարգ ու անխնամ թողած տեղն է: Այնտեղ ժողովուրդը դեռևս կառչած է հեթանոսական հավատալիքներից: Պարսկաստանին մերձ այդ տարածքը միշտ եղել է վերջինիս ազդեցության տակ և պարսիկների ներխուժման ժամանակ ապահով սահման չի հանդիսացել: Ավելի քան հարյուր տարվա մեր ջանքերը քիչ արդյունք են տվել: Բնակչության մեծամասնությունն իր խուժուղուժ վարքով դիմադիր է մեր ամեն մի ձեռնարկումին: Մեր հիմնած եկեղեցիներն ու դպրոցներն ավերվում են: Եղել են դեպքեր, որ այնտեղ ուղարկած մեր հոգևոր ներկայացուցիչներին չարաչար սպանել են: Մի խոսքով, ժամանակն է, որ լրջորեն հոգանք այդ մասին: Ամեն գնով պետք է արմատախիլ անել դիվապաշտությունն այդ կողմերում:

— Ձեր կարծիքով, տե՛ր կաթողիկոս, Մաշտոցը ճգնավորների մի փոքրիկ խմբով, աղոթքներով ու քարոզներով կկարողանա՞ կարգ ու կանոն հաստատել, ինչպես Դուք եք ասում, այդ դիվապաշտ կողմերում:

— Այո՛, տե՛ր արքա: Մաշտոցի խումբն այնտեղ կմեկնի արտակարգ լիազորություններով: Բացի այդ, նա կստանա Գողթնի տեր, աստվածասեր ու բարեպաշտ Շաբիր իշխանի օգնությունը:

— Շաբիրը գիտո՞ւմ այդ մասին:

— Ես նրան նամակ կգրեմ: Ինձ թվում է, որ նա ուրախությամբ կօգնի:

— Նա ճանաչո՞ւմ է Մեսրոպին,— հարցրեց թագավորը:

— Կճանաչեր, եթե Մեսրոպը նրան այցելեր որպես արքունի դիվանապետ,— ժպտաց Սահակը,— բայց Մեսրոպն այս անգամ նրան այցելում է որպես ճգնավոր:

— Կարծում ես, որ նա Մեսրոպին սիրալի՞ր կընդունի:

— Սիրալի՞ր կընդունի, թե ոչ, ես չգիտեմ, բայց որ նա պարտավոր է հարգել Ձեր հրովարտակը և ենթարկվել, դրանում ոչ մի կասկած չունեմ:

— Իմ հրովարտական անհրաժեշտ է:

— Պարտադիր է:

— Իսկ եթե դա հայտնի դառնա մեր թշնամիներին,— զգուշացավ թագավորը:

— Գաղտնիքը պահելու համար գլխովս եմ պատասխանատու,— միջամտեց Մեսրոպը:

— Իսկ Շաբիր իշխանը:

— Դարձյալ ինձ վրա թողեք, տե՛ր արքա,— վստահ ասաց Մեսրոպը:

— Ինչպես հասկացա Ձեզ,— տե՛ր կաթողիկոս,— Մաշտոցն այնտեղ հոգևոր քողի տակ աշխարհական գործեր պիտի կատարի:

— Այո՛, տե՛ր արքա: Բայց դա դեռ բոլորը չէ: Եթե Մաշտոցը միայն Գողթնի համար պիտի ճգնի, նշանակում է, որ մենք զբաղված ենք երկրի բախտի համար քիչ նշանակություն ունեցող գործերով: Մաշտոցը Գողթն է գնում՝ համայն Հայոց աշխարհի բախտի համար ճգնելու...

— Այդ ինչպե՛ս:

— Մաշտոցն իր խմբի հետ ճգնելու է Գողթնի Կապուտիչ սարի քարանձավում: Այդ ժայռերի վրա անհիշելի ժամանակներից մնացել են ժայռապատկերներ ու գրեր, որոնք հեռավոր անցյալում արվել են մեր նախնիների ձեռքով: Մաշտոցի խնդիրն է վերծանել դրանք և ստեղծել հայրենական գիր:

— Արքայական պատվովս եմ երդվում, Սահակ, դուք հրաշալի մարդիկ եք: Ես սիրով կընկերակցեի ձեզ, եթե ուսիս դրված չլիներ արքայական ծանր լուծը...

— Ընկերակցել, իհարկե, չեք կարող, բայց աջակցել պարտավոր եք,— ասաց կաթողիկոսը:

— Սիրով կաջակցեմ, բայց ինչպե՛ս,— հարցրեց թագավորը:

— Շուտով Դուք մեկնելու եք Միջագետք: Ձեր խնդիրն է այնտեղ՝ պարսկական ու բյուզանդական արքունի բարձր շրջաններում, որոնց հետ շփում կունենաք, դիվանագիտորեն կարծիք ստեղծել, որ

մեզ անհրաժեշտ են սեփական գրեր: Առանձին–առանձին համոզե՞ք նրանց, որ դա շոշափում է և իրենց շահերը, որի համար անհրաժեշտ է նրանց օգնությունը:

— Խոստանում եմ անել ամեն հնարավոր բան: Այդ ամբողջ ժամանակաընթացքում Մեսրոպը ոչինչ չխոսեց: Նա ուշադիր հետևում էր Հայոց աշխարհի երկու մեծերի գործնական գրույցին և մտքում գործողության նոր տարբերակներ մշակում իրեն առաջադրված խնդիրը պատվով լուծելու համար:

— Տե՛ր Մաշտոց, Դուք ի՞նչ ունե՞ք ասելու, — հարցրեց թագավորը:

— Ինձ համար ամեն ինչ պարզ է: Ես սպասում եմ մեկնելու թույլտվության, — ասաց նորընծա Մաշտոցը:

Արքան քաշեց կոչնակը: Դռների մեջ երևաց բարապանը:

— Ներս կանչե՞ք վարդապետին, — հրամայեց թագավորը:

Վահրիձը ներս եկավ:

Նրանք պալատից հեռացան կեսգիշերին:

## ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԳՈՂԹՆ

Գիշերը վաղուց կիսվել էր: Վեհարանում՝ կաթողիկոսի կացարանում, ճրագը դեռևս վառվում էր՝ շուրջը տարածելով այրվող ձեթի ծանր հոտը: Ճրագի թրթռացող լույսը աղոտ լուսավորում էր Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի մտահոգ դեմքերը: Ընդամենը մեկ շաբաթ էր անցել այն գիշերից, երբ թագավորը համաձայնություն էր տվել, որ Մեսրոպը աշխարհաթող լինի: Եթե ոչ ամբողջ Հայոց աշխարհը, ապա գոնե մայրաքաղաքն արդեն գիտեր այդ մասին, քանզի մեկ շաբաթ էր, ինչ Մեսրոպը, կրոնավորի սքեմ հագած, Մաշտոց անունով շրջում էր քաղաքում և նախապատրաստվում մեկնել ձգնության: Նրա հետ միասին կրոնավորի սքեմ էին հագել իր հավատարիմ զինվորներից տասներկու հոգի, որոնց թվում էր նաև Վահրիճ Խաղունին: Խումբը պետք է մեկներ Գողթն՝ ձգնելու 1–2 տարի: Եվ ահա այս գիշեր վեհարանում Սահակն ու Մեսրոպը քննարկում էին Մեսրոպի և նրա խմբի անելիքները:

— Երբ եմ մեկնելու, — հարցրեց Մեսրոպը:

— Այս շաբաթ, — ասաց կաթողիկոսը, — քայց անմիջապես Գողթն չեք մտնի: Դուք Գողթն պիտի հասնեք երկու ամիս հետո, այսինքն՝ օգոստոսի սկզբներին:

— Ինչու՞:

— Ձեր ուղին պետք է ձգվի Երասխ գետի հովտով: Դուք այդ երկու ամսվա ընթացքում կլինեք այդ տարածքի ձգնարաններում, կաշխատեք ձեր վարքով դառնալ այնքան օրինակելի, որ ձեր համբավը ձեզանից շուտ հասնի Գողթն: Դու հասկանու՞մ ես: Դա շատ կարևոր

է... Դու Գողթն պիտի հասնես՝ միայնակեցության արվեստին լավ տիրապետած, որպեսզի անակնկալի չգաս և ձեռնարկումներիդ մեջ չձախողվես:

— Արևի պես պարզ է:

— Մ'նացածը թողնում եմ քո հնարամտությանը:

— Գիտես, Սահակ, մինչև թագավորի հետ գրուցելը, ես մի տեսակ անվստահ էի... Բայց այսօր այնքան պատրաստ եմ գործը սկսելու, թե ինձ թվում է, որ դանդաղում ենք: Ես մի տեսակ անհամբեր եմ դարձել...

— Երբ գործդ սկսի պտուղներ տալ, դու ավելի անհամբեր կդառնաս, Մեսրոպ:

— Հավատում:

— Հավատում, Մեսրոպ, ժամանակը գործում է մեր օգտին: Երևի դրանից է, որ մենք անհամբեր ենք դարձել: Չպետք է բաց թողնել ժամանակը...

— Այդ ամենը հասկանալի է, Սահակ, միայն դու ասա՛, ես ինչ լիազորությունով եմ գործելու Գողթնում:

— Միայն արտակարգ լիազորության դեպքում դու այնտեղ կկարողանաս գործել: Այդ մասին հոգ է տարված: Ինձ մոտ է թագավորի գաղտնի հրովարտակը՝ ուղղված Շաբիթ իշխանին:

— Կարո՞ղ եմ կարդալ:

— Կարող ես,— ասաց կաթողիկոսը և պատի գաղտնարանից հանեց մագաղաթյա փոքրիկ փաթեթը:

Մեսրոպը մոտեցավ ձրագին և սկսեց կարդալ. «Արքայական ողջուն Գողթնի հայրենասեր իշխան Շաբիթին: Մեծարգո՛ իշխան, Հայոց աշխարհի սահմանամերձ Ձեր գավառում դպրության գործը և Քրիստոս աստծու հավատը ամրապնդելու նպատակով Ձեզ մոտ է գալիս ձգնավորների մի խումբ՝ բաղկացած տասներկու հոգուց՝ Մաշտոց տքնողի գլխավորությամբ: Նա ձեզ մոտ է գալիս Ամենայն հայոց հայրապետ Սահակ Պարթևի հրամանով ու օրհնությամբ: Դուք՝ որպես Հայոց աշխարհի Արշակունյաց թագավորության տան հավատարիմ բարեկամ, օգնե՛ք նրան իր ձեռնարկություններում՝ ի բարօրություն մեր հայրենիքի:

Հայոց աշխարհի արքա Վռամշապուհ»:

Հրովարտակը կնքված էր արքայական մատանիով:

— Ամեն ինչ ասված է ինչպես հարկն է,— ընթերցումը վերջացնելուց հետո ասաց Մեսրոպը,— ես պատկերացնում եմ՝ ինչքան կգարմանա Շաբիթ իշխանը՝ ինձ տքնողի սքեմով տեսնելով:

— Դա էլ իր նշանակությունն ունի,— բազմանշանակ ասաց Սահակը:

— Երևի,— համաձայնվեց Մեսրոպը:

— Որտե՞ղ ես թաքցնելու արքայական հրովարտակը մինչև տեղ հասնելը:

— Մի բան կմտածեմ:

— Քեզ մտածելու քիչ ժամանակ է մնում:

— Դե լավ, հենց հիմա ես կհոգամ այդ մասին,— ասաց Մեսրոպը,— ի՞նչ տուր վեհարանի հունարեն կաշեպատ կտակարանը:

— Ի՞նչ պիտի անես:

— Տո՛ւր՝ կտեսնես:

Կաթողիկոսը տարակուսանքով գրադարակից հանեց հունարեն կտակարանը և մեկնեց Մեսրոպին:

— Այժմ քո թույլտվությամբ մենք այս կտակարանին մի նոր զորություն կտանք,— ասաց Մեսրոպը,— դանակ ունե՛ս:

Սահակը կողքի գզրոցից վերցրեց դանակը և մեկնեց Մեսրոպին: Վերջինս դանակի ծայրով զգուշությամբ կտակարանի կազմի տախտակից անջատեց կաշին: Նույն զգուշությամբ տախտակի և կաշվի արանքում զետեղեց արքայի հրովարտակը՝ աշխատելով, որքան կարելի է, չխաթարել կտակարանի կազմի նախկին տեսքը:

— Հը՛, ինչպե՛ս է,— ցույց տալով կտակարանը՝ հարցրեց Մեսրոպը,— որևէ բան զգացվո՞ւմ է:

Սահակը վերցրեց կտակարանը, աջ ու ձախ դարձնելով՝ ուշադիր գննեց և ասաց.

— Լավ ստացվեց, բայց պետք է վերստին ստնձել:

— Դա հեշտ գործ է: Առավոտյան կստնձեմ:

— Կտակարանը հանկարծ չվստահեն որևէ մեկի:

— Ինձ նման կրոնավորին այս կտակարանից մահը կարող է միայն բաժանել,— Մեսրոպը բազմանշանակ ժպտաց:

— Լուսանում է,— ասաց կաթողիկոսը՝ լսելով առաջին աքլորականչը: Նա դեպի աղոթարանը բացվող լուսամուտից դուրս նայեց և երեսը խաչակնքեց:

Մեսրոպը հետևեց նրա օրինակին՝ խաչակնքեց երեսը և կարծես ինքն իրեն ասաց.

— Տարօրինակ է: Ամբողջ գիշեր չքնեցի՛նք, բայց հոգնություն չեմ զգում: Գիշերն էլ կարծես սովորականից կարճ էր...



— Տարօրինակ ոչինչ չկա, Մեսրոպ,— ասաց Սահակը՝ ձեռքը մեղմորեն դնելով նրա ուսին,— երբ մարդը նպատակադրվում է մեծ գործ կատարելու, քունը նրանից հեռու է փախչում: Դու դեռ շատ անքուն գիշերներ կունենաս... Տքնիր, Մեսրոպ: Տքնությունը մարդկային առաքինություններից ամենամեծն ու ամենավեհն է: Տքնությամբ է մարդը գնում դեպի իր հոգու հայտնությունը: Տքնությամբ է չափվում մարդու անհատականությունը...

\* \* \*

Մաշտոցի խումբը Գողթնի կենտրոնատեղի Ռոտաստակ քաղաքը հասավ օգոստոս ամսի սկզբին: Շաբիթ իշխանը նրանց ընդունեց պատշաճ հարգանքով: Նա առաջին հայացքից չճանաչեց Մեսրոպին: Փարթամ բեդ ու մորուքը, երկու ամսվա ձգնակենցաղ կյանքը լրիվ փոխել էին Մեսրոպի դեմքը: Բայց Շաբիթ իշխանին նրա աչքերը ծանոթ թվացին: Նա մտքում փորձեց հիշել, սակայն մտքով էլ չանցավ, որ կարող է այս ձգնավորը արքայական դիվանապետը լինել, ուստի դադարեց այդ ուղղությամբ մտածելուց՝ ենթադրելով, որ գուցե ինքը նրան նմանեցնում է իր ծանոթներից մեկին: Իշխանը, իմանալով նրանց առաքելության նպատակը, ուրախությամբ հանձն առավ նրանց ապահովել կացարաններով ու պարենով, սակայն չհապաղեց տարակուսանք հայտնել, որ կրոնավորների մի փոքրիկ խումբ կկարողանա դիվապաշտ ու հոռի բարքեր ունեցող բնակչության մեջ լուսավորության գեթ մի կայծ վառել: Նա թերահավատության հիմքեր ուներ: Հինգ տարի առաջ նման մի խումբ եկավ և անհաջողության մատնվելով՝ գրեթե փախավ այս կողմերից:

— Ինձ թվում է, իշխան,— ասաց Մաշտոցը,— Ձեր տարակուսանքներն անտեղի են: Մեզ հայտնի է, որ Գողթնում կան շատ հայրենասեր ու աստվածավախ այրեր, որոնք անկասկած մեզ կօգնեն:

— Այո, կան,— ասաց իշխանը,— բայց նրանց թիվը քիչ է: Հետամնաց ամբոխը նրանց չի լսում: Վեհափառ Ներսես Մեծի բացած դպրոցներից շատերը փակվեցին աշակերտներ չունենալու պատճառով: Տեղի բնակչությունը դժվարությամբ է ընկալում հունարենն ու ասորերենը, այդ պատճառով օրըստօրե պակասում է նաև եկեղեցիներ հաճախողների թիվը: Մարդկանց անհասանելի է Քրիստոս աստծու սուրբ վարդապետությունը, քանզի այն ժողովրդին է մատուցվում օտար լեզվով, օտարազգի քահանաների միջոցով:

— Հայ քահանաներ չունե՞ք,— հարցրեց Մաշտոցը:  
— Ունենք, բայց նրանց թիվը սակավ է, որը գնալով ավելի է պակասում:

— Ինչու՞:

— Քանզի հայ քահանաները նույնպես պետք է քարոզները կարդան ասորերեն կամ հունարեն: Իսկ խեղճերից շատերը հազիվ են հասկանում այդ լեզուները, ուր մնաց, թե քարոզեն:

— Իսկ հայ քահանաներն ինչու՞ եկեղեցիներում քարոզները հայերեն չեն մատուցում:

— Հայերեն,— զարմացավ իշխանը,— իսկ որտեղի՞ց վերցնեն հայերեն քարոզներ, երբ հայերեն գրեր չկան:

— Թող մեր քահանաները հունական և ասորական գրերից կարդացածների միտքը հայերեն բացատրեն բնակչությանը:

— Բանավոր,— հարցրեց իշխանը:

— Այո՛, բանավոր,— ձայնը բարձրացրեց Մաշտոցը,— հենց տեղի հարազատ բարբառով բացատրեն, թե ինչ լավ ու օգտակար բաներ են գրված Քրիստոս աստծու ավետարանում...

— Իհարկե, կարելի է,— տեղի տվեց իշխանը,— բայց դա, իմ կարծիքով, արդյունք չի տա:

— Ինչու՞:

— Դե, պատճառները շատ են: Նախ՝ ժողովուրդը բանավոր խոսքին քիչ կհավատա. գրավոր խոսքի ուժն ուրիշ է, և երկրորդ՝ ինչպես ասացի, մեր քահանաների մեծ մասն ասորիներ են կամ հույներ, որոնք այդ բանը չեն անի:

Մաշտոցը մի պահ մտատանջության մեջ ընկավ: Իշխան Շաբիթը գննող հայացքով նայում էր իրենից մոտ քսան տարով երիտասարդ, սևամորուք ու եռանդուն այդ մարդուն, որը համարձակ առաջ էր քաշում եկեղեցիներում հայերեն քարոզելու հարցը: «Զլինի՞ թե սա բախտախնդիրի մեկն է,— անցավ Շաբիթի մտքով,— իսկ եթե այդպիսին է՝ ի՞նչ նպատակով է այս կողմերը եկել»:

— Սուրբ հայր,— լռությունն ընդհատեց Շաբիթը,— իսկ հայերեն բանավոր քարոզ կարդացող քահանան ինչո՞վ կհամոզի ժողովրդին, որ ինքն ինչ ասում է՝ Սուրբ գրքից է:

Մաշտոցն իսկույն կռահեց իշխանի մտքերը, սակայն չմեղադրեց նրան, որովհետև շատ բաներում համաձայն էր նրա հետ:

— Իշխան,— գրեթե հրամայական ասաց Մաշտոցը,— իսկ այն այլանդակ բարբերն ու մոլի սովորույթները, որոնք գալիս են անցյա-

լից, այլասերում են բնակչությանը, որոնց հետևանքով տարածված հիվանդությունն ու համաճարակը այստեղից են սփռվում ամբողջ Հայաստանով մեկ և սպանում բնակչությանը, բնաջնջում երկրի երեսից. չէ՞ որ դրանց համար էլ քարոզներ են պետք:

Իշխանը ուղղվեց նստած տեղում և զարմացած նայեց Մաշտոցի գայրալից աչքերին, որոնք այդ ընթացքում սևեռված էին իր վրա: «Սա ի՞նչ ճգնափոր է»,— անցավ Շաբիթի մտքով: Նա նայեց կրոնավորներին, որ կարողանա մի բան հասկանալ, սակայն նրա զարմանքն ավելի խորացավ, երբ մյուս կրոնավորների դեմքերին նույնպես տեսավ նույն վճռականությունը: Իշխանը 60–ն անց, կյանքի բոլոր թրծված մարդ էր, ուստի փորձեց ամեն ինչ իմանալ հենց Մաշտոցից:

— Սուրբ հայր,— ասաց նա և սևեռուն հայացքով նայեց Մաշտոցի աչքերի մեջ,— մենք ի՞նչ պիտի անենք, որ չենք արել:

— Քրիստոս աստծու սուրբ ավետարանում գրված է. «Ամենայն ծառ, որ բարի պտուղ չի տա, կտրվում և կրակն է զցվում,— ասաց Մաշտոցը՝ ինքը ևս սևեռուն նայելով Շաբիթ իշխանի աչքերի մեջ:

«Որտե՞ղ եմ լսել այս մարդու ձայնը»,— անցավ իշխանի մտքով: — «Շարժումներն էլ ծանոթ են, աչքերը նույնպես: Որտե՞ղ եմ տեսել...»:

— Սուրբ հայր,— խոսքն առաջ տարավ իշխանը,— սուրբ ավետարանում գրված է նաև. «Մի՛ դատեք և չպիտի դատվեք, մի՛ պատժեք և չպիտի պատժվեք...»:

— Հետո՞: Շարունակե՛ք:

— Ի՞նչը շարունակեմ:

— Ավետարանի այդ հատվածը:

Իշխանը շփոթված ուսերը վեր քաշեց, որով ուզում էր ցույց տալ, թե շարունակությունը չգիտի:

— Ա՛յ, տեսնո՞ւմ եք, իշխան,— ժպտալով ասաց Մաշտոցը,— մեզանից շատերը կարդացել են Ավետարանի միայն մի երեսը... Լրիվ կարդացողն իսկույն կնկատի, որ Քրիստոս աստծու խոսքն այստեղ անարդար դատելու և անարդար պատժելու մասին է, քանզի հատուցումն անխուսափելի է, քանզի «... այն չափով, որ չափում եք, նույն չափով պիտի չափվի ձեզ համար...»: Սա է շարունակությունը: Մի՛ մոռացե՛ք, իշխան, որ Ավետարանում, պատժելու մասին սևով սպիտակի վրա գրված է. «Մովսեսի օրենքն արհամարհած մեկին անողորմա-

բար սպանում էին երկու կամ երեք մարդու վկայությամբ: Իսկ որչանի ավելի խիստ պատժի արժանի պիտի համարեք նրան, ով ոտնահարել է Աստծո Որդուն...»:

— Համոզեցիք, սուրբ հայր,— ժպտալով ասաց իշխանը,— եթե Դուք կարողանաք նույն ձևով համոզել նաև Գողթնի բնակչությանը, հույս կա, որ նրանք դարձի կգան հողի բարքերից: Դրա համար ես միայն ուրախ կլինեմ...

— Ուրախ լինելը քիչ է, իշխան: Դուք պիտի մեզ օգնեք:

— Եթե Ձեր ձեռնարկումներն արգասավոր լինեն, սուրբ հայր, մեր օգնությունն անպակաս կլինի:

— Կաշխատեք չհիասթափեցնել իշխան Շաբիթին:

— Հայր սուրբ,— ասաց իշխանը,— տարվեցինք խոսքով և մոռացանք, որ Դուք նախ պետք է հանգստանաք: Ես արդեն կարգադրություն եմ արել այդ մասին: Գնացե՛ք տեղավորվե՛ք, հանգստացե՛ք, երեկոյան կխոսենք մեր անելիքների մասին:

— Շնորհակալ եմ, իշխան, ցտեսություն:

— Ներեցե՛ք, հայր սուրբ,— գնալուց առաջ հարցրեց իշխանը,— ինչպե՞ս է Ձեր անունը, իսկ եթե կրոնական այլ կոչումներ ունեք, արտոնե՛ք՝ իմանանք:

— Անունս Մաշտոց է, իսկ մնացած բաների մասին հետո կիմանաք. մենք դեռ շատ պիտի հանդիպենք,— կարճ կապեց Մեսրոպը և մտերմիկ ժպտաց:

— Եղավ, տե՛ր Մաշտոց,— ասաց Շաբիթ իշխանն այնպիսի մի ձևով, որով ուզում էր ասել. «Անունդ էլ իմացա. ով լինելդ հետո կպարզեմ...»:

Մաշտոցը իր խմբի հետ, իշխանի մարդկանց ուղեկցությամբ, գնաց դաստակերտի այն հարկաբաժինը, որտեղ իրենց կացարաններ էր հատկացված...

Ամառային հեռզհետե զովացող երեկոն կրոնավորներին դուրս կանչեց կացարաններից: Նրանք խմբով շրջում էին փարթամ պարտեզում և խորհրդածում իրենց առաջիկա անելիքների մասին: Այդ պահին նրանց մոտեցավ իշխանական համազգեստով երեսունին մոտ, կրակոտ աչք-ունքով մի երիտասարդ: Նա մի պահ հայացքով գննեց կրոնավորների խումբը, որպեսզի որոշի, թե նրանցից որն է Մաշտոցը:

— Ի՞նչ է ցանկանում երիտասարդ իշխանը,— հարցրեց Մաշտոցը:

— Դու՞ք եք Մաշտոցը,— հայր սուրբ:

— Ես եմ:

— Հայր սուրբ, ես Շաբիթ իշխանի որդին եմ, անունս Գինթ է: Հայրս խնդրեց, որ համաձայն պայմանավորվածության՝ Դուք կարող եք անցնել իր մոտ:

— Ընտրահակալ եմ,— ասաց Մաշտոցը և ձեռքով բարևեց Գինթին,— շատ ուրախ եմ, որ ծանոթացանք: Գնանք:

Մաշտոցը մի քանի կարգադրություններ արեց յուրայիններին և Գինթի ուղեկցությամբ գնաց Շաբիթ իշխանի մոտ: Նա շատ ուրախացավ, որ Շաբիթը մեն–մենակ էր իր առանձնասենյակում:

Շաբիթը Մաշտոցին ընդունեց շատ քաղաքավարի: Առաջարկեց նստել: Մաշտոցը նստեց, իսկ Գինթը մնաց կանգնած:

— Ինչպե՞ս տեղավորվեցիք,— հարցրեց Շաբիթը:

— Շատ լավ: Հյուրասիրությունից գոհ եմք:

— Փառք Աստծո, որ կարողացել ենք գոնե այդ չափով օգտակար լինել Ձեզ: Իսկ այժմ, սուրբ հայր, ես կցանկանայի առանձնության մեջ լսել և իմանալ Ձեր ձեռնարկումների մասին ու կշռադատել մեր անելիքները:

Մաշտոցը նայեց մինչ այդ ոտքի վրա սպասող Գինթին, որով ուզում էր ասել, թե արդյոք նրա ներկայությունը չի խանգարի իրենց առանձնությանը:

— Ես իմ որդուց գաղտնիքներ չունեմ, սուրբ հայր,— ասաց Շաբիթ իշխանը մի յուրահատուկ վստահ հպարտությամբ,— քանզի այսօր նա է Գողթնի իսկական տերն ու իշխանը, նա է կառավարում ամբողջ գավառի բոլոր գործերը, և եթե կուզեք իմանալ, նա է շահագրգռված, որ Գողթնում օրինակելի կարգ ու կանոն հաստատվի: Ձեր ձեռնարկումների մեջ նա պետք է Ձեզ օգնի:

— Եթե այդպես է, խնդրում եմ նստեք,— սիրալիր ասաց Մաշտոցը: Գինթը ժպտալով նստեց հոր կողքին:

— Շատ ուրախ եմ,— ասաց Մաշտոցը՝ նույնպես ժպտալով,— իսկ Դուք, Շաբիթ իշխան, ինձ վախեցնում էիք, թե ես Գողթնում աջակցողներ չեմ ունենա:

— Սուրբ հայր,— խոսեց Գինթը,— ես պատրաստ եմ կատարելու Ձեր բոլոր կարգադրությունները: Հայրս արդեն ինձ պատմել է Ձեր առաքելության մասին: Ես կհամախմբեմ գավառի երիտասարդությանը և կդնեմ Ձեր տրամադրության տակ, միայն թե կարողանանք Գողթնում կարգ ու կանոն հաստատել...

— Մեր առաքելության նպատակն էլ հենց այդ է, իշխան,— ասաց Մեսրոպը:

— Ներողություն, սնորք հայր,— միջամտեց Շաբիթ իշխանը,—  
Դուք ինչո՞վ եք գավառը մաքրելու դիվապաշտներից:

— Սրանով,— ասաց Մեսրոպը և բարձրացրեց Ավետարանը:

Շաբիթ իշխանի դեմքի վրայով սահեց մի հեգնական ժպիտ:

— Սնորք հայր,— ասաց նա,— Դուք մոլորության մեջ եք: Ես նորից եմ կրկնում, որ մեզ մոտ մատների վրա կարելի է հաշվել այն մարդկանց, որոնք հունարեն կամ ասորերեն կարողալ գիտեն: Այստեղ անհնար է լուսավորություն տարածել...

— Իսկ Դուք ի՞նչ միջոցներ եք առաջարկում,— նրան կտրուկ ընդհատեց Մաշտոցը:

— Նախ պետք է գավառը մաքրել բազմաթիվ օտար և տեղական աղանդավորներից, որոնք ամենամեծ խոչընդոտն են լուսավորության համար:

— Իսկ Դուք մաքրե՞ք դրանց,— ձայնը բարձրացրեց Մաշտոցը:

— Ինչպե՞ս:

— Հենց այնպես: Նրանց դճուրս քշեք գավառից, և վերջ:

— Սնորք հայր,— ասաց Գինթը,— ես համաձայն եմ Ձեզ հետ: Ես վաղուց դա կաննի, եթե հայրս թույլ տար: Նա ասում է՝ եթե մարդկանց պատժենք, նրանք կբողոքեն թագավորին ու կաթողիկոսին:

— Իսկ եթե նրանք են կամենում, որ գավառը մաքրվի նման թափթփուկներից,— ասաց Մաշտոցը:

— Իսկ ես ումի՞ց իմանամ նրանց կամքը,— թերահավատ հարցրեց Շաբիթ իշխանը:

— Ինձանից,— ասաց Մաշտոցը ժպտալով:

— Ձեզանից,— զարմացավ իշխան Շաբիթը:

— Այո, տե՛ր իշխան, ինձանից: Ահա Ձեր թագավորի հրովարտակը,— ասաց Մաշտոցը և Ավետարանի կազմի միջից հանեց հրովարտակն ու մեկնեց իշխանին:

Շաբիթը վերցրեց մագաղաթը, գննեց կնիքը և մեկնելով որդուն՝ ասաց.

— Այո, կնիքը թագավորինն է: Լավ չեմ տեսնում. կարդա՛:

Գինթը բարձրաձայն կարդաց: Երբ վերջացրեց, ոգևորված դիմեց Մաշտոցին.

— Սնորք հայր, ասա՛, ես ինչո՞վ կարող եմ Ձեզ օգնել:

— Սպասի՛ր, Գինթ: Բնձ տուր այդ հրովարտակը,— խոժոռ ասաց Շաբիթ իշխանը, որով կարծես ասում էր՝ հավատալս չի գալիս:

Գինթը կոտրված տրամադրությամբ հրովարտակը մեկնեց հորը: Շաբիթ իշխանը վերցրեց և սկսեց ուշիուշով գննել: Փորձեց անձամբ կարդալ, բայց չստացվեց. տեսողությունը դավաճանում էր: Մատներով շոշափեց մի քանի անգամ, սևեռուն նայեց Մաշտոցին.

— Կնիքն արքայինն է: Դա հաստատ է: Ասացե՛ք, սուրբ հայր, արքան անձամբ է հրովարտակը տվել Ձեզ:

— Գրեթե:

— Ի՞նչ է նշանակում՝ գրեթե,— թերահավատ ասաց Շաբիթ իշխանը:

— Հրովարտակն ինձ տվել է կաթողիկոսը, բայց այդ մասին ինձ հետ անձամբ խոսել էր ինքը՝ Վոսմշապուհ արքան:

— Բան չեմ հասկանում,— հուզվեց Շաբիթը:

— Ի՞նչ կա չհասկանալու, իշխան: Չէ՞ որ այդտեղ ամեն ինչ պարզ գրված է,— ասաց Մաշտոցը:

— Հայրի՛կ, կարելի՞ է,— խոսք խնդրեց Գինթը:

— Խոսի՛ր,— ասաց Շաբիթը՝ աջ ձեռքով թույլտվության նշան անելով:

— Հայր սուրբ,— շատ քաղաքավարի դիմեց Գինթը Մաշտոցին,— կարելի՞ է Ձեզ մի անհամեստ հարց տալ:

— Շա՛տ է անհամեստ,— կատակեց Մաշտոցը:

— Դե, այնքան էլ չէ:

— Ուրեմն կարելի է:

— Դատելով այս ամենից՝ Մաշտոցը Ձեր կրոնական անունն է: Ըստ էության՝ ո՞վ եք Դուք:

— Հարցրե՛ք Ձեր հորը, իշխան: Նա ինձ շատ լավ գիտի: Պարզապես իր տանը չի ուզում ճանաչել,— նորից կատակեց Մաշտոցը,— կամ էլ մորուքս է խանգարում...

Շաբիթ իշխանը կտրուկ շոռ եկավ և սևեռուն հայացքով սկսեց գննել Մաշտոցի դեմքը: Ամեն ինչից երևում էր, որ տարեց իշխանը ձգտում էր Մաշտոցին պատկերացնել առանց մորուքի: Եվ հանկարծ գյուտ արածի պես քրթմնջաց.

— Չի՛ կարող պատահել: Ո՛չ, չի՛ կարող պատահել...

— Պատահում է, իշխան,— զուսպ ասաց Մաշտոցը:

— Այո՛, այո՛, ձայնն էլ է նրանը, ախար, ինչ-որ բան ծանոթ է թվում,— ուրախացավ Շաբիթը և գրեթե ոստնելով՝ մոտեցավ Մաշտոցին. սա երս՞զ է, թե՛ն իրականություն... Տեր Մամիկոնյան... Ո՞վ

կհավատար... Գինթ, զավակս, սա հո ինքը՝ արքայական դիվանապետ իշխան Մեսրոպ Մամիկոնյանն է: Այս ասելով՝ Շաբիթը գրկեց Մաշտոցին և սկսեց համբուրել:

Գինթը շվարած նայում էր նրանց: Մեսրոպի մասին շատ էր լսել, նույնիսկ երազել էր մոտիկից հանդիպել նրան, բայց երբեք մտքով չէր անցել, որ նրա հետ կծանոթանա այսպիսի անհավատալի, առեղծվածային պայմաններում:

— Դե՛, հիմա ամեն ինչ պարզ է: Նստե՛ք՝ խոսենք, տներ Մամիկոնյան, — ոգևորված խոսեց Շաբիթ իշխանը:

— Մ՛ս՛ս՛, — մատը շուրթերին տարավ Մաշտոցը, — այստեղ Մամիկոնյան չկա...

— Հասկացա, հասկացա, — ձայնն իջեցնելով՝ ուրախ ասաց Շաբիթը, — դե հիմա ասա՛, թե ինչ պիտի անենք:

— Ա՛յ, դա արդեն ուրիշ խոսակցություն է, — Մաշտոցը նստեց: Նստեցին նաև հայր ու որդի:

— Հարգարժան իշխաններ, — խոսեց Մաշտոցը, — մեր առաքելության նպատակն է Պարսկաստանին սահմանամերձ Գողթնում կարգ ու կանոն հաստատել: Բնակչության մեջ սերմանել Քրիստոս աստծու սուրբ հավատի կենսարար հունդերը: Բացահայտել ու ցույց տալ բնակչությանը այս կողմերում արմատ զգած զանազան աղանդների վտանգավորությունը: Վերականգնել միաբանություններն ու եկեղեցիները, հիմնել դպրոցներ: Ժողովրդին ցույց տալ ճիշտ ապրելու ուղին: Ես իմ մարդկանցով կշրջեմ գյուղերն ու ավանները և քարոզելով բնակչությանը դարձի կբերեմ: Իսկ Ձեր անելիքը կլինի այն, որ օրենքի ուժով թույլ չեք տա խանգարելու մեր ձեռնարկումներին:

— Միայն այդքանը, — հարցրեց Գինթը:

— Առայժմ այդքանը:

— Իսկ հետո՞, — հետաքրքրվեց Գինթը:

— Իսկ հետո, սիրելի իշխան, մեր ձեռնարկումների ամբողջ ծանրությունը դրվելու է քո հաղթ ուսերին...

— Ես սիրով կտանեմ, սուրբ հայր, միայն թե ինձ բացատրենք անելիքիս էությունը:

— Անելիքդ պարզ կդառնա գործի ընթացքում: Բանն այն է, իշխան, որ հենց մեր հակառակորդները տեսնեն, որ չեն կարող մեզ բացահայտ խանգարել, կդիմեն դավադրությունների: Ձեր խնդիրը կլինի՝ հավատարիմ մարդկանց միջոցով բացահայտել այդ դավերը,



դրանք ցույց տալ բնակչությանը և պատժել: Լավ կլինի, որ այդ գործում ակտիվ մասնակցություն ունենա նաև բնակչությունը...

— Ինչպիսիք պետք է լինեն պատժի ձևերը:

— Ամեն տեսակ՝ ըստ գործած մեղքի...

— Բայց, սուրբ հայր, Ավետարանը...

— Իշխան, մի՛ շարունակեք, — խոսքը կտրեց Մաշտոցը, — մենք այդ մասին խոսել ենք Ձեր հոր հետ: Դուք լավ գիտեք, որ ես զինվոր եմ և մինչև կյանքիս վերջը կմնամ որպես հայրենիքիս զինվոր: Զինվորի պարտքն է միշտ կանգնած մնալ հայրենիքի պաշտպանության դիրքերում: Իսկ մեր հայրենիքը այսօր դրա կարիքն ունի ավելի, քան երբևէ: Որպեսզի մենք գոյատևենք, մեզ հարկավոր է մեկ Աստված, մեկ հավատ, մեկ թագավոր, և ամենակարևորը՝ մեկ լեզու... Միայն դա կփրկի մեզ բնաջնջումից: Եվ երբ այսօր հայ ժողովրդի մեծ մասը տոգորված է այդ մտքով, ձգտում է դրան, չպետք է կեղծ մարդասիրություն ցուցաբերենք այն աղանդների նկատմամբ, որոնք ձգտում են խափանել հայրենաշեն գործը: Իշխան, որպեսզի այգին լավ պտուղ տա, այգեպանը արմատախիլ է անում մոլխոտերը...

— Եվ սերմանում ու աճեցնում ազնիվ ու պետքական պտուղները, — Մաշտոցի խոսքը շարունակեց Գինթը, — այդպես չէ՞, սուրբ հայր:

— Ճշմարտությունը դա է, զավակս, — գորովանքով Գինթին նայեց Մաշտոցը:

— Սուրբ հայր, Դուք որքան կմնաք Գողթնում, — հարցրեց Գինթը:

— Եթե անհրաժեշտ լինի՝ մեկ կամ երկու տարի:

— Ես երդվում եմ, սուրբ հայր, որ մեկ տարի հետո ոչ մի աղանդավոր չի լինի Գողթնում: Իսկ դու մեզ ինչո՞վ կօգնես, հայրիկ, — հարցրեց Գինթը:

— Ես կհոգամ դպրոցներ բանալու և եկեղեցիներ կառուցելու ծախսերը: Դա բավական է, զավակս:

— Շնորհակալ եմ, հայրիկ, — ասաց Գինթը և գրկեց հոր արդեն կռացած ուսերը:

— Ինչից ենք սկսելու, սուրբ հայր, — անհամբեր հարցրեց Գինթը:

— Տարբեր բաներից, — ասաց Մաշտոցը: — Մինչև աշուն, իշխան, մենք գործելու ենք առանձին-առանձին: Ես իմ խումբը տանում եմ՝ Կապուտջուղ լեռան քարանձավներում ձգնելու: Մենք այնտեղ կմնանք երկու ամիս: Դուք այդ ընթացքում Ձեր մարդկանց միջոցով

տեղեկություններ հավաքե՞ք զանազան աղանդավորների, բնակչության կենցաղը խաթարողների, շնաբարո բարքեր ու հիվանդություններ տարածողների և նման անձանց մասին, որպեսզի մենք վերադառնալիս գործը սկսենք բանիմացորեն: Հակառակ պարագայում, մենք կոժվարանանք մեր ձեռնարկումների մեջ:

— Կներեք, սուրբ հայր, որ համարձակվում եմ հարցնել, Կապուտջուղի լեռներում ձգնելը շատ է անհրաժեշտ,— հարցրեց Գինթը:

— Ոչ միայն անհրաժեշտ է, սիրելի՛ իշխան,— բազմանշանակ նկատեց Մաշտոցը,— այլև հույժ կարևոր...

— Երկու ամիս անընդմեջ, գիշեր ու ցերեկ պիտի աղոթե՞ք,— մի տեսակ թերահավատ հարցրեց Շաբիթ իշխանը:

— Այո՛, իշխան, ոչ թե երկու ամիս, այլ եթե հարկ լինի՝ երկու տարի պիտի տքնենք, որ մեր տքնությունը պսակվի հաջողությամբ...

— Եթե զաղտնիք չէ, սուրբ հայր, ո՞րն է Ձեր տքնության նպատակը,— հարցրեց Շաբիթը:

— Դուք երբևէ եղել եք Կապուտջուղի լեռներում,— հարցին հարցով պատասխանեց Մաշտոցը:

— Ի՞նչ եք ասում, սուրբ հայր, իմ կյանքն անցել է այդ լեռներում: Ինձ հայտնի են նույնիսկ Կապուտջուղի ամենաանհայտ կածաններն ու ծերայերը:

Իսկ ժայռերը:

— Գիտեմ հինգ մատիս պես:

— Ասում են՝ նրանց վրա պատկերներ կան, ձի՞շտ է:

— Ճիշտ է, սուրբ հայր, բայց դրանք շատ հին են ու անհասկանալի:

— Հենց մեր տքնության նպատակն էլ դրանք հասկանալը կլինի...

— Ի՞նչ օգուտ կա դրանք հասկանալուց,— հարցրեց Շաբիթ իշխանը:

— Մեզ սեփական գրեր են պետք, իշխան: Իսկ այդ ժայռապատկերները գուցե իրենց մեջ թաքցնում են մեր հեռավոր նախնիների գրերը: Դրանք հասկանալն ու գործածության մեջ դնելն այսօր, ինչպես գիտեք, հացից առավել է մեզ հարկավոր:

— Սուրբ հայր, հաջողություն եմ մաղթում Ձեր լուսաբաղձ տքնությանը,— ասաց Շաբիթ իշխանը: Ես և տղաս պատրաստ ենք ծանայելու Ձեզ Ձեր հայրենաշեն ձեռնարկումների մեջ:

— Ընորհակալ եմ, իշխան:

\* \* \*

Տքնողների խումբը շուրջ երկու ամիս զննեց ու վերլուծեց Նավասարի ու նրա շրջակա լեռների գրեթե բոլոր ժայռապատկերները, սակայն անարդյունք: Ժայռապատկերները հիմնականում գաղափարագրեր էին՝ բարդ գծերով, որոնցից ժամանակակից հնչյուն արտահայտող գիր դուրս բերելն անհնար էր:

Աշնան սկզբներին տքնողների խումբը ձեռնունայն ու տխուր իջավ լեռներից և ներկայացավ Շաբիթ իշխանին: Իշխանը շատ վշտացավ, որ նրանց ջանքերն արդյունք չեն տվել, բայց մխիթարեց ավանդական այն խոսքերով, որ հուսահատվելու հարկ չկա, քանզի որոնողը կգտնի...

## ԴԵՎԻՆ՝ ԴԺՈՒՑ...

Աջերն Գողթնում այդ տարի ոչ միայն բերքառատ էր, այլև զներմ ու արևոտ: Տքնողների խումբը կացարաններում տեղավորվելուց հետո անմիջապես սկսեց գավառի բնակչության մեջ քարոզչական աշխատանքներ տանել:

Ամեն առավոտ Գինթը այցելում էր Մաշտոցին՝ անելիքների մասին խորհրդակցելու:

— Ի՞նչ ես կարծում, իշխան, որտեղի՞ց սկսենք,— հարցրեց Մաշտոցը Գինթին:

— Սուրբ հայր, իմ կարծիքով, քանի ձմեռը չի եկել և ճանապարհները փակել, Դուք այցելելք գավառի հեռավոր գյուղերը: Ձմռանը քարոզներ կկարդաք այստեղ՝ Ռոտաստակի բնակչության մեջ:

— Ո՞ր գյուղից սկսենք:

— Սկսենք Կարձավանից:

— Ինչու՞:

— Կարձավանը այն գյուղերից է, որտեղ դիվապաշտ մարդկանց վարքի հետևանքով խաթարված է բնակչության կենցաղը: Չնայած այն բանին, որ գյուղը բարձրադիր է, օդն ու ջուրը՝ մաքուր, բայց բնակչության մեծ մասը տառապում է բազմատեսակ հիվանդություններով: Գյուղում հնարավոր չէ հաստատել կարգ ու կանոն: Մի քանի անօրեն մարդիկ իրենց կամքն են թելադրում բոլորին, ստեղծում հոռի բարքեր: Այդ գյուղում տասը տարուց ավելի է՝ եկեղեցի չի գործում: Բնակչությունն ամբողջովին բարոյաքված ու բարոյազրկված է: Գյուղացիների մեծ մասը մատնված է անգործության: Ծուլությունը

դարձել է համատարած չարիքի աղբյուր: Ոչ մի բանով չզբաղվող մարդկանցից շատերը զբաղվում են մուրացկանությամբ, թափառում են շրջակա գյուղերում, տարածում ախտավոր հիվանդություններ:

— Ի՞նչն է դրա պատճառը:

— Եթե պատճառն ասեմ, գուցե չհավատաք, սակայն, ցավոք, դա իրողություն է,— ասաց Գինթը և այնպես տխուր ժպտաց, կարծես այդ բանում իրեն է մեղավոր զգում:

Մաշտոցը, որ մինչ այդ Գինթին լսում էր հենց այնպես, հանկարծ սևեռուն նայեց նրա աչքերի մեջ.

— Սիրելի իշխան, բարեկամս, մարդուս համար ամենադժվարը վատ երևույթի պատճառն իմանալն է, եթե պատճառը հայտնի է, ապա այն վերացնելու ուղիներ գտնելը հեշտ է: Հապա ինձ ասե՛ք՝ որն է այդ պատճառը:

— Պատճառը մի մարդ է՝ իր սակավաթիվ համախոհներով:

— Մի մա՛րդ,— զարմացած հարցրեց Մաշտոցը:

— Այո՛, մի մարդ:

— Գյուղը քանի՞ ծուխ ունի:

— Մոտավորապես երկու հարյուր հիսուն:

— Այսինքն՝ մոտավորապես հազար բնակիչ, այո՛:

— Գրեթե:

— Եվ մի մարդ կարողանում է նրանց խանգարել մարդավարի ապրելու համար:

— Այո՛, հայր սուրբ, դժբախտաբար:

— Իսկ ո՞վ է այդ մարդը: Ի՞նչ ուժով է նա ամբողջ գյուղը ենթարկում իր կամքին:

— Նա ուժ չունի, հայր սուրբ: Պարզապես գյուղն է թույլ:

— Հետաքրքիր միտք է,— աշխուժացավ Մաշտոցը,— հապա նկարագրի՛ր՝ ինչ գիտես:

— Երկար պատմելու բան չկա, հայր սուրբ,— դառը ժպտաց Գինթը,— իրեն սպառած հեթանոսությունը քայքայել է ոչ միայն ժողովրդի տնտեսությունն ու կենցաղը, այլև առողջությունը: Քրիստոսի սուրբ հավատը անհաս է բնակչության համար, քանզի չի մատուցվում մայրենի լեզվով: Դրանից օգտվելով՝ հեթանոսության պիղծ հետևորդները հաջողությամբ խորամանկում են, իրենց բոլոր մեղքերն ու արատները վերագրում նրան, որ իր ժողովուրդը երես է թեթել հայրենական ավանդներից: Մի խոսքով, հայր սուրբ, մեր հասարակությունը նման է արտի՛լավ չմշակելու դեպքում մուլախոտը խեղդում է ազնիվ բույսերին:

— Իսկ ինչու՞ չեք քաղհանում «արտը»,— խոժոռվեց Մաշտոցը:  
— Եղանակ ու միջոց չի եղել, հայր սուրբ,— բազմանշանակ նկատեց Գինթը:

— Ինձ թվում է, իշխան, լավ հողագործը միշտ էլ «եղանակ» ու միջոց կգտնի:

— Չեմ առարկում, հայր սուրբ:

— Ուրեմն՝ ի գործ: Դե այժմ ասա՛, ո՞վ է այդ մարդը:

— Գիժ է: Բոլորը նրան այդպես գիտեն: Անունը Գալո է: Հիսունին մոտ մարդ է՝ հաղթանդամ, ամուր կազմվածքով: Ոչ մի օրենքի չի ենթարկվում: Ասում են՝ դիվոտ է: Մարդկանց հետ վարվում է այնպես, ինչպես ինքն է կամենում: Զոռով տիրել է գյուղի ամենալավ հողերին: Եթե իր արտը պիտի ջրի, ոչ ոք իրավունք չունի ջրին մոտենալու, իր սեփական անասունները կարող է արածեցնել այնտեղ, որտեղ ցանկանա՝ նույնիսկ համագյուղացու արտում: Ստիպում է ուրիշներին աշխատել իր համար: Մի խոսքով, անարգել անում է այն, ինչը իրեն ձեռնտու է:

— Իսկ ինչու՞ չեք արգելում:

— Եղել են նման փորձեր, բայց նա վրեժխնդիր է եղել: Յուրայինների օգնությամբ ծեծել կամ ոչնչացրել է նրանց ունեցվածքը, ովքեր փորձել են պաշտպանել իրենց իրավունքները: Շրջակայքում նրան գիտեն որպես անուղղելի գիժ: Յուրայիները նրա գժության մասին առասպելական բաներ են տարածում:

— Օրինակ՝ ինչ:

— Օրինակ՝ իբր նրա ամենաթույլ ապտակն անգամ մահացու է: Կամ նա կարող է գուշակել մարդկանց մտքերն ու ապագան: Նման այլ բաներ:

— Բայց ինչ փաստերով են հիմնավորում այդ ամենը:

— Դժբախտաբար, նման փաստեր կան:

— Հետաքրքիր է:

— Այո՛, հայր սուրբ: Յոթ տարի առաջ հարևան գյուղի մի խեղճ ասորի քահանա եկավ այդ գյուղը մեռելածեսի: Գիժ Գալոն աղմուկ-աղաղակով հարձակվեց նրա վրա, պահանջեց, որ անմիջապես հեռանա: Քահանան ընդդիմացավ: Գալոն մի ուժգին ապտակ տվեց նրան, հայիոյեց, ապա երգելով հեռացավ: Քահանան շարունակեց ծեսը: Գալոն նորից վերադարձավ, բռնեց քահանային, բարձրացրեց և զցեց գերեզմանափոսը, ապա խլելով բահը՝ սկսեց հող լցնել: Հավաքված ժողովուրդը վայնասուն բարձրացրեց: Գա-

լոն հեռացավ: Քահանան մի կերպ դուրս եկավ գերեզմանափոսից և գնաց իր ապրած գյուղը: Առավոտյան նրան իր կացարանում գտան մեռած:

— Եվ Գիծ Գալոն մնաց անպատիժ:

— Հայր սուրբ,— դիվահարին ինչ պատիժ:

— Լսում ես, եղբայր,— դարձավ Մաշտոցը տքնողների խմբում նստած Վահրիձ Խաղունուն, որը սքեմ հագնելուց հետո Եղիա կրոնական անունն էր կրում,— Գիծ Գալոն անարգել ոճիր է գործում, բայց մնում է անպատիժ, քանզի դիվահար է: Մեր աշխարհի հարգարժան տերերն ուզում են, որ նման պարագայում ժողովուրդն աշխատի, արդարամիտ ու բարոյական լինի: Ո՛չ, այդպիսի բան չկա: Մեղավորը պետք է պատժվի... Դա է արդարության պահանջը...

— Հարգարժան Գինթ իշխանին պետք է հայտնի լինի մեր նախնիների այն խոսքը, թե դեհին մինչև դժոխքը ցույց չտաս, արքայության ճամփան չի ճանաչի,— հանգիստ ու վճռական ասաց Վահրիձը:

— Դա ամենքին է հայտնի, սուրբ հայր,— ասաց Գինթը Վահրիձին:

— Իշխան, Դուք համոզված եք, որ Գալոն դիվոս է,— հարցրեց Մաշտոցը:

— Իմ կարծիքով, նա ուրիշների համար է գիծ, իր համար նույնիսկ չափից ավելի խելոք է,— պատասխանեց Գինթը:

— Ա՛յ, տեսնում եք, իշխան, նման գծերին ու դիվոսներին «բուժել» է պետք:

— Ես համաձայն եմ,— պատրաստակամություն հայտնեց Գինթը:

— Կարձավան հասնելու համար որքա՞ն ժամանակ է հարկավոր,— հարցրեց Մաշտոցը:

— Ձիով՝ կես օր,— ասաց Գինթը:

— Վաղը կեսօրին պետք է Կարձավանում լինենք,— վճռական ասաց Մաշտոցը և կանգնեց,— այնտեղ եկեղեցի կա՛:

— Կա, բայց զրեթե ավերված է:

— Ամեն ինչ պարզ է: Վաղը մենք Կարձավանի ավերված եկեղեցուն զորություն կտանք...

\* \* \*

Կարձավան գյուղի տանուտերը վաթսունն անց առույգ գյուղացի էր: Նա իր երկու որդիների հետ գյուղից դուրս՝ իր սեփական հանդամասում, ցրտահերկ էր անում, երբ հևասպառ մոտեցավ ծաղկատար դեմքով մի աչքից կույր զգիրը:

— Տանուտեր, գյուղում ձգնավորներ են եկել, քեզ են ուզում:

Տանուտերը կանգնեցրեց եզները, հենվեց մաճին, թևքով սրբեց ձակաստի քրտինքը:

— Է՛, բարով են եկել: Երեկոյան կգամ կտեսնեմ:

— Չէ՛, տանուտեր, երեկոյան ուշ կլինի: Երիտասարդ իշխան Գինթը հրամայեց, որ հիմա գաս:

— Գինթը, — զարմացավ տանուտերը:

— Հա՛, տանուտեր, հետն էլ զինվորներ կան:

Տանուտերը հոնքերը կիսեց, ուղղվեց տեղում, ձիապտուղ խրեց նոր վարած հողի մեջ, ձեռքի ափերով թափ տվեց հագուստի փոշին և ընկավ մտքերի մեջ:

— Դու գնա՛, հայրիկ, — ասաց ավագ որդին, — մենք կվարենք:

— Գնալը՝ կգնամ, — ասաց հայրը, — բայց, ախր, գլխի չեմ ընկնում, թե բանն ինչ է:

— Ճգնավորներն էլ շատ են, գիտե՛ս, տանուտեր, — միջամտեց զգիրը:

— Քանի՞ հոգի կլինեն:

— Երեկ տասներկու հոգի:

— Հիմա բոլորն էլ մեր տանն են:

— Չէ՛, տանուտեր, գնացին եկեղեցի:

— Դե լավ, գնանք, — ասաց տանուտերը և դարձավ ավագ որդուն, — Տիգրան, երեկոյան մի քիչ շուտ եկե՛ք, գուցե պետք զաք:

— Լավ, հայրիկ, — ասաց Տիգրանը:

\* \* \*

Երբ տանուտերը տեղ հասավ, եկվորներին շրջապատած գյուղացիները, ետ-ետ գնալով ձամփա տվին, որ նա մոտենա: Տանուտերը նախ մոտեցավ իշխան Գինթին, ձեռքը դրեց կրծքին և խոնարհ գլուխ տվեց: Գինթը նրան ողջունեց ձեռքով. դրանից տանուտերը ներքուստ ուրախացավ և բարձր տրամադրությամբ ողջունեց ձգնա-



վորների խմբին: Սակայն մեծ եղավ նրա զարմանքը, երբ նկատեց, որ ձգնավորները բոլորն էլ գրեթե սևամորուք երիտասարդներ են: Նա մտքում ենթադրեց, որ Գինթ իշխանի մոտ կանգնած համեմատաբար տարիքով, միջահասակ ու լայնաթիկունք ձգնավորը խմբի ղեկավարն է, ուստի նախ մոտեցավ նրան: Մաշտոցն աջը մեկնեց:

Տանուտերը կռացավ, համբուրեց աջը, ապա ուղղվելով՝ գլխով քարնեց մյուսներին: Հավաքված գյուղացիները ցանկանում էին ժամ առաջ իմանալ ձգնավորների գալու նպատակը:

— Տանուտեր, — ասաց Մաշտոցը սիրալիր, — այսօր ուրբաթ է, վաղը՝ շաբաթ. եկեղեցում պատարագ պետք է մատուցվի, եթե չեք մոռացել, կիրակի Խաչվերաց տոնն է: Մենք՝ քրիստոնյաներս, պարտավոր ենք այդ օրը փառաբանել Սուրբ խաչի գորությանը: Իսկ դուք՝ որպես քրիստոնյա, պարտավոր եք մինչև վաղը հնարավոր չափով կարգի բերել եկեղեցին:

— Սուրբ հայր, եկեղեցու օձորքը գրեթե ամբողջովին խոնարհված է, — առարկեց տանուտերը, — մեկ օրում անհնար է նորոգել:

— Իսկ մեջը մաքրել հնարավոր է, — խստությամբ հարցրեց Մաշտոցը:

— Հնարավոր է, — խեղճացավ տանուտերը:

— Ուրեմն, բարի՛ եղեք, որպես տանուտեր, հոգալ գյուղի կարիքները:

Տանուտերը ցանկություն զգաց՝ ասելու, թե դա Ձեր ինչ գործն է, ձգնավոր եք՝ Ձեր քարոզներով զբաղվեք, բայց իշխան Գինթի ներկայությունը սթափեցրեց: Նա խեղճացած նայեց իշխանին և նրա խոժոռ հայացքում կարդաց. «Ինչ ասում են՝ տուսուփուս արա՛, չփորձեն առարկել»: Տանուտերը միայն տարակուսած՝ թոթվեց ուսերը:

— Վաղը օրվա ո՞ր ժամին եք այստեղ լինելու, հայր սուրբ, — առանձնանալով Մաշտոցի հետ՝ ասաց Գինթը:

— Վաղը Դուք այստեղ չեք լինելու, իշխան:

— Ինչու՞:

— Մենք զուտ կրոնական նպատակներ ենք հետապնդում. իշխանությունները չպետք է խառնվեն մեր գործին, իշխան:

— Հասկացա: Իսկ եթե ձեզ խանգարողներ լինեն:

— Դրա համար առավոտ շուտ այստեղ կգան քո զինվորները, իհարկե՝ գյուղացու հագուստով: Նրանք կգան բնակչությանը խառնված: Նրանք, ինչպես բոլորը, «ոչինչ չգիտեն»: Իսկ այսօր երեկոյան ես պիտի խոսեմ նրանց հետ...

- Ամեն ինչ պարզ է,— ժպտաց Գինթը:
- Փանք Աստծու,— ժպտաց նաև Մաշտոցը:

\* \* \*

Շաբաթ օրը եկեղեցու գավթում ասեղ զցելու տեղ չկար: Կարճավանի բնակչությունից բացի, պատարագ լսելու էին եկել նաև շրջակա գյուղերի բարեպաշտներն ու հետաքրքրասերները: Եկեղեցու նեղվածության պատճառով Մեսրոպը որոշեց պատարագը մատուցել եկեղեցու գավթում:

Տքնողների խումբը պատարագն սկսեց «Հայր մեր»-ով: Տասներկու երիտասարդ տղամարդկանց առողջ ձայների միաձույլ ու զրնգուն մեղեդին դողանջելով ալիքվում էր ու լցնում շրջակայքը: Մաշտոցը նախօրոք հոգ էր տարել, որ պատարագը մատուցվի հայերեն: Մայրենի լեզվով հնչող կրոնական երգը մոգական ազդեցություն էր թողել հավաքվածների վրա: Ամբոխը քար լուռությամբ հետևում էր երգի բառերին ու մեղեդուն: Երբ երգն ավարտվեց, ի զարմանս ներկաների, լուռությունը շարունակվում էր: Մաշտոցը ժպտաց և գոհունակ հայացք փոխանակեց տքնողների խմբի հետ: Հավաքվածները սպասում էին նոր խոսքի: Մաշտոցը, ոգևորված առաջին հաջողություններից, մի քայլ առաջ եկավ և պարզ ու հասկանալի սկսեց քարոզը: Նա, մտերմաբար դիմելով ժողովրդին, նախ բացատրեց Քրիստոս աստծու մարդասեր հավատի առավելությունները հեթանոսության նկատմամբ, բայց չզլացավ նշել նաև հեթանոս հավատի դրական դերը, որը ժամանակին խաղացել է ժողովրդի կյանքում: Օրինակներով ապացուցեց մարդկանց, որ քրիստոնյաները սիրով են ընդունում հեթանոս հավատի լավ ծեսերը, որոնք նպաստում են ժողովրդի բարօրությանը: Հավաքվածները կլանված լսում էին: Մաշտոցը ընդհատեց քարոզը և ետ շրջվելով՝ նշան տվեց տքնողներին: Տքնողների խումբը հնչեցրեց մի շարական: Մաշտոցը հավաքվածների դեմքերին ուրախ հիացմունքի արտահայտություն նկատեց: Երբ աշնանային ջինջ օդում մարեցին շարականի վերջին հնչյունները, Մաշտոցը շարունակեց քարոզը: Նա հավաքվածների համար թվարկեց Աստծո պատվիրանները և անցավ նրանց իմաստի բացատրությանը: Մաշտոցը գիտակցաբար սկսեց «մի շնանար» պատվիրանի բացատրությունից, որովհետև հեթանոսների մեջ տարածված բազմակնությունն ու մերձավորների հետ ամուսնանալը բազ-

մատեսակ անբուժելի հիվանդությունների առատություն էր ստեղծել, բնակչությանը կանգնեցրել աղետալի փաստի առաջ:

Մաշտոցը նոր էր սկսել «մի՛ սպանիր» պատվիրանի բացատրությունը, երբ ժողովուրդը ավելոծվեց:

— Գիժ Գալոն գալիս է...

Հավաքվածները մի պահ ետ նայեցին: Գյուղամիջի փոշոտ ճանապարհով աղմուկ-աղաղակով դեպի եկեղեցին էր գալիս մի ստվար խումբ, որի առջևից քայլում էր Գիժ Գալոն:

Մաշտոցը դադարեցրել էր քարոզը և ուշիուշով հետևում էր իրերի ընթացքին: Գիժ Գալոն մխրձվեց ամբոխի մեջ և կատաղած առաջացավ դեպի ճգնավորի խումբը: Ամբոխը ակամա ճանապարհ բացեց նրա համար: Իշխան Գինթի մարդիկ, որոնք ծպտված գյուղացու հագուստներով խառնվել էին ամբոխին, իրար նշան տալով, տարբեր կողմերից առաջացան դեպի Գալոն: Մաշտոցը զգաց, որ ներկա պահին բացահայտ ցուցաբերած ամենափոքր բռնությունն անգամ ի չիք կղարձնի քիչ առաջվա գեղեցիկ տպավորությունը՝ կկոտորի ժողովրդի հավատը... Ուստի, երբ իշխան Գինթի տղաները փակեցին Գիժ Գալոյի ճանապարհը, Մաշտոցը, վեր պարզելով արծաթյա ծանր խաչը, ձայն տվեց.

— Ժողովուրդ, մի՛ անհանգստացրեք նրան: Չե՞ք տեսնում, որ խեղճը դիվահար է, տառապում է դևերի ձեռքից... Երիտասարդներ, թո՛ւյլ տվեք, որ մոտենա Խաչին...

Իշխանի տղաները հասկացան և ազատեցին ճանապարհը:

Գիժ Գալոն, զգալով, որ արգելք չկա, գետնից խլեց մի ծանր քար և որքան ուժ ուներ՝ շարտեց դեպի ճգնավորների խումբը: Քարը տեղ չհասավ: Մաշտոցը, խաչը վեր պարզած, առաջացավ դեպի Գիժ Գալոն: Ճգնավորների խումբը հետևեց նրան: Գիժ Գալոն մղվեց դեպի Մաշտոցը և փորձեց խլել վեր պարզած խաչը: Բայց մեծ եղավ զարմանքը, երբ չկարողացավ միանգամից ներքև իջեցնել ճգնավոր Մաշտոցի վեր պարզած խաչակիր աչր: Մաշտոցն ամեն կերպ ձգտում էր խաչը պահել նույն դիրքում՝ վեր պարզած: Գիժ Գալոն հիմա երկու ձեռքով էր կախվել նրա դաստակից և ներքև էր ձգում: Ամբոխը սրտատրոփ սպասում էր, թե ինչով կվերջանա այդ տարօրինակ մենամարտը: Ճգնավորների խումբը, օղակելով Մաշտոցին և Գիժ Գալոյին, նրանց անջատել էր ամբոխից: Այդ իրարանցման մեջ Մաշտոցը, բոլորից աննկատ, աչքով նշան տվեց ճգնավոր Եղիային... Ոչ ոք չտեսավ ու չզգաց, թե ինչպես Գիժ Գալոն, ստոծանու աջ մասում

մի ուժեղ հարված ստանալով, սկսեց շնչահեղձ լինել: Նա փորձեց մնալ ոտքի վրա, բայց ուժերը դավաճանեցին: Փորձեց գոռալ. դա էլ չստացվեց: Ամբոխը ապշահար նկատեց, թե ինչպես աստիճանաբար թուլանում են Մաշտոցի վեր պարզած խաչակիր ձեռքի դաստակը պինդ սեղմած նրա ձեռքի մատները: Այդ պահին ձգնավորների օղակը ետ բացվեց, որպեսզի հավաքվածները սեփական աչքերով տեսնեն, թե ինչպես է Գիժ Գալուն «դիվաթափ» լինում... Գիժ Գալուն վերջին ձիգը գործադրեց, որպեսզի կարողանա մնալ ոտքի վրա, բայց նրա ջանքերը զուր էին. գարնացած ամբոխի աչքերի առաջ ծանր պարկի նման շրմիաց գետնին: Ամբոխը ահաբեկված ետ ընկրկեց:

Մաշտոցը կանչեց երկու ձգնավորի և բարձրաձայն ասաց.

— Տարեք եկեղեցի, մինչև պատարագը վերջանա: Մենք նրան կազատենք չար դևերից: Չենք թողնի, որ դևերը խեղձին տանջեն:

Գիժ Գալուն կամաց-կամաց ուշքի էր գալիս: Մոտեցող ձգնավորները, ամուր բռնելով նրա ուսերից, գետնատարած քարշ տվեցին եկեղեցի:

— Ձեռքերն ու ոտքերը կապեք, — միայն տանող ձգնավորներին լսելի շնջաց Մաշտոցը:

Մաշտոցը հանգիստ վերադարձավ իր տեղը և շարունակեց ընդհատված քարոզը: Սակայն ժողովուրդն այլևս առաջվա պես չէր լսում նրան: Մարդկանց այդ պահին հետաքրքրում էր լոկ մի հարց, թե ինչ ավարտ կունենա Գիժ Գալոյի ճակատագիրը: Նրանցից ոմանք հաստատ հավատացած էին, որ Գալուն կբուժվի, իսկ թերահավատներն էլ հակառակն էին պնդում: Բայց շատերի ցանկությունն այն էր, որ նա բուժվեր և այլևս չարիք չդառնար շրջապատի համար...

Գիժ Գալոյի հարազատներն ու համախոհները սկսեցին սպառնալ ու հայհոյել: Նրանք, այս ու այն կողմ ընկնելով, հորդորում էին ամբոխին՝ գյուղից վռնդել ձգնավորներին: Միամիտ ամբոխը, տեսածից շժմած, չէր ենթարկվում նրանց:

Մաշտոցը, զգալով, որ շարունակելն այլևս անիմաստ է, շատ հանդիսավոր ու հանգիստ դիմեց ավելոծված ամբոխին.

— Հարգելի ժողովուրդ, եղբայրներ, պատարագը շարունակվելու է վաղը: Այսօր գնացեք ձեր բան ու գործին:

Գիժ Գալոյի կողմնակիցները մոլեգնեցին:

— Սրանց հետ ինչպե՞ս վարվենք, սուրբ հայր, — Մաշտոցի աջը համբուրելով՝ գաղտնի շնջաց գյուղացու շորերում ծալված Գինթի մարդկանց դեկավարը:

— Դուք՝ հավատացյալներդ, ավելի շատ եք, զավակս: Թույլ մի տվեք, որ ոտնակոխ անեն ձեր սուրբ հավատը,— ապա ձայնն իջեցնելով՝ շնչաց, — մի այնպիսի «դաս» տվեք, որ մինչև իրենց կյանքի վերջը չմոռանան:

«Գյուղացին» բաց թողեց Մաշտոցի աջը և ետ քաշվեց: Ոչ ոք չնկատեց, թե ինչպես վեց-յոթ «գյուղացի» երիտասարդ, մի պահ խորհրդակցելով և իրար ազդանշան տալով, նետվեցին Գիժ Գալոյի կողմնակիցների վրա: Սկսվեց մի ահավոր տուրուղմփոց: «Գյուղացիները» ճանաչում էին Գալոյի կողմնակիցներին և գիտեին, թե ում են փնտրում, իսկ վերջիններս չգիտեին, թե իրենց ովքեր են խփում և քանի հոգի են: Նրանց թվում էր, թե ամբողջ ժողովուրդն է իրենց հարվածում: Ծեծը կատարյալ էր...

Մաշտոցը ճգնավորների խմբի հետ մտավ եկեղեցի և ներսից ամրացրեց դռան սողնակը: Գալոն, որի ձեռքերն ու ոտքերը պինդ կապած էին, նստած էր եկեղեցու անկյունում փռված խսիրի վրա և պարզ լսում էր եկեղեցու կիսաքանդ կտուրից ներս խուժող դրսի աղմուկ-աղաղակը: Նա մտովի պատկերացնում էր, թե ինչպես են յուրայինները հալածում ճգնավորներին: Երբ ճգնավորները մտան եկեղեցի և ներսից փակեցին դուռը, Գալոն կարծեց, թե նրանք այդ բանն արեցին ինքնապաշտպանության համար:

— Արձակե՛ք խեղճի կապանքները, — կարգադրեց Մաշտոցը:

Գալոյին թվաց, թե Մաշտոցը վախից դիմում է փոխզիջման, որպեսզի դրա միջոցով կանխի սպառնացող վտանգը: Ուստի, երբ արձակեցին կապանքները, նա անասնական գոռոցով վեր թռավ տեղից և վիրավոր գազանի պես հարձակվեց Մաշտոցի վրա՝ աջ ու ձախ շարտելով դիմացը կանգնած ճգնավորներին: «Ախ դու սրիկա՛, — անցավ Մաշտոցի մտքով, — դու այդ ի՞նչ Գիժ ես, որ այդքան լավ հասկանում ես քո անելիքները: Ոչինչ, հիմա ես քեզ «կբուժեմ», և դու խելոքացած կզնաս այստեղից»: Գալոն ընդհուպ մոտեցավ Մաշտոցին և պատրաստվում էր ճանկելու նրա կոկորդը, երբ Մաշտոցի բռունցքը ծանր մուրճի պես իջավ նրա կողին: Գալոն դրան չէր սպասում. նախ ցավից կուչ եկավ, մի պահ ուժ հավաքեց, ապա կատաղած նույն դիրքով խոյացավ Մաշտոցի վրա, որպեսզի գլխով հարվածի փորին, բայց չհասցրեց. ծոծրակին իջած Մաշտոցի բռունցքի երկրորդ հարվածից բերանքսիվայր փռվեց հատակին: Մաշտոցը աջ ոտքի ուժեղ հրումով նրան շուռ տվեց մեջքի վրա:

— Հանգստացիր, գավակս,— ատամների արանքից նետեց Մաշտոցը՝ ոտքը սեղմելով Գալոյի կրծքին,— մենք քեզ «կբուծենք», իսկ եթե դու այդ չցանկանաս, մեղքը քո վիզը...

Գալոն գոռաց և փորձեց վեր կենալ, նրան թվում էր, որ իր գոռոցը լսելիս յուրայինները օգնության կհասնեն: Սակայն նրա հույսերը զուր էին: Նրա կողմնակիցներից շատերը փախել էին, իսկ մոտիկ հարազատները՝ կիսաջարդ ու արյունվա, հազիվ քարշ էին գալիս շրջակայքում: Գալոն երևի շատ կաղմկեր, եթե Մաշտոցի ոտքի ուժեղ հարվածից չուշաթափվեր:

— Ջուր լցրեք գլխին, ուշքի՛ բերեք,— զայրացած կարգադրեց Մաշտոցը:

Ճգնավորները ջուր լցրին Գալոյի գլխին. նա ուշքի եկավ: Մաշտոցը բռնեց նրա օձիքից և քարշ տալով հենեց պատին: Ինքը պագեց Գալոյի դիմաց և փորձում էր բռնել հայացքը: Գալոն ծանր էր շնչում: Նա հազիվ բացեց աչքերը և նայեց Մաշտոցի աչքերի մեջ: Գալոն Մաշտոցի աչքերի մեջ անհուն ու անզիջում ատելություն տեսավ և սարսափեց: Նա հազիվ կարողացավ կմկմալ.

— Դդու ճճգնավոր չես:

— Ա՛յ, տեսնո՞ւ՛մ ես, խելքդ գլուխդ է գալիս... — սասց Մաշտոցը՝ կանգնելով տեղում:

Գալոն ջուր ուզեց: Մաշտոցը կարգադրեց ջուր տալ: Ջուրը տվեցին: Գալոն երկար ժամանակ կում-կում խմեց ջուրը, ապա շունչը տեղը բերելով՝ թույլ հարցրեց.

— Ի՞նչ եք ուզում ինձանից:

— Ուզում ենք, որ դու «բուժվես», գավակս,— հեզնեց Մաշտոցը՝ տրորելով աջ ձեռքի բռունցքը, որը դեռ ցավում էր ուժեղ հարվածելուց:

— Այս ձևով,— ժպիտի նման մի բան խաղացնելով սփրթնած դեմքին՝ հարցրեց Գալոն:

— Ձեր «հիվանդությունը» միայն այս ձևով կարելի է բուժել, գավակս,— նույն հեզնանքով շարունակեց Մաշտոցը.— դու դիվահար ես, դևին միայն դժոխքը կարող է սաստել...

— Հիմա ես ի՞նչ անեմ,— խեղճացած հարցրեց Գալոն:

— Դա արդեն ուրիշ հարց է,— սասց Մաշտոցը:

— Դու պետք է բոլորին համոզես, որ բուժվել ես և կապրես այնպես, ինչպես ապրում են մյուսները: Իսկ եթե հանկարծ քո «դևերը» նորից վերադառնան, կվերադառնանք նաև մենք: Այն ժամանակ ար-

դեն ստիպված կլինենք ոչնչացնելու այն «անոթը», որն անհնար է մաքրել դներից... Համաձայն ես:

Գալոն գլխով դրական պատասխան տվեց:

— Թո՛ւյլ տվե՛ք՝ գնա,— կարգադրեց Մաշտոցը:

Վահրիձը քաշեց սողնակը և բացեց դուռը: Գալոն ընկձված դուրս եկավ եկեղեցուց: Նրա սարսափն ավելի խորացավ, երբ իրեն սպասող յուրայիններին տեսավ նույնպես ջարդված ու հուսահատ: Յուրայինները շրջապատեցին Գալոյին: Գալոն ոչինչ չէր խոսում: Նա, հագիվ քարշ տալով ոտքերը, գնում էր դեպի տուն:

— Քեզ ծեծե՛լ են,— զայրացած հարցրեց ավագ որդին, որ երեսունին մոտ, հոր նման թիկնեղ տղամարդ էր, որի դեմքին նույնպես հարվածի հետքեր կային: Գալոն հայացքով «շոշափեց» յուրայիններին և տեսավ, որ նրանց մեջ չկա մեկը, որի դեմքին հարվածի հետքեր չլինեն: Նա տխուր ժպտաց և որդուն պատասխանեց.

— Ո՛չ, ինձ չեն ծեծել:

— Չէ՛, ծեծել են, ճիշտ չես ասում,— ցատումով բղավեց որդին և շուռ եկավ, որ գնա դեպի եկեղեցին:

Գալոն ամուր բռնեց որդու թևը և ուժով հետ պահեց: Որդին փորձում էր թևն ազատել հոր ձեռքից: Հայրը աղաչական նայեց որդու աչքերի մեջ և հուսահատ ասաց.

— Պետք չէ, մի՛ գնա:

Որդին հասկացավ ամեն ինչ և հնազանդվեց: Նրանց երթը դեպի տուն նման էր հուղարկավորների թափորի: Համազյուղացիները, խմբված բակերում ու կտուրներին, հայացքով ուղեկցում էին նրանց և ներքուստ ուրախանում:

\* \* \*

Հաջորդ օրը պատարագի շարունակությունը լսելու էին եկել ավելի շատ մարդիկ: Երեկվա դեպքերի լուրը, չափազանցված ու գունազարդված, հասել էր Գողթնի շրջակա գրեթե բոլոր գյուղերը: Բազմությունը, համակ լսողություն դարձած, հետևում էր պատարագին: Կեսօրին պատարագն ավարտվեց: Մաշտոցը, դիմելով ժողովրդին, ասաց.

— Սիրելի՛ ժողովուրդ, հարգելի՛ կարճավանցիներ, եղբայրներ, այսուհետև դուք կունենաք ձեր քահանան, որն օծված ու կարգված է մեր կողմից: Ահա նա,— Մաշտոցը ձեռքը դրեց իր կողքին կանգնած

փարթամ բեղ ու մորուքով երիտասարդ տղամարդու ուսին: Ձեզանից շատերը ճանաչում են նրան՝ ձեր համերկրացի Ռոդաստիցի Վրթանեսին: Նա գրագետ ու համարձակ մարդ է: Եթե մեզ հետ դուք էլ ձեր բարեպաշտությամբ օգնեք նրան, շատ շուտով ձեր գյուղը բարեկարգ եկեղեցու հետ միասին կունենա իր սեփական դպրոցը...

— Ինչ լեզվով պիտի տարվի ուսուցումը, սուրբ հայր,— բազմության միջից Մաշտոցի խոսքն ընդհատեց մի սուր ձայն:

— Երևի առայժմ հունարեն,— պատասխանեց Մաշտոցը՝ մի տեսակ ընկճված:

— Բազմությունը դժկամության աղմուկ բարձրացրեց:

— Անօգուտ է,— բազմության միջից ավելի սուր հնչեց նույն ձայնը,— ղով կհասկանա, կամ մեր ինչին է պետք օտարի լեզուն...

Մաշտոցը մի պահ չիմացավ՝ ինչ պատասխանի: Նա անգոր նայեց ձգնավորներին:

— Մի՛ հապաղիր, սուրբ հայր,— նրան խրախուսեց Եղիան, այսինքն՝ Վահրիճ Խաղունին,— նրանց ասան, որ շուտով կունենանք մեր գիրը, և մեր մանուկները կկրթվեն մայրենի լեզվով:

— Սիրելի՛ ժողովուրդ,— ասաց Մաշտոցը, դուք ինձ լավ չհասկացաք: Ես ասացի, որ դպրոցներն առայժմ կգործեն հունարեն, քանզի շուտով մենք կունենանք մեր սեփական գիրը, և մեր դպրոցներում մեր մանուկները կրթություն կստանան մայրենի լեզվով:

Բազմությունն ուրախ աղմկեց:

— Իսկ ղով կտա մեզ սեփական գիր,— այս անգամ բացականչեց մի ուրիշ ձայն:

— Կան այդ մասին հոգ տանող մարդիկ,— պատասխանեց Մաշտոցը,— դուք ապահով եղեք:

— Դուք որքան կմնաք մեր կողմերում, սուրբ հայր,— հետաքրքրվեց մի տարեց գյուղացի:

— Այնքան ժամանակ, մինչև Գողթնի բոլոր գյուղերում վերահաստատվի Քրիստոս աստծու սուրբ հավատը:

\* \* \*

Մաշտոցը տքնողների իր խմբով շուրջ երեք ամիս շրջեց Գողթն գավառի գրեթե բոլոր գյուղերը: Հայր ու որդի Շաբիթ ու Գինթ իշխանների ջանադիր օգնությամբ գավառի գյուղերում վերահաստատվեցին եկեղեցիները, բարենորոգվեցին դպրոցները, հիմք դր-



վեց միաբանություններին: Այդ ընթացքում բացահայտ ու գաղտնի միջոցներով վերացվում էին այն արգելքներն ու խոչընդոտները, որոնք խանգարում էին նրանց ձեռնարկումներին: Մաշտոցն ամենուր իր քարոզների մեջ հորդորում էր բնակչությանը մեկուսացնել ու հալածել այն մարդկանց, որոնց վարքն ու բարքը չարիք են բերում հասարակությանը: «Միննույնն է, վաղ թե ուշ Աստված կպատժի նրանց,— ասում էր Մաշտոցը, բայց դուք մի եղեք անտարբեր, քանզի Աստծո ավետարանը Պողոս առաքյալի բերանով մեզ ուսուցանում է. «Եթե... մեկը պոռնիկ լինի, կամ կռապաշտ, կամ ագահ, կամ բամբաստող, կամ հարբեցող, կամ հափշտակող, այդպիսի մեկի հետ հաց էլ չուտեք... Չէ՞ որ ներսիններին դուք եք դատում: Իսկ դրսիններին Աստվածն է դատելու: Վերացրեք չարը ձեր միջից»:

Բնակչությունը սկզբում թերահավատ էր ճգնավորների խմբի նկատմամբ: Սակայն երբ հետզհետե տեսավ ու զգաց, թե ինչպես է կարգ ու կանոն հաստատվում այն գյուղերում, որտեղ լինում են ճգնավորները, կամաց–կամաց սկսեց համակրել նրանց: Գնալով մեծանում էր այն մարդկանց թիվը, որոնք կամավոր առաջարկում էին իրենց ծառայությունները: Բնակչությանը դուր էր գալիս, երբ ճգնավորներն առանց քաշվելու այցելում էին օգնության կարոտ ընտանիքներին, միջնորդում իշխանի առաջ՝ նրանց կարիքները հոգալու: Նրանց շարմեցնելու չափ զարմացնում էր, որ տարիներ շարունակ բնակչության գլխին չարիք դարձած անձինք պատժվում էին: Ճգնավորների խումբը սարսափ էր դարձել չարագործների ու այլանդակ կենցաղի տեր մարդկանց համար. օրեցօր նեղանում էր նրանց գործողությունների շրջանակը: Բնակչությունն այլևս չէր վախենում նրանցից: Լեգենդի պես գյուղից գյուղ էր շրջում Գիծ Գալոյի բուժման պատմությունը: Բազմաթիվ ականատեսներ պատմում էին, և բերնեբերան էր անցնում այն հրաշքը, թե ինչպես Գալոն անմիջապես թուլացավ և շրմիաց գետինն, երբ ցանկանում էր ճգնավորից խլել խաչը...

Ձմեռնամուտին, երբ ճգնավորների խումբը վերադարձավ Գողթն գավառի կենտրոնական ավան Ռոտաստակ՝ ձմեռն այնտեղ տքնությամբ անցկացնելու, կայծակի պես լուր տարածվեց, թե Գալոն նորից դիվոտել է. նա գաղտնի հրդեհել է Կարձավանի եկեղեցին: Իշխան Գինթը մարդիկ ուղարկեց՝ իսկությունը իմանալու: Պարզվեց, որ լուրը ճիշտ է: Սակայն տեսնողները, Գալոյից վախենալով, չէին վկայում, որ դա նրա արածն է: Իշխան Գինթը որոշեց առանց դատ ու դատաստանի պատժել Գալոյին, սակայն Մաշտոցը կանխեց նրան.

— Չի կարելի, իշխան,— շատերի ներկայությամբ ասաց Մաշտոցը,— քրիստոնյային վայել չէ պատժել հիվանդ, իր մեղքը չգիտակցող մարդուն, մանավանդ որ նրա մեղքը հաստատող վկաներ չկան:

— Կան, սուրբ հայր, տեսնողներ են եղել, բայց նրանք վախենում են Գալոյից, նրա կողմնակիցներից, նրա ունեցվածքից,— տաքացած պնդեց Գինթը:

— Ա՛յ, տեսնո՞ւմ եք, իշխան՝ նա որքան արմատներ ունի: Նրան պատժելը երևի մեր ուժերից վեր է: Եթե հաստատ նա է վառել Աստծո տունը, թող նրան Աստված էլ պատժի...— Այս ասելով՝ Մաշտոցը բազկատարած նայեց վերև, ապա խաչակնքեց, այդ ընթացքում հպանցիկ հայացքով Գինթին հասկացրեց, որ համաձայնվի իր հետ:

Գինթը անմիջապես հասկացավ, և ինքն էլ խաչակնքեց ու մրմնջաց.

— Թող Աստծու կամքով լինի...

Երեկոյան Մաշտոցը իր կացարանում միայնակ սպասում էր իշխան Գինթին: Իշխանը եկավ պայմանավորված ժամին: Նրանք այնքան ուրախ ու ջերմագին ողջունեցին իրար, որ կարծես երկար ժամանակ իրար չէին տեսել: Մաշտոցի առաջարկով Գինթը նստեց:

— Դե հիմա խոսի՛ր, իմանամ՝ ինչ ես ուզում, առավոտյան տաքացած էիր,— ժպտալով հարցրեց Մաշտոցը:

— Ես իմ ասելիքն ասել եմ, սուրբ հայր: Յանկանում եմ լսել Ձեզ:

— Ասում ես, թե Գիժ Գալոն համախոհներ ու մեծ ունեցվածք ունի, ճի՞շտ է,— հարցրեց Մաշտոցը:

— Ստելու պատճառ չունենմ:

— Ի՞նչ ձևով ես ուզում պատժել նրան:

— Արտաքսել մեր սահմաններից դուրս:

— Իսկ ունեցվածքն ու համախոհները:

— Այդ մասին, անկեղծ ասած, չեմ մտածել:

— Ա՛յ, տեսնո՞ւմ ես, չես մտածել: Մի նշդեռ գործը պետք է մտածված անել: Քանի դեռ Գալոն ունեցվածք ունի և համախոհներ, նրան ուր էլ արտաքսես՝ կվերադառնա: Գալոնները մոլախոտ են, նրանց պետք է արմատախիլ անել... Պետք է այնպես անել, որ նա կամավոր հեռանա, ավելի շուտ՝ փախչի մեր երկրից՝ այլևս վերադարձի հույս չունենալով:

— Ինչպե՛ս:

— Նա ինչպե՛ս գաղտնի վառեց Աստծո տունը,— ասաց Մաշտոցը՝ շեշտելով տունը,— իսկ ի՞նչ կլինի, եթե մեկն էլ գաղտնի վառի նրա ոչ միայն տունը, այլև ողջ ունեցվածքը, հի՛ջ:

— Լավ է մտածված, սուրբ հայր,— ձեռքի ասիերն իրար շփեց Գինթը: Հետաքրքիր է, եթե նա զրկվի տնից ու ունեցվածքից, ինչ կանի...

— Նա կանի շատ հասարակ մի բան՝ հասկանալով ամեն ինչ՝ կվերցնի իր ընտանիքն ու «կամավոր» կփախչի մեր երկրի սահմաններից: Իսկ դա մեծ դաս կլինի նրա համախոհներին...

— Վաղը...

— Ոչ, իշխան, վաղը շուտ է: Թող լուրը տարածվի, որ դու ցանկացել ես Գիթ Գալոյին պատժել, իսկ ես արգելել եմ... Նախ իմանանք լուրի արձագանքները, նոր մեր անելիքն անենք...

Երկու շաբաթ անց Մաշտոցն ու Գինթն իմացան, որ լուրը տարածվել է ամբողջ Գողթն գավառում: Իմացան նաև, որ Գալոն լուրը լսելիս իրեն տարօրինակ է պահել: Փոխանակ հերքելու իր գործած հանցանքը՝ շատերի առաջ գոռացել է, թե իրավ ինքն է վառել եկեղեցին, որ ինքը չի ուրանա նախնիների հեթանոս հավատը և չի ընդունի քրիստոնեությունը...

— Ինչու՞ է այդպես վարվել,— հարցրեց Գինթը Մաշտոցին:

— Գալոն շատ վտանգավոր մարդ է, իշխան: Ես նման մարդկանց շատ եմ տեսել: Այդպիսիները հավատ չունեն: Գալոն հեթանոս էլ չէ: Նա խորամանկ ու խարդախ մարդ է: Նմանների հաշվենկատությունը չափեր չի ձանաչում: Սրիկան լավ է հասկացել, որ միևնույնն է, ինքը չի կարող պատժից խուսափել, ուստի որոշել է մեզ իջեցնել իր մակարդակին... Դրան մի տես, հիմա էլ ուզում է նահատակ խաղալ: Ո՛չ, իշխան, ժողովուրդը պիտի համոզվի, որ մենք ենք ճշմարիտը, որ Աստծո տունը վառողի տունն էլ պիտի մոխիր դառնա...

— Արդարացի է, սուրբ հայր...— համաձայնվեց Գինթը:

Գիշերը մառախլապատ էր: Առատորեն տեղում էր առաջին ձյունը: Հանկարծ կեսգիշերին տագնապալի աղաղակն արթնացրեց Կարձավանի ողջ բնակչությանը: Ահավոր հրդեհը լափ-լիզում էր Գիթ Գալոյի տներն ու ագարակը:

Երկու օր անց Գալոն, իր ընտանիքով, ունեզրկված ու խեղճ, բարեկամներից հավաքած քուրջ ու փալասի մեջ փաթաթված, հեռացավ Պարսկաստանի կողմերը...

Նրա համախոհները սարսափի մեջ էին: Նրանցից երկուսը, որոնք ներկա էին գտնվել Գալոյի կողմից եկեղեցու այրմանը, հաջորդ օրը մտան եկեղեցի, մոմեր վառեցին, քահանա Վրթանեսին խոստովանեցին իրենց մեղքը, խոստացան եկեղեցին իրենց ծախսերով վերականգնել և իրենց մեղքին թողություն խնդրեցին ...

Կարճ ժամանակում այդ մասին իմացան ոչ միայն Գողթնի, այլև նրա հարևան բոլոր գավառների բնակիչները:

\* \* \*

Տարիներ անց Մաշտոցի վարքագիրը մոմի աղոտ լույսի տակ այդ դեպքերի պատմությունը հանձնում էր մագաղաթին, որ գալիք սերունդներն իմանան, որ՝ «Երանելին, իսկույն իր ավետարանական արվեստը բանեցնելով, իշխանի հավատարիմ օգնությամբ սկսեց գավառում՝ ամենքը իրենց հայրենական ավանդություններից ու սատանայական դիվապաշտ ծառայություններից ետ է շուռ տվել Քրիստոսի հնազանդությունը:

Եվ երբ նրանց մեջ սերմանեց կյանքի խոսքը, հայտնապես մեծամեծ հրաշքներ երևացին գավառի բնակիչներին, դևերը՝ զանազան կերպարանքներով, փախան–ընկան Մարերի կողմերը...»:

## ԱՇԽԱՐՀԱՏՈՎ ԺՈՂՈՎԸ

Մաշտոցը տքնողների խմբով Գողթնից վերադարձավ գարնանը: Թեև իր ձեռնարկումների մեջ զգալի հաջողությունների էր հասել, բայց և այնպես, մայրաքաղաք հասավ մի տեսակ ընկճված ու տխուր: Նրա ջանքերը՝ Կապուտջուղ սարի ժայռապատկերներից մայրենի լեզվի համար նշանագրեր հայտնաբերելու, անցել էին ապարդյուն: Բացի այդ, Գողթնում ծավալած իր գործունեության ընթացքում նա վերջնականապես եկել էր այն համոզման, որ օտարալեզու դպրությունը ոչ միայն խարխիս չի դառնում Հայոց աշխարհի բախտի ալեկոծյալ նավի համար, այլև հակադիր քամու պես այն փչում տանում է անձանոթ ափեր՝ մատնելով կորստյան...

Վերադառնալով մայրաքաղաք՝ Մաշտոցն իր այդ անհաջողության ու մտորումների մասին հայտնեց Սահակ Պարթևին, և մեծ եղավ ուրախությունը, երբ վեհափառ կաթողիկոսն ասաց, որ ինքը այդ կարծիքին է եղել ի սկզբանե:

— Այո, սիրելի Մաշտոց, — իր խոսքը եզրափակեց Սահակը, — ազգի դեմքը, պատկանելությունը, ոգին նրա լեզուն է: Ինչպիսին լեզուն է, այնպիսին էլ ազգն է, հզոր է լեզուն, հզոր է ազգը, թույլ է լեզուն, թույլ է ազգը, ապրում է լեզուն, ապրում է ազգը, սպանիր լեզուն, կմեռնի և ազգը: Մարդս, ինչ ծագում էլ որ ունենա, նրա ազգային պատկանելությունը որոշվում է նրա լեզվով: Պատմությունը այդպիսի բյուրավոր օրինակներ է տվել: Քո հորեղբայր Վահան Մամիկոնյանն ու հորաքրոջ տղա Մերուժան Արծրունին, եթե պարսից լեզուն գերազանց չիմանային, դժվար թե դառնային պարսկական գա-

հի կամակատարները և դավեր նյութեհին սեփական հայրենիքի՝ Հայոց աշխարհի դեմ: Ցավոք, այսօր էլ կան նման մարդիկ, ովքեր օտար լեզուն գերադասում են մայրենիից, քանզի այն առավել գիտեն, քան մայրենին, և հաստատ համոզված եղիր, որ նման մարդիկ հոգով օտարներ են, հետևաբար՝ կորած սեփական ազգի համար...

— Ես ավելին կասեմ, Սահակ,— տխուր ասաց Մաշտոցը,— նրանք, ովքեր չեն տիրապետում մայրենի լեզվին, չեն էլ ցանկանում նաև, որ զարգանա մեր լեզուն, նրանք արհամարհում են մեր լեզուն, ուստի այդպիսի մարդիկ կամա թե ակամա մեզ հետ չեն, ազգի հետ չեն, նրանք ցանկացած դեպքում կարող են դավաճանել...

— Փառք Աստծո, որ մեր երկուսիս կարծիքները համընկնում են, իսկ դա շատ բան է նշանակում,— ասաց Սահակը՝ ձեռքը մտերմաբար դնելով Մաշտոցի ուսին:

— Բայց, ավանդ, մենք դեռ քիչ բան ենք արել մեր լեզուն հզորացնելու համար,— տխրեց Մաշտոցը:

— Մի՛ վիստվիր, տներ Մամիկոնյան: Այսօր ժամանակը գործում է մեր օգտին, մեր լեզուն ամրապնդելու համար պարարտ հող կա: Մեզ մնում է խելացի գործել, մանավանդ որ հմուտ ու բանիմաց սերմնացան ունենք... Ես այս արտից մեծ բերք եմ սպասում, Մեսրոպ...

— Այնքան վստահ եմ խոսում, քիչ է մնում՝ ես էլ հավատամ,— նետեց Մաշտոցը:

— Այն, ինչ արել է Մեսրոպ Մաշտոցն այս մեկ տարում, որն, ի դեպ, ժողովուրդը շատ է գնահատում, այսօր ամբողջ Հայոց աշխարհին է հայտնի: Այդ մասին եթե դու էլ լսես, կհավատաս,— կատակեց Սահակը:

— Ես ոչ միայն լսել, այլև անձամբ եմ տեսել այդ քո Մաշտոցին և հաստատ կարող եմ ասել, որ նա առայժմ քիչ բան է արել,— հեգնեց Մաշտոցը:

— Հին իմաստությունն ասում է, որ քչերից է գումարվում շատը... Այնպես որ Մաշտոցի արած քչից ես շատ գոհ եմ,— ասաց Սահակը և գլուխը բազմանշանակ տմբոմբացրեց:

— Ախր, այդ անտեր ժայռապատկերներից բան դուրս չեկավ,— ձեռքը հուսահատ թափ տվեց Մաշտոցը:

— Ժայռապատկերներից դուրս չեկավ, մի այլ տեղից դուրս կգա, Մեսրոպ: Դու զգուշացի՛ր, որ ես համբերությունից դուրս չգամ,— բառախաղ սարքեց Սահակը,— դու հո ինձ լավ գիտես, ես

վհասվողներին չեմ սիրում, ինձ մի հիասթափեցնի քո դժգոհություններով: Ուրիշ ազգերի գրերը հո երկնքից չեն թափվել: Դրանք մարդիկ են ստեղծել, չէ՛: Ես մայրենի լեզվի գրերի ստեղծման գործին կլծեմ Հայոց աշխարհի հոգևոր ու աշխարհիկ բոլոր իմաստուն այրերին, ես օգնության կկանչեմ թագավորին, այդ նպատակի համար կծախսեմ Լուսավորչի տան ողջ հարստությունը, ես ամեն ինչ կանեմ, որպեսզի հայր մայրենի լեզվով դպրություն ստանա, սեփական լեզվով, հասկանա՞մ ես, և ոչ թե ասորական, հունական կամ պարսկական...

Սահակ Պարթևն այս խոսքերն արտասանեց ինքնամոռաց: Նա այդ ընթացքում կանգնեց տեղում և սկսեց տենդագին քայլել ետ ու առաջ: Նրա աչքերը վառվում էին վճռականության կրակով, և այդ պահին նա ավելի շատ գորավարի էր նման, քան հոգևոր տիրոջ:

Մաշտոցը, որ նույնպես ոտքի էր կանգնել, զմայլված նայում էր նրան:

— Սահակ,— մտերմաբար կանչեց Մաշտոցը:

— Ի՞նչ,— խոռվահույզ հարցրեց Սահակը:

— Ասենք թե մայրենի լեզվով գրերը կան: Դու դրանք ինչպե՞ս կդնես գործածության մեջ:

Սահակը կտրուկ կանգ առավ և սևեռուն նայեց Մաշտոցին: Նրան մի պահ թվաց, թե Մաշտոցն իր մոտ գրեր ունի, բայց վարանում է այդ մասին խոսել:

— Ինչու՞ տվիք այդ հարցը, Մեսրոպ:

— Չգիտեմ, ինձ թվում է, որ եթե սեփական գրեր ունենանք էլ, միևնույնն է, դարձյալ դժվար կլինի դրանք գործածել: Մենք լուրջ արգելքների, նույնիսկ դիմադրությունների կհանդիպենք:

— Եթե արգելքներից ու դիմադրություններից վախենանք, պիտի ոչ մի գործ չձեռնարկենք:

— Ինձ լավ չհասկացար, Սահակ: Խոսքս վախենալու մասին չէ: Մենք վաղ թե ուշ սեփական գրեր կունենանք: Սակայն մեզ անհրաժեշտ է հող նախապատրաստել, որպեսզի հետագայում՝ ազգային դպրությունը հիմնադրելիս, ծագած խոչընդոտներն ու դիմադրությունները կարողանանք հաղթահարել...

— «Հողը» կա,— վճռաբար ասաց Սահակը,— մենք ձգտում ենք պետականորեն ընդունված քրիստոնեական կրոնը ամրապնդել, որի համար հարկավոր է ունենալ մայրենի լեզվով գիր ու գրականություն: Մենք քեզ հետ ինչքան ենք այդ մասին խոսել ու խորհել:

— Այո՛, հիրավի շատ ենք խոսել, բայց որքան էլ խոսենք, քիչ է, քանզի մեր բռնած գործը դեռևս լայն, համաժողովրդական բնույթ չի կրում: Մենք, գրերի ստեղծմանը զուգընթաց, պետք է խիստ հոգ տանենք նաև այդ շատ կարևոր պարագայի մասին: Քանզի մեր բոլոր ջանքերն ի չիք կդառնան, եթե չարժանանան ժողովրդի համակրանքին, եթե մեր բռնած գործն արմատներ չզգցի ժողովրդի հոգում, մենք հաջողության չենք հասնի: Ժողովուրդը պիտի գա մեր ետևից, պիտի հավատա մեր բռնած գործին, ժողովրդի անպարտելի ուժը պիտի մեզ սատար դառնա: Հակառակ դեպքում մեր բոլոր ձեռնարկումները հորս կցնդեն:

— Մերո՞ւյ, դու լավ գիտես, որ քեզ հավատում եմ, էլ ինչու՞ ես նախաբանով խոսում: Ինձ կոնկրետ ասա՛՛ ինչ ես մտածել: Դու ասա՛, ես կիրականացնեմ:

— Հավաքիր աշխարհահոգ ժողովի Հայոց աշխարհի հոգևոր դասի նշանավոր մարդկանց, — ասաց Մաշտոցը, — թող ժողովուրդը քննության առնի մայրենի լեզվով դպրություն ստեղծելու խնդիրը...

— Ժողովը մեզ ի՞նչ կտա, — կտրուկ հարցրեց Սահակը:

— Ես էլ գիտեմ, որ ժողովը կոնկրետ ոչինչ չի տա, — հանգիստ պատասխանեց Մաշտոցը, — սակայն աշխարհաժողովում նախ պարզ կդառնան այն դժվարությունները, որոնք կապված են խնդրո առարկայի հետ, և երկրորդը, որն ամենակարևորն է՝ ժողովականները, երբ ցրվեն Հայոց աշխարհով մեկ, ամենուրեք կպատմեն մեր մտահոգությունների ու ցանկությունների մասին: Իսկ մեր ժողովուրդն այսօր ծարավի է մայրենի լեզվով դպրություն ստեղծելուն: Նա կօգնի մեզ...

Սահակը չէր խոսում: Դեմքի արտահայտությունից երևում էր, որ նրան ինչ-որ բան մտատանջում է:

— Ի՞նչ ես մտածում, — հարցրեց Մաշտոցը:

— Դու երկամր ես մտածել քո այդ առաջարկի մասին, — հարցին հարցով պատասխանեց Սահակը:

— Ամբողջ մի տարի:

— Եվ համոզված ես, որ առաջարկդ ճիշտ է:

— Համոզված եմ:

— Իսկ եթե այդ բացահայտ քայլը մեր դեմ համախմբի մեր թշնամիներին ու հակառակորդներին:

— Թերևս այսօր դա բացառված է:

— Ինչու՞:



— Քանզի ժամանակն այսօր գործում է մեր օգտին: Այժմ մեր թշնամիները, առավել ևս մեր հակառակորդները չեն կարող համախմբվել: Նրանք հիմա չափազանց իրարամերժ են: Հնարավոր է, որ մի քիչ այդ հարցում համառեն սաորի հոգևորականները, բայց մենք նրանց համառությունը կկտորենք:

— Չսպասենք Միջագետքից արքայի վերադարձին:

— Ո՛չ, ի՞նչ ես ասում: Թագավորը «ոչ մի կապ» չպիտի ունենա այս գործի հետ: Չէ՞ որ սա «գլուտ կրոնական» ձեռնարկում է...— ասաց Մաշտոցը՝ ներողամիտ ժպտալով:

— Տեր Մաշտոց, կներեք,— զվարթ կատակեց կաթողիկոսը,— հո Դուք երբևիցե գործ չե՞ք ունեցել դիվանատների հետ...

— Տարիներ առաջ Մեսրոպ անունով մի ծանոթ ունեի,— կատակեց նաև Մաշտոցը,— նա թագավորական դիվանապետ էր, որոշ բաներ սովորել եմ նրանից...

Երկուսն էլ զվարթ ծիծաղեցին:

— Ուրեմն այսպես,— խոսեց կաթողիկոսը,— մենք անհապաղ աշխարհահոգ ժողով կզումարենք այս ամսին, քանի դեռ թագավորը չի վերադարձել: Դա նույնիսկ լավ է, որքան հասկացա քեզ...

— Այո՛, դա այնքանով է լավ, որ թագավորը որքան «անտեղյակ» մնա այս գործից, այնքան մեր հակառակորդները հանգիստ կլինեն: Դրանով մենք կթուլացնենք մեր հակառակորդների և թշնամիների զգոնությունը, ինչպես կասեր իմ ծանոթ դիվանապետ Մեսրոպը,— նորից կատակեց Մաշտոցը:

— Դե որ քո այդ ծանոթ դիվանապետն այդքան խելոք է, տեր Մաշտոց,— նույն ձևով ասաց կաթողիկոսը,— մի անգամ իր հետ խորհրդակցիր, տես՝ նա նպատակահարմար չի՞ գտնում, որ մեր աշխարհահոգ ժողովում դու ինքդ զեկուցես:

— Ես արդեն խորհրդակցել եմ:

— Եվ ի՞նչ:

— Նա լրիվ Ձեր կարծիքին է:

— Փառք ամենակալ Տիրոջը, որ նա մեզ այդքան խելոք խորհրդատու է ուղարկել:

— Աստված պահապան,— եզրափակեց Մաշտոցը:

Վեհարանի մեծ սրահում հավաքվել էին հարյուրից ավելի տարբեր աստիճանի ու տարիքի հոգևորականներ, որոնք եկել էին Հայոց աշխարհի գրեթե բոլոր գավառներից ու քաղաքներից: Նրանք մայրաքաղաք էին ժամանել հայոց կաթողիկոսի հատուկ հրովարտակով: Թեև հրովարտակում չէր նշված աշխարհահոգ ժողով հրավիրելու նպատակը, բայց ամենքը հաստատ գիտեին, որ իրենք կանչված են շատ կարևոր խնդրով, որի մասին իրենք դեռևս կոնկրետ ոչինչ չգիտեին: Նախքան աշխարհահոգ ժողովի սկսվելը, նրանք, առանձին խմբերի բաժանված, մտքեր ու կարծիքներ էին փոխանակում, սակայն որոշակի եզրակացություն հանգել չէին կարողանում և անհամբեր սպասում էին կաթողիկոսի հայտնվելուն. վերջինս անկասկած պիտի ստույգ հայտներ, թե նրանց ինչ նպատակով է հրավիրել: Սահմանված ժամին հավաքվածները զբաղեցրին իրենց համար հատկացված տեղերը՝ ըստ դիրքի ու աստիճանի: Կաթողիկոսը ժողովականներին երկար սպասել չտվեց: Նա սրահի՝ բեմին հարող խորանից բեմ մտավ՝ շրջապատված մի խումբ բարձրաստիճան հոգևորականներով: Խմբի մեջ էր նաև Մաշտոցը՝ ակումբիտի հատուկ պարեգոտ հագած: Սրահում հավաքվածներն իսկույն ոտքի կանգնեցին: Տիրեց հանդիսավոր լռություն:

— Բարի գալուստ, եղբայրներ,— ներկաներին ողջունեց կաթողիկոսը:

— Աստված պահապան, Վեհափառ,— գրեթե միաբերան պատասխանեցին ժողովականները:

Կաթողիկոսը նշան տվեց իր հետ բեմ մտած և բեմի աջ ու ձախ կողմերում կանգնած երկու զույգ երիտասարդ արեղաներին: Վերջիններս սկսեցին քաղցրաձայն հնչեցնել տերունական աղոթքը: «Հայր մերը» հայոց վեհարանի կամարների տակ հնչում էր հունարեն: Կաթողիկոսն ու Մաշտոցը դա արել էին դիվանագիտական նպատակով: Բանն այն էր, որ նրանք, քաջ գիտենալով, որ հավաքված հոգևորականների հագիվ մեկ քառորդ մասն էր տիրապետում հունարեն լեզվին, մնացած մասը ասորի կամ ասորերեն իմացող հայ հոգևորականներ էին, որոնց, բնականաբար, ցանկալի չէր, որ կրոնը քարոզվի հունարեն լեզվով: Այդ դիվանագիտական քայլով Սահակն ու Մեսրոպը ցանկանում էին կասկածի տակ դնել կրոնը ասորերեն քարոզելու գոյության ապագան... Եվ հենց սկզբից նրանք զգացին իրենց այդ քայ-

լի հաջողության նշանները, քանզի երբ իրենք նույնպես սկսեցին ձայնակցել արեղաներին, և նրանց միացան հունարեն իմացող հոգևորականները, սրահում գտնվող ասորի և ասորակողմ հոգևորականների դեմքերին տազնապ երևաց: Սահակն ու Մեսրոպը ծածուկ իրար նայեցին: Նրանց հայացքներում գոհունակության ժպիտ երևաց:

Երբ երգեցողությունն ավարտվեց, կաթողիկոսը ժողովականներին առաջարկեց նստել: Ամենքը նստեցին և լուռ սպասեցին նրա խոսքին:

— Եղբայրներ,— մեղմ ու դուրեկան ձայնով սկսեց խոսել կաթողիկոսը,— ես այսօր ձեզ մայրաքաղաք եմ հրավիրել, որ միասին խորհենք մի սուրբ ու հայրենաշեն հույժ կարևոր գործի համար, մի գործի, որը առանց ձեր օգնության անհնար է գլուխ բերել: Խոսքս վերաբերում է Քրիստոս աստծու ավետարանական կանոնները ժողովրդի մեջ տարածման ու ամրապնդման գործին, որի այսօրվա վիճակը, ինչպես ամենքդ գիտեք, անբավարար է: Բոլորիս մտահոգող այս խնդրի ուսումնասիրման ու նախապատրաստման գործը վեհարանի կողմից հանձնարարված է ձեզ ամենքիդ քաջ հայտնի մարդասեր, Աստծու երդվյալ հետևորդ, նրա պարծանքի խաչակիր, պայծառամիտ տքնող Մաշտոցին: Նա այժմ մեզ մտահոգող խնդրի մասին համառոտ զեկույց կտա այստեղ հավաքված համաժողովի մասնակիցներին, և մենք հանգամանորեն կքննարկենք այն, որից հետո կտանք մեր եզրակացությունը:

— Սիրելի եղբայրներ,— հանդարտ սկսեց խոսել Մաշտոցը,— Քրիստոս մարդասեր աստծու հավատարիմ ծառաներ և նրա խաչակիր գնդի անդամազան զինվորներ: Սրանից շուրջ մեկ դար առաջ հայ ժողովուրդը սուրբ Գրիգոր Լուսավորչի և մեր պայծառամիայլ Տրդատ թագավորի աստվածասեր ջանքերով իրենից թոթափեց իր դարն ապրած հեթանոսական պաշտամունքի հնոտին և ամենակեցույց Քրիստոս մարդասեր աստծու պարծանքի խաչն առնելով՝ հետևեց նրա լուսավոր ու սուրբ դավանանքին: Եվ ահա մեկ դար է, ինչ մեր ժողովուրդն իր ավետարանական արվեստով բարեպաշտություն է սերմանում թե՛ իր հայրենիքում և թե՛ հայրենի սահմաններից դուրս: Այդ սրբազնագույն գործում մեզ անաչառ օգնություն են ցույց տվել և տալիս են ու դարձյալ կտան մեր ասորի ու հույն եղբայրները: Մենք բոլորս հաստատ համոզված ենք, որ մարդասեր Աստծու Ավետարանի լույսը կտարածվի համայն աշխարհով մեկ և կձառագի բոլոր ազգերի ու ժողովուրդների հոգիներում...

Մաշտոցը մի պահ դադար առավ: Սրահը մի պահ ավելոծվեց ու բարձրագոչ մրմնջաց. «Ամեն»: Մաշտոցը ներքուստ ուրախացավ: Նա զգաց, որ հավաքվածներին դուր է գալիս իր խոսքը, ապա շարունակեց ավելի վստահ.

— Սիրելի եղբայրներ, բայց ես նորություն հայտնած չեմ լինի, եթե ձեզ ասեմ, որ այսօր մարդասեր Աստծու ավետարանական խոսքի ուսուցումը մեզ մոտ ոչ թե անբավարար է, ինչպես քիչ առաջ այդ մասին մեղմ արտահայտվեց Հայոց աշխարհի Վեհափառը, այլ շատ վատ է: Եվ ես սա ասում եմ բացարձակ առանց քաշվելու, քանզի դա բոլորիդ հայտնի իրողություն է: Դուք բոլորդ շատ լավ գիտեք, որ ավետարանական խոսքը հայ ժողովրդի համար քարոզվում է օտար լեզուներով, և այդ քարոզները անհասանելի են ժողովրդի մեծամասնությանը, քանզի այդ մեծամասնության համար օտար լեզուն անհասկանալի է...

Այնուհետև Մաշտոցը բերեց բազմաթիվ օրինակներ ու փաստեր և ապացուցեց, որ ներկայիս պայմաններում, երբ հայ ժողովուրդը, ճակատագրի դաժան բերումով, ներքաշված է պարսկական ու բյուզանդական ազդեցության ոլորտները, հետևաբար օտարալեզու քարոզները ոչինչ չեն տա հայ ժողովրդին: Ապա Մաշտոցը իր խոսքն ավարտեց այսպես.

— Ինչպես տեսնում եք, տնրբ հայրեր, մեր նախնիների վառած սրբազան կանթեղը, որն այնքան պայծառ լուսավորում էր մարդկանց հոգիները, այսօր գնալով աղոտանում է, և բացառված չէ, որ այսպես գնալով հետագայում կմարի: Իսկ գալիք սերունդները մեզ կնզովեն այն բանի համար, որ մեր օրոք, մեր ապաշնորհության հետևանքով իրենց չի հասել այդ լույսը: Դրա համար մենք այսօր պարտավոր ենք կյանքի գնով վառ պահել այն: Իսկ դրա միակ միջոցն այն է, որ մենք կարողանանք մարդասեր Աստծու ավետարանական խոսքը մատուցել ժողովրդին նրա մայրենի լեզվով, որի համար անհրաժեշտ է մայրենի լեզվի գիր ու գրականություն, մայրենի լեզվով դպրություն:

Ահա սա է այն դժվարին խնդիրը, որի լուծման համար Հայոց աշխարհի վեհափառ կաթողիկոսը մեզ ամենքիս հրավիրել է խորհրդի:

Մաշտոցն ավարտեց խոսքը և նստեց: Սրահը միանգամից աղվկեց: Ընդհանուր աղմուկի միջից լսվում էին թեր և դեմ կարծիքներ, թերահավատ քրթմնջոցներ ու դժգոհություններ: Կաթողիկոսը մի պահ այդ խոսակցություններին ականջալուր հետևելուց հետո հայացք փոխանակեց Մաշտոցի հետ, կանգնեց տեղում և աջը պարզեց վեր: Սրահն անմիջապես լռեց:

— Սրբազան հայրեր,— շատ հանգիստ ասաց կաթողիկոսը,— երբ ձեզ արդեն հայտնի է մեր այս աշխարհահոգ ժողովի բուն նպատակը, հայտարարում եմ երկու ժամ ընդմիջում: Այդ ընթացքում հանգստացնք, մտքեր փոխանակեք մեզ հուզող հարցի շուրջ, եզրակացությունների հանգեք, ապա կհավաքվենք և կքննարկենք ձեր կարծիքներն ու առաջարկությունները, հետո կգանք մի ընդհանուր եզրակացության ու կորոշենք մեր հետագա անելիքները: Ես հաստատ համոզված եմ, որ մեր այս աշխարհահոգ ժողովը ցանկալի արդյունք կտա:

Ժողովականները, զրուցելով ու վիճելով, խումբ–խումբ թողեցին սրահը:

Երկու ժամ հետո նրանք մեկ մարդու պես վերադարձան և վեհարանի սրահում զբաղեցրին իրենց տեղերը:

— Սիրելի եղբայրներ,— խոսեց կաթողիկոսը,— քանի որ դուք արդեն, թեև կարճ ժամանակով, խորհել ու մտքեր եք փոխանակել մեզ ամենքիս հուզող հարցի շուրջ, հարկ է լսել ձեր կարծիքներն ու առաջարկությունները...

— Վեհափան, թո՛յլ տվեք զեկուցողներին, այսինքն՝ եղբայր Մաշտոցին մի հարց տալ,— ձայն խնդրեց ասորի վարդապետ Բրքիշոն, որը նստած էր ասորի հոգևորականների շարքում՝ Շմուել ասորի եպիսկոպոսի կողքին:

— Խնդրեմ,— ձայն տվեց կաթողիկոսը:

— Տե՛ր Մաշտոց,— քամահրանքով հարց տվեց Բրքիշոն,— իսկական հավատացյալը ո՞վ է. սրտանց աղոթո՞ղը, թե՛ նա, ով աղոթում է ձարտար...

— Իհարկե նա, ով սրտանց է աղոթում,— անմիջապես պատասխանեց Մաշտոցը:— Եթե իրոք այդպես է, էլ ի՞նչ նշանակություն ունի, թե ժողովուրդը ինչ լեզվով է աղոթում,— հարցը շարունակեց Բրքիշոն:

Դատելով նրա հարցադրումից և արտահայտվելու ձևից՝ դժվար չէր նկատել, որ հարցը տրվում է ամբողջ ասորի հոգևորականության կողմից, և տվյալ դեպքում Բրքիշոն նրանց խոսափողն է հանդիսանում: Սահակն ու Մաշտոցը զգացին, որ նրանք պատրաստվել են ընդդիմախոսելու:

— Մո՛րթ հայր,— Մաշտոցը հանգիստ դիմեց Բրքիշոնին,— մենք այստեղ չենք հավաքվել, որ որոշենք, թե հավատացյալներն ինչ լեզվով պիտի աղոթեն, այլ մեր նպատակն է ուղիներ որոնել՝

ժողովրդին ճշմարիտ հավատի բերելու համար: Չէ՞ որ մարդս մինչև չիմանա՝ որն է ճշմարիտ հավատը, դժվար թե սրտանց աղոթի նրան...

Բրքիչոն շփոթված շուրջը նայեց, հայացք փոխանակեց յուրայինների հետ, նստեց տեղում և սկսեց ձեռքի ափով սրբել քրտնող դեմքը:

— Կարելի է, տներ կաթողիկոս, — տեղում կանգնեց ասորի եպիսկոպոս Շմուելը և ձայն խնդրեց:

— Խնդրեմ, — ձայն տվեց կաթողիկոսը:

— Ես միանգամայն համաձայն եմ եղբայր Մաշտոցի հետ, — աշխատեց որքան կարելի է իր խոսքին հանդիսավոր տեսք տալ Շմուել եպիսկոպոսը, — նա հիրավի ճիշտ նկատեց, որ կարևորն ու հիմնականը հավատն է և ոչ թե աղոթքը: Եթե իսկապես մարդը հավատում է, կարևոր չէ, թե նա ինչ ձևով կամ լեզվով կաղոթի, քանզի նա կարող է նույնիսկ աղոթքի իմաստն էլ չհասկանալ, բայց երբ հավատում է, էականը դա է... Ես այս միտքը կարող եմ հաստատել մի լավ օրինակով. այս պարագայում հավատը նման է թանկագին քարի, իսկ թանկագին քարը միշտ էլ թանկագին կմնա՝ անկախ այն բանից՝ քարը գտնվում է նրա արժեքը իմացող վաճառականի մոտ, թե՞ մի շինականի, որը գաղափար չունի նրա արժեքի մասին... Հետևաբար մարդս պարզապես պիտի հավատա... Իմ կարծիքով, այնքան էլ հարկ չկա մտածելու, թե հավատը ինչ լեզվով պիտի քարոզվի: Չէ՞ որ ճշմարիտ հավատը բոլոր դեպքերում էլ ճշմարիտ է... Կներեք, սա իմ կարծիքն է:

— Տեր եպիսկոպոս, — հագիվ զսպելով զայրույթը՝ մեղմ պատասխանեց Մաշտոցը, — իմ կարծիքն էլ այն է, որ եթե թանկարժեք քարն ընկնի նրա արժեքը չիմացող մի շինականի մոտ, ապա նա շատ հանգիստ այն դեռ կշարտի որպես մի անպետք իր...

— Եղբայր իմ, Մաշտոց, — հանդիմանական ձևին անցավ Շմուել եպիսկոպոսը, — մեզ՝ ճշմարիտ հավատի հետևողներին, վայել չէ նման բառերով խոսել հավատի մասին:

— Խոսքը հավատի մասին չէ, տներ Շմուել, — նույն ձևով պատասխանեց Մաշտոցը, — խոսքը քարի մասին է... Իսկ ինչ վերաբերում է հավատին, ես հարկ եմ համարում հենց հիմա Ավետարանից հանել մի քաղվածք սուրբ Հակոբոս առաքյալի ընդհանրական թղթի երկրորդ գլխից, որտեղ ասված է, — այս ասելով՝ Մաշտոցը բացեց իր հատվածը և բարձրաձայն կարդաց. «Եղբայրներ իմ, օգուտն ի՞նչ է,

երթ մեկն ասի, թե հավատ ունի, սակայն գործեր չունենա: Մի՞թե հավատը նրան կկարողանա փրկել... Ո՛վ փուչ մարդ, եթե ուզում ես իմանալ՝ հավատը դատարկ բան է առանց գործերի...»: Տեսնո՞ւմ եք, տեր եպիսկոպոս՝ ինչ է պահանջում հավատացյալից մեր ճշմարիտ հավատի սուրբ Ավետարանը: Այն հավատացյալից նախ գործ է պահանջում, մինչդեռ գործելու համար պետք է իմանալ, և որպեսզի իմանալ, պետք է հասկանալ... Իսկ դուք այստեղ կանգնել ու պնդում եք, թե հասկանալ պետք չէ... Ես ասել եմ և այժմ էլ պնդում եմ Ավետարանի հիշյալ գլխի հետևյալ միտքը,— Մաշտոցը նորից բացեց Ավետարանն ու կարդաց. «Ինչպես որ մեռած է մարմինը առանց հոգու, այնպես էլ մեռած է հավատը առանց գործի»:

Մաշտոցը հանգիստ փակեց Ավետարանը և դրեց գրակալին՝ հայացքը սևեռելով Շմուել եպիսկոպոսի վրա: Վերջինս, պատասխան չգտնելով, վրդովված, առանց որևէ բառ ասելու, նստեց: Սրահն ալեկոծվեց ու աղմկեց: Կաթողիկոսը նորից աջը բարձրացրեց: Սրահը լռեց:

— Սրբազան եղբայրներ, — տիրաբար ասաց կաթողիկոսը, — ես խնդրում եմ՝ առանց կրքեր բորբոքելու, լուրջ մտենաք խնդրին: Ես էլ եմ գտնում, որ հայ ժողովուրդը, որպեսզի լավ ճանաչի և հետևի մարդասեր Աստծու սուրբ հավատին, պետք է և անհրաժեշտ է, որ այն մատուցվի ժողովրդին հասկանալի՝ մայրենի լեզվով: Մենք ձեզ այստեղ ենք ժողովել, որպեսզի դուք ձեր կարելույն չափ մեզ օգնեք հայերեն գիր ու գրականություն ստեղծելու գործում...

Ապա ըստ էության արտահայտվեցին շատ նշանավոր եպիսկոպոսներ ու վարդապետներ, տարիքավոր ու փորձառու տքնողներ, որոնք միահամուռ հավանություն տվեցին մայրենի լեզվով դպրություն ստեղծելու գաղափարին և խոստացան իրենց հնարավորությունների սահմաններում օգնել գործին: Վերջում ասորի հոգևորականներից շատերը նույնպես ելույթ ունեցան և գտան, որ բոլոր դեպքերում հավատի տարածման հարցում մայրենի լեզուն գերադասելի է:

Աշխարհահոգ ժողովը տևեց մինչև ուշ երեկո: Վերջում հոգևոր խորհուրդը որոշեց ստեղծել հայերեն գրեր ունենալու խնդրով զբաղվող հոգևոր հանձնախումբ՝ Մաշտոցի գլխավորությամբ: Այնուհետև Մաշտոցը հանձնախմբի անունից դիմեց ժողովականներին.

— Սիրելի հավատակից եղբայրներ, ձեզանից շատ բան չի պահանջվում: Մեզ տեղեկություններ են հասել, որ Հայոց աշխարհի որոշ տեղերում հայերն իրար հետ նամակագրական կապեր են պահպա-

նում շատերի համար անհասկանալի գրերով: Ձեր խնդիրն է՝ ձեռք բերել նման գրությունները և ուղարկել կամ անձամբ բերել ու հանձնել մեզ: Շատ հավանական է, որ դրանք հայերեն գրեր են, որոնք գործածվել են մեր նախնիների կողմից: Մի խոսքով, դուք ամեն կերպ պետք է օգնեք հանձնախմբին: Ձեզ հաջողություններ եմ ցանկանում:

Մի շաբաթ մնալով մայրաքաղաքում՝ աշխարհահոգ ժողովի մասնակիցները մեկնեցին իրենց տեղերը՝ ոմանք տարակուսանքով ու թերահավատությամբ, ոմանք էլ՝ ոգևորությամբ ու պայծառ հավատով...



## ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԵՐԸ

Վոամշապուհ արքան հայոց զորագնդերով Միջագետքից վերադարձավ ամառնամուտին: Նրա տրամադրությունը բարձր էր: Նախորդ աշնանը Տիգրոնում մահացել էր Քիրմանշահ արքան, և նրա փոխարեն Պարսկաստանի գահը ժառանգել էր նրա կրտսեր եղբայրը՝ Հազկերտ Առաջինը: Իր գահակալության հենց սկզբից Հազկերտը, խորացնելով իր եղբոր՝ Քիրմանշահի արտաքին քաղաքականությունը, բազմաթիվ արքայական վավերաթղթերով ու հրովարտակով ամրապնդեց Պարսկաստանի ու Բյուզանդիայի բարիդրացիական հարաբերությունները: Բացի այդ, նա իր ներքին քաղաքականությունը սկսեց պարսիկ զրադաշտական հոգևորականության և կենտրոնախույս ազնվականության դեմ անզիջում պայքարով: Իսկ քրիստոնյաներին ոչ միայն չէր հալածում, այլև նրանց նկատմամբ ցուցաբերած հանդուրժողական քաղաքականություն: Թեև նա վարած նման ներքին քաղաքականության համար հենց սկզբից ստացավ «Մեղավոր» մականուն, բայց կարողացավ զսպել երկրի ներքին ամբարիշտ ուժերը և տևական ու կայուն խաղաղություն ստեղծել արտաքին հարաբերություններում: Այս արտաքին բարենպաստ պայմանները, ըստ էության, վերաբերում էին նաև Հայոց աշխարհին, որը տասնամյակներ քաշող կռիվներից վերջնականապես շունչ քաշեց և անցավ խաղաղ շինարարական աշխատանքի: Վոամշապուհ արքայի տրամադրությունը բարձր էր հատկապես այն բանի համար, որ Հազկերտ Մեղավորը իր գահակալության ժամանակ բարի խոսք էր ասել պարսկական գահին հա-

յերի հավատարմության մասին՝ հանձին Վռամշապուհ արքայի, և խոստացել էր Հայաստանից ետ կանչել պարսիկ հազարապետ Առավանին և Հայոց աշխարհի հազարապետության պաշտոնը թողնել հայերին:

Վռամշապուհի վերադարձը մայրաքաղաքում նշանավորվեց մեծ հանդեսներով ու շքեղ տոնախմբություններով: Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևն ու հազարապետ Առավանն ամեն ինչ արել էին, որ այդ տոնախմբությունները վերածվեին հայ-պարսկական բարեկամական ցույցի: Պարսկական, հունական ու ասորական լեզուներով գրվեց եռալեզվյան շնորհավորանքի ուղերձ և ուղարկվեց Հազկերտին՝ ի նշան նրա գահակալության: Չմոռանանք, որ գահակալության օրերին մի այսպիսի հատուկ ուղերձ ուղարկել էր Սահակ Պարթևը:

Թեև Միջագետքում գտնվելիս Վռամշապուհ արքան անընդհատ տեղեկություններ էր ստանում Հայաստանում կատարվող իրադարձությունների մասին, բայց մայրաքաղաք գալով՝ նա ցանկացավ ժամ առաջ իմանալ իրեն հուզող շատ հարցերի լուծման ընթացքի մասին: Նա, անշուշտ, տեղյակ էր կաթողիկոսի կողմից հրավիրվելիք աշխարհահոգ ժողովի մասին: Բայց նա նույնքան էր տեղյակ, որքան ժողովին մասնակցող յուրաքանչյուր եպիսկոպոս կամ վարդապետ: Բայց թե ինչ էր այդ համաժողովի բուն նպատակը, ինքը այդ մասին հաստատ կիմանար միայն համաժողովի կազմակերպիչներ Սահակից և Մաշտոցից...

Թագավորը պալատ էր հրավիրել նրանց և անհամբեր սպասում էր նրանց գալուն: Թեև զով առավոտ էր, թագավորին թվում էր, թե օրը տոթ է, ուստի մոտեցավ և բացեց գահասենյակի լուսամուտը: Այդ պահին դռների մեջ հայտնվեց բարապանը և հայտնեց, որ վեհափառն ու Մաշտոցը նախասրահում սպասում են իր կանչին: Թագավորը կարգադրեց ներս հրավիրել: Սահակը հագել էր կաթողիկոսի տոնական զգեստը, իսկ Մաշտոցը՝ տքնողի սև մետաքսյա շորջառ: Երբ նրանք ներս մտան, թագավորը գնաց ընդառաջ: Սահակն ու Մաշտոցը հարգալից ողջունեցին արքային: Արքան նախ խորը ակնածանքով սեղմեց կաթողիկոսի ձեռքը, ապա մտերմաբար ձեռքը մեկնեց Մաշտոցին և կատակեց.

— Հը՛, լսել եմ, որ Գողթնում հրաշքներ ես գործում, ճիշտ է:

— Դե, արքա՛, որ ասում են, երևի մի բան եղել է,— ժպտաց Մաշտոցը:

— Չէ, շատ բան է եղել: Դու ապրես,— ասաց թագավորը՝ մտերմաբար ձեռքը դնելով նրա ուսին,— լավ ես սկսել, շարունակիր: Սրանից հետո քո ձեռնարկումների մեջ դու կստանաս և իմ անմիջական օգնությունը:

— Շնորհակալ եմ, արքայ:

— Այդ ես պետք է շնորհակալ լինեմ, որ Սահակի և քեզ նման աջակիցներ ունեմ:

— Սահակի նման՝ այո: Բայց ես ինչ...

— Խելքդ գլուխդ հավաքիր, Մեսրոպ: Սահակի ամբողջ հույսը քեզ վրա է,— մտերմաբար հանդիմանեց կաթողիկոսը:

— Էլի՞ հրաման,— կատակի տվեց Մաշտոցը:

— Հրաման է, թե՛ խնդրանք, չգիտեմ, բայց որ առ այսօր ուսիդ դրած լուծը պատվով ես քաշում, դա արդեն գիտի ամբողջ Հայոց աշխարհը:

Արքան ձեռքով ցույց տվեց գահամերձ բազկաթոռները և նրանց առաջարկեց նստել: Սահակն ու Մաշտոցը գլխի խոնարհումով շնորհակալություն հայտնեցին և սպասեցին, որ նախ թագավորն ինքը նստի գահին: Սակայն թագավորը չնստեց գահին: Նա մոտեցավ ու նստեց մի բազկաթոռի վրա, որը գտնվում էր այն բազկաթոռների շարքում, որոնց վրա նստել առաջարկեց Սահակին ու Մաշտոցին: Սահակն ու Մաշտոցը նստեցին նրա կողքին:

— Տե՛ր կաթողիկոս,— ասաց արքան,— այսօր գահին նստելով՝ ես ո՛ւմ պիտի զարմացնեմ՝ քե՞զ՝ Հայոց Վեհափառիդ, թե՛ Մաշտոց տքնողին, որը իր ամբողջ կյանքը նվիրաբերել է հայրենյաց գործին: Ինձ թվում է, որ ներկա պայմաններում ավելի պատվաբեր է ձեր շարքում նստել, քան թե գահին, մանավանդ որ այսօրվա մեր զրույցի համար այսպես ավելի հարմար է:

— Արքայ, Ձեր գահին նստելը շատ կօգնի մեր գործին: Առանց ձեզ մեզ համար շատ դժվար կլինի,— ասաց կաթողիկոսը:

— Վեհափառ, այսքան ժամանակ, որ ես գահին նստած չեի, ինչ էր պակասում Հայոց աշխարհից,— պատասխանեց արքան՝ դեմքին տալով մի այնպիսի արտահայտություն, որ թվաց, թե որևէ դառը բան է կուլ տալիս:

— Տե՛ր արքա, այդպես մի՛ խոսեք: Որպեսզի ազգը կատարյալ լինի, հարկ է, որ ունենա ի՞ր գահը, ի՞ր թագավորը, ի՞ր պետությունը...

— Շնորհակալ եմ, տե՛ր կաթողիկոս, մեծարանքի համար,— ասաց թագավորը,— սակայն Դուք էլ շատ լավ գիտեք, որ Ձեր ասածը մասամբ է ձշմարիտ...

— Ինչու՞:

— Չգիտեմ: Ինձ այդպես է թվում,— տխրեց թագավորը:

— Արքան ճիշտ է ասում,— միջամտեց Մաշտոցը:

— Օրինակ,— հարցրեց կաթողիկոսը:

— Օրինակ այն,— հանգիստ ասաց Մաշտոցը,— որ թույլ երկրի թագավորը որքան էլ խելոք լինի՝ մնում է թույլ, իսկ հզոր երկրի թագավորը միշտ էլ հզոր է՝ անկախ իր խելքից...

— Ա՛յ, տեսնու՞մ եք, տե՛ր կաթողիկոս, դա է ճշմարտությունը: Մեարոպը լավ օրինակ բերեց:

— Ներեցե՛ք, տե՛ր արքա, եթե Մաշտոցն իր միտքը պնդում է անվերապահորեն, ես նրա հետ համաձայն չեմ:

— Տե՛ր կաթողիկոս,— ասաց Մաշտոցը ժպտալով,— վերապահությունը կա: Ես հասկանում եմ Ձեր միտքը: Դուք ուզում եք ասել, որ միևնույն երկրի թագավորներից մեկը կարող է հզոր լինել, իսկ մյուսը՝ թույլ: Հզորը կարող է երկրին օգուտ բերել, իսկ թույլը՝ վնաս: Ես այդ հարցում լրիվ համամիտ եմ Ձեզ հետ: Բայց համոզված եղեք, որ ինչպես թույլ թագավորը, այնպես էլ հզորը թագավորելիս կամա թե ակամա ենթարկվում են այն երկրի ժողովրդի կամքին, որին կառավարում են իրենք: Երկրի գործերի ընթացքը կարգավորում է ժողովրդի կամքը: Ժողովրդի ընթացքը կարգավորում է ժողովրդի կամքը: Ժողովրդի կամքն է դառնում օրենք: Թագավորները միայն այդ օրենքի պաշտպաններն ու կիրառողներն են: Եվ վա՛յ այն թագավորին, որը չկարողացավ կամ չցանկացավ կիրառել այդ օրենքները... Բայց նորից եմ պնդում, որ թույլ ժողովուրդը հզոր թագավոր ունենալ չի կարող... Խելոք թագավորները հզորանում են՝ հզորացնելով իրենց ազգը: Թագավորի ուժը նրա ժողովրդի հզորության մեջ է...

— Այո՛, դժբախտաբար հայոց ճակատագիրը բազմաթիվ փաստերով դա է ապացուցում,— տխուր ասաց թագավորը և մտքերի մեջ ընկավ:

Կաթողիկոսը, տեսնելով, որ խոսակցության նյութը վշտացնում է թագավորին, դիմախաղով հասկացրեց Մաշտոցին՝ խոսակցության նյութը փոխել: Մաշտոցը գլխի շարժումով համաձայնության նշան տվեց: Մինչ Սահակն ու Մաշտոցը հայացքներ էին փոխանակում, թագավորը սթափվեց իր մտքերից և միանգամից զվարթ տեսք ընդունելով՝ դիմեց նրանց.

— Այժմ եկե՛ք անցնենք մեր բուն նյութին: Տեսնե՛մ՝ ինչով կարող եք ուրախացնել ինձ:

— Տէր արքա,— խոսեց կաթողիկոսը,— առայժմ շոշափելի արդյունքներ չկան, բայց հոգուս մեջ անընդհատ ինչ—որ լուսավոր հույս է բոցկլտում: Միշտ ինձ թվում է, որ շուտով հրաշք է կատարվելու, որ մեր «Հող հայրենին» ինչ—որ հրաշքով կուծեղանա:

— Ամեն,— ասաց թագավորը:

Այնուհետև կաթողիկոսն ամենայն մանրամասնությամբ պատմեց աշխարհահոգ ժողովի մասին և հույս հայտնեց, որ իրենց ջանքերն անպայման պտուղներ կտան:

— Տէր արքա,— վերջում ասաց նա,— իմ և Մաշտոցի հույսն այն է, որ երկրով մեկ ցրված մեր հոգևորականները ձեռք կբերեն և մեզ կուղարկեն այն գաղտնագրերը, որոնցով շատ հայեր նամակագրական կապ են պահպանում միմյանց հետ:

— Եթե ձեր ամբողջ մտահոգությունն այդ է,— հանգիստ ասաց թագավորը,— ես արդեն մասամբ այդ մասին հոգացել եմ: Բայց ափսոս, որ չկարողացա հետս բերել...

Սահակն ու Մաշտոցը հանկարծակիի եկան: Նրանք գիտեին, որ թագավորը սեփական գրեր ունենալու հարցում համախոհ է իրենց, բայց որ անձամբ կգրադվի դրանով, արդեն անսպասելի էր:

— Որտե՞ղ են հիմա այդ գրերը,— անհամբերությամբ հետաքրքրվեց Մաշտոցը:

— Ցավոք սրտի, հեռու են,— ափսոսանք հայտնեց թագավորը,— բայց ես անպայման բերել կտամ:

— Ես անձամբ կգնամ այդ գրերի ետևից: Ես գիշեր ու ցերեկ կգնամ, աշխարհի որ ծայրում էլ լինեն՝ ես այդ գրերը Հայաստան կբերեմ: Տէր արքա, Դուք միայն ասե՛ք՝ որտեղ են դրանք,— անհամբերությունից վառվում էր Մաշտոցը:

— Դուք, տեր արքա, անձամբ տեսնել եք այդ գրերը,— հարցրեց կաթողիկոսը:

— Դժբախտաբար, ո՛չ,— ասաց թագավորը,— բայց այդ գրերի գոյության մասին այնպիսի հավաստի տեղեկություններ տվեցին, որ ես համոզված եմ՝ դրանք կան:

Ափսոս, որ հանգամանքներն աննպաստ եղան գրերը անձամբ ձեռք բերելու համար:

— Խնդրում եմ, տեր արքա,— ասաց Մաշտոցը,— պատմե՛ք մանրամասն:

— Երկար պատմելու բան չկա: Ինչպես արդեն ձեզ հայտնի է, երբ Հազկերտը գահ բարձրացավ, և Միջագետքում հարցերը խա-

ղաղությանը կարգավորվեցին, մենք Տիգրանից հրաման ստացանք՝ ետ քաշվել Աղձնիք և սպասել լրացուցիչ հրամանի: Մեր այրուձին կայանեց Աղձնիքի Արգան քաղաքում: Մենք շուրջ մեկ ամիս անորոշ կացությամբ սպասում էինք: Այդ ընթացքում ես ծանոթացա Հաբել անունով մի հարուստ հրեայի հետ, որը ստանձնել էր մեր բանակի պարենավորման գործը: Շատ խելոք և գրագետ մարդ էր: Մենք շատ մտերմացանք: Ես նրան պատմեցի մայրենի լեզվով գրեր ունենալու մեր մտահոգության մասին: Եվ մեծ եղավ իմ զարմանքը, երբ նա անմիջապես հայտնեց, որ Աղձնիքի Դանիել եպիսկոպոսի գրադարանում մի մագաղաթ կա, որը, եպիսկոպոսի վկայությամբ, գրված է հայերեն: Ես ցանկացա ունենալ այդ մագաղաթը: Հաբելն ինձ հայտնեց, որ Դանիելն ինչ-որ գործերով մեկնել է Եդեսիա, և ես անհամբեր սպասում էի նրա վերադարձին: Բայց մինչև նա կվերադառնար, մեզ կանչեցին Տիգրան, և ինձ չհաջողվեց վերցնել այդ գրերը: Ահա այն ամենը, ինչ ես գիտեմ:

— Տե՛ր արքա, Դուք մի քանի օրում, ձեր ծանր պարտականությունների հետ, մեր ձեռնարկած գործի համար ավելի շատ բան եք արել, քան մենք, որ արդեն երկու տարի է՝ զբաղվում ենք բուն խնդրով,— ոգևորված ասաց Մաշտոցը՝ խանդաղատանքով նայելով թագավորին:

— Հապա ի՞նչ եք կարծում, տե՛ր Մաշտոց,— կատակի տվեց թագավորը,— քեզ թվում էր, թե ես քո կաթողիկոսի նման ձեռքերս ծալած կնստեմ, մինչև մեկը սկուտեղի վրա ինձ մայրենի լեզվի գրե՛ր մատուցի:

— Ինձ մնում է միայն փառաբանել Տիրոջը և գոհ լինել իմ բախտից, որ Հայոց աշխարհին այսօր ունի Ձեզ նման թագավոր, Վռամշապուհ արքա: Ես այսուհետև չեմ նստի ձեռքերս ծալած, այլ գիշեր-ցերեկ բազկատարած կաղոթեմ Աստծուն, որ Դուք շատ երկար բազմեք հայոց գահին,— ասաց կաթողիկոսը:

— Ամեն,— նորից կատակեց թագավորը:

— Տե՛ր արքա, իսկ Հաբելը չասանց, թե որտեղից է այդ մագաղաթն ընկել Դանիել եպիսկոպոսի գրադարան,— հարց տվեց Մաշտոցը,— կամ ինչու է Դանիելը պնդել, որ դրանք անպայման հայկական գրեր են. դրանք ի՞նչ տեսք ունեն...

— Հաբելի վկայությամբ՝ եպիսկոպոսը մագաղաթը գնել է մի պարսիկ թափառաշրջիկից Ամիդի շուկայում: Սկզբում չի իմանում, թե դրանք ինչ գրեր են: Վաճառողից պահանջում է բացատրություն

տալ: Վերջինս հրաժարվում է բացատրություն տալուց՝ պատճառաբանելով, թե ինքը գտել է: Բայց երբ Դանիելը խորամանկում է՝ ասելով, որ ինքը չի գնի այդ մագաղաթը, եթե ստույգ չիմանա, թե որտեղից է այն, թափառաշրջիկը կցկտուր պատմում է, որ իր ընկերներից մեկը այն գողացել է մի հայ վաճառականից: Եվ Դանիելը չնչին գնով թափառաշրջիկից վերցնում է մագաղաթը: Երբ վերադառնում է Աղձնիք, սկսում է հետազոտել մագաղաթը՝ նրա բառերի մեջ հայկական մտքեր փնտրելով: Կարձ ժամանակում նրան հաջողվում է կարդալ մագաղաթը: Նա պարզում է, որ այդ գրությունը անծանոթ նշագրերով գրված հայերեն նամակ է: Քանզի այդ գրերը նման չեն լինում իր իմացած բազմաթիվ գրերին, Դանիելը որոշում է, որ դրանք հայկական գրեր են: Իսկ թե դրանք ինչ տեսք ունեն, Հաբելն ասաց, որ ինքը չի տեսել: Ահա այն ամենը, ինչ կարող եմ ասել ձեզ:

— Այդ գրերը անպայման պետք է բերել,— ասաց Մաշտոցը և ակամա կանգնեց տեղում մի այնպիսի վճռական ձևով, որ կարծես թե մոռացել էր թագավորի ու կաթողիկոսի ներկայությունը:

Թագավորն ու կաթողիկոսը խորհրդավոր նայեցին իրար, և իրենք նույնպես կանգնեցին: Ապա թագավորը դանդաղ մոտեցավ գահին, նստեց և մի պահ խորասուզվեց մտքերի մեջ:

— Ի՞նչ է Ձեզ մտահոգում, տե՛ր արքա,— գրեթե միաբերան հարցրին կաթողիկոսն ու Մաշտոցը:

— Իսկ եթե Դանիել եպիսկոպոսը հրաժարվի՞ այդ մագաղաթը մեզ տալուց,— կասկած հայտնեց թագավորը:

— Մենք Դանիելին կտանք նրա ուզած գինը,— վճռաբար ասաց կաթողիկոսը:

— Այնպես եք խոսում, տե՛ր կաթողիկոս,— ժպտալով ասաց արքան, որ կարծես Դանիելը Վաղարշապատում է, և մեզ մնում է նրա հետ առևտուր անելը: Չէ՛ որ մինչև Աղձնիք գնալ-վերադառնալը ոչ թե օրերի, այլ շաբաթների ճանապարհ է՝ լի ամեն տեսակ փորձություններով: Ո՞վ հանձն կառնի այդ գործը՝ ինչպես որ հարկն է գլուխ բերելու համար:

— Կա այդ մարդը, տե՛ր արքա. մնում է միայն հանձնարարել,— վճռաբար խոսեց Մաշտոցը:

— Դարձյալ ի նկատի ունես քե՞զ,— խոժոռվեց թագավորը,— ի՞նչ է, դու մայրաքաղաքում գործեր չունեն:

— Ես էլ քո գնալուն համաձայն չեմ,— խստորեն ասաց կաթողիկոսը,— չէ՛ որ դու, գործի նախաձեռնող լինելուց բացի, նաև գործի

կազմակերպման ղեկավարն ես, եթե ամեն տեղ միայն ինքդ գնաս, ապա հիմնական գործերդ ինչպե՞ս կանես. ինձ թվում է՝ ավելի լավ կլինի, որ մի ուրիշ ձեռնահաս մարդ գնա:

— Նախ, եթե գոյություն ունեն այդ գրերը, — ինձ կներեք, տներ կաթողիկոս, դրանց ձեռք բերելն առայժմ մեր ամենահիմնական գործն է, — հանգիստ ասաց Մաշտոցը, ուստի, եթե պահանջվի, ես էլ կգնամ, բայց իմ խոսքն ուրիշ մարդու մասին է, որը, իմ կարծիքով, ձեռնունայն չի վերադառնա:

— Ո՞ւմ ի նկատի ունեք, — հարցրեց թագավորը, — ես ճանաչո՞ւմ եմ:

— Այո՛, տներ արքա, Դուք նրան գիտեք, նրան լավ գիտի նաև Վեհափառը, իսկ առավել լավ գիտեմ ես. Վահրիճ Խաղունին է իմ թեկնածուն: Նա ոչ միայն քաջ ռազմիկ, այլև ճարպիկ դիվանագետ է:

— Այո՛, Վահրիճը կբերի, — հաստատեց կաթողիկոսը, — բայց ափսոս է տղան, շատ եք չարչարում:

— Ի՞նչ է, մենք չե՞նք չարչարվում, թե՛ նրա արյունը կարմիր է մերից, — ձայնը բարձրացրեց Մաշտոցը, — յուրաքանչյուր հայ, եթե սիրում է իր հայրենիքը, պարտավոր է նվիրվել նրան: Առանց նվիրումի ոչինչ չի ստեղծվում:

Կաթողիկոսը խեթ նայեց Մաշտոցին, որով ուզում էր ասել, թե չի կարելի այդքան բարձր խոսել թագավորի ներկայությամբ: Մաշտոցը, զգալով իր սխալը, մեղավորի պես գլուխը խոնարհեց: Թագավորը ներողամիտ ժպտաց:

Տիրեց լռություն:

— Մամիկոնյանը մնում է Մամիկոնյան, — Մաշտոցին անհարմար դրությունից դուրս բերելու համար կատակեց կաթողիկոսը:

— Էհ, քո քեռիներն են, ո՞ւմ ես մեղադրում, — կատակեց նաև թագավորը:

— Իմիջիպայլոց, տներ արքա, դուք՝ Արշակունիներդ, նույնպես իմ քեռիներն եք: Մի՛ մոռացեք, որ տատս՝ Ներսես Մեծի մայրը, Տիրան թագավորի աղջիկն էր՝ Արշակ Երկրորդի քույրը, իսկ մեծ տատս՝ Տիրան թագավորի քույրը:

— Ինչքան էլ հպարտանաս քեռիներովդ, Սահակ, բայց և այնպես, քո մեջ ավելի խոսուն է Սուրեն Պահլավների արյունը, որը ձեզ՝ Պահլավներիդ, անընկճելի կամք ու աներևակայելի լրջախոհություն է պարգևում, — մտերմաբար ու մի տեսակ բարի նախանձով ասաց թագավորը:



Մաշտոցը հոնքերի տակից սիրալիր նայեց Սահակին:

— Հը՛, դուրդ չեկա՛մ, տեր Մամիկոնյան, որ արքան մեզ՝ Պահլավներիս, գովեց, — ուրախ կատակեց կաթողիկոսը:

— Չէ՛, ինչո՛ւ: Ես էլ այդ հարցում համամիտ եմ արքայի հետ, — կիսանեղացած ասաց Մաշտոցը, — հիմա ինձ ուրիշ միտք է գրադեցնում: Ես որոշեցի վաղն անհապաղ անձամբ մեկնել Աղձնիք՝ Դանիել եպիսկոպոսի մոտ՝ գրերի ետևից: Եթե նրան այնտեղ չգտնեմ, անպայման կգնամ Եդեսիա: Միայն ես կուզեի իմանալ, տե՛ր արքա, Դուք դրա համար ինձ որևէ պաշտոնական գրություն կտա՞ք...

— Ո՛չ, տեր Մաշտոց, Դուք ինքնակամ ոչ մի տեղ չեք գնա: Քանի դեռ ես եմ երկրի թագավորը, գործերի կարգադրողը ես եմ: Դանիել եպիսկոպոսի մոտ կգնա Վահրիճ Խաղունին: Այժմ որտե՛ղ է նա, — թեև մտերմաբար, բայց վճռական ասաց թագավորը, — վաղը նրան կանչե՛ք ինձ մոտ, ես մի հարց կտամ, եթե պատասխանեց՝ ինքն էլ կգնա:

— Վահրիճը վեհարանի գրադարանում հին գրքեր ու գրություններ է թերթատում, — միջամտեց կաթողիկոսը, — նա ամբողջ օրերով գրադարանից դուրս չի գալիս: Հիմա էլ կարող ենք այստեղ կանչել:

— Այժմ այնտե՛ղ է, — հարցրեց թագավորը Մաշտոցին:

— Այո՛, — վստահ ասաց Մաշտոցը:

Թագավորը քաշեց կոչնակը: Դռների մեջ երևաց բարապանը: Թագավորը կարգադրեց՝ անմիջապես գրադարանից իր մոտ կանչել Վահրիճ Խաղունուն: Բարապանը զգուշորեն ծածկեց դուռը և ետ գնաց:

— Վահրիճը կամավոր է տքնող դարձել, — հարցրեց թագավորը Մաշտոցին:

— Տե՛ր արքա, — ծիծաղեց կաթողիկոսը, — Մաշտոցի տքնողներից շատերն իմ տքնողների նման չեն, նրանք միայն սքեմով են տքնող...

— Այսինքն, — չհասկացավ թագավորը:

— Նրանք Մաշտոցի նախկին զինվորներն են, որոնք նույն նվիրվածությամբ պաշտպանում են հայրենյաց շահերը: Ժամանակի պահանջով նրանք միայն գեներն են փոխել՝ սրի փոխարեն այսօր խաչ են կրում, — բացատրեց կաթողիկոսը:

— Ուրեմն, եթե անհրաժեշտ լինի, ինչպես Դուք եք ասում՝ եթե ժամանակը պահանջի, նրանք նորից սուր կկրեն, — հարցրեց թագավորը:

— Հարցրե՞ք նրանց գորավարին,— ասաց կաթողիկոսը՝ գլխով ցույց տալով Մաշտոցի կողմը:

Թագավորը հարցական նայեց Մաշտոցի կողմը: Մաշտոցը գեղեցիկ ու խորհրդավոր մի ժպիտով հաստատեց կաթողիկոսի խոսքերը:

— Հիմա Վահրիճը Դանիել եպիսկոպոսին կներկայանա որպես ո՞վ,— հարցրեց թագավորը:

— Միմիայն որպես տքնող,— պատասխանեց Մաշտոցը:

Նա ուզում էր էլի ինչ-որ բան ասել, բայց դռան մեջ երևաց բարապանը և հայտնեց թագավորին, որ նախասրահում Վահրիճ Խաղունին սպասում է թագավորի հրամանին:

— Թող ներս գա,— կարգադրեց թագավորը:

Վահրիճը գահասենյակ մտավ՝ անորոշ մտքերով պաշարված: Նա մինչև պալատ գալը չզիտեր թագավորի կանչի պատճառը: Սակայն երբ գահասենյակում տեսավ կաթողիկոսին ու Մաշտոցին, սրտապնդվեց: Նա խորը ակնաձանքով խոնարհվեց թագավորին և հազիվ լսելի ասաց.

— Բարի՛ գալուստ, տե՛ր արքա:

— Բարով տեսանք, տղաս,— գորովանքով ասաց թագավորը և մտերմաբար մեկնեց ձեռքը:

Վահրիճը մոտեցավ և ամոթխած ու քաշվելով՝ սեղմեց թագավորի մեկնած աջը: Տքնողի սև մետաքսյա սքեմը և վզից կախված արծաթյա խաչը յուրահատուկ խորհրդավորություն էին տալիս բարձրահասակ ու թիկնեղ, սևագանգուր մազ ու մորուքով երիտասարդին: Նա կանգնել էր գահի առաջ՝ զգաստ, ինչպես զինվորը՝ շարքում: Թագավորը երկար դիտում էր նրան:

— Քանի՞ տարեկան ես,— հարցրեց թագավորը:

— Աշնանը քսանյոթս կլրանա,— առանց դիրքը փոխելու պատասխանեց Վահրիճը:

— Ամուսնացած ես:

— Դեռ ոչ:

— Հարսնացու ունես:

— Երդում եմ տվել մեկին:

Այս պատասխանի վրա Վահրիճը պատանու նման շիկնեց: Նրա սիրտը դողաց այն գիտակցությունից, որ եթե հանկարծ թագավորը հարցնի աղջկա ով լինելու մասին, ինքը չի կարողանա ստել և կբացահայտի իր սրտի ամենանվիրական գաղտնիքը, այն էլ՝ Սահակի ու Մաշտոցի ներկայությամբ: Նա դեռ ուշքի չէր եկել, երբ հնչեց այն հարցը, ինչին սպասում էր.

— Ու՞մ տոհմից է օրիորդը,— շարունակեց հարցնել արքան:

— Վահրիճը մի պահ վարանեց. չգիտեր՝ ինչ պատասխանի: Շնչելը դժվարացավ: Նրան թվաց, թե գլուխը պտտվում է, և ինքը հիմա ուր որ է կընկնի: Ներքուստ սրտապնդեց իրեն, որպեսզի կարողանա մնալ ոտքի վրա: Ներկաները նկատեցին, թե ինչպես նրա ձակատը պատվեց քրտինքի մանր կաթիլներով:

— Վահրիճ, սթափվիր,— օգնության հասավ Մաշտոցը,— այն, ինչ դու գաղտնիք ես համարում, վաղուց հայտնի է ինձ և շատերին: Համարձակ ասա՛:

Վահրիճը նայեց Մաշտոցին, սրտապնդվեց և դառնալով դեպի թագավորը՝ մի կերպ արտասանեց.

— Մամիկոնյան տոհմից է, տե՛ր արքա,— Վահրիճին թվաց, թե այդ բառերի հետ մի շատ ծանր բեռ իր ուսերից ցած գցեց:

— Ահա թե ինչ,— ուրախ բացականչեց թագավորը և նայեց Մաշտոցի կողմը,— ու՞մ դուստրն է:

— Մեծ եղբորս, տե՛ր արքա, Վահրամի աղջիկն է,— Վահրիճի փոխարեն պատասխանեց Մաշտոցը,— եթե Վահրիճը իրեն հանձնարարվելիք այս գործը հաջողությամբ գլուխ բերի, ես խոստանում եմ այս աշնանը գլուխ բերել նրանց հարսանիքը:

— Ես էլ խոսք եմ տալիս անձամբ պսակել,— ասաց կաթողիկոսը:

— Իսկ ես քավոր կդառնամ, իհարկե, եթե հարսնացուն լավիկն է,— կատակեց թագավորը:

— Արժե, տե՛ր արքա,— կատակեց Մաշտոցը՝ բուրբ վեր տնկելով,— հավատացած եղեք, որ սարսափելի սանամեր կունենաք:

Բոլորն էլ ուրախ ծիծաղեցին:

Թագավորի թույլտվությամբ Մաշտոցը Վահրիճին բացատրեց գործի էությունը: Վահրիճը մեծ խանդավառությամբ ու առանձնապես կտրուկ հանձն առավ՝ կատարելու իրեն հանձնարարված այդ դժվար ու պատասխանատու, բայց հայրենաշեն գործը:

— Այնուամենայնիվ, տե՛ր Խաղունի,— ասաց թագավորը,— Ձեր նվիրվածությունը հայրենիքին անհամեմատ մեծ է: Բայց երբ նվիրվածությունը չի իրականացվում խելամիտ գործելակերպով, երբեմն արդյունքը գոհացուցիչ չի լինում: Այնուամենայնիվ, ես կուզեի իմանալ, թե Դուք ինչպես եք պատկերացնում այս խնդրում Ձեր գործելակերպը:

— Գործելու նախաձեռնությունը ի՞նձ է թողնվում,— հարցրեց Վահրիճը:

— Միանգամայն,— պատասխանեց թագավորը:

— Թույլ կտամք մի քիչ մտածեմ:

— Ինչքան ժամանակ է Ձեզ պետք:

— Շատ քիչ: Ես հիմա կասեմ:

Վահրիճը մի պահ խորհելուց հետո դարձավ թագավորին.

— Տեր արքա, թոյլ տվեք ասել:

— Այդքան շոտ,— հարցրեց թագավորը:

— Շուտ չէ, տեր արքա,— ասաց Վահրիճը,— մենք այդ կնճռոտ խնդիրը արդեն երկար ժամանակ է, որ ուզում ենք լուծել, բայց մեզ չի հաջողվում, քանզի հարմար տարբերակ չի եղել: Եվ ասիա Դուք առաջադրել եք այդ հարմար տարբերակը: Մեզ մնում է փորձել և այդ: Թույլ կտամք:

— Խոսիր:

— Ես Դանիել եպիսկոպոսին պիտի ներկայանամ որպես տքնող. դա խիստ անհրաժեշտություն է, քանզի գործը, որին այդքան ջանադրորեն ձեռնամուխ ենք եղել մենք, «զուտ» կրոնական բնույթ ունի: Հետևաբար ես պետք է Դանիելին ներկայանամ որպես հայոց կաթողիկոսի պատվիրակ: Դրա համար ես պետք է ունենամ Դանիել եպիսկոպոսին Վեհափառի կողմից գրված ու նրա կնիքով կնքված նամակ, որտեղ մանրամասն բացատրված կլինի մայրենի լեզվով գրի նշանակության մասին՝ Քրիստոսի սուրբ հավատը ժողովրդի մեջ ամրապնդելու համար: Ուստի ես չեմ գնա մենակ, ինձ հետ կվերցնեմ 7-10 մարդուց բաղկացած տքնողների խումբ: Ես Հաբելին էլ կներկայանամ որպես տքնող, բայց այս անգամ՝ որպես տեր արքայի պատվիրակ ինձ մոտ ունենալով արքայի կնիքով կնքած հրովարտակ, որի միտքը պետք է հավաստի, որ այն գրվել է դարձյալ կաթողիկոսի խնդրանքով... Տեղում ծագած խնդիրների մասին կհոգանք ըստ էության: Սա է մոտավորապես իմ ծրագիրը:

— Ձեր կարծիքը,— տեր կաթողիկոս,— հարցրեց թագավորը:

— Ինձ մնում է միայն օրհնել այն ժամը, որ Հայոց աշխարհին այսպիսի պայծառամիտ զավակներ է պարգևել, և տալ նրան այն ամենը, ինչ նա կպահանջի:

Մաշտոցի դեմքը ուրախությունից ճառագում էր: Վահրիճը նայեց նրան և քաջալերվեց:

— Ուզում եմ իմանալ նաև Ձեր կարծիքը, տեր Մաշտոց,— ասաց թագավորը:

— Տեր արքա, քիչ առաջ, երբ Դուք ցանկացաք իմանալ այս երիտասարդի հարսնացուի ով լինելը, շատ լավ նկատեցիք, որ ամաչե-

լուց քիչ էր մնում՝ ուշաթափվեր: Նա իր ծրագրի մեջ նույնպես ամաչկոտություն ցուցաբերեց, որը կարող է ձևկատագրական լինել: Չէ՞ որ Հաբելը կամ թեկուզև Դանիել եպիսկոպոսը կարող են նաև դրամ պահանջել: Ուրեմն նա իր հետ պետք է վերցնի նաև բավարար քանակությամբ դրամ: Նա իր ծրագրում բաց թողեց ևս մի շատ կարևոր հանգամանք, որը նույնպես կարող է ձևկատագրական լինել: Ինչպես մենք արդեն գիտենք, մեզ համար այդքան թանկ մագաղաթը մի անգամ արդեն հափշտակվել է ավագակների կողմից: Իսկ ի՞նչ երաշխիք կա, որ այն երկրորդ անգամ չի հափշտակվի մեր այս հերոսի 7-10 մարդուց բաղկացած խմբի կողմից: Ես առաջարկում եմ գրել նաև արքայական հրովարտականեր բոլոր այն նախարարներին ու իշխաններին, որոնց գավառներով անցնում են Վահրիձն ու նրա տքնողները: Այդ հրովարտակաների համաձայն՝ նրանք պետք է խստագույն պատասխանատվությամբ ապահովեն տքնողների ուղու անվտանգությունը: Այդ հրովարտակաների երկրորդ նշանառությունը պակաս կարևոր չէ, քան առաջինը: Հրովարտականերում պետք է նշվի, թե տքնողներն ինչ նպատակով են մեկնում Ասորիք: Դրանով մենք ամենքին հայտնաձև կլինենք, որ ասորի քրիստոնյա հոգևոր հայրերը գտել են հայերեն գրեր և սիրով տրամադրում են մեզ: Վահրիձի գնալուց առաջ և հետո նրա առաքելության մասին պետք է պարզապես խոսվի նաև մայրաքաղաքում: Իսկ դա նշանակում է, որ մենք շահել ենք մի մեծ ձևկատամարտ, քանզի դրանով մենք կնվաճենք ժողովրդի հավատը հայ գրերի գոյության մասին...

Մաշտոցն իր մտքերը շարադրում էր պարզ ու հասկանալի, հիմնավորված ու հաստատ: Ներկաները հիացած լսում էին նրան: Երբ նա ավարտեց իր ասելիքը, թագավորը կաթողիկոսին ասաց.

— Վեհափառ, Ձեր սպասած հրաշքը մոտ է: Ես էլ եմ արդեն հավատում նրա իրականացմանը...

\* \* \*

Վահրիձ հաղունին մեկ շաբաթ չկար, ինչ ճանապարհ էր ընկել դեպի Աղձնիք, բայց արդեն Հայոց աշխարհի գրեթե բոլոր գավառներում խոսում ու պատմում էին այն մասին, որ նա մեկնել է Միջագետք՝ Դանիել անունով մի ասորի ազնվական եպիսկոպոսից հայերեն գրեր բերելու: Թե այդ գրերը որտեղից էին հայտնվել Դանիել եպիսկոպոսի մոտ, այդ մասին բազմաթիվ վարկածներ էին

պատմվում, բայց դրանց մեջ ամենահավանականն այն էր, որ Դանիելն այդ գրերը գտել է Ատրեստանի հին գրադարաններից մեկում: Այս վարկածի հավանականությունը հավաստի էր համարվում, քանզի ամենուրեք այդպես էր պատմում ինքը՝ Վահրիճ Խաղունին...

Երբ Վահրիճը Աղձնիքում արքայական հրովարտակը հանձնեց Հաբելին, վերջինս ցավով հայտնեց, որ Դանիել եպիսկոպոսը, ճիշտ է, Եղեսիայից վերադարձել է, բայց շատ կարևոր գործերով կանգ է առել Ամիդ քաղաքում: Ըստ իրեն հասած տեղեկությունների՝ նա երևի այնտեղ կմնա մինչև աշնանամուտ: Վահրիճը Հաբելին առաջարկեց միասին մեկնել Ամիդ: Սակայն Հաբելը հրաժարվեց՝ պատճառաբանելով, որն տքնողների ուղեկցությամբ սահմանն անցնելը կարող է զանազան կասկածանքների տեղիք տալ, որը անպայման վնաս կբերի իր գործին: Վահրիճն առաջարկեց Հաբելին՝ միայնակ մեկնել Ամիդ և խոստացավ նրան «ձանապարհի ծախս» տալ մի պատկառելի գումար: Հաբելը պահանջեց նաև Սահակ Պարթևի հրովարտակը՝ ուղղված Դանիել եպիսկոպոսին: Վահրիճը մեծ սիրով համաձայնվեց... Հաբելը անմիջապես մեկնեց Ամիդ: Երեք օրից վերադարձավ՝ իր հետ բերելով Դանիել եպիսկոպոսից վերցրած մագաղաթը և նույնանման մի այլ մագաղաթ, որի վրա Դանիել եպիսկոպոսը հունարեն բառերով գրել էր մագաղաթի վերծանությունը, ու սիրով հանձնեց Վահրիճին: Հաբելը չմոռացավ Վահրիճին հայտնել, որ Դանիելը վերծանության համար լրացուցիչ գումար է պահանջել, և ինքը վճարել է դրա համար... Դա արդեն Վահրիճին քիչ էր հետաքրքրում: Նա մեծ ուրախությամբ Հաբելին ուզած քանակությամբ դրամ նվիրեց և շնորհակալություն հայտնելով՝ բռնեց տունդարձի ճամփան...

\* \* \*

Վեհարանում Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը զննում էին Դանիել եպիսկոպոսի ուղարկած գրերը: Այն լավ մշակած մագաղաթի մի փոքրիկ քառակուսի կտոր էր, որի վրա անձանոթ տառերով գրված ընդամենը յոթտողանոց գրություն էր: Գրության ներքևում վերջին նախադասությունից առանձնացված էր մի բառ: Գրագետ մարդն անպայման կգուշակեր, որ այդ մեկ բառը գրողի անունն է կամ ազգանունը:

Դանիելը այդ գրության հետ միասին ուղարկել էր նաև դրա բնագրի հունատառ պատճենը, որը վերծանել էր ինքը: Գրության բովանդակությունը հետևյալն էր.

«Եղբայր իմ Զորայր, Տիրան թագավորը դարձել է հոռոմների կայսր Հուլիանոս Ուրացողի կամակատարը, ցանկանում է մեր Հայոց աշխարհից ջնջել Քրիստոսի սուրբ հավատը և երկիրը նետել հեթանոսական պիղծ և անիրավ բարքերի գիրկը: Նրա կարգադրությամբ գանակոծ արեցին և նահատակեցին սրբազան Հուսիկ եպիսկոպոսին: Առայժմ Ասորիքից մի՛ վերադարձիր, քանզի այստեղ Քրիստոսի ծառաների վիճակը ծանր է: Քո տարաբախտ եղբայր՝ Դանիել»:

— Այո՛,— գրերը երկար գննելուց ու համեմատելուց հետո ասաց Մաշտոցը,— Դանիել եպիսկոպոսի վերծանությունը ճիշտ է. տառերը համընկնում են, բառերն էլ իրոք որ հայերեն են: Մագաղաթի գրության միտքը նույնպես վկայում է, որ այն գրված է հայերի ձեռքով...

Սահակ Պարթևը, որը նույնպես գննում էր գրությունը, հանկարծ ուղղվեց տեղում և դիմեց Մաշտոցին.

— Գրության միտքը, թե՛ պատմությունը...

— Ի՞նչ պատմություն,— հարցին հարցով պատասխանեց Մեսրոպը:

— Այդ գրության միտքը քեզ ոչինչ չի՞ հուշում:

— Սպասիր, սպասիր, գրության հեղինակը հո այն Դանիել քահանան չէ՛, որին Տիրան թագավորի օրոք գանակոծ արին...

— Հենց նա է, որ կա: Սա իսկապես Դանիել քահանայի նամակն է՝ ուղարկած իր եղբայր Զորայրին, որն այն ժամանակ ուսանում էր Սամոսատ քաղաքում: Խեղճ Դանիել, ինքը եղբորը զգուշացրել է վերահաս վտանգի մասին, բայց իրեն չի խնայել:

— Ինքը հայ էր, չէ՛:

— Իհարկե, հայ էր: Նա Գրիգոր Լուսավորչի աշակերտներից էր: Երբ Տիրան թագավորը դաշնակցեց հոռոմոց կայսր Հուլիանոս Ուրացողի հետ և հալածում էր քրիստոնեությունը, այս Դանիել քահանան բացեիբաց նախատինք կարդաց թագավորին, որի կարգադրությամբ դավադրաբար խեղդամահ արվեց:

Մաշտոցը խորհրդավոր ու սևեռուն նայեց Սահակի աչքերի մեջ:

— Հը՛, նորից ի՞նչ անցավ մտքովդ,— հարցրեց Սահակը:

— Ա՛յ, ինչ անցավ իմ մտքով, այս անգամ արդեն իմ մտքի արդյունքը չէ, այլ իրողություն է, իմ կամքից անկախ մի իրողություն, որը զարմացնում է ինձ:

— Դե միտքդ պարզիր՝ մենք էլ զարմանանք,— կատակեց կաթողիկոսը:

— Դու նախախնամությանը հավատո՞ւմ ես,— հանկարծ հարցրեց Մաշտոցը:

— Ի սեր Աստծո, Մեսրոպ, հերետիկոսի պես մի խոսիր: Չէ՞ որ ես հայոց կաթողիկոսն եմ...

— Ի սեր Աստծո, թող այդ բառերն ու տիտղոսները և ինձ ասա՛, հավատո՞ւմ ես, թե՞ ոչ:

— Մեղա քեզ,— Սահակը խաչակնքեց իրեն,— իհարկե հավատում եմ:

— Դե որ հավատում ես, հավատա՛ նաև իմ խոսքերին: Այս գրությունը նախախնամությունից է տրված մեզ: Այս գրերը գրված են հայ քահանայի ձեռքով, որը նահատակվել է հանուն հավատի ու հայրենիքի: Սրանք տառապանքից ծնված գրեր են: Սակայն սրանք ինքնին ոչ մի արժեք չէին ունենա, եթե ձեռք բերվեին հենց այնպես: Մինչդեռ սրանք լույս ընկան հենց այն ժամանակ, երբ մեզ պետք էին և ձեռք բերվեցին այնտեղից, որը մեզ համար խիստ անհրաժեշտ էր... Չէ՞ որ հայ քահանա Դանիելի գրերն այն արժեքը չէին ունենա այսօր, եթե չգտնվեին ասորի եպիսկոպոս Դանիելի մոտ և Հայոց աշխարհ չբերվեին թագավորական ու կաթողիկոսական հրովարտակներով... Եթե նախախնամության մատը խառը չլիներ այս գործում, այդ գրերը կարող էին նույնիսկ կորչել կամ ոչնչանալ, մինչդեռ նրանք երկար ժամանակ «պահվել» են մեզ անհրաժեշտ տեղում և մեզ են վերադարձվել մեր ցանկացած ժամանակին...

— Ուզո՞ւմ ես մի բան էլ ես ավելացնեմ:

— Խնդրեմ:

— Եթե լավ հաշվենք, կտեսնենք, որ հայ գրերի ստեղծմանը անձնագրի նվիրյալ Մեսրոպ Մաշտոցն ու այս գրերը գրեթե հասակակիցներ են: Դրա համար էլ նրանք «սպասել են» այնքան ժամանակ, մինչև նրանց արժեքն իմացողը տառապանքով կգտնի իրենց:

— Հետաքրքիր է, հիմա ես կհաշվեմ: Հուսիկ եպիսկոպոսին պայանեցին քառասունմեկ թե քառասուներեք տարի առաջ, երբ Հուլիանոս Ուրացողը նոր էր կայսր դարձել: Դանիել քահանային խեղդամահ արեցին այդ ընթացքում, այսինքն՝ մոտավորապես 42–45 տարի առաջ: Վեհափառ, եթե իմ հաշիվները ճիշտ են, ապա դու իրավացի ես,— կատակեց Մաշտոցը:



— Տեսնու՞մ ես, տե՛ր Մաշտոց, որ ես քեզանից պակաս չեմ հավատում նախախնամությանը:

— Դե, եթե նախախնամության կամքով է այս ամենը, ապա այս հայախոս փոքրիկ գրությունը կդառնա մեր որոնած այն անշեջ կրակի կանթեղը, որը բորբոքվելով կուսավորի ու խավարից կփրկի Հայոց աշխարհը հավիտենից հավիտյան...

Այս ասելուց հետո Մաշտոցը ակնածանքով վերցրեց մագաղաթները, մի անգամ ևս խորագնին համեմատելուց հետո սկսեց բարձրաձայն կարդալ Դանիել եպիսկոպոսի վերծանությունը և ասաց.

— Սահակ, զգո՞ւմ ես, թե՛ն բառերը հայերեն են, բայց այնպես չեն հնչում, ինչպես պետք է: Տես, անբարեհնչյուն բառերի մեջ կան նշանագիր է պակասում, կան էլ այն փոխված է ուրիշ մի գրով: Օրինակ՝ փոխանակ գրված լինի *եղբայր*՝ գրված է *եզբայր*. *ղ*–հնչյունի փոխարեն *զ* է գրված, *Հուլիանոսի* և *Հուսիկի* փոխարեն գրված է *Ուլիանոս* և *Ուսիկ*, *ցանկանում* բառի փոխարեն արված է *ժանկանում*, *առայժմի* փոխարեն՝ *առայջմ*:

— Դե, դա բնական է,— հանգիստ ասաց Սահակը,— Դանիելի վերծանությունը գրված է հունատառ, իսկ հունարենում *հ*, *ղ*, *ձ*, *ց*, *ժ* և մի շարք այլ հնչյուններ չկան: Դանիելը հո չէ՞ր կարող իրենից հնչյուններ հորինել:

— Ես քեզ հետ համաձայն չեմ, քանզի նույն հնչյունները չկան նաև նամակի «հայերեն» բնագրում...

— Ա՛յ քեզ բան, չլինի՞ թե դրանք հունական գրեր են,— մի տեսակ հիասթափված ասաց Սահակը,— հալա մի ի՛նձ տուր դրանք:

Մաշտոցը մագաղաթները տվեց Սահակին ու սպասեց: Սահակը դրանք դրեց սեղանի վրա՝ կողք կողքի, և մատը սահեցնելով մեկ այս, մեկ այն գրության վրա՝ գյուտ արածի պես բացականչեց.

— Դե, իհարկե, սրանք հունական գրեր են, միայն թե հնարավորին չափ այլափոխված: Տես, Մաշտո՛ց *ձ*–ն, *պ*–ն և *փ*–ն համարյա չեն փոխված, *ս*–ն շուտ է տրված մեջքին, *ե*–ի վերին ծայրն է ուղղված, *յ*–ն նստեցրած է... Մի խոսքով, ամեն ինչ պարզ է...

Մաշտոցը, որը նույնպես այդ ընթացքում կոսացել և սևեռուն հետևում էր Սահակի զննումներին, հանկարծ ուղղվեց տեղում և կտրուկ ասաց.

— Պարզը պարզ է... բայց սրանք «հայկական» գրեր են:

Սահակը, զարմանքից աչքերը լայն բացած, նայեց Մեսրոպին:

— Ինչու՞ ես այդպես զարմացած նայում,— չափազանց լուրջ ասաց Մաշտոցը,— սրանք հայկական գրեր են ու վերջ:

— Դու կարծում ես՝ ուրիշները գլխի չեն ընկնի, որ այս գրերը քաղված և հարուցված են այլ դպրություններից:

— Ինչ է, քո կարծիքով այսօր ամենքին հայտնի հունական կամ արամեական գրերը այլ դպրություններից չեն հարուցված...

— Իհարկե, դու իրավացի ես, բայց...

— Առանց բայցի:

— Սիրելի՛ կաթողիկոս,— իր բնավորության համաձայն՝ սկսեց տաքանալ Մաշտոցը,— այլևս բայց չկա: Ազնվական, բազմաթիվ լեզուների ու դպրությունների գիտակ ասորի Դանիել եպիսկոպոսը հայտարարում է, որ սրանք հայերեն գրեր են: Ասորեստանից մինչև այստեղ ամենքը գիտեն, որ գտնվել են հայերեն գրեր: Բոլորին հայտնի է նաև, որ այդ գրերը Հայաստան են բերվել արքայական ու կաթողիկոսական հրովարտակներով: Այսքան փաստերից հետո ոչ ոք իրավունք չունի կասկածի տակ առնելու հայերեն գրերի գոյությունը: Իսկ մեր խնդիրն է՝ այդ փաստերը հիմնավորել և թույլ չտալ, որ դրանք առարկություն վերցնեն: Շատ չէ, ինձ մեկ շաբաթ ժամանակ տուր, և ես այս գրերին այնպիսի մի սքանչելի տեսք տամ և դուրս բերեմ հասարակության մեջ, որ ոչ միայն Դանիել եպիսկոպոսը, այլև Դանիել քահանան էլ այն աշխարհից վերադառնա, չկարողանա ձանաչել սրանց:

— Դե լավ, լավ, մի՛ տաքացիր: Ես գիտեմ, եթե դու մտադրվեցիր՝ ամեն ինչ կանես: Պարզապես ես ուզում եմ, որ այդ մասին ուրիշները չիմանան:

— Դա հայտնի կլինի միայն քեզ, ինձ և Աստծուն,— խաշակնքեց Մաշտոցը:

— Գործիր,— ձեռքը Մեսրոպի ուսին դրեց Սահակը,— բայց ինչպե՞ս վարվենք այն պակաս տառերի հետ:

— Առայժմ բավարարվենք եղածով: Պակասի մասին հետո կմտածենք:

Սահակը հանգրեց վեհարանի մոմերը: Դրսում երկինքը շառագունել էր: Թռչունները ճովողում էին ամառային ցայգալույսի ցողաթաթախ թփերում: Թե ինչ եղավ հետո, այդ մասին Մաշտոցի վարքագիրը՝ Կորյունը, այսպես է գրում. «Ապա երանելի հոգաբարձուներ, հանկարծազուտ ուզածն առնելով, էլի խնդրեցին արքայից մատաղահաս մանուկներ, որոնց միջոցով կարողանային նշագրերը գոր-

ծաղրել: Եվ երբ նրանցից շատերը սովորեցին, ապա հրամայվեց ամեն տեղ նույնով կրթել, որով և երանելին հասավ նույնիսկ վարդապետական գեղեցիկ աստիճանին և մոտ երկու տարի իր ուսուցչությունն արեց ու նույն նշանագրերով տարավ:

Իսկ երբ հասկացան, որ այդ նշանագրերը բավական չեն հայերեն լեզվի սիղոբաները (կապերն) ամբողջությամբ արտահայտելու համար, մանավանդ որ նշագրերն էլ իսկապես ուրիշ դպրությունից քաղված և հարուցված հանդիպեցին, ապա դարձան երկրորդ անգամ նույն հոգսի մեջ ընկան և մի քանի ժամանակ մի ելք էին փնտրում դրան»:

## ՆՈՐ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ

Դանիելյան գրերն իրենց չարդարացրին: Գնալով Մաշտոցն ավելի մտաժողովուրդ ու լռակյաց դարձավ: Նա հատկապես ընկճված էր այն պատճառով, որ մեկ տարի առաջ վարդապետական վեղար էր ստացել մի գործի համար, որը, փաստորեն, իրեն չէր արդարացնում: Սահակ Պարթևը տեսնում և զգում էր նրա հոգեկան սովայտանքները, սակայն չտեսնելու էր տալիս, իսկ Մաշտոցին զայրացնում էր նրա հենց այդ անհասկանալի անտարբերությունը: Մի անգամ, երբ մենակ էին, Մաշտոցը նստել էր լուռ ու անտրամադիր, Սահակը իմիջիպալոց հարցրեց.

— Քեզ հետ ի՞նչ է պատահել: Շուտով գարուն է գալիս, իսկ դու գնալով մռայլվում ես՝ փոխանակ զվարթանալու:

Մաշտոցը խեթ նայեց կաթողիկոսին: Նրա հայացքն ասում էր. «Ինչու՞ ես այդ հարցը տալիս, միթե դու չգիտես իմ տխրության պատճառը»:

— Անկեղծ ասած, ես դեռ այսքան ժամանակ քեզ այսպես ընկճված չէի տեսել,— զվարթ կատակեց կաթողիկոսը,— երևակայիր, որ դու այդ տրամադրության մեջ ավելի վայելուչ ես:

— Եթե լավ բան կա, ասմ, ես էլ ուրախանամ, իսկ եթե ուզում ես սոսկ կատակով իմ տրամադրությունը բարձրացնել, դա անկարելի է: Ինձ համար կորուստը մեծ է,— ասաց Մաշտոցը:

— Խոսքը ի՞նչ կորստի մասին է,— իրեն չհասկանալու սովեց կաթողիկոսը:

— Դպրության գործի...

— Մի՞թե...

— Այո՛, Սահակ, մեր հույսերը չարդարացան, և ջանքերն իզուր անցան:

— Ես այդ կարծիքին չեմ,— խոժոռվեց կաթողիկոսը,— մենք գործի մեծ մասն արել ենք, Մեսրոպ, մեր ձեռքի տակ կան պատրաստակամ ու խելոք աշակերտներ, որոնք, թեև թերի, բայց գրում ու կարդում են մայրենի լեզվով՝ հայերեն: Մեզ մնում է վերացնել մեր առաջ ծառացած խոչընդոտները՝ ձեռքի տակ եղած նշանագրերի պակասը, և ամեն ինչ իր տեղը կրնկնի... Էլ ինչու՞ ես մռայլվել: Գլուխդ բարձր պահիր, վարդապետ, զարուն է գալիս... — Կաթողիկոսն այնքան զվարթ ասաց այս վերջին բառերը, որ Մաշտոցն ինքն էլ ակամա լավ զգաց:

— Ա՛յ այդպես,— ձեռքը Մաշտոցի ուսին դնելով՝ սևեռուն նրա աչքերի մեջ նայեց Սահակը,— դե հիմա ինձ ասա՛, ի՞նչ ծրագրեր ես մտորում, քանզի ես քո բնավորությունը լավ գիտեմ. եթե հոգիդ մռայլ է ու ամպամած, ուրեմն բարեբեր անձրև է սպասվում...

Մաշտոցը հոնքերի տակից նայեց կաթողիկոսին և ժպտաց, որով ուզում էր ասել. «Ճիշտ ես կռահել»:

— Դե խոսի՛ր,— գործնական ասաց կաթողիկոսը:

— Ի՞նչ խոսեմ: Ինձ դրամ է հարկավոր:

— Ինչքա՞ն,— հարցրեց կաթողիկոսը:

— Շատ,— եղավ պատասխանը:

— Եթե իմանամ՝ ինչի համար է, կտամ: Դու գիտես, որ քո ձեռնարկումների համար ես ոչինչ չեմ խնայի: Ինչքա՞ն է պետք:

— Միայն դրամ տալով չես պրծնի:

— Հապա էլ ի՞նչ:

— Քո և թագավորի արտոնագրերը:

— Ինչի՞ համար:

— Ես մտադիր եմ առաջիկա զարնանը երկու տասնյակ լավագույն աշակերտների հետ մեկնել Միջագետք...

— Հետաքրքիր է...

— Այո՛, հետաքրքիր է: Բայց լսի՛ր մինչև վերջ: Ինձ անհրաժեշտ է անձամբ հանդիպել Դանիելին: Պետք է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել գրերի մասին կամ իմանալ՝ չկան արդյոք ուրիշ ձեռագրեր, որոնք ամբողջական են... Բացի այդ, Միջագետքում կան գրադարաններ, գրագետ ու քանիմաց մարդիկ, որոնցից կարելի կլինի օգուտ քաղել մեր գործի համար: Մտադիր եմ սկզբում լինել Ամի-

դում. այն սահմանամերձ է մեզ և մեծ դժվարություններ չի պահանջում, իսկ եթե Ամիրը չբավարարի, ես կմեկնեմ Եդեսիա, եթե այն էլ չբավարարի, կգնամ Սամոսատ, գուցե և ավելի հեռու.

— Աշակերտներին ինչու՞ ես տանում:

— Նրանց պետք է լծել գործի: Աշակերտները Միջագետքում կվարժվեն ասորերեն ու հունարեն դպրություններին: Նախ՝ դա կհեշտացնի նրանց կողմից մեր դպրությանը տիրապետելու գործը, և երկրորդ՝ եթե մեզ հաջողվի Միջագետքում մեր հնչյունների նշանագրերը լրիվ ու կատարյալ դարձնել, նրանք հեշտությամբ կթարգմանեն մեզ պիտանի գրքերը այդ լեզուներից, որն, անկասկած, կնպաստի մեր հետագա դպրական գործի ամրապնդմանը: Բացի այդ, որն ամենակարևորն է, ես Միջագետքում ասորի սուրբ հայրերին կհամոզեմ, որ պարսկահպատակ Հայաստանում Քրիստոսի սուրբ հավատի տարածումն ու ամրապնդումը վտանգի տակ է, քանզի հայ ժողովուրդը, չունենալով մայրենի լեզվով գիր ու գրականություն, դժվար է ընկալում Քրիստոսի սուրբ հավատի ճշմարտությունները և հակվում է դեպի մազդեզյան կրոնը կամ կաշում է հեթանոսական դավանանքին... Ես սուրբ հայրերին կբացատրեմ, որ իմ նպատակն է մայրենի լեզվի ուսուցիչներ պատրաստել, որոնք, վերադառնալով հայրենիք, ժողովրդին մայրենի լեզվով կքարոզեն սուրբ հավատի ճշմարտությունները... Եթե ինձ հաջողվի ասորի ազդեցիկ եպիսկոպոսներին համոզել այս հարցում, ապա ես կանեմ իմ ամենավճռական քայլը՝ նրանցից կվերցնեմ արտոնագրեր, որոնցով տեղիս ասորի հոգևորականությունը պիտի օգնի մեզ... Սահակ, դու պատկերացնո՞ւմ ես, թե ինչ կստացվի. այն ուժը, որն ամեն կերպ աշխատում է խոչընդոտել մեր գործին, այժմ պիտի նպաստի նրա իրականացմանը, եթե չնպաստի էլ, գլուխը քարը, գոնե չի խանգարի...

— Ես գիտեի, չէ՞, որ քո անձայրածիր մտքի հորիզոնում իզուր չեն ամպեր կուտակվել... Սիրելի վարդապետ, դու ն՛ դրամ կստանաս, ն՛ արտոնագրեր՝ ինչպես ինձանից, այնպես էլ թագավորից: Միայն թե ինձ ասա՛, որքան ժամանակ պիտի մնաս Միջագետքում:

— Ես առայժմ չգիտեմ, — պատասխանեց Մաշտոցը, — դա կախված է գործի հաջողությունից: Նվազագույն ժամկետը մեկ-երկու տարի է, բայց գուցե անհրաժեշտ լինի մնալ նաև երրորդ տարին:

— Ինձ մնում է միայն քեզ բարի երթ ցանկանալ: Օգնականներ չե՞ն վերցնում:

— Ո՛չ: Իմ ավագ աշակերտների մեջ կան հասուն երիտասարդներ, որոնք ինձ ավելի լավ կօգնեն, քան որևէ մեկը: Ավագ աշակերտներից ինձ Միջազգետքում լավ օգնականներ կլինեն Մուշեղ Տարոնցին, Տիրայր Խորձենացին, Հովհան Եկեղյացին, Հովսեփ Պաղնացին և էլի ուրիշները, բավական չէ՛: Հիշածս չորսն էլ տիրապետում են ասորերեն և հունարեն լեզուներին, դեռ մյուսների մասին էլ չեմ ասում:

\* \* \*

Մաշտոցն իր աշակերտներով Ամիդ հասավ գարնան կեսերին: Նա Ամիդում երկար մնալու մտադրություն չուներ, քանզի իր նպատակն իրականացնելու համար այդ քաղաքը չէր կարող կարևոր դեր խաղալ: Իբրև քրիստոնեական վարդապետության կենտրոն՝ Ամիդը երկրորդական տեղ էր գրավում Միջազգետքում: Որպես այդպիսին՝ առաջինը Եդեսիա քաղաքն էր, որտեղ կենտրոնացված էին քրիստոնեական հիմնական եկեղեցիները, ուստի Մաշտոցին անհրաժեշտ էր Ամիդում մնալ մեկ կամ երկու շաբաթ. նախ՝ Դանիելին հանդիպելու և հայոց գրերով հետաքրքրվելու համար, ապա՝ նրան պետք էր շփվել տեղի հոգևորականության հետ և նրանց միջոցով իմանալ, թե իր ձեռնարկումն ինչ արձագանք կգտնի, որից հետևություններ անելով՝ կկարողանա ձիշտ ուղի ընտրել իր հետագա անելիքների համար: Այդ նպատակով նա իր հետ տարել էր Սահակ Պարթև կաթողիկոսի ջերմագին ուղերձը՝ հղված Ամիդի եպիսկոպոս Ակակիոսին, որով խնդրվում էր օգնել վարդապետ Մաշտոցին: Ուղերձի հետ, որպես Ակակիոսին նվեր, Մաշտոցը վերցրել էր արծաթե քանդակադրվագ բավականին ծավալուն մի խաչ, որի յուրաքանչյուր թևը զարդարված էր մեկական ադամանդով ու այլ պատվական քարերով:

Սահակ Պարթև կաթողիկոսն ավելի թանկ նվեր էր նախատեսել Եդեսիայի եպիսկոպոս Բաքիդասի համար: Այն երենոսյան փայտից պատրաստված գավազան էր, որի խաչակիր գլուխը մեկ թիզ երկարությամբ ծածկված էր դրվապատ ոսկուց, ապա զարդարված էր մեկ տասնյակից ավելի պատվական քարերով, որոնց կենտրոնում շողշողում էր աչքի գարնող մի մեծ զմրուխտ:

Նվերները Մաշտոցին հանձնելիս Սահակը կատակեց.

— Համոզված եղիր, Մեսրոպ, որ այս խաչի ու գավազանի գուրությանը չի դիմանա նույնիսկ ամենամոլեռանդ հավատացյալը...

— Թող խոսքդ հնչի որպես մարգարեություն,— նույնպես կատակեց Մաշտոցը:

Ամիդում մի օր հանգստանալուց հետո հաջորդ օրվա առավոտյան, Մաշտոցն իր աշակերտներով ներկայացավ եպիսկոպոս Ակակիոսին: Նախ նրան հանձնեց ուղերձը Սահակ Պարթև կաթողիկոսի՝ Հայոց աշխարհում Քրիստոս աստծու հավատի տարածման դժվարությունների ու իր առաքելության նպատակի մասին, իհարկե այնպես, ինչպես որ ձեռնտու էր իրեն:

Ակակիոսը նվերն ընդունեց մեծ գոհունակությամբ: Կարդաց ուղերձը և խոստացավ Մաշտոցին օգնել բոլոր պարագաներում: Նույնիսկ պատրաստակամություն հայտնեց՝ գրավոր միջնորդել, որպեսզի Եղեսիայի եպիսկոպոս Բաքիդասը նույնպես ընդառաջի Մաշտոցին ու նրա աշակերտներին՝ իրենց քրիստոսասեր նպատակը իրականացնելու համար:

— Երախտապարտ կմնանք Ձեր մեծահոգության համար, սրբազան,— ասաց Մաշտոցը:

— Իսկ այժմ ինչո՞վ կարող եմ օգտակար լինել Ձեզ և Ձեր աշակերտներին, հայր սուրբ,— սիրալիիր Մաշտոցին դիմեց Ակակիոսը:

— Մեզ հարմարավետ կացարաններ են պետք, որպեսզի կարողանանք աշխատել,— անմիջապես պատասխանեց Մաշտոցը:

— Մեծ սիրով կտրամադրենք,— ասաց Ակակիոսը,— մենք այդ հնարավորությունն ունենք:

— Սրբազան,— խոսքն առաջ տարավ Մաշտոցը,— ինձ հայտնի չէ՝ Ձեր քաղաքում կան սուրբ գրոց կամ այլ խորհմաստ գրքերի մատենադարաններ, որպեսզի մենք կարողանանք օգտվել:

— Ավանդ, հայր սուրբ,— խեղճացավ Ակակիոսը,— քաղաքս աղքատ է այդ տեսակետից: Մի փոքրիկ գրապահոց ունի Ձեզ արդեն հայտնի Դանիել եպիսկոպոսը, և գրեթե նույնպիսի մի գրադարան էլ ունի մեր վանքի ձեմարանը, որը սիրով կդնենք Ձեր տրամադրության տակ:

Թեև Ամիդի եպիսկոպոս Ակակիոսը Մաշտոցի ու նրա աշակերտների նկատմամբ ցուցաբերեց մեծ հոգացողություն, բայց նրանք ընդամենը մեկ շաբաթ մնացին Ամիդում, քանզի ո՛չ Դանիելը, ո՛չ էլ նրա ու վանքի ձեմարանի գրադարանը ոչ մի նոր բան չավելացրին իրենց իմացածին: Դանիելը մի անգամ ևս հավաստեց այն փաստը, որ երկու տարի առաջ Վռամշապուհ թագավորին ուղարկած ձեռագրերն իսկապես պատահաբար էին իր ձեռքն ընկել, իսկ ինչ վերաբերում է



նրա և ճեմարանի գրադարաններում պահվող գրքերին, դրանք Մաշտոցին ծանոթ գրքեր էին: Նա այդպիսիք տեսել էր դեռևս ուսանողական տարիներին Կեսարիայում ու Ալեքսանդրիայում:

Մեկ շաբաթ անց Մաշտոցը, Ակակիոսից վերցնելով Բաքիդասին գրված միջնորդագիրը, իր աշակերտներով ճամփա ընկավ դեպի Եդեսիա քաղաքը:

Եդեսիայի եպիսկոպոս Բաքիդասը Մաշտոցին ու նրա աշակերտներին ընդունեց հավուր պատշաճի: Իսկ երբ կարդաց Ակակիոսի միջնորդագրերը և Սահակ Պարթև հայոց կաթողիկոսի ուղերձն ու տեսավ թանկարժեք նվերը, նա իրեն խիստ շոյված զգաց: Երբ Մաշտոցը Բաքիդասին հանգամանորեն պատմեց իր առաքելության նպատակի մասին, վերջինս Մաշտոցին ու նրա աշակերտներին ոչ միայն ապահովեց կացարաններով, այլև խոստացավ հոգալ նրանց բոլոր կարիքները, որքան ժամանակ որ նրանք կմնան Եդեսիայում:

— Այսպիսով՝ ինչի՞ց ենք սկսում, հայր սուրբ, — հարցրեց Բաքիդասը Մաշտոցին մի այնպիսի ձևով, որով ուզում էր ասել, թե ինքն էլ է մասնակցելու Մաշտոցի ձեռնարկումներին:

Դա ուրախացրեց Մաշտոցին:

— Սրբազան, — համեստորեն նկատեց Մաշտոցը, — այն, ինչ Դուք խոստացաք անել մեզ համար, դա արդեն ամեն ինչից վեր է: Խնդրում եմ, էլ ուրիշ նեղություններ չքաշե՛ք: Սակայն մի բան կա, որը երևի թե առանց Ձեր օգնության մենք չկարողանանք գլուխ բերել: Այդ հարցում էլ մեզ պիտի օգնեք:

— Ա՛յ, տեսնո՞ւմ եք, հայր սուրբ, — ինքնագոհ ժպտաց Բաքիդասը, — ես Ձեզ պետք եմ, իսկ Դուք հրաժարվում եք իմ ծառայություններից:

— Օ՛, ո՛չ, ի՛նչ եք ասում, սրբազան, — չմեղմացավ Մաշտոցը, — պարզապես մենք չենք ուզում Ձեզ ավելորդ նեղություն պատճառել:

— Տե՛ր Աստված, Տե՛ր Աստված, — ձեռքերը մեծահոգաբար տարածեց Բաքիդասը, — գրկանքներով բյուրավոր ասպարեզ ճանապարհներ են կտրել—անցել, որ օգտակար գործ անեն, բայց խոսում են նեղությունից: Հայր սուրբ, սիրելի՛ վարդապետս, այդպիսի գործ ձեռնարկողն իրավունք չունի նեղություններից խոսել: Ձեր բռնած գործը հավասարապես և մեր գործն է: Ես ինձ երջանիկ կզգամ, եթե ինձ հաջողվի փոքրիշատե օգտակար լինել այդ գործին: Այժմ ինձ ասացե՛ք՝ ինչ է հարկավոր անել...

— Սրբազան,— գործնական խոսակցության անցավ Մաշտոցը,— այժմ մեզ հարկավոր է գտնել մի մարդ, որը տիրապետում է մի քանի առաջնակարգ լեզուների գրավոր ու բանավոր խոսքին: Լավ կլինի, որ նա գիտակ լինի նաև հին լեզուների:

— Ձեր ինչին են պետք հին լեզուները,— տարակուսեց Բաքիդասը:

— Բանն այն է, սրբազան,— հանգիստ բացատրեց Մաշտոցը,— որ հեթանոսական շրջանում մեր մեհյաններում եղել են մատյաններ: Մեզ մոտ դրանք չեն պահպանվել Ձեզ հայտնի պատճառով. քրիստոնեությունը ոչնչացրեց դրանք մինչև վերջին մազադաթն ու պնակիղը: Մենք ենթադրում ենք, որ գուցե մեկնումեկի մոտ գտնվի դրանցից գեթ մի պատահիկ...

— Ձեր ինչին է պետք հեթանոսական մատյանը կամ նրա պատահիկը,— այս անգամ խոժոռվեց Բաքիդասը:

— Մեզ մատյանների նյութը չի հետաքրքրում,— նույն հանգստությամբ պատասխանեց Մաշտոցը՝ աշխատելով չխրտնեցնել Բաքիդասին,— մեզ այդ մատյանների գրությունն է հետաքրքրում: Հնարավոր է, որ դրանք գրված լինեն հայերեն նշանագրերով...

— Հետաքրքիր միտք է,— պայծառացավ Բաքիդասի դեմքը,— կա այդպիսի մի մարդ: Նա ոչ միայն հին լեզուներ գիտի, այլև դավանանքով հեթանոս է:

— Որտե՞ղ է նա այժմ: Ինչպե՞ս կարող ենք նրան տեսնել,— անհամբեր հետաքրքրվեց Մաշտոցը:

— Մեզ մոտ՝ Եղեսիայում,— այս անգամ ներքին հպարտությամբ ասաց Բաքիդասը,— նա հույն է, անունը՝ Պղատոն, մեր քաղաքի դիվանատան դիվանապետն է: Նա ոչ միայն լեզուներ գիտի, այլև ճարտարաբան է:

— Հենց նա էլ մեզ հարկավոր է,— ուրախացավ Մաշտոցը,— ե՞րբ կարող եմ հանդիպել նրան:

— Վաղն կեթ,— վստահ պատասխանեց Բաքիդասը:

\* \* \*

Առաջին իսկ հանդիպումով Պղատոնը հիասթափեցրեց Մաշտոցին, քանզի նա ավելի շատ ճարտասան էր, քան ճարտարաբան և շատ վատ էր տիրապետում հայերենին, թեև չափազանց ազնիվ մարդ էր ու ձգտում էր ամեն կերպ օգտակար լինել Մաշտոցին, բայց

նրա ջանքերն անցնում էին ապարդյուն: Նա հաջողություն չունեցավ իր անձնական գիտելիքներում, ուստի փորձում էր Մաշտոցին օգնել իր ձեռքի տակ եղած հարուստ դիվանից նրան հարկավոր գեթ մի գրություն գտնելու միջոցով: Այդ նպատակով նա ամբողջ մի շաբաթ Մաշտոցի ու նրա աշակերտների հետ միասին տակնուվրա արեց ամբողջ դիվանի մատյաններն ու ձեռագրերը, բայց որոնումներն անցան իզուր: Իսկ երբ վերջում Մաշտոցը Պղատոնին առատորեն վարձատրեց նրա անձնվեր պատրաստակամության համար, վերջինս խոստովանեց, որ ինքն ունեցել է շատ բանիմաց մի ուսուցիչ՝ Եպիփանոս անունով, որը, չնայած իր առաջացած տարիքին, տարիներ առաջ քրիստոնեություն ընդունեց և դիվանից վերցնելով ճարտարաբանների գրվածքները՝ տեղափոխվեց Սամոսատ քաղաքը:

— Հայր սուրբ,— ասաց Պղատոնը Մաշտոցին,— եթե կարողանանք նրան գտնել, գուցե թե նա Ձեր փափագը կատարի:

Եղեսիայից Սամոսատ ընդամենը մեկ-երկու օրվա ճանապարհ էր, որը Մաշտոցին չէր մտահոգում, բայց նա մտավախություն ուներ Եպիփանոսի ողջ լինելու մասին. չէ՞ որ Պղատոնն ասաց՝ նա առաջացած տարիք ուներ:

— Քանի՞ տարի առաջ է Եպիփանոսը մեկնել Եղեսիայից,— Պղատոնին հարցրեց Մաշտոցը:

— Տասը տարուց ավել կլինի:

— Նա այդ ժամանակ քանի՞ տարեկան կլիներ:

— Յոթանասունն անց էր:

— Վախենում եմ, որ ողջ չլինի:

— Այդ մասին արդեն չեմ կարող կոնկրետ որևէ բան ասել,— ասաց Պղատոնը՝ մտազբաղ:

— Ենթադրենք, թե Եպիփանոսը ողջ է,— հարցրեց Մաշտոցը,— ես նրան ինչպե՞ս կարող եմ գտնել Սամոսատում:

— Նա այն ժամանակ սամոսացի մի շատ խելոք աշակերտ ուներ՝ Հռոփանոս անունով, որին զավակի պես էր սիրում: Նրա խորհրդով էր Եպիփանոսը քրիստոնեություն ընդունել և տեղափոխվել Սամոսատ: Եթե հիշողությունս չի դավաճանում ինձ, կարծում եմ, որ Սամոսատում Եպիփանոսն ապրում էր Հռոփանոսի տանը:

— Ընորհակալ եմ այդքան մանրամասն տեղեկությունների համար,— ասաց Մաշտոցը՝ ջերմորեն սեղմելով Պղատոնի ձեռքը:

Պղատոնը հաջողություն ցանկացավ, և նրանք բաժանվեցին:

## ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԸ

Մաշտոցը Եղեսիայում իր աշակերտներին բաժանեց երկու խմբի: Մի խմբի ավագներ կարգեց Մուշեղ Տարոնցուն ու Տիրայր Խորձենացուն և թողեց Եղեսիայում՝ ասորական դպրության մեջ վարժվելու համար: Այս խնդրեց Բաբելոնացի եպիսկոպոսին հոգ տանել նրանց համար. վերջինս մեծ սիրով համաձայնվեց: Մյուս խումբը վերցնելով իր հետ՝ անմիջապես մեկնեց Սամոսատ:

Սամոսատում նա փնտրեց ու գտավ Հռոփանոսին և տխրությամբ իմացավ, որ Եպիփանոսը մահացել է վեց տարի առաջ, սակայն մեծ եղավ Մաշտոցի ուրախությունը, երբ իմացավ, որ լավ ճարտարաբան է նաև Հռոփանոսը, որը քաջատեղյակ է հնագույն պատմություններին, գիտի մի քանի լեզուներ, միևնույն ժամանակ գեղագիր է: Առաջին հայացքից Հռոփանոսը Մաշտոցի վրա անլուրջ մարդու տպավորություն թողեց: Նա ամեն առիթով զվարճանում էր և կատակներ անում: Սակայն մեկ շաբաթ շփվելով նրա հետ՝ Մաշտոցը նկատեց, որ Հռոփանոսի կատակներն ու զվարճախոսությունները միշտ մնում են պատշաճ չափի սահմաններում: Առաջին հայացքից զվարճալի թվացող նրա կատակների մեջ Մաշտոցը նկատեց իր գիտելիքները գնահատող մարդու ինքնավստահություն: Մաշտոցը իր դեզերումների ընթացքում էլի էր հանդիպել նման մարդկանց ու փորձից գիտեր, որ նման մարդիկ գործարար ու վստահելի են, ուստի իր առաքելության նպատակն այնպես նրբանկատ ներկայացրեց Հռոփանոսին, որ նա խոստանա աջակցել: Մաշտոցը իմացավ նաև, որ Հռոփանոսը քրիստոնյա եկեղեցու քահանա է և վարում է եպիս-

կոպոսական դիվանի գործերը, ուստի նրա հետ խոսում էր իր վարդապետական «բարձունքից», սակայն մի այնպիսի զգուշությամբ, որպեսզի հանկարծ չխրտնեցնի նրան:

— Ինչպես տեսնում եք, տեր հայր,— իր խոսքն ամփոփեց Մաշտոցը,— մեր երկրում սուրբ խաչյալի հավատը վտանգի տակ է, և նրա փրկության միակ ուղին մայրենի լեզվով սեփական գիր ունենալն է:

— Հայր սուրբ,— կիսակատակ նկատեց Հռոփանոսը,— ինչպես տեսնում ու լսում եմ, Դուք ինձանից առավել գիտեք հունարեն լեզուն, և չեմ կասկածում, որ նույն չափով էլ հունարեն գրել—կարդալ գիտեք, էլ Ձեր ինչին է պետք ազգային գիր ու գրականություն...

Մաշտոցը մոայլվեց: Աջ ձեռքի մատներով ինքնամոռաց շփեց ձակատը և խեթ նայելով Հռոփանոսին՝ ասաց.

— Տեր հայր, ինչ չափով ես գիտեմ հունարեն, նույն չափով, գուցե և ավելի, գիտեմ նաև պարսկերենն ու ասորերենը, սակայն ինձ այսօր անհրաժեշտ է մայրենի լեզվով գիր ու գրականություն... հակառակ պարագայում ես Ձեր դուռը չէի գա...

— Իզուր եք զայրանում, հայր սուրբ,— ժպտաց Հռոփանոսը,— պետք էր սկսել հենց այդ «անհրաժեշտությունից... Թե չէ եկել եք ինձ մոտ և սուրբ խաչյալի բախտի համար եք հոգ տանում... Սուրբ խաչյալը առանց Ձեզ էլ կապրի աշխարհում... Այնպես որ եկե՛ք անկեղծ լինենք իրար հետ...

— Եթե այդպես է, կփորձեմ անկեղծ լինել,— ժպտաց նաև Մաշտոցը:

— Սուրբ հայր,— անկեղծ կշտամբանքով ասաց Հռոփանոսը,— Ձեզ նման մարդը գործի մեջ պիտի անմիջական լինի, որ հավատ ներշնչի դիմացինին...

— Դե որ այդքան գործնական մարդ ես, տեր հայր, լսիր, թե ինչ եմ ասում: Մեզ մայրենի լեզվով գիր է պետք: Մենք ենթադրում ենք, որ Ձեր հանգուցյալ ուսուցիչ Եպիփանոսի մոտ պահված գրվածքներում, որոնք այժմ պահվում են Ձեզ մոտ, հնարավոր է, որ մնացած լինեն հայերեն գրեր:

— Ես այդ գրվածքները հինգ մատիս պես գիտեմ,— կտրուկ պատասխանեց Հռոփանոսը,— նրանցում հայերեն գրեր չկան և չեն էլ կարող լինել:

— Ինչու՞ եք այդպես կարծում...,— տարակուսեց Մաշտոցը:

— Ձեմ կարծում, այլ հաստատ գիտեմ:

— Որտեղից գիտեք:  
— Պատմությունից, սուրբ հայր, պատմությունից:  
— Բայց մենք մեհյանական մատյաններ ենք ունեցել..., — փորձեց առարկել Մաշտոցը:

— Ունեցել եք, ես չեմ հերքում, — վստահ ասաց Հռոփանոսը, — բայց դրանք եղել են հունարեն կամ արամերեն, կամ էլ ո՞վ գիտի... Մի խոսքով, եղել են այլ գրությամբ:

— Բայց չէ՞ որ, տեր հայր, հին դարերում հայերս Արարատյան հզոր թագավորություն ենք ունեցել: Մենք ավելի հզոր ենք եղել, քան այն թագավորությունները, որոնց գրությունները դու այժմ թվեցիր:

— Չեմ առարկում, հայր սուրբ: Հենց այդ երբեմնի հզորությունն էլ ձեր՝ հայերիդ, այսօրվա դժբախտության պատճառն է դարձել...

— Այդ ինչպե՞ս:

— Շատ պարզ, — հանգիստ ասաց Հռոփանոսը, — լսե՛ք, հայր սուրբ, Դուք գրագետ մարդ եք: Դուք համաձայն եք ինձ հետ, որ հզոր տերությունների մշակույթներն ավելի դիմադրող ու պահպանողական են լինում:

— Դա անհերքելի ճշմարտություն է, — հաստատեց Մաշտոցը:

— Դե այժմ լսե՛ք, ես ասեմ, թե ինչ է կատարվել ձեզ՝ հայերիդ հետ: Այն ժամանակ, երբ դուք Արարատյան հզոր թագավորություն ունեիք, ունեիք նաև ձեր գիրն ու գրականությունը՝ հանձինս ձեր սեպագրերի, որից զուրկ էին ձեր հարևան ժողովուրդներն ու փոքրիկ տերությունները: Սակայն, կյանքի առաջընթացին զուգընթաց, նրանք էլ էին հզորանում: Նրանք էլ էին ուզում սեփական գրեր ունենալ: Բայց քանի որ կյանքը առաջ էր ընթանում, սեպագրերը նրանց այլևս չէին բավարարում: Եվ նրանք ստեղծում էին հնչյունների նշանագրեր, որոնցով գիրն ու գրականությունը ավելի դյուրին ու մասշեղի էր դառնում: Իսկ նույն ժամանակ ձեզ պետք չէր նման գրեր ստեղծել: Դեռ ավելին՝ դուք երկար ժամանակ սրբապղծություն էիք համարում սեպագրերից հրածարվելը, որոնք դարերի ընթացքում կորցնում էին իրենց գործածությունը և դառնում ոչ պիտանի, իսկ այժմ՝ անհասկանալի...

— Այդ ամենը Ձեզ որտեղից է հայտնի, — նրան ընդհատեց Մաշտոցը:

— Տարիներ առաջ մագաղաթյա մի մատյան կար իմ ուսուցիչ Եպիփանոսի մոտ: Դա ասորերեն մի մատյան էր, որն, ըստ էության, հին դարերի պատմություն էր, որտեղ խոսվում էր նաև ձեր՝ Արարատու հզոր երկրի մասին:

— Այդպես էլ գրված էր՝ Արարատու երկիր,— չգիտես ինչու, հարց տվեց Մաշտոցը:

— Ես ասացի, որ մատյանը գրված էր ասորերեն, նրանց մոտ որոշ դեպքերում «ու»-ն և «ի»-ն երբեմն գործածվում են նույն իմաստով. կարելի էր կարդալ նաև Արարատի երկիր: Այնպես որ Արարատու երկիր թե Արարատի երկիր, իմ կարծիքով, միևնույնն է:

— Այժմ որտեղ է այդ մատյանը,— հետաքրքրվեց Մաշտոցը:

— Իր մահից առաջ Եպիփանոսն այն տվել էր ինչ-որ մեկին՝ օգտվելու համար, որն այդպես էլ չվերադարձրեց: Ես հետո շատերին հարցուփորձ արի, բայց իզուր. մատյանն այդպես էլ կորավ:

— Այդ մատյանում մեր գրերի մասին ոչինչ չկար գրված:

— Կար: Ձեր սեպագրերից որոշ քաղվածքներ կային: Ուրիշ գոյության մասին խոսք չկար... Այնպես որ իմ ենթադրությունը ստույգ է,— իր նախկին մտքին անդրադարձավ Հռոփանոսը,— իմ կարծիքով, ձեր Արտաշեսյան հարստության ժամանակ, երբ դուք՝ հայերդ, զգացիք, որ սեպագրերն այլևս պիտանի չեն, այլևս հոգ չտարաք սեփական գրեր ստեղծելու համար, քանզի արդեն հրապարակի վրա կային արամեական, հունական ու պարսկական գրերը, և դուք գերադասեցիք օգտվել այդ գրերից, թեև դրանք բավարար չէին ձեր լեզվի հնչյունների համար: Դրա ապացույցն այն է, որ ձեր որոշ թագավորներն ու իշխանները, այդ գրությունները վերցնելով, վերցնում էին նաև լեզուն, որն անհասկանալի էր մնում բուն ժողովրդին: Ու՛մ հայտնի չէ, որ ձեր Տիգրան Մեծի ժամանակ ձեր արքունիքում գրում ու խոսում էին հունարեն... Հետո ձեզ իշխելու եկան պարսիկները, դուք ստիպված վերցրիք նրանց գրությունը, որը նույնպես խորթ էր ձեր ժողովրդի մեծամասնությանը: Իսկ ժողովրդի գոյատևման համար, թերևս այժմ, ամենահիմնական պայմանը մայրենի լեզուն է... Այժմ էլ ձեր երկիրը վտանգված է, և դուք հոգ չէք տանում ձեր սեփական լեզվի պահպանման համար, քանզի նա է իսկական այն նեցուկը, որը կփրկի երկիրը կործանումից... Էլի՛ ասեմ, հայր սուրբ... Ինչու՞ ասեմ, երբ Դուք այդ ամենն ինձանից հազարապատիկ լավ գիտեք... Չէ՞ որ այսօր քրիստոնեությունն այն փրկարար առագաստն է, որին «ապավինելով»՝ ձեր նավը կարող է նավել փրկության ափեր, և դուք իմաստուն ձևով օգտվում եք այդ հնարավորությունից... Դուք, հայր սուրբ, իմաստուն և խիզախ մարդ եք, դրա համար էլ ես հենց սկզբից սիրեցի Ձեզ...

Մաշտոցը, որ լարված լսում էր Հռոփանոսին նրա խոսելու ամբողջ ընթացքում, ետ ընկավ թիկնաթոռին և խորը շունչ քաշեց: Նա հիացած մի պահ նայեց Հռոփանոսին: Դեմքը պայծառացավ, և լայն ժպտալով ասաց.

— Տեր հայր, դու տաղանդավոր անձնավորություն ես, դու հենց այն մարդն ես, որը պետք է մեզ, և որին ես երկար ժամանակ փնտրել եմ: Քեզ Աստված է հանդիպեցրել ինձ: Ես միշտ կասկածում էի իմ բռնած գործի հաջողությանը: Բայց դու քո գոյությամբ ցրեցիր իմ բոլոր կասկածները: Ես այժմ հավատում եմ՝ իմ ժողովուրդը իր սեփական գիրը կունենա...

— Մի՛ չափազանցրեք իմ գոյությունը, հայր սուրբ,— համեստորեն նկատեց Հռոփանոսը,— արդեն մի շաբաթ է, որ մենք հանդիպում ենք, և ես այդ ընթացքում Ձեր տված տեղեկություններից հասկացա, որ Դուք գրեթե գործի մեծ մասն արել եք... Ձեզ մնում է մի քիչ պակասը լրացնել, գրությանը որոշակի ձևեր տալ և... —Այստեղ Հռոփանոսը խոսքն ընդհատեց և անքթիթ նայեց Մաշտոցի աչքերի մեջ: Մաշտոցը նրա աչքերում խորամանկ ժպիտ նկատեց:

— Եվ ի՞նչ,— ականա հարցրեց Մաշտոցը:

— Եվ գրերին օրինականության ուժ տալ,— կիսատ խոսքը շարունակեց Հռոփանոսը,— ի՞նչ է, չգիտե՞ք, հայր սուրբ, թե՞ դարձյալ ուզում էիք ինձանից ծածկել... Բայց ոչինչ, ես ներողամիտ մարդ եմ և այդ հարցում էլ Ձեզ կօգնեմ...

Հռոփանոսն այնքան որոշակի ասաց այդ ամենը, որ Մաշտոցի աչքերը երանավետ փայլեցին: Սիրտը ուրախությունից սկսեց արագ զարկել: Նա մի պահ ցանկություն զգաց Հռոփանոսին գրկելու, սեղմելու կրծքին ու համբուրելու: Մաշտոցը գիտեր, որ նշանագրեր ստեղծելը խնդրի մի կողմն էր միայն, պակաս կարևոր չէր նաև օրինականացման գործը: Եվ ահա Հռոփանոսն իր պատրաստակամությունը հայտնեց օգնելու Մաշտոցին նաև այդ հարցում...

— Տեր հայր,— գործնականորեն Մաշտոցը դիմեց Հռոփանոսին,— ինչպիսի՞ վարձատրություն կպահանջեք մեզ աջակցելու համար:

— Ներկա դրությամբ ես չգիտեմ, թե Ձեզ ինչով եմ աջակցելու, ուստի դեռ վաղաժամ է այդ մասին խոսելը,— շատ լուրջ ասաց Հռոփանոսը:

— Ասենք, եթե մեր այբուբենը գեղագրեք, ինչքան վարձ կվերցնեք:



— Բայց Դուք ասացիք, որ Ձեր այբուբենը բավարար չէ,— նկատեց Հռոփանոսը:

— Այո՛,— ասաց Մաշտոցը,— այժմ թերի է, բայց հույս կա, որ հետագայում այն կլրացվի, իհարկե, բարի մարդկանց օգնությամբ...

— Բարությունը եթե վարձատրվեց, այլևս բարություն չէ, հայր սուրբ,— նորից կատակեց Հռոփանոսը:

— Լավ, ես ինչպե՞ս խոսեմ քեզ հետ, տեր հայր,— ուսերը վեր քաշեց Մաշտոցը:

— Խոսե՛ք այնպես, ինչպես մինչև այժմ եք խոսել,— Հռոփանոսն այս անգամ ուրախ ծիծաղեց:

— Ինչո՞ւ եք ծիծաղում, տեր հայր,— լուրջ հարցրեց Մաշտոցը:

— Ուրախությունից, հայր սուրբ, ուրախությունից:

— Ինչի՞ համար եք ուրախանում:

— Ձեզ հանդիպելու համար: Չե՞ որ, ինչպես Դուք եք ասում, Աստվածն է մեզ հանդիպեցրել, և դա ուրախալի է...

Մաշտոցը տարակուսած նայեց իր աշակերտներին, որոնց այս անգամ տարել էր հետը՝ Հռոփանոսի հետ ծանոթացնելու համար:

— Մի՛ զարմացեք, հայր սուրբ,— լրջացավ Հռոփանոսը,— Դուք ինձ առաջարկում եք մի գործ, որը տարիների իմ երազանքն է եղել...

Մաշտոցը ձգնում էր ընկալել նրա խոսքերի իմաստը, բայց դժվարանում էր կռահել նրա միտքը, ուստի դիվանագիտորեն հարցրեց.

— Տեր հայր, ների՛ր ինձ հարցիս համար. դու հայազգի՞ ես:

— Ո՛չ, ի՛նչ եք ասում, ես գտարյուն հույն եմ,— նորից ծիծաղեց Հռոփանոսը:

— Բան չեմ հասկանում,— ասաց Մաշտոցը,— հապա էլ ինչո՞ւ եք ուրախանում մեր գործով:

— Հայր սուրբ, ինչպե՞ս չեք կռահում, որ դա նաև իմ գործն է, իմ ճարտարաբան ու գեղագիր, նկարիչ ու ծաղկող Հռոփանոսիս, որի համար վերջապես ցանկալի գործ է բացվել...

— Բայց դու քիչ առաջ ասացիր, որ քեզ վարձը չի հետաքրքրում:

— Հայր սուրբ, ի սեր Բրիստոսի, այլևս վարձի մասին մի՛ խոսեք: Ես ապահովված մարդ եմ...

Այս ասելով՝ Հռոփանոսը հանկարծ տեղից վեր կացավ, մոտեցավ գրքերով ու մագաղաթներով ծանրաբեռնված գրադարակներից մեկին: Այնտեղից դուրս բերեց մի շատ շքեղ կազմով մագաղաթյա մատյան և մեկնեց Մաշտոցին.

— Խնդրեմ, հայր սուրբ, նայեցէ՛ք այս մատյանին և գնահատե՛ք,— մի քիչ վրդովված ասաց Հռոփանոսը:

Մեսրոպը վերցրեց մատյանը և սկսեց մեծ ուշադրությամբ թերթել այն: Ներկաները նկատում էին, թե ինչպես յուրաքանչյուր հաջորդ էջը թերթելիս գնայլանքից վառվում էր Մաշտոցի դեմքը: Մատյանը հունարեն գրի այբբենարան էր, որն անձամբ գրել ու ծաղկել էր Հռոփանոսը: Նա յուրաքանչյուր տառին հատկացրել էր մի էջ: Նշանագիրը իմաստավորել էր համապատասխան նկարով, զեղազրել մանուկներին հասկանալի՝ պարզ ու իմաստալից տողերով...

— Հը՛, ո՞նց է,— իր գործի արժեքն իմացող մասնագետի հպարտությամբ հարցրեց Հռոփանոսը:

— Հրաշալի է,— հիացած բացականչեց Մաշտոցը:

— Դե ուրեմն եկե՛ք պայմանավորվենք,— ասաց Հռոփանոսը,— դուք ինձ կտրամադրեք ձեր ավարտուն նշանագրերը, իսկ ես ձեզ համար կգրեմ մի այդպիսի հրաշալի այբբենարան: Ես այն կանեմ առանց վարձատրության, միայն թե մագաղաթի ու ներկերի ծախսը դուք պիտի քաշեք: Եվ դուք կունենաք ձեր այբբենարանը՝ ի բարօրություն և հավերժություն ձեր ժողովրդի: Ես էլ կմնամ ձեր պատմության մեջ... Դա էլ կլինի իմ վարձը... Քանզի մարդուս համար չկա ավելի մեծ վարձատրություն, քան այն, որ նա բարի գործով կմնա մարդկանց հիշողության մեջ... Հիմա հասկացա՞ք ինձ, հայր սուրբ:

Մաշտոցն այլևս բառեր չգտավ իր շնորհակալությունը հայտնելու համար: Նա անխոս փարվեց Հռոփանոսին և ամուր ողջագուրվեց:

— Վաղվանից անցնենք գործի,— Մաշտոցի գրկից ազատվելով՝ ասաց Հռոփանոսը:

— Բայց ես գործի հետ կապված այլ հոգսեր էլ ունեմ, որոնց համար անպայման պետք է տեսնեմ ձեր քաղաքի եպիսկոպոսին,— ասաց Մաշտոցը մի տեսակ հայցողաբար:

— Այո՛, իհարկե,— ժպտաց Հռոփանոսը,— պետք է որ այբրենն օրինականացվի... Ես արդեն ասել եմ, որ այդ հարցում էլ կարող եմ ձեզ օգտակար լինել, քանզի գործի բերումով մտերիմ եմ եպիսկոպոսի հետ: Այնպես որ, դա շատ հեշտ է: Մանավանդ որ եպիսկոպոսն անձամբ ճանաչում է ձեր կաթողիկոս Սահակ Պարթևին և մեծ կարծիք ունի նրա մասին:

— Անձամբ,— զարմացավ Մաշտոցը:

— Այո՛, անձամբ, ինչ կա զարմանալու: Նրանք ծանոթացել են Կեսարիայում դեռ ուսանելու տարիներին: Իհարկե, նրանք հասակակիցներ չեն եղել... Նրանց ծանոթացրել է Սահակ Պարթևի զարմիկը, որը հասակակից է եղել մեր եպիսկոպոսին և ուսանել է նրա հետ միասին:

— Ի՞նչ է եղել այդ զարմիկի անունը:

— Անունը չեմ հիշում, բայց եպիսկոպոսի պատմելով՝ նա ձեր նշանավոր նախարարական տներից է եղել, եթե չեմ սխալվում՝ սպարապետական տոհմից: Տաղանդավոր պատանի է եղել: Մի առիթով եպիսկոպոսը նույնիսկ ավստանք հայտնեց, որ այդ պատանին զբաղվում է զինվորական գործով:

Մաշտոցի դեմքին անցողիկ մի ժպիտ խաղաց: Նա անմիջապես կռահեց, որ խոսքն իր մասին է: «Տեսնես՝ իր դասընկերներից որն է այսօր հասել Սամոսատ քաղաքի թեմի առաջնորդի աստիճանի»,— մտածեց նա և սկսեց մտքում հիշել Կեսարիայում իր հետ սովորող բոլոր ընկերներին: Եվ որպեսզի երկար կռահումներ չանի, իսկույն հարցրեց.

— Եպիսկոպոսի անունն ինչ է:

— Թեոդոս,— պատասխանեց Հռոփանոսը:

— Քանի՞ տարի է, որ նա Սամոսատի թեմի առաջնորդն է,— խոսքն առաջ տարավ Մաշտոցը:

— Մեկ տարին նոր է լրացել: Շատ պարզ, բայց արժանավոր մարդ է: Թեև դեռ հիսուն տարեկան չկա, սակայն եպիսկոպոսների շրջանում մեծ համարում ունի: Ա՛յ, ձեզ արդեն ծանոթ Ակակիոսն ու Բաբիդասը, չնայած իրենց առաջացած տարիքին ու տարիների վաստակին, նրան վերաբերվում են հավասարի պես...

Երբ Հռոփանոսը խոսում էր, այդ ընթացքում Մաշտոցը մտովի փորձում էր պատկերացնել, թե այսօր ինչպիսին կլինի եպիսկոպոս Թեոդոսը՝ իր ուսումնառության տարիների ուրախ ու չափազանց համարձակ, միջահասակ, կիսագանգուր ու առատ մազերով, անհանգիստ բնավորության տեր, մի քիչ էլ չարաձճի Թողորը... Հիշեց, թե ինչպես իրենց ծանոթության սկզբում Թեոդոսը, իմանալով, որ Մեսրոպ նշանակում է Մեծ Բաբբի, կատակեց. «Չէ՛, բարեկամս, թերևս այժմ դու դեռ մեծ չես: Արի՛ առայժմ քեզ կոչենք «Ռաբբի», և ինքը սկսեց Ռաբբի կոչել: Հետո ընկերներից շատերն էին Մեսրոպին Ռաբբի անվանում: Մաշտոցն ակամա ժպտաց:

— Ինչու՞ եք ժպտում, հայր սուրբ,— այս անգամ զարմացավ Հռոփանոսը:

— Հենց այնպես... Բան հիշեցի,— պատասխանից խուսափեց Մաշտոցը:

— Չէ, հայր սուրբ,— Ձեզ նման մարդիկ «հենց այնպես» չեն ժպտում: Դուք երևի ճանաչում եք եպիսկոպոս Թեոդոսին:

— Ես ճանաչում եմ, մնում է, որ ինքը ճանաչի:

— Որտեղի՞ց գիտեք նրան:

— Ես Սահակ Պարթևի հենց այն զարմիկն եմ, որը Կեսարիայում սովորել է ձեր եպիսկոպոսի հետ...

— Դու՞ք:

— Այո՛:

— Չի կարող պատահել,— կասկածեց Հռոփանոսը:

— Ինչո՞ւ:

— Եպիսկոպոսն ասում էր, որ Դուք զինվորական եք դարձել...

— Զինվորական էի, բայց այժմ կրոնավոր եմ...

— Հասկանալի է... — բազմանշանակ ծոր տվեց Հռոփանոսը: Միևնույնն է, եպիսկոպոսը Ձեզ կհիշի: Նախ՝ նա հրաշալի հիշողություն ունի, և երկրորդը՝ Դուք անմոռանալի եք...

— Ի՞նչ իմանա: Շուրջ երեք տասնամյակ է անցել:

— Դա ոչ մի նշանակություն չունի: Ով որ թեկուզ մի անգամ տեսել է Ձեզ, դժվար թե մոռանա:

— Ի՞նչ մի անգամ: Մենք չորս տարի մտերիմներ ենք եղել:

— Տեր մեր Հիսուս Քրիստոս,— ուրախ բացականչեց Հռոփանոսը,— այս գործի մեջ Աստծու մատը խառն է: Հայր սուրբ, հավատացե՛ք, որ Ձեր գործը հաջողությամբ կպսակվի: Ախր, ես հավատում էի, որ կգա նաև իմ օրը, և ես կծառայեմ մարդկանց...

— Հավատը մեծ ուժ է,— խոստովանեց Մաշտոցը,— եթե հավատում ես՝ կլինի...

— Իսկ Դուք հավատո՞ւմ եք, հայր սուրբ,— չգիտես ինչու, հարցրեց Հռոփանոսը:

— Եթե գործում եմ, ուրեմն հավատում եմ: Չ՛ որ ամեն մի իսկական գործ սկսվում է նախ հավատից...

— Իսկ եթե հավատը փու՛չ է,— հանկարծ սկսեց բանավիճել Հռոփանոսը:

— Եթե հավատը փուչ է,— իմաստախոսեց Մաշտոցը,— ապա վաղ թե ուշ ի չիք կղառնա այն գործը, որն իր հիմքում ունի փուչ հավատ...

— Ճշմարիտ է,— համաձայնվեց Հռոփանոսը,— հայր սուրբ, այժմ ինձ ասե՛ք՝ երբ եք մտադիր տեսնվելու եպիսկոպոսի հետ:

- Վաղը գնանք,— հարցին հարցով պատասխանեց Մաշտոցը:
- Գնանք,— ուրախացած համաձայնվեց Հռոփանոսը:
- Ուրեմն պայմանավորվեցինք:
- Պայմանավորվեցինք:
- Դե՛, ցտեսություն, մինչև վաղը:
- Ցտեսություն:

\* \* \*

Օրը երկուշաբթի էր: Եպիսկոպոս Թեոդոսն իր առանձնարանում ինչ-որ գրքեր էր թերթում, երբ զգուշավոր ներս մտավ սպասյակը և նրան հայտնեց, որ եկել է դիվանապետ Հռոփանոսը մի օտարերկրացի վարդապետի հետ, և ընդունելություն են խնդրում:

— Թող ներս գան,— կարգադրեց եպիսկոպոսը:

Սպասյակը ներս հրավիրեց Մաշտոցին ու Հռոփանոսին: Վերջիններս ներս մտան և եպիսկոպոսին ողջունեցին ընդունված կարգով: Եպիսկոպոսն առավ ողջույնը և նրանց առաջարկեց նստել: Երբ նրանք տեղավորվեցին գորգապատ բազմոցին, եպիսկոպոսը պատշաճ քաղաքավարությամբ հարցրեց.

— Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել մեր օտարերկրացի եղբորը:

Հռոփանոսը փորձեց խոսել, սակայն Մաշտոցը կանխեց նրան.

— Տե՛ր հայր, թո՛ւյլ տվեք. ես ուզում եմ անձամբ ներկայանալ:

Հռոփանոսը մեղավորի պես ժպտաց ու լռեց:

— Սրբազան,— դիմեց Մաշտոցը Թեոդոսին,— ես եկել եմ հեռավոր Հայոց աշխարհից...

— Սպասե՛ք, սպասե՛ք,— նրան ընդհատեց Թեոդոսը,— Ձեր դեմքը ոնց որ ինձ ծանոթ է, և ձայնդ շատ է հարազատ... Որտե՞ղ եմ տեսել Ձեզ...

Մաշտոցը մտերմաբար ժպտաց և սևեռուն նայեց եպիսկոպոսի աչքերին: Թեոդոսը իսկույն բարձրացավ տեղից և նետվեց դեպի Մաշտոցը.

— Բաբբի, այդ դո՞ւ ես: Տե՛ր Աստված,— ուրախ բացականչեց Թեոդոսը և թևերը լայն տարածած՝ գնաց ընդառաջ,— քիչ էր մնում՝ չճանաչեի, որքան ես փոխվել: Միայն աչքերդ չեն փոխվել: Ձայնդ էլ գրեթե նույնն է...

Մաշտոցը նույնպես վեր կացավ տեղից ու գնաց ընդառաջ: Նրանք ջերմորեն ողջագուրվեցին:

— Ես լսել էի, որ դու զինվորական ես դարձել ու զորապետի սուր ես կրում: Բայց ինչպես է, որ կրոնավորի սքեմ ես հագել, նույնիսկ՝ վեղար,— զարմացած հարցրեց եպիսկոպոս Թեոդոսը:

— Սուրը մեր բախտի համար անգոր գտնվեց, սրբազան,— խորհրդավոր ասաց Մաշտոցը,— դրա համար էլ որոշեցի խաչ կրել...

— Եվ վաղու՞ց է, որ այդ որոշումն ընդունել ես:

— Շուտով տասը տարին կլրանա:

— Այժմ գո՞հ ես:

— Իհարկե:

— Փանոբ Աստծո, — գոհունակորեն ասաց եպիսկոպոսը, — դե այժմ պատմիր, թե ինչու ես մեր կողմերը եկել:

Մաշտոցը, ինչպես միշտ, դարձյալ որոշ վերապահումներով, Թեոդոսին ներկայացրեց Հայոց աշխարհի վիճակը և համառոտ պատմեց իր առաքելության նպատակի մասին...

— Քանի՞ աշակերտ ես բերել Սամոսատ, — անմիջապես հարցրեց եպիսկոպոսը:

— Տասներկու:

— Որքան ժամանակ պիտի մնաք այստեղ:

— Մեկ կամ երկու տարի: Նայած հաջողությանը:

— Ուրեմն, նախ պայմանավորվում ենք այսպես, — անառարկելի շեշտով ասաց եպիսկոպոսը, — աշակերտների ուսուցման, ինչպես նաև նրանց մյուս բոլոր հոգսերը ես վերցնում եմ ինձ վրա, որպեսզի դու բոլորովին ազատ լինես, և Հռոփանոսի հետ միասին զբաղվեք միայն գրերի գործով: Ի դեպ, Հռոփանոսի վարձը նույնպես վերցնում եմ ինձ վրա:

Մաշտոցը փորձեց առարկել, բայց եպիսկոպոսը կտրականապես մերժեց.

— Դու ինձ հո լավ ես ճանաչում, Բարբի՛, ես ձևականություններ չեմ սիրում: Բացի այդ, ես որքան հիշում եմ, քեզանից մեծ եմ երկու տարով՝ չհաշված կոչումն ու պաշտոնս, այնպես որ իմ խոսքն անառարկելի է, — այս ամենը եպիսկոպոսն ասաց մի այնպիսի ձևով, որպեսզի Մաշտոցը հանկարծ չվիրավորվի, — մի խոսքով, ձեր բոլոր ծախսերը ես եմ հոգալու:

— Սրբազան, — խոսքի մեջ մտավ Հռոփանոսը, — մենք արդեն վարդապետի հետ պայմանավորվել ենք, որ ես նրա համար ամեն ինչ կանեմ առանց վարձատրության:

— Դա արդարացի չէ, — լրջորեն նկատեց եպիսկոպոսը, — և գործին անլուրջ մոտեցում: Աշխատանքը պետք է վարձատրվի, որ-

պեսզի աշխատողն իրեն պարտավորված զգա և գործին մոտենա ամենայն պատասխանատվությամբ:

— Բայց ես հաստատ որոշել եմ...,— փորձեց բացատրել Հոռփանոսը:

— Ես չգիտեմ, թե դու հաստատ ինչ ես որոշել,— նրան ընդհատեց եպիսկոպոսը,— բայց որ վարձդ ինձանից կստանաս, դա արդեն հաստատ է:

— Անչափ շնորհակալ եմ, սրբազան,— եպիսկոպոսի վերաբերմունքից երախտապարտ՝ ասաց Մաշտոցը:

— Երբ գործդ հաջողությամբ գլուխ կբերես, դա կլինի քո իսկական շնորհակալական խոսքը,— տիրաբար նկատեց Թեոդոսը:

Այնուհետև նրանք խոսեցին աշխարհի անցուդարձերից, հիշեցին իրենց ուսանողական տարիներից հիշարժան, զվարճալի դեպքեր: Օրվա վերջում եպիսկոպոսը ընթրիք տվեց հարգարժան հյուրի պատվին: Երբ Մաշտոցն ու Հոռփանոսը պատրաստվում էին հեռանալ, եպիսկոպոսը մի կողմ կանչեց Մաշտոցին և ցածրաձայն ասաց.

— Բաբբի՛, քեզ պիտի ասեմ, որ քո բոլոր ծրագրերը հանձարեղ են մշակված՝ դու ճիշտ ես վարվել, երբ նվիրական նպատակիդ հասնելու համար սրի փոխարեն օրըստօրե հզորացող խաչն ես վերցրել... Այսօր շատերն են այդ գորությանը հավատում և ճիշտ են վարվում... Աշխատիր՝ գրերդ «աստվածատուր» լինեն... Բայց չմոռանան հետագայում աշակերտներիդ սովորեցնել նաև սուր գործածելը, քանզի խաչին «տերն» է զորավոր դարձնում...

— Ուրիշ կերպ լինել չի կարող, սրբազան,— նույնպես ցածրաձայն ու բազմանշանակ ասաց Մաշտոցը:

— Դե, ձեզ հաջողություն եմ ցանկանում,— աչքը ուրախ ճպեց եպիսկոպոսը:

\* \* \*

Մաշտոցը, Հոռփանոսի աշխատանոցում նրանից չթաքցնելով Դանիելյան գրերի գաղտնիքը, բացատրեց, որ դրանք հունական ու արամեական գրերից քաղված ու հարուցված յուրատեսակ ծածկագրեր են, որոնց մեջ բացակայում են հայերենի մի շարք հնչյունների համապատասխան նշանագրեր:

— Եթե մինչև այսօր այդ նշանագրերը բացակայել են, ես հույս ունեմ, որ նրանք շուտով կ'ներկայանան,— խորագնին ուսումնասիրելով Դանիելյան գրերը՝ կատակեց Հռոփանոսը,— հաշվել եք՝ քանի հնչյունի նշանագիր է պակաս:

— Այժմ կոնկրետ չեմ կարող ասել, բայց երևի մեկուկես տասնյակի հասնի, եթե ոչ ավելի,— մշտապես մտածկոտ ասաց Մաշտոցը:

— Շատ է,— մտահոգվեց Հռոփանոսը,— ես կարծում էի՝ մեկ տասնյակից քիչ կլինի:

— Այո՛, դժբախտաբար շատ է,— ընկճվեց Մաշտոցը՝ վախենալով, որ Հռոփանոսը հանկարծ կիրաժարվի իրեն աջակցելու մտքից:

Մի պահ երկուսն էլ լուռ մտատանջության մեջ ընկան:

— Էլի գործի ծանրությունը Ձեզ վրա է, սուրբ հայր,— լռությունը խզեց Հռոփանոսը,— ստիպված պիտի շատ աշխատեք:

— Ես աշխատանքից չեմ վախենում,— ազատ շունչ քաշեց Մաշտոցը,— կաշխատեմ գիշեր-ցերեկ, միայն թե ստացվի: Միայն թե իմանամ՝ ինչ պիտի անեմ...

— Կանեք այն, ինչ որ արել է Դանիելյան գրերի հեղինակը,— չափազանց հանգիստ նկատեց Հռոփանոսը:

Մաշտոցը հարցական նայեց նրան:

— Այո՛, այո՛, հայր սուրբ,— իր խոսքը վճռաբար առաջ տարավ Հռոփանոսը, Դանիելյան գրերի հեղինակը իր ծածկագիրը ստեղծել է դպրությունից, մենք էլ պակաս հնչյունները կլրացնենք նույն ձևով, իսկ եթե դա էլ չբավարարի, այդ դեպքում մի ուրիշ բան կմտածենք...

— Օրինակ ի՞նչ:

— Օրինակ այն, որ մեզ հայտնի շատ այբուբեններում մինևույն նշանագիրը, աջից կամ ձախից, վերևից կամ ներքևից կետեր ընդունելով, ձեռք է բերում այլ հնչյունների նշանակություն ու իմաստ... — իսկ եթե եղածներին կետեր ավելացնենք և ասենք՝ սրանք էլ չեղածներն են,— այս ասելով՝ Հռոփանոսը հայացքը հարցական հառեց Մաշտոցին:

— Ես այդ մասին մտածել եմ,— առարկեց Մաշտոցը,— և եկել եմ այն եզրակացության, որ դա այնքան էլ ձեռնտու ձև չէ: Ես դա թերություն եմ համարում: Լավ կլինի, որ այբուբենում յուրաքանչյուր հնչյունը ունենա իր ուրույն նշանագրերը:

— Իհարկե, դա կատարյալ կլինի,— հավանություն տվեց Հռոփանոսը,— բայց նորից եմ ասում, որ դրա համար երկարատև ու տքնաջան աշխատանք կպահանջվի:



— Ոչինչ, թող պահանջվի,— պատրաստակամ ասաց Մաշտոցը.— մենք՝ հայերս, մի առած ունենք. «Ձուկ բռնողը թրջվելուց չի վախենա...»:

— Լավ առած է,— ժպտաց Հռոփանոսը,— քանզի կարևորը ձուկն է, թրջված հագուստը հեշտ է չորացնել: Դե ի՛նչ, արի՛ «թրջվենք»... Այժմ ինձ ասե՛ք, հայր սուրբ՝ Ձեզ ինչքան ժամանակ է պետք, որպեսզի կարողանաք պարզել, թե ինչ հնչյունների նշանագրեր են պակաս Դանիելյան գրերում:

— Կոնկրետ չեմ կարող ասել, բայց կաշխատեմ հնարավորին չափ շուտ լինի,— եղավ պատասխանը:

— Մտածե՛լ ես,— հարցրեց Հռոփանոսը,— ի՛նչ ձևով պիտի արվի դա:

— Դա հեշտ է,— ձեռքը թափ տվեց Մաշտոցը,— կվերցնեմ որևէ պատմություն և կշարադրեմ հայոց լեզվով, իհարկե՛ Դանիելյան նշանագրերով, և կտեսնեմ, թե ինչ հնչյուններ են պակաս...

— Ճիշտ ես մտածել,— հավանություն տվեց Հռոփանոսը,— բայց հարկ չկա որևէ պատմություն հնարել, քանզի պատրաստի պատմություններ կան: Քեզ մնում է՝ դրանցից որևէ մեկը մագաղաթին հանձնես հայերեն, ինչպես դու ես ասում՝ Դանիելյան գրերով: Ձեռքիդ տակ Աստվածաշունչ ունե՛ս:

— Ունեմ:

— Ի՞նչ լեզվով է:

— Ունեմ և՛ հունարենը, և՛ ասորերենը:

— Ավելի լավ, որ երկու լեզուներով էլ ունես,— գոհունակ ասաց Հռոփանոսը,— կվերցնես, Աստվածաշնչից հայերենի կվերածես Սոդոմոնի առակներից մի քանիսը: Պարզ է՝ Դանիելյան նշանագրերով...

— Շնորհակալ եմ խորհրդի համար,— ուրախացավ Մաշտոցը:

— Դե, քեզ հաջողություն, հայր սուրբ,— ձեռքը Մաշտոցին մեկնեց Հռոփանոսը,— հենց որ լրիվ կպարզես, թե որ հնչյունները նշանագրեր չունեն, արի՛, ես պատրաստ եմ...

Մաշտոցն իր կացարանը վերադարձավ ուշ երեկոյան: Աշակերտներն անհամբեր սպասում էին նրան: Հովսեփ Պաղնացին ավագի իրավունքով հարցրեց.

— Ներեցե՛ք, վարդապետ, այսօր երկար մնացիք Հռոփանոսի մոտ: Ի՞նչ հույսեր կան:

— Առայժմ գործին շոշափելի գրեթե ոչինչ չկա,— իմիջիայլոց պատասխանեց Մաշտոցը,— միակ մխիթարությունն այն է, որ Հռո-

փանոսը մեծ պատրաստակամություն է ցուցաբերում մեր գործին աջակցելու համար: Մեզ մնում է տքնելով աղոթել Աստծուն. գուցե մի լույս բացվի...

— Մեզ՝ աշակերտներին, ինչ հանձնարարություն ունեք, հայր սուրբ,— հարցրեց Հովսեփը:

— Դուք առայժմ լրջորեն հետևե՛ք ձեր դասերին: Ուսուցիչներից գոհ եք:

— Գոհ եմք,— գրեթե միասին պատասխանեցին աշակերտները:

— Դուք աշխատե՛ք չբավարարվել միայն ուսուցիչների տվածով. դա քիչ է: Ինքներդ շատ պարապեք, շատ կարդացեք և գրեք:

— Այդպես էլ անում եմք,— բոլորի փոխարեն պատասխանեց Հովսեփ Պաղնացին:

— Զորանաք,— խանդադատանքով նրանց նայեց Մաշտոցը,— իմ հույսը ձեր գիտելիքների վրա է... Դուք պիտի դառնաք այն կենսունակ հունդերը, որոնցից պիտի աճի ու բերք տա մեր դպրության ապագա արտը... Այժմ հանգստացե՛ք, ես էլ այսօր խիստ հոգնած եմ, գնամ մի քիչ խոնջանքս առնեմ: Երբ ձեր օգնության անհրաժեշտությունը զգացվի, ես ինքս ձեզ մոտ կգամ կամ ձեզ ինձ մոտ կկանչեմ: Այնպես որ, դուք զբաղվե՛ք առայժմ շատ գիտելիքներ ձեռք բերելով...

\* \* \*

Ուղիղ երկու շաբաթ Մաշտոցը գրեթե դուրս չեկավ իր կացարանից: Միայն երեկոները՝ աղոթքից հետո, կես ժամով այցելում էր աշակերտներին՝ նրանց որպիսությունն իմանալու և ամենօրյա հսկողություն սահմանելու նպատակով: Աշակերտները տեսնում էին, որ ուսուցիչը խիստ մտահոգ է ու տանջված, զգում էին, որ իրենց վարդապետն այդ օրերին տառապալից կյանք է վարում, բայց չէին համարձակվում հարցնել, թե նա հատկապես ինչն է զբաղված այդ օրերին, թեև շատ կուզեին իմանալ...

Մաշտոցը երկու շաբաթում Աստվածաշնչից հայերեն էր թարգմանել Սողոմոնի «Գիրք առակաց» գլխից մի հատված և իր համար վերջնականապես պարզել էր ու հաստատ համոզվել, որ Դանիելյան նշանագրերում պակաս են մեկուկես տասնյակ հայերեն հնչյուններ: Նա որոշեց առայժմ Հռոփանոսի մոտ չգնալ և անմիջապես ձեռնամուխ եղավ պակաս հնչյունների համար նշանագրեր ստեղծելուն: Ամենից առաջ ստուգեց և տեսավ, որ պակաս հնչյուն-

ներից՝ Ա, ի, ծ, Կ և Ն նշաններ կան արամեական այբուբենում: Վերցրեց դրանք և որոշակի ձևափոխումներով հարմարեցրեց Դանիելյան նշանագրերին, ապա այդ նշանագրերը գետեղեց Սողոմոնի առակների՝ իր թարգմանած հայերեն բնագրում: Մի քանի անգամ վերընթերցեց և գոհ մնաց արդյունքից. նշանագրերն «արդարացնում» էին իրենց: Այնուհետև Մաշտոցը ոգևորված անցավ մյուս՝ պակաս նշանագրերի ստեղծման գործին: Երկար մտածելուց հետո վերջապես գտավ նոր հնչյունի նշանագիր ստեղծելու ևս մեկ բանալի՝ նա Դանիելյան «Գ» նշանագրի օղակաձև գլխիկին ուղղանկյան բացվածք տվեց և ստացավ «Դ» հնչյունի նշանագիրը, այն դրեց «Գ»-ից անմիջապես հետո, ապա ուշադիր գննեց եղած նշանագիրը. չլինի՞ թե հանկարծ նրանցից մեկնումեկը կրկնվի: Տեսավ, որ նման չեն. ազատ շունչ քաշեց: Ուրախացավ սեփական հայտնությունից և առաջ անցավ:

Պետք էր ստանալ «Ժ» հնչյունի նշանագիրը: Նայեց Դանիելյան գրերին: Աչքի ընկավ «Թ»-ն: Անմիջապես շուռ տվեց գլխիվայր: Նորից ուշադիր գննեց նշանագրերը և նորից ուրախացավ. այն նույնպես եզակի էր: Դա էլ գրեց իր «մոր», այսինքն՝ «Բ»-ի կողքին: Նշանագրեր ծնեցնելու գաղափարից ոգևորված՝ Դանիելյան «Լ»-ի ներքին ելուստը բարձրացրեց կենտրոն և դարձրեց «խ»: Նորից գննեց: Տեսավ, որ այն գրեթե նման էր «Ի»-ին: Գտավ ելքը՝ ելուստի գլխին դեպի վեր կորուսյուն տվեց: Ուրախացավ, որ ստացվեց: Չեղած հնչյունների համար նշանագրեր ստեղծելու գտնված բանալին լիովին արդարացրեց իրեն: Մաշտոցն այնպիսի ոգևորությամբ էր կպել գործին, որ աշխատում էր նաև գիշերները: Այդ բանը շարժել էր նրա հույն սպասավորի հետաքրքրությունը, ուստի մի անգամ նրա զգուշավոր այն հարցին, թե՞ «Գիշերներն ինչո՞ւ չեք քնում, հայր սուրբ»,— Մաշտոցը բավականին լուրջ պատասխանել էր. «Աղոթում եմ, բարեկամս, աղոթում եմ...»: Այսբանը բավական էր, որ շրջակայքի բնակիչները բերնեբերան տարածեին օտարական վարդապետի անօրինակ բարեպաշտության և աղոթքների մասին... Պատահում էր, որ Մաշտոցը մի նշանագիր ստեղծելու համար տքնում էր մի քանի օր ու գիշեր:

Լուսինն արդեն երկու շրջան կատարել էր, որ նա ստեղծեց չեղած նշանագրերից վերջինը՝ «Յ»-ն:

Նա այդ օրն ամբողջ ցերեկը աշխատեց առանց ընդմիջման և ոչինչ չկերավ: Երեկոյից բավական ժամանակ անցել էր, բայց նրա կացարանում դեռ վառվում էր ճրագը: Կեսգիշերին, երբ ավարտեց

բոլոր չեղած հնչյունների նշանագրերը և եղածների հետ միասին մաքուր արտագրեց մագաղաթի վրա, նոր զգաց, որ քաղցած է: Անմիջապես մոտեցավ թարեքին դրված մթերքների գամբյուղին: Այնտեղ միայն հաց ու պանիր գտավ: Վաստակած մարդու ախորժակով, մեծ բավականությամբ կերավ մի քանի բրդուճ: Անկյունից վերցրեց պաղ ջրի սափորը և հենց սափորով էլ ջուր խմեց: Սափորը տեղը դրեց և նորից մոտեցավ մագաղաթներով ծանրաբեռնված գրակալին: Նայեց նորաստեղծ այբուբենին: Սիրտը լցվեց հրձվանքով: Ձեռքն առավ գրիչը: Ուզեց նշանագրերին անուններ տալ: Կանգ առավ «Ա» նշանագրի վրա: Ծանրութեթև արեց հունական «ալֆան» ու պարսկական «ալիֆը»: Ակամա ժպտաց. «Ո՛հ, մերը պիտի յուրահատուկ լինի՝ նրանցից տարբեր»,— վճռորոշ մտածեց նա և «Ա»-ի կողքին գծիկ դնելով՝ գրեց՝ «Աբ»: Մի քանի անգամ բարձրաձայն կարդաց: Զգաց, որ բարեհնչյուն է: Անցավ «Բ»-ին: Նորից մտքով համեմատեց հունական «բետա»-ն ու պարսկական «բե»-ն, ապա նայեց իր գրած «այբ»-ին, տեսավ, որ նրա անունը երեք նիշ ունի: «Թող երեք նիշ ունենա նաև «Բ»-ի անունը»,— մտածեց Մաշտոցը և գծիկ քաշեց նրա կողքին, գրեց «Բեն»...

Երբ Մաշտոցը վերջացրեց վերջին նշանագրի անվանումը, լսեց առաջին աբլորականչը: Լուսամուտից դուրս նայեց: Աղամամութը ցրվում էր, և աղոթարանը՝ շառագունում: Երեսը խաչակնքեց: Զմայլանքով երկար նայեց նշանագրերի շարքին, որը նման էր մարտից առաջ ելքի պատրաստ հեծելազորի խրոխտ դասակի... Ապա սկսեց հայկական նշանագրերը համեմատել հունական ու պարսկական նշանագրերի հետ, տեսավ, որ վերջիններս մեկ տասնյակից ավելի հնչյուններով պակաս են հայերենից: «Ուրեմն մեր լեզուն ավելի ճոխ է»,— անցավ Մաշտոցի մտքով: Հանկարծ հիշեց Հռոփանոսի հունարեն այբբենարանը, որտեղ յուրաքանչյուր նշանագիր պարունակող էջ զարդարված էր հանրաձանոթ մի առարկայի գունազարդ նկարով, որի անունը սկսվում էր տվյալ նշանագրով: Մի պահ մտածեց և նորից ձեռքն առավ գրիչն ու հայերենի նշանագրերի կողքին անվարժ «նկարեց» գաղափարագրեր հիշեցնող առարկաներ՝ «Ա»-ի դիմաց արև նկարեց, «Բ»-ի դիմաց՝ բահ, «Գ»-ի դիմաց՝ գավ, «Ե»-ի դիմաց՝ եգ, և այսպես շարունակ՝ մինչև վերջ... Այս աշխատանքը Մաշտոցից խլեց մոտ մեկ ժամ: Վերջում գննելով իր անվարժ նկարները՝ գոհ ժպտաց, ապա սկսեց նշանագրերը նորից կարդալ իրենց անուններով... Զգաց, որ հոգ-

նած է: Մագաղաթը աչքերից չհեռացնելով՝ մոտեցավ մահճակալին, հագուստով պառկեց չբացված անկողնու վրա ու շարունակեց կարդալ պառկած վիճակում: Կարդաց մի քանի անգամ սկզբից մինչև վերջ, ապա՝ վերջից սկիզբ: Թե քանի անգամ կարդաց, արդեն չէր հիշում: Նա ցանկանում էր մտքում պահել բոլոր նշանագրերի անունները...

Վաղորդյան լույսը կամաց-կամաց լուսավորեց կացարանը: Այդ միջոցին սկսեցին մեղմ դողանջել եկեղեցիների զանգերը: Մաշտոցն ակամա իր ընթերցումը զուգորդեց զանգերի դողանջին՝ այբ, բեն, գին, դա՛... «Տեր Աստված,— գրեթե լսելի շնչաց նա,— այս ի՞նչ երաժշտականություն ունեն մեր հնչյունները... «Եվ սկսեց կիսաձայն երգել՝ այբ, բեն, գին, դա՛, նչ, գա՛...

Առավոտ կանուխ, երբ հույն սպասավորը եկավ Մաշտոցի կացարանը, զարմանքից քար կտրեց. կացարանի դուռը ներսից փակված էր: Նա սովորաբար այդ պահին հանդիպում էր վարդապետին կացարանի պարտեզում զբոսնելիս: Սպասյակը դռան արանքից ներս նայեց: Ո՛վ սարսափ. վարդապետը հագուստով անշարժ պառկած էր անկողնակալի վրա... Առաջին բանը, որ անցավ սպասյակի մտքով, դա անմիջապես տեսածի մասին վարդապետի աշակերտներին տեղյակ պահելն էր: Աշակերտների կացարանը շատ հեռու չէր վարդապետի կացարանից: Նրանք անմիջապես տեղ հասան և դռան արանքից տագնապով ներս նայեցին: Ամեն ինչ ճիշտ էր. վարդապետն անշարժ և հագուստով պառկած էր չբացված անկողնու վրա: Հույն սպասավորը կցկտուր ու ահաբեկված պատմում էր, որ ինքը երեկոյան տուն գնալիս վարդապետին տեսել էր ողջ ու առողջ: Հիշեց նաև, որ այդ երեկոյան հայր սուրբը սովորականից բարձր տրամադրության մեջ էր, քանզի աշխատելիս մի ուրախ մեղեդի էր դնում: Բայց թե գիշերը ինչ է պատահել, ցավոք սրտի ինքն այդ մասին ոչինչ չի կարող ասել...

Աշակերտների ավագ Հովսեփ Պաղնացին մոտեցավ մի քանի աշակերտների հետ և զգուշորեն բախեց դուռը: Չափազանց մեծ եղավ նրանց զարմանքն ու ուրախությունը, երբ առաջին իսկ բախումից հետո նրանք դռան արանքից տեսան, որ վարդապետը կտրուկ շրջվեց, նստեց և անմիջապես կանգնելով՝ մոտեցավ դռանը: Երբ նա, քաշելով սողնակը, բացեց դուռը, աշակերտներն առանց հրավերի խուժեցին ներս: Մաշտոցը սկզբում զարմացավ: Նա ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ինչ է կատարվում իր շուրջը:

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց Մաշտոցը՝ հերթով գննելով աշակերտների տարակուսած դեմքերը:

Հովսեփ Պաղնացին համառոտ պատմեց եղելության մասին: Մաշտոցը նայեց հույն սպասավորին, որը, անկյունում կանգնած, մեղավորի պես ժպտում էր: Մաշտոցը զուսպ ծիծաղեց: Նրա ծիծաղը քաջալերեց աշակերտներին, ուստի նրանք նույնպես ծիծաղեցին:

— Ինչո՞ւ անկողին չէիք մտել, վարդապետ,— անհամարձակ հարցրեց Հովսեփ Պաղնացին:

Մաշտոցը պատասխանի փոխարեն ժպտաց ու գլխով ցույց տվեց անկողնու վրա ընկած մազաղաթը, որի վրա գրված էին հայոց լեզվի նշանագրերը:

Հովսեփը անմիջապես վերցրեց մազաղաթը և սկսեց անհամբեր գննել, ապա ուրախ բացականչեց.

— Եղբայրներ, եղբայրներ, աչքներս լոյս. մենք արդեն մայրենի լեզվով նշանագրեր ունենք:

Աշակերտները միանգամից վրա պրծան, շրջապատեցին Հովսեփին, և մազաղաթը սկսեց ձեռքից ձեռք անցնել... Հույն սպասավորը, որը մոտավորապես գիտեր, թե Մաշտոցն ու իր աշակերտները ինչ նպատակով են եկել Սամոսատ, նույնպես անհամարձակ խառնվեց աշակերտներին ու սկսեց դիտել նշանագրերը:

— Այս ինչպե՞ս եղավ, հայր սուրբ,— ոգևորությունից փայլող աչքերով հարցրեց Հովսեփ Պաղնացին Մաշտոցին, որը, հեռու քաշված, ակնդետ հետևում էր իր աշակերտների ոգևորությանը:

— Աստծով, զավակներս, Աստծով,— խորհրդավոր ասաց Մաշտոցը և խաչակնքեց,— այս գիշեր Աստված մեզ օգնական եղավ...

Աշակերտները լարվեցին: Հույն սպասավորը, նույնպես համակ ուշադրություն դարձած, սպասում էր Մաշտոցի հաջորդ բառերին: Մաշտոցը հայացքով ընկալեց այդ ամենը: Պահը հարմար համարեց և խորհրդավորություն տալով իր խոսքին՝ ասաց.

— Այո՛, զավակներս, այսօր՝ կեսգիշերին, հրաշք եղավ... Ամբողջ օրը և մինչև գիշերվա կեսը ծնկաչոք ու պաղատագին աղոթում էի, որպեսզի շարժեմ ամենակարող Աստծու գույթը... Հանկարծ աչքերս մշուշվեցին, և ես՝ կես քուն–կես արթուն, հայացքս վեր բարձրացրի և հրաշք տեսա՝ աղոթարանիս պատի որմին մի ձերմակ ու լուսեղեն ձեռք գրում էր մեզ համար բաղձալի այս նշանագրերը... Ես իսկույն ձեռքս առա գրիչը և անմիջապես մազաղաթին հանձնեցի...,— Մաշտոցը նորից խաչակնքեց,— այնպես որ, զավակներս, մեզ մնում է

ջերմագին շնորհավորել միմյանց և գոհունակություն հայտնել ամենագոր, ամենակարող ու գթառատ տիրոջը, քանզի նա անսաց մեր պաղատագին աղոթքներին և մեզ պարզևեց մայրենի լեզվի լիակատար նշանագրերը...

Աշակերտները գրկախառնվեցին և սկսեցին շնորհավորել մեկը մյուսին, առանձին-առանձին ողջագուրվեցին իրենց սուրբ ուսուցչի՝ Մաշտոցի հետ և գորովանքով շնորհավորեցին նրան: Վերջում Մաշտոցին մոտեցավ Հովսեփ Պաղնացին, խորհրդավոր նայեց սիրելի ուսուցչի աչքերին, ժպտաց, քնքշորեն առավ ուսուցչի աջը և ջերմորեն սեղմեց շուրթերին: Մաշտոցը խաչակնքեց նրան և ձեռքը հայրաբար դրեց նրա գլխին: Հովսեփի օրինակին հետևեցին մյուս բոլոր աշակերտները: Ուսուցիչը բոլորի հանդեպ վարվեց նույն կերպ: Պահն այնքան վարակիչ էր, որ աշակերտների օրինակին հետևեց նաև հույն սպասավորը: Մաշտոցը օրինեց և նրան...

\* \* \*

Երբ հաջորդ օրը Մաշտոցը նորաստեղծ նշանագրերը տարավ և ցույց տվեց Հռոփանոսին, վերջինս արդեն ճոխացրած մանրամասներով լսել էր աստվածատուր գրերի ստեղծման պատմությունը: Նա նախ շնորհավորեց Մաշտոցին, ապա սկսեց լռելյայն զննել մագաղաթին շարված նշանագրերը:

— Իսկապես, աստվածատուր գրեր են,— երկար զննելուց հետո խոսեց Հռոփանոսը,— իսկ սրանք ի՞նչ գաղափարագրեր են:

— Դրանք այն առարկաների նկարներն են, որոնց անունների առաջին հնչյունը սկսվում է այդ նշանագրով,— համեստորեն նկատեց Մաշտոցը:

— Ահա թե ինչ,— ուրախ ծիծաղեց Հռոփանոսը,— Դուք նաև նկարիչ եք եղել, հայր սուրբ,— այդ նկարներն էլ են աստվածատուր,— ցածրաձայն կատակեց նա:

— Ո՛հ, ինչ եք ասում,— շփոթվեց Մաշտոցը,— ես դրանք նկարել եմ հասկանալու համար... Թե չէ, ես ի՞նչ նկարիչ եմ...

— Չափազանց մեծ գործ եք արել, հայր սուրբ,— մեկեն լրջացավ Հռոփանոսը,— Ձեր արածը մարդկային երևակայությունից վեր է... Գիտե՞ք, Ձեր նշանագրերը երկու գերազանց առանձնահատկություն ունեն՝ համեմատած ինձ հայտնի բոլոր ալֆավիտների հետ, իհարկե, եթե հնչյունները լրիվ են...

— Տէր հայր,— բարձր տրամադրությամբ ասաց Մաշտոցը,— բազմաթիվ անգամ ստուգել եմ՝ ավել կամ պակաս հնչյուններ չկան... Բայց շատ կուզեի իմանալ՝ քո խոսքը ինչ երկու յուրահատկության մասին է:

— Հայր սուրբ, ինձ թվում է, որ Դուք գիտեք...

— Անկեղծ ասած՝ չգիտեմ,— խոստովանեց Մաշտոցը:

— Եթե անկեղծ եք ասում, ուրեմն իմացե՛ք, յուրահատկություններից առաջինն այն է, որ Ձեր նշանագրերն իրենց կառուցվածքով տարբերվում են մինչև այսօր հայտնի բոլոր այֆավիտներից. նրանք ուղղագիծ կառուցվածք ունեն, իսկ դա մեծ առանձնահատկություն է: Խոստովանում եմ, որ այդ հանգամանքը ինձ՝ վարպետ գեղագրիս, ոգևորում է, քանզի հեշտ է գեղագրել, հետևապես և գրել...

Մաշտոցը, որ ուշադիր լսում էր Հռոփանոսի բացատրությունը, մտովի պատկերացրեց նշանագրերի տեսքը և ուրախացավ: Հռոփանոսի գովեստից քաջալերված՝ նա անհամբեր հարցրեց.

— Իսկ երկրորդ յուրահատկությունը ո՞րն է, վարպետ:

— Հաշվել ես՝ Ձեր նշանագրերը քանիսն են,— հարցին հարցով պատասխանեց Հռոփանոսը:

— Երեսունվեց, ի՞նչ կա որ,— անմիջապես պատասխանեց Մաշտոցը:

— Այդ թիվը Ձեզ ոչինչ չի՞ ասու՞մ:

— Չեմ կռահում:

— Հայր սուրբ, մենք հաշվելու համար քանի՞ թիվ ունենք:

— Ի՛նք:

— Իսկ երեսունվեցի մեջ քանի՞ ինը կա:

— Չորս,— մի պահ մտքում բաժանելով՝ ասաց Մաշտոցը:

— Տեսնու՞մ եք, հայր սուրբ, եթե մենք Ձեր նշանները բաժանեն չորս սյունակի, կստանանք նշանագրերի չորս շարք, որոնցից առաջինը կլինի միավորների, երկրորդը՝ տասնավորների, երրորդը՝ հարյուրավորների, իսկ չորրորդը՝ հազարավորների շարք...

Մաշտոցը դեռևս այդ մասին չէր մտածել, ուստի այդ անակնկալ հայտնությունից առավել ոգևորվեց և խանդաղատանքով նայեց Հռոփանոսի աչքերին: Վերջինս հպարտորեն ուղղեց կեցվածքը և հոնքերի խաղով ու գլխի շարժումով այնպես սեթևեթեց, որով ուզում էր ասել. «Բայ, տեսնո՞ւմ ես, բարեկամ, ես այդպիսի բաներ գիտեմ և իսկապես քո փնտրած ու գտած մարդն եմ...»: Մաշտոցը, ի նշան հավասարության, աջ ձեռքով գրկեց Հռոփանոսի ուսը,



սեղմեց կրծքին և գլուխը հպեց նրա գլխին: Հռոփանոսն այդ վերաբերմունքից շատ զոհ ժպտաց և պատրաստակամ նայեց Մաշտոցին...

— Ե՞րբ ենք գործի անցնում, վարպետ տեր հայր,— այս անգամ կատակեց Մաշտոցը:

— Դուք Ձեր հանձնարարությունը արժանապատվությամբ կատարեցիք, իմաստուն հայր սուրբ,— նկատեց Հռոփանոսը,— մնացի ես: Եթե ինձ տրամադրեք պահանջվող քանակի մագաղաթ և ներկեր, ես վաղն էլ կսկսեմ:

— Ինչքան մագաղաթ է պետք, և որտեղի՞ց կարելի է որակով մագաղաթ ձարել,— հարցրեց Մաշտոցը,— ես մի քանի անգամ շուկայում եղել եմ, բայց որակով մագաղաթի չեմ հանդիպել:

— Դուք շուկայից որակով մագաղաթ չեք ձարի, սուրբ հայր, պետք է պատվիրենք: Այստեղ՝ Սամոսատում, կան շնորհալի մագաղաթագործներ, որոնք իրենց ապրանքը շուկա չեն հանում: Նրանք իրենց գնորդներն ունեն...

— Տվե՛ք մեկի հասցեն և ասե՛ք՝ երկու օրինակ այբբենարանի համար ինչքան մագաղաթ է պետք:

— Երկու օրինակ,— անակնկալի եկավ Հռոփանոսը:

— Այո՛, երկու օրինակ,— պնդեց Մաշտոցը.— մեկը քիչ է...

— Բայց ես ժամանակ չունեմ երկու օրինակի համար,— առարկեց Հռոփանոսը:

— Տե՛ր հայր, սիրելի՛ վարպետ,— ձայնին քնքշություն տալով՝ խոսեց Մաշտոցը,— դու կգրես ու կձաղկես հիմնական օրինակը և ինձ ցույց կտաս մեկին, որը կկարողանա ընդօրինակել քո գրածը... Ես կվարձատրեմ նրան, և նա, քեզ զուգահեռ, կընդօրինակի երկրորդ օրինակը: Այնպես որ, դու քնն առա...

— Լավ,— համաձայնվեց Հռոփանոսը,— թեև լավ ընդօրինակողներ չկան:

— Ոչինչ,— հանգստացրեց Մաշտոցը,— պարտադիր չէ, որ երկրորդ օրինակը նույն որակն ունենա:

— Դե որ պնդում եք, ի՞նչ ասեմ,— զիջեց Հռոփանոսը,— միայն իմացե՛ք, որ երկու օրինակի համար մոտավորապես քառասուն մագաղաթ է պետք:

— Ոչինչ, տե՛ր հայր, պետք է, որ ասում եմ,— գրեթե աղաչանքով ասաց Մաշտոցը,— միայն ինձ օգնի՛ր որակով մագաղաթ առնելու հարցում:

— Միայն մագաղաթագործ մի վարպետ կա,— ասաց Հռոփանուսը,— որը միշտ այդ քանակությամբ պատրաստի մագաղաթներ ունի: Նա Ձեզ հայրենակից է: Մեծ գործատուն ունի, որտեղ աշխատում են երկու տասնյակից ավելի գործավորներ: Ապրում է եփրատամերձ թաղամասում, անունը Հակոբոս է: Երբ էլ գնաք, նրան կտանեք: Ամբողջ քաղաքը նրան գիտի, բայց առանց ինձ չգնաք: Մագաղաթները ես պետք է ընտրեմ:

— Գնանք,— համաձայնվեց Հռոփանուսը:

\* \* \*

Չնայած ամառային անտանելի շոգերին՝ Մաշտոցն ու Հռոփանոսն աշխատում էին վաղ առավոտից մինչև ուշ երեկո: Մի երեք ժամով հանգստանում էին կեսօրվա շոգին: Հռոփանուսը յուրաքանչյուր նշանագրի համար հատկացնում էր մագաղաթի մեկ էջ: Այն պայմանականորեն բաժանում էր չորս հավասար մասերի: Էջի առաջին քառորդում, որն ընդգրկում էր էջի վերին ձախ անկյունը, գեղեցիկ ու վառ գույներով նկարում էր այն առարկան, որի անունը սկսվում էր հերթական նշանագրով: Օրինակ՝ «Ա» նշանագրի համար նկարել էր հորիզոնում վառվող մի ձաձանչափայլ արև, որն իր շողերն էր տարածում կանաչ հագած հանդ ու սարերի վրա: Էջի վերին աջ անկյունում, այսինքն՝ էջի երկրորդ քառորդում, գծել էր իրարից հավասար հեռավորության վրա գտնվող երկու զուգահեռագծեր, ապա վերևի զուգահեռագծի վրա նկարել էր մեծատառ «Ա»-ն՝ ոճավորված որևէ զարդանախշով, իսկ ներքևի զուգահեռագծի վրա նկարել էր փոքրատառ «ա»-ն՝ առանց պաճուճանքների: Այսպիսով՝ յուրաքանչյուր նշանագիրն ունենում էր իր մեծատառն ու փոքրատառը: Մեծատառի կողքին գծիկ էր դրել և ոսկետառ գրել. «Այբ», այսինքն՝ «Ա» նշանագրի անվանումը: Էջի ներքևի ձախ անկյունում՝ երրորդ քառորդում, գրել էր «Ա»-ով սկսվող մի շարք բառեր, իսկ ներքևի աջ կողմում՝ չորրորդ քառորդում, գրել էր մի ամբողջ նախադասություն, որի բառերում գերակշռող հնչյունը «Ա» տառն էր: Եվ այսպես գրում ու գեղագրում էր բոլոր նշանագրերը: Այդ բոլորն անում էր՝ Մաշտոցի հետ խորհրդակցելով ու նրա համաձայնությամբ: Երբեմն նրանց միջև ծագում էր վիճաբանություն որևէ հարցի շուրջ, և այն տևում էր այնքան ժամանակ, մինչև հարցը լուծվում էր փոխադարձ համաձայնությամբ:

Մի անգամ վեճի առարկա դարձավ «Ս» նշանագրի նկարագրողման հարցը: Հռոփանոսի այն հարցին, թե՛ ինչ նկարեմ, Մաշտոցը պատասխանեց՝ սուր: Հռոփանոսն առարկեց.

— Հայր սուրբ, այս մատյանում օրեր առաջ «Խ» նշանագրի համար խաչ նկարեցինք, իսկ դու այժմ առաջարկում ես սուր նկարել նույն մատյանում, դա որքանո՞վ է նպատակահարմար... Ի՞նչ ես կարծում, դրանք իրարամերժ չե՞ն...

— Մենք՝ հայերս, մի լավ առած ունենք, տե՛ր հայր,— ասաց Մաշտոցը,— «Խաչին տերն է գորավոր դարձնում...»

— Խաչը ճշմարտության նշան է,— փորձեց առարկել Հռոփանոսը,— ճշմարտությունն ինքնին հզոր է, ուստի տիրոջ կարիք չունի...

— Լավ, ասենք թե ես հրաժարվում եմ սրի գաղափարից, դու այս նշանագիրը ինչո՞վ կնկարագարդես,— տեղի տվեց Մաշտոցը:

— Աստվածային այն սուրբ սարով, որը գտնվում է Ձեր հայրենիքում՝ Հայոց աշխարհում, սուրբ հայր: Միայն Դուք ինձ նկարագրե՛ք, թե նա ինչ տեսք ունի:

— Սուրբ սարը երկու վեհասլաց գագաթներ ունի, տե՛ր հայր,— երանությամբ ասաց Մաշտոցն ու խոհերի գիրկն ընկավ մի պահ,— գագաթներից մեկը շատ բարձր է՝ ամպերի մեջ, մյուսը մի քիչ ցածր է, բայց նա էլ է ամպերի մեջ... Չէ՛, տե՛ր հայր, դա պատմելու բան չէ, պետք է աչքով տեսնել... Սուրբ սարը պետք է մոտիկից տեսնել, որպեսզի լավ պատկերացնել... պատմելով անհնար է պատկերացնել...,— Մաշտոցը խոսում էր՝ կարծես այս աշխարհից վերացած:

Հռոփանոսը, վրձինը բռնած, ժպտում էր: Մաշտոցը, երանության գիրկն ընկած, նկարագրում էր Արարատ սարը:

— Ա՛յ, տեսնո՞ւմ եք, հայր սուրբ,— հաղթական ասաց Հռոփանոսը,— այդպիսի սար ունեք, իսկ դու ասում ես, թե՛ սուր նկարիր...

— Դու իրավացի ես, Հռոփանո՛ս, բարեկամս,— խոհերից սթափվելով՝ մտերմական ձևին անցավ Մաշտոցը,— իմ հայրենիքում նկարելու արժանի շատ բաներ կան, բայց մեծաքանակ վայրենիներն ուզում են տիրանալ դրանց,— Մաշտոցը խոժոռվեց, մի պահ մտածեց և ասաց,— այո՛, տե՛ր հայր, սարը նկարիր, բայց չմոռանան կողքին անպայման սուր նկարել...

Ամառն արդեն վերջանալու վրա էր, երբ Հռոփանոսն ավարտեց հայոց այբբենարանը: Այն բավականին ծավալուն էր, գեղեցիկ ու կաշեպատ կազմով, որ գոցվում էր այժի եղջյուրից շինած նուրբ ճարմանդով: Երբ Հռոփանոսը Մաշտոցի աշակերտների ներկայությամբ ավարտված այբբենարանը հանձնեց Մաշտոցին, շնորհավորեց ու հաջողություն ցանկացավ Մաշտոցին, վերջինս մեկ անգամ ևս փորձեց Հռոփանոսին վարձատրել կատարած տքնաջան աշխատանքի համար: Սակայն վերջինս կտրականապես մերժեց՝ ցույց տալով այբբենարանի վերջին էջի վրա գեղագրած հունարեն հիշատակարանը՝ ասելով՝ «ահա սա է իմ վարձը»...

Մաշտոցը որոշեց ևս մեկ ամիս մնալ Սամոսատում: Նրան անհրաժեշտ էր այդ ընթացքում գտնել մեկին և կրկնօրինակել տալ այբբենարանը, աշակերտներին վարժեցնել նոր այբբենարանին և, որն ամենակարևորն էր, մտադիր էր Աստվածաշնչից թարգմանել ամբողջ «Գիրք առակաց»-ը և վերցնել հետը՝ որպես ընթերցարան: Նա աշակերտների օգնությամբ մարմին տվեց իր մտահղացմանը և խնդրեց Հռոփանոսին այդ «ընթերցարանի» տիտղոսաթերթին գեղագրել Սողոմոն Իմաստունի «հանձնարարականը»՝ «Չանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանձարոյ»...

Մեկ ամիս հետո՝ հայրենիք մեկնելուց առաջ, Մաշտոցն աշակերտների հետ ներկայացավ Թեոդոս եպիսկոպոսին՝ իր երախտագիտությունն ու շնորհակալությունը հայտնելու և հրաժեշտի խոսք ասելու համար: Թեոդոսը ոչ միայն գովեստով խոսեց Մաշտոցի սխրագործության մասին, այլև եկեղեցական հատուկ կոնդակով օրինական ճանաչեց հայոց գրերը և որպես պաշտոնաթուղթ՝ կոնդակի մի օրինակ հանձնեց Մաշտոցին... Վերադարձի ճանապարհին նույն կերպ վարվեցին նաև ասորաց եպիսկոպոսներ Բաքիդասն ու Ակակիոսը... Հաջողությունը կատարյալ էր, իսկ ոգևորությունն՝ անսահման: Մաշտոցը կանխավ սուրհանդակ ուղարկեց հայրենիք՝ կաթողիկոսին ու թագավորին իր հաջողության ու վերադարձի մասին նախօրոք տեղյակ պահելու համար: Սուրհանդակներն իրենց հետ Հայոց աշխարհի մայրաքաղաք Վաղարշապատ էին տանում հայոց նոր գրերի երկու օրինակ-նմուշներ՝ հայոց առաջին այբբենարանի կրկնօրինակը, հայերեն նոր գրերով թարգմանված Սողոմոնի մի քանի առակ և հայերեն տառերով ու հայերեն

լեզվով գրված երկու նամակ՝ հասցեագրված հայոց թագավոր Վռամշապուհին և կաթողիկոս Սահակ Պարթևին: Նամակները գրել էր Մաշտոցն անձամբ, ինչպես ինքն էր վկայել՝ «սեփական ձեռամբ»: Նամակներում մանրամասն նշված էր իրենց հաջողությունների ու հայոց նոր գրերի անթերի լինելու մասին և այն մասին, որ շուտով հայրենիք կվերադառնա թանկագին բեռով...

## ՏՈՆԱԿԱՆ ՕՐԵՐԸ

*«Եվ արդ, երբ հիշելին եկավ մոտեցավ թագավորական քաղաքին, իմաց տվեցին թագավորին և սուրբ եպիսկոպոսին: Նրանք, նախարարագունդ ավագանու բոլոր բազմությունն առնելով, քաղաքից դուրս եկան, Ռահ գետի ափին դիմավորեցին երանելուն: Եվ ցանկալի ողջույնը միմյանց տալուց հետո այնտեղից ցնծության ձայներով ու հոգևոր երգերով, բարձրաձայն օրհնություններով ետ դարձան քաղաքը և տոնական ուրախությամբ անցկացրին օրերը»:*

### ԿՈՐԹՈՒՆ

Մաշտոցն իր աշակերտների հետ հայոց հին մայրաքաղաք Արտաշատ հասավ կեսօրին: Շուրջ երկու տասնյակի հասնող աշակերտների հոգնատանջ խումբը իրենց ուսուցչի հետ հանգրվանեց քաղաքի կենտրոնական եկեղեցու իջևանատանը: Բերքառատ աշուն էր, քաղաքի օդը հագեցած էր հասուն մրգերի, հատկապես խաղողի ախորժալի բույրով: Եկեղեցու ավագ քահանան, որը քաջ գիտեր, թե Մաշտոցն իր աշակերտներով որտեղից է վերադառնում, անմիջապես գործի անցավ: Նրա կարգադրությամբ եկեղեցու սպասավորները ամեն ինչ անում էին, որպեսզի եկվորները կարողանան, որքան հնարավոր է, հանգիստ գիշերել: Մաշտոցը խնդրեց ավագ քահանային՝ առավոտ կանուխ սուրհանդակ ուղարկել մայրաքաղաք՝ Վաղարշապատ, տեղյակ պահել կաթողիկոս Սահակ Պարթևին իր վերադարձի և Արտաշատում գտնվելու մասին:

Ավագ քահանան իսկույն կանչեց մի երիտասարդ սարկավազի, որը մի կորովի ու ջլապինդ երիտասարդ էր, և ապապրեց, որ նա առավոտյան անհապաղ մեկնի Վաղարշապատ և հայտնի հայոց կաթողիկոսին Մաշտոց վարդապետի ու նրա աշակերտների հաջող վերադարձի մասին: Հուսիկը (այդպես էր սարկավազի անունը), հենց որ հանձնարարությունը ստացավ, ուրախությունից աչքերը փայլեցին: Նա գիտեր, որ նման հանձնարարությունը պատիվ կբերի նրան, ով կկատարի այն, ուստի վճռեց հանձնարարությունը կատարել ժամ առաջ և ամենայն բարեխղճությամբ: Նա այլևս չսպասեց առավոտվան, այլ անմիջապես ձի նստեց, բռնեց մայրաքաղաքի ճանապարհը: Ուշ երեկոյան Հուսիկը լուրը հասցրեց հայոց կաթողիկոսին: Սահակ Պարթևը լուրն ընդունեց մեծ հուզմունքով և շնորհակալություն հայտնելով՝ օրհնեց լրաբերին՝ այդքան ցանկալի լուր բերելու համար: Հուսիկը իրեն լրիվ վարձատրված զգաց. նրան բախտ էր վիճակվել արժանանալ հայոց անվանի կաթողիկոսի շնորհակալությանն ու օրհնանքին:

Կաթողիկոսը կանչեց սպասավորին և հանձնարարեց, որպեսզի լրաբերին գիշերելու տեղ հատկացնի և հոգ տանի նրա ձիու մասին: Հուսիկը շնորհակալություն հայտնեց և խնդրեց, որ իրեն թույլ տան անմիջապես վերադառնալ:

— Ո՛հ,— կտրականապես մերժեց կաթողիկոսը,— բնավ անհրաժեշտություն չկա գիշերով վերադառնալու: Գիշերը հանգստացիր և աղոթարանը բացվելուն պես մեկնիր: Եվ քանզի մեկնելու ես առավոտ կանուխ, բնականաբար, մենք գուցե չտեսնվենք: Ուստի Մաշտոցին հայտնիր, որ ինքը նույնպես չշտապի. հարկ է, որ նրան դիմավորենք արժանավայել կերպով...

Քանզի օրն արդեն սպառվում էր, կաթողիկոսը հարմար համարեց Մաշտոցի վերադարձի մասին թագավորին տեղյակ պահել առավոտյան, սակայն չհապաղեց իր մոտ կանչել Մայր տաճարի եպիսկոպոսին և իր փեսա Համագասպին ու հանձնարարություններ տալ՝ կարելույն չափ լավ պատրաստություններ տեսնել՝ Մաշտոցին արժանավայել դիմավորում կազմակերպելու համար:

Առավոտյան դեռ արևը չծագած՝ կաթողիկոսն այցելեց թագավորին և նրան հայտնեց Մաշտոցի վերադարձի և Արտաշատում գտնվելու մասին:

— Տեր կաթողիկոս,— բարձր տրամադրությամբ ասաց Վռամ-չապուռ արքան,— Մաշտոցը պատվով կատարեց իր վրա դրված պարտականությունը: Մնում է, որ մենք էլ կատարենք մերը...

— Դժվարն արված է, տներ արքա,— ոչ պակաս ուրախությամբ ասաց Սահակ Պարթևը,— մենք, շնորհիվ Մաշտոցի, արդեն պատրաստի ունենք հայոց գրերը, որոնք բեղուն հունդեր են մեր ապագա դպրության համար: Մեզ՝ սերմնացաններին, մնում է այն խնամքով սերմանել մեր ժողովրդի մեջ, որն այսօր առավել քան երբևէ ծարավի է դրան: Մի խոսքով, ժամանակներն այնպիսին են, որ հողն էլ է պարարտ...

— Սերմնացաններն են քիչ, տներ կաթողիկոս,— մտազբաղ ասաց արքան,— դրանց կարելի է մատների վրա հաշվել՝ Մաշտոցը, Դուք և Մաշտոցի մի բուռ աշակերտները... Շատ քիչ է ամբողջ Հայոց աշխարհի համար...

— Սկզբի համար քիչ չէ, տներ արքա: Կարևորն այն է, որ հունդը կա, իսկ սերմնացաններ ունենալու համար լավ, ջանադիր աշխատելու դեպքում մեծ թվով սերմնացաններ ստեղծելն ընդամենը չորսհինգ տարի կպահանջի: Չէ՞ որ այդ հայրենաշեն գործի համար մտահոգված է և ջանքեր չի խնայում Հայոց աշխարհի հայրենասեր ու խոհուն թագավորը՝ հանձին Ձեզ...

— Իմ դերն այս գործում մի՛ չափազանցրեք, տներ կաթողիկոս: Ես պարզապես հաջողակ թագավոր եմ, քանզի հայրենի դպրության գործում ունեմ Ձեզ և Մաշտոցի նման բանիմաց ու հայրենասեր աջակիցներ: Եվ ես հիրավի կկարողանամ պիտանի լինել մեր տառապած հայրենիքին, եթե Դուք ինձ օգնեք... Ես զենքի մարդ եմ և դպրության գործից շատ բաներ չգիտեմ, ես այդ հարցում իմաստուն խորհրդի կարիք ունեմ... Միայն Դուք ինձ ասե՛ք, թե ինչ է անհրաժեշտ անել: Օրինակ՝ այժմ ես չեմ կողմնորոշվում՝ ինչից պետք է սկսել...

Սահակ Պարթևին դուր եկավ թագավորի անկեղծ խոստովանությունը, ուստի իր հերթին ինքն էլ խիստ համեստորեն նկատեց.

— Տեր արքա, մենք միշտ քո հրամանին պատրաստ ենք, իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչից պետք է սկսել... Նախ պետք է այս հայրենաշեն գործին հանդիսավոր բնույթ տալ և ամբողջ ժողովրդին ցուցադրել դպրության գործի հույժ կարևոր նշանակությունը... Դրա համար մեզ պետք է, որ այսօր հրապարակավ փառք մատուցենք ամենակարող Տիրոջը, որի սուրբ կամքով մենք սեփական գրեր ունեցանք և փառաբանենք այն մարդուն, ով հանուն հայրենիքի, կամովին ու անձնվիրաբար նվիրվեց այդ հայրենաշեն գործին, հաղորդակից եղավ Աստծու հետ... Եվ մեր ժողովրդին սեփական



գրեր պարզենց... Այսօր հարկ է, որ մենք Մաշտոցին ու նրա աշակերտներին դիմավորենք և ընդունենք մեծ շուքով ու հանդիսավորությամբ...

— Ես ամեն ինչ հասկացա և լիովին համաձայն եմ,— ասաց թագավորը պատրաստակամ...

Մաշտոցն ու իր աշակերտները դուրս էին եկել Արտաշատից ու բռնել էին Վաղարշապատ տանող ճանապարհը: Նրանք դեռ չէին մոտեցել մայրաքաղաքին, երբ նկատեցին հեռվից մոտեցող սովոր մի բազմության, որը գալիս էր մայրաքաղաքից ցնծության աղաղակներով ու երգերով: Երբ մոտեցան, ցնծությունը կատարյալ դարձավ հայոց թագավորն ու կաթողիկոսը, մայրաքաղաքի հոգևոր ու աշխարհիկ ավագանու և թագավորական ազատագնդի հետ միասին մայրաքաղաքից դուրս էին եկել՝ հանդիսավոր կերպով դիմավորելու Մաշտոցին ու նրա աշակերտներին: Նրանք միմյանց ջերմագին ողջունելուց հետո ցնծության ձայներով ու հոգևոր երգերով վերադարձան մայրաքաղաք և կազմակերպեցին տոնախմբություններ, որոնք տևեցին օրեր...

\* \* \*

Շուտով Հայոց աշխարհի պարսկահպատակ մասի բոլոր նախարարություններն ու իշխանները ստացան հայոց Վռամշապուհ թագավորի հրովարտակը մայրենի լեզվով դպրոցներ բացելու մասին: Նույն բովանդակությամբ կոնդակ ուղարկեց վանքերին ու եկեղեցիներին Սահակ Պարթև կաթողիկոսը: Թագավորի հրովարտակի և կաթողիկոսի կոնդակի համաձայն՝ մայրաքաղաք Վաղարշապատում իսկույն հիմնվեցին մայրենի լեզվով մեկ տասնյակի հասնող հատուկ դպրոցներ, որոնցում հայերեն գրել-կարդալ պետք է սովորեցնեին Մաշտոցի աշակերտները, իսկ դպրոցների տեսչական գործը Մաշտոցը վերցրեց իր վրա:

Մեկ ամսում թագավորին ու կաթողիկոսին երդմնագիր ուղարկեցին Հայոց աշխարհի գրեթե բոլոր նախարարներն ու նշանավոր իշխանները, ինչպես նաև վանքերն ու եկեղեցիները՝ նորաստեղծ դպրոցներին աշակերտներ ուղարկելու համար: Ուղարկված աշակերտները պետք է ընտրված լինեին 10–15 տարեկան ուշիմ ու աչքաբաց պատանիներից: Գերապատվությունը տրվում էր նրանց, ովքեր ունեին հունական, ասորական կամ պարսկական նախնական կրթու-

թյուն: Նախատեսված էր ստեղծել նաև մի դպրոց պալատական ավագանու համար, որոնք, անկախ տարիքից ու դիրքից, պետք է սովորեցնենին մայրենի լեզվով գրել-կարդալ:

Աշակերտների՝ մայրաքաղաք ներկայանալու և ընդունվելու վերջին ժամկետ էր նշանակված Հայոց ամանորը՝ նավասարդ ամսի Արեգ օրը (օգոստոսի 17-ը): Դրանից հետո պետք է սկսվեին դասերը: Ուսումնառության համար ժամկետ սահմանվեց՝ հինգ տարի: Դրանից հետո ավարտածները, ըստ առաջադիմության, ստանում էին հատուկ վկայաթղթեր, որոնցով արտոնվում էր Հայոց աշխարհի ցանկացած մասում զբաղվելու ուսուցչությամբ, բացի այդ, նրանց տրվում էին հոգևոր կոչումներ և արտոնություններ՝ նախարարական տների, վանքերի ու եկեղեցիների հասույթներից ստանալ վարձատրություն՝ դպրոցներում ուսուցչություն անելու և այլ ծառայությունների համար...

Մինչև դասերն սկսվելը Մաշտոցն ու կաթողիկոսը նոր ընդունվող աշակերտների հաշվառում կատարեցին: Մայրաքաղաք սովորելու եկած աշակերտների թիվը գերազանցում էր սպասելիքները: Նրանք որոշել էին մայրաքաղաքում հիմնել ընդամենը յոթ դպրոց և յուրաքանչյուր դպրոցի համար նախատեսել ընդամենը 10-15 աշակերտ, մինչդեռ յուրաքանչյուր դպրոցի համար եկել էին շուրջ 20 սովորող: Նորաբաց դպրոցների հոգաբարձուներին ուրախացնում էր հատկապես այն հանգամանքը, որ նորեկ աշակերտներից շատերի ծնողները, որոնք հիմնականում հասարակության արտոնյալ խավին էին պատկանում, ամեն կերպ ջանք էին գործ դնում, որ իրենց երեխաներն անպայման ընդունվեն մայրաքաղաքի նորաբաց դպրոցները:

— Հիմա ի՞նչ պիտի անենք,— հարցրեց Սահակը Մաշտոցին, երբ երեկոյան նստեցին ընթրիքի:

— Պետք է ավելացնել դպրոցների թիվը,— պատասխանեց Մաշտոցն անառարկելիորեն:

— Կրկնապատկել դպրոցների թիվը անհնարին է,— այնուամենայնիվ առարկեց կաթողիկոսը:

— Ինչու՞ է անհնարին:

— Նրա համար, որ նախ՝ քո վարժեցրած աշակերտների քանակը քիչ է ուսուցչության համար, և երկրորդը՝ դպրոցական շինություններ չկան:

— Ուրեմն, ի՞նչ է ստացվում, տե՛ր կաթողիկոս, մեր երազած սրբազան հուրը մեծ եռանդով սկսում է բոցավառվել, և մենք տեղ չիներու պատճառով ստիպված պետք է այն խնայմանք ժողովրդից... Իսկ

մենք ինչ պատասխան պիտի տանք այն խանդավառված պատանիներին, որոնք վաղը պիտի հուսահատ վերադառնան իրենց տեղերը,— Մաշտոցը խոսում էր վրդովված:

— Այո՛, խնդիրը բարդ է,— մտածկոտ ասաց Սահակը,— այն խելացի լուծում է պահանջում: Թույլ վրիպումն անգամ կարող է ճակատագրական հետևանքներ ունենալ... Պետք է լուրջ մտածել...

Նա խոսում էր և միևնույն ժամանակ հոնքերի տակից զննում Մաշտոցին: Վերջինս աչ ձեռքի մատներով տենդագին տրորում էր ճակատը: «Դարձյալ ամպեր կուտակվեցին»,— մտածեց Սահակը և յուրովի ժպտաց: Նրա ժպիտը չվրիպեց Մաշտոցի հայացքից, և Մաշտոցը, կռահելով ժպտալու պատճառը, իսկույն մատները հեռացրեց ճակատից:

— Հիմա ինչ պիտի անենք,— հարցրեց Մաշտոցը՝ մի տեսակ ընկճված:

— Եթե դու ինձ օգնես, ամեն ինչ լավ կլինի:

— Այսինքն՝ ինչպե՞ս:

— Ի՞նչը ինչպես:

— Ինչպե՞ս պիտի օգնեմ:

— Դու ինձ կվարժեցնեն նոր գրերին:

— Քեզ վարժվելու քիչ բան է մնում: Դանիելյան գրերով աշակերտներին վարժելու երկու տարիներում դու ինքդ իմացար, թե ինչ է պակասում... Այժմ քեզ մնում է այդ պակասը լրացնել: Ես այդ հարցում իհարկե կօգնեմ քեզ:

— Դու անձամբ պետք է պարապես ինձ հետ:

— Իհարկե անձամբ,— ասաց Մաշտոցը,— քանզի դու պարտավոր ես ամենալավ իմացողից ավելի լավ իմանալ մայրենի լեզվով գրելն ու կարդալը: Դու պետք է, եթե ոչ ավելի, գոնե իմ չափ տիրապետես մայրենի գրությունը: Քո կոչումն այդ է պարտավորեցնում...

— Եթե այդպես է,— հանգիստ խոսեց Սահակը,— դպրոցների ու նորեկ աշակերտների խնդիրը լուծվում է: Այլևս հարկ չկա այդ մասին մտահոգվելու:

— Ինչպե՞ս,— հարցրեց Մաշտոցը՝ ոչ առանց զարմանքի:

— Շատ պարզ,— ասաց կաթողիկոսը,— իմ մոտավոր հաշվումներով դպրոցների համար դիմող աշակերտներից շուրջ քսան պատանիներ պատկանում են արքունական ընտանիքներին: Օրինակ՝ Մամիկոնյաններից՝ երեք, Կամսարականներից՝ երկու, Ամատունիներից՝ երկու...

— Ամատունիներից երեքը,— Սահակին ընդհատեց Մաշտոցը:  
— Ո՞վ է երրորդը, որ ես չգիտեմ:  
— Հապա կռահիր:  
— Չեմ գտնում, չկա,— մի քիչ մտածելուց հետո ասաց Սահակը:  
— Կա,— ժպտալով ասաց Մաշտոցը,— երրորդը Դստրիկն է՝  
Վահան Ամատունու աղջիկը:

— Ի՞նչ է, աղջիկներն էլ պիտի սովորեն:

— Անպայման, Սահակ,— վճռական ասաց Մաշտոցը,— եթե կուզես իմանալ, նախ աղջիկները պետք է սովորեն, քանզի ժողովրդի կամ ազգիդ լեզուն ամենից առաջ մայրենի լեզուն է: Մարդիկ սկզբում խոսել են սովորում մորից: Ինչ լեզվով որ խոսում է մայրը, այդ լեզուն դառնում է գավակի համար հարազատ: Եթե մենք ցանկանում ենք, որ մեր լեզուն լինի կիրթ, հզոր ու անպարտելի, պետք է առաջին հերթին հոգ տանենք մեր մայրերի կրթության ու զարգացման մասին... Պետք է հզորացնենք նրանց լեզուն... Ազգերի ու ժողովուրդների ձակատագրերի դարավոր փորձը ցույց է տվել, որ հզոր են այն ազգերը, որոնց մայրենի լեզուն հզոր է... Մարդկության լեզվի հիմնական ուսուցիչը մայրն է...

— Հանձարեղ ես մտածել, Մեսրոպ,— ասաց Սահակը,— եթե այդպես է, հապա ինչո՞ւ մենք գրել չենք սովորեցնում մեր բոլոր աղջիկներին: Չ՞ որ մենք այնքան խելացի աղջիկներ ունենք:

— Կգա ժամանակ, որ մենք կկրթենք մեր բոլոր աղջիկներին... Այսօր միայն Դստրիկն է ցանկություն հայտնել, թող առայժմ նա գրել-կարդալ սովորի: Իսկ երբ առաջին այդ հունդը իր բարեբեր պտուղները կտա, մենք կսկսենք այն բազմացնել...

— Հիրավի, Դստրիկը արժանի է առաջինը լինելու պատվին: Նա խիզախ ու հայրենասեր աղջիկ է: Քանի՞ տարեկան է:

— Նոր է բոլորել իր տասներկու տարին, բայց հասուն աղջկա խելք ու քաջություն ունի: Դե, Ամատունիները միշտ էլ լավ աղջիկներ են ունեցել...

— Գովիր, գովիր: Քեռիներիդ գովիր,— կատակեց Սահակը,— չէ՞ որ նրանց զարմիկն ես:

— Իմիջիպլոց, տներ կաթողիկոս, եթե բանը քեռիների գովելուն հասնի, ապա քո քեռիները ավելի գովասանքի արժանի են, քան իմը,— կատակեց Մաշտոցը՝ քթի տակ ծիծաղելով:

— Ես չեմ առարկում,— լրջորեն ասաց Սահակը:

— Ես գիտեմ, որ դու չես առարկի: Սակայն ինձ անհայտ մնաց, թե դու ինչպես ես լուծելու նորեկ աշակերտության խնդիրը:

— Այդ խնդիրը ես մտադիր եմ լուծել հետևյալ կերպ՝ իմ տանը կառանձնացնեմ մի ընդարձակ ու լուսավոր սրահ, կկահավորեմ դպրոցի համար անհրաժեշտ կահույքով ու այլ պարագաներով, շուրջս կհավաքեմ արքունի այն այրերին, որոնք կցանկանան սովորել մայրենի լեզվով գրել ու կարդալ, և մենք քո օգնությամբ կսովորենք մայրենին: Ուսուցչի պարտականությունները վերցնում եմ ինձ վրա: Նրանց համար նախատեսված դպրոցը կհանձնեմ քո նորեկներին:

— Գերազանց մտահղացում է,— ուրախացավ Մաշտոցը,— բայց...

— Բայց ինչ...

— Ոչինչ, — ծիծաղեց Մաշտոցը, — պարզապես խղճում եմ քեզ ու մորուքավոր սաներիդ և պատկերացնում եմ նրանց վիճակը...

— Նախ դու խղճալու իրավունք չունես. չէ՞ որ լավ սուր կոփելու համար հնոցը պետք է թեժ լինի... Իսկ ինչ վերաբերում է նախանձելուն, դու լիակատար իրավունք ունես, քանզի քո հիմնած դպրոցների մեջ ամենալավը իմը կլինի...

— Ես բնավ չեմ կասկածում, — ասաց Մաշտոցը և ձայնը իջեցնելով ու հագիվ լսելի՝ շարունակեց. — չէ՞ որ այդ դպրոցում մայրենի լեզվով գրել-կարդալ պիտի սովորեն հայոց մեծերը, այդ թվում կաթողիկոսն ու երևի նաև թագավորը...

— Իսկապես, — ծիծաղեց Սահակը, — արքայի ուսուցման խնդիրն ինչպե՞ս պետք է լուծվի...

— Անհո՞գ մնա, — բավականին լուրջ պատասխանեց Մաշտոցը, — ես անձամբ լրացուցիչ կպարապեմ արքայի հետ: Արքան արժե նման հոգատարության, Սահակ...

— Թող երկնային տերը քեզ երկար կյանք պարգևի, Մեսրոպ, քո անձնագոհության համար, — զգացվեց կաթողիկոսը, — Հայոց աշխարհն ու հայ ժողովուրդը հավերժաբար պատարագ կմատուցեն քո հոգու անմահության համար՝ իբրև երախտիքի խոսք...

— Եվ քո, Սահակ, այս հայրենաշեն գործի նախաձեռնողը դու եղար...

— Ամեն, — մրմնջաց Սահակը:

## ՆՈՐ ՄԱՔԱՌՈՒՄՆԵՐ

Դպրության շարժման բուն կենտրոնը թեև արքայական ուստանն էր՝ Արարատյան երկիրը, բայց դպրոցներ հիմնվեցին Հայոց աշխարհի գրեթե բոլոր քաղաքներում ու գավառներում: Դպրոցները հիմնվում էին եկեղեցիներին ու վանքին կից: Շուտով իրար ետևից դադարեցին գործել հայալեզու դպրոցները, որոնցից շատերն անցան մայրենի լեզվով ուսուցմանը:

Երկրով մեկ դպրոցների ցանցն այնքան մեծացավ, որ ինքնաբերաբար Մաշտոցը դարձավ ընդհանուր կրթական գործի տեսուչ: Նա շրջում էր Հայոց աշխարհի գրեթե բոլոր նախարարություններում, այցելում նորաստեղծ դպրոցները և գործնական օգնություն ցույց տալիս դեռևս քիչ փորձ ունեցող ուսուցիչներին, որոնք բոլորն էլ իր աշակերտներն էին: Նրանց օգնում էր՝ մայրենի լեզվով գրագիտության ուսուցումն ավելի կատարյալ դարձնելու համար:

Սահակ Պարթև կաթողիկոսը այդ ընթացքում ստանձնել էր մի ոչ պակաս հայրենանվեր գործ, որի մեջ նա փայլում էր իր՝ գրողի անօրինակ տաղանդով. ստեղծում էր մայրենի լեզվով եկեղեցական կարգ ու կանոն, հիմնում հայալեզու ծեսեր, հորինում բարոյախոսական աղոթքներ ու շարականներ: Դրան զուգընթաց, շուրջը համախմբելով մայրենի լեզվին արդեն լավ տիրապետած իրենց բանիմաց ու տաղանդավոր աշակերտներին՝ հայ ժողովրդի համար բնագրից հայերեն էր թարգմանում Աստվածաշունչն ու հանրահայտ այն գրքերը, որոնք պիտի իմաստավորեին ու ամրապնդեին մայրենի նորաստեղծ գրական լեզուն ու հայ միտքը:

Այդ հայրենաշեն գործում Մաշտոցը նույնպես աջակից էր նրան: Այդպիսով՝ նրանք հայրենի դպրոցներին մատուցում էին մայրենի լեզվով ստեղծված, հետևաբար՝ ժողովրդին մատչելի գիր ու գրակա-նություն, որը, մինևույն ժամանակ, ինչ խոսք, ամրապնդում էր նաև քրիստոնեության դավանանքը Հայոց աշխարհում:

Սկսվել էր հայոց դպրության ոսկեդարը, որն, ավաղ, հարթ չէր ընթանում երկրում ստեղծված քաղաքական անկայուն պայմանների հետևանքով:

Հայոց գրերի գյուտից գրեթե տասը տարի հետո՝ 414 թվակա-նին, վախճանվեց հայոց Վռամշապուհ թագավորը՝ թողնելով Ար-տաշես անունով մի անչափահաս որդի: Սահակ Պարթև կաթողիկո-սը գնաց պարսից Հազկերտ Մեղավոր թագավորի դուռը և խնդրեց, որ նա հայոց նախկին թագավոր Խոսրովին նորից վերադարձնի հա-յոց գահին: Հազկերտը, որը, ինչպես արդեն գիտենք, հաջորդել էր Քիրմանշահին և պարսիկ հոգևորականների նկատմամբ դաժան լի-նելու, քրիստոնյաներին չհալածելու համար յուրայինների կողմից «Մեղավոր» մականուն էր վաստակել: Նա, անսալով Սահակ Պարթևին, Խոսրովին կրկին վերադարձրեց հայոց գահին, որը մեկ տարի թագավորելուց հետո վախճանվեց: Հազկերտ Մեղավորը, օգտվելով այն հանգամանքից, որ ինքը քրիստոնյաներին չհալածե-լու համար վայելում է նրանց համակրանքը, ավելորդ համարեց հա-յոց գահը հանձնել մի այլ Արշակունու. նա Խոսրովից հետո հայոց թագավոր հռչակեց իր Շապուհ որդուն: Հազկերտ Մեղավորի այդ վարմունքը, հակառակ նրա «քրիստոնեասիրությանը», չար դիտա-վորություն ուներ: Նա այդ ձևով ցանկանում էր ընտելացնել հայ նա-խարարներին՝ աստիճանաբար մոտեցնել պարսկական գահին, կա-մաց-կամաց նրանց ենթարկել պարսկական ազդեցությանը և, ինչու չէ, հայերին կողմնորոշել դեպի պարսկական մագդեզական կրոնը, այդպիսով՝ նրանց հեռացնել Բյուզանդիայից...

Շապուհին հաջողվեց հեշտությամբ բազմել հայոց գահին, քան-զի Հայոց աշխարհի դրությունն այն չէր, որ կարողանար դեմ կանգ-նել Հազկերտ Մեղավորի արքայական կամքին: Այդ օրերին վախ-ճանվել էր հայոց զորքերի սպարապետ Համազասպ Մամիկոնյանը, որի պատճառով Սահակ Պարթև կաթողիկոսը սգի մեջ էր:

Սակայն շուտով պարզվեց, որ Սասանյան արքայազնն իրեն ավելի շատ զվարճությունների էր տալիս, քան հոգ էր տանում մի տե-րության գործերի մասին, որի նկատմամբ նա իրեն ժամանակավոր

տեր էր համարում: Կարձ ժամանակ հետո հայ նախարարներն ու իշխանները հակակրանքով լցվեցին նրա հանդեպ և առիթը բաց չէին թողնում նրան ծաղրելու և արհամարհելու համար: Պատմվում է, որ Ատոմ Մոկացին, որսի ժամանակ նկատելով որսին հետապնդող Շապուհի անհաջող ընթացքը, ասում է. «Գնա՛, գնա՛, պարսից աստվածորդի, եթե տղամարդ ես», իսկ Շապուհը պատասխանում է. «Դո՛ւ գնա, քարքարուտների մեջ արշավելը դևերի գործն է»:

Եվ երբ մի այլ որսի ժամանակ Շապուհը ներփակվում է հրդեհված եղեգնուտներում և օգնության է կանչում Ատոմ Մոկացուն, վերջինս, նրան ծաղրելով, ասում է. «Մի՞թե սրանք էլ քարեր են, որ ես առաջ անցնեմ, արդ, եթե դու Մոկացիներին դիվազգի ես կոչում, ես էլ Սասանյաններիդ կնամարդ կկոչեմ», — ասում է և Շապուհին դուրս բերելով կրակից՝ ձին խթանում ու հեռանում է:

Մի անգամ Շավասպ Արծրունին է մականախաղի մեջ քամահրանքով խլում Շապուհի գնդակները: Մի ուրիշ անգամ էլ խնջույքի ժամանակ Խոսրով Գարդմանացին Շապուհի ներկայությամբ հարբած սիրահետում է քնար նվագող մի կնոջ: Շապուհը հրամայում է, որ նրան ձերբակալեն, սակայն Գարդմանայի իշխանը, աջ ձեռքը սրի դաստակին դրած, հպարտորեն դուրս է գալիս խնջույքի սրահից, և ոչ ոք չի համարձակվում արգելել նրան...

Այսպես էր թագավորում Շապուհը Հայաստանում: Եվ նա, հայ իշխանի հանդեպ ներքին ոխով լցված, սպասում էր պատեհ առիթի, որպեսզի վրեժխնդիր լինի իրեն անարգելու և արհամարհելու համար:

Առիթը եղավ... 420 թվականին դավադրաբար սպանվեց նրա հայրը՝ Հազկերտ Մեղավորը: Լուրն առնելուն պես Շապուհը շտապեց Տիգրոն, որպեսզի տիրանա հայրական գահին: Մեկնելուց առաջ նա հրամայեց իր տեղապահին՝ կալանավորել իրեն արհամարհող հայ իշխաններին և ուղարկել Տիգրոն: Բայց նա չարժանացավ հայրենական գահին: Պալատական հեղաշրջում կատարած պարսիկ ավագանին որոշել էր այլևս թույլ չտալ՝ Հազկերտ Մեղավորի մերձավորները նստեն պարսկական գահին: Շապուհը սպանվեց Տիգրոն հասնելուն պես:

Սակայն Հազկերտի մյուս որդին՝ Վռամը, որը պատմության մեջ հայտնի է Բահրամ Գոռ կամ Չոբի անունով, կարողացավ Տիգրոնի մոտակայքում ապրող արաբական մի ցեղի օգնությամբ տեր դառնալ իր ժառանգական իրավունքներին: Պալատական հեղաշրջման հեղինակները ստիպված եղան գահը զիջել, բայց միևնույն ժա-



մանակ պահանջեցին նոր գահակալից, որ նա հրաժարվի հոր վարած քաղաքականությունից և պաշտպան կանգնի ազգային-կրոնական շահերին: Վռամն այդպես էլ վարվեց: Նա 421 թվականին պատերազմ հայտարարեց Բյուզանդիային և հալածանք սկսեց քրիստոնյաների դեմ:

Այս ամենն իր ազդեցությունն ունեցավ Հայոց աշխարհի վրա: Հայոց նախարարական զորքերը, Ներսես Ճիճյակեցի քաջ իշխանի հրամանատարությամբ, սպանեցին Շապուհի տեղապահին և Հայաստանից դուրս շարտեցին պարսկական զորաբանակները: Չնայած դրան՝ Հայոց աշխարհում տիրեց անիշխանություն, որը, բնականաբար, հարված հասցրեց հայոց դպրության մեծ գործին: 422 թվականին պարսկա-բյուզանդական պատերազմը վերջացավ մի հաշտությամբ, որով կողմերը վերստին հաստատեցին Հայոց աշխարհի նախկին բաժանումը:

Հաշտությունից հետո Հայաստանի բյուզանդական մասում խաղաղություն էր տիրում, մինչդեռ պարսկական մասում մոլեգնում էր նոր գահակալ Վռամի վրեժխնդրությունը: Սահակ Պարթև կաթողիկոսը ստիպված գնաց բյուզանդական մասը՝ կրթության գործն այնտեղ առաջ տանելու նպատակով, սակայն այնտեղ իր արժանիքներին վայել ընդունելություն չգտավ և շուտով հիասթափված ու հուսախաբ՝ վերադարձավ Վաղարշապատ:

Մաշտոցը, լսելով կաթողիկոսի շուտափույթ վերադարձի մասին, շտապեց նրա մոտ: Նա Սահակ Պարթևին գտավ անտրամադիր ու մռայլ վիճակում: Ողջագուրվելուց հետո Մաշտոցն անմիջապես հարցրեց.

— Ինչու՞ այսքան շուտ վերադարձար:

Սահակը տխուր էր. մի պահ լուռ նայեց Մաշտոցին. նա չգիտեր՝ ինչից սկսեր:

— Դե խոսիր, — մարդ Աստծո, — համբերությունից ելավ Մաշտոցը, — վատ բան կա:

— Վատն այն խոսքը չէ, Մեսրոպ, — առանց գլուխը բարձրացնելու ասաց Սահակը, — երևակայիր՝ շատ է վատ, և մեզանից արտակարգ ջանքեր կպահանջվեն դրությունը շտկելու համար...

— Փառք Աստծո, — հանգիստ շունչ քաշեց Մաշտոցը, — եթե խոսք է գնում ջանքերի մասին, ուրեմն դեռ ամեն ինչ կորած չէ: Դե՛, այժմ հանգամանորեն պատմիր, թե ինչ է պատահել, և ինչ ջանքեր են հարկավոր:

— Մետրոյ, — հոգոց հանեց Սահակը, — մայրենի լեզվով դպրություն ստեղծելու համար թափած մեր այսքան տարիների ջանքերն ի դերն կելնեն, եթե շուտափույթ չշտկենք իմ սխալը...

— Քո սխալը, — զարմացավ Մաշտոցը:

— Այո՛, այո՛, իմ սխալը, — ձայնը բարձրացրեց Սահակը, — ինչ է, ես մարդ չեմ, իրավունք չունեմ սխալվելու:

— Բայց ո՞րն է քո սխալը:

— Որն է իմ սխալը, — ասաց Սահակը մի այնպիսի ձևով, որի մեջ կարծես հեզնանք կար իր անձի նկատմամբ, — իմ սխալն այն է, որ ես կարծում էի, թե մեզ այլևս սուր հարկավոր չէ, և տարիներ առաջ քեզ համոզեցի, և դու սրի փոխարեն խաչ կրեցիր... Բայց ես այս օրերին գլխի ընկա մի բան, որին նախկինում երկրորդական, նույնիսկ երրորդական տեղ էի հատկացնում... Ես այս օրերին համոզվեցի, որ խաչին տերն է զորավոր դարձնում... Անզոր տիրոջ խաչն անզոր է, սիրելի՛ Մաշտոց... Ես շատ անգամ եմ շրջագայել Հայոց աշխարհում և տարբեր առիթներով հանդիպել մեր նախարարների ու իշխանների հետ: Ես նույն մարդն եմ, նույնիսկ ավելին՝ ես այժմ ավելի մեծ փորձ ունեմ և ավելի շատ ծառայություններ հայրենիքի հանդեպ, բայց արի՛ տես, որ ես այս անգամ նույն ընդունելությանը չարժանացա մեր իշխանների կողմից, և գիտե՞ս՝ ինչու...,— Սահակը խոսում էր վիրավորված և ընկճված:

— Ինչու՞, — հարցը կրկնեց Մաշտոցը, թեև արդեն կռահել էր հարցի պատասխանը:

— Քանզի այսօր Համազասպը չկա, — ասաց Սահակը և քիչ դադար առավ, ապա բառերը հատ-հատ շեշտելով՝ շարունակեց, — քանզի այսօր ինձ՝ Սահակ Պարթևիս, զորավիզ չէ Մամիկոնյանների ամենազոր սպարապետական սուրը...

— Մի՛ ընկճվիր, Սահակ, — փորձեց նրան սրտապնդել Մաշտոցը, — դեռ ամեն ինչ կորած չէ: Համազասպը չկա, բայց նրա որդիները կան: Կա Վարդանը, որն իր հայրենասիրությամբ ու խիզախությամբ չի զիջում Համազասպին:

— Այո՛, Վարդանս լավն է, նվիրվածության խիզախ ոգի ունի, — գորովանքով նկատեց Սահակը և անմիջապես տխրեց, — բայց նա սպարապետ չէ: Նրան ո՞վ կձանաչի... Մեր այսօրվա մորթապաշտ նախարարները, թե՛ Սասանյան ռիսակալ Վռամը: Չէ՛, Մետրոյ, սա վերջ է...

— Մարդ Աստծո, ես քեզ չեմ ձանաչում, — ուսերը վեր քաշեց Մաշտոցը, — դու՛ Սահակ Պարթևդ, որ ոչ մի բանից չէիր ընկճվում,

այսօր թևաթափ ես եղել: Այո՛, ես էլ գիտեմ, որ այսօր Հայոց աշխարհում թագավոր չկա, սպարապետ չկա, բայց կա ժողովուրդը, վերջապես կանք մենք... Ասա՛, ինչո՞վ կարող եմ օգնել քեզ... Սահանկ, եթե ուզես՝ ես պատրաստ եմ քո հրամանով նորից գնեք վերցնել: Քո մի խոսքը բավական է, որ ես հայոց այրուձին տանեմ ի մարտ...

— Մաշտո՛ց, սիրելի՛ս,— հանկարծ պայծառացավ Սահակի դեմքը,— ես հավատում եմ քեզ, դու միշտ մարտեր ես շահել առանց սրի, արի՛ այս անգամ էլ քո հզոր ուժը փորձենք և եթե այս մարտն էլ շահենք, իմացի՛ր, որ մեզ քիչ բան կմնա հաղթանակի համար...

— Եթե լավ ես ծրագրել, անպայման կշահենք,— ասաց Մաշտոցը հանգիստ,— միայն թե դու ինձ ասա՛, ես ինչ պիտի անեմ: Դու հո գիտե՞ս ինձ...

— Այսօր առավել, քան մի որևէ ուրիշ անգամ իմ հույսը քեզ վրա է, Մեսրո՛պ: Խարդախ Վռամը՝ Սասանյան այդ կաթնակեր լակոտը, կարողացել է վարկաբեկել ինձ նաև Բյուզանդիայի աչքում. նա ինձ ամբաստանել է այն հարցում, որ իբր ես փառամոլ եմ և ցանկանում եմ Հայոց աշխարհը միավորել իմ իշխանության ներքո, որի համար իբրև ես ըմբոստություն եմ սերմանում ամբողջ Հայոց աշխարհում՝ ինչպես Պարսկաստանի, այնպես էլ Բյուզանդիայի դեմ: Իսկ դու գիտե՞ս, թե դա ինչ է նշանակում...

— Ես հիմա արդեն հասկանում եմ, թե ինչու են «գզուշացել» մեր նախարարները քեզանից և քեզ լավ ընդունելություն ցույց չեն տվել: Պարզապես վախեցել են անհավատարմության մեջ մեղադրվելուց:

— Ճիշտ այդպես, Մեսրո՛պ: Ասում են՝ Վռամն է այդ բանում Թեոդոս Մեծին համոզել:

— Բայց որ Թեոդոս կայսրը շատ է «համոզվել», դրանում ես հուսադրող բան եմ տեսնում,— ասաց Մաշտոցը մտածկոտ:

— Ի՛նչ հուսադրող բան կա դրանում,— տարակուսած հարցրեց Սահակը:

— Ինձ թվում է, Սահանկ, Թեոդոս կայսրը խորամանկ խաղ է սկսել այդ խակ Սասանյան լակոտի հետ... Մենք պետք է օգտվենք այդ խաղից...

— Դու այդպե՛ս ես կարծում, Մեսրո՛պ:

— Ես այդպես համոզված եմ, Սահանկ:

— Դե, եթե դու այդպես ես համոզված, ուրեմն իմ ծրագիրը ձիշտ է: Մենք պետք է անհապաղ գործենք,— ասաց Սահակը:

— Ես, ինչպես միշտ, այսօր էլ պատրաստ եմ՝ քո հրամանը կատարելու համար,— պատրաստակամ ասաց Մաշտոցը,— միայն ինձ ցույց տուր «մարտադաշտը», և ես անձս չեմ խնայի:

— Շնորհակալ եմ, Մեսրոպ, հարազանս,— խանդադատանքով ասաց Սահակ Պարթևը,— որ իմ դժվար պահերին ինձ մենակ չես թողնում:

— Սահակ, ես քանի՞ անգամ եմ քեզ զգուշացրել,— հանդիմանանքով խոսեց Մաշտոցը,— որ իմ նկատմամբ քո այդ գերագույն վերաբերմունքով դու վիրավորում ես ինձ: Ես հայրենիքի զինվոր եմ, և հայրենիքին ծառայելն իմ սրբազան պարտքն է:

— Լավ, լավ, մի՛ նեղանա,— ասաց Սահակը,— դե հիմա լսիր, թե ես ինչ եմ մտածել: Պետք է Սասանյան այդ կաթնակերին դաս տալ: Դրա համար անհրաժեշտ է, որ դու անհապաղ մեկնես Բյուզանդիա և Թեոդոս կայսրին խնդրես, որ նա թույլատրի Հայոց աշխարհի բյուզանդական մասում մայրենի լեզվով դպրոցներ հիմնել՝ ի շահ քրիստոնեական հավատի ամրապնդման: Ես հույս ունեմ, որ Թեոդոսը քեզ չի մերժի: Քո համբավն ամենուրեք հասել է:

— Եթե դա անհրաժեշտ է, ես վաղն ևեթ կմեկնեմ: Ինձ թվում է, որ դա ես գլուխ կբերեմ,— վստահ ասաց Մաշտոցը:

— Համբերությամբ լսիր մինչև վերջ, Մեսրոպ,— խոսքն առաջ տարավ Սահակը,— Հայոց աշխարհի բյուզանդական մասում դպրոցներ բացելու համար Բյուզանդիա մեկնելու քո առաքելությունը դրանով չի սահմանափակվում: Դու դա կկատարես: Ես չեմ կասկածում, սակայն դա քո առաքելության մի մասն է միայն, թեև ինքնին դա մեծ գործ է, բայց դա իմ նախատեսված ծրագրի պատրվակն է սուսկ...

— Ո՞րն է իմ առաքելության բուն նպատակը,— հետաքրքրվեց Մաշտոցը:

— Դա թեև դժվար գործ է, Մեսրոպ, բայց դու պետք է քո հեղինակությամբ գլուխ բերես այն, և առայժմ այդ մասին պետք է իմանանք միայն ես և դու...

— Որ դա գաղտնիք կմնա առհավետ՝ համոզված եղիր,— վստահեցրեց Մաշտոցը:

— Առհավետ պետք չէ,— ձայնն իջեցրեց Սահակը,— դա գաղտնիք կմնա, մինչև որ դու այն գլուխ կբերես, դրանից հետո հարկ է, որ այն ամենքը իմանան...

— Հասկանալի է,— անհամբեր ասաց Մաշտոցը,— դե այժմ ասա՛, ես ի՞նչ պիտի անեմ:

— Դու, ինչ գնով էլ լինի, պետք է հասնես այն բանին, որ Թեոդոս Մեծը Վարդանին հայոց գորքերի սպարապետ հռչակի,— ասաց Սահակը և նայեց Մաշտոցի աչքերին:

Մաշտոցի աչքերը հանկարծ ճառագեցին մարտի մեջ նետվելու և մարտն անպայման շահելու պատրաստ զորավարի աչքերի վճռական բոցով:

— Այ դա մտահոյացում է,— ուրախ ծափ զարկեց Մաշտոցը,— այ, դու հիմա Սահակ Պարթևն ես... Էլ ինչ էիր ասում, թե «սա վերջն է»... Սա, եթե կուզես իմանալ, մի նոր և հզոր սկիզբ է, կաթողիկոս...

— Այո, Մեսրոպ, եթե գլուխ բերես...

— Եթե գլուխ չբերեմ, էլ ո՞ւմ է պետք այս գլուխը,— բառախաղ սարքեց Մաշտոցը և ոգևորված՝ ձեռքի ափով թեթև խփեց իր լայն ձակատին:

— Մեսրոպ, դա լավ է, որ դու ոգևորվեցիր, սակայն իմացի՛ր, որ այդ գործը գլուխ բերելն այնքան էլ հեշտ չէ,— թերահավատ ասաց Սահակը,— Թեոդոս կայսրին համոզելու համար հիմնավոր պատրվակ է պետք:

— Պատրվակը կա,— վստահ ասաց Մաշտոցը,— մնում է այն Թեոդոս կայսրի մոտ հիմնավորել, իսկ հիմնավորելու համար, կարծում եմ, որ ես բավարար փորձ ունեմ...

— Ո՞րն է այդ պատրվակը,— Մաշտոցին փորձելու համար անակնկալ հարց տվեց Սահակը:

— Պատրվակը քրիստոնեությունը Հայաստանում տարածելու և ամրապնդելու համար Հայոց աշխարհի բյուզանդական մասում դարոցներ հիմնելու թույլտվություն ստանալն է, հարգելի՛ կաթողիկոս,— խեթեց Մաշտոցը,— որի համար, ի դեպ, ես գնում եմ Բյուզանդիա, իսկ ինչ վերաբերում է Վարդանին սպարապետ հռչակելու խնդրին, ես դա կկապեմ հենց այդ պատրվակի հետ:

— Ինչպե՞ս,— անկեղծորեն հետաքրքրվեց Սահակը:

— Շատ պարզ,— ժպտաց Մաշտոցը,— ես կայսրին կհամոզեմ, որ Հայոց աշխարհում քրիստոնեության տարածմանը մեծ վտանգ է սպառնում բորբորիտների օրըստօրե աճող աղանդը, որի դեմ պայքարելու համար կազմակերպված պետական զորաբանակ է պետք, իսկ դրա համար խիստ անհրաժեշտ է, որ վախճանված հայոց սպարապետ Համազասպին փոխարինի նրա որդին՝ Վարդան Մամիկոնյանը, և լավ կլինի, որ նրան սպարապետ հռչակի Թեոդոս Մեծ կայսրը... Հը, ո՞նց է,— խոսքն ավարտելով՝ դիմեց Սահակին Մաշտոցը:

— Հոյակապ է,— հիացած բացականչեց Սահակը,— լավ է մտածված: Ես այդ հարցում քեզ կօգնեմ: Դու Թեոդոս Մեծին կտանես իմ անձնական խնդրագիրը՝ հենց այդ բովանդակությամբ: Ես նույն բովանդակությամբ մի խնդրագիր էլ կգրեմ բյուզանդական Ատտիկոս եպիսկոպոսին, որպեսզի նա բարեխոսի կայսեր մոտ՝ քեզ ընդառնաջելու և խնդրանքդ կատարելու համար: Եվ եթե մեզ հաջողվի ստանալ Թեոդոս Մեծի համաձայնությունը, մենք դրանով կխեղձացնենք այդ կապը կտրած Սասանյան լակոտին...

— Սահակ,— հանկարծ ասաց Մաշտոցը,— ինձ պետք է մինչև մեկնելը ևս երկու հարց պարզել. դու ինձ ասա՛, ես Վարդանին պետք է տանե՞մ հետս, թե՞ ոչ:

— Անպայման,— կտրուկ պատասխանեց Սահակը,— հակառակ դեպքում թո՛ւ Կոստանդնուպոլիս գնալը քիչ օգտակար կլինի... Մյուս հարցը ո՞րն է:

— Մյուս հարցն այն է,— ասաց Մաշտոցը, որ Պարսկաստանում ևս մեզ աջակից է պետք. արդյոք Տիգրանում կա՞ մեկը, որը գեթ կարողանա բթացնել Վոսամի զգոնությունը, մինչև ես իմ գործն ավարտեմ...

— Կա,— վստահ պատասխանեց Սահակը,— դա Սմբատ ասպետ Բագրատունին է: Նա երեք տարի առաջ մեկնել է Տիգրան և այժմ էլ ապրում է այնտեղ: Ես իմացել եմ, որ գահը նվաճելու հարցում Սմբատը զորավիճ է կանգնել Սասանյան այդ կաթնակերին և այժմ վայելում է նրա համակրանքը: Ես սուրհանդակներ կուղարկեմ Սմբատ ասպետի մոտ:

— Միայն թե զգույշ...,— զգուշացրեց Մաշտոցը:

— Անհո՞գ եղիր: Ես երեխա չեմ,— պատասխանեց Սահակը:

— Մենք ե՞րբ ենք մեկնելու Բյուզանդիա,— հարցրեց Մաշտոցը:

— Ինչքան շուտ մեկնե՞ք, այնքան լավ,— եղավ Սահակի պատասխանը:

\* \* \*

Աշնանամուտի խաղաղ լուսաբաց էր: Հայոց աշխարհի մայրաքաղաք Վաղարշապատի արևմտյան դարպասից դուրս էր գալիս հեծյալների մի հարյուրյակ: Հարյուրյակին առաջնորդում էր իշխանական համազգեստ հագած մոտ 30 տարեկան մի զորական, իսկ նրա կողքից ձիով ընթանում էր ավեխառն բեղ ու մորուքով վաթսու-

նին մոտ մի վարդապետ: Հարյուրյակի վերջում մեկը քաշում էր վեց թե յոթ (բարձած) գրաստներից բաղկացած մի գումակ: Դատելով ամեն ինչից՝ դիտողը կնկատեր, որ հարյուրյակը հեռու ճամփորդության է գնում:

— Տի՛նդո՛, տան՝դո՛... Տի՛ն-դո՛, տան՝դո՛,— հեռվից ղողանջում էին եկեղեցիների զանգերը: Երբ հեծյալները բավականին հեռացել էին մայրաքաղաքից և շարժվում էին հեռուն, վարդապետը ձեռքով ետ տարավ վեղարը, և վաղորդյան գեփյուռը սկսեց ծածանել նրա այնխառն մազ-միրուքը: Սակայն վարդապետը դրան ուշադրություն չէր դարձնում: Կողքից դիտողն անմիջապես կզգար, որ նա վեղարը ետ գցեց, որ ավելի լավ լսի զանգերի ղողանջները, որոնք կարծես ողջունում էին արևածագը: Վարդապետն այնքան էր զմայլված արևածագով ու նրան ողջունող զանգերի ղողանջով, որ ձիավորների առջևից գնացող զինվորական իշխանից ետ էր մնացել և շարժվում էր գրեթե հարյուրյակի կենտրոնից: Երիտասարդ իշխանը ձգեց նժույգի սանձը, մինչև վարդապետը մոտեցավ:

— Վարդապետ, գիտե՞ս՝ ինչ են ղողանջում եկեղեցիների զանգերը,— ժպտալով նրան դիմեց իշխանը:

— Ի՞նչ,— նման հարցի չսպասելով՝ անակնկալի եկավ վարդապետը:

— Ուշադիր լսիր,— ասաց իշխանը,— իսկույն կիմանաս:

Վարդապետը լարեց լսողությունը:

Զանգերը ղողանջում էին՝ լրացնելով մեկը մյուսին:

— Հը՛, ի՞նչ ես ասում,— կրկնեց իշխանն իր հարցը:

— Բան չեմ հասկանում,— ուները վեր քաշեց վարդապետը:

Մտտիկից ընթացող զինվորները, ովքեր լսում էին նրանց խոսակցությունը, նույնպես լարեցին իրենց լսողությունը:

— Հը՛, դո՛ք էլ չեք լսում,— դարձավ իշխանը զինվորներին:

Զինվորները տարակուսանքով իրար նայեցին:

— Դե լավ, հիմա ես ձեզ կօգնեմ,— ասաց իշխանը,— ուշադիր ականջ դրեք և ասե՛ք, թե բառերով ինչպես են հնչում այդ ղողանջները...

Անսպասելի հարցը բոլորին շփոթեցրեց, բայց և այնպես, հարցը հետաքրքիր էր, և վարդապետը ցանկացավ անմիջապես իմանալ:

— Լավ, Վարդան, մի տանջիր, ինքդ ասա:

— Այբ-բեն, գիմ-դամ... Այբ-բեն, գիմ-դամ...,— ձայնը հարմարեցնելով զանգերի ղողանջներին՝ երգեց Վարդանը:

— Այդ նոր մտածեցի՞ր,— ժպտալով հարցրեց վարդապետը:

— Չէ՛, վարդապետ,— ասաց Վարդանը,— այդ մասին գիտի ամեն մի հայ աշակերտ: Մենք դա գիտեինք դեռ այն ժամանակ, երբ աշակերտում էինք Ձեզ: Ախր, Դուք եք այն հնարել...

— Վարդան, երդվում եմ Քրիստոս աստծու անունով՝ մեր մայրենի լեզվի գրերը ստեղծելիս այդ մասին չեմ էլ մտածել,— ասաց վարդապետը:

— Դա նրանից է, վարդապետ, որ մեր այբուբենն աստվածատուր է և պիտի հավերժ դողանջի,— ոգևորվեց Վարդանը:

— Աստված թող քո ձայնը լսի, զավակս,— մտահոգ, աղոթքի պես մրմնջաց վարդապետը և խաչակնքեց,— այդ դողանջների թշնամիները շատ են...

— Երդվում եմ Մամիկոնյան տոհմի բոլոր սրբություններով, որ քանի դեռ շունչ կա բերանումս, կռվել բոլոր թշնամիների դեմ՝ հանուն այդ դողանջների հավերժության,— բացականչեց Վարդանը և խթանեց նժույգը:

— Աստված քեզ պահապան, զավակս,— բարձր ասաց վարդապետը և Վարդանի օրինակով արագացրեց իր ձիու ընթացքը:

Ընթերցողներն արդեն կռահեցին, որ վարդապետը Մեսրոպ Մաշտոցն էր, իսկ Վարդանը Սահակ Պարթևի թոռը՝ Համազասպ Մամիկոնյանի որդին:

Նրանք այդ օրը մեկնում էին Կոստանդնուպոլիս՝ բյուզանդական կայսր Թեոդոսից սպարապետի տիտղոս և Արևմտյան Հայաստանում մայրենի լեզվի կրթության համար թույլտվություն խնդրելու...

Մելիտինե քաղաքը պատկանում էր բյուզանդական կայսրությանը: Այն գտնվում էր կայսրության և Հայոց աշխարհի բյուզանդական մասի սահմանագծում: Այն օրից, երբ Հայոց աշխարհը բաժանվեց երկու մասի, և Արևմտյան Հայաստանում վերացավ հայոց թագավորությունը, բյուզանդական հայոց կուսակալները նստում էին Մելիտինե քաղաքում: Այդ իսկ պատճառով քաղաքը, լինելով բյուզանդական, փաստորեն հանդես էր գալիս որպես Արևմտյան Հայաստանի վարչական կենտրոն:

Երբ Մեսրոպն ու Վարդանն ուղևորվեցին դեպի Բյուզանդիա, Մելիտինեում որպես Հայոց աշխարհի կուսակալ էր Անատոլիոս գորավարը: Նա, երկար ժամանակ շփվելով Հայոց աշխարհի հետ, շատ լավ ճանաչում էր ոչ միայն երկիրը, այլև քաջածանոթ էր այն անցուդարձերին, որոնք վերջին տասնամյակում տեղի էին ունենում Հայոց



աշխարհում: Լավ գիտեր հայոց նոր դարության պատմությունը և մեծ համակրանք ուներ նոր գրերի գյուտի հեղինակ Մեսրոպ Մաշտոցի նկատմամբ: Լինելով երդվյալ քրիստոնյա՝ բարձր էր գնահատում Մաշտոցի ջանքերն այդ ուղղությամբ...

Անատոլիոսը Մելիտինեում Մեսրոպին ու Վարդանին ընդունեց անմիջապես և մեծ ջերմությամբ, նույնիսկ նրանց պատվին ճաշ տվեց և խոստացավ իր ուժերի ներածին չափով միջնորդել Թեոդոս կայսեր առաջ՝ նրանց խնդրանքը կատարելու համար:

Անատոլիոսը սուրհանդակներ ուղարկեց Կոստանդնուպոլիս՝ նախօրոք իմանալու համար, թե Թեոդոս կայսրը համաձայն է ընդունելու և լսելու Մեսրոպ Մաշտոցին: Կարճ ժամանակ հետո սուրհանդակները լուր բերեցին, որ կայսրն ուրախությամբ համաձայնվեց ընդունել: Անատոլիոսը ներքուստ ուրախացավ, որովհետև նա հաստատ գիտեր, որ եթե կայսրը համաձայնվել է ընդունել և լսել Մաշտոցին, ուրեմն կկատարի և նրա խնդրանքը: Սակայն նա ցանկանում էր, որ Մաշտոցը կայսրին ներկայանա պատշաճ մակարդակով՝ ոչ «ասիական» ձևով: Ուստի նա, Մաշտոցին աչքալուսանք տալով կայսեր համաձայնության մասին, նախօրոք խորհուրդ տվեց, որ Մաշտոցն ու Վարդանը Կոստանդնուպոլիս գնան և ներկայանան կայսրին առանց ավելորդությունների, այլ իբրև հայոց աշխարհի գործարար ներկայացուցիչներ, որոնք կայսեր մոտ պետք է հանդես գան դիվանագիտորեն...

Մեսրոպն իր հետ վերցրել էր աշակերտների մի ստվար խումբ, որպեսզի նրանք Կոստանդնուպոլսում զբաղվեն հունարենի ուսումնասիրությամբ և թարգմանությամբ: Անատոլիոսի խորհրդով Մաշտոցն այդ աշակերտներին նրանց ղեկավար Ղևոնդի հետ միասին թողեց Մելիտինեում: Մելիտինեում մնացին նաև Վարդանի զինվորները: Նրանք պետք է սպասեին մինչև Մաշտոցի և Վարդանի Կոստանդնուպոլսից վերադառնալը: Անատոլիոսը Մաշտոցին և Վարդանին Կոստանդնուպոլիս ուղարկեց Դերջանի Գինդ եպիսկոպոսի ուղեկցությամբ՝ նրան տալով հատուկ արտոնագրեր: Գինդը այդ տարիներին Արևմտյան Հայաստանում վարում էր կրոնական գործերը և տարին մի երկու անգամ լինում էր Կոստանդնուպոլսում: Մոտիկից լավ ծանոթ էր Բյուզանդիայի պատրիարք Ատտիկոսին: Մի անգամ նույնիսկ եղել էր կայսեր մոտ: Նա ոչ միայն պետք է ապահովեր Մաշտոցի ու Վարդանի հաջող ուղևորությունը, այլև պետք է միջնորդեր Ատտիկոսին, որ վերջինս բարեխոսեր կայսեր առաջ՝ հայ պատվիրակների խնդրանքը կատարելու համար:

Թեոդոս Մեծը Մաշտոցին ու Վարդանին ընդունեց պատշաճ հարգանքով: Ընդունելությանը ներկա էր նաև Ատտիկոսը: Թեև կայսրը նախօրոք մանրամասն գիտեր նրանց ուղևորության հանգամանքների մասին, բայց հարկ համարեց մի անգամ ևս այն լսել անձամբ Մաշտոցից: Մաշտոցը համառոտ նկարագրեց քրիստոնեության վիճակը Հայաստանում, դրա հիման վրա՝ իրենց առաքելության նպատակը: Մաշտոցը խոսում էր գեղեցիկ հունարենով, և դա մեծ տպավորություն թողեց կայսեր վրա:

— Ներեցե՛ք, սուրբ հայր,— որտե՞ղ եք այդքան վարժ սովորել հունարեն լեզուն:

— Ես պատանի հասակում հինգ տարի ուսանել եմ Կեսարիայում և Ալեքսանդրիայում,— հակիրճ պատասխանեց Մաշտոցը:

— Բյուզանդիոն մեկնելուց առաջ հունարեն գիտե՞լիք,— հարցր շարունակեց կայսրը:

— Այո՛, օգոստոսափա՛ն,— անմիջապես պատասխանեց Մաշտոցը,— ես մինչև 12 տարեկան հասակս իմ հայրենիքում աշակերտում էի լուսահոգի Ներսես Մեծին, որը, ինչպես Ձեզ հայտնի է, Հայոց աշխարհում հիմնել էր հունական կրթության դպրոցներ:

— Դու աշակերտել ես անձամբ Ներսես Մեծին:

— Այո՛, օգոստոսափա՛ն, լուսահոգի Ներսես Մեծը ոչ միայն իմ ուսուցիչը, այլև իմ խնամակալն է եղել: Ես մանուկ հասակում գրեթե ապրել եմ նրա տանը: Նա իմ քրոջ ամուսինն էր:

— Ուրեմն Դուք Սահակ Պարթև կաթողիկոսի ազգականն եք,— կեղծ զարմացավ Թեոդոս կայսրը, իբրև թե առաջին անգամն էր լսում:

— Այո՛, նա իմ քրոջ որդին է,— չթաքցնելով իրողությունը՝ հպարտությամբ պատասխանեց Մաշտոցը:

— Դա լավ է, դա մեզ իրավունք է տալիս նրա մեղքի համար քեզ ենթարկել պատասխանատվության,— մի տեսակ կատակի տալով՝ ասաց կայսրը:

— Ես պատրաստ եմ քավել Սահակ Պարթևի բոլոր մեղքերը, եթե իհարկե նա ունի այդպիսիք,— լուրջ պատասխանեց Մաշտոցը: Մի պահ նրա մեջ ծառս եղավ Մամիկոնյան արյունը,— ես հաստատ գիտեմ, օգոստոսափա՛ն, որ Սահակ Պարթև կաթողիկոսը նվիրյալ քրիստոնյա է, պատրաստ՝ մեռնելու այդ սուրբ հավատի համար: Սահակ Պարթևը Գրիգոր Լուսավորչի իսկական թոռն է և Ներսես Մեծի հարազատ զավակն ու ժառանգորդը: Նա այնքան մեղք չունի, որքան՝ թշնամիներ...

Մաշտոցը մի պահ մոռացել էր, որ գտնվում է Մեծ Բյուզանդիայի հզոր արքունիքում և պատասխանում է օգոստոսափառ Թեոդոս կայսրին: Կայսրը խոժոռվեց: Մաշտոցը նկատեց այդ և, ի նշան ներողության, ձեռքերը խաչեց կրծքին և խորը գլուխ տվեց: Կայսրը ժպտաց և գլուխը թեթև տարուբերեց:

— Ասում ես, թե Սահակը մեղք չունի,— զգուշորեն խոսքն առաց տարավ կայսրը,— բայց ունենալով մեզ նման մի քաղաքակիրթ և հզոր հարևան՝ ազգային դպրություն ստեղծելու համար ինչու՞ էր դիմում ասորիներին և ոչ թե՛ մեզ...

Մաշտոցի մեջ գլուխ բարձրացրեց նախկին դիվանապետը: Նա ժպտաց և, որքան կարող էր մեղմ, պատասխանեց.

— Թող հայտնի լինի օգոստոսափառ կայսրին, որ Սահակը քաջ գիտեր հզոր Բյուզանդիայի տեղը, բայց նա չէր կարող բացահայտ դիմել նրա օգնությանը, քանզի Հայոց աշխարհի մեծ մասը պարսկահպատակ էր: Դա կարող էր նոր՝ վատ հետևանքներ ունենալ... և դեռ խանձարուրի մեջ խեղդել մայրենի լեզվով դպրության մանկանը, որը դեռ մանուկ էլ չէր, այլ սաղմ... Չեզոք անկյուն էր պետք նրա զարգացման համար, և այդ չեզոքն Ասորիքն էր՝ Միջագետքը, որտեղ, ի դեպ, ավելի ուժեղ է հունական դպրությունը, քան պարսկականը, ավելի շատ հունական մշակույթ կա, քան պարսկական...

— Լավ, համոզեցիր,— նորից ժպտաց կայսրը,— եթե Սահակ Պարթևն էլ նույն պատասխանը պիտի տար, մենք ներում ենք նրա մեղքը նույնպես:

— Սահակն ավելին կասեր,— մեղմ նկատեց Մաշտոցը:

— Հավատում եմ,— համաձայնվեց կայսրը:

— Շնորհակալ եմ,— նորից գլուխ տվեց Մաշտոցը:

Հաջորդ օրը բյուզանդական կայսերական պալատի մեծ դահլիճներից մեկում հավաքվել էին մեծ քանակությամբ նշանավոր մարդիկ: Կատարվում էր հանդիսավոր արարողություն: Կոստանդնուպոլսի պատրիարք Ատտիկոսի հակիրճ ճառից հետո, որ հասարակությանը ներկայացնում էր Մաշտոցի կենսագրությունը և ծառայությունները՝ Արևելքում քրիստոնեության տարածման և այդ նպատակով մայրենի լեզվով դպրության ստեղծման գործը, Մաշտոցը հռչակվեց մեծ տքնող և ուսուցչապետ: Այնուհետև խոսքը տրվեց Մաշտոցին:

Ի զարմանս բյուզանդական ավագանու՝ Մաշտոցը խոսում էր կիրթ հունարենով, նա ներկայացնում էր ամբողջ Բյուզանդիան՝ որպես համաշխարհային մշակույթի կենտրոն, փառաբանում էր

օգոստոսափառ Թեոդոս կայսրին և շնորհակալություն հայտնում Հայոց բովանդակ աշխարհի նկատմամբ ցուցաբերած նրա մեծ հոգատարության համար: Մաշտոցի ելույթից հետո սկսվեց օրվա արարողության երկրորդ ծիսակատարությունը, որը զուտ զինվորական բնույթ ուներ: Բյուզանդական արքունիքում, կայսեր հատուկ հրովարտակով, հայոց զորքերի սպարապետ օծվեց Վարդան Մամիկոնյանը...

\* \* \*

Թեոդոս կայսեր վերաբերմունքը Մաշտոցի և Վարդանի նկատմամբ ոգևորել էր Սահակ Պարթևին: Նա Մաշտոցին ու հայոց նորընծա սպարապետ Վարդանին, որը իր թոռն էր, դիմավորեց Մելիտինեում: Նա այդ քայլին դիմեց հատուկ նկատառումներով: Անձամբ ներկայացավ Արևմտահայաստանի կուսակալ Անատոլիոսին: Շնորհակալություն հայտնեց նրան օգնության համար և նվերներ մատուցեց, ապա գոհունակություն հայտնեց կայսեր մեծահոգության համար: Այդ ամենի փոխարեն, որպես հատուցում, Անատոլիոսն անակնկալ մատուցեց Սահակ Պարթևին՝ ցույց տալով կայսեր հատուկ հրովարտակը, որը ստացել էր սուրհանդակի միջոցով: Հրովարտակն Անատոլիոսին տեղյակ էր պահում, որ Մաշտոցը բյուզանդական արքունիքում ստացել է տքնող-ուսուցչապետի կոչում, իսկ Վարդանը՝ հայոց սպարապետի: Կայսրը կարգադրում էր օգնել նրանց ինչպես հարկն է և Արևմտյան Հայաստանում բացել հայոց լեզվով դպրոցներ ու դրանց ծախսերը հոգալ կայսերական գանձարանի հաշվին:

Թեոդոս կայսեր այս կարգադրությունը գերազանցեց Սահակի ու Մաշտոցի սպասելիքները, և նրանք մեծ ոգևորությամբ ու եռանդով սկսեցին իրենց կրթական գործը Հայոց աշխարհի բյուզանդական մասում:

Կրթական գործի տարածմանը զուգընթաց, Մաշտոցը, հայոց սպարապետ Վարդանի եղբայրներ Հմայակի և Համազասպյանի աջակցությամբ, որոնք իրենց պապ Սահակ Պարթևի հետ եկել էին Հայոց աշխարհի բյուզանդական մասը, իրենց Մամիկոնյան զինվորներով և տեղական նախարարների աջակցությամբ հալածանք սկսեց բորբորիտական աղանդին հետևողների դեմ, որոնք Հայոց աշխարհի անիշխանության տարիներին գրեթե սանձարձակ էին դար-

ձել: Մաշտոցը սկզբում ցանկանում էր նրանց դարձի բերել, սակայն, տեսնելով, որ դա անհնար է, դիմեց գեների և բորբորիտներին դուրս շարտեց երկրից:

Այնուհետև Մելիտինեում թողած աշակերտներից մի քանիսին, որոնք վարժ էին հունարենի ուսման մեջ, Ղևոնդի և Կորյունի գլխավորությամբ ուղարկեց Բյուզանդիա՝ հունարենին կատարելապես տիրապետելու և բնագրերից գրքեր թարգմանելու համար:

Մնացած աշակերտներին նորաբաց դպրոցներում նշանակեց ուսուցիչներ: Դա քաղաքական մի յուրահատուկ շարժում էր, որն սկսեց ծաղկել Հայոց աշխարհի բյուզանդական մասում:

Այդ յուրը շուտով Տիգրան հասավ... Վռամն իսկույն վախեցավ և դիմեց իր նախնիների դիվանագիտությանը՝ սկսեց սիրաշահել Սահակ Պարթևին և հայ ազդեցիկ նախարարներին, հատկապես Մամիկոնյաններին: Նա Սմբատ ասպետի միջոցով տեղյակ պահեց պարսկահպատակ Հայաստանի բոլոր նախարարներին, որ մտադիր է հայոց գահին նորից հայ բազմեցնել և խոստացավ վերացնել այն տույժերը, որ ինքը սահմանել էր որոշ հայ իշխանական տների նկատմամբ: Նա Սմբատ ասպետի միջոցով երդմնագիր ուղարկեց Սահակ Պարթևին և Վարդան Մամիկոնյանին և հրավիրեց Տիգրան՝ անձամբ շնորհավորելու և ճանաչելու նրանց իրավունքները: Այդպես էլ վարվեց. Վարդանին ճանաչեց որպես Ամենայն հայոց գործերի սպարապետ, իսկ Սահակ Պարթևին՝ Ամենայն հայոց կաթողիկոս, որը շուտով վերադարձավ Վաղարշապատ և նստեց կաթողիկոսական աթոռին: Բահրամ Գոռը, ի հեճուկս Բյուզանդիայի, իր քաղաքականության մեջ ավելի առաջ գնաց. նա Վռամշապուհի պատանի որդուն՝ Արտաշեսին, պարսկերեն անվանելով Արտաշիր՝ նշանակեց հայոց թագավոր: Թեև դա նույնպես Պարսկաստանի խորամանկ քաղաքականություն էր՝ հայոց թագավորը գրկված էր ինքնուրույնության շատ իրավունքներից, բայց և այնպես, նա ազգային իշխանություն էր:

Օգտվելով հանգամանքներից՝ Մաշտոցը շուտով Արևմտյան Հայաստանից վերադարձավ հայոց մայրաքաղաք՝ Վաղարշապատ, և թագավոր Արտաշիրի հատուկ հրովարտակով նշանակվեց Ամենայն հայոց ուսուցչապետ և կրթական գործերի վերակացու: Մաշտոցը դրա համար ստանում էր թագավորի աջակցությունը և պարբերաբար գեկուցում դպրոցական տեղաշարժերի մասին: Պատանի թագավորը հպարտանում էր, որ իր հոր՝ Վռամշապուհ արքայի սկսած հայրենաշեն գործը շարունակելը վիճակվել է իրեն, և ջանք չէր խնայում ուժերի

ներածին չափով նպաստել ազգային լեզվով դպրության բարգավաճմանը: Ամբողջ Հայոց աշխարհում նորից կենդանացավ ազգային լուսավորության գործը: Բայց, ավանդ, այդ երանելի վիճակը տևեց միայն վեց տարի... Երիտասարդ թագավոր Արտաշեսը մեղադրվեց անառակությունների մեջ: Անշուշտ, այդպես էր ցանկանում պարսկական արքունիքը. դա նրա փորձված միջոցներից մեկն էր, և այդ տեսակետը գտավ իր կողմնակիցները հայ նախարարների շրջանում: Մեղադրանքները, որոնք ներկայացվում էին հայ երիտասարդ թագավորին, ունեին որոշակի հիմքեր, որոնք այլ հանգամանքներում չէին կարող ստվեր գցել նրա իշխանության վրա, սակայն ներկա իրադարձությունների մեջ նրա չնչին սայթաքումները մահացու մեղքեր էին համարվում: Բահրամ Գոռը խրախուսում էր այն հայ նախարարներին, որոնք դեմ էին Արտաշեսի թագավորությանը: Վռամի (Բահրամ Գոռի) թելադրանքով նախարարները պահանջում էին Սահակ Պարթևից, որ նա միանա իրենց և որպես կաթողիկոս՝ պարսկական արքունիքի առաջ ամբաստանի Արտաշեսին: Սահակ Պարթևը քաջ գիտեր, որ ով էլ լինի հայոց թագավոր, միևնույնն է, նրա նկատմամբ կվարվեն նույնպես, ուստի ձեռնպահ էր մնում հայ նախարարների նման մոլեռանդ պնդումներից, թեև ինքը նույնպես չէր հերքում Արտաշեսի թերությունները: Բայց նա միշտ կրկնում էր, որ Արտաշեսը հայ է, քրիստոնյա, նրան չի կարելի մատնել հեթանոս պարսիկների ձեռքը: «Քավ լիցի, որ ես իմ մոլորված ոչխարը մատնեմ գայլերին»,— ասում էր նա: Արտաշեսին չսիրող հայ նախարարները, տեսնելով, որ Սահակը չի միանում իրենց, ընդհակառակը, բարյացակամ է Արտաշեսի նկատմամբ, որոշեցին Սահակի փոխարեն, որպես հոգևոր դասի ներկայացուցչի, Բզնունյաց գավառից Սուրմակ Երեցին տանել Տիզբոն: Բահրամ Գոռն անմիջապես Տիզբոն կանչեց Արտաշես թագավորին ու Սահակ կաթողիկոսին: Պարսից արքունիքը նախ ցանկացավ կաշառել Սահակին՝ կավածքներ ու այլ արտոնություններ խոստանալով, որպեսզի նա հաստատի հայ նախարարների ամբաստանություններն Արտաշեսի նկատմամբ, բայց տեսնելով, որ Սահակն անդրդվելի է իր սկզբունքների մեջ, հենվեց Սուրմակ Երեցի հայրենադավ ցուցմունքների վրա՝ Արտաշեսին գահընկեց արեց և Սահակ Պարթևի փոխարեն կաթողիկոսական աթոռին բազմեցրեց բանսարկու Սուրմակին:

Սակայն քառ և բանսարկու Սուրմակ կաթողիկոսը շուտով անտանելի դարձավ նույնիսկ այն հայ նախարարների համար, ովքեր աջակցել էին նրան կաթողիկոսական աթոռը գրավելու համար: Ու-

տի կարճ ժամանակ անց հայ նախարարները նրան կարգալույծ արեցին և խնդրեցին Վոսմ թագավորին իր հայեցողությամբ նոր կաթողիկոս նշանակել: Արքայից արքան, օգտվելով այս խառն իրավիճակից, այս անգամ Գրիգոր Լուսավորչի տոհմական աթոռին բազմեցրեց մի ասորի եպիսկոպոսի՝ Բրքիշո անունով, որը, կաթողիկոսական աթոռին նստելով, քրիստոնյային անվայել՝ գեխ ու շվայտ կյանք էր վարում: Հայ հոգևորականությունն ու նախարարները դիմեցին Վոսմին, որպեսզի նա Սահակ Պարթևին վերահաստատի կաթողիկոսական աթոռին կամ կաթողիկոս նշանակի մեկ ուրիշին, որը զերծ կլինի Բրքիշոյի մոլություններից: Բայց քանի որ այդ ժամանակ բյուզանդական զորքերի հրամանատար Անատոլ զորավարը պահանջում էր Սահակ Պարթևին Հայոց աշխարհի հունական մասում կաթողիկոս դարձնել, Վոսմը, հավատարիմ մնալով պարսկական քաղաքականությանը, ջգանկացավ Սահակ Պարթևին բաց թողնել իր իշխանությունից: Նա ճարպկորեն հայոց կաթողիկոսական աթոռը բաժանեց երկու մասի՝ ստեղծեց հակաթոռ:

Արքայից արքան որոշեց Հայոց աշխարհում դնել երկու կաթողիկոսական աթոռ: Հիմնական աթոռի վրա նա նստեցրեց ասորի մի եպիսկոպոսի՝ Շմուել անունով, որին նա տվեց նաև բուն կաթողիկոսական իշխանությունը՝ վարչական բոլոր իրավունքներով: Երկրորդ աթոռը տվեց Սահակ Պարթևին, որն, ըստ էության, դառնում էր ասորի կաթողիկոսի ենթական. Սահակը պետք է վարեր միայն կրոնադավանաբանական գործերը:

Արքայից արքան հետագա անախորժություններից խուսափելու համար պարսկական գահի սովորության համաձայն՝ փորձեց կաշառել Սահակին՝ նրան դրամական մեծ գումար խոստանալով: Սակայն Սահակը վեհանձնորեն հրաժարվեց արծաթ ընդունելուց: Փոխարենը պահանջեց, որ Պարսկաստանը նախ պետք է անձեռնմխելի թողնի հայոց նախարարական տների՝ հայոց թագավորի սահմանած կարգն ու աստիճանները, ընդ որում, Գազավոն Կամսարականին հաստատի նախարարական կազմում և Վարդան Մամիկոնյանին վերահաստատի հայոց սպարապետության պաշտոնում: Բացի այդ, նա պահանջեց, որ պարսիկ մարզպաններն իրավունք չունեն այդ կարգը փոխելու կամ միջնորդելու արքայից արքային դրանց փոփոխման համար:

Արքայից արքան կատարեց Սահակ Պարթևի պահանջը:

Շմուելը, գրավելով կաթողիկոսական աթոռը, նստեց Վաղարշապատում, իսկ Սահակը՝ Բագրևանդ գավառում:

Հինգ տարի անց մահացավ Շմունելը: Հայոց բոլոր նախարարները, որոնց թվում նաև Սահակ Պարթևին ամբաստանողները, հավաքվեցին գնացին Սահակի մոտ: Ապաշխարելով խնդրեցին ու խոստացան միջնորդել Վռամ թագավորին՝ նրան վերստին հայոց կաթողիկոսական աթոռին հաստատել տալու համար...

Սահակը երկար ժամանակ հանձն չէր առնում, սակայն շուտով վախճանվեց հայոց Վռամշապուհ արքան: Սահակին մնում էր համաձայնվել, քանզի այդ ժամանակ հայկական երկնակամարում մարեց հայոց քաղաքական անկախության համեստ աստղը, և կործանման աղջամուղջում Հայոց աշխարհի համար, որպես փրկության անշեջ հուր, մնացել և առկայծում էր Սահակ-Մաշտոցյան դպրության գործը, որը բռնկվել ու բոցավառվում էր հայ ժողովրդի հոգում... Եվ եղավ լույս...



## ՍՐԲԱԶԱՆ ԵՐԴՈՒՄ

Պարսկաստանում ավելի քան երկու տասնամյակ թագավորելուց հետո՝ 439 թվականի ամռանը, մահացավ Վռամ արքան: Նրա մահից հետո գահը ժառանգեց որդին՝ Հազկերտ 2-րդը, որն անմիջապես մեծ վեզիրի տիտղոսով Պարսկաստանում հազարապետ նշանակեց պարսկական ռազմատենչ ազնվականության ներկայացուցիչ Միհրներսեհին, որի խորհրդով պարսկական բանակը, խախտելով Բյուզանդիայի հետ կնքած դաշնագիրը, մտավ Ծոփք և հարձակվեց բյուզանդական գորքերի վրա:

Վախենալով հայերի ապստամբությունից՝ Հազկերտը հրամայեց Ատրպատականում գտնվող պարսկական բանակին՝ մտնել Հայոց աշխարհ: Ատրպատականի գորքը մտավ Հայաստան և անկանոն կարգով բանակ դրեց Բագրևանդ գավառում: Այդ ժամանակ Սահակ Պարթևը, որը, որպես երկրորդ կաթողիկոս, մնում էր Բագրևանդի Բագավանում, ծանր հիվանդացավ: Մերձավորները հիվանդ կաթողիկոսին տեղափոխեցին մոտակա Բլուր գյուղը, որտեղ պարսիկ գորքերը չկային, և օդն էլ համեմատաբար մաքուր էր: Սակայն մեկ շաբաթ հետո լուրը հասավ Վաղարշապատ, որ գառամյալ կաթողիկոսը մահամերձ է և իր մոտ է կանչել Մաշտոցին: Երբ Մաշտոցը երեկոյան Բլուր գյուղ հասավ, Սահակը վերջին շնչում էր: Մահամերձի սնարին կոթնած նրա սարկավազապետ Երեմյանը, տեսնելով Մաշտոցի մուտքը, տխուր մոտեցավ և լացակումած մրմնջաց.

— Վեհափառը կեսօրից չի խոսում:

Մաշտոցը լուռ գնաց դեպի մահամերձի մահիձր: Մահճի մոտ կանգնածները ետ քաշվելով տեղ տվեցին, որ Մաշտոցը մոտենա: Մաշտոցը մոտեցավ և զգուշորեն աջ ձեռքի ավուր շոշափեց Սահակի ձակատը: Մահամերձը, որ մինչ այդ լուռ էր, հանկարծ աչքերը բացեց և թույլ ձայնով ասաց.

— Մետրոնայ, լավ արիր, որ եկար:

— Ինչպե՞ս ես, — բարձրաձայն հարցրեց Մաշտոցը:

Սահակը պղտոր հայացքով նայեց Մաշտոցին և գլուխը բացասաբար շարժեց, ապա ուժ հավաքեց և հագիվ լսելի ասաց.

— Մետրոնայ, սա երևի վերջն է... Ես երևի Վարդանիս այլևս չտեսնեմ...,— այս ասելով՝ Սահակը տխուր նայեց Վարդանի տիկնոջը՝ Դստրիկին, որը, թաշկինակը շուրթերին սեղմած, գլխահակ, քաշվել էր մի կողմ և արտասպում էր: Դստրիկը, այս խոսքերը լսելով, փղձկաց:

— Լաց մի՛ լինի, գառ... Վարդանս կգա... դուք կտեսնեք... Ես չեմ տեսնի...,— հագիվ շնչելով՝ Դստրիկին դիմեց Սահակը և ուժասպառ շարունակեց, — Մետրոնայ, Վարդանիս կասես... որ սատար դառնա մայրենի լեզվին ու գրին...

Սահակն ուզում էր էլի ինչ—որ բան ասել, բայց շունչը չբացվեց: Նրա ձեռքը, որ կրծքին դրած էր, թուլացած ընկավ կողքին: Նա հոգին ավանդեց: Մետրոնայը աջ ձեռքով դողողալով փակեց նրա աչքերը: Ներկաները սկսեցին զուսպ սգալ:

Վարդանը Հազկերտ 2-րդի պահանջով հայոց այրուձին տարել էր Տիգրան՝ այնտեղից քուշանների դեմ պատերազմ գնալու համար: Քուշանները կամ, ինչպես Ղազար Փարպեցին է նրանց անվանում՝ հեպթաղները, Կասպից ծովի հյուսիսարևմտյան մասերում բնակվող հոներն էին, որոնք հաճախակի Ճորա պահակով (Դերբենդի կիրճով) հարձակվում էին Պարսկաստանի վրա և ասպատակում էին նրա սահմանամերձ նահանգները:

Հազկերտը, հայկական այրուձին հոների դեմ ուղարկելով, երկու նպատակ էր հետապնդում: Նա այդ քաղաքականությամբ հպատակ ժողովուրդների ռազմական ուժերը նախ օգտագործում էր Պարսկաստանի թշնամիների դեմ և երկրորդը՝ հպատակ ժողովուրդների զինված ուժերը հեռացնում էր իրենց բուն երկրից, որ այդ երկրների հնարավոր ապստամբությունները կարողանան հեշտ կանխել:

Սահակ Պարթևը վախճանվեց հայոց նավասարդի 30-ին (սեպտեմբերի 7-ին), որը և իր ծննդյան օրն էր: Վեհափառի մարմինը իր սարկավազապետ Երեմիան և հարս Դստրիկը նրա աշակերտ—

տքնողների հետ Բլուր գյուղից տեղափոխեցին Տարոն գավառի Աշտիշատ գյուղը և թաղեցին այնտեղ, որի գերեզմանը դարձավ հայ ժողովրդի համար սրբավայր և ուխտատեղի... Մաշտոցն այդ օրերին նույնպես իրեն տկար էր զգում, ուստի չկարողացավ մասնակցել Սահակի հուղարկավորությանը:

Սուրբ Սահակի վախճանվելուց վեց ամիս հետո՝ հայոց մեհեկան ամսի տասներեքին (փետրվարի 17-ին), Վաղարշապատ քաղաքում իր մահկանացուն կնքեց նաև Երանելի Մաշտոցը: Նրա վարքագիր Կորյունը, ականատեսի վկայությամբ, պատմում է, որ Մաշտոցի մահվան ժամանակ «... մինչդեռ սրբի ձեռքերը կարկառված էին դեպի երկինք, խաչանման լուսավոր, շողավոր ձևով սքանչելի տեսիլ երևաց այն ապարանքի վրա, ուր վախճանվում էր Երանելին, և ամեն մարդ ինքը տեսավ այդ, և ոչ թե ընկերը պատմեց: Եվ նա սրբերին սեր ու միաբանություն ավանդեց, մերձավորներին ու հեռավորներին օրհնությամբ պսակեց և հաճոյական աղոթքը Քրիստոսին հասցնելով՝ հանգավ»:

Մաշտոցի թաղման մասին Քերթողահայր Խորենացին այսպես է վկայում. «Ինչպես լսեցի բազմաթիվ և արժանահավատ անձերից... Այս ժամանակ հավաքված բազմության մեջ աղմուկ և շփոթություն ծագեց՝ այն պարկեշտ մարմինը թաղելուն (տեղի) պատճառով, որը դեռ մահից առաջ մեռելության վարժեցրել էր իրեն: Բաժանվել էին երեք խմբի. մի մասն առաջարկում էր տանել Տարոն՝ իր ծննդավայրը, մյուսները՝ տանել Գողթն, որտեղ առաջին անգամ ուսուցանել էր, մի մասն էլ առաջարկում էր թաղել հենց Վաղարշապատ քաղաքում՝ սրբերի հանգստարանում: Բայց հաղթեց քաջ Վահան Ամատունին, որ ավելի ջերմեռանդ էր հավատով և հզոր էր մարմնավորապես, որովհետև պարսիկներն այդ ժամանակ նրան էին վստահել մեր Հայոց երկրի հազարապետությունը: Նա մարմինը վերցրեց և արժանավայել հուղարկավորությամբ տարավ իր գյուղը՝ Օշական: Եվ նույն լուսեղեն խաչի երևույթը դագաղի վրա գնում էր դեմ հանդիման ժողովրդին, մինչև նրան հողին հանձնեցին, Վահանը և նրա սպասավոր Թաթիկը, որից հետո նշանը աներևույթ եղավ: Իսկ եպիսկոպոսական աթոռը իբրև տեղակալ նստեց երանելի Մեսրոպի հրամանով նրա աշակերտը՝ Հովսեփ քահանան, որը Վայոց ձորի Հողոցիմ գյուղից էր»:

442 թվականին Բյուզանդիան ստիպված հաշտություն կնքեց Պարսկաստանի հետ՝ նրան վճարելով մեծ քանակությամբ դրամական տուգանք, միաժամանակ քանդեց սահմանային բազմաթիվ բերդեր ու ամրություններ: Պարսկական բանակը իր ուժերը բյուզանդական սահմանից տեղափոխեց և կենտրոնացրեց քուշանների դեմ: Հայոց այրուձին, որը մինչ այդ սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ քուշանների դեմ մի շարք հաղթանակներ էր արել, արտոնություն ստացավ բյուզանդական սահմանով վերադառնալ հայրենիք:

Վարդանը ժամանակին լսել էր, որ սիրելի պապի աճյունը տեղափոխել և թաղել են Աշտիշատում, ուստի որոշեց հայոց այրուձին նախ տանել պապենական Տարոնով և այցելել պապի գերեզմանին, ապա նոր մեկնել Վաղարշապատ: Նա իր գորագնդով մտավ Աշտիշատ, այցելեց և հարգանքի տուրք մատուցեց պապի՝ Սահակ Պարթևի գերեզմանին: Մեկ շաբաթ դադար տալուց հետո հայոց այրուձին տարավ դեպի Վաղարշապատ: Երբ Վարդանը մայրաքաղաք հասավ, արդեն խոր աշուն էր:

Մայրաքաղաքում նրան ընդունեցին մեծ հանդիսավորությամբ: Հայոց հազարապետ Վահան Ամատունին և մեկ տարի առաջ Հայոց աշխարհում մարզպան նշանակված Վասակ Սյունեցին ամեն ինչ անում էին, որպեսզի Վարդանը ծանր չտանի Սահակի ու Մեսրոպի մահը:

Հովսեփ Վայցգձորցի եպիսկոպոսը, որ արդեն կաթողիկոսի տեղակալ էր կարգված, սովերի պես հետևում էր Վարդանին և ամեն առիթով հուսադրող խոսքերով մխիթարում էր նրան:

Վարդանի և հայոց գնդերի վերադարձի տոնախմբություններին մասնակցելու էին եկել ոչ միայն հայոց շատ նախարարներ ու իշխաններ, այլև Սահակի և Մեսրոպի այն աշակերտները, ովքեր փոքրիշատե դիրք ունեին հայ հասարակական շրջաններում: Չնայած դրան՝ Վարդանը որոշեց տոնախմբություններից առաջ նախ այցելել և հարգ մատուցել իր շատ սիրելի ուսուցչի՝ Մաշտոցի գերեզմանին: Վարդանի որոշումը մեծ ակնածանքով ու խանդավառությամբ ընդունվեց մայրաքաղաքում տոնախմբության եկածների կողմից: Մաշտոցի շիրիմին այցելողների թիվն այնքան մեծ էր, որ որոշվեց մայրաքաղաքից մինչև Օշական ոտքով գնալ:

Սրբացած ուսուցչի գերեզմանին այցելողների երթը Օշական հասավ կեսօրին: Երթի առջևից գնում էին հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանը, մարզպան Վասակ Սյունեցին, հազարապետ Վահան Ամատունին և կաթողիկոսի տեղակալ Հովսեփ Վայոցձորցին, որը, ընդհուպ քայլելով Վարդանի կողքից, իրեն յուրահատուկ մեղմությամբ Վարդանին պատմում էր Մաշտոցի վերջին օրերի և մահվան մանրամասները, առավել ջերմեռանդ պատմեց լուսավոր խաչի տեսիլքի մասին... Լսողները միահամուռ խաչակնքեցին դեմքերը: Այդ բարձրաստիճան քառյակի հետևից քայլում էին հայոց նշանավոր նախարարներն ու ազդեցիկ հոգևորականները՝ Վարդանի մեծ եղբայր Հմայակ Մամիկոնյանի գլխավորությամբ: Նրանցից անմիջապես հետո գալիս էին Սահակի և Մաշտոցի նշանավոր աշակերտները, ապա զինվորականությունն ու ժողովուրդը:

Երբ երթը հասավ Մաշտոցի շիրմաքարին, Հովսեփ եպիսկոպոսը մի խումբ բարձրաստիճան հոգևորականների հետ մոտեցավ և սկսեց օրհնել գերեզմանը: Օրհներգը վերջացավ: Քար լռություն տիրեց: Վարդանը մոտեցավ գերեզմանին, նախ խոնարհվեց, ապա ծնկի եկավ, ու ճակատը գորովանքով հպեց Մաշտոցի շիրմաքարին, կարծես դիմացը ոչ թե շիրմաքար էր, այլ կենդանի մարդ, որի կրծքին հայոց սպարապետը սեղմել էր իր ճակատը: Մի պահ այդ դիրքով մնալուց հետո նա հանդիսավոր ոտքի կանգնեց, մերկացրեց սուրը և պարզեց վեր. կանգնածները տեսան, թե ինչպես նրա աչքերում լճանում է հազիվ զսպած արտասուքը, և աղամախնձորը վերովար է անում հուզմունքից:

Լռությունն ավելի խտացավ: Վարդանը հայացքով շրջվեց դեպի հավաքված բազմությունը, և ինչպես զորավարն է զորքին մարտի տանում, խրոխտ ասաց.

— Ժողովուրդ, այս շիրիմում ննջում է մի մահկանացու, որը, իր կյանքը հայրենիքի փրկության համար ողջակիզելով, սրբացավ: Նա մեզ՝ հայ ժողովրդիս, նրա օրհասական պահին փրկության խարիսխ տվեց՝ հանձինս մեր ոսկեղենիկ գրերի: Մաշտոցյան գրերը փրկեցին մեր լեզուն, ուրեմն՝ և մեր ազգը: Շնորհիվ այս սուրբ ննջեցյալի հայրենանվեր տառապանքների՝ մեր ժողովուրդը փրկվեց վերահաս կործանումից և անմահացավ: Եկե՛ք ազգովի երդվենք այս սուրբ շիրիմի առաջ, որ հարկ եղած դեպքում մեր կյանքը չենք խնայի նրա մեծ գործի հարատևման համար...

Վարդանը վերջացրեց իր հակիրճ խոսքը: Հավաքված բազմությունը կարծես դրան էր սպասում. գինվորականները մերկացրին իրենց սրերը, հոգևորականները վեր պարզեցին խաչերը, մնացյալները ծնկի եկան, և բազմությունը միաբերան որոտաց.

— Երդվում ենք...

Դա ամբողջ հայ ժողովրդի երդումն էր...

\* \* \*

Տասը տարի չանցած՝ հայ ժողովուրդը Ավարայրի դաշտում, Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ, կատարեց իր երդումը: Շատ-շատերը գարնանահորդ պղտոր Տղմուտ գետի ափին Վարդանի հետ միասին նահատակվեցին ու սրբացան: Քանզի նրանց թափված արյունով փրկվեց հայ գիրն ու հայ լեզուն, փրկվեց հայրենին, որն ապրում է դարեր...

# ՀԱՎԱՏԸ

(դրամա երեք ործողությանը)



## Գործող անձերը

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Հունաստանի հզոր թագավոր և զորավար, 35 տարեկան

ՓԻԼԻՊՈՍ — Ալեքսանդրի անձնական բժիշկը

ԼԵՈՆԻԴԵՍ

ՊԱՐՄԱՆՅՈՆ

ՔԼԻՏ

ՊՐՈՏՈՍ

ՓԻԼՈՏ

ՀՈՐՄԵԼԻՈՍ

ԿԱԼԻՍԹԵՆԵՍ

ԱՆԱՐՔՈՍ

ԱԳԱ — Պարսկական երկրներից մեկի թագուհին

ԹԵԱ — Ստրկուիի

ԲԵՍ — Պարսիկ զորապետ

ԽԵՂԿԱՏԱԿ

ԾՈՎԱՀԵՆ — Մեգաս

ԶԻՆՎՈՐՆԵՐ, ՍՊԱՄԱՎՈՐՆԵՐ, ՍՈՒՐՀԱՆԳԱԿՆԵՐ, ՊԱՏ-  
ԳԱՄԱՎՈՐՆԵՐ և այլն:





## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

#### *Ալեքսանդրի մնջասենյակը*

ԹԵԱ — *(Սառը բրջոցով քնքշորեն շփում է Ալեքսանդրի ճակատը):* Ինչպե՞ս եք, տե՛ր իմ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Շատ լավ եմ, Թե՛ա: Հենց որ լրիվ ապաքինվեմ, քեզ ազատություն կտամ:

ԹԵԱ — Շնորհակալ եմ, տե՛ր իմ: Ինչի՞ համար եք ինձ ազատություն տալիս:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Դու լավ աղջիկ ես, Թե՛ա, ես չեմ ուզում՝ դու ստրուկ մնաս:

ԹԵԱ — Իսկ, տե՛ր իմ, ազատությունից հետո ես ու՞ր պիտի գնամ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ուր որ կկամենաս:

ԹԵԱ — Կարո՞ղ եմ դարձյալ ես Ձեզ մոտ մնալ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Մնում եք ինձ մոտ՝ ի՞նչ անեք:

ԹԵԱ — Ես կդառնամ Ձեր աղախինը և կծառայեմ այնպես, ինչպես այժմ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Բայց չէ՞ որ ես քեզ ազատություն եմ շնորհում...

ԹԵԱ — Եթե ազատություն ստանալուց հետո ես չպիտի մնամ Ձեզ մոտ, ինչի՞ս է պետք այդ ազատությունը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ես քեզ չեմ հասկանում, Թե՛ա:

ԹԵԱ — Ինչու՞ չեք հասկանում, տե՛ր իմ: Ես ուղղակի ուզում եմ Ձեզ հետ մնալ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Թե՛ա, դու խենթ ես:

ԹԵԱ — Այո՛, տե՛ր իմ: Ես գերադասում եմ մնալ Ձեզ մոտ՝ իբրև ստրուկ, քան մեկ ուրիշի մոտ ազատ լինել:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Քո փոխարեն մեկ ուրիշը կնախընտրեմ ազատությամբ:

ԹԵԱ — Այո՛, եթե Չեր փոխարեն էլ մեկ ուրիշը լիներ իմ տերը, գուցե ես նույնպես գերադասեի ազատությունը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — *(Բռնում է Թեայի ձեռքը)*: Եթե այդպես է, այդ դեպքում դու ինձ ասա, ես քեզ ի՞նչ լավություն անեմ:

ԹԵԱ — *(Մի պահ լուռ նայում է Ալեքսանդրի աչքերի մեջ)*: Տե՛ր իմ, եթե մի բան խնդրեմ, կկատարե՞ք:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Եթե կարողանամ, անպայման կկատարեմ:

ԹԵԱ — Թող ես հավիտյան Չեր ստրուկը լինեմ:

*Դրսից կամաց բակում են դուռը: Լսվում է խեղկատակի ձայնը:*

ԽԵՂԿԱՏԱԿ — Տե՛ր իմ, գա՞մ Չեզ խանգարեմ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — *(Ուրախ)* Իհարկե, արի՛: *(Խեղկատակը ներս է մտնում)*:

ԹԵԱ — Տե՛ր իմ, Դուք չպատասխանեցիք իմ հարցին:

ԽԵՂԿԱՏԱԿ — Չքնա՛ղ Թեա, նա ո՞վ է, որ կարողանա քո խնդրանքը կատարել: Եթե որևէ բան քեզ պետք է, դու ի՛նձ դիմի՛ր:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Է՛յ, դո՛ւ, խեղկատակ, խելամի՛տ եղի՛ր, ես քեզ չեմ ների, մեջտեղը կին կա:

ԽԵՂԿԱՏԱԿ — Է՛, կինը քեզ ի՞նչ, նա ինձ է սիրում:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Նա քե՞զ է սիրում: Լսո՞ւմ ես, Թե՛ա:

ԽԵՂԿԱՏԱԿ — Ինչո՞ւ զարմացաք:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — *(Ծիծաղելով)* Քո ի՞նչն է սիրում:

ԽԵՂԿԱՏԱԿ — *(Կուրծքը ցցում է)* Ազնվությունս:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Կեցցե՛ս, անպիտա՛ն, ես էլ եմ սիրում ազնվությունը:

ԽԵՂԿԱՏԱԿ — Հապա Դուք, տե՛ր իմ, ի՞նչ էիք կարծում:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ես կարծում էի... *(Չի շարունակում)*:

ԽԵՂԿԱՏԱԿ — Դե խոսե՛ք, տե՛ր իմ, ես հիշաչար չեմ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ես կարծում էի՝ նա սիրում է քեզ որպես տղամարդ:

ԽԵՂԿԱՏԱԿ — Դա բացառված չէ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Դու համոզվա՞ծ ես:

ԽԵՂԿԱՏԱԿ — *(Երդվում է)*: Մեծ Ջևար վկա:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Ա՛յ քեզ խեղկատակ: (*Նստում է տեղում*): Հապա մի կրկնի՛ր:

ԽԵՂԿԱՏԱԿ — Տե՛ր իմ, կկրկնեմ. բացառված չէ, որ այր մարդու պակաս զգացվի, և չքնաղ Թեան մի օր ինձ սիրահարվի:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — (*Կատակում է*): Դու չե՞ս վախենում, որ ես կկանչեմ քեզ մենամարտի:

ԽԵՂԿԱՏԱԿ — Խորհուրդ չէի տա. անհիմաստ բան է:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Ի՞նչն է անհիմաստ:

ԽԵՂԿԱՏԱԿ — Ինձ մենամարտի կանչելը, տե՛ր իմ:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Այդ ինչպե՞ս:

ԽԵՂԿԱՏԱԿ — Հենց այնպես, տե՛ր իմ: Ես չէի գա Ձեզ հետ մենամարտելու:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Ինչու՞:

ԽԵՂԿԱՏԱԿ — Հիմար չեմ, տե՛ր իմ: Միայն հիմարներն են մենամարտում իրենցից ուժեղի հետ...

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Ուրեմն, ըստ քեզ, միշտ ուժեղը պետք է ուժեղ մնա, իսկ թույլը՝ թո՞ւյլ:

ԽԵՂԿԱՏԱԿ — Ո՛չ, ինչու՞, տե՛ր իմ: Եթե թույլը ցանկանում է մենամարտել իրենից ուժեղի հետ, նա նախօրոք պետք է աշխատի ուժեղանալ. կյանքում ուժեղագույնն է հաղթում:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Եթե այդ ամենը գիտես, էլ ինչպե՞ս ես համարձակվում իմ հասցեին վատ բան խոսել:

ԽԵՂԿԱՏԱԿ — Տե՛ր իմ, Դուք մի՛ զայրացեք: Դա գալիս է իմ տղամարդկային խառնվածքից: Ես սիրում կանանց ներկայությամբ միշտ ցատումով եմ լցվում դեպի գեղեցիկ տղամարդիկ:

*Ալեքսանդրը և Թեան ծիծաղում են:*

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Դե որ այդքան խելոք ես, պատասխանի՛ր Թեայի հարցին:

ԽԵՂԿԱՏԱԿ — Իսկ ի՞նչ է հարցնում Թեան:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Նա ուզում է իմանալ, թե ես սիրո՞ւմ եմ Ադային:

ԽԵՂԿԱՏԱԿ — Իսկ ինչու՞ է նա այդպես կարծում:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Նա գտնում է, որ Ադան տղամարդ-կին է:

ԽԵՂԿԱՏԱԿ — Թե՛ս, դու վիրավորել ես մեր արքային:

ԹԵԱ — Ինչու՞:

ԽԵՂԿԱՏԱԿ — Որովհետև ոչ մի խելոք տղամարդ չի կարող սիրել տղամարդ–կնոջ, ինչպես ոչ մի խելոք կին չի սիրում կին–տղամարդու:

ԹԵԱ — *(Շիծաղում է)*: Հասկացա, հասկացա:

ԽԵՂԿԱՏԱԿ — Էլ ի՞նչ հարց ունի իմ հրեշտակը:

ԱԼԵԹՍԱՆԳՐ — Ես մի հարց ունեմ:

ԽԵՂԿԱՏԱԿ — Մի՛ քաշվեք, հարցրե՛ք:

ԱԼԵԹՍԱՆԳՐ — Թեան ինչպիսի՞ն է:

ԹԵԱ — Տե՛ր իմ:

ԽԵՂԿԱՏԱԿ — Նա մի անբախտ հրեշտակ է:

ԱԼԵԹՍԱՆԳՐ — Ես դողել եմ նրան բախտավորություն տալ:

ԽԵՂԿԱՏԱԿ — Չուր ջանքեր, տե՛ր իմ:

ԱԼԵԹՍԱՆԳՐ — Ես նրան ազատություն եմ շնորհելու:

ԽԵՂԿԱՏԱԿ — Բախտավոր լինելու համար ազատությունը քիչ է, տե՛ր իմ...

ԱԼԵԹՍԱՆԳՐ — Հապա էլ ի՞նչ:

ԽԵՂԿԱՏԱԿ — Տե՛ր իմ, աննպատակ ազատությունը ստրկություն–նից վատ է: Եթե ուզում ես՝ մարդը բախտավոր լինի, դու այն–պե՛ս արա, որ նա հավատա իր նպատակի իրականացմանը: Հավա՛տ տուր նրան...

ԱԼԵԹՍԱՆԳՐ — Հավա՞տ:

ԽԵՂԿԱՏԱԿ — Իհարկե, տե՛ր իմ, միայն հավա՛տ տուր: Սակայն լավ կլինի, որ մարդը միայն լավին հավատա...

ԱԼԵԹՍԱՆԳՐ — *(Մտազբաղ)* Այո՛, ծաղրածո՛ւ, շատ ճիշտ ես ասում: Առանց հավատի կյանքը ոչինչ է:

ԽԵՂԿԱՏԱԿ — Օ՛, կեցցեն, տե՛ր իմ: Այսօր մի բան էլ դու սովորեցիր: Դե, ես էլ գնամ հանգստանամ:

*Երգելով ու թռչկոտելով դուրս է գնում*

*Լավ մարդ լինես դու, թե վատ,  
Ծաղրածու, թե թա ավոր,  
Եթե չունես դու հավատ,  
Չարժե ասրել եք մեկ օր...*

ԱԼԵԶՍԱՆԴՐ — Թե՛ա, ճի՛շտն ասա, դու հավատու՞մ ես:

ԹԵԱ — Բայց ինչի՞ն, տե՛ր իմ:

ԱԼԵԶՍԱՆԴՐ — Որևէ բանի:

ԹԵԱ — Չգիտեմ, տե՛ր իմ:

ԱԼԵԶՍԱՆԴՐ — *(Շոյում է նրա մազերը)*: Հավատա՛, Թե՛ա:

ԹԵԱ — Ինչի՞ն հավատամ, տե՛ր իմ, չգիտեմ:

ԱԼԵԶՍԱՆԴՐ — Քո գեղեցկության հմայքին, Թե՛ա:

ԹԵԱ — *(Հուզված)* Շնորհակալ եմ, տե՛ր իմ:

ԱԼԵԶՍԱՆԴՐ — Այժմ գնացե՛ք և հանգստացե՛ք:

*Թեան Ալեքսանդրի ձեռքը արագ հայում է շուրթերին  
և արագ քայլերով գնում է դուրս:*

Այո՛, կյանքի իմաստը հավատի մեջ է...

*Ներս է մտնում պահակ զինվորը:*

ԶԻՆՎՈՐ — Տե՛ր արքա, զորապետները ցանկանում են Ձեզ մոտ գալ:

ԱԼԵԶՍԱՆԴՐ — Նե՛րս կանչեցե՛ք նրանց:

*Զինվորը գնում է: Ներս են մտնում Լեոնիդեսը, Պրոտոսը, Բլիտը,  
Անարքոսը, Կալիսթենեսը, Ադան և ողջունում են Ալեքսանդրին:  
Վերջինս նստելու նշան է տալիս:*

ԼԵՈՆԻԴԵՍ — Ինչպե՞ս է արքայի առողջությունը:

ԱԼԵԶՍԱՆԴՐ — Փա՛ռք հզոր Ձևսին: Այսօր շատ լավ եմ:

Վաղը երևի ոտքի կկանգնեմ: Չորքը ինչպե՞ս է:

ԼԵՈՆԻԴԵՍ — Չորքը վարժվում է: Մարդ է ուղարկված Պար-  
մանյոնի մոտ: Նրա բանակը մի երկու օրից այստեղ կլինի:  
Թագուհի Ադան խոստանում է մեզ օգնել պարենով:

ԱԼԵԶՍԱՆԴՐ — Իսկ մեր թագուհին դժգոհ չե՞՞ մեզ պես անկոչ  
հյուրերից:

ԱԴԱ — Տե՛ր իմ, ինձ և արքունիքիս համար մեծ պատիվ է Ձեր  
այստեղ լինելը:

ԱԼԵԶՍԱՆԴՐ — Թող հայտնի լինի թագուհի Ադային, որ իմ և իմ  
բանակի նկատմամբ ցուցաբերած հոգատարության համար  
ես նրան նշանակելու եմ ինձ ենթակա պարսկական տերու-  
թյուններում որպես փոխարքա:

ԱԴԱ — Ներեցե՛ք, արքա՛, որ հանդգնում եմ: Ես ուզում էի մասնակից լինել Ձեր առաջիկա արշավանքներին:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Չէի կամենա: Դիերով ծածկված մարտադաշտերը լավ տեսարան չեն կանացի սիրուն աչքերի համար:

ԱԴԱ — Տե՛ր իմ, Դուք կանանց լավ չեք ճանաչում: Նրանք ինչպես սիրելու, այնպես էլատելու ժամանակ ոչ մի սահման չեն ճանաչում...

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Դուք ցանկանում եք Դարեհից անձա՞մբ լուծել Ձեր սպանված ամուսնու վրեժը:

ԱԴԱ — Այո՛, տե՛ր արքա:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Դուք կմնաք այստեղ՝ որպես փոխարքա և մեր բանակին պարեն կմատակարարեք: Իսկ ես խոստանում եմ՝ եթե Դարեհին կենդանի բռնեմ, նրան կներկայացնեմ Ձեր դատին:

ԱԴԱ — Երախտապարտ կմնամ Ձեզ:

*Ներս է մտնում Թեան՝ ձեռքերի վրա բերելով լվացվելու սպասք:*

ԹԵԱ — Տե՛ր իմ, բժիշկը խնդրեց, որ Դուք նախապատրաստվեք դեղն ընդունելու:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — *(Առոյգ կատակելով)* Եթե Փիլիպոսը չլիներ այդ բժիշկը, ես սիրով կհրաժարվեի այսօրվա դեղից:

ԱԴԱ — *(Մի պահ չափելով Թեային)* Բայց լվացվելուց չէիք հրաժարվի...

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Ես մաքրությունը սիրել եմ մանկուց: Մաքրվել նշանակում է գեղեցկանալ: Իսկ ես... գեղեցիկը շատ եմ սիրում... Մո՛տ բերեք, Թե՛ա:

*Թեան մոտենում է և նուրբ շարժումներով հարմարեցնում է լվացվելու սպասքը:*

ԱԴԱ — Այո՛, ջքնաղ է Ձեր ստրկուհին: Ես սիրով նրան իմ պալատում կպահեի...

*Թեան սարսափով նայում է Ալեքսանդրի դեմքին:*

ԱԼԵԹՍԱՆԴՐ — *(Հանգիստ լվացվելով)* Իսկ ի՞նչ կտայիք նրա փոխարեն:

*Թեան այլալվում է:*

ԱԳԱ — Ինչ որ կամենաք:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Օ՛ր, եթե այդքան թանկ արժե Թեան, ինչպես պնդում եք, թագուհի՛ Ադա, ես մեր Թեային ոչ որի չեմ տա...

ԹԵԱ — *(Ուրախացած)* Վերցրե՛ք սրբիչը, տե՛ր իմ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Տեսնո՞ւմ ես, Թե՛ա, իսկ դու ոչ մի բանի չես հավատում:

ԹԵԱ — *(Ժպտալով)* Ես հավատում եմ Ձեր մեծությանը:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Թագուհի՛ Ադա, ես Թեային ազատություն եմ շնորհելու:

*Ձինվորական հպարտ կեցվածքով ներս է մտնում Փիլոտը:*

ՓԻԼՈՏ — Ողջո՛ւյն արքային, ողջո՛ւյն ամենքին:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Ողջո՛ւյն բանակիս խիզախ սպային: Ի՞նչ նոր լուր ունես: Հայրդ գալի՞ս է:

ՓԻԼՈՏ — Այո՛, տե՛ր արքա: Երկու օր հետո հորս բանակն այստեղ կլինի:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Սակայն ինչո՞ւ ես դու աճապարել:

ՓԻԼՈՏ — Տե՛ր իմ, ես հորս կամքն եմ կատարել, ես Ձեզ նրանից նամակ եմ բերել:

*Փիլոտը նամակը մեկնում է Ալեքսանդրին: Ալեքսանդրը վերցնում է նամակը, բաց է անում և աչքի անցկացնելուց հետո կարդում է բարձրաձայն:*

ԱԼԵԹՍԱՆԴՐ — «Ողջո՛ւյն թանկագին մեր մեծ արքային իր գորավարներից ու զինվորներից: Տե՛ր իմ, լուր է հասել ինձ, որ Փիլիպոսը՝ Ձեր հույն բժիշկը, Դարեհի կողմից կաշառված է ոսկով և հանձն է առել Ձեզ թունավորել: Եղե՛ք շատ զգույշ:

Ձեր մեծ գործին միշտ պատրաստ՝ Պարմանյոն»:

*Կարդալուց հետո խորագնին նայում է ներկաներին:*

— Հանճելի լուր է: Հը՞, ի՞նչ եք կարծում, հավատա՞նք սրան:

ԼԵՈՆԻԴԵՍ — Ի՞նչ ասեմ, տե՛ր իմ, կյանքում ամեն ինչ կասկածելի է:

ԱԴԱ — Օ՛, հավատում եմ ես ամեն դավի:

ԱՆԱՐՔՈՍ — *(Չայրացած)* Սատանի՛ ծնունդ, դև՛, դևի՛ ժառանգ:

ՓԻԼՈՏ — Պետք է քառատել այդ դավաճանին:

ԿԱԼԻՍԹԵՆԵՍ — Բայց գուցե լուրը ճշմարտություն չէ:

ՔԼԻՏ — Պարմանյոնը միշտ լուրջ է մտածել: Բայց Փիլիպո՞սը...

Մի՞թե կարող էր...

*Ներս է մտնում Փիլիպոսը՝ դեղի սրվակը ձեռքին: Բոլորը սկեռուն նայում են նրան: Նա հանկարծակիի եկած նայում է բոլորին, ապա տեսնելով Փիլոտին՝ հարցնում է:*

ՓԻԼԻՊՈՍ — Ի՞նչ է, վատ լո՞ւր կա:

ՓԻԼՈՏ — Այո՛, շատ տհաճ և գարշելի լուր:

ՓԻԼԻՊՈՍ — *(Միամիտ)* Թշնամին դարձյալ դավե՞ր է նյութել:

ԱԴԱ — Թշնամու դավը սարսափելի չէ:

ԹԵԱ — *(Ինքնամոռաց)* Ես չեմ հավատում:

ԼԵՈՆԻԴԵՍ — *(Խեթ նայելով Թեային)* Չեզ չեն հարցնում:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Հանգի՛ստ, պարո՛ն: Մո՛տ եկ, Փիլիպո՛ս: Ի՛նձ տուր այդ դեղը:

*Փիլիպոսը դեղի սրվակը հանձնում է Ալեքսանդրին, իսկ Լեոնիդեսը նավակը մեկնում է Փիլիպոսին:*

— Ահա՛, կարդացե՛ք այս նամակը:

*Բոլորը նայում են նրան, իսկ Թեան՝ Ալեքսանդրին:*

*Ալեքսանդրը խմում է դեղը:*

*Փիլիպոսը կտում է կարդալ նամակը:*

ԹԵԱ — *(Ճշում է)* Ա՛հ:

*Բոլորը սարսափած նայում են Ալեքսանդրին:*

ԼԵՈՆԻԴԵՍ — *(Չարմացած)* Արքա՛, ի՞նչ արիք:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — *(Հանգիստ)* Դեղը խմեցի:

*Փիլիպոսը ընկնում է ծնկների վրա և ճակատը քսում է Ալեքսանդրի փեշերին:*



ՓԻԼԻՊՈՍ — Արքա՛... Օ՛, տե՛ր իմ... աստվածայի՛ն տեր...  
ԱԼԵԶՍԱՆԳՐ — Վե՛ր կաց, Փիլիպո՛ս, ոչ որ չի կարող ինձ թունա-  
վորել: Չէ՞ որ մարդիկ դեռ հավատում են ինձ...  
ԱՆԱՐՔՈՍ — *(Բարձրաձայն)* Աստվածային մխոք: Մեծ Ջևահ՛ որդի,  
Դուք համոզված եք, որ ոչ մի թույն չի կարող Ձեր աստվածա-  
յին մարմինը խոցել: Ո՞վ է տեսել՝ աստվածները մահ ունենան...

*Ներս է մտնում խեղկատակը:*

ԽԵՂԿԱՏԱԿ — Ի՞նչ է, այստեղ մարդ չկա՞, որ Անարքոսն է խո-  
սում:

ԱՆԱՐՔՈՍ — Դե լռի՛ր, հիմա՛ր, եթե իմանաս՝ այստեղ ինչ եղավ,  
էլ չես բլբլա:

ԽԵՂԿԱՏԱԿ — Ուրեմն դու ինձանից հիմար ես, որ գիտես, թե ինչ  
է կատարվել, և բլբլացնում ես:

Դե ասա՛, տեսնեմ, ի՞նչ է կատարվել:

ԱՆԱՐՔՈՍ — Արքան թույն խմեց:

ԽԵՂԿԱՏԱԿ — Դու հավատո՞ւմ ես այդ քո ասածին:

ԱՆԱՐՔՈՍ — Իհարկե, նա հենց նոր բոլորիս ներկայությամբ  
խմեց թույնը:

ԽԵՂԿԱՏԱԿ — Կարևոր չէ, թե նա ում ներկայությամբ է խմել  
թույնը: Կարևորն այն է, որ դու հավատում ես: Իսկ եթե դու հա-  
վատում ես, ուրեմն խմել է:

ԱԼԵԶՍԱՆԳՐ — Լսի՛ր, ծաղրածո՛ւ, դու թույն կխմե՞ս:

ԽԵՂԿԱՏԱԿ — Եթե հավատամ, որ չեմ մեռնելու, կխմեմ, տե՛ր իմ:

ԱԼԵԶՍԱՆԳՐ — Դու Անարքոսին հավատու՞մ ես:

ԽԵՂԿԱՏԱԿ — Չէ՛, տե՛ր իմ:

ԱԼԵԶՍԱՆԳՐ — Ինչու՞:

ԽԵՂԿԱՏԱԿ — Անարքոսն ինքն իրեն չի հավատում, ես ինչպե՞ս  
հավատամ նրան:

ԱԼԵԶՍԱՆԳՐ — Իսկ հավատու՞մ ես, որ ինձ կարող են թունավորել:

ԽԵՂԿԱՏԱԿ — Առայժմ՝ երբեք:

ԱԼԵԶՍԱՆԳՐ — Ինչու՞ առայժմ:

ԽԵՂԿԱՏԱԿ — Զանի դեռ Ձեր մարդիկ Ձեզանից չեն վախենում,  
Դուք մի՛ վախեցեք նրանցից: Միշտ անարդարը հզորն է, տե՛ր իմ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Կեցցեն՛ս, ծաղրածո՛ւ, ես նախանձում եմ քեզ:  
ԽԵՂԿԱՏԱԿ — Ես ասել եմ չէ՞, որ Դուք Ձեր խելքով ինձ չեք զի-  
ջում:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ես կուզեի հավասարվել քեզ:

ԽԵՂԿԱՏԱԿ — Չփորձե՛ք անել անկարելիին, տե՛ր իմ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Մի՞թե դա անկարելի է:

ԽԵՂԿԱՏԱԿ — Այո՛, տե՛ր իմ: Երբ աստվածային կամքով մենք  
անհավասար ենք ծնվում, ինչպե՞ս կարող ենք մեր կամքով  
հավասարվել իրար: Ա՛յ, ես ծնվել եմ կուզիկ, ծուռուծուռ, մի  
քիչ էլ հիմար: Չեմ կարող նույնիսկ գոալը բռնել բերանիս  
հարմար: Իսկ Դուք ծնվել եք քաջ ու առնական, զեղեցիկ ու-  
ժով ու պայծառ սուքերով, ինչպե՞ս կարող եմ հավասարվել  
Ձեզ իմ ծուռ ոտքերով:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ուրեմն չփորձե՞մ:

ԽԵՂԿԱՏԱԿ — Երբե՛ք, տե՛ր իմ: Փորձել անել անկարելիին նշա-  
նակում է կամավոր կործանվել:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Կարո՞ղ ես մի օրինակ բերել:

ԽԵՂԿԱՏԱԿ — Ես կարող եմ հազար օրինակ բերել: Պատկե-  
րացրե՛ք, տե՛ր իմ, որ Ձեր տերության մեջ հիմարները հավա-  
սարվեն իմաստուններին, խեղկատակը՝ արքային, կամ ընդ-  
հակառակը՝ արքան հավասարվի խեղկատակին, կամ եթե  
Թեան իրեն տղամարդու տեղ դնի, իսկ Դուք Ձեզ՝ աղջկա...  
Լավ է՝ լռեմ, տե՛ր իմ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ուրեմն, քո կարծիքով, անհավասարությունը  
լավ է, քան հավասարությունը:

ԽԵՂԿԱՏԱԿ — Ճշմարտությունը դա է, տե՛ր իմ: Իսկ ճշմարտու-  
թյունը լավն է:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Իսկ ի՞նչ է ճշմարտությունը:

ԽԵՂԿԱՏԱԿ — Դա այն է, որ յուրաքանչյուր խեղկատակ պետք  
է հասկանա, որ ինքը խեղկատակ է և ոչ թե արքա, հիմարը  
հասկանա, որ ինքը հիմար է և ոչ թե իմաստուն, իսկ խեղան-  
դամը հասկանա, որ ինքը երբեք չի կարող վազել... Սարսա-  
փելի է, տե՛ր իմ, երբ հիմարին հավատ են ներշնչում, թե նա  
իմաստուն է...

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Ես քեզ լրիվ հասկացա, բայց ինչպե՞ս հասնել  
նշմարտությանը:

ԽԵՂԿԱՏԱԿ — Խելքով, տե՛ր իմ:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Իսկ որտեղի՞ց վերցնել խելքը, խենթո՛ւկ:

ԽԵՂԿԱՏԱԿ — Իմս կտամ քեզ, տե՛ր իմ: Ինձ պետք չէ:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Քեզ պետք չէ՞:

ԽԵՂԿԱՏԱԿ — Այո՛, թույլ խելքը դժբախտ է, արքա՛:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Իսկ հզոր անխե՞լքը:

ԽԵՂԿԱՏԱԿ — Չարիք, տե՛ր իմ:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Ի՞նչ ես առաջարկում:

ԽԵՂԿԱՏԱԿ — Առաջարկում եմ՝ հզորությունն ու խելքը գործեն  
միասին:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — *(Մտազբաղ)* Գնա՛, խենթո՛ւկ, շատ ես խելքը:

ԽԵՂԿԱՏԱԿ — *(Երգելով հեռանում է)...*

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Ազնի՛վ պարոններ, ես ինձ շատ լավ եմ զգում:

Կարող եք գնալ և հանգստանալ: Վաղը մենք կխոսենք մեր  
առաջիկա անելիքների մասին:

*Բոլորը ելնում են ոտքի:*

ԱԳԱ — Տե՛ր արքա, ես վաղը Ձեր պատվին խնջույք եմ սարքելու:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Իմ կարծիքով, արշավանքից առաջ խնջույքը  
վատ նախանշան չէ:

ԱԳԱ — Շնորհակալ եմ, տե՛ր իմ:

*Բոլորը դուրս են գնում:*

ԹԵԱ — Ես գնա՞մ, տե՛ր իմ:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — *(Կատակելով)* Դու ինձ լքո՞ւմ ես...

ԹԵԱ — Օ՛, ո՛չ, ո՛չ, տե՛ր իմ:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Դե մնա՛ ինձ մոտ:

*Դանդաղ իջնում է վարագույրը:*

## ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

*Մի ընդարձակ սեղանատուն: Բացված է խնջույքի մեծ սեղան:  
Ներկա են բոլորը:*

ԱԼԵԶՍԱՆԴՐ — *(Վերցնելով գինու բաժակը) Եկե՛ք միասին մի-մի  
բաժակով խմենք կենացը մեր հաջողության և հանուն գալիք  
մեր հաղթանակի: (Խմում է) Ընտիր գինի է: Նրա մեջ հզոր արևի  
համ կա: Ես Արևելքի բույրը զգացի...*

ԲՈԼՈՐԸ ՄԻԱՍԻՆ — *(Վերցնելով բաժակները) Հանուն արքայի,  
հանուն մեր գալիք հաղթանակների: (Խմում են):*

ԽԵՂԿԱՏԱԿ — *(Գոռում է): Տե՛ր իմ:*

ԱԼԵԶՍԱՆԴՐ — *Ի՞նչ կա, ծաղրածո՛ւ:*

ԽԵՂԿԱՏԱԿ — *(Հանգիստ) Ես գինի խմեցի:*

*Դրսում լսվում է թույլ որոտի և տեղատարափ անձրևի ձայն:*

ԱԼԵԶՍԱՆԴՐ — *Սա լավ նշան է: Անձրևից հետո եղանակները  
կմեղմանան, և շոգը մեզ չի խանգարի:*

ԱՆԱՐՔՈՍ — *(Գինովցած) Այդ հզոր Չևան է Չեզ օգնում, տե՛ր իմ:*

ՊՐՈՏՈՍ — *(Վերցնելով բաժակը) Այո՛, օգնում է հզոր Չևար մեզ, քան-  
զի մենք ունենք աստվածային մի արքա: Խմենք նրա կենացը:  
(Խմում է):*

ԱՆԱՐՔՈՍ — *(Բաժակը ձեռքին՝ կանգնում է տեղում): Խմենք կենացը  
մեր մեծ արքայի: Նա մեծ Աստված է մարդու պատկերով: (Ու-  
զում է խմել, սակայն դրսում ուժեղ ճայթում է ամպրոպը, և բաժակն ընկնում  
է ձեռքից): Այդ Դուք եք թնդում, ո՛վ Չևսի որդի... Չեր ցանկու-  
թյունն է, որ ես ոչ թե գավաթով, այլ գավով խմեմ *(Վերցնում է գա-  
վը և դնում բերանին: Բոլորը ծափահարում են):**

ԼԵՈՆԻԴԵՍ — *Այժմ լսում ենք Կալիսթենեսին:*

ԿԱԼԻՍԹԵՆԵՍ — *(Մնում է կանգնած, բոլորը նստում են):*

*Հզոր Չևսի աստվածային կամքով հար  
Ու նրանից ծնված, կոփված ու հատված,*

*Մի նոր արև է ճառա՝ ել մեզ համար՝  
Աշխարհաշեն անպարտելի մի Աստված:  
Նա տանում է բանակներն իր հաղթական  
Անհաս փառքի ճամփաներով հողմածեծ  
Ու կերտում է ողջ մարդկության ապա՝ ան  
Ալեքսանդրը՝ հզոր Ջևահիրդին մեծ:*

*Բոլորը ոտքի են կանգնում և ծափահարում են.  
Եվ լույս են հավանության բացականչություններ:*

ԱԼԵԶՍԱՆԳԻՐ — *(Ձեռքով նշան է անում, որ նստեն: Բոլորը նստում են):* Ազ-  
նի՛վ պարոններ, իմ բարեկամներ, ես, լինելով Մակեդոնացի,  
այս բաժակով ուզում եմ խմել հույն մեծ ժողովրդի կենացը: Ես  
գլուխ եմ խոնարհում այդ մեծ ժողովրդի առաջ: Նա վառեց աշ-  
խարհի լուսավորման ջահը:

*Խմում է, ամենքը ծափահարում են: Ներս է մտնում պահակ զինվորը:*

ՋԻՆՎՈՐ — Սուրհանդակ, տե՛ր իմ:

ԱԼԵԶՍԱՆԳԻՐ — Ո՞ր լեգեոնից է:

ՋԻՆՎՈՐ — Նավատորմից է:

ԱԼԵԶՍԱՆԳԻՐ — Ներս կանչիր իսկույն:

*Ձինվորը դուրս է գնում: Ներս է գալիս սուրհանդակը:*

ՍՈՒՐՀԱՆԳԱԿ — Ողջո՛ւյն արքային, ողջո՛ւյն ամենքին:

ԱԼԵԶՍԱՆԳԻՐ — Ողջո՛ւյն բանակիս արի զինվորին: Ի՞նչ լուր ես  
բերել դու նավատորմից: Բարի՞ է, թե՞ չար:

ՍՈՒՐՀԱՆԳԱԿ — Բարի է, արքա՛:

ԱԼԵԶՍԱՆԳԻՐ — Դե պատմի՛ր, լսենք:

ՍՈՒՐՀԱՆԳԱԿ — Տե՛ր արքա, ինչպես հայտնի է Ձեզ, Դարեհը  
ունի մեծ նավատորմիղ...

ԱԼԵԶՍԱՆԳԻՐ — Հայտնի է, հետո՞:

ՍՈՒՐՀԱՆԳԱԿ — Հայտնի է նաև, որ այդ նավատորմիղի պետ է  
նշանակված հույն ծովակալ Մեմնոնը, որը ծովամարտերի մեծ  
փորձ ունի:

ԱԼԵԶՍԱՆԳԻՐ — *(Անհանգիստ)* Այդ գիտենք վաղուց: Հետո՞ ինչ:

ՍՈՒՐՀԱՆԳԱԿ — Հետո այն, արքա՛, որ Մեմնոնը այլևս չկա:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — (Ակամա կանգնում է ուրախացած): Ինչպե՞ս թե չկա: Իսկ ի՞նչ է եղել:

ՍՈՒՐՀԱՆԳԱԿ — Նա ընկավ, տե՛ր իմ, այն ծովահենի նետից, որը մեզ էլ էր երբեմն խոցում...

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Այո՛, լսել եմ այդ ծովահենի մասին: Ասում են՝ շատ խիզախն է: Դե պատմի՛ր, տեսնենք, թե ինչպես եղավ:

ՍՈՒՐՀԱՆԳԱԿ — Սրանից ուղիղ երկու օր առաջ նավով շրջելիս Մեմնոնը հանդիպեց այդ ծովահենին: Եվ համարելով երջանիկ դիպված՝ Մեմնոնն ուզում է ջախջախել նրան, բայց դեռ չհասած իր նպատակին՝ ընկնում է անգործ՝ հենի արձակած շատ դիպուկ նետից:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Կեցցե՛ս, քաջ տղա:

ԳԱՐՄԱՆՅՈՆ — Իսկ հետո՞, նրանք չե՞ն բռնում հենին:

ՍՈՒՐՀԱՆԳԱԿ — Հետո հենը, խույս տալով նրանցից, մեր ծուղակն ընկավ: Շրջապատեցինք մի քանի նավով: Մեր մեջ սկսվեց նետածություն: Լավ էին կռվում: Մեզանից միայն քսան մարդ ընկավ լոկ նրա ձեռքով:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Շատ լավ է կռվել: Հետո ի՞նչ եղավ:

ՍՈՒՐՀԱՆԳԱԿ — Հետո բռնեցինք:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — (Ուրախացած) Իսկ ի՞նչ արեցիք:

ՍՈՒՐՀԱՆԳԱԿ — Նրան բերել ենք՝ Չեր դատին հանձնելու:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Այժմ այստե՞ղ է:

ՍՈՒՐՀԱՆԳԱԿ — Այո՛, կապկապած այստեղ ենք բերել:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Նե՛րս բերեք իսկույն:

*Տասնապետը գնում է և քիչ հետո բերում ծովահենին, որը կապկապած է պարանով: Նա հագած է գեղեցիկ ու թեթև զինվորական հագուստ, որը թրջված է: Զինաքափ է արված: Առաջանալով կանգնում է հպարտ: Սի պահ հայացք է ձգում կանգնածների վրա և ապա նայում է Ալեքսանդրի աչքերի մեջ:*

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Ինչու՞ ես այդպես ուշադիր նայում:

ԾՈՎԱՀԵՆ — Ուզում եմ տեսնել, թե դու արժա՞ն ես քո մեծ հռչակին:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Դու կասկածու՞մ ես:

ԾՈՎԱՀԵՆ — Մեր կյանքում կա՞ բան, որ չկասկածվի:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Այն, որ դու հեն ես, դա անկասկած է:

ԾՈՎԱՀԵՆ — Ասածիդ համար ունե՞ս ապացույց:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Մի՞թե ծովակալ Մեմնոնի մահը մեր ապացույցը չէ:

ԾՈՎԱՀԵՆ — Դու էիր ուզում նրան սպանել, բայց ինձ վիճակվեց: ԱԼԵՔՍԱՆԴՐ — Դու շատ հանդուգն ես: Սակայն իմացի՛ր՝ հանդուգնությունը դեռ քաջությունն չէ:

ԾՈՎԱՀԵՆ — Ես հանդուգն չեմ և քաջությանն էլ շատ չեմ հավատում:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ուրեմն, ըստ քեզ՝ քաջություն չկա՞:

ԾՈՎԱՀԵՆ — Ո՛չ քաջություն կա, ո՛չ էլ՝ քաջեր: Կյանքում կան թույլեր կամ ուժեղներ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Հենց ուժեղներն էլ քաջերն են, որ կան:

ԾՈՎԱՀԵՆ — Ուժը ժամանակավոր է...

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Իսկ ի՞նչն է տևական:

ԾՈՎԱՀԵՆ — Խելքը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Մի՞թե անխելքը կարող է ուժեղ լինել և քաջ:

ԾՈՎԱՀԵՆ — Հանգամանքները, արքա՛, հանգամանքները: Ա՛յ, մեկ շաբաթ առաջ Դուք սուկում էիք հզոր Մեմնոնից: Սակայն այդ «քաջը» երեկ պատահմամբ ընկավ իմ նետից: Ուրեմն, ըստ Ձեզ՝ ես եմ այսօր քաջ: Եթե այդպես է, հապա ինչու՞ եմ թևերս կապած կանգնել Ձեր առաջ: Իսկ եթե Դուք եք քաջը բոլորից, ինչու՞ եք հապա այսպես կապել ինձ: Վախենում ե՞ք, հա՞...

ԱՆԱՐՔՈՍ — (*Հարթած կանգնում է տեղում*): Սատանի՛ ծնունդ, ինչպե՞ս ես խոսում Ձևի որդու հետ:

ԾՈՎԱՀԵՆ — (*Աչքերն ոլորելով Անարքոսի վրա*) Իսկ դու ինչի՞ որդի ես...

ԱՆԱՐՔՈՍ — (*Վախեցած նստում է*): Դև, դևի ծնունդ:

ԾՈՎԱՀԵՆ — (*Ալեքսանդրին՝ հեզնելով*) Ձեր «քաջերից» է:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — (*Չայրացած*) Իմացի՛ր, թե դու ում հետ ես խոսում:

ԾՈՎԱՀԵՆ — Արդեն իմացա, Ձևի որդու հետ, որին հայր Ձևսը, չգիտեմ ինչու, վախկոտ է ծնել:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ե՞ս եմ վախկոտը:

ԾՈՎԱՀԵՆ — Եթե վախկոտ չեք, հրաման տվեք՝ թևերս արձակեմ:

ԱՆԱՐՔՈՍ — (*Վախեցած*) Խաբում է, տե՛ր իմ, չարձակե՛ք դևին:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — (*Դառնալով բոլորին*) Ի՞նչ կարծիքի եք: Արձակե՛՞ք սրան:

ԹԵԱ — (*Ակամա*) Արձակե՛ք, տե՛ր իմ:

ՊՐՈՏՈՍ — *(Խեթ նախելով Թեախին)* Ո՛չ, արքա՛, պետք չէ արձակել դրան: Ինչպես տեսնում եմ, այդ ավագակը վտանգավոր է:

ԾՈՎԱՀԵՆ — *(Պրոտոսին)* Այնուամենայնիվ, ես ձեզանից անվտանգ մարդ եմ: Ամենավտանգավոր մարդիկ վախկոտներն են:

ՊՐՈՏՈՍ — Ո՞վ է վախկոտը:

ԾՈՎԱՀԵՆ — Դու ինքդ, պարո՛ն:

ՊՐՈՏՈՍ — *(Ձայրացած)* Լռի՛ր ավագակ: *(Մերկացնում է սուրբ):*

ԾՈՎԱՀԵՆ — Օհո՛, երևի պարոնը ուզում է թևերս արձակել այս կապանքներից:

ՊՐՈՏՈՍ — Թո՛ւյլ տվեք, տե՛ր իմ, կտրել այս շան լեզուն:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Պրոտո՛ս, հանգի՛ստ: *(Ծովահեռին)* Դու ինչո՞ւ նրան վախկոտ կոչեցիր:

ԾՈՎԱՀԵՆ — Որովհետև նա հենց այդպիսին է: Թե չէ ինչո՞ւ է դեմ իմ արձակելուն:

ՊՐՈՏՈՍ — Լռի՛ր, սարո՛ւկ:

ԾՈՎԱՀԵՆ — Դո՛ւ, թշվառակա՛ն, լեզուդ քե՛զ քաշիր և մի՛ անվանիր այստեղ ինձ սարուկ:

Ես դեռ սարուկ չեմ, որովհետև իմ հոգին ազատ է: Դաժան հանգամանքների բերումով լոկ իմ մարմինն է զարկված կապանքի, խիղճս ազատ է, իսկ եթե կուզես դու սարուկ տեսնել, նայիր քեզ վրա: Ճիշտ է, թևերիդ կապանքներ չկան, սակայն քո հոգին՝ կամազուրկ ու պիղծ, որսի շան նման կապված է այսօր քո թագավորի մտույզի թամբից:

ՊՐՈՏՈՍ — *(Հոխորտալով)* Բախտդ բերել է, որ կապկապած ես:

ԾՈՎԱՀԵՆ — Քո՛ քախտն է բերել, մեծախո՛ս պարոն:

ՊՐՈՏՈՍ — *(Ալեքսանդրին)* Տե՛ր արքա, սա ի՞նչ բան է: Սրան բերեցիք ինձ անպատվելու համա՞ր: Ես պատիվ եմ պահանջում:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Դու ինքդ սկսեցիր այդ տհաճ խոսակցությունը:

ՊՐՈՏՈՍ — Ես պատիվ եմ պահանջում...

ԼԵՈՆԻԴԵՍ — *(Ալեքսանդրին)* Տե՛ր արքա, ես գտնում եմ, որ հարկավոր է շարունակել մեր խնջույքը: Թող այս ծովահեռին դուրս տանեն: Մենք հետո նրա հետ կխոսենք:

ՊՐՈՏՈՍ — *(Բորբոքված)* Ո՛չ, ես համաձայն չեմ: Նա ինձ անպատվել է: Քանի դեռ նա կենդանի է, ես չեմ մասնակցի խնջույքի:

ԱԴԱ — Ազնի՛վ պարոններ, ես համամիտ եմ Պրոտոսի հետ:

Պետք է վերջ տալ այս ամենին...



ԱՆՆՈՒՄ — (Ձինվորներին) Դ՛ն՛րս տարեք իսկույն և գլխատեցե՛ք:

*Ձինվորները, հարձակվելով ծովահենի վրա, հրում են դեպի դուրս: Թեպի ձեռքից ընկնում է գավը և փշրվում: Ալեքսանդրը մի պահ նայում է նրան:*

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ո՛չ, սպասեցե՛ք: Հե՛տ բերեք նրան (Ձինվորները հետ են բերում ծովահենին և կանգնում են Ալեքսանդրի դիմաց):

— Լսե՛ք, պարոններ, որպեսզի Պրոտոսը իրեն վատ չզգա, մենք կապանքներից կազատենք հենին և թույլ կտանք նրանց մեամարտելու:

ԾՈՎԱՀԵՆ — (Ալեքսանդրին) Իրավ որ մեծ եք. ես կուզեի Ձեր զինվորը լինել, բայց ափսոս՝ ուշ է...

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Իսկ ինչու՞ է ուշ:

ԾՈՎԱՀԵՆ — Եթե ես Ձեզ վաղուց ճանաչեի և հավատայի Ձեր մեծությամբ, այսօրվա պես ես չէի դառնա ծովահեն, այլ կկրվեի Ձեր դրոշի ներքո՝ իբրև մի զինվոր:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Եթե այդպես է, այնքան էլ ուշ չէ... Դու անպատվեցիր այստեղ իմ զորավարներից մեկին: Ես քեզ իրավունք եմ տալիս մեռնամարտելու նրա հետ, եթե ապրեցիր, ես քեզ ազատություն կտամ: (Ձինվորներին) Արձակեցե՛ք կապանքները և սուր ու վահան տվեք նրան:

*Ձինվորները արձակում են: Ծովահենը հանում է թրջված բաճկոնը և մնում է շապկանց: Նա շփում է կապանքներից արձակած թևերը: Ձինվորները սուր ու վահան են տալիս նրան:*

— Պրոտո՛ս, պատրաստվի՛ր պաշտպանելու պատիվը:

*Դահլիճում հրապարակ են բացում:*

ԾՈՎԱՀԵՆ — (Նայելով իր սրին) Իսկ եթե ես ներողություն խնդրեմ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ի՞նչ է, վախեցա՞ք:

ԾՈՎԱՀԵՆ — Ո՛չ, ի՞նչ եք ասում: Ուղղակի ուզում եմ՝ ամեն ինչ խաղաղությամբ վերջանա:

ՊՐՈՏՈՍ — *(Մերկացնելով սուրը)* Ոչ մի դեպքում, պաշտպանվիր:

*Հարձակվում է:*

ԾՈՎԱՀԵՆ — *(Ընդունում է մարտահրավերը):* Ինչու՞ պաշտպանվեմ,  
երբ հարձակվել կա:

ՊՐՈՏՈՍ — *(Հարձակվում է):* Ա՛ն քեզ, սրիկա՛:

ԾՈՎԱՀԵՆ — *(Պաշտպանվում է):* Երբ սուր կա ձեռքիդ, լեզուդ քե՛զ  
պահիր:

ՊՐՈՏՈՍ — *(Նորից է հարվածում):* Լեզուդ կկտրեմ:

ԾՈՎԱՀԵՆ — *(Պաշտպանվում է):* Կհոզնես, պարո՛ն, լեզվիդ քի՛չ գոռ  
սուր:

*Պրոտոսը ցանկանում է նորից հարձակվել: Ծովահենը ճարպկությամբ  
խույս է տալիս և շեղ հարվածով զցում է նրա սուրը: Պրոտոսը շտապ  
ցանկանում է վերցնել, սակայն ծովահենը ոտքը դնում է ընկած սրի  
շեղքին: Պրոտոսը հետ է ցատկում: Ծովահենը վերցնում է նրա սուրը և  
մոտենալով հանձնում է Թեային: Վերջինս սուրը հանձնում է Ալեք-  
սանդրին:*

ԱԴԱ — *(Ջղային)* Այս ի՞նչ է կատարվում...

ՊՐՈՏՈՍ — Թո՛ւյլ տվեք նորից...

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Օ՛, ո՛չ, Պրոտո՛ս, էլ ոչ մի նորից:

Նա հաջորդ անգամ գուցե չների:

Հաշտվե՛ք նրա հետ:

ԾՈՎԱՀԵՆ — Շնորհակալ եմ, տե՛ր արքա:

ՊՐՈՏՈՍ — Թող Ձեր կամքը լինի, տե՛ր իմ:

*(Մոտենում է, ձեռքը մեկնում է ծովահենին: Նրանք միմյանց ձեռք են սեղմում):*

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Թե՛ա, գինի՛ տվեք նրանց:

*Թեան ուրախացած երկու գավաթ գինի է մատուցում նրանց:*

*Նրանք լուռ գավաթները խփում են իրար և խմում են:*

ԱԼԵՔՍԱՆԳՐ — *(Սուրը հանձնելով Պրոտոսին)* Ներեցե՛ք նրան, Պրո-  
տո՛ս, մեծահոգի՛ եղեք: *(Ծովահենին)* Այժմ ասացե՛ք, թե ինչ եք  
ցանկանում:

ԾՈՎԱՀԵՆ — (Սուրն ու վահանը հանձնելով կողքին կանգնած զինվորին)

Արքա՛, վաղուց է՝ ցանկություն չունեմ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Ցանկություն չունե՞ք:

ԾՈՎԱՀԵՆ — Այո՛, ես չունեմ ոչ մի ցանկություն:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Մեծ Ձևը վկա, բան չեմ հասկանում:

ԾԱՂՐԱԾՈՒ — (Առաջ գալով) Ես հասկանում եմ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Դու հասկանո՞ւմ ես:

ԽԵՂԿԱՏԱԿ — Իհարկե, տե՛ր իմ: Ես հասկանում եմ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Ի՞նչ ես հասկանում:

ԽԵՂԿԱՏԱԿ — Որ այս պարոնը այլևս ապրելու ախորժակ չունի:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Ինչի՞ց իմացար, որ այս պարոնը չի ուզում ապրել:

ԽԵՂԿԱՏԱԿ — Նրա վարմունքից: Տեսնո՞ւմ եք, արքա՛, նա չի վախենում: Հենց դա նշան է, որ այս պարոնը չի ուզում ապրել:

Ով որ ապրելու նպատակ չունի, չունի նաև վախ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Սակայն ինչու՞ նա նպատակ չունի:

ԽԵՂԿԱՏԱԿ — Դե, գողացել են:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Ո՞վ է գողացել:

ԽԵՂԿԱՏԱԿ — Տե՛ր իմ, ես կամ դու:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Ուրեմն, եթե մենք ետ տանք նրան իր նպատակը, նա կվախենա՞:

ԽԵՂԿԱՏԱԿ — Իհարկե, տե՛ր իմ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Այդ դեպքում հե՛տ տուր նրան՝ ինչ գողացել ես:

ԽԵՂԿԱՏԱԿ — Թույլ կտա՞ք, արքա՛, մի բան ասեմ Ձեզ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Ասա՛:

ԽԵՂԿԱՏԱԿ — Դուք՝ որպես արքա, օրինակ ծառայեք ինձ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Բայց ես նրանից ոչինչ չեմ գողացել:

ԽԵՂԿԱՏԱԿ — (Ծովահենին) Ճի՞շտ է ասում նա:

ՀԵՆ — Ո՛չ, գողացել է:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Ի՞նչ եմ գողացել:

ՀԵՆ — Ծաղրածուն կասի:

ԽԵՂԿԱՏԱԿ — Տե՛ր իմ, Դուք գողացել եք նրա ազատությունը: (Ծովահենին) Այդպես չէ՞, պարո՛ն:

ԾՈՎԱՀԵՆ — Կեցցես, ծաղրածո՛ւ: Դու քո ուսերին կրում ես գլուխ, որը իրավամբ արժան է թագի: Ավիտս՝ գլուխն այդ, հանգամանքների դաժան բերումով, գրակ է կրում մի խեղկատակի...

ԽԵՂԿԱՏԱԿ — Լսեցե՛ք, պարո՛ն: Ես Ձեզ հարցնում եմ՝ այդպես չէ՞, պարո՛ն, իսկ Դուք, փոխանակ պատասխան տալու՝ այդ կամ թե՛ ոչ, հանգամանքների անմիտ բերումով իմ գովքն եք անում, երբ որ ինձանից ոչ մի շահ չունեք... Նորից եմ հարցնում՝ այդպես չէ՞, պարո՛ն:

ԾՈՎԱՀԵՆ — Այո՛, այդպես է:

ԱԼԵԹՍԱՆԳՐ — Ես Ձեզ ազատություն կտամ, բայց պիտի ասեք, թե ինչն է ստիպել Ձեզ, որ դարձել եք հեն:

ԾՈՎԱՀԵՆ — Թող իմանա աշխարհակալը, որ դա այն պատճառն է, որը դրդել է Ձեզ աշխարհակալ դառնալ...

ԱԼԵԹՍԱՆԳՐ — Ապրելու ա՞հր:

ԾՈՎԱՀԵՆ — Դի՛շտ հասկացաք ինձ, աշխարհակալ: Վախը ապրելու ահն է. վախենում են նրանք, ովքեր ուզում են ապրել, իսկ ես վաղուց չեմ ապրում: Ես միայն կամ...

ԱԼԵԹՍԱՆԳՐ — Դուք ճիշտ եք. ես կգերադասեի չլինել, քան թե չապրել...

ԽԵՂԿԱՏԱԿ — Օ՛, տե՛ր իմ, Դուք չէիք կարող չլինել:

ԱԼԵԹՍԱՆԳՐ — Ինչու՞:

ԽԵՂԿԱՏԱԿ — Շատ պարզ, տե՛ր իմ: Ամբողջ աշխարհը հավատում է Ձեր ազատաբեր հաղթանակներին: Այդ պատճառով Դուք չլինել չէիք կարող:

ԱԼԵԹՍԱՆԳՐ — Ծաղրածո՛ւ, ուրեմն, Ձեր կարծիքով, ես իմ հաղթանակների համար պարտական եմ աշխարհի այդ հավատի՞ն:

ԽԵՂԿԱՏԱԿ — Ամենայն մանրամասնությամբ: (*Տխրում է*):

Աստված չանի՛ Ձեզ չհավատան, տե՛ր իմ, ես առանց Ձեզ ի՞նչ պիտի անեմ...

ԾՈՎԱՀԵՆ — Շատ իմաստուն ծաղրածու ունեք, արքա՛:

ԱԼԵԹՍԱՆԳՐ — Եթե Դուք ցանկանաք ծառայել ինձ մոտ, ես կունենամ նաև մի իմաստուն գորական:

ԾՈՎԱՀԵՆ — Դուք վստահո՞ւմ եք ինձ:

ԱԼԵԹՍԱՆԳՐ — Ես համարձակ մարդկանց հավատում եմ: Ես վախկոտներից եմ վախենում:

ԾՈՎԱՀԵՆ — Հանուն այդ Ձեր հավատի, արքա՛, ես կծառայեմ Ձեզ մոտ՝ իբրև զինվոր: Ես հավատում եմ Ձեր մեծությանը:

ԱԼԵԹՍԱՆԳՐ — Ոչ թե զինվոր, այլ զորապետ եմ կարգում Ձեզ: Այժմ գնացե՛ք և հանգստացե՛ք: (*Չինվորներին*) Հանձնեցե՛ք նրան վերցրած զենքերը, իսկ եթե իրենը լավը չեն, տարե՛ք,

թող իմ զինանոցից ընտրի լավերը, և մի առանձին վրա՛ն հատկացրեք:

ԾՈՎԱՀԵՆ — Ընորհակալ եմ, տե՛ր իմ: Կաշխատեմ արդարացնել Ձեր վստահությունը: Սակայն մի խնդրանք ունեմ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Լսում եմ Ձեզ:

ԾՈՎԱՀԵՆ — Ընկերներս, տե՛ր իմ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Նրանց կթողնենք՝ ազատ գնան և ապրեն այնպես, ինչպես կամենան:

ԾՈՎԱՀԵՆ — Շատ գոհ եմ, արքա՛, կարո՞ղ եմ գնալ:

ԼԵՈՆԻԳԵՍ — Բայց Դուք չասացիք՝ ինչպես կոչենք Ձեզ:

ԾՈՎԱՀԵՆ — Մի՞թե հայտնի չէ Ձեզ իմ կոչումը:

ԼԵՈՆԻԳԵՍ — Իմ խոսքը լոկ Ձեր անվան մասին է:

ԾՈՎԱՀԵՆ — Բարեկամներն ինձ Մեզաս են կոչում:

ՔԼԻՏ — Գուցե ասեիք՝ ով եք եղել Դուք:

ԾՈՎԱՀԵՆ — Թե արքան թույլ տա, կասեմ, ի՞նչ կա որ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Հետաքրքիր է նաև ինձ համար:

ԾՈՎԱՀԵՆ — Կենսագրությունս այնքան էլ բարդ չէ: Ծագումով հույն եմ: Երեսուն տարիս նոր եմ բոլորել, այլ կերպ ասած՝ հասակակից եմ արքային: Ներեցե՛ք, արքա՛, այն ժամանակ, երբ Ձեզ՝ Մակեդոնացու, կրթում էր հույն փիլիսոփա Արիստոտելը, ես, հույն լինելով հանդերձ, չկարողացա բավարար կրթություն ստանալ, որովհետև Դուք թագաժառանգ էիք, իսկ ես՝ հասարակ զինվորականի որդի: Այն ժամանակ, երբ Դուք թագավոր դարձաք Մակեդոնիայում, ես զինվոր դարձա չունաստանում: Վատ զինվոր չէի: Շուտով աչքի ընկա ու դարձա զորասպետ, սակայն բախտս չբերեց: Այն հայրենիքը, որին ուզում էի կրծքով պաշտպանել, շատ թույլ դուրս եկավ: Իսկ Դուք լավ զիտեք, երբ որ երկիրը թույլ է լինում, նրան ամենաուժեղ զինվորն անգամ անկարող է փրկել: Հենց այդ էր պատճառը, որ երբ Դուք մեր երկիրը մտաք, թեև քաջաբար Ձեր դեմ կռվեցինք, ոչինչ չստացվեց. Դուք մեզ հաղթեցիք, և դրանից հետո ես գերադասեցի դառնալ ծովահեն, քան թե ստրուկ...

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Փաստորեն Դուք ինձ թշնամի եք եղել: Ինչու՞ պատմեցիք այդ ամենը:

ԾՈՎԱՀԵՆ — Ես Ձեզ պատմեցի ճշմարտությունը՝ ճանաչելով Ձեզ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Ընորհակալ եմ ինձ տված պատվից:

ԾՈՎԱՀԵՆ — Դուք Ձեր մեծությամբ արժանի եք դրան:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Այժմ գնացե՛ք և հանգստացե՛ք:

ԾՈՎԱԶԵՆ — Յտեսություն (*Գլուխ տալով զինվորականների հետ դուրս է գնում*):

ԱՆԱՐՔՈՍ — (*Կանգնում է տեղում*): Ո՛վ Ջևաի որդի, Չեր հզոր միտքը լավ է ճանաչում արժանավորին: Այդ ծովահենը շատ ազնիվ մարդ էր...

ԱԼԵՔՍԱՆԴՐ — (*Փորձող տոնով*) Ես վաղը նրան քառատել կտամ: ՊՐՈՏՈՍ — Եվ շատ ճիշտ կանեք:

ԱՆԱՐՔՈՍ — (*Շփոթված*) Եվ լավ էլ կանեք, ո՛վ աստվածային: Դուք և՛ գտնում եք արժանավորին, և՛ քառատում եք... (*Նստում է*):

ԽԵՂԿԱՏԱԿ — Ո՛վ մեծ Անարքոս, ուզում եք ասել, որ քառատումից Դուք շատ հեռո՞ւ եք: (*Ամենքը ծիծաղում են*):

ՊԱՐՄԱՆՅՈՆ — Ո՛չ, տե՛ր իմ, իմ կարծիքով, այդ ծովահենը շատ ազնիվ մարդ է: Նա մահապատժի արժանի չէ: Նրանից լավ գորավար դուրս կգա:

ԼԵՈՆԻԴԵՍ — Իսկ եթե պարզվի, որ նա չար լրտես է:

ՔԼԻՏ — Դա բացառված է: Նա անվախ մարդ է: Լրտեսը միշտ էլ վախկոտ է լինում:

ՊՐՈՏՈՍ — Ինչ էլ որ լինի՝ կասկածելի է:

ՊԱՐՄԱՆՅՈՆ — Մի պահ ընդունենք, որ նա լրտես է: Նա մեր թշնամուն ի՞նչ լուր պիտի տա: Պիտի հաղորդի մեր ուժի մասին, որն ավելի օգտակար է մեզ, քան մեր թշնամուն: Լրտեսն ուժեղին ցավ չի պատճառի:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Կեցցե՛ս, Պարմանյո՛ն, ինչ լա՛վ ասացիր: Մարդը նախօրոք պետք է մարդ լինի, նրանից հետո թող որ որևէ կոչում ունենա, հանճարեղ միտք է: Եկե՛ք մեկական գավաթ դատարկենք միայն էությունը մարդկանց կենացը:

*Խմում է, խմում են ամենքը:*

— Թո՛ւյլ տվեք, պարոններ, շնորհակալություն հայտնել Ադային այս հյուրասիրության համար և մեր խնջույքն ավարտել: Մենք վաղը շատ գործեր ունենք:

ԼԵՈՆԻԴԵՍ — Տե՛ր արքա, վաղն ի՞նչ ենք անելու: Ասացե՛ք, որ այսօր նախապատրաստվենք:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Վաղը կարգավորեցե՛ք գորքի պարենը և ավա-  
րը բաժանեցե՛ք զորապետներիդ միջև:

ԼԵՈՆԻԴԵՍ — Ներեցե՛ք, արքա՛, իսկ Ձեր բաժի՞նը...

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Վերցրած ավարից ինձ բաժին պետք չէ: Ինձ  
որպես բաժին հավա՛նտս թողեք...

ՔԼԻՏ — Այդ դեպքում մենք էլ բաժին չենք ուզում:

ՊԱՐՄԱՆՅՈՆ — Կեցցե՛ Բլիտը: Շատ տեղին ասաց:

ԱՄԵՆՔԸ — Սենք էլ չենք ուզում...

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Կեցցե՛ք, ի՛նքաջեր: Եթե այդպես է, դուք այդ  
ավարը բաժանե՛ք զորքին: Ես հետագայում ձեզ կհատուցեմ  
դրա փոխարեն:

ԱՄԵՆՔԸ — Կեցցե՛ մե՛ծ արքան:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Կեցցե՛ն իմ քաջերը: Այժմ գնանք նախապատ-  
րաստվենք:

*ՎԱՐԱԳՈՒՅՐ*

# ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

## ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

*Ռազմական ճամբար: Երևում է Ալեքսանդրի վրանը, մուտքի մոտ կանգնած է պահակ զինվորը: Գալիս են Թեան ու Ծովահենը:  
Վերջինս զորավարի հագուստով է:*

ԾՈՎԱՀԵՆ — Թե՛ա, մեր հանդիպման օրից անցել է երեք տարի:  
Այդ տարիների ընթացքում շատ բան է փոխվել... Զեզ մնում է լուրջ մտածել:

ԹԵԱ — Չգիտեմ, թե այս երեք տարում ում համար ինչ է փոխվել, բայց ինձ համար ոչինչ չի փոխվել:

ԾՈՎԱՀԵՆ — Դա նրանից է, որ դու չես նկատում, թե ինչ է կատարվում շուրջը:

ԹԵԱ — Այդ մասին արդեն շատ եմ լսել Չեզանից:

ԾՈՎԱՀԵՆ — Ո՛չ, այն, ինչ այժմ պիտի ասեմ, նորությո՜ւն է:

ԹԵԱ — Նորությո՜ւն:

ԾՈՎԱՀԵՆ — Այո՛, նորությո՜ւն:

ԹԵԱ — Ի՞նչ է պատահել:

ԾՈՎԱՀԵՆ — Մի քանի զորապետներ և հունական ու մակեդոնական զորքերն այլևս չեն ցանկանում շարունակել պատերազմը:

ԹԵԱ — Իսկ արքան զիտի՞ այդ մասին:

ԾՈՎԱՀԵՆ — Այո՛, զիտի: Բայց ի՞նչ կարող է անել. համարյա ամբողջ բանակն է դժգոհ:

ԹԵԱ — Իսկ պատճառն ի՞նչ է:

ԾՈՎԱՀԵՆ — Չորքը հոգնել է: Չորապետները դժգոհ են:

ԹԵԱ — Ինչի՞ց են դժգոհ:

ԾՈՎԱՀԵՆ — Նրանք չգիտեն, թե ինչի համար են կռվում:

ԹԵԱ — Դուք ի՞նչ կարծիքի եք:

ԾՈՎԱՀԵՆ — Ես երդվել եմ ցմահ հավատարիմ մնալ արքային և պարտավոր եմ այն կատարել սրբությամբ: Իսկ ինչ վերաբերում է իմ կարծիքին, ես գտնում եմ, որ նրանց ասածների մեջ ճշմարտությո՜ւն կա:



ԹԵԱ — Դու չե՞ս վախենում, որ այս ամենը ես կպատմեմ արքային:

ԾՈՎԱՀԵՆ — Ո՛չ:

ԹԵԱ — Ինչու՞:

ԾՈՎԱՀԵՆ — Որովհետև ես այդ մասին արդեն ասել եմ նրան:

ԹԵԱ — Արդեն ասե՞լ եք:

ԾՈՎԱՀԵՆ — Այո՛:

ԹԵԱ — Եվ նա ի՞նչ ասաց:

ԾՈՎԱՀԵՆ — Ձեր կարծիքով, ի՞նչ կարող էր ասել:

ԹԵԱ — Երևի սաստիկ զայրացավ:

ԾՈՎԱՀԵՆ — Ո՛չ, Թե՛ա: Նա քմծիծաղ տվեց և շատ հանգիստ պատասխանեց, որ այդ մասին ինքը վաղուց գիտի:

ԹԵԱ — Դուք իմ մասի՞ն էլ բան ասացիք նրան:

ԾՈՎԱՀԵՆ — Այո՛, Թե՛ա:

ԹԵԱ — Ի՞նչ ասացիք:

ԾՈՎԱՀԵՆ — Ես նրան ասացի, որ քեզ սիրում եմ:

ԹԵԱ — Իսկ նա ի՞նչ ասաց:

ԾՈՎԱՀԵՆ — Նա ինձ ոչինչ չասաց: Միայն հարցրեց. «Իսկ Թե-  
ան քեզ սիրո՞ւմ է»:

ԹԵԱ — (*Աշխուժացած*) Դուք ի՞նչ պատասխանեցիք:

ԾՈՎԱՀԵՆ — Ե՞ս:

ԹԵԱ — Այո՛, Դու՛ք:

ԾՈՎԱՀԵՆ — Ես պատասխանեցի. «Ո՛չ, արքա՛, նա Ձեզ է սի-  
րում»:

ԹԵԱ — Իսկ նա ի՞նչ ասաց:

ԾՈՎԱՀԵՆ — Իսկ նա ասաց, որ այդ դեպքում ինքը ոչինչ չի կա-  
րող անել, և խորհուրդ տվեց մեկ անգամ ևս խոսել քեզ հետ:

ԹԵԱ — (*Չարածճիռներն*) Եվ Դուք եկել եք իմ վերջին խոսքն իմանալո՞ւ:

ԾՈՎԱՀԵՆ — Այո՛, Թե՛ա:

ԹԵԱ — Անկե՞ղծ:

ԾՈՎԱՀԵՆ — Անկեղծ:

ԹԵԱ — Դե ուրեմն լսի՛ր: Ես Ձեզ շատ եմ հավանում: Դուք ոչ մի-  
այն քաջ, այլև իսկական մարդ եք: Դա ոչ միայն իմ, այլև ար-  
քայի ու բոլորի կարծիքն է: Դուք այս երեք տարում այդ արդեն  
լրիվ ապացուցել եք...

ԾՈՎԱՀԵՆ — Թե՛ա, կարճ...

ԹԵԱ — Եթե առաջ ես Ձեզ հանդիպեի, երևի Ձեզ սիրեի, սակայն,  
ցավոք սրտի, Դուք այդ բախտը չեք ունեցել, որովհետև ես

Չեզ հանդիպելուց առաջ իմ կյանքում հանդիպեցի ինձ համար ամենաթանկ մարդուն:

ԾՈՎԱԷԶԵՆ — Բայց չէ՞ որ նա չի ամուսնանա Չեզ հետ. Դուք նրա ստրկուհին եք:

ԹԵԱ — Ես գերադասում եմ սիրող ստրուկ լինել, քան անսեր ազատ...

ԾՈՎԱԷԶԵՆ — Եվ դա Չեր վերջի՞ն խոսքն է:

ԹԵԱ — *(Փորձելով)* Ես առայժմ համոզված եմ, որ արքան ինձ սիրում է, եթե ես հակառակը համոզվեմ, ապա այն դեպքում՝ խնդրեմ...

ԾՈՎԱԷԶԵՆ — *(Ձայնացած)* Ինչ ասացի՞ք:

ԹԵԱ — *(Իբրև միամիտ)* Մի՞թե ես պարզ չասացի:

ԾՈՎԱԷԶԵՆ — Այդ դեպքում արդեն Դուք ոչինչ եք ինձ համար: Ես ողորմություն չեմ խնդրում: Ես սեր եմ խնդրում...

ԹԵԱ — *(Մեղմ ժպտալով)* Շնորհակալ եմ Չեզանից այդքան ազնիվ լինելու համար: Սակայն ես անկարող եմ կատարել Չեր խնդրանքը, որովհետև ինչ որ Դուք խնդրում եք ինձանից, այն արդեն տրված է ուրիշի...

*Գալիս է Ալեքսանդրը իր թիկնապահների և խեղկատակի հետ:*

— Նա գալիս է:

ԾՈՎԱԷԶԵՆ — Եթե նա Չեզ հարցնի, թե ինչ էինք խոսում, ի՞նչ կպատասխանեք:

ԹԵԱ — Կպատմեմ այս ամենը:

ԾՈՎԱԷԶԵՆ — Խնդրում եմ, ոչինչ չավելացնե՛ք:

ԹԵԱ — Ես նրանցից չեմ, ովքեր սիրո փոխարեն ասելությամբ են հասուցում:

ԾՈՎԱԷԶԵՆ — Դրա համար էլ սիրելի եք:

ԱԼԵԶԱՆԴՐ — Ողջո՞ւյն ձեզ:

ԾՈՎԱԷԶԵՆ ԵՎ ԹԵԱ — Ողջո՞ւյն արքային:

ԱԼԵԶԱՆԴՐ — Ի՞նչ նորություն, հե՛ն:

ԾՈՎԱԷԶԵՆ — Ոչ մի նորություն, տե՛ր իմ, ամեն ինչ նախկինի պես է:

ԽԵՂԿԱՏԱԿ — *(Պատվելով ծովահենի շուրջը)* Խե՛ղճ մարդ, խե՛ղճ մարդ:

ԾՈՎԱԷԶԵՆ — Ի՞նչ է պատահել:

ԽԵՂԿԱՏԱԿ — Խելքդ կորցրել ես:

ԾՈՎԱՀԵՆ — Ինչո՞ւ ես կարծում...

ԽԵՂԿԱՏԱԿ — Քո խոսքերից:

ԾՈՎԱՀԵՆ — Ո՞ր խոսքերից:

ԽԵՂԿԱՏԱԿ — Այն, որ արքային խաբում ես, թե ամեն ինչ նախ-  
կինի նման է:

ԾՈՎԱՀԵՆ — Իսկ ո՞վ ասաց, որ խաբում եմ:

ԽԵՂԿԱՏԱԿ — *(Վճռակամ)* Ես:

ԾՈՎԱՀԵՆ — Դու ի՞նչ գիտես:

ԽԵՂԿԱՏԱԿ — Ես այն գիտեմ, որ մեր կյանքում ամեն ինչ նախ-  
կինի նման լինել չի կարող, իսկ ով ասում է, թե կարող է, նա  
խաբում է...

*Ամենքը ծիծաղում են:*

ԱԼԵԶՍԱՆԳՐ — Լավ, բավական է, գնացե՛ք: (Ծովահենին)  
Գնացե՛ք և ինձ մոտ կանչե՛ք բոլոր զորապետներին ու փիլի-  
սոփաներին:

*Ցանկանում է մտնել վրան:*

ԽԵՂԿԱՏԱԿ — *(Ալեքսանդրին)* Տե՛ր իմ, դու ինձ մի՛ արհամարհիր,  
հատկապես դո՛ւ պիտի իմանաս, որ մեր կյանքում ոչինչ նախ-  
կինի նման լինել չի կարող...

## ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

*Ալեքսանդրի վրանում: Ալեքսանդր և Թեա:*

ԱԼԵԶՍԱՆԳՐ — Ի՞նչ կարծիքի ես այդ ծովահենի մասին:

ԹԵԱ — Համարձակ ու ազնիվ մարդ է:

ԱԼԵԶՍԱՆԳՐ — Էլ ինչո՞ւ ես մերժում նրան:

ԹԵԱ — Տե՛ր իմ:

ԱԼԵԶՍԱՆԳՐ — Չե՞ս վախենում, որ նա քեզ տիրանալու համար  
կարող է ինձ դավաճանել:

ԹԵԱ — Ո՛չ, տե՛ր իմ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ինչու՞:

ԹԵԱ — Ես հավատում եմ նրա ազնվությանը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ուզո՞ւմ ես, որ նա այլևս չլինի:

ԹԵԱ — Ո՛չ, ի՞նչ եք ասում, տե՛ր իմ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ա՛յս, դու սիրո՞ւմ ես նրան:

ԹԵԱ — Ձևադ վկա, ո՛չ, տե՛ր իմ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Հապա ինչու՞ չես ուզում, որ նա չլինի:

ԹԵԱ — Ես չեմ ուզում, որ Դուք անարդարություն գործեք:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Եթե հանգամանքները պահանջո՞ւմ են...

ԹԵԱ — Ինչպիսի հանգամանքներ էլ լինեն, թագավորը չպետք է անարդարություն գործի:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Իսկ եթե անարդարություն գործեմ, ի՞նչ կանես:

ԹԵԱ — Չեզ չեմ սիրի:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Հավատում եմ քեզ:

ԹԵԱ — Տե՛ր իմ, ծովահենն ասաց, որ գորքի մեջ դժգոհություններ կան:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ճիշտ է ասել:

ԹԵԱ — Իսկ ի՞նչ եք մտադիր անելու:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Պետք է համոզել գորքին:

ԹԵԱ — Իսկ բավական չե՞ն այս պատերազմները:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ոչ թե բավական չեն, այլ նույնիսկ շատ են, Թե՛ս, բայց ես ի՞նչ կարող եմ անել:

ԹԵԱ — (Չարմսցած) Բա ո՞վ կարող է:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ես նախանձում եմ քեզ, Թե՛ս:

ԹԵԱ — Ինչու՞, տե՛ր իմ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Որ այդքան միամիտ ես: Դու կարծում ես, թե ես ամենակարող եմ, չե՞, Թե՛ս:

ԹԵԱ — Մի՞թե այդպես չէ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ո՛չ, այդպես չէ, Թե՛ս: Ինձանից հզորը կա: Եվ այդ հզորը թույլ չի տալիս, որ ես վերջ տամ այս պատերազմներին: Նա ոչ միայն հզոր է, այլև դաժան է: Նա կարող է վաղը ինձ իր ոտքերի տակ տրորել մի չնչին ճանճի պես...

ԹԵԱ — Ո՛չ, տե՛ր իմ: Նա միշտ Չեզ պաշտպանել է...

ԱԼԵՔՍԱՆԴՐ — (Չարմսցած) Այդ ո՞վ, Թե՛ս:

ԹԵԱ — Հայր Ձևը, տե՛ր իմ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Հա՛, հա՛, հա՛, հա՛...

ԹԵԱ — Ինչու՞ եք ծիծաղում, տե՛ր իմ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Դու տեսե՞լ ես հայր Ձևին, Թե՛ա:

ԹԵԱ — Ո՛չ, տե՛ր իմ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Իսկ նրա որդու՞ն...

ԹԵԱ — Ես Ձեզ ամեն օր եմ տեսնում, տե՛ր իմ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Ձեզ պաշտպանու՞մ եմ:

ԹԵԱ — Այո՛, տե՛ր իմ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Բայց այն հզորը եթե չուզենա, ո՛չ ես կարող եմ  
քեզ պաշտպանել, ո՛չ էլ հայր Ձևը՝ ինձ:

ԹԵԱ — *(Վախեցած)* Ո՞վ է նա:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Կյա՛նքը, Թե՛ա, կյա՛նքը... Նա է ինձ ստիպում  
այս ամենն անել: Դու կարծում ես՝ առանց նրա հրամանի ես  
կարո՞ղ եմ որևէ բան անել, ո՛չ, Թե՛ա. նա շատ դաժան է...

ԹԵԱ — Այդ ինչպե՞ս, տե՛ր իմ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Ա՛յ այսպես: Ես այժմ սրտանց ցանկանում եմ  
վերջ տալ պատերազմին, բայց չեմ կարող:

ԹԵԱ — Ինչու՞, տե՛ր իմ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Նրա համար, որ կյանքն ինձ դարձրել է ամե-  
նահաղթ, և բոլորն էլ հավատում են դրան, նույնիսկ իմ բազ-  
մաքիվ թշնամիները: Իսկ եթե ես չչարունակեմ պատերազմը,  
նրանք այլևս չեն հավատա իմ անպարտելիությանը, և գի-  
տե՞ս՝ դա ինչ է նշանակում...

ԹԵԱ — Հասկացա, տե՛ր իմ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Ուրեմն, ես ստիպված եմ շարունակել. այլ ելք  
չկա:

*Ներս է մտնում խեղկատակը:*

ԽԵՂԿԱՏԱԿ — Եկանք, տե՛ր իմ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Ովքե՞ր եկաք:

ԽԵՂԿԱՏԱԿ — Մենք՝ խեղկատակներս, տե՛ր իմ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Որքան գիտեմ, ես մի խեղկատակ ունեմ:

ԽԵՂԿԱՏԱԿ — Դուք սխալվում եք, տե՛ր իմ, ուզո՞ւմ եք մյուսնե-  
րին էլ կանչեմ, նրանք դրսում սպասում են:  
ԱԼԵՔՍԱՆԴՐ — Գնա՛ կանչիր:

*Խեղկատակը բաց է անում վրանի դուռը և կանչում է:*

ԽԵՂԿԱՏԱԿ — Ես այստեղ եմ, համարձակ նե՛րս մտեք:

*Ներս եմ մտնում բոլոր զորապետներն ու Փիլիպոսը:*

ԼԵՈՆԻԴԵՍ — Ողջո՛ւյն, տե՛ր արքա:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ողջո՛ւյն, պարոններ, նստեցե՛ք:

*Բոլորը նստում են՝ ըստ արժանվույն:*

— Ի՞նչ նոր լուր կա:

ԼԵՈՆԻԴԵՍ — Քիչ առաջ վերադարձան մեր հետախույզները և  
հայտնեցին, որ Դարեհը համախմբել է զորքերը և պատ-  
րաստվում է ճակատամարտ տալու:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Այո՛, և դա կլինի նրա վերջին ճակատամարտը:

ԱՆԱՐՔՈՍ — Մեծ Ջևար վկա, Դարեհը ցնդել է: Նա ու՞մ հետ է ու-  
զում ճակատամարտել:

ՊԱՐՄԱՆՅՈՆ — *(Խիստ)* Անարքո՛ս, մեզ հետ է ուզում ճակատա-  
մարտել:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Դրանով ի՞նչ է ուզում ասել իմ զորապետ Պար-  
մանյոնը:

ՊԱՐՄԱՆՅՈՆ — Արքա՛, մեզ հարկավոր է լուրջ մտածել: Մենք  
գտնվում ենք քշնամու հողում, իսկ մեր բանակները հոգնել են  
արդեն...

ՔԼԻՏ — Տե՛ր արքա, Պարմանյոնը ճիշտ է: Մեր բանակը ոչ միայն  
հոգնել է, այլև նրա շարքերում կան պարսկական լեգեոններ,  
որոնք ցանկացած պահի կարող են մեզ դավաճանել:

ԿԱԼԻՍԹԵՆԵՍ — Արքա՛, զորապետները խելոք են դատում:  
Լուրջ խորհել է պետք:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Իսկ ի՞նչ են առաջարկում իմ զորապետները:

*Ներս է մտնում պահակ զինվորը:*

ՉԻՆՎՈՐ — Տե՛ր արքա, դեսպաններ Դարեհի կողմից:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Թո՛ւյլ տվեք՝ ներս գան:

*Ձինվորը գնում է, ներս են մտնում երկու դեսպան և մի զինվոր: Վերջինս առաջ է գալիս և արծաթյա սկուտեղով Ալեքսանդրին է մատուցում Դարեհի նվերը:*

Ա. ԴԵՍՊԱՆ — Ո՛վ աշխարհակալ, մեծ Պարսկաստանի հզոր արքայից Ձեզ բյուր ողջույններ: Նա ցանկանում է բարեկամանալ տիեզերքի անպարտելի զորավարի հետ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Խոհեմ է դատել, բայց ի՞նչ պայմանով:

Ա. ԴԵՍՊԱՆ — Իր արևային ցանկությունները շարադրել է նա այս նամակում:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Կարդացե՛ք:

*Ա. դեսպանը այն հանձնում է Բ. դեսպանին:*

Բ. ԴԵՍՊԱՆ — *(Քանդում է կնքած նամակը և սկսում է կարդալ):*

*«Մեծ Պարսկաստանի արքա Դարեհից ողջո՛ւյն աշխարհի մեծ տիրակալին: Ո՛վ մեծ տիրակալ, նախ գոհ եմ Ձեզանից և շնորհակալ այն բանի համար, որ Դուք, լինելով իբրև թշնամի, ինձ հետ վարվել եք բարեկամաբար:*

*Ես զգացվեցի, երբ իմացա, որ իմ ընտանիքը ապրում է Ձեզ մոտ արքայավայել և ոչ թե՛ գերի: Ձեր վեհ ու վսեմ վարմունքի համար ուզում եմ Ձեզ հետ բարեկամ լինել: Եվ իմ խոսքերին իբրև ապացույց՝ Ձեզ եմ նվիրում իմ երկրի կեսը: Իսկ աղջիկս ձեզ կնուժյան կտամ:*

*Անկեղծ հարգանքով՝ Դարեհ Կողմանոս»:*

ԱԼԵԹՍԱՆԴՐ — *(Դեսպաններին) Դուք դրսում սպասե՛ք, պարոններ, մինչև մենք կգրենք պատասխանը: (Դեսպանները դուրս են գնում):* Սրան ի՞նչ կասեք, ազնի՛վ Պարմանյոն:

ՊԱՐՄԱՆՅՈՆ — Իմ կարծիքն այն է, որ թե լինեի ես Ալեքսանդրը, ուրախությամբ կհամաձայնվեի այդ պայմաններին:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Այո՛, Դուք ճիշտ եք, թե որ ես էլ Պարմանյոնը լինեի, մեծ ուրախությամբ կհամաձայնվեի: Բայց, ցավոք, ես Պարմանյոնը չեմ, Ալեքսանդրն եմ:

ՊԱՐՄԱՆՅՈՆ — *(Վիրավորված)* Իսկապես ցավոք, որ այդպես է...

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Այլ կերպ լինել չէր կարող: *(Դիմում է մյուսներին):*

Ուրիշ կարծիքներ չկա՞ն այս մասին:

ՔԼԻՏ — Սակայն ի՞նչ օգուտ ուրիշ կարծիքից:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Խելոք կարծիքից միշտ էլ օգուտ կա:

ՔԼԻՏ — Խելոք կարծիքը հապճեպ չի ասվում:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Ես մտածելու ժամանակ չունեմ:

ԱՆԱՐՔՈՍ — Մեծ է Ձեր կամքը, ո՛վ Ջևահ որդի: Ես որքան գիտեմ, Գարեհն այսօր չափազանց բույլ է. պետք չէ մտածել:

ԽԵՂԿԱՏԱԿ — Հի, հի, հի, հի...

ԱԼԵՔՍԱՆԳՐ — *(Չայրացած)* Քեզ ի՞նչ պատահեց:

ԽԵՂԿԱՏԱԿ — Անարքոսի վրա եմ ծիծաղում, տե՛ր իմ:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Ինչու՞:

ԽԵՂԿԱՏԱԿ — Որ ասում է՝ պետք չէ մտածել:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Իսկ ի՞նչ կա դրանում ծիծաղելի:

ԽԵՂԿԱՏԱԿ — Այն, որ մարդը չի կարող չմտածել, տե՛ր իմ: Չէ՞ որ մարդը մտածելով է տարբերվում ավանակից...

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Բավական է, վերջ տուր և իմացի՛ր, որ ամեն ժամանակ և ամեն ինչի վրա չեն ծիծաղի:

ԽԵՂԿԱՏԱԿ — Ես կծիծաղեմ:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Ես քեզ կախել կտամ:

ԽԵՂԿԱՏԱԿ — Դրանից օգուտ չկա, տե՛ր իմ, իմ փոխարեն մեկ ուրիշը կծիծաղի, եթե մեջտեղը ծիծաղելու բան կա...

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Ասեմք՝ դու իսկապես ճիշտ ես, բայց դրա ժամանակը չէ:

*(Կախսեմենտին)* Կախսեմենտ, գրի՛ր իմ պատասխանը Գարեհին:

ԿԱԼԻՍԹԵՆԵՍ — *(Պատրաստվում է գրելու):*

ԱԼԵՔՍԱՆԳՐ — *(Թելադրում է):*

*«Գարեհ Կողմանոսին: Պարսկաստանն ամբողջովին պատկանում է ինձ, հարկ չունեմ նրա մասն ստանալու: Իսկ թե ցանկանամ Ձեր դստերն առնել, ես կառնեմ նրան նույնիսկ առանց Ձեր համաձայնության: Եթե ուզում եք կենդանի մնալ, ներկայացե՛ք անձամբ: Ալեքսանդր Մեծ»:*



— Այժմ կնքեցե՛ք:

Կ Ա Լ Ի Ս Թ Ե Ն Ե Ս — *(Կնքում է նամակը):* Տե՛ր իմ, գուցեև հարկ չկար այսպես...

Ա Լ Ե Զ Ս Ա Ն Գ Բ — *(Պահակ զինվորին)* Նե՛րս կանչիր իսկույն պատվիրակին:

*Չինվորը ներս է կանչում, Ալեքսանդրը  
նամակն անձամբ հանձնում է նրանց:*

— Դե՛, գնա՛ք բարով: *(Դեսպանները գլուխ տարով դուրս են գնում):*

Պ Ա Ր Մ Ա Ն Յ Ո Ն — Իսկ եթե Դարեհը չներկայանա՞:

Ա Լ Ե Զ Ս Ա Ն Գ Բ — Այդ դեպքում արդեն կստիպենք նրան, որ գերի հանձնվի:

Պ Ա Ր Մ Ա Ն Յ Ո Ն — Դարձյա՞լ պատերազմ:

Ա Լ Ե Զ Ս Ա Ն Գ Բ — Այո՛, Պարմանյո՛ն: Բայց մի՛ վախենա, քեզ չենք տանելու:

Պ Ա Ր Մ Ա Ն Յ Ո Ն — Այդ ե՞ս եմ վախկոտ:

Ա Լ Ե Զ Ս Ա Ն Գ Բ — Հապա ինչու՞ եք խուսափում կռվից:

Պ Ա Ր Մ Ա Ն Յ Ո Ն — Դե որ այդպես է, այժմ ինձ լսե՛ք: Ես շատ լավ գիտեմ, որ ծերացել եմ և պետք չեմ Ձեզ: Սակայն ավստս, որ այդ բանը ուշ եմ հասկացել: Ես նվիրեցի իմ ամբողջ կյանքը հանուն Ձեր փառքի: Իմ երկու որդին մատաղ հասակում ընկան Ձեզ համար: Դուք այսօր դաժան թշնամու դեմ եք ուղարկել իմ Փիլոտ որդուն և այդ ամենի դիմաց ինձ վարձատրում եք Դուք «վախկոտ» բառով: Ես այդ չեմ ների...

Լ Ե Ո Ն Ի Գ Ե Ս — Պարմանյո՛ն, հանգի՛ստ, շատ եք վրդովված:

Պ Ա Ր Մ Ա Ն Յ Ո Ն — Բայց ես իմ դեմ եմ այդքան վրդովված, որովհետև ես որքան եղել եմ կռվի մեջ հզոր ու անպարտելի, նույնքան եղել եմ կյանքի հարցերում անկեղծ մի ապուշ: Ես, որ իմ կյանքում անկեղծ եմ եղել հիմարության չափ, սառնասրտությամբ տարել եմ մահը իմ որդիների նույն հիմարությամբ՝ զուտ նրա համար, որ հիմարաբար հավատացել եմ... Մեկ շաբաթ չկա, որ նույն հավատով ես թշնամու դեմ ճանապարհեցի իմ վերջին հույսը՝ իմ Փիլոտ որդուն: Գուցե նա նույնպես ընկել է մարտում թշնամու սրից: Օ՛, ո՛չ, հենց այսօր ես մարդ կու-

դարկեմ և հետ կկանչեմ նրան արյունոտ ճանապարհներից...  
(Ձգացվում է): Իհարկե, եթե դեռ չի ընկել նա: (Լալիս է): Փիլոտ, օ՛, որդիս, այժմ ու՞ր ես դու...

ՔԼԻՏ — (Ձգացված) Պի՛նդ կաց, Պարմանյո՛ն, այդ վայել չէ քեզ:  
Փիլոտը քաջ է: Նա ետ կդառնա մեծ հաղթանակով:

ՊԱՐՄԱՆՅՈՆ — Ո՛չ, ո՛չ ինձ պետք չէ այդ հաղթանակը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Չափից ավելի եք զայրացած իմ դեմ, ազնիվ  
Պարմանյոն: Ես միշտ հարգել եմ Ձեր քաջությունը: Եվ միշտ  
լսել եմ Ձեր խորհուրդները: Սակայն ինչու՞ Դուք չեք ուզում,  
որ Փիլոտը հաղթանակ տանի...

ՊԱՐՄԱՆՅՈՆ — Որովհետև աննպատակ է այդ հաղթանակը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ես չգիտեմ՝ Դուք ինչ եք պահանջում ինձանից:

ՊԱՐՄԱՆՅՈՆ — Շատ ափսոսում եմ, որ իմ պահանջը Դուք չեք  
կարող տալ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ազնիվ Պարմանյոն, Ձեր որդիները չե՞ որ ընկել  
են հերոսի մահով...

ՊԱՐՄԱՆՅՈՆ — Թո՛ղ որդիներիս:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ես չեմ հասկանում, Դուք ի՞նչ եք ուզում:

ՊԱՐՄԱՆՅՈՆ — Հավա՛նտ տուր ինձ: Ես առանց նրան ապրել  
չեմ կարող...

ԱԼԵՔՍԱՆԴՐ — (Մեղմ) Իսկ իմ հավատը ո՞վ պիտի տա ինձ:  
Լսի՛ր, Պարմանյոն, թե որ լուրջ մտածենք, կամրապնդենք մեր  
հավատը...

ՊԱՐՄԱՆՅՈՆ — (Հեզմակամ) Դուք մտածելու ժամանակ չունեք...

*Դրսում լսվում է ռազմական հաղթական  
շեփորների ու թմբուկների ձայն:*

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Լսո՞ւմ ես, Պարմանյո՛ն, Փիլոտը հաղթանակով  
է վերադառնում:

ՊԱՐՄԱՆՅՈՆ — Ավելի վատ...

*Խրոխտ քայլերով ներս է մտնում Փիլոտը՝  
թիկնապահների ուղեկցությամբ:*

ՓԻԼՈՏ — Ողջո՞ւյն արքային, ողջո՞ւյն ամենքին:

ԱԼԵԶՍԱՆԴՐ — *(Առաջ գնալով)* Փիլո՛տ, զավա՛կս:

ՓԻԼՈՏ — *(Տարակուսած)* Ասացե՛ք, հայրիկ, ի՞նչ է պատահել: Գուցե իմ մասին վատ լո՞ր եք առել: Փառք հզոր Ջուսին, վերադարձել եմ մեծ հաղթանակով և կենդանի եմ: Էլ ինչու՞ եք լալիս...

ԱԼԵԶՍԱՆԴՐ — Պատմեցե՛ք, Փիլո՛տ: Ինչպե՞ս վերջացավ:

ՓԻԼՈՏ — Տե՛ր արքա, Դարեհը այլևս չկա, նա սպանված է:

ԱԼԵԶՍԱՆԴՐ — *(Ընդրստ վեր է կենում տեղից)*: Իսկ ո՞վ սպանեց:

ՓԻԼՈՏ — *(Միամիտ)* Բայց միևնույնը չէ՞, թե ով է սպանել:

ԱԼԵԶՍԱՆԴՐ — Ո՛չ, միևնույնը չէ: Դուք ձախողել եք իմ ամբողջ գործը:

Դարեհը պետք է կենդանի մնար: Դե պատմի՛ր, տեսնեմ՝ ինչպես է եղել: Ինքնասպա՞ն եղավ, թե՞ ընկավ մարտում: Դե պատմի՛ր, շտա՛յ:

ՓԻԼՈՏ — Տե՛ր արքա, այն լուրը, որ հասել էր մեզ, թե իբրև Դարեհը մեծ բանակ ուներ, դա սոսկ կեղծիք էր: Նա մեկ ամսից ավելի էր, ինչ գտնվում էր իր ազգական զորակալ Բեսի բանակում՝ որպես գերի, և շարժվում էր սոսկ նրա թելադրանքով...

ԱԼԵԶՍԱՆԴՐ — Ես այդպիսի բան նախազգում էի: Հետո՞:

ՓԻԼՈՏ — Դարեհը գաղտնի մարդ էր ուղարկել Ձեզ մոտ: Նա հայտնեց այդ բոլորը: Այդ բանն իմանալով՝ մենք առավոտյան հարձակվեցինք պարսիկների բանակի վրա: Նրանց բանակը չկարողացավ երկար դիմադրել, իսկույն խուճապահար փախավ: Երբ ես հեծյալների մի ստվար ջոկատով մոտեցա զորապետ Բեսի վրանին, նա այնտեղ էր մի քանի թիկնապահ զինվորների հետ: Վրանից դուրս եկավ և սկսեց դիմադրել, սակայն ապարդյուն: Մենք իսկույն բռնեցինք նրան:

ԱԼԵԶՍԱՆԴՐ — Իսկ Դարե՞հը:

ՓԻԼՈՏ — Երբ Բեսին գերի բռնեցինք, ես նրան հարցրի՛ ուր է Դարեհը, իսկ նա գլխով նշան արեց դեպի վրանը: Մենք իսկույն ներս մտանք, բայց արդեն ուշ էր. դաշունահար Դարեհը վերջին շնչում էր:

ԱԼԵԶՍԱՆԴՐ — Նա ոչինչ չասա՞ց:

ՓԻԼՈՏ — Երբ ես մոտեցա, նա ջուր խնդրեց: Ես ջուր տվեցի: Երբ նա հազեցրեց ծարավը, հազիվ շնչելով՝ ինձ այսպես ասաց. «Շնորհակալ եմ Ձեզանից, զինվոր, ջուր տալու համար, բայց ափսոսում եմ, որ չեմ կարող փոխարենը հատուցել. իմ անուցից Դուք այս բանը պատմեցե՛ք Ալեքսանդրին, նա կվճարի Ձեզ իմ փոխարեն, նա մեծ սիրտ ունի»:

Վերջին խոսքի հետ նա շունչը փչեց:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Իսկ ո՞վ էր նրան դաշունահարել:

ՓԻԼՈՏ — Ջորավար Բեսը:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — *(Ձարմացած)* Ջորավար Բե՞սը, իր ազգական՞ը: Բայց ինչի՞ համար:

ՓԻԼՈՏ — Չգիտեմ, արքա՛, նա մեր հարցերին չի պատասխանում:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Իսկ նա որտե՞ղ է:

ՓԻԼՈՏ — Նրան շղթայված այստեղ ենք բերել:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Նե՛րս բերեք իսկույն:

*Փիլոտը կարգադրում է իր թիկնապահին: Նա գնում է և ներս է բերում շղթայված Բեսին, որը կանգնում է հպարտ ու մռայլ:*

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Դո՞ւք եք զորապետ Բեսը:

ԲԵՍ — Ի՞նչ է, նման չե՞մ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Դո՞ւք եք սպանել Դարեհին:

ԲԵՍ — Այո՛:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Ինչու՞ սպանեցիք:

ԲԵՍ — *(Խորամանկ)* Հզո՛ր տիրակալ, մի ամբողջ ամիս ես Դարեհին համոզում էի, որ զանք և ենթարկվեմք Ձեզ, սակայն նա չէր համաձայնվում, ուստի ես ստիպված նրան սպանեցի:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Բայց չե՞ որ նա Ձեր ազգականն էր, Ձեր թագավորը:

ԲԵՍ — Հենց դրա համար էլ ես նրան սպանեցի, որ նա կենդանի չընկներ թշնամու ձեռքը և սպանվեր նրա կողմից:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Ես Դարեհին չէի սպանի:

ԲԵՍ — Ես այդ գիտեի:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ուրեմն էլ ինչու՞ սպանեցիք:

ԲԵՍ — Եթե իմանալի, որ Դուք կսպանեիք նրան, երդվում եմ բոլոր աստվածներով, ես չէի սպանի նրան:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Բան չեմ հասկանում:

ԲԵՍ — *(Չայրացած)* Ստում եք, արքա՛, լավ եք հասկանում:

ԱՆԱՐՔՈՍ — Լո՛ի՛ր, ստահա՛կ: Մի՛ համարձակվիր այդ լեզվով խոսել Չևսի որդու հետ: Ո՞վ է լսել, որ Աստվածը ստի:

ԲԵՍ — *(Հեզմական)* Բայց Չևսի որդին ինքն է ցանկանում, որ ես խոսեմ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — *(Բեսիմ)* Ես չեմ ցանկանում խոսել քեզ մման մեկի հետ, որն իր արարքի համար ենթակա է քառատման:

ԲԵՍ — *(Հանգիստ)* Ես այդ մասին գիտեմ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — *(Չինվորներին)* Դո՛ւրս տարեք և պարսիկ ժողովրդի առաջ քառատեցե՛ք այս դավաճան և թագավորասպան սրիկային:

*Չինվորներն ուզում են դուրս տանել Բեսին:*

ՊԱՐՄԱՆՅՈՆ — *(Չինվորներին)* Սպասեցե՛ք, ես ուզում եմ լսել այդ մարդուն:

Ես ուզում եմ իմանալ, թե նա ինչու է սպանել իր ազգականին և թագավորին...

ԼԵՈՆԻԴԵՍ — *(Չուսպ)* Պարմանյո՛ն, հանգի՛ստ:

ՔԼԻՏ — *(Չայրացած)* Իսկ ինչու՞ հանգիստ: Ես էլ եմ ուզում իմանալ ճշմարտությունը:

ՊՐՈՏՈՍ — *(Սպառնազին առաջ գալով)* Ի՞նչ է, պարզ չէ՞, որ նա դավաճանաբար սպանել է իր թագավորին: *(Չինվորներին)* Դո՛ւրս տարեք իսկույն:

ՓԻԼՈՏ — *(Առաջ գալով)* Մեծ Չևսը վկա, բան չեմ հասկանում: Ասացե՛ք խնդրեմ՝ ինչ է կատարվում այստեղ: Բայց ո՛չ, սպասեցե՛ք, նա իմ գերին է: Ես ինքս պետք է պատիժ տամ նրան...

ԱԼԵՔՍԱՆԴՐ — *(Չուսպ և սպառնազին)* Լսե՛ք, պարոններ: Չեզ ի՞նչ պատահեց: Թե որ ուզում եք լսել այս մարդուն, որի արարքը նողկալի է խիստ, թող ինքը խոսի, դուք էլ լսեցե՛ք: *(Բեսիմ)* Ասա՛, դավաճան, ինչու՞ մորթեցիր քո թագավորին:

ԲԵՍ — Իմ ժողովուրդը փրկելու համար:

ՔԼԻՏ — Հետաքրքիր է:

ԲԵՍ — Այո՛, պարոններ: Որքան հզոր ու մեծ է ձեր արքան, նույն-  
քան թույլ ու ողորմելի էր մերը: Սակայն բոլոր թագավորների  
նման նա էլ էր ցանկանում մեծ երևալ: Դրա համար նա իր դա-  
ժանությամբ ջնջեց մեր երկրի քաջ զավակներին, որոնք  
պատվար էին մեր երկրի համար: Եվ երբ դուք մեր դեմ ելաք,  
մեր երկիրն արդեն շատ էր թուլացած, դրա համար էլ շուտ  
ծունկի եկավ: Այդքանից հետո մեր թագավորը իր անպետք  
կյանքը փրկելու համար ցանկանում էր գալ և ենթարկվել ձեզ:  
Իսկ դա նշանակում էր կործանել ժողովրդի հավատը իր ուժի  
նկատմամբ: Նա ծախում էր ժողովրդի հավատը, դուք հասկա-  
նո՞ւմ եք: Ես, սպանելով Դարեհին, փրկեցի իմ ժողովրդի հա-  
վատը: Դուք եթե նրան տիրեք էլ, դա կլինի ժամանակավոր,  
որովհետև նա կամավոր չի հանձնվել ձեզ... Ես ասացի ճշ-  
մարտությունը: Այժմ դատեցե՛ք ինչպես կարող եք:

ԱԼԵԶՍԱՆԴՐ — Դրա համար էլ ես Դարեհին մեծ շուքով կթա-  
ղեմ, իսկ Ձեզ վաղն ևեթ քառատել կտամ:

ԲԵՍ — Ես գիտեմ, Դուք շատ խորամանկ մարդ եք, այդ բանը  
կանեք: Սակայն իմացե՛ք, այնուամենայնիվ Ձեր արածը կեղ-  
ծիք է: Նրան շատ շուտ կդադարեն հավատալուց...

ԱԼԵԶՍԱՆԴՐ — *(Ձինվորներին)* Դո՛րս տարեք իսկույն այս չարա-  
գործին և կատարեցե՛ք իմ հրամանը:

*Ձինվորները դուրս են տանում Բեսին:*

ԲԵՍ — *(Արհամարհանքով)* Դե՛հ, մնա՛ք բարով: Ես իմն արել եմ և իմն  
ասացի: (Գնում է):

ԽԵՂԿԱՏԱԿ — *(Ցատկում է նրա ետևից):* Գնաս բարո՛վ, մա՛րդ, որ  
մեռնում ես, մա՛րդ:

ԱԼԵԶՍԱՆԴՐ — *(Խեղկատակին)* Չքվի՛ր աչքիցս:

ԽԵՂԿԱՏԱԿ — Շատ սիրով, տե՛ր իմ, բայց իմ չքվելուց գեթ մի  
օգուտ կա՞:

ԱԼԵԶՍԱՆԴՐ — Ասացի՛ կորի՛ր:

ԽԵՂԿԱՏԱԿ — Չեմ կարող, տե՛ր իմ:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Ի՞նչը չես կարող:

ԽԵՂԿԱՏԱԿ — Ո՞նց կորչեմ, տե՛ր իմ, եթե մեր կյանքում ոչինչ չի կորչում:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — (Չայրացած) Ի՞նչ ես ակնարկում:

ԽԵՂԿԱՏԱԿ — (Մի քիչ մտածելով) Արի՛ զնանք խաղանք:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — (Ժպտում է): Ա՛խ, եթե կարողանայի...

ԽԵՂԿԱՏԱԿ — Դե որ դու չես կարող, ես մենակ զնամ: (Դուրս է գնում):

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Այժմ լսե՛ք ինձ, մինչև Դիոնիսի սրբազան տոնը կարգի՛ կբերեք ամբողջ բանակը: Մենք տոնը այստեղ պիտի կատարենք, իսկ տոնից հետո կշարժվենք դեպի Եգիպտոս:

ՊԱՐՄԱՆՅՈՆ — Հուսով եմ, որ ինձ չի վերաբերում այդ հրամանը:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Այո՛, Պարմանյո՛ն, դու մնալու ես այստեղ, որ կառավարես այստեղի մեր բոլոր գործերը: Չեր լեգեոնները սրանից հետո կղեկավարի Չեր Փիլոտ որդին: Նա գալու է մեզ հետ Եգիպտոս:

ՊԱՐՄԱՆՅՈՆ — Ո՛չ, ես այդ թույլ չեմ տա: Առանց Փիլոտի մի ժամ չեմ ապրի: Ես ուզում եմ, որ նա մնա ինձ հետ: Ես արդեն ծեր եմ:

ՓԻԼՈՏ — Մեծ Ձևը վկա, բան չեմ հասկանում: Ասացե՛ք, հայրիկ, ի՞նչ է պատահել:

ՊԱՐՄԱՆՅՈՆ — Սովորական բան. ես ծերացել եմ...

ՓԻԼՈՏ — Ո՛չ, չեմ հավատում: Խնդրում եմ, ասե՛ք ճշմարտությունը:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Ճշմարտությունն այս է, Փիլո՛տ: Հայրդ չի ցանկանում, որ ես շարունակեմ պատերազմը...

ՓԻԼՈՏ — Ճշմարի՞տ է, հայր:

ՊԱՐՄԱՆՅՈՆ — Այո՛, զավակս:

ՓԻԼՈՏ — Իսկ ինչու՞:

ՊԱՐՄԱՆՅՈՆ — Ինչպե՞ս ասեմ, որդի՛ս, դու քո այդ հասակում ինձ չես հասկանա, որովհետև քո այդ հասակում ես էլ էի ցանկանում կռվել...

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Տեսնո՞ւմ ես, Փիլո՛տ:

ՊԱՐՄԱՆՅՈՆ — Այժմ ասա՛, որդի՛ս, դու կմնաս ինձ հե՞տ, թե՞ կզնաս Եգիպտոս:

ՓԻԼՈՏ — Ասա՛ ինձ, հայրի՛կ, ինչպե՞ս կարող է գորապետը  
հանգստանալ, երբ գորքը կռվում է: Չէ՛, հայրի՛կ, ես քեզ մոտ  
կվերադառնամ Եգիպտոսը գրավելուց հետո...

ՊԱՐՄԱՆՅՈՆ — Վախենում եմ՝ ուշ լինի:

ԿԱԼԻՍԹԵՆԵՍ — Արքա՛, ես էլ եմ մնալու այստեղ՝ Պարմանյոնի  
մոտ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ի՞նչ է, դո՞ւ էլ ես արդեն ծերացել:

ԿԱԼԻՍԹԵՆԵՍ — Ո՛չ, չեմ ծերացել, բայց էլ Չեզ պետք չեմ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ինչպե՞ս թե՛ պետք չեմ: Ի՞նչ է, վերջացա՞վ մեր  
պատմությունը: Էլ չե՞ս գրելու:

ԿԱԼԻՍԹԵՆԵՍ — Ո՛չ, պատմությունը դեռ չի վերջացել, բայց ես  
չեմ կարող այլևս գրել...

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ինչու՞ չես կարող:

ԿԱԼԻՍԹԵՆԵՍ — Ես ուզում էի գրել պատմություն, որ սերունդ-  
ներին պատմեր այսօրվա գործերի մասին մեր հերոսական,  
բայց ինչպե՞ս գրեմ, երբ այն չեմ տեսնում, այդպիսիք չկան...

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Դա գրպարտանք է: Մենք ժողովուրդներ փրկե-  
ցինք ստրկությունից, որոնք հարյուր դար կխարխափեին խա-  
վարի գրկում:

ԿԱԼԻՍԹԵՆԵՍ — Այդ մենք չարեցիք, ժամանակն արեց: Ամեն  
ժամանակ իր պահանջն ունի: Եթե չլինեիք մենք, կլիներ մի  
ուրիշը, որը կկատարեր ժամանակի հրամանը...

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Իսկ դրանում ի՞նչ վատ բան կա:

ԿԱԼԻՍԹԵՆԵՍ — Վատն այն է, որ մեկ ուրիշը ժամանակի հրա-  
մանը կկատարեր խելոք ու խոհեմ և ոչ թե ժամանակի գործը  
իրեն կվերագրեր... Սակայն իմացե՛ք՝ ժամանակի դեմ չեք կա-  
րող գնալ: Նա Չեզ կճգմի...

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Դու անհո՞գ եղիր. ժամանակը միշտ իմ կողմն է  
եղել:

ԿԱԼԻՍԹԵՆԵՍ — Չեր կողմ եղածը փոխվել է արդեն:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ո՛չ, դեռ չի փոխվել, այլ դու ես փոխվել, ստո՛ր  
դավաճան:

ԿԱԼԻՍԹԵՆԵՍ — *(Հեզմանքով)* Ե՞ս եմ դավաճան: Հա, հա, հա,  
հա: Թե ես դավաճան լինեի, արքա՛, կմոռանայի իմ հույն լի-



- նելը և իմ սիրելի արքայի նման կհագնեի ես պարսկական տարազ ու կաղոթեի արևելքցու պես...
- ԱԼԵԹՍԱՆԴՐ — Իսկ դու կարծում ես, որ ուրիշները լավ բաներ չունեն՞ն:
- ԿԱԼԻՍԹԵՆԵՍ — Չեր կարծիքով, Արևելքի աստվածները հզո՞ր են Ջևահից, որ այսօր Դուք նրանց եք հավատում...
- ԱԼԵԹՍԱՆԴՐ — Ես նրանց չեմ հավատում, սակայն աղոթում եմ, որովհետև ամեն մի գործ զոհ է պահանջում: Ես այդ անում եմ մեր գործի համար: Մի բան, որից դու գաղափար չունես, թեև կոչումով փիլիսոփա ես...
- ԿԱԼԻՍԹԵՆԵՍ — Ա՛խ, ուրեմն դու կեղծո՞ւմ ես, արքա՛: Դու չես հավատում ոչ մի Աստծու: Իսկ մենք հավատում էինք, որ դու Ջևահի որդին ես: Եթե նա չկա, չկաս նաև դու...
- ԱԼԵԹՍԱՆԴՐ — Դու ի՞նչ ես ուզում:
- ԿԱԼԻՍԹԵՆԵՍ — Ուզում եմ հարց տալ՝ ինչի՞ն հավատանք...
- ԱԼԵԹՍԱՆԴՐ — *(Չայրացած)* Ինչի ուզում ես, հավատա՛:
- ԿԱԼԻՍԹԵՆԵՍ — Բայց ո՛չ կեղծիքի: Կասեմ ամենքին, որ դու կեղծում ես, և թող ոչ մեկը չհավատա քեզ...
- ԱԼԵԹՍԱՆԴՐ — Եթե հասցնես... *(Չինվորներին)* Տարե՛ք և իսկույն նետեցե՛ք զնդան: *(Չինվորները հարձակվում են Կալիսթենեսի վրա):*
- ԿԱԼԻՍԹԵՆԵՍ — Իսկ ճշմարտությունը չես կարող զնդան նետել...
- ԱԼԵԹՍԱՆԴՐ — *(Գոռում է զինվորների վրա):* Ես ձեզ չասացի՞, դու՛րս տարեք իսկույն:

*Չինվորները բռնում են Կալիսթենեսի թևերից և դուրս են տանում:*

- ՀՈՐՄԵԼՅՈՍ — *(Առջ գալով)* Մի՛ արեք, արքա՛: Նա հավատարիմ ծառայել է Ձեզ: Չեր դեմ ոխ չունի: Այստեղ ամենքս հարգում ենք նրան...
- ԱԼԵԹՍԱՆԴՐ — *(Գրգռված)* Չգիտեմ՝ այստեղ ով ում է հարգում, բայց մի բան գիտեմ, որ ինձ չեն հարգում...
- ՀՈՐՄԵԼՅՈՍ — Դա ճիշտ չէ, արքա՛...
- ԱԼԵԹՍԱՆԴՐ — Ուրեմն, Չեր կարծիքով, բոլորդ ճիշտ եք, բացի ինձանի՞ց...

ՀՈՐՄԵԼՅՈՍ — Ես այդպես չասացի: Ես ուղղակի խնդրում եմ,  
որ Կալիսթենեսին զնդան չնետեք...

ԿԱԼԻՍԹԵՆԵՍ — *(Հետ քեզվելով)* Չարժե, Հորմելյո՛ս, մի՛ խնդրեք  
նրան: Եթե նա ինձ ներում շնորհի, ավելի վիրավորած կլինի  
ինձ... *(Ձիմվորները դուրս են տանում):*

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Դե որ այդպես է, այժմ ի՛նձ լսեք: Ես այլևս չեմ  
սպասի տոնին: Ես այն կտոնեմ իմ ճանապարհին: Հինգ օրից  
հետո մենք մեկնելու ենք: Պարմանյոնը մնում է այստեղ՝ իբրև  
կուսակալ: Նրա լեգեոնների հրամանատար է նշանակվում իր  
որդի Փիլոտը: Պրոտոսը մնալու է Պարմանյոնի հետ և օգնե-  
լու է նրան բանակի համար պարեն ուղարկելու գործում: Մնա-  
ցածներս շարժվելու ենք առաջ: Իսկ ով չի ցանկանում այլևս  
ծառայել, ես չեմ արգելում: Թող գնա, ուր կկամենա: Սակայն  
իմացե՛ք, ինչ որ արել եմ, միայն ինձ համար չեմ արել: Իմ  
փառք ու ավարից դուք էլ եք մաս ունեցել: Դե՛, այժմ գնացե՛ք  
և նախապատրաստվեցե՛ք:

*Բոլորը դուրս են գնում*

Լեոնիդե՛ս, դու մի քիչ մնա՛:

ԼԵՈՆԻԴԵՍ — *(Մնալով մենակ Ալեքսանդրի հետ)* Լսում եմ, արքա՛:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ինչ որ ասում եմ, շատ խիստ զաղտնի է:

ԼԵՈՆԻԴԵՍ — Չեր կամքն օրենք է ինձ համար, արքա՛:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — *(Յաճր)* Պարմանյոնի գոյությունը սրանից հետո  
վտանգավոր է...

ԼԵՈՆԻԴԵՍ — Հրամա՛ն տվեք, և... նա չի լինի:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Օ՛, Լեոնիդե՛ս, դու կարծում ես՝ հե՞ջտ է այդպի-  
սի հրամաններ տալ: Չէ՞ որ կան մարդիկ, որ հավատում են  
նրան: Եթե դա էլ ի նկատի չունենանք, ապա Փիլոտը քաջ գո-  
րավար է և դեռ մեզ պետք է...

ԼԵՈՆԻԴԵՍ — Ճիշտ է, տե՛ր իմ: Այդ մասին պետք է շատ լուրջ  
մտածել:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Շատ մտածելու ոչ մի հարկ չկա: Մենք Պար-  
մանյոնին թողնում ենք այստեղ՝ որպես կուսակալ, իսկ դա չա-  
փազանց բարձր պատիվ է... Դրանով մենք ապացուցում ենք,

որ նա դարձյալ շատ վստահելի մարդ է մեզ համար: Սակայն, երբ մենք այլևս այստեղ չենք լինի, նրա հետ պետք է պատահի մի դեպք, ասենք, օրինակ՝ թյուրիմացություն, կամ ինչ-որ ինտրիգ մի անձանոթ սրիկայի հետ, կամ թե արձակած պատահական նետ...

Լ Ե Ո Ն Ի Գ Ե Ս — Հասկացա, տե՛ր իմ, իսկ ո՞վ կանի այդ:

Ա Լ Ե Զ Ս Ա Ն Գ Բ — Իսկ Պրոտոսին ինչու՞ ենք թողնում:

Լ Ե Ո Ն Ի Գ Ե Ս — Ճիշտ է մտածված:

Ա Լ Ե Զ Ս Ա Ն Գ Բ — Դե՛, մենք էլ զնանք նախապատրաստվենք:

*Դուրս են գնում:*

*Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր*

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԳ

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

*Բենը ներկայացնում է ընդարձակ խրախճանքի սրահ: Դիոնիսի տոնն է: Մերթընդներթ հնչում է արևելյան և հունական երաժշտություն: Խրախճանքին ներկա են բոլորը: Ոմանք լրիվ հարբած են, ոմանք՝ կիսահարբած, իսկ ոմանք ոչինչ չեն խմել: Ձգացվում է, որ խրախճանքը վաղուց է սկսվել:*

ԼԵՈՆԻԴԵՍ — *(Հարբած չէ)* Ազնի՛վ պարոններ, ևս մեկական գավաթ դատարկե՛նք մեր մեծ արքայի կենացի համար *(Խնում է):*

ԱՆԱՐՔՈՍ — *(Հարբած)* Գավաթը քիչ է, խմենք սավորով: *(Դատարկ սավորը հակառակ կողմից դնում է բերանին):*

ԽԵՂԿԱՏԱԿ — Մեծ Անարքոսը գինու օգնությամբ առաջին անգամ փիլիսոփայեց հանճարեղորեն:

*Ամենքը ծիծաղում են:*

ԱԼԵՔՍԱՆԴՐ — *(Խեղկատակին)* Տեսնում եմ՝ գինին քեզ էլ է օգնել:

ԽԵՂԿԱՏԱԿ — Տեր իմ, լավ գինուց ո՞վ կուզի հոգնել:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Մեր մեջ կան մարդիկ, որոնք հոգնել են: Ա՛յ, տե՛ս, Քլիսը շատ քիչ է խմում...

ՔԼԻՏ — Արքա՛, ներեցե՛ք, ես Ձեր կենացը շա՛տ-շատ եմ խմել:

Ես կյանք եմ տվել Ձեր կենաց համար,

Բայց, ավա՛ղ, այսօր չեմ կարող խմել:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Գուցե հիվա՞նդ եք:

ՔԼԻՏ — Ճիշտ կռահեցի՞ք:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Որտե՞ղդ է ցավում:

ՔԼԻՏ — Սիրտս, տե՛ր արքա:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Շատ վատ սիրտ ունես:

ՔԼԻՏ — Այո՛, բայց դա այն սիրտն է, որ փրկեց Ձեր կյանքը Գրանիկի ճակատամարտում:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Խորհուրդ կտայի հանուն Ձեր սրտի փիլիսոփայելը թողնե՞իք իսպառ...

ՔԼԻՏ — Արքա՛, հիշո՞ւմ եք, Դուք մի ժամանակ փիլիսոփաներ շատ էիք սիրում...

ԱԼԵՔՍԱՆԴՐ — *(Բորբորված)* Այժմ էլ եմ սիրում:

ՔԼԻՏ — Արդեն զգում եմ: Սաստիկ սիրելուց Կալիսթենեսին զնդան նետեցիք, և նա զնդանում ինքնասպան եղավ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Դավաճանների վերջը միշտ այդպես է լինում:

ՔԼԻՏ — *(Չայրագին)* Իսկ Պարմանյո՞նը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — *(Չևանալով միասիտ)* Պարմանյոնին ի՞նչ:

ՔԼԻՏ — *(Հեզմանքով)* Միամի՛տ արքա...

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Պա՛րզ խոսիր, տեսնեմ, ի՞նչ է պատահել:

ՔԼԻՏ — Ահա՛ Փիլոտը, նա ներս է գալիս, հարցրե՛ք նրան:

*Ներս եմ մտնում Փիլոտը և Հորմելյոսը:*

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ասացե՛ք, Փիլո՛տ, ի՞նչ է պատահել:

ՓԻԼՈՏ — *(Սպառնագին)* Այն, ինչ նախապես նախատեսված էր:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — *(Չևանալով հանգիստ)* Բայց ի՞նչ էր նախատեսված:

ՓԻԼՈՏ — Այդ մասին Դուք ինձանից շատ լավ գիտեք, արքա՛...

*Կամաց-կամաց մտնում է Ալեքսանդրի գահավորակին:*

*Ներկաները ահաբեկված են:*

ԱԼԵՔՍԱՆԴՐ — *(Չինվորներին)* Արգելեցե՛ք դրան: *(Չինվորները կանգնում են Փիլոտի առաջ):*

— Մեծ Ձևը վկա, կարծես այս մարդիկ խելագարվել են:

ՓԻԼՈՏ — *(Նույն տոնով)* Հակառակ դեպքում չէինք ենթարկվի մի խելագարի:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — *(Ոտքի կանգնելով)* Դավադրությո՛ւն: Շղթայել իսկույն:

*Չինվորները հարձակվում են Փիլոտի վրա,*

*վերջինս մերկացնում է սուրը:*

ՀՈՐՄԵԼՅՈՍ — *(Մերկացնելով սուրը՝ առաջ է գալիս)* Չհամարձակվե՛ք, թշվառականներ: *(Չինվորներն ընկրկում են):*

— Լսե՛ք, պարոններ, դավաճանները այս գիշեր ծածուկ կյանքից գրկել են քաջ Պարմանյոնին:

ԼԵՈՆԻԴԵՍ — Բայց այստեղ ի՞նչ մեղք ունի արքան...

ՓԻԼՈՏ — Նենգամի՛տ աղվես, դու և քո արքան անմեղ եք սաստիկ:

*Նետվում է դեպի Ալեքսանդրի գահավորակը, սակայն զինվորները նրան բռնում են և զինաթափում:*

ԱԼԵՔՍԱՆԴԲ — Գլխատել իսկույն դավաճան շանը:

*Չինվորները դուրս են տանում Փիլոտին:*

ՔԼԻՏ — *(Ոտքի կանգնելով վերցնում է գավաթը):* Լսե՛ք, պարոններ, ես էլ եմ ուզում մի գավաթ խմել: Հավանական է, որ սա վերջինը լինի, ուստի ուզում եմ երկու խոսք ասել: Շատ բան եմ տեսել, եղել եմ քաջ և հավատարիմ, նույնիսկ նվիրված չափից ավելի: Եվ այդ ամենի արդյունքը եղել է այն, որ ամբացրել եմ մեզ համար նախատեսված զնդանի պատերը: Շողոքորթությունն ու կեղծիքը կործանում են մեզ: Շողոքորթությունն ու կեղծիքը փոքրացրել են նաև երբեմնի մեծ Ալեքսանդրին: Եվ նա երեսայի մնան հավատում է նրանց, այդ պատճառով էլ համարձակ մարդկանց նա քիչ է սիրում, քծնանքն է այժմ նրան դուր գալիս... Ես այս գավաթը խմում եմ նախկին զինվոր ու զորապետ Ալեքսանդր Մեծի կենացը և ոչ թե այսօրվա այս խեղճ թագավոր Ալեքսանդրի կենացը... *(Խմում է):*

*Ալեքսանդրը, մերկացնելով սուրը, հարձակվում է Քլիտի վրա: Հենը Քլիտին դուրս է տանում: Ալեքսանդրը վերադառնում է, նստում տեղը և հրամայում է շեփորահարին տազնապի նշան տալ, վերջինս հապաղում է և ապտակ է ստանում Ալեքսանդրից: Լեռնիդեսը հարբած Ալեքսանդրի սուրը վերցնում է և թաքցնում:*

ՔԼԻՏ — *(Նորից համարձակ ներս է մտնում):* Ներեցե՛ք, պարոններ, որ իմ սեփական խոսքը ձեզ դուր չեկավ, ուստի ես ուզում եմ իմ մեղքը քավել: Թո՛ւյլ տվեք Եվրիպիդեսից արտասանել մի հատված: *(Արտասանում է խրոխտ):*

«Ավա՛ղ, Հունաստանում ամեն բան տարվում է հակառակ...

Հաղթանակից հետո դափնիներ են տրվում անվերջ,

Ոչ թե նրանց, ովքեր տարել են հաղթանակ,

Այլ նրանց, ովքեր ավարն են բաժանում իրար մեջ...»:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Դու սուտ ես խոսում, սրիկա՛ նախանձ:

ՔԼԻՏ — Իմ կյանքում երբեք նախանձ չեմ եղել, բայց, ավա՛ղ, այ-  
սօր շատ եմ նախանձում մարտերում ընկած մեր այն քաջե-  
րին, որոնք չապրեցին մինչև մեր ապրած մռայլ օրերը...

ԱԼԵԹՍԱՆԴՐ — (Փնտրում է, բայց սուրը չի գտնում: Խլում է քիկնապահ  
զինվորի նիզակը և շեշտակի հարվածում է Քլիտի կրծքին) Դե՛, այժմ  
ինքդ էլ գնա՛ նրանց մոտ:

*Տիրում է քարացած լռություն:*

ՔԼԻՏ — (Բռնում է կուրծքը): Այո՛, ամեն ինչ ճիշտ է ստացվում: Չէ՞  
որ իմ կյանքում ես էլ շատ անմեղ արյուն եմ թափել... Օ՛, ես  
ընկնում եմ... Հորմեյլո՛ս, օգնի՛ր...

*Հորմեյլոսը ուստնում և բռնում է Քլիտի մեջքից,  
սակայն Քլիտը մահանում է:*

ՀՈՐՄԵԼՅՈՍ — (Ցած է դնում Քլիտին): Օ՛, շատ դիպուկ եք հարվա-  
ծում, արքա՛: Լավ եք սկսել: Չէի հավատում, սակայն հուսով  
եմ, որ ինձ չեք հասնի...

(Գետնից վերցնում է նիզակը և խոյանում է դեպի Ալեքսանդրը: Չինվորները  
ցանկանում են պատնեշել, սակայն նա նետում է նիզակը և վրիպում է:  
Դուրս է քաշում դաշույնը և գոռում է զինվորների վրա) — Չմոտենա՛ք:  
(Չինվորները, նիզակներն ուղղելով նրան, կամաց-կամաց սեղմում են օղա-  
կը):

— Օ՛, ո՛չ, ես ազատ պիտի մեռնեմ... (Դաշույնը խրում է սեփական  
կուրծքը: Ընկնում է...):

ՎԱՐԱԳՈՒՅՐ

## ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

*Փիլիպոսի դեղասենյակը: Նա ինչ—որ դեղ է պատրաստում:  
Մտնում է ծովահենը:*

ԾՈՎԱՀԵՆ — Ողջո՛ւյն, բժի՛շկ:

ՓԻԼԻՊՈՍ — *(Տխոր)* Ողջո՛ւյն, գորապե՛տ:

ԾՈՎԱՀԵՆ — Նոր դե՞ղ եք պատրաստում:

ՓԻԼԻՊՈՍ — Այո՛, եթե այս վերջինն էլ չօգնեց, ուրեմն հույս չկա:

ԾՈՎԱՀԵՆ — Բայց կարծես ինքն այդ զգում է:

ՓԻԼԻՊՈՍ — Այո՛, հենց վատն էլ այդ է: Կարծես առաջվա  
Ալեքսանդրը չլինի: Ամեն ինչի վրա կասկածում է: Գիտե՞ք,  
գորապե՛տ, ինձ թվում է, որ նա իմ տված դեղերը չի օգտա-  
գործում:

ԾՈՎԱՀԵՆ — Ինչպե՞ս թե:

ՓԻԼԻՊՈՍ — Այո՛, գորապե՛տ: Նա դեղերը ինձանից վերցնում է՝  
ասելով, թե հետո կխմի, բայց հետո խմում է, թե չէ, ես այդ չգի-  
տեմ:

ԾՈՎԱՀԵՆ — Չարմանալի է:

ՓԻԼԻՊՈՍ — Չարմանալի ոչինչ չկա: Նա այժմ ոչ ոքի չի հավա-  
տում:

*Դուռը ծեծում են:*

— Ո՞վ է:

ԹԵԱ — *(Դրսից)* Ե՛ս եմ, բժի՛շկ:

ԾՈՎԱՀԵՆ — Թեան գիտի՞՞, որ արքայի դրությունը այդքան լուրջ է:

ՓԻԼԻՊՈՍ — Ո՛չ, չգիտի խեղճ աղջիկը: Եթե իմանա, կխելա-  
գարվի: Խնդրում եմ՝ չասեք, պարո՛ն: *(Բարձր)* Թե՛ա, ներս  
եկեք:

ԹԵԱ — *(Ներս ընկնելով)* Բժի՛շկ, արքան գնալով վատանում է:

*(Նկատելով ծովահենին)* Ներեցե՛ք, գորապե՛տ, բարև՛ Ձեզ:

ԾՈՎԱՀԵՆ — *(Մեղմ)* Բարև՛ Ձեզ, Թե՛ա:



ՓԻԼԻՊՈՍ — Մի քանի բուսանից դեղը պատրաստ կլինի: Խնդրում եմ հետևե՛ք եփվող հեղուկին, մինչև ես մի քիչ ծաղկավոշի բերեմ: *(Դուրս է գնում)*:

ԹԵԱ — Չորապե՛տ, երբ որ Դուք դուրս եկաք, արքան Ձեզ հարցրեց:

ԾՈՎԱՀԵՆ — Ի՞նչ ասաց:

ԹԵԱ — Նա ինձ ասաց. «Թե՛ա, Սեզասն ու՞ր գնաց, իսկ ես ասացի, որ Դուք գնացել եք գորքերի վիճակը կարգավորելու... Իսկ Դուք շո՞ւտ եք վերադարձել:

ԾՈՎԱՀԵՆ — Հենց նոր եկա: Մինչև արքայի մոտ անցնելը ես ուզեցի բժշկից իմանալ նրա վիճակի մասին:

ԹԵԱ — Բժիշկը ի՞նչ ասաց:

ԾՈՎԱՀԵՆ — Նա ասում է, որ առանձնապես ոչինչ չկա: Ժամանակավոր տենդ է, կանցնի: Բայց վախենում է արքայի վարմուքից. նա վախենում է դեղեր ընդունել:

ԹԵԱ — *(Վշտացած)* Նա խաբել է Ձեզ, գորապե՛տ: Ինձ թվում է, որ արքան այլևս չի ապրելու...

ԾՈՎԱՀԵՆ — Ի՞նչ ես ասում, Թե՛ա: Նա ամուր կազմվածք ունի, կդիմանա:

ԹԵԱ — *(Լացակոմած)* Ո՛չ, չի դիմանա: Գիտե՞ս՝ երկու օր նա առաջ ինձ ինչ ասաց:

ԾՈՎԱՀԵՆ — Ի՞նչ:

ԹԵԱ — Նա ինձ ասաց, թե՛ «Թե՛ա, եթե ես չլինեմ, դու ի՞նչ կանես»:

ԾՈՎԱՀԵՆ — Իսկ դու ի՞նչ պատասխանեցիր:

ԹԵԱ — Ես լաց եղա:

ԾՈՎԱՀԵՆ — Իսկ ինքը ոչինչ չասա՞ց:

ԹԵԱ — Ոչինչ: Նա լռեց: Ես նրա աչքերում արտասուք տեսա: Նա ինձանից թաքցնում էր: Ես համբուրեցի նրան, իսկ նա ուրախացավ...

ԾՈՎԱՀԵՆ — Ապրե՛ս, Թե՛ա, դու հրեշտակ ես...

ԹԵԱ — Օ՛, ո՛չ, գորապե՛տ, ես մի անբախտ ստրուկ եմ...

*Ներս է մտնում Փրիլպուր:*

ՓԻԼԻՊՈՍ — Ես մի քիչ ուշացա, բայց ոչինչ, ես գտա ամենաընտիր ծաղկափոշին: Քիչ հետո դեղը պատրաստ կլինի: Դուք գնացե՛ք, ես հիմա կգամ:

*Ծովահենը և Թեան դուրս են գնում:*

## ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

*Ալեքսանդրի ննջասենյակը: Չարդարված է արևելյան ճաշակով:  
Ալեքսանդրը դակացած հենվել է մահճի կերպասե բարձերին:*

ԱԼԵՔՍԱՆԴՐ — *(Լայիս է):* Ա՛խ, Քլի՛տ, Քլի՛տ, այս ի՞նչ արեցիր: Ինչու՞ խաղացիր հարբած հոգուս հետ...

ԼԵՈՆԻԴԵՍ — Մի՛ հուզվե՛ք, արքա՛, Չեզ չի կարելի, Դուք շատ տկար եք:

ՊՐՈՏՈՍ — Չե՞ որ, արքա՛, Դուք ոչ մի մեղք չունեք: Քլիտը ինքն է դավաճանել Չեզ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Օ՛, ո՛չ, Պրոտո՛ս, նա դավաճան չէր: Քլիտը երբեք չէր դավաճանի: Ես էի հարբած:

ԱՆԱՐՔՈՍ — *(Մոտենալով կռնում է Ալեքսանդրի մահճի վրա):*

Ներեցե՛ք, տե՛ր իմ, մտքերիս համար: Ես գտնում եմ, որ Դուք մեղավոր չեք: Ինչ Դուք արել եք, այդ եղել է միշտ հայր Ջևահ կամքով...

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Անարքո՛ս, դու շատ խորամանկ մարդ ես: Կուզեի այսօր հավատալ քեզ:

ԱՆԱՐՔՈՍ — Տե՛ր իմ, գլխատի՛ր, եթե ես ճիշտ չեմ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ո՛չ, ո՛չ, Անարքոս, դու ճիշտ ես ասում. ինչ որ մարդիկս անում ենք կյանքում, սա անում ենք լոկ կյանքի պահանջով: Մարդկային կամքից քիչ բան է կախված... *(Դադար):*  
*(Տնքում է):* Է՛հ, վատ եմ, շատ վատ:

ԼԵՈՆԻԴԵՍ — Քա՛ջ կացեք, տե՛ր իմ, շատ եք ընկճվում: Ոչ մի բան չկա, ինձ հավատացե՛ք...

ԱԼԵՔՍԱՆԳՐ — (Թույլ ժպտում է) Է՛հ, Լեոնիդեն՛ս, ի՛նձ չեմ հավատում... քեզ ո՞նց հավատամ...

ԽԵՂԿԱՏԱԿ — (Մտն ցատկերով) Տե՛ր իմ, խնդրում եմ, ինձ հավատացե՛ք:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Քեզ հավատալուց ի՞նչ շահ ունեմ, խե՛նք:

ԽԵՂԿԱՏԱԿ — Շահը շատ մեծ է, մարդս մի բանի պետք է հավատա:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Դու ինչի՞ ես հավատում:

ԽԵՂԿԱՏԱԿ — Ձեզ, տե՛ր իմ:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Միայն քո հավատալը քիչ է, խե՛նքո՛ւկս:

ԽԵՂԿԱՏԱԿ — Բողոքն եմ Ձեզ հավատում, տե՛ր իմ:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Դու համոզվա՞ծ ես:

ԽԵՂԿԱՏԱԿ — Ինչո՞վ երդվեմ, տե՛ր իմ:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Միակ բանը, որին ես քիչ եմ հավատացել, երդումն է... Երդումը խոսք է, խե՛նքո՛ւկ, իսկ խոսքը գործ չէ, թե կարող ես, գործով... ինձ գործով... (Թուլանում է): Պատկեցրե՛ք ինձ: (Պատկեցնում են, դադար, լռություն): Մեզա՛ս, մոտեցի՛ր:

ԾՈՎԱՀԵՆ — (Մոտենում է): Հրամայեցե՛ք, տե՛ր իմ:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Ինչո՞ւ չես խոսում:

ԾՈՎԱՀԵՆ — Ի՞նչ խոսեմ, տե՛ր իմ:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Ուրեմն, եթե խոսելիք չունես, նշանակում է, որ ես շատ վատ եմ:

ԾՈՎԱՀԵՆ — Օ՛, ո՛չ, ո՛չ, տե՛ր իմ: Ես պարզապես չեմ ցանկանում անհանգստացնել Ձեզ...

*Ներս է մտնում Փիլիպոսը՝ դեղի սրվակը ձեռքին:*

ՓԻԼԻՊՈՍ — Ինչպե՞ս եք, տե՛ր իմ:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Ես այդ քեզանից պիտի հարցնեմ:

ՓԻԼԻՊՈՍ — Տե՛ր իմ, նոր դեղ եմ պատրաստել այսօր և համոզված եմ՝ երբ ընդունեք, Դուք երկու օրից ոտքի կկանգնեք:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Ասում եք՝ նոր դե՞ղ:

ՓԻԼԻՊՈՍ — Այո՛, տե՛ր իմ:

ԱԼԵՔՍԱՆԳՐ — Ինչի՞ց է պատրաստված այդ դեղը:

ՓԻԼԻՊՈՍ — Չանազան բուժիչ ծաղիկներից ու սերմերից,  
տե՛ր իմ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Եվ ա՞յժմ պիտի խմեն:

ՓԻԼԻՊՈՍ — Այո՛, տե՛ր իմ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Նասեցրե՛ք ինձ:

*Հենը և Լեոնիդեսը նասեցնում են, Թեան բարձերը  
հենում է Ալեքսանդրի մեջքին:*

— Օրվա ո՞ր ժամն է:

ԼԵՈՆՆԻԴԵՍ — Կեսօր է, տե՛ր իմ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Օրն ամպամած է, ես լավ չեմ տեսնում: Կանգ-  
նածները երկիմաստ հայացքներ են փոխանակում:

— Բացե՛ք լուսամուտները: *(Բացում են):* Օ՛ֆ, թարմ օդ եկավ... Ի՛նձ  
տուր դեղը, Փիլիպո՛ս: Դողդողացող ձեռքով վերցնում է սրվա-  
կը և երկար ժամանակ անորոշ հայացքով զննում է այն, կար-  
ծես մտածում է: Խեղկատակ, մո՛տ արի:

ԽԵՂԿԱՏԱԿ — Այստեղ եմ, տե՛ր իմ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Ի՞նչ ես կարծում, խենթո՛ւկ, խմե՛՞մ այս դեղը:

ԽԵՂԿԱՏԱԿ — Իհարկե, տե՛ր իմ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Իսկ դու կխմե՞ս:

ԽԵՂԿԱՏԱԿ — Ե՞ս:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Դու:

ԽԵՂԿԱՏԱԿ — *(Չննող ու խիստ հայացքով նայում է Փիլիպոսին):*

ՓԻԼԻՊՈՍ — Թո՛ւյլ տվեք՝ ե՛ս խմեն, տե՛ր իմ:

ԱԼԵԹՍԱՆԴՐ — Ո՛չ, Փիլիպո՛ս: Դու ուզես-չուզես պիտի խմես,  
որովհետև դու ինքդ ես պատրաստել այն: Ես ուզում եմ իմանալ՝  
էլ ով կխմի:

ԼԵՈՆՆԻԴԵՍ — Բայց, արքա՛, դեղը հիվանդի համար է:

ԱՆԱՐՔՈՍ — Արքան ճշմարիտ է, խմի՛ր քո պատրաստած դեղը,  
Փիլիպո՛ս:

ՊՐՈՏՈՍ — Վերցրե՛ք դեղը, Փիլիպո՛ս:

ԾՈՎԱԷԵՆ — Սպասեցե՛ք: *(Մտնելով է Ալեքսանդրին):* Ի՛նձ տվեք դե-  
ղը, տե՛ր իմ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — *(Թույլ) Ի՞նչ եք ուզում անել:*

ԾՈՎԱՀԵՆ — Ուզում եմ խմել:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Վերցրե՛ք:

ԾՈՎԱՀԵՆ — *(Վերցնում է դեղը):*

ԹԵԱ — Օ՛, ո՛չ, տվե՛ք ինձ, ես պիտի խմեմ: *(Նետվում է դեպի ծովահենը):*

ԾՈՎԱՀԵՆ — *(Խոնում է և դատարկ բաժակը մեկնում է Թեային):*

ՓԻԼԻՊՈՍ — *(Ծովահենին) Շնորհակալ եմ, գորապե՛տ:*

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Թե՛ա, այդ բաժակը պահի՛ր ինձանից քեզ հիշատակ... Ինձ չվիճակվեց այն խմել... Եվ հավատա՛ այդ մարդուն... Նա դեռ հավատ ունի... Իսկ դո՛ւ, գորավա՛ր, մոտեցի՛ր ինձ: *(Մեզասը մոտենում է):* Չեռքդ տո՛ւր ինձ: *(Վերցնում է նրա ձեռքը):* Լսի՛ր ինձ, եղբայ՛ր... Ես իմ կարճ կյանքում շատ բաներ տեսա... Սի շաբաթ առաջ աշխարհն իմն էր... բայց վաղը ինձ ոչինչ չի մնալու... Ես իմ ունեցվածքի ամենաթանկը քեզ եմ հանձնում... *(Կանգնածները իրար են նայում):* Թեային քեզ եմ հանձնում... Թե՛ա...

ԹԵԱ — *(Հեկեկում է):* Այստեղ եմ, տե՛ր իմ: *(Ընկնում է ծնկների վրա և գլուխը քսում Ալեքսանդրի ոտքերին):*

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Թե՛ա, սիրի՛ր այս ազնիվ մարդուն... *(Դադար):*

— Լսե՛ք ամենքդ... Ինձ շուքո՛վ թաղեք... Ես շատ եմ սիրել լավը աշխարհում... *(Թուլանում է):*

ԽԵՂԿԱՏԱԿ — *(Ցատկում է, խլում Ալեքսանդրի թուլացած ձեռքը և հպում կրծքին՝ լացակումած):* Իսկ ե՞ս, տե՛ր իմ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ — *(Շատ թույլ) Ձո՛ւր...*

ԹԵԱ — *(Շտապ վերցնում է ջրով լի գավաթը և մոտեցնում է Ալեքսանդրի շուրթերին, որը մի քանի թույլ կում է անում):*

ԼԵՈՆԻԴԵՍ — Իզուր մի՛ ընկճվեք, Դուք կապրեք, տե՛ր իմ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ — Ես այդ լավ գիտեմ... քիչ գործ չեմ արել... բայց լսեցե՛ք ինձ, մի քան կասեմ ձեզ... Մարդը նման է բխող աղբյուրի... Ոմանք բխում են շատ ջինջ ու մաքուր... ոմանք բխում են թունոտ ակունքից... ոմանք չեն բխում... Ու ջրի նման մենք հուն ենք բացում... Թե ջուրը մենք ենք, կյանքը տեղանքն է... Մեր արած գործը մեր հունն է կյանքում... Ում ջուրը թույլ է, հուն չի ունենում... Ով հորդ բխում է, նա է հուն

բացում... Բայց թե այդ հունն էլ շատ խիստ կախված է մեր կյանք – տեղանքից... Եթե տեղանքը հարթ է ու փափուկ, հունը լինում է ճահճոտ ու ծանծաղ... իսկ թե տեղանքը լեռնոտ է լինում, հունը լինում է ոլորապտույտ, ջուրը՝ շառաչուն, նույնիսկ երբեմն՝ ահեղաշառաչ... Որքա՛ն ջրեր են կորչում տեղանքում... Իմ ջուրն էլ այսօր պիտի ցամաքի... բայց չեմ ափսոսում. այս անհունի մեջ ես հուն ունեցա... (Գաղար) Միայն մի բան եմ խնդրում ձեզանից՝ ինձ շուքո՛վ թաղեք: (Նվաղում է):

Լ Ե Ո Ն Ի Գ Ե Ս — Արքա՛, իսկ ո՞ւմ եք թողնում Ձեր գահը:

Ա Լ Ե Ք Ս Ա Ն Գ Ի Բ — (Հազիվ լսելի) Արժանավորին... (Մեռնում է):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ՆՈՐ ԷՋԵՐ  
ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ  
ԿՅԱՆՔԻՑ









## ՆԱԽԱԲԱՆ

**Յ**այ րականության պատմության մեջ միջին դարերը հայտնի են տաղեր ուների մի շողշողուն համաստեղությամբ, որի մեջ իրենց ուրույն լույսով փայլում են Ֆրիկը, Մկրտիչ Նաղաշը, Նահապետ Քուչակը, Կոստանդին Երզնկացին, Հովհաննես Թլկուրացին, Գրի որ Աղթամարցին, Նաղաշ Հովնաթանը, Ներսես Մոկացին, Դավիթ Սալաձորցին, Հովհաննես Սեբաստացին, Մինաս Թոխաթցին և ուրիշներ: Արժանին հատուցելով նրանց՝ պետք է ասել, որ միջնադարյան հայ տաղեր ուների աստղաբույլի ամենապայծառ աստղը Սայաթ-Նովան է՝ միջին դարերի վերջի ամենախոշոր հայ բանաստեղծը:

Սայաթ-Նովան այն հազվադեպ ստեղծա ործողներից է, որոնք, իրենց բնածին տաղանդը թրծելով ժողովրդի ճշմարիտ ու անսպառ խոհերի մշտավառ հնոցում, ստեղծում են հո եխոս արվեստի այնպիսի մնայուն ործեր, որոնք, ժամանակի ընթացքում միահյուսվելով ժողովրդական անմահ իմաստություններին, հավերժանում են...

Իր սիրո և մարդասիրական աղափարներով տո որված քնարով Սայաթ-Նովան իրար հետ է շաղկապում հայ միջնադարյան պոեզիան ու նոր րականությունը: Նրա քնարը իր մո ական ազդեցությունն է ունեցել հայ նոր րականության վրա:

Սայաթ-Նովան ապրել ու ստեղծա ործել է 18-րդ դարում, և մի դարից ավելի է, ինչ իտությունն ու րականությունը զբաղվում են նրանով: Նրա վերաբերյալ ստեղծվել է տարբեր լեզուներով ահա ին րականություն:

Սայաթնովա իտությունը սկզբնավորվել է 19-րդ դարի հայ լուսավորիչ-հայա ետ Գևոր Ախվերդյանի «Գուսանք» աշխատությամբ, որը հրատարակվել է Մոսկվայում 1852 թվականին: Այնու-

հետև սայաթնովա իտության մեջ ավանդ են ներդրել հայտնի բանասեր– իտնականներ՝ Գ. Ասատուրը, Լ. Մելիքսեթ–բեկը, Յ. Գրիշաշվիլին, Գ. Լեոնիծեն, բանաստեղծ Յ. Թումանյանը, ռուս ռականության նշանավոր դեմքերից Վ. Բրյուսովը, Յ. Պոլոնսկին, հայտնի նկարիչ Գ. Բաշինջաղյանը, պատմաբան Լեոն, ռականա ետներ Գ. Լևոնյանը, Մ. Յասրաթյանը և շատ ուրիշներ:

Սայաթ–Նովայի կյանքի ու ստեղծա ործությունների ուսումնասիրության ործը ավելի քան 130 տարվա պատմություն ունի, սակայն դեռևս ստույ հայտնի չեն նրա կենսա ռության հավաստի մանրամասները, և շատ հարցեր մինչև այժմ կարոտ են ճշ ռիտ ստու աբանման:

Ովքեր զբաղվել են Սայաթ–Նովայով, օ տա ործելով պատմական փաստեր՝ ծավալել են բազմաթիվ բանավեճեր, ռել են մենառություններ, իտական հողվածներ, բայց և այնպես բոլորն էլ հասել են մասնակի ճշմարտությունների, որովհետև այն հարցերը, որոնք վերաբերում են եր չի կենսա ռությանը (ծննդյան տարեթիվը, ծննդավայրը, կրթությունը, պալատական եր իջ դառնալը, կրոնական կյանքը, մահը և այլն), մինչև այսօր մնում են որպես ենթադրություններ: Նա ինքնակենսա ռական չի թողել, և ոչ էլ իր ժամանակակիցներից որևէ մեկն է ռել նրա կենսա ռությունը:

Բանաստեղծի՝ մեզ հայտնի կենսա ռական տվյալները ռեթ նրա խաղերի մեջ եղած ծածկա ռերի վերծանության, բանասիրական պրպտումների ու կռահումների արդյունք են: Յարցին նման մոտեցումը պատահական չէ, քանզի հին ու միջնադարյան ռողի կամ բանաստեղծի կենսա ռությունը կարելի է փնտրել նրա ստեղծա ործություններում: Այս բանն ավելի հատկանշական է աշուղական ռականությանը, որովհետև այն ժամանակներում լայն չափերով ընդունված էր ռական ստեղծա ործություններում ծածկա ռեր թողնել:

Բարեբախտաբար Սայաթ–Նովայի ստեղծա ործություններում կան բազմաթիվ ու բազմաբնույթ ծածկա ռեր, որոնք վերաբերում են նրա կենսա ռությանը: Բայց, ցավոք սրտի, այդ ծածկա ռերից շատերը մեզ են հասել կամ աղավաղված, կամ, թերևս, անվերծանելի են:

Շնորհիվ այն հսկայական ռականության, որը մինչև այժմ ստեղծվել է Սայաթ–Նովայի վերաբերյալ, այսօր համեմատաբար հեշտացել է եր չի կյանքի մութ էջերը լուսաբանելու ործը:

Երկարատև պրպտումների միջոցով մեզ որոշ չափով հաջողվեց վերծանել Սայաթ–Նովայի մի քանի ծածկա ռեր, որոնք, մեր կարծիքով, օ տակար կլինեն սայաթնովա իտության համար:

Այնքանով, որքանով կենսա ռական հարցերում կենտրոնական տեղը պատկանում է եր չի ծննդյան թվին, և բոլոր հարցերը սերտ կերպով առնչվում են դրան, մենք նպատակահարմար ենք տնում նյութի շարադրանքը սկսել ծննդյան թվից...

## 1. Ե՞րբ է ծնվել Սայաթ–Նովան

Սայաթ–Նովայի առաջին կենսա իր Գ. Ախվերդյանից հետո, որը նրա ծննդյան թիվը համարում է 1712–ը, թե՛ հայ և թե՛ վրաց իտնականների կողմից առաջ են քաշվել տարբեր տարեթվեր՝ 1707, 1711, 1713, 1717, 1724, 1726: Որպեսզի պարզենք, թե այս տարեթվերից որն է իսկապես եր չի ծննդյան հավաստի թվականը, անհրաժեշտ ենք համարում դրանցից յուրաքանչյուրը համառոտ վերլուծել առանձին:

Գևոր Ախվերդյանը, նկատի ունենալով այն փաստը, որ եր իջը իր Դավթարի հայերեն խաղերի սկզբում<sup>1</sup> «Շատ սիրում իս» Շախաթայի...» (3–4)<sup>2</sup> խաղի տակ, ծանոթա ըել է. «Ես դիվանի խիստ լավն է, ովոր սովրի օղորմի ասե: Հիմի ուզիմ, թե հայեվար ասիմ: Ամեն աստված, յիս–մըղըսու վուրթի Արուփնս, պստուց ինչ–որ յարասուն տարին լուխ դրի ամենան խաղին, ամա Սուրբ Կարապետի կարողութենով սովրեցա քամանչեն ու չուն ուրն ու ամբուրեն», հան ել է այն եզրակացությանը, որ Սայաթ–Նովան ծնված պետք է լինի 1712–ին: Ըստ Ախվերդյանի՝ իբր Սայաթ–Նովան հիշյալ ծանոթա – րությանը հայտնել է, որ ինքը 30 տարեկան հասակից է սկսել խաղեր ըել, և քանի որ Դավթարում ամենավաղ թվա ղված խաղը ղված է Քրոնիկոնի<sup>3</sup> 430–ին, այսինքն՝ մեր թվարկության 1742–ին, ապա հիշյալ թվից հանելով 30–ը՝ ստանում է 1712:

<sup>1</sup> Սայաթ–Նովայի՝ մեզ հասած Դավթարը կազմված է թուրքերեն և հայերեն խաղերից: Սկզբում գրված են թուրքերեն, ապա հայերեն խաղերը: Տե՛ս Սայաթ–Նովա, Խաղեր, Նմանահանություն, ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1963, էջ 102:

<sup>2</sup> Տե՛ս Սայաթ–Նովա, Խաղերի ժողովածու, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մորուս Հասարայանը, Երևան, 1963, էջ 10: Այսուհետև բոլոր քաղվածքները՝ այս գրքից (խաղերի թվահամարին նախորդող «Հ», «Վ», «Թ» տառերը ցույց են տալիս խաղի լեզուն՝ հայերեն, վրացերեն, թուրքերեն):

<sup>3</sup> Քրոնիկոն–Վրացական թվական՝ բաժանված 532 տարի ունեցող հերթական շրջանների (սկիզբ ունենալով բիբլիական 5604 թ. մ. թ. ա.): Սայաթ–Նովայի ժամանակ քրոնիկոնի 14–րդ շրջանն էր՝ սկսած մեր թվարկության 1312 թվականից:

Սա մի պարզունակ և իտականորեն չհիմնավորված վարկած է: Ախվերոյանը նույնպես հաստատ համոզված չէ այդ հարցում և իր կարծիքը հայտնում է խիստ ենթադրաբար՝ ղեկով, թե՛ Սայաթ-Նովան «ծնած պիտի ըլի 1712–ին»<sup>4</sup> (ընդ ծումը մերն է — Յ. Ս.): Այսօր սայաթնովա իտության կողմից կուտակած նյութի և դրա լուսիս տակ եր չի թողած ժառան ության խորագնին ուսումնասիրությունը բազմաթիվ փաստեր է մատուցում ի վնաս Ախվերոյանի վարկածի: Բերենք այդ փաստերից մի քանիսը.

**ա.** Ինչպես Ախվերոյանը, այնպես էլ նրան հաջորդող մի շարք սայաթնովա ետներ, ճիշտ չբացահայտելով Սայաթ-Նովայի վերոհիշյալ ծանոթա ռության իսկական իմաստը, այն միտքն են հայտնում, որ իբր Սայաթ-Նովան խաղեր ղեկ է 30 տարեկանից հետո: Դեռ ավելին, Պ. Սևակը, համաձայնվելով վրաց բանասեր Կեկելիձեի հետ և հենվելով Մ. Չարաթյանի այն մտքի վրա, որ «կասկածի ենթակա չէ, որ Սայաթ-Նովան հայերեն սկսել է ղեկ երեսուն տարեկանում, երբ արդեն երկար տարիներ ղական-աշուղական անցյալով ճանաչված հեղինակություն էր»<sup>5</sup>, առանց որևէ լրացուցիչ փաստերի «ճշ ղոում է» Ախվերոյանի վարկածը. «Սայաթ-Նովան,— ղում է նա,— 30 տարեկան է եղել ոչ թե առհասարակ իր առաջին խաղը ղելիս, այլ իր առաջին հայերեն խաղը ղելիս»<sup>6</sup>: Ջարմանալին այն է, որ այս ամենը ղվում և ասվում է հակադրվելով հենց ծանոթա ղության բուն մտքին: Սայաթ-Նովան իր ծանոթա ղության մեջ սևով սպիտակի վրա ղում է, թե՛ ես «պստուց ինչ-որ յարասուն տարին ղուխ դրի ամենան խաղին», որը այլ բան չի նշանակում, քան՝ ես փոքր հասակից մինչև 30 տարին ամեն տեսակ խաղ ասի (եր եցի): Եվ հնարավոր էլ չէ որոշակի ասել, թե Սայաթ-Նովան երբ է սկսել հայերեն, վրացերեն կամ թուրքերեն խաղեր ղել:

Չարք է առաջանում. որտեղից՞ է ալիս այս թյուրիմացությունը: Պատճառը չափազանց պարզունակ է: Ինչպես Ախվերոյանը, այնպես էլ այս հարցում նրա հետևորդները ճիշտ չեն ընկալել ծանոթա ղության իսկական նշանակությունը և այն վերա ղել են եր չի ղած ինչ-որ առաջին խաղի, մինչդեռ Սայաթ-Նովան հիշյալ նախադասությունը ղել է միան ամայն որոշակի նպատակով: Բանն այն է, որ

<sup>4</sup> «Սայաթ-Նովա, Լույս գցած աշխատասիրութենով Գեորգեայ Ախվերդեան, Մոսկվա, 1852, Յառաջաբան», էջ 5:

<sup>5</sup> Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մոլոուս Հարաթյանը, Հայպետհրատ, Երևան, 1963 ղ., էջ 17:

<sup>6</sup> Պ. Սևակ, Սայաթ-Նովա, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1969, էջ 15:

եր չի՝ մեզ հասած Դավթարը բաղկացած է երկու մասից, սկզբում ղված են թուրքերեն խաղերը, ապա հայերենը: Խնդրո առարկա ծանոթա ռությունը պարունակող խաղով է սկսվում Դավթարի հայերեն խաղերի բաժինը: Սայաթ–Նովան, ռելով՝ «Հիմի ուզիմ, թե հայեվար ասիմ», այն միտքն է հայտնում, որ Դավթարի թուրքերեն խաղերը «ասեցի» պրծա, հիմա էլ ուզում են հայեվարը ասիմ»: Այսպիսով վերանում է այն թյուրիմացությունը, որ իբր մեր եր իչը խաղերը սկսել է 30 տարեկան հասակից:

Իսկ ինչ վերաբերում է 1742 թվականը կրող խաղին, որը Ախվերոյանի կողմից դիտվում է որպես Սայաթ–Նովայի առաջին ռած խաղ, մենք այդ մասին դեռևս 1966 թ. մեր «Ե՞որ է ծնվել Սայաթ–Նովան» հոդվածում ռել ենք, որ «Խաղը ադրբեջաներեն «Օռվեն էլած թանկ մարքրիտ ու մարջան» խաղն է, որն իր աղափարով, ձևով ու բովանդակությամբ համընկնում է եր չի 1750 թ. հետո ռած խաղերի հետ, և կասկածելի է, որ մի ամբողջ տասնամյակի ընթացքում ղված լինի տակ այդ մեկ խաղը (թվակիր խաղերը բոլորն էլ ղված են 1750–ական թվականների)», այնուհետև տրամաբանորեն հան էլ էինք այն հետևության, որ «խաղի տակ սխալմամբ է ղված 1742 թ., այն պետք է լինի 1752 թ.»<sup>7</sup>: Հետա այում այդ ուղղությամբ մեր կատարած լրացուցիչ պրպտումները ցույց տվեցին, որ խաղը ղված է ոչ թե 1752 թ., այլ 1750 թ.: Դա հաստատվում է հետևյալ փաստով: Խնդրո առարկա խաղը ղված է եր չի Դավթարի 63–րդ էջում, որի լուսանցքներում վրացերենով թվա ղված է՝ Քրոնիկոնի ՌԼ (ՌԲ=40, Լ=30), այսինքն՝ Քրոնիկոնի 430 թ.: Եթե ՌԼ–ն անվերապահորեն իսկություն համարենք, պետք է հավատանք, որ խաղը իսկապես ղված է Քրոնիկոնի 430–ին, այսինքն՝ մեր թվարկության 1742–ին: Սակայն, ինչպես ասացինք վերևում, այս թվականը, միակը լինելով Դավթարում, կասկածելի է և ճիշտ լինելու հավատ չի ներշնչում: Մեր պրպտումները ցույց տվեցին, որ իրականում բանն այլ կերպ է եղել:

Հայտնի է, որ եր չի՝ մեզ հասած Դավթարի մեծ մասը ղված է ուրիշի ձեռքով և գերծ չէ աղավաղումներից ու վրիպումներից: Խնդրո առարկա ՌԼ–ն նույնպես վրիպակ է, և բարեբախտաբար մեզ հասած Դավթարում մնում են այդ վրիպակի հետքերը: Դավթարում հիշյալ խաղին հաջորդող խաղի տակ (էջ 64)<sup>8</sup> սկզբում, թվա ղված է ՌԼՀ (438), ապա նույն թանաքով ջնջված և ուղղված է՝ ՌԲՄ (441):

<sup>7</sup> «Պատմա–բանասիրական հանդես», 1966 նո. 3, էջ 119–120:

<sup>8</sup> Սայաթ–Նովա, Խաղեր, մանահանություն, ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1963 թ.:

Պարզ տրամաբանությունը մեզ հուշում է, որ ջնջված ՌԼԳ–ն նախորդ խաղի թվականն է՝ սխալմամբ կրկնված հաջորդ խաղի տակ, որը ջնջվել է ուղղվել է անմիջապես (հակառակ պարա այում որտեղի՞ց կարող էր լինել այն): Այստեղից էլ հետևություն՝ նախորդ խաղի թվականը եղել է Քրոնիկոնի ՌԼԳ (438) և ոչ թե՛ ՌԼ (430), այսինքն՝ խաղ ըողը խաղը թվա ռելիս այստեղ էլ վրիպել է 3 տառը: Այսպիսով՝ խաղը ըված է ոչ թե 1742 թ., այլ 1750–ին:

**բ.** Սայաթ–Նովայի խաղերում կան բազմաթիվ փաստեր, որոնք ալիս են՝ հաստատելու, որ նա ծնվել է 1712–ից բավականին ուշ:

Բարեբախտաբար եր չի «Ջասաթնամեն» (թ–67) («Կենսա ռական») խաղը մեզ հասել է թվա ըված (1750 թ., հունվարի 3): Սայաթ–Նովան այս խաղում իր կյանքի 20–ամյակը նկարա ըում է ըստ առանձին տարիների, այնուհետև խաղը շարունակում է 5–ամյակներով մինչև 100 տարին և ապա՝ մահը: Խաղից պարզ երևում է, որ ըստ տարիների ըած տողերում եր իչն, անկասկած, փաստա ռել է իր ապրած տարիները, այսինքն՝ 1750 թ. խաղը ռելիս նա ապրած է եղել իր կյանքի 20 տարիները, բայց դեռ 25–ին հասած չի եղել, հակառակ դեպքում խաղը դարձյալ կշարունակեր ըստ տարիների: Հետևաբար «Ջասաթնամեն» ռելիս Սայաթ–Նովան եղել է 22–25 տարեկան, այլ կերպ ասած՝ նա ծնվել է 1725–1729 թթ. ժամանակամիջոցում:

Հայտնի է, որ Սայաթ–Նովայի՝ մեզ հասած բոլոր խաղերը, չնչին բացառությամբ, վերաբերում են իր անձին և կենսա ռական նշանակություն ունեն: Նա իր հայերեն 51–րդ խաղը վերջացնում է հետևյալ երկտողով.

*Սայաթ–Նովա, տարիս էլավ քարատուն,  
Դուն մահի հիդ<sup>9</sup>, մահը քիդ հիդ հասասե:*

Ինչպես տեսնում եք, եր իչը իր 40–ամյա տարիքը համարում է անցած հասակ՝ մահին մոտեցող հասակ, որովհետև իր բնորոշմամբ՝ մահն արդեն նրան վառելու համար հաս–հաս է: Ըստ Ախվերդյանի վարկածի՝ այս խաղը պետք է ըված լիներ 1752 թ. (1712+40), մինչդեռ այդ թվականին և դրանից էլ դեռ 5–6 տարի հետո Սայաթ–Նովան այնպիսի սիրատոջոր խաղեր է ռել, որ վայել է միայն սիրո հասակ ունեցող երիտասարդ տղամարդուն: Նա 1752 թ. ռել է իր «Բըլբուլի հիդ լաց իս էլի (3–3) հանրահայտ խաղը, որտեղ դիմելով սիրած աղջկան՝ ասում է.

---

<sup>9</sup> Հիդ–վառ (վառված):

*Դարդս ասիմ՝ գու լան սարիր,  
էս ի՞նչ բան էր, վուր գունն արիր.—  
Սայաթ—Նովուն ջունուն<sup>10</sup> արիր...*

Դեռ ավելին՝ վեց տարի հետո՝ 1758 թ. բաժ խաղերից մեկի (Թ—45) մեջ դարձյալ դիմելով իր « ոգալներու թա » յարին՝ եր իչը ասում է.

*Էշխետ հարփած չիմ դինջանա,  
Վարթ պատկիրքետ չիմ կշտանա  
Մեջլխներեն չիմ հիռանա,  
Սիրելի՛ս, քեփն ինչքան էլ վուր երկարի...*

Դե արի՛ ու հավատա, որ իր 40—ամյա տարիքը մահին մոտ համարող եր իչը կարող է 46 տարեկանում իրեն սիրուց հարբած համարել:

. Այսօր սայաթնովա իտությանը հայտնի է մի անհերքելի փաստ: Դա վրացա ետ Յովհան Արքայագնի «Կալամասոբա» աշխատության այն հատվածն է, որտեղ Յովհանը պատմում է իր հանդիպումը վարդապետ Սայաթ—Նովայի հետ Յաղպատի վանքում: Արևելա ետ Պ. Մուրադյանի ճշ ըրիտ հաշվումներով՝ այդ հանդիպումը կայացել է 1798—1801 թթ. ընթացքում<sup>11</sup>: Ըստ Ախվերդյանի վարկածի՝ Սայաթ—Նովան այդ տարիներին պետք է լիներ մոտավորապես 88 տարեկան գառամյալ մի ծերունի, մինչդեռ Յովհանը հետևյալն է վկայում. «Վարդապետը (Սայաթ—Նովան — Յ. Ս.) Յովհանին ճաշ հրամցրեց և սկսեց ուտել: Միաժամանակ լավ ինի էլ հյուրասիրեց Յովհանին, և ինքն էլ լավ էր խմում: Այդ ժամանակ չոն ուրն առավ ու նվա եց...»<sup>12</sup>: Այնուհետև շարադրված է Յովհանի և Սայաթ—Նովայի մի չափազանց աշխույժ ու զվարճալի երկխոսություն: Այդ հանդիպման մասին բանասեր Մ. Յասրաթյանը այսպես է ռում. «Ավելի զորավոր փաստ վրացի արեղայի հանդիպումն է Սայաթ—Նովային Յաղպատում իբրև թե 1800 թ. վերջին: Սակայն երկու վանականների ճաշկերույթի ընթացքում տեղի ունեցած զրույցի հո եբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ ոչ թե 80 տարին անց վանա-

<sup>10</sup> Ջունուն — սիրուց խենթացած, խելագար:

<sup>11</sup> Տե՛ս Պ. Մուրադյան, Սայաթ—Նովան՝ ըստ վրացական աղբյուրների, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1963, էջ 91:

<sup>12</sup> Պ. Մուրադյան, Սայաթ—Նովան՝ ըստ վրացական աղբյուրների, էջ 93:

կանին (կամ ոչ վանականին), այլ ամենաշատը 70–75 տարեկան մարդուն համապատասխանող ճաշկերույթ է և տրամադրություն»<sup>13</sup>: Բայց քանի որ Հասրաթյանը իր վարկածով Սայաթ–Նովային համարում է 1717 թ. ծնված, վանականների հանդիպումը դիտում է որպես «ավելի վաղ եղած մի հանդիպման արդյունք»<sup>14</sup>, մինչդեռ հանդիպման ժամանակը հավաստի է՝ ճշ ռտված փաստերով: Հետևաբար Սայաթ–Նովան ոչ թե 18–րդ դարի 10–ական, այլ ավելի ուշ թվականների ծնված է:

Այսպիսի փաստեր էլի կան, բայց, մեր կարծիքով, այսքանն էլ բավական է՝ համոզվելու համար, որ ճիշտ չէ այն վարկածը, թե Սայաթ–Նովան ծնվել է 1712–ին: Նա ծնվել է ավելի ուշ:

\* \* \*

Վրաց բանասերները Սայաթ–Նովայի ծննդյան տարեթիվը, առանց որևէ լրացուցիչ փաստարկումների, համարում են 1718—1722 թվականները: Կ. Կեկելիձեն, վերլուծելով մեզ արդեն հայտնի ծանոթա թուղթերը և դարձյալ հենվելով ծանոթա թուղթյան «Հիմի ուզիմ, թե հայեվար ասիմ» նախադասության մտքին, տնում է, որ Սայաթ–Նովան 30 տարեկան է եղել ոչ թե առհասարակ իր առաջին խաղը ընկիս, այլ հայերեն առաջին խաղը ընկիս, այսինքն 1752 թ., և ենթադրում է, որ Սայաթ–Նովան «ծնված պետք է լինի 1722–ին և կամ 18–րդ դարի առաջին քառորդից ոչ ուշ»<sup>15</sup>: Մենք վերևում հան ամանորեն ցույց տվեցինք, որ վերոհիշյալ ծանոթա թուղթերը նման մեկնաբանությամբ չի կարող հիմք ծառայել Սայաթ–Նովայի ծննդյան թվականը որոշելու համար: Հետևաբար ճիշտ չէ նաև Կեկելիձեի վարկածը:

Ինչ վերաբերում է Սայաթ–Նովայի ծննդյան թվականի հարցում Գ. Լեոնիձեի և Լ. Մելիքետե–բեկի կարծիքներին, ապա անհրաժեշտ ենք համարում հիշատակել Պ. Սևակի շատ տեղին դիտողությունը: «Օ տվելով վրաց աղբյուրներից,— ռում է Սևակը,— Մելիքետե–բեկն ու Լեոնիձեն սայաթնովա իտության մեջ բացեցին նոր շերտեր, հատկապես Սայաթ–Նովայի կենսա ռական այլևայլ հարցերում: Սակայն մեզ հետաքրքրող խնդրում նրանք, դժբախտաբար, չբերեցին նոր փաստեր: Լեոնիձեն բավականանում է ընդամենը մեկ–երկու նա-

<sup>13</sup> Սայաթ–Նովա, Խաղերի ժողովածու, էջ XXXVII:

<sup>14</sup> Նույն տեղում:

<sup>15</sup> Կ. Կեկելիձե, Վրաց գրականության պատմություն (վրացերեն), հ. 2, Թբիլիսի, 1956, էջ 677:



խաղասությամբ. «Սայաթ–Նովայի ծննդյան թվականը դեռևս անորոշ է: Համենայն դեպս, նրա ծնունդը պետք է վերա թել մոտավորապես 1718–1722 թվականներին»: Նոր փաստարկներ չունի նաև Մելիք–սեթ–բեկը: ... Սայաթ–Նովայի ծննդյան թվականի մասին նա եզրակացնում է... որ Արուֆին–Սայաթ–Նովան ծնված պետք է լինի 1711–1722 թվականներին...»<sup>16</sup>: Ինչպես տեսնում եք, վրաց իտնականների վարկածները զուրկ են կոնկրետությունից և խիստ թեական են:

\* \* \*

Գարե ին Լևոնյանը, հենվելով «Դաստամզըտ սիմ ու շարբաբ...» (Հ–22) խաղի վերջին տան «Իդրարենեն»<sup>17</sup> շուտ անցկացար, ու՞ր է յարասուն տարին» տողի վրա, ենթադրում է, որ Սայաթ–Նովան ծնվել է 1724 թ.: «Այդ ի՞նչ «յարասուն» տարու մասին է խոսքը,— րում է Լևոնյանը,— եթե ընդունենք, որ այդ երեսուն տարիներն իր տարիներն են, ապա հարցը լուծվում է, որովհետև այդ եր ը թվական ունի՝ 1754, իսկ այդ թվից հանելով 30 տարին՝ եր չի ծննդյան թվականը ստացվում է 1724... »<sup>18</sup>:

Լևոնյանի վարկածը համոզիչ կլիներ, եթե եր չի վերոհիշյալ տողում «յարասուն տարին» հաստատ լիներ, մինչդեռ Սայաթ–Նովան, դրան նախորդող տողում նշվելով իր «հում կաթնակիր»՝ խոստումնազանց յարին, խնդրո առարկա տողում հայտնում է, որ նա իր խոստումը շուտ է մոռացել («Իդրարենեն շուտ անցկացար»), չի սպասել խոստացած 30 տարվա լրանալուն – (Ու՞ր է յարասուն տարին»): Այսպիսով՝ 1754 թ. եր չի կողմից ակնարկված 30 տարին դեռ լրացած չի եղել, ուստի Գ. Լևոնյանի վարկածը նույնպես անընդունելի է: Իսկ թե դա ինչ 30 տարի է, մենք դրան կանդրադառնանք հետո:

\* \* \*

Սայաթ–Նովան, իր «Այբբեհնըն կարթացիլ իմ դասեդաս» (Հ–51) չորս քառյականոց մի թեջնիսում<sup>19</sup> ծածկա թելով թեջնիսը թելու տարեթիվը, վերջին քառյակում հայտնում է, որ՝ «Սայաթ–Նովա, տարիտ ելավ քարասուն»: Բանասեր Մորուս Հասարաթյանը, հենվելով

<sup>16</sup> Պ. Սևակ, Սայաթ–Նովա, Երևան, 1969 թ., էջ 15–16:

<sup>17</sup> Իդրար – խոստում:

<sup>18</sup> Գ. Լևոնյան, Երկեր, հայպետիրատ, Երևան, 1963, էջ 334:

<sup>19</sup> Թեջնիս – քառախաղով կազմված աշուղական ոտանավոր:

հիշյալ թեջնիսի առաջին տան երկրորդ՝ «Յասա րա է, հասա ջէ, հասասե» տողի վրա, տողը համարելով աղավաղված, նրա մեջ կամայական շտկումներ է մտցրել և հարմարեցրել մեր թվարկությանն ու դուրս բերել, որ եր իչը ծնվել է 1717 թ.:

Սայաթ–Նովայի խաղերի 1963 թ. ժողովածուի «ժանոթա րու–թյուններում» Մ. Յասրաթյանը այդ մասին րում է. «Ձևով ու բովանդակությամբ հետաքրքրական այս թեջնիսի թ տողը, անշուշտ, աղավաղված է Օհանի<sup>20</sup> կողմից, որովհետև նա չի իմացել և չի կռահել, որ այս տողում թաքնված է խաղը րելու տարեթիվը: Մեզ համար այլևս կասկածի տեղ չի մնում, որ այս տողը բնա րում եղել է հետևյալ ձևով. «Յասա Ռա է, հասա Չա ծա, հասա Սե», այսինքն (ՌՉԾԷ 1757 թվականին), և որովհետև նախավերջին տողում ասում է «Սայաթ–Նովա, տարիտ էլավ քառասուն», ուստի պետք է ընդունել, որ մեր եր իչը ծնվել է 1717 թվականին (սրա մասին ավելի հան ամանորեն րել ենք ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի 1943 թ. № 3 «Տեղեկա իր» օր անում»<sup>21</sup>:

Մենք, մանրագնին ծանոթանալով «Տեղեկա րում» եղած նյութին, եկանք այն հաստատ համոզման, որ Մ. Յասրաթյանը իրավացի է, երբ առաջարկում է խնդրո առարկա տողի «Յասա Ռաե» հատվածում «Ր»–ն փոխարինել «Ռ»–ով («Յասա Ռաե»), որի թվային արժեքը հավասար է 1000–ի, որովհետև խաղը րված է վրացատառ, իսկ վրացերենում «Ռ» տառ չկա: Սա հիմնավորվում է նաև նրանով, որ եր իչը թեջնիսի հաջորդ տան մեջ խոսում է այս հազարի մասին: Ինչ մնում է այն բանին, որ Յասրաթյանը թեջնիսի հիշյալ տողը համարում է աղավաղված և «Ջ»–ն փոխարինում է «Չածա»–ով ու «Սե»–ն «Է»–ով՝ ծածկա իրը հարմարեցնելով մեր թվարկությանը, դա, մեր կարծիքով, հիմնավորված չէ և ոչնչով չի արդարացվում, որովհետև նախ ընդունված կար ի համաձայն՝ ծածկա իրը պետք է որոնել ոչ թե միայն հիշյալ տողում, այլ ամբողջ խաղի մեջ, քանի որ եր իչը խաղի վերջում է ասում՝ «Սայաթ–Նովա, տարիտ էլավ քառասուն» և ոչ թե անմիջապես խնդրո առարկա տողից հետո, և երկրորդը՝ ոչ մի հիմք չկա պնդելու, որ Սայաթ–Նովան ծածկա իրը կազմել է մեր թվարկությամբ, որովհետև նա իր բոլոր խաղերը թվա րել է վրացական քրոնիկոնով: Այսպիսով՝ անհամոզիչ է նաև Մ. Յասրաթյանի վարկածը:

<sup>20</sup> Օհան – երգչի ավագ որդին: Այս թեջնիսը գտնվում է նրա կողմից կազմված Դավթարում, որը պահված է Լենինգրադի Ասիական թանգարանում:

<sup>21</sup> Սայաթ–Նովա, Խաղերի ժողովածու, էջ 249:

Բանասիրական իտությունների թեկնածու Ավ. Շահսուվարյանը առաջարկում է Սայաթ–Նովայի ծննդյան տարեթիվը համարել 1713–ը: Շահսուվարյանը իր վարկածի համար նույնպես հիմք է ընդունել հայերեն 51–րդ խաղի «Հասա Ռաե, հասա Ջե, հասա Սե» տողը, որի մեջ Հասարաթյանի օրինակով կամայական շտկումներ մտցնելով՝ առաջարկում է տողը կարդալ հետևյալ կերպ՝ «ա–1, ք–400 և ջ–3, ընդամենը՝ 404»<sup>22</sup>:

Ինչպես տեսնում ենք, Շահսուվարյանի վերծանման մեջ խնդրո առարկա տողից միայն «ջ»–ն է մնացել: Նման վերծանությունը շատ է հեռու իրականությունից: Շահսուվարյանը իր վարկածը հաստատելու համար բերում է նաև մի ուրիշ փաստարկ: Նա ձ տում է ապացուցել, որ եր չի խաղերում բազմաթիվ ան ան կրկնվող «Ս» և «Ա» տառերի զու որդման մեջ (ինչպես, օրինակ՝ Սե ու այիբ մասանին» (Հ–11) տողում) Սայաթ–Նովան իբր ծածկա րել է իր ծննդյան թիվը (Սե–ն դիտելով արաբական այբուբենի երրորդ տառը՝ Թ–400–ի և Ա–1, ընդամենը՝ 401)»: Սա նույնպես թեական ենթադրություն է, որովհետև Սայաթ–Նովայի այս տառերը հիշատակված խաղերում ծննդյան մասին ակնարկի նույնիսկ չեն հետքեր չկան: Չնայած այս ամենին՝ Շահսուվարյանը եզրակացնում է. «Այստեղից էլ պարզվում է, որ Սայաթ–Նովան, ծնված լինելով Քրոնիկոնի 401–ին, քառասուն տարեկան հասակում, այսինքն՝ 441–ին (1753 թ.) բաժանվել է իր սիրուհուց...»<sup>23</sup>:

Մեր կարծիքով, հարկ չկա նորից փաստեր բերել՝ ապացուցելու համար, որ Շահսուվարյանի վերծանությունները համոզիչ չեն, որովհետև մենք վերևում տեսանք, որ Սայաթ–Նովան չէր կարող 1713 թ. ծնված լինել:

Հայերեն 51–րդ խաղի նույնանման վերծանություն է կատարել նաև պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանը իր «Սայաթ–Նովայի «այբբեմըն» խաղի ծածկա րության վերծանությունը» հոդվածում և հան էլ է այն եզրակացությանը, որ «Սայաթ–Նովայի ծննդյան թվականը լինում է 1713»<sup>24</sup>:

Միայն այն փաստը, որ Սայաթ–Նովան չէր կարող ծնված լինել 1710–ական թվականներին, ցույց է տալիս, որ սխալ է նաև պրոֆեսորի վերծանությունը:

<sup>22</sup> «Երեկոյան Երևան», 1963, նո. 248, 18 հոկտեմբերի:

<sup>23</sup> Նույն տեղում:

<sup>24</sup> «Պատմա–բանասիրական հանդես», 1979 թ., նո. 3, էջ 207:

Պարույր Սևակը Սայաթ–Նովայի ծննդյան նոր թվական չի առաջարկում: Նա, ինչպես իր «Ե՞րբ է ծնվել Սայաթ–Նովան»<sup>25</sup> հոդվածում, այնպես էլ «Սայաթ–Նովա» մեծա ռուբյան մեջ ձ տում է բերել շուրջ 15 «օժանդակ ուրիշ փաստեր»<sup>26</sup> և ապացուցել, որ Կեկելիձեի վարկածը ճիշտ է, այսինքն՝ Սայաթ–Նովան ծնվել է 1722–ին:

Սևակի «առաջին փաստը» Կեկելիձեի վարկածի յուրովի մատուցումն է: **Առաջին փաստը**,— թում է նա,— արդեն արձանա ղված է. եթե Ախվերդյանն իր տրամաբանական դատումի մեջ սխալ թույլ չտար, հենց ինքը Սայաթ–Նովայի ծնունդը կհամարեր 1722 և ոչ թե 1712–ը: Մեկ ան ամ էլ հիշեցնելով՝ կրկնենք, որ Սայաթ–Նովան, իր իսկ վկայությամբ, «հայեվար ասիլ» է սկսել 30–ամյա հասակում, իսկ նրա հայերեն ասված առաջին խաղը ղված է 1752–ին, երբ ինքը արդեն 30 տարեկան էր: Ուրեմն և նա պետք է ծնված լինի 1752–ից 30 տարի առաջ՝ 1722–ին»<sup>27</sup>:

Մեզ այստեղ ուրիշ բան չի մնում ասելու, քան մենք էլ մեր հերթին հիշեցնելով՝ կրկնենք, որ Սայաթ–Նովայի ծանոթա ղուբյան «հայեվար ասիլը» վերաբերում է Դավթարի հայերեն խաղերի բաժնին և ոչ թե ինչ–որ առաջին խաղի, որը չ իտես որտեղից է հայտնվել սայաթնովա իտության մեջ (եր իչը այդ մասին նույնիսկ հեռավոր ակնարկ չի արել):

Ցավոք, Սևակը այնքան «իրավամբ և տրամաբանված»<sup>28</sup> է համարել Կեկելիձեի վարկածը, որ իր «պրպտումներում» ոչ թե ձ տել է բացատրել վարկածի իսկությունը, այլ հորինել է մեկ տասնյակից ավելի «կռվան»՝ հօ ուտ 1722–ի<sup>29</sup>:

Որպես մեր խոսքի ապացույց՝ բերենք մի օրինակ:

Մ. Հասրաթյանը, Սայաթ–Նովայի խաղերի ժողովածուի ծանոթա ղուբյուններում թուրքերեն 2–րդ խաղի «Հեյից Սայաթ–Նովան Վովին հասավ» տողին ծածկա իրը վերծանելիս թույլ տալով մի փոքրիկ վրիպակ, չի կարողանում հասնել դրական արդյունքի, ուստի անկեղծորեն խոստովանում է. «Եթե ընդունենք, որ եր իչը թվերի ծածկա իր է տվել և ումարենք (արաբական Հեյ և Վով տառերի ար–

<sup>25</sup> Տե՛ս «Պատմա–բանասիրական հանդես», 1966, նո. 2:

<sup>26</sup> Պ. Սևակ, Սայաթ–Նովա, էջ 15:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 18–19:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 15:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 77:

ժեքները — Յ. Ս.), կատացվի 14-դից չհասող ունար, եթե բազմապատկենք, 48-ը նույնպես ոչ մի արժեք չի ներկայացնում, որովհետև ոտանավորը ըված է 1755 թ.: Եթե տառերի այբուբենական հաջորդականությունը ունարենք (որը չի արվում)...»<sup>30</sup>, և այսպես կոնկրետ եզրակացության չ ալով՝ ըստ է. «Մտածել, թե աննպատակ է ըել այդ տառերը, թեկուզ որպես ըականություն, ըա խոության հասնելու սիմվոլիկ արտահայտություն, դժվար է»<sup>31</sup>:

Եվ ահա այս ծածկա իրը իր «Ե՞րբ է ծնվել Սայաթ-Նովան» հոդվածում վերծանում է նաև Պ. Սևակը՝ այն համարելով «Մի հույժ կարևոր ծածկա իր»<sup>32</sup>: Հոդվածում անդրադառնալով Մ. Հասրաթյանի վերոհիշյալ ծանոթա ըությանը՝ Սևակը ըստ է. «Այս դատողության մեջ ամեն ինչ ճիշտ է, բացի երկու մանրուքից, որոնցից առաջինը փակա ծված «որը չի արվում» նախադասությունն է: Իսկ ինչու՞ «չի արվում» և այն էլ ծածկա ըի բացելու՞ մեջ: Թե՞ «չի արվում» ընկ այն պատճառով, որ արդյունքը չի ստացվում 1717: Ուրեմն և փորձենք կան չառնել կես ճանապարհին...»<sup>33</sup>: Այսպիսով Սևակը, անտեսելով ծածկա ըության դարավոր կանոնները (և Մ. Հասրաթյանի տեղին դիտողությունը), ունարում է վերոհիշյալ տառերի հաջորդական համարները, հարմարեցնում 1722-ին և պնդում. «Միայն սրանով՝ այս մեկ հատիկ փաստով, կարելի է ապացուցած համարել, որ Սայաթ-Նովան ծնվել է 1722-ին, և դրա մասին խոսել այլևս ոչ թե իբրև վարկածի, այլ անժխտելի ճշմարտության»<sup>34</sup>: Բայց երբ նույն հանդեսի հաջորդ համարում մենք մեր «Ե՞րբ է ծնվել Սայաթ-Նովան» հոդվածում ապացուցեցինք, որ հիշյալ Հե-ն արաբական այբուբենի «26-րդ տառն է՝ 5 թվանշանի արժեքով»<sup>35</sup> և ոչ թե «6-րդ տառն է՝ 8-ի արժեքով», ինչպես սխալմամբ ենթադրել էր Մ. Հասրաթյանը, Սևակը, մեղադրելով մեծավաստակ իտնականին, տարիներ հետո իր մենա ըության մեջ ըստ է, որ իբր ինքը սխալ եզրակացության է «եկել՝ հավատալով Մ. Հասրաթյանին»<sup>36</sup> և բանավիճելով տողերիս հեղինակի հետ, հայտարարում է, որ այս դեպքում արդեն ծածկա ըության բան չկա»<sup>37</sup>:

<sup>30</sup> Սայաթ-Նովա, Խաղերի ժողովածու, էջ 271:

<sup>31</sup> Նույն տեղում:

<sup>32</sup> «Պատմա-բանասիրական հանդես», 1966, նո. 2, էջ 94:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 95:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 96:

<sup>35</sup> Նույն տեղում, նո. 3, էջ 125:

<sup>36</sup> Պարույր Սևակ, Սայաթ-Նովա, էջ 106:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 108:

Ճշմարտության դեմ մեղանշած չենք լինի, եթե ասենք, որ Սևակի բոլոր փաստերն ու կռվանները բերված են նույն սկզբունքով: Այսպես, օրինակ՝ Սևակը որպես երկրորդ փաստ է բերում եր չի «կենսա ռական» խաղի հետևյալ տողը. «Քսան տարուց, էշխի ընկած, լալ կծախեն սովդաքարին» (թ–67) և ապա եզրակացնում. «Սայաթ–Նովան ինքն է հաստատում, որ սկսել է աշուղությանը զբաղվել (այսինքն՝ «սովդաքարին լալ ծախել») 20–ամյա հասակից: Վերհիշենք, որ Սայաթ–Նովայի առաջին թվա ռած խաղը 1742–ին է: Ուրեմն 1742–ին նա եղել է 20 տարեկան, հետևաբար ծնվել է 1742–20–1722 թվականին»<sup>38</sup>: Եթե մենք էլ վերհիշենք, որ հիշյալ թվականը եր չի Դավթարի այն միակ և սխալ թվականն է, ապա համոզված կլինենք, թե որքանով է համոզիչ այդ փաստը: Կամ Սևակը որպես երրորդ փաստ է բերում եր չի նույն խաղի «Տասնինը տարեկանում ման եկա Չաբաշ–Յինդուստան» տողը և զուտ ճշմարտություն համարելով այն միան ամայն սխալ ենթադրությունը, որ իբր Սայաթ–Նովան Յնդկաստան է նացել՝ մասնակցելով Նադիր շահի հնդկական արշավանքներին, հայտնում է, թե Սայաթ–Նովան 1741 թվականին է մասնակցել այդ արշավանքին (երբ իբր եր իչը եղել է 19 տարեկան), բայց դեմ առնելով այն պատմական ճշմարտությանը, որ Նադիրի հնդկական արշավանքները վերջացել են 1739–ին, Սևակը, չ իտության մեջ մեղադրելով մեր մեծատաղանդ եր չին, հարմարեցնում է իր փաստը՝ ընելով այսպես. «Նադիրը 1741–43 թվականներին էլ վարում է մեկ այլ արշավանք՝ այս ան ամ դեպի Օման: Այս Օմանն էլ Սայաթ–Նովան կարող էր համարել «Չաբաշու Յինդուստան» և ամենայն իրավմամբ»<sup>39</sup>: Նման ձևով հարմարեցված են Սևակի մնացած փաստերը: Այդ բանը ավել կամ պակաս չափով կարող են նկատել բոլոր նրանք, ովքեր շատ թե քիչ չափով զբաղվել են Սայաթ–Նովայի կենսա ռության հարցերով: Օրինակ՝ Յ. Բախչինյանը, որը վերջերս իր «Սայաթ–Նովայի կենսա ռության երկու հարցի շուրջը»<sup>40</sup> հոդվածում թեն ձ տուն է «պաշտպանել և վերստին հաստատել երկու ճշմարտություն՝ Սայաթ–Նովան ծնվել է 1722 թ., և Սայաթ–Նովայի ճակատա ռական սերը եղել է արքայադուստր Աննան»<sup>41</sup>, տնում է, որ Սևակի փաստերից «4–5–ը համոզիչ չեն կամ ուղղակի ասած՝ սխալ են»<sup>42</sup>:

<sup>38</sup> Պարույր Սևակ, Սայաթ–Նովա, էջ 20:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 27:

<sup>40</sup> Տե՛ս «Քանքեր Երևանի համալսարանի», 1977, նո. 2:

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 173:

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 163:

Ցավոք, մենք տեղի սղության պատճառով չենք կարող այստեղ քննության առնել Սևակի բոլոր փաստերը՝ ապացուցելու համար, որ դրանք բոլորն էլ, մեղմ ասած, անհամոզիչ են: Բայց քանի որ Յ. Բախչինյանը ձ տուն է «վերստին հաստատել» այն «ճշմարտությունը», որ իբր թե «Սայաթ-Նովայի ճակատա րական սերը եղել է արքայադուստր Աննան» (սա Սևակի ամենակարևոր փաստարկն է) և հաշվի առնելով այն հան ամանքը, որ այդ անհիմն ենթադրությունը վաղուց ի վեր, որոշ իմաստով, փորձանք է դարձել սայաթնովա իտության լիսին, մենք ստիպված ենք այստեղ հան ամանորեն ապացուցել, որ ճշմարտությունը (եթե իրավամբ այն ճշմարտություն է) վերահաստատելու հարկ չունի:

Ամենքին հայտնի է, որ առայժմ Սայաթ-Նովայի կենսա րական փաստերի հիմնական աղբյուրը դարձյալ մնում են մեզ հասած նրա խաղերը, որոնց բառակազմերում հաճախակի հիշատակված «Անի» կամ «Անա» արտահայտությունները բանասերներից ենթադրել են տվել, որ մեր եր չի սիրեցյալի անունը Աննա է եղել: Բանասերներից ոմանք էլ ենթադրում են, որ նա արքայաքույրն է եղել, մինչդեռ այդ մասին խաղերում հիշատակության ան ամ նշույլ չկա:

Ով շատ թե քիչ ծանոթ է Սայաթ-Նովայի խաղերին, չի կարող չնկատել, որ եթե նույնիսկ մեր եր չի սիրեցյալի անունը Աննա է եղել, բայց և այնպես նա արքայաքույր և արքայադուստր Աննան չէ:

Ահա թե ինչու:

1. Սայաթ-Նովան, իր հայերեն 31-րդ խաղում դիմելով իր սիրեցյալին, րում է.

*Բուժա Շահասանամըս դուն իս, էլ չունիմ օջով աչքի լուս:*

Նույն միտքը կրկնում է թուրքերեն 2-րդ խաղում:

*Բուժես դուն իս ընգի փալի<sup>43</sup> արանքում:*

Որ իր բուրբան աստվածատուր է, այդ էլ իմանում ենք թուրքերեն 33-րդ խաղի վերջին տողերից.

*Քիզ իմ սիրում, կանց կու սիրեր Շահասանամ.*

*Բուժեն փիրից<sup>44</sup> առավ ջամ<sup>45</sup> Սայաթ-Նովեն:*

---

<sup>43</sup> Փալ – ճակատագիր, բախտ:

<sup>44</sup> Փիր – սուրբ:

<sup>45</sup> Ջամ – գավաթ:

Ինչպես տեսնում ենք, եր իչը իր սիրեցյալին անվանում է **բուքա**: Ժամանակին բուքա էր կոչվում այն սերը, որն, ըստ ավանդության, նախախնամության կողմից երազով տրվում էր դեռևս կույս երիտասարդներին: Հիշյալ խաղերը ըված են 1750–ական թվականներին: Մինչդեռ հայտնի է, որ արքայաքույր Աննան 1744 թվականից ամուսնացած էր իշխան Դմիտրի Օրբելիանու հետ և ուներ երկու տղա՝ ծնված 1745 և 1747 թվականներին: Հետևաբար արքայադուստր, արքայաքույր, իշխանուհի, երկու երեխայի մայր Աննան այդ տարիներին **բուքա** լինել չէր կարող:

2. Եր չի հայերեն 8–րդ խաղը վերջանում է հետևյալ երկու տողով.

*Յար, քիզ վըրենն արք<sup>46</sup> ունենամ, մե լավ իխտիար<sup>47</sup> ունենամ՝  
Առնուամ, տանիմ մեջլիսներըն օսկեջրած սազի նման:*

Մի պահ մտովի պատկերացնենք, որ այս տողերը ուղղված են արքայադուստր և երկու տղայի մայր իշխանուհուն: Մեզ համար պարզ կդառնա, թե մենք որքան ենք «մեծարում» մեր հանճարեղ եր չին: Չէ՞ որ նա կարող էր այնքան արք ու իխտիար (իշխանություն և իրավունք) ունենալ մեծատոհմիկ մի իշխանուհու նկատմամբ, որ նույնիսկ հույս ունենար նրան իր հետ մեջլիսները ման տալ:

Այստեղ իրողությունն այն է, որ վերոհիշյալ տողերը ուղղված են չամուսնացած աղջկա: Այդ շատ պարզ երևում է վրացերեն 1–ին խաղի հետևյալ տողից, որտեղ եր իչը իր սիրեցյալին հայտնում է, թե.

*Բու ծնողիզ իմացիլ ին, վուր քի յար իմ, գիզի՞ս աջաբ:*

3. Այն միտքը, որ Սայաթ–Նովայի սիրեցյալը սկզբնական շրջանում ամուսնացած չի եղել, ապա հետո է ամուսնացել, կարմիր թելի պես անցնում է նրա խաղերի միջով: Եր չի 1754 թ. ըած հայերեն 22–րդ խաղից երևում է, որ նրա բուքա–յարը դոժել է իրենց սիրո պայմանը և ամուսնացել է ուրիշի հետ, որի համար էլ արժանացել է եր չի նզովքին:

*Հում կաթնակիր–Աթամի գաթ<sup>48</sup>,  
Նալաթ<sup>49</sup> քու էյթիբարին<sup>50</sup>.*

<sup>46</sup> Արք – իշխանություն:

<sup>47</sup> Իխտիար – իրավունք:

<sup>48</sup> Չաթ – ժառանգ, զավակ:

<sup>49</sup> Նալաթ – անեծք:

<sup>50</sup> Էյթիբար – վստահություն:



*Իղըրամեղ շուտ անցկացար, ու՞ր է յարասուն տարին:*

Այս մտքի ապացույցը մեկ տարի հետո ըված հայերեն 25–րդ խաղի հետևյալ տողն է.

*Քու զաթըն քու նման կուլի, կըշտիտ տունիս օսկե բարուր:*

Յիշեցնենք, որ 1765 թ. արքայադուստր Աննան «օսկե բարուր» չուներ:

4. Սայաթ–Նովայի խաղերից երևում է, որ նրա սիրեցյալը ոչ թե սիրուհի է, այլ բութա է՝ կույս աղջիկ, որի հետ մեր եր իչը ամուսնանալու ակնկալություն է ունեցել: Նա վրացերեն 18–րդ խաղում ըում է.

*Էսքան «չէ» խոսք չէ ունեցի օչով իր դիլդարի<sup>51</sup> համա...*

*Քի մող քանի մարթ իմ զրգի Հնդու ղալամքարի<sup>52</sup> համա:*

Սա խնամախոսության ակնարկ է: Այժմ էլ մտովի պատկերացրեք, թե ինչպես մեր եր իչը բազմաթիվ մարդիկ է ուղարկել իշխան Օրբելիանու տունը՝ նրա հար արժան տիկնոջ «չէ»–ն «հա»–ով փոխելու համար...

5. Թուրքերեն 38–րդ խաղում իր ուխտագանջ յարից վշտացած եր իչը ըում է.

*Մե ազնիվ յար չիմ գթնում էս աշխարիս,*

*Էնդու համա հա կանչում իմ հարա յիս,*

*Հոր չիմ փորիլ, վուր ընգնիմ էդ հոր յիս,*

*Կըրակ էլ տաս, ճըշմարիտին մահ չը կա:*

Յարկ կա՞ այս տողերը կարդալուց հետո հավատալ այն մտքին, թե ազնվության և ճշմարտության ջատա ով Սայաթ–Նովան, որի համար հոր փորիլը խորթ է, անընդհատ հարականչելով, անազնվության մեջ է մեղադրել երկու երեխայի մայր արքայադուստր–իշխանուհուն այն բանի համար, որ իբր թե վերջինս «ազնվաբար» չի սիրել մեր եր չին:

Նման բազմաթիվ փաստեր կարելի է բերել և ապացուցել, որ մեր սիրելի ուսանի սիրո էակը արքայադուստր Աննան չի եղել: Վերջապես հարց է առաջանում՝ մի՞թե Սայաթ–Նովան, որի ամբողջ ստեղ–

<sup>51</sup> Դիլդար – սիրահար:

<sup>52</sup> Դալամքար – բանվածազարդ թաշկինակ:

ծա ործութիւնների ուղնուծուծն այն է, թե՛ «Հայա<sup>53</sup> սիրե, աղաթ<sup>54</sup> սիրե, ար<sup>55</sup> սիրե» (հ. 16), և որը շատ խիստ կերպով պահանջում է. «Յենց բան արա մարթ վըրես չը ծիծաղի» (հ. 16), հանկարծ այնպես է սիրահարվել երկու երեխայի մայր իշխանուհուն, որ կորցնելով ինքնասիրութիւնն ու ամոթը՝ թուրքերեն 66-րդ խաղում դիմում է Աստծուն, թե՛ «Մեռնիմ արթար Քարամաթիտ<sup>56</sup>, կիմքում մենակ ինձ մի թող»:

Ի՞նչ է, իշխանի կինը պետք է ամուսնանա՞ր նրա հետ: Եմթադրել, թե Սայաթ-Նովան Աստծուց ապօրինի սեր է խնդրում, որ «կիմքում մենակ» չմնա, անմտութիւն է»: Այն էլ այն Սայաթ-Նովան, որ թուրքերեն խաղերից մեկում (49) ասում է.

*«Սայաթ-Նովեն ինքը Հայ է՝  
Իր Հավատքին ամուր կանգնած»:*

Եվ այդ «հավատք»-ը ոչ այլ ինչ է, եթե ոչ քրիստոնեական կրոնի հավատալիք, որը դարեր շարունակ սրբապղծութիւն է համարել ապօրինի սերը: Արժե՞ ենթադրել, որ Սայաթ-Նովան չ իտեր այդ «հավատք»-ի կանոնները: Իհարկե ոչ: Սայաթ-Նովայի մի շարք խաղերը և հետա այլում նրա կրոնավոր դառնալու փաստը վկայում են, որ նա շատ լավ ծանոթ էր այդ «հավատք»-ին:

Եթե այս ամենին ավելացնենք թուրքերեն 27-րդ խաղի հետևյալ երկտողի իմաստը, ապա ամեն ինչ պարզ կդառնա.

*«Մե գուզիմ, թե ուրիշ յարի թուշ<sup>57</sup> ըլիմ,  
Վախում իմ, թե արարքըն բաս<sup>58</sup> գա, գնա...»*

Այս ամենը ակիս է ապացուցելու այն, որ Սայաթ-Նովայի սիրեցյալը արքայադուստր Աննան չի եղել:

Այժմ անդրադառնանք Պ. Սևակի այն վարկածին, ըստ որի՝ իբր Սայաթ-Նովան իր հայերեն 57-րդ խաղի «Ինձ ու իմ սիրեկան յարին մե տարի բերած իտենանք» տողով հայտնում է, թե՛ «իմացեք, որ ես

<sup>53</sup> Հայա – ամոթ, պատկառանք

<sup>54</sup> Աղաթ – համեստություն, բարեկրթություն:

<sup>55</sup> Ար – ամոթ, ինքնասիրություն:

<sup>56</sup> Քարամաթ – գթարտություն, ազնվություն:

<sup>57</sup> Թուշ ըլել – հանդիպել:

<sup>58</sup> Բաս – գրույց (այստեղ՝ բամբասանք):

ու իմ սիրեկան յարը ծնվել ենք միևնույն տարեթվին<sup>59</sup>», և քանի որ այդ սիրեկան յարն էլ արքայաքույր Աննան է, որը ծնվել է... 1722-ին»<sup>60</sup>, ուրեմն մեր եր իչը 1722 թ. ծնված է:

Յ. Բախչինյանը թող չմեղանա, եթե մենք հենց սկզբից նրան հիասթափեցնենք ( ուցե և սթափեցնենք) այն ճշմարտությամբ, որ այդ տողը Սայաթ-Նովայի՝ մեզ հասած Դավթարի աղավաղված բազմաթիվ տողերից մեկն է, որն իր իսկական բնա թու՛մ այլ իմաստ ու բովանդակություն է ունեցել:

Պ. Սևակը այդ տողի մեկնաբանությունը սկսում է հետևյալ հետաքրքիր մտքով. «Սայաթնովա ետներից (թե՛ բանասիրական, թե՛ րականա իտական հարցերով զբաղվողներից) ոչ ոք ուշք չի դարձրել Սայաթ-Նովայի մի տողի վրա, որն ունի, ինչպես կտեսնենք, նաև կենսա րական արժեք: Առաջինը և միակը էս. Սար սյանն է, որ այդ տողը մեջ է բերել րականա իտաբար և հենց այդ պահին էլ նկատել տողի դիմադրողականությունը՝ դյուրին չմեկնաբանվելու իմաստով...»<sup>61</sup>» (ընդ ծու՛մը մերն է — Յ. Ս.):

Այո՛, տողը իրավամբ *դիմադրողականություն* ունի և ոչ միայն դյուրին չի մեկնաբանվում, այլև սխալ է քերականական տեսակետից: Եթե իսկապես տողը ղված է այն իմաստով, ինչ իմաստով բացատրում է Պ. Սևակը, ապա այն պետք է ղված լիներ՝ «Ինձ ու իմ սիրեկան յարին մե տարում բերած իտե՛նաք» և ոչ թե «Մե տարի բերած իտե՛նանք» անիմաստ արտահայտությամբ...

Ցավոք սրտի, Պ. Սևակը ժամանակին տողի այս «դիմադրողականությունը» հաղթահարելու փորձ չի կատարել և իր վարկածում հան ել է սխալ հետևությունների: Իհարկե, դա մեծ մեղք չէ. ամեն մի հետազոտող կարող է սխալվել: Այստեղ վտան ավորն այն է, որ Յ. Բախչինյանը առանց հետազոտության ու լրացուցիչ փաստերի այն վերստին մատուցում է իբրև անհերքելի ճշմարտություն...

Փորձենք բացահայտել տողի դիմադրողականության պատճառը:

Բացի այն, որ տողը քերականապես ճիշտ չէ, այն իր մտքով ու տրամադրությամբ չի կապվում ո՛չ իրեն հաջորդող տողի և ո՛չ էլ ամբողջ խաղի մտքի հետ: Նույնիսկ հաջորդ տողը ոչ միայն չի կապվում այս տողի մտքի հետ, այլև հակասում է նրան:

<sup>59</sup> Պ. Սևակ, Սայաթ-Նովա, էջ 37:

<sup>60</sup> Պ. Սևակ, Սայաթ-Նովա, էջ 64:

<sup>61</sup> Նույն տեղում, էջ 36:

Ահա այդ հաջորդը.

*Ախ քաշելեն սրտիս մեջն արունն մերած գիտենաք:*

Ի՞նչ մի արտառոց բան է սիրեցյալին հասակակից լինելը, որ եր չի սրտում «արունն մերած» լինի, դեռ ավելի՞ն՝ նույն խաղի վերջում եր իչը թում է.

*Ումբըս հրազի պես գընաց՝ ծառըս չըխերած գիտենաք:*

Սեր կարծիքով, եթե Պ. Սևակը իր ուսումնասիրությունների ընթացքում իտական համառություն ցուցաբերեր, շատ համ իստ կնկատեր, որ «դիմադրող» տողում ինչ–որ բան իր տեղում չէ, որ ինչ–որ մեկի (հավանաբար՝ խաղի Դավթարում թողի կամ արտա թողի) անփութության պատճառով հիշյալ տողում մեր եր չին այնքան մաշող «դար»–ին փոխարինել է խաղի մտքի հետ ոչնչով չառնվող «տարի»–ն: Տողը բնա թում եղել է.

*Ինձ ու իմ սիրեկան յարին մե դարի բերած գիտենաք:*

Որը նշանակում է՝ ինձ ու իմ սիրեկան յարին միննույն վշտի մատնած իտենաք:

Այո՛, այդ դարի (վշտի) ձեռքից է, որ եր չի կյանքը «երազի պես անցավ», նրա պատճառով է եր չի սրտում արյունն «մերած»:

Ընթերցողը եր չի խաղերում այս դարին (որը հայերեն *դառն* բառն է՝ օ տա ործված վշտի իմաստով<sup>62</sup>) հաճախ կհանդիպի:

Եթե եր իչը հայերեն 20–րդ խաղում ասում է.

*Աջաբ վունց դիմանամ յիս էսչափ դարին  
Աչկեմես արտասունք դուս գուքա՝ արին  
Օրըն իր շարաթով կարոտ իմ յարին...*

Ապա հայերեն 23–րդ խաղում վկայում է, որ իր սիրեցյալը նույնպես մատնված է միննույն վշտին, որովհետև վերջինս, դիմելով եր - չին, ասում է.

*Քու դարդըն՝<sup>63</sup> ինձի պառվեցուց, ումըն ասիմ, Սայա՛թ–Նովա:*

<sup>62</sup> Տե՛ս Հ. Սևոյանի «Սայաթ–Նովայի մի խաղի երեք բառը», «Ավանգարդ», 1963, օգոստոսի 8:

<sup>63</sup> Դարդ – վիշտ:

Ուրեմն եր իչը իրավունք ունի բողոքելու, որ ինքն ու իր սիրեցյալը միևնույն *դարին* են մատնված: Մենք կբավարարվեինք այսբանով, եթե չլիներ այս բանն հաստատող մի ավելի զորեղ փաստ:

*Դար* բառը եր իչը իտակցաբար այնպես է դասավորել խնդրո առարկա խաղում (առաջին, միջին և վերջին տների մեջ), որ համա՝ չափություն է ստեղծվել (խաղն ունի 5 տուն): Ահա այդ տողերը.

*Ինձ ու իմ սիրեկան յարին մե դարի բերած գիտենաք...*

*Ափսոսալու հազար ափսուս, յիս էս դադա<sup>64</sup> դար ունենամ...*

*Ով տեսնում է, էս է ասում. «Վայ քո դարին, Սայաթ–Նովա...»:*

Այս բանը կարելի էր պատահականություն համարել, եթե հիշյալ խաղը չունենար իր «զույ ը», որը իտակցաբար Դավթարում ըված է այս խաղի «դիմացը» և, բարեբախտաբար, առանց վրիպակի, այսինքն՝ Դավթարի 126–րդ էջում (խնդրո առարկա խաղը 127–ուն է): Եվ դա հայերեն 33 խաղն է, որը ըված է նույն կառուցվածքով, ինչ որ իր «Յատը» (ինչպես կասեր եր իչը): Այստեղ էլ *դարը* ըված է առաջին, միջին և վերջին տներում (այս խաղը նույնպես 5 տուն ունի):

Ահա դրանք.

*Վուչինչ դարով, չըլավացավ՝ մըհլամը<sup>65</sup> հիդ<sup>66</sup> յարին<sup>67</sup> մընաց...*

*Վայ քու դարին, դարիբ, բըլբուլ, վուր լեշըա<sup>68</sup> չափարին<sup>69</sup> մընաց–  
Մե մարթ չը կեր՝ ազատիլ էր, Սայաթ–Նովեն դարին մընաց:*

Եր չի՝ Դավթարում իրար դիմաց ըված այս երկու խաղի նմանությունը փաստարկվում է նաև նրանով, որ երկուսն էլ ունեն միևնույն «Էս էլ դիբա ու էն իդունիայի ձենով...» ծանոթա թությունը:

Այսպիսով՝ նրանց ոչ միայն կառուցվածքը, այլև երաժշտությունն էլ նույնն է:

Բավական է համեմատել այս երկու խաղերի առաջին երկու տողերը, որպեսզի պարզ երևա, որ վերծանվող տողում ըված է եղել *դարի*, ոչ թե *տարի*.

<sup>64</sup> Ղադա – չանի:

<sup>65</sup> Մրիլամ – սպեղանի:

<sup>66</sup> Հիդ – վատված:

<sup>67</sup> Յարա – վերք:

<sup>68</sup> Լեշ – դիակ:

<sup>69</sup> Չափար – ցանկապատ:

Առաջին խաղը սկսվում է այսպես.

*Ինձ ու իմ սիրեկան յարին մե դարի բերած զխոնհաք.  
Ախ քաշելեն սրբտիս մեջըն արունն մերած զխոնհաք...*

Երկրորդը՝ հետևյալ կերպ.

*Էնդուր աչկըս չէ ցամաքում՝ սրբտիս մեջըն արին մնաց.  
Վուչինչ դարով չը լավացավ՝ մըհլամըս հիդ յարին մնաց:*

Սրանով էլ վերանում է հայերեն 57-րդ խաղի առաջին տողի «դի-նադրողականությունը» և մերժվում այն վարկածը, որ Սայաթ-Նո-վան ու իր «սիրեկան յարը ծնվել են մինևույն տարեթվին», այն էլ՝ 1722-ին:

\* \* \*

Մեր կողմից կատարված պրպտումները 1960-ական թվական-ներին բերեցին այն եզրակացության, որ Սայաթ-Նովան ծնվել է 1726-ին: Այդ մասին մենք 1966 թ. հանդես եկանք «ՀԽՍՀ ԳԱ» «Պատմա-բանասիրական հանդեսի» 2-րդ համարում՝ «Ե՞րբ է ծնվել Սայաթ-Նովան» հոդվածով, որն այստեղ կվերաշարադրենք աննշան խմբա թումով:

Թեև մեր պրպտումներում նույնպես կան որոշ ենթադրություն-ներ, բայց և այնպես դրանց կողքին կան նաև նոր ու անժխտելի փաստեր, որոնք, անկասկած, նոր լույս են սփռում մեր անգու ական եր չի մութ կենսա թության վրա:

Մենք ևս մեր պրպտումները սկսում ենք մեզ արդեն ծանոթ հա-յերեն 4-րդ խաղի ծանոթա թությունից.

*Էս զիվանի (ն)<sup>70</sup> խիստ լավն է, ովոր սովրի օղորմի ասե:  
Հիմի գուզիմ թե հայեվար ասիմ:*

«Ամեն Աստված, յիս-մըղդըսու<sup>71</sup> վուրթի Արուֆինս, պստուց ին-չոր յարասուն տարին լուխ դրի ամենան խաղին, ամա Սուրբ Կա-րապետի կարողութենով սովրեցա քամանչեն ու չոն ուրն ու (տ) ամբուրեն»:

<sup>70</sup> Գիվանի – խաղի տեսակ:

<sup>71</sup> Մղդուսի – մահտեսի:

Ինչպես տեսնում ենք, Սայաթ–Նովան ասում է, որ ինքը «Սուրբ Կարապետի կարողութենով» է երաժշտությունը սովորել: Այս միտքը նա օ տա ործել է նաև իր մի շարք խաղերում.

*Սայաթ–Նովեն կոսե փիրիցն իմ առի... (Թ–2)*

*Փիրից շընուրք առա, սազըս անծեցի... (Թ–32)*

*Էս էշխըն ինձ փիրն է տվի... (Թ–44)*

*Ձեռըս ջանգլու–փիրին<sup>72</sup> կապածի պես է... (Թ–43)*

Այս տողերի «փիր»–ը կամ «ջան լու–փիր»–ը Սուրբ Կարապետն է, որի «կարողութենով» Արուֆինը (Սայաթ–Նովան) եր իչ է դարձել:

Ախվերոյանը այս մասին հետևյալն է րում. «Մեր վարպետ ջուլհակը երևի շատ վաղ է նկատում իր մեջ քերթողական շնորհքն, որ պատուց պաս պահելով լուխ է դնում ամենան խաղին ու Սուրբ Կարապետի կարողութունով սովորում է քամանչեն, չոն ուրն ու տամբուրեն»<sup>73</sup>:

Այստեղ Ախվերոյանը հեղինակի ծանոթա րությանը ավելացնում է նս երկու միտք, դրանք են «վարպետ ջուլհակը» և «պաս պահելով»:

Նախ տեսնենք, թե ինչու է Ախվերոյանը Սայաթ–Նովային ջուլհակ անվանում:

Եթե հաշվի չառնենք թուրքերեն 2–րդ խաղը, որ, ինչպես տեսանք, պատահական սխալով է վերա րվել 1742 թ., ապա Սայաթ–Նովայից մեզ հասած թվակիր խաղերից ամենաառաջինը նրա կենսա րական խաղն է (ա. 67), որը րված է 1750 թ.: Եր իչը մինչև իր 20 տարեկան հասակի վերաբերյալ տեղեկություններ պարունակող տողերը րել է ըստ տարիների, այնուհետև խաղը շարունակված է հն ամյակներով: Մինչև 25 տարվա մասին յոթ տները, առանց որևէ կասկածի, հեղինակի կենսա րական փաստերն են: Այս խաղում իր մանկության մասին Սայաթ–Նովան րում է.

*Ինը տարիս երբ որ անցավ, դեռ հայտնի չէր, թե ինչ էի.*

*Տասը տարեկան էլ դարձա, դեռ գիժ ու միժ կըրջեի...*

*Տասնըմեկըս էլ լրացավ, դեռ էնքան էլ խելոք չէի,*

*Տասնըերկու տարեկանում ինձ հանձնեցին ուստաքարին...*

<sup>72</sup> Փիր կամ ջանգլու փիր – արվեստի հովանավոր (այստեղ՝ Սուրբ Կարապետ):

<sup>73</sup> Գ. Ախվերոյան, «Գուսանք», 1852, էջ 5:

Առ այսօր զանազան ենթադրություններ կան այս «ուստաքարի» (վարպետ) մասին: Ախվերդյանը ենթադրում է, որ Սայաթ–Նովայի ապրած ժամանակ թբիլիսիում զար ացած է եղել ջուլիակությունը, ուստի մանուկ Արուօինհի հանձնել են ջուլիակի մոտ սովորելու:

Այս ենթադրությունը զուրկ է իրական հիմքից: Չէ՞ որ այս ձևով կարելի է ենթադրել նաև, որ Սայաթ–Նովայի հայրն ունեցել է մի ծանոթ, որը եղել է շատ լավ դերձակ կամ կոշկակար, կամ պայտար, կամ որմնադիր, կամ... որ արհեստը կուզեք վերցրեք, որին նա հանձնել է իր որդուն արհեստ սովորելու...

Ուրեմն, եթե Սայաթ–Նովան ջուլիակ չի եղել, ապա ո՞վ է եղել:

Այս հարցին շատ պարզ պատասխանում է ինքը՝ Սայաթ–Նովան: Եվ, չ իտես ինչու, մինչև այսօր բանասերներն անտեսել են այս պատասխանը: Այդ պատասխանը մեզ արդեն ծանոթ հայերեն 4–րդ խաղի ծանոթա րությունն է, որտեղ ասված է. «... Ամեն աստված, յիսմըղըսու վուրթի Արուօինս պըստուց ինչոր յարասուն տարին լուխ դրի ամենան խաղին, ամա Սուրբ Կարապետի կարողութենով սովրեցա քամանչեն, չոն ուրն ու տամբուրեն»:

Ինչպես տեսնում ենք, Սայաթ–Նովան ասում է, որ ինքը «պըստուց» (փոքր հասակից) է սկսել սովորել երաժշտությունը (« լուխ դրի ամենան խաղին»): Այդ մասին են վկայում նաև թուրքերեն 47–րդ խաղի հետևյալ տողերը.

*Յիս չիմացա, վուռնց փաթաթվեց աշուղութինն իմ գլխին.  
Ինձ գիվանա Մեջլում շինից, յիդ գըրից իմ կրակին.  
Իննըն ամիս աճեցրիլ է, լույս դառնա իմ մոր հոքին,  
Բալբամ կաթի հիդ իմ ծըծի, էն շիրիս իմ մահ գալի:*

Ուրեմն եր իչը ի ծնե երաժշտական ընդունակություն է ունեցել, ուստի անկասկած է, որ նա 12 տարեկան հասակից աշակերտել է երաժիշտ վարպետի (ուստաքարի), որի մասին ինքը կոնկրետ չի նշում: Սակայն նա մի ուրիշ բան է նշում, այն է՝ իր ծանոթա րության վերջում եր իչը րում է, որ երաժշտությունը սովորել է «պըստուց» և այն էլ՝ «Սուրբ Կարապետի կարողութենով», և այդ միտքը, ինչպես տեսանք, նա օ տա ործում է իր բազմաթիվ խաղերում:

Սակայն ո՞վ է Սուրբ Կարապետը, որի զորությամբ մեր եր իչը երաժշտություն է սովորել, կամ ի՞նչ է նշանակում, թե նա այդ ամենը արել է «պաս պահելով»: Այս հարցերը սերտ կերպով առնչվում են մեր եր չի կենսա րության հետ, և, բարեբախտաբար, այդ հարցերի



պատասխանը կողմնակիորեն տվել է հայ մեծ վիպասան Բաֆֆին: Ահա այն. «Մենք միտք չունինք թելու վանքերի հրաշա ործությունների մասին, միայն չէր կարելի մի քանի խոսք չասել Մշո դաշտի մեջ տնված Գլակա Սուրբ Կարապետ վանքի մասին: Յուր հրաշա ործ գործություններով հայոց մեջ մեծ համբավ ունի այս վանքը: Հայոց երիշ «աշըղները» ռամկաբանորեն կոչում են այդ վանքը *Մուրատատու*<sup>74</sup> Ջան լի Սուլթան Սուրբ Կարապետ... Աշուղները համարում են նրան իրենց քանքարի մուսան. նրանցից ոչ միայն համարձակություն չունեն սազ վեր առնելու և մեյդան (հրապարակ, հանդես) դուրս ալու, մինչև նացած չլիներ այս վանքը և երազի մեջ ստացած չլիներ Սուրբ Կարապետի ձեռքից մի ավաթ էշխի (աշխույժ) ըմպելի, և մինչև նրա սազը օրհնած չլիներ վանքի վանահայրը: Նրա դուռը սիրով դիմում էին իրենց արհեստը կատարելա ործելու ոչ միայն լարախաղացներ, ըմբիշներ և տեսակ-տեսակ նվա ածուներ, ոչ միայն հայ, այլև թուրք և պարսիկներ: Կանանց ար ելվում էր այդ վանքը նալ, որովհետև Սուրբ Հովհաննու (Սուրբ Կարապետի. ըստ ավանդության նա ուներ յոթ անուն — Հ. Ս.) լխատման մի տափոտ կին է պատճառը եղել...

Ամեն մարդ, որ ուխտել էր Սուրբ Կարապետ նալու, պետք է յոթ տարի շարունակ՝ Հո ա ալուստից մինչև Վարդավառ, յոթ շաբաթ պաս պահե, որ արժանանա նրա դուռն նալուն...»<sup>75</sup>:

Որ Սայաթ-Նովան պաս է պահել և Սուրբ Կարապետի վանքը ուխտ է նացել, դա փաստ է: Նա ինքն այդ մասին թում է.

*Փիրն ինձ լսից ու տիղ տըվից: Էշխըս՝ տվածն ուստազի*<sup>76</sup>:  
*Հասս դուռն ճշմարտության, խմեցի ես սուրբ գինին... (Թ. 59)*

Ավանդությունն ասում է նաև, որ Սուրբ Կարապետի ուխտավորները իրենց նպատակին (մուրատին) հասնելու համար, պաս պահելուց և ուխտ նալուց բացի, ուխտում էին մինչև իրենց մի որոշակի հասակը չմերձեցնալ կնոջ և, կուսական կյանք վարելով, կատարելա ործել իրենց արվեստը, և այդ ուխտը դառնում է նրանց համար անդրժելի օրենք:

Սայաթ-Նովայի համար ուխտի տարիները երեսունն են: Դա պատահական թիվ չի եղել: Երեսուն տարիները, ըստ ավետարանական ավանդույթի, եր չի արվեստի հովանավոր սրբի՝ Չան լու փիրի

<sup>74</sup> Մուրատատու (մուրազատու) – նպատակին հասցնող:

<sup>75</sup> Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 1, 1962, էջ 81–82:

<sup>76</sup> Ուստադ – վարպետ:

(Սուրբ Կարապետի) ճ նության տարիներն են եղել: Այդ տարիների մասին Սայաթ–Նովան մեծ դրվատանքով է խոսում իր «Մշա տուլթան տուրի Կարապիտ...» խաղում: Եր իչը Սուրբ Կարապետի բազմաթիվ շնորհների ու բարենասնությունների շարքում է դասում նաև այն, որ նա երեսուն տարի ճ նել է. «Երեսուն ամ ի մեջ այրիա վասն աշխարհի աղոթեցիր...»,— իր հովանավորին փառաբանում է ուսանը, որի համար էլ. «...թա ու պարծանըս կուսանաց...»,— ասում է նա:

Յնց այս է եղել եր չի ու իր սիրո էակի պայմանական նշանը, որ երբ լրանա Սայաթ–Նովայի 30 տարին, նրանք կամուսնանան: Եվ սա է այն « յ ա թ ա ս ու ն »-ը, որը, դրժվելով եր չի ուխտա նաց յարի կողմից, եր չին ստիպել է, որ նա իր բազմաթիվ խաղերում ավե որիկ կերպով ակնարկի այդ մասին.

*Կորցըրեցի յարըս՝ խելքից զբզվեցիր...*

*Յարսուն տարվա կինքըդ մահուն տրվեցիր,*

*Խելքըս գլխիս պահիր դուն, Սայաթ–Նովա, (թ–19)*

*Ես Սայաթ–Նովան եմ, կարգացել եմ ԼԱՄ<sup>77</sup>... (Ռավթար էջ 25)*

և այլն:

Սայաթ–Նովան, 1754 թ. ըստ իր հայերեն խաղերից մեկում (22) դիմելով իր ուխտա նաց յարին, ասում է.

*Սայաթ–Նովեն ասաց. զալում<sup>78</sup>, աչկըս լալիս է արին,*

*Հում կաթնակիր–Աթամի զաթ<sup>79</sup>, նալաթ քու էյթիբարին,*

*Իղրարեմեն շուտ անցկացար, ու՞ր է յարասուն տարին:*

(Ընթերցողը հիշում է, որ սա այն տողն է, որից Գ. Լևոնյանը դուրս է բերել իր ենթադրությունը):

Դատելով «Իղրարեմեն շուտ անցկացար, ո՞ւր է յարասուն տարին» տողի մտքից՝ հան ում ենք այն հաստատ համոզմանը, որ պայմանավորված 30 տարին 1754 թ. դեռևս չէր լրացել, որովհետև եր իչը ասում է, որ խոստումիցդ (իղրարեմեն) շուտ անցկացար, չհասցրիր մինչև խոստման ժամկետը: Ասելով «Ու՞ր է յարասուն տարին»՝ պետք է հասկանալ՝ ինչու՞ չհասցրիր, ինչու՞ չլրացրիր 30 տարին, կամ ինչու՞ չսպասեցիր, մինչև որ այն լրանար:

<sup>77</sup> Լամ – արաբական այբուբենի «Լ» տառը, որի թվային արժեքը հավասար է 30–ի:

<sup>78</sup> Չուլում – չար:

<sup>79</sup> Աթամի գաթ – աղամորդի:

Իսկ թե որքան էր մնում, որ լրանար «յարասուն տարին», այդ մասին եր իչը շատ պարզ ակնարկում է նույն խաղի II տան մեջ.

*Վուր բըլբուլին (վարթըն խաբե աբա) խարին<sup>80</sup> թամամե (լրիվ է).  
Ումնոր կանց միգի լավ սիրիս Աստված չարին թամամե (լրացնի).  
Դիդարիտ<sup>81</sup> կարոտ մընացի – է ը կ ու տարին թամամե (լրացրու):*

Այսպիսով՝ եր չի սիրածը պայմանը խախտել է «երկու» տարով, այդ պատճառով էլ եր իչը պահանջում է, որ նա «երկու» տարին թամամե (երկու տարին լրացնի):

Ուրեմն, եթե 1754 թ. Սայաթ–Նովայի 30 տարին լրանալու համար մնում է 2 տարի, ապա նա այդ ժամանակ 28 տարեկան է եղել, այսինքն՝ նա ծնվել է 1726 թվականին (1754 – 28 = 1726):

Որ Սայաթ–Նովան չէր կարող ավելի վաղ ամուսնանալ, քան կլրանար իր 30 տարին, այդ մասին բազմաթիվ ան ան հիշատակված է նրա խաղերում: Այդ բանը առավել ցայտուն երևում է 1758 թ. րած հայերեն 33–րդ խաղում.

*Ով վաղ գընաց վարթըն քաղից, չասին, թե պիտկ է բըլբուլին,  
Վայ քու դարին<sup>82</sup>, դարիբ բըլբուլ, վուր լեչըտ<sup>83</sup> չափարին<sup>84</sup> մընաց:*

Չարք է առաջանում՝ այսքանը բավակա՞ն է, որպեսզի հաստատ համոզվենք, որ Սայաթ–Նովան ծնվել է 1726 թ.: Դժվար կլինի այս հարցին կոնկրետ պատասխան տալ, եթե չուսումնասիրենք նրա բազմաթիվ սքանչելի խաղերը, որոնց մեջ այնքան առատաձեռնորեն շաղ են տրված եր չի կենսա թուրքյան մար արտախեցիները:

Այժմ փորձենք վերծանել եր չի ծննդյան տարեթիվը պարունակող մի քանի ծածկա րեր:

**Ա.** Սայաթ–Նովայի՝ մեզ հասած ձեռա իր Դավթարի սկզբում րված են թուրքերեն, ապա ն հայերեն խաղերը:

Թուրքերեն խաղերից ամենավերջինը (77) ունի հետևյալ կար ի ծանոթա թուրքում. «Էս եր ը ալիֆլամա–դարահեջա է, շատ լավն է, Արութինի ասած՝ ով որ սովորի, օղորմի ասի, րված է մարտի 4–ին, քրոնիկոնի 443–ին (1755 թ.):»:

<sup>80</sup> Խար – վնասատու միջատ:

<sup>81</sup> Դիդար – տեք, պատկեր:

<sup>82</sup> Դար – դառնություն, վիշտ:

<sup>83</sup> Լեչ – դիակ:

<sup>84</sup> Չափար – ցանկապատ:

Սայաթ-Նովան այս խաղը թուրքերեն խաղերի վերջում է դասավորել հատուկ նպատակով. նրանում ծածկա ղված է իր տարիքը և խաղը ղելու տարեթիվը:

Ինչպես եր իչն է իր ծանոթա ղության մեջ ասում, այս խաղը «ալիֆլամա-ղարահեջա է», այսինքն՝ աշուղական խաղի (բանաստեղծության) մի ձև է, որը ղվում է նախ հերթականությանը թվարկելով որևէ այբուբենի տառերը, և ապա հան ավորումը կազմում է առանձին տառերի անվանումներով: Այս ալիֆլամա-ղարահեջա խաղում օ տա ործված է արաբական այբուբենը, որի վարպետորեն օ տա ործումը ապացույց է այն բանի, որ մեր բազմաբանքար ուսանը շատ լավ է իմացել արաբական այբուբենը:

Խաղը բաղկացած է 5 տնից, որտեղ հերթականությամբ օ տա ործված են արաբական այբուբենի բոլոր 28 տառերը, սակայն մենք բերում ենք խաղի միայն վերջին 2 տողը, որտեղ ծածկա ղված է եր - չի տարիքը և խաղը ղելու տարեթիվը.

*Հեթղան Սայաթ-Նովա ՎՈՎա վարանդի,  
ԼԱՄ ԱԼԻՖ ԼԱՄ Յ ու ԱԼԻՖ իքի Բե:*

Առաջին տողը հայերեն նշանակում է՝ Յե-ից Սայաթ-Նովան ՎոՎ-ին հ ա ս ա վ: Յե-ն և ՎՈՎ-ը արաբական այբուբենի նախավերջին երկու տառերն են: Յե-ն 26-րդ տառն է՝ 5 թվանշանի արժեքով, իսկ ՎՈՎ-ը 27-րդ տառն է՝ 6 թվանշանի արժեքով:

Տողի արտաքին (պարզ) միտքն այն է, որ եր իչը, թվարկելով արաբական այբուբենի նախորդ բոլոր տառերը, այժմ էլ Յե-ից ՎՈՎ-ին է հասել: Բայց այս «պարզ» հասկացողության տակ Սայաթ-Նովան ծածկա իր է կազմել, որի իմաստը հետևյալն է. 5-ին Սայաթ-Նովան 6 ան ամ հասավ, այսինքն՝ հասավ 30-ի: Իսկ այսօր 30-ը եր չի՝ մեզ արդեն հայտնի տարիքն է: Այստեղ պետք է ասել, որ մեր հանճարեղ ուսանը շատ մեծ վարպետությամբ «հ ա ս ա վ» բառը դասավորել է այնպես, որ նա վերաբերում է ոչ միայն Յե-ին ու ՎՈՎ-ին, այլև նրանց հաջորդող ամբողջ «ԼԱՄ ԱԼԻՖ ԼԱՄ Յ ու ԱԼԻՖ իքի Բե» տողին, որն ամբողջովին ծածկա իր է:

Ինչպես արդեն ասացինք, այս 30-ը եր չի տարիքն է, որին նա «հասել է» այս խաղը ղելիս: Սա անկասկած է, որովհետև «հասավ»-ին անմիջապես հաջորդում է մյուս տողի ԼԱՄ-ը, որը, ինչպես արդեն իտենք, հավասար է 30-ի: Սակայն մեզ համար մութ է մնում խաղը ղելու տարեթիվը...

«ԼԱՍ ԱԼԻՖ ԼԱՍ Յ ու ԱԼԻՖ իքի ՐԵ» տողում նախավերջին «իքի» (թուրքերեն՝ երկու) բառը վերաբերում է ինչպես իրեն հաջորդող ՐԵ-ին, այնպես էլ իրեն նախորդող ԱԼԻՖ-ին, որովհետև տողը բառային տեսքի բերելու համար հարկավոր է ԱԼԻՖ-ը նույնպես վերցնել երկու ան ամ:

Այսպիսով՝ «ԼԱՍ ԱԼԻՖ ԼԱՍ Յ ու ԱԼԻՖ իքի ՐԵ» տողը բառային տեսքով կլինի հետևյալ կերպ. «ԼԱԼ ՅԱՐԱՐ»<sup>85</sup>, որը հայերեն նշանակում է՝ «լալ ստեղծեց»: Սրանով եր իջը ուզում է ասել, որ իր ստեղծա ործությունները անձ են: Սակայն տվյալ դեպքում մեզ ավելի շատ հետաքրքրում է ոչ թե խաղի միտքը, այլ նրանում եղած ծածկա իրը:

Մենք վերևում տեսանք, որ այս տողի առաջին «Լ»-ն (լամ) եր - չի 30 տարին է, որին «հասավ» նա: Իսկ թե երբ է «հասել» նա այդ տարիքին, ահա տողի շարունակությունը. «ԱԼ ՅԱՐԱՐ» (  $U = 1 = L = 30$ ,  $+ 3 = 10$ ,  $+ U = 1$ ,  $+ R = 200$ ,  $+ U = 1$ ,  $+ R = 200$ ):

Այս տողի թվային արժեքը, ինչպես տեսնում ենք, հավասար է 443-ի: Սա վրացական քրոնիկոնի 443 թ. է (մեր թվարկության 1755-ը), այսինքն՝ այն թվականը, որը ղված է նույն խաղի ծանոթա րության մեջ:

Ուրեմն՝ Սայաթ-Նովան 1755 թ. այս «ալիֆլամա-ղարահեջա» խաղը ղելիս ավարտել է իր կյանքի 29 տարիները և «հասել է» 30-ին, այսինքն՝ 1755 թ. նա եղել է 29 տարեկան, ուրեմն նա 1726 թ. ծնված է ( $1755 - 29 = 1726$ ): Իսկ եթե խաղը ղել է իր ծննդյան տա-րեդարձի օրը, հայտնի է դառնում նաև ծննդյան ամիսը և ամսաթիվը՝ 1726 թ. մարտի 4-ը:

**Բ.** Հայերեն 51-րդ խաղը Սայաթ-Նովայի՝ մեզ հասած միակ խաղն է, որտեղ նա, ծածկա ղելով խաղը ղելու տարին, վերջում ասում է. «Սայաթ-Նովա, տարիտ էլավ քարասուն...»:

Նախքան խաղի վերծանումը, անհրաժեշտ ենք համարում մեջ-բերել մի կարևոր հան ամանք:

Սայաթ-Նովայի ղական ժառան ությունը մեզ հասել է հիմ-նականում երկու Դավթարների միջոցով: Դավթարներից առաջինը ղի է առնված եր չի անմիջական մասնակցությամբ, որն առաջմ պահվում է Հայաստանի ղականության թան արանում, իսկ երկ-րորդը՝ ղված եր չի որդի Օհանի ձեռքով՝ 1823 թ. Պետերբուր-ում:

<sup>85</sup> Յարար – թուրքերեն՝ յարաբնաղ (ստեղծել, ստեղծագործել) բառից:

Սայաթ–Նովայի 40 տարին պարունակող վերոհիշյալ թեջնիսը<sup>86</sup> տնվում է Օհանի Դավթարում, հիմնական Դավթարում այն չկա: Իսկ հիմնական Դավթարն ընդ ընդում է 1750–1760 թթ. ընթացքում: Եվ եթե հաշվի առնենք Դավթարի վերջին էջում ընդունված Պենտելենց Զովհաննեսի հիշատակարանի ընդունված տարեթիվը (1765 թ.), ապա Դավթարն ընդ ընդում է 1750–1765 թթ.:

Այսպիսով՝ տրամաբանությունը մեզ հուշում է, որ հիշյալ թեջնիսը մինչև 1765 թ. ընթացքում չի եղել, հակառակ դեպքում այնտեղ կ տներ եր չի հիմնական Դավթարում: Եվ այստեղից էլ մի պարզ հետևություն՝ Սայաթ–Նովան մինչև 1765 թ. 40 տարեկան չի եղել:

Այս թեջնիսը բաղկացած է չորս տնից: Առաջին տան մեջ եր իջը ընդուն է.

*Այբբբբբբ կարթացիլ իմ դասեդաս<sup>87</sup> (դասե դաս),  
Հասա ԲԱԵ, Հասա ԶԵ, Հասասե (Հասա ՍԵ),  
Անգրծակի մե ձևն էկավ դասեդաս,  
Անգաճ կուլա, չիմացա ինչ Հասասե (Հա սաս է<sup>88</sup>):*

Մենք արդեն մի ան ան ասել ենք, որ Սորոս Զասրաթյանը իր ծանոթա ընթացքում այս խաղի մասին ընդուն է հետևյալը, որը մենք անհրաժեշտաբար կրկնում ենք. «Ձևով ու բովանդակությամբ հետաքրքրական այս թեջնիսի **Բ** տողը, անշուշտ, աղավաղված է Օհանի կողմից, որովհետև նա չի իմացել և չի կռահել, որ այս տողում թաքնված է խաղը ընդուն տարեթիվը»:

Մեզ համար այլևս կասկածի տեղ չի մնում, որ այս տողը բնա - ընդուն եղել է հետևյալ ձևով. «Հասա Ռա է, հասա Չա ծա, հասա սե», այսինքն՝ ՌՉԾԷ (= 1757) թվականին, և որովհետև նախավերջին տողում ասում է. «Սայաթ–Նովա, տարիս էլավ քառասուն», ուստի պետք է ընդունել, որ մեր եր իջը ծնվել է 1717 թվականին (այս մասին ավելի հան ամանորեն ընդ ենք ԽՍՀՄ իտ. ակադեմիայի հայկական ֆիլիալի 1943 թ. № 3 «Տեղեկա իր» օր անում)»:

Մենք, մանրագին ծանոթանալով «Տեղեկա ընդուն» եղած նյութին, եկանք այն հաստատ համոզման, որ խաղը ընդուն է վրացատառ, և քանի որ վրացերենում «Ռ» տառը չկա, եր չի որդին այս թեջ-

<sup>86</sup> Թեջնիս – բառախաղով կազմված ոտանավոր:

<sup>87</sup> Դասեդաս – կարգերով:

<sup>88</sup> Սաս – ծայն:

միսը ընկա «Ռ»-ի փոխարեն օ տա ործել է «Ր» տառը, ուստի Մ. Հասարթյանը շատ տեղին առաջարկում է թեքնիսի 2-րդ տողի «Հասա րաե» հատվածում «Ր»-ն փոխարինել «Ռ»-ով («Հասա Ռաե»), որի թվային արժեքը հավասար է 1000-ի. սա հիմնավորվում է նաև նրանով, որ եր իչը թեքնիսի հաջորդ տան մեջ խոսում է այս հազարի մասին: Իսկ ինչ մնում է այն բանին, որ Հասարթյանը թեքնիսի հիշյալ տողը համարում է աղավաղված և «Ջե»-ն փոխարինում է «Չա ծա»-ով ու «Սե»-ն «Է»-ով ծածկա իրը հարմարեցնելով մեր թվարկությանը, դա, մեր կարծիքով, չի հիմնավորված, որովհետև, ինչպես կտեսնենք քիչ հետո, ծածկա իրը, ինչպես միշտ, կազմված է վրացական քրոնիկոնով, և բացի այդ, ծածկա իրը պետք է որոնել ոչ թե միայն հիշյալ տողում, այլ ամբողջ խաղի մեջ, որովհետև եր իչը խաղի վերջում է ասում «Սայաթ-Նովա, տարիտ էլավ քառասուն» և ոչ թե անմիջապես երկրորդ տողից հետո:

Այժմ վերծանենք խաղը:

Ինչպես ասացինք, թեքնիսի «հասա րաե, հասա ջե, հասասե» տողում «Ր»-ն պետք է փոխարինել «Ռ»-ով, սակայն այս տողը, համեմատած խաղի մյուս տողերի հետ, մեկ վանկով պակաս է: Բայց այն լրացվում է, երբ տողի «հասա ջե» հատվածում «Է»-ն դիտում ենք որպես օժանդակ բայ («հասա Ջե»): Այստեղից էլ բխում է մի շատ պարզ հետևություն, որ եթե երկրորդ հատվածում «Է»-ն օժանդակ բայ է, ուստի և օժանդակ բայ է նաև առաջին հատվածում: Իսկ քանի որ եր իչը առաջին և երկրորդ հատվածներում «հասա» բառը օ տա ործել է հասնելու իմաստով, ապա նույն իմաստով էլ օ տա ործել է երրորդ հատվածում: Ուրեմն՝ տողը պետք է կարդալ այսպես.

Հասա Ռա է, հասա Ջ է, հասա Սե.

«Ռա»-ն հայերեն Ռ տառն է, որի թվային արժեքը հավասար է 1000-ի, սակայն երբ դրան ավելացնում ենք հայերեն Ջ-ի արժեքը (= 900), ապա ստանում ենք 1900, որը մեր նյութի համար արժեք չներկայացնող թիվ է, որովհետև Սայաթ-Նովան ծնվել է XVIII դարում:

Բայց այս տողի վերջին Սե-ն մեզ հուշում է, որ տողում միայն հայերեն տառեր չեն օ տա ործված, որովհետև Սե-ն պարսկերեն նշանակում է երեք (3), իսկ այլ այբուբենների տառերի օ տա ործումը յուրահատուկ է Սայաթ-Նովային: Այսպես, օրինակ՝ հայերեն 5-րդ խաղը Դավթարում ըված է հայերեն և վրացերեն: Դեռ ավելին՝ այդ նույն խաղի ծանոթա թության մեջ եր իչը ըում է. «Էսպես դիվանի լավ տեղ ասած, որն ըոց հայերեն տառ է, որն վրաց, թուրքերեն էլ ուզում էի հետն խառնել, բայց չխառնեցի»:

Այսպիսով՝ ծածկա իր պարունակող տողի Զ–ն արաբական այբուբենի 5–րդ տառն է, որի թվային արժեքը հավասար է 3–ի:

Այստեղ ամենահետաքրքիրը տողավերջի Սե–ն է, որը պարսկերեն նշանակում է երեք (3): Հարց է առաջանում՝ կարելի՞ է արդյոք այս Սե–ն ընդունել որպես երեք (=3–ի), թե՞ ոչ: Իհարկե ոչ: Չէ՞ որ երիչը ծածկա իրը կազմել է տառերով, իսկ Սե–ն տառ չէ, այլ թիվ է: Ուրեմն մեզ անհրաժեշտ է այս թիվը վերածել տառի:

Սայաթ–Նովան, ընդվ «հասա Սե», մեզ հուշում է, որ հասա 3–ին կամ հասա երրորդի ն, այսինքն՝ արաբական այբուբենի 3–րդ տառին, որը թ տառն է: Սակայն հարց է առաջանում՝ ինչո՞ւ է երիչը այս ձևով ընդվ. չէ՞ որ նա կարող էր ուղղակի ընդվ հասա թե: Թե–ի փոխարեն Սե ընդվ պատճառը շատ է հասարակ: Բանն այն է, որ արաբական այբուբենն ունի երկու թ տառ, մեկը 3–րդ տառն է՝ 400 թվանշանի արժեքով, իսկ մյուսը 16–րդ տառն է՝ 9 թվանշանի արժեքով: Ուրեմն՝ երիչը չէր կարող ուղղակի ընդվ «հասա թե», որովհետև տվյալ դեպքում նրան պետք էր 3–րդ թ–ի թվային արժեքը, այսինքն՝ 400–ը:

Այսպիսով՝ տողը թվային արժեքներով կլինի՝ Հասա 1000 է, հասա 3 է, հասա 400 (է = 1403–ի):

1403–ը դեռևս ոչինչ չասող թիվ է, որովհետև այն չի համընկնում ինչպես քրոնիկոնի, այնպես էլ նոր ու հայկական թվարկությունների հետ: Ուրեմն այս թվին պետք է ավելացնել կամ պակասեցնել ևս մեկ տառ, որպեսզի նրա թվային արժեքով կար ավորվի վերոհիշյալ թիվը և համընկնի Սայաթ–Նովայի ապրած ժամանակաշրջանի հետ:

Այս նպատակով շարունակում ենք կարդալ թեքնիսի երկրորդ տունը.

*Հազար տարին մարթու աչկին թաքավուր (թաք ավուր).*

*Քանի տընանգ, քանի հարուստ–թաքավուր (թաքավուր),*

*Չի հարցնի ախկատ, հարուստ, թաքավուր (թա գա վուր)<sup>89</sup>*

*Մահը վուր կա, առանց կաշառք հասասե (հասաս<sup>89</sup> է):*

Թեքնիսային խաղերում հեղինակները բառախաղի միջոցով ծածկա րում են իրենց մտքերը: Այսպես, օրինակ՝ այս քառյակի մեջ առաջին տողի իմաստը հետևյալն է՝ այն ամենակարևորը, ամենա լխավորը, տվյալ դեպքում՝ թա ավորը («թաքավուր»), որը պետք է

<sup>89</sup> Հասաս – ոստիկան:



աչքի առնվի թեջնիսի ծածկա ղուն («մարդու աչկին»), դա «հազար տարին», այսինքն ՌԱ–ն է: Սրանով եր իչը հուշում է ծածկա իրը:

Այդ «հազար տարին» պետք է դիտել որպես մեկ օր («թաք ավուր»), այսինքն պետք է չեղյալ համարել, որովհետև օրը տարի չէ: Հեղինակը հաջորդ երեք տողերում այն միտքն է հայտնում, թե չնայած այդ «հազար տարին» թա ավոր է, բայց և այնպես, կարելի է ջնջել, որովհետև.

*Զի հարցընում ախկատ, հարուստ, թաքավուր  
Մահը վուր կա, առանց կաշառք հասաս է:*

Այսպիսով՝ Սայաթ–Նովան առաջարկում է Ռ Զ Թ–ից (1403–ից) չեղյալ համարել Ռ–ն (1000–ը): Այս դեպքում մնում է Զ Թ–ն, այսինքն՝ 403–ը:

Քրոնիկոնի 403 թ. հանընկնում է նոր թվարկության 1715 թ. հետ (403–1312), սակայն այս թվականին եր իչը 40 տարեկան լինել չէր կարող: Նորից ենք շարունակում կարդալ թեջնիսը.

*Դառնացավ, թթվեցավ կինքըս ծովացավ.  
Ախ քաշելն սիրտըս ընգավ ծովացավ (ծ–ովացավ),  
Կաթերով, կոթելով դարդըս ծովացավ (ծովացավ),  
Մե մարթ չըկա, վուր ինձ խըրատ հասասե (հա սսե):*

Առաջին տողի «ծովացավը» նշանակում է մեծացավ: Սրանով հեղինակը հուշում է, որ թիվը պետք է մեծացնել: Բայց ինչքանով: Այդ մասին եր իչը ղում է.

*Ախ քաշելն սիրտըս ընգավ ծովացավ (ծ–ովացավ).*

Թեջնիսում ործածելով «սիրտ» բառը՝ հեղինակները դրանով հասկացնում են, որ այսինչ տառը (կամ թիվը) պետք է դնել արդեն մախօրոք ասված բառի կամ թվերի սրտում, այսինքն՝ կենտրոնում:

Հեղինակի մեծացվելիք թիվը ԶԹ–ն է, որի «սրտում» (կենտրոնում) ղվելիքի մասին նա շատ պարզ ակնարկում է «սիրտս ըն ավ ծովացավ», որը նշանակում է՝ թիվս մեծացնելով նրա «սիրտը» ծ–ովացավ, ծ–ոսվեց, ծ–ունեցավ և այլն:

Ծ–ն հայկական այբուբենի 14–րդ տառն է, որի թվային արժեքը հավասար է 50–ի:

Այսպիսով՝ հեղինակը, մեր կարծիքով, պահանջում է թիվը կարդալ Զ Ծ Թ:

Այստեղ ամենահետաքրքիրն այն է, որ մեր կախարդ եր իչը ստեղծել է ծածկա ռի լաբիրինթոս: Նախ նա ծածկա ռի համար ընտրել է չորս տառ, որից երկուսը՝ հայերեն, իսկ երկուսը՝ արաբերեն, այն շաղ է տվել թեջմիսուն ջնջել— ռելու սկզբունքով, ապա դասավորել է մեկընդմեջ (ՌՋԾԹ), և քանի որ հայերեն Ռ—ն ջնջել է ծածկա ռից, տառերի երակշռությունը մնացել է արաբականին, որով հեղինակը առաջարկում է ծածկա իրը կարդալ արաբերեն, այսինքն՝ ոչ թե այնպես, ինչպես մենք ստացանք (ՋԾԹ), այլ աջից ձախ՝ ԹԾՋ:

Այս ծածկա ռի թվային արժեքը հավասար է 453—ի: Սա քրոնիկոնի 453 թ. է, այսինքն՝ մեր թվարկության 1765 թ.:

Թեջմիսի վերջին տան մեջ եր իչը թում է.

*Սայաթ—Նովա, տարիտ էլավ քարասուն (քառասուն),  
Դուն մահի հիդ, մահը քիզ հիդ<sup>90</sup> հասասե (հաս—հաս է):*

Այս տան մեջ «Հագար տարին մարթու աչկին քարասուն» տողով Սայաթ—Նովան հայտնում է, որ այն «հագար տարին», որին մահը տարավ, այլևս կապ չունի մեր ծածկա ռի հետ:

Սրանով եր իչը հուշում է, որ առայժմ վերջնական թիվը ԹՋԾ—ն է, այսինքն՝ քրոնիկոնի 453 թ., որը մեր թվարկության 1765 թ. է: Այս թվականին եր չի տարիքը դառնում է 40 («Սայաթ—Նովա, տարիտ էլավ քարասուն»):

Այսպիսով՝ եթե Սայաթ—Նովան 1765 թ. 40 տարեկան է դարձել, կամ, ինչպես ինքն է ասում, այդ տարիքին է հասել, ապա նա ծնվել է 1765—39=1726 թ. կամ քրոնիկոնի 414—ին:

Մենք վերձանեցինք խաղեր, որոնց մեջ Սայաթ—Նովան նշել է իր որևէ տարիքին հասնելը և տարեթիվը, որոնց համեմատություններից մենք ստանում էինք եր չի ծննդյան տարեթիվը: Սակայն եր իչը թողել է այնպիսի խաղեր, որոնց մեջ ուղղակի ծածկա ռել է իր ծննդյան տարեթիվը: Ահա նրանցից մեկը: Հայերեն 65—րդ խաղի վերջում եր իչը թում է.

*Սայաթ—Նովան իմ, սայադ (սայաթ)<sup>91</sup>.  
Անունըս հաշվիր սայաթ (Սե յա Թ):*

<sup>90</sup> Հիդ — վառ (վառված, վառվելու):

<sup>91</sup> Սայաթ — որսորդ:

*Տիտուս կարոտ չըթողնիս,  
Չասիս սա օտար, սա յադ (ՅաԴ)<sup>92</sup>:*

Այս քառյակի արտաքին կամ պարզ միտքը մի համեստ խնդրանք է իր յարին, որ նա եր չին իր տեսությունից կարոտ չթողնի: Սակայն այս պարզ մտքի տակ ծածկա րված է եր չի ծննդյան տարեթիվը: Քառյակի երկրորդ տողում եր իչը թում է.

*Անունըս հաշվիր Սե յա Թ:*

Այլևս չենք ուզում նորից բացատրել սրա նշանակությունը, որովհետև արդեն իտենք, որ Սե յա (կամ) Թ–ն հավասար է 400–ի: Շարունակելով իր միտքը՝ եր իչը հաջորդ տողում հուշում է քեջնիսի ծածկա թի շարունակությունը.

*Տիտուս կարոտ չը թողնիս:*

Սա նշանակում է անտես չանես, չանտեսես... Բայց ի՞նչը: Իհարկե, **քառյակի վերջին տողը՝**

*Չասիս սա օտար, սա յադ:*

Նշանակում է՝ չասես, որ սա օտար է, այս (սա) Յադ–ը:

Այսպիսով՝ Սայաթ–Նովան պահանջում է՝ «անունս» (ծննդյան թիվը, այսինքն՝ երբ ինքը աշխարհում «անուն» է դարձել) հաշվելիս Թ–ից հետո անտես չանել, չանտեսել ՅաԴ–ը:

Ծածկա իրը ստացվում է ԹՅԴ (=414), սա քրոնիկոնի 414 թ. է, որը համընկնում է նոր թվարկության 1726–ին:

Այս ծածկա թի տարբերակին ընթերցողը հանդիպում է վրացերեն 7–րդ խաղի վերջին տան մեջ: Ահա այն.

*«Սախալի մաքվս Սենի Թենի  
Վեմ քվամոդամ (Ղ) անի վնախե»:  
(Անունըս Սե Թոն է,  
Վ–ի ներքևի (ց) Հա–ին տեսա):*

Սե Թոն արդեն մեզ հայտնի արաբական այբուբենի երրորդ Թ–ն է՝ 400 թվանշանի արժեքով: Վով–ը նույն այբուբենը երկուսն ունի, մեկը 26–րդ տառն է՝ 5 թվանշանի արժեքով, իսկ մյուսը, ինչպես Սայաթ–Նովան է նշում, «ներքևի» Յա–ն 8–րդ տառն է՝ 8 թվանշանի ար-

<sup>92</sup> Յա–ն արաբական յ (հի) տառն է, որը Սայաթ–Նովայի խաղերում գրվում է «իա», երբեմն էլ «յա» ձևով:

ժեքով: Այսպիսով՝ ծածկա իրը՝ ԹՅԿ-ն, դարձյալ հավասար է 414-ի (Թ-400, Դ-8, Վ-6):

Չնայած մեր պրպտոււմների ժամանակ հանդիպեցինք ևս մի շարք խաղերի, որոնցում կային ծածկա ըեր այս մասին, բայց հարկ համարեցինք բավարարվել այսքանով, որովհետև, մեր կարծիքով, այսքանն էլ բավական է հաստատելու այն, որ Սայաթ-Նովան ծնվել է 1726 թվականին:

## 2. Ծա ումն ու ծննդավայրը

Չնայած այն բանին, որ Սայաթ-Նովան իր ծա ման ու ծննդավայրի մասին չափազանց պերճախոս ըավոր վկայություններ է թողել, այդուհանդերձ, մինչև այսօր բանասերները առաջ են քաշում այդ հարցին վերաբերող բազմաթիվ իրարամերժ կարծիքներ ու վարկածներ:

Եր չի առաջին կենսա իր Գ. Ախվերդյանը, հինք ընդունելով նրա թուրքերեն խաղերից մեկի (48) ներքոհիշյալ քառատողը, պնդում է, որ Սայաթ-Նովան ծնվել է Թիֆլիսում: Ահա այդ քառատողը՝ Մորուս Չասրաթյանի թար մանությամբ.

*Սայաթ-Նովու վաթանիցն հարց կու տան,  
Մեկը կոսե շինդն է, մեկը՝ Համազան...  
Վաթանըս Թիֆլիսն է, կողմը՝ Վրաստան,  
Մերըս հավլաբարցի, հերըս՝ Հալաբլու:*

Վրաց բանասեր Գ. Լեոնիձեն, բերելով Թեյմուրազ արքայազնի մի վկայա իր (որին հետո կանդրադառնանք հան ամանորեն), այն կարծիքն է հայտնում, որ Սայաթ-Նովան ծնվել է Սանահնում: Չայ բանասերներից Գ. Ասատուրը, 1930 թ. «Նոր ուղի» հանդեսում բանավիճելով Լեոնիձեի հետ, շատ տեղին նկատում է, որ՝ «Մի՞ թե կարելի է կասկածել ան ամ, որ Սայաթ-Նովան ավելի լավ իտեր, թե որն է իր ծննդավայրը, քան Թեյմուրազը, որը միայն հեռվից է լսել նրա մասին»<sup>93</sup>: Սակայն Գևոր Ասատուրը, նույնպես չկարողանալով հերքել արքայազն Թեյմուրազի վկայության հավաստիությունը, հորի-

<sup>93</sup> Ասատուր Գ., Գրախոսություն Գ. Լեոնիձեի «Գուսան Սայաթ-Նովան» գրքի մասին, «Նոր ուղի», Երևան, 1930, նո. 4-5:

նում է մի այլ՝ ավելի անհավանական վարկած, ըստ որի՝ ոչ թե Սայաթ-Նովան է ծնվել Սանահնում, այլ նրա մայր Սառայի ծնողներն են «Սանահնի շրջանից, լեզ իների հարձակումից փախչելով՝ ապաստանել և վերաբնակվել Թիֆլիսում (Հավլաբարում), որտեղ ծնվում է Սառան (Սայաթ-Նովայի մայրը)»<sup>94</sup>:

Նոր Ասատուրի այս վարկածը պատմական ճշ ըիտ փաստով հերքում է բանասեր Գարե ին Լոնյանը: Նա իր «Սայաթ-Նովա» ուսումնասիրության մեջ այդ մասին րում է. «Գ. Ասատուրի այս հավանական ենթադրությունն ավելի հավանական կլիներ, եթե չլիներ այն ակնբախ անախրոնիզմը, որ ինքը՝ հողվածա իրը, չի նկատել: Լեզ իների արշավանքը Հաղպատ-Սանահնի վրա տեղի է ունեցել ոչ թե 18-րդ դարի «սկզբներում», այլ ուղղակի 1747 թվին, երբ Սայաթ-Նովան ինքն արդեն կար ին տղամարդ էր, ուր մնաց, որ նրա նախնիները պետք է նոր Թիֆլիս աղթեին, ու նոր այնտեղ պիտի ծնվեր նրա մայրը՝ Սառան: Ինչ էլ որ լինի, վերևի փաստերը մնում են փաստ, որ Սայաթ-Նովան ծնվել է Թիֆլիսում»<sup>95</sup>:

Տարակուսանք է առաջ բերում բանասեր-պատմաբան Մորուս Հասարթյանի վերաբերմունքը այս հարցում, որովհետև, չնայած Գ. Լոնյանի շատ տեղին դիտողությանը, նա առանց հիմնավորող փաստերի Սառային համարում է սանահնեցի՝ ըելով, թե «եր չի հոր՝ Կարապետի՝ Սանահին՝ յուրի հետ կապ հաստատելու պատճառը պետք է ընդունել հենց նրա կնոջ՝ Սառայի սանահնեցի լինելու հանամանքով, որը, թերևս, փոքր ժամանակ ծնողների հետ աղթած կամ նացած լինի Թիֆլիս և ամուսնանալուց հետո խաղաղ պայմաններում վերադարձած իր հայրենի Սանահին՝ յուրը, հայրական սեփականության վրա»<sup>96</sup>:

Այս բյուր կարծիքների պատճառն այն է, որ մեր հար արժան բանասերները ուշադրության չեն արժանացրել մի «մանրուք», դա այն է, որ Թեյմուրազ արքայազնը Սայաթ-Նովային սանահնեցի է համարում իր հոր՝ Գեոր ի թա աժառան ի օրոք, երբ Սայաթ-Նովան արդեն 40-ն անց հասուն այր էր...

Բարեբախտաբար Սայաթ-Նովան, բացի վերոհիշյալ թուրքերեն խաղից, թողել է նաև ռավոր հիշատակարաններ, որոնցում հաստատում է, որ ինքը թիֆլիսեցի է: Մատենադարանում պահվող Վրաստանի

<sup>94</sup> Նույն տեղում:

<sup>95</sup> Լոնյան Գ., Երկեր, էջ 332:

<sup>96</sup> Սայաթ-Նովա, Խաղերի ժողովածու, կազմեց Մորուս Հասարթյան, էջ VIII:

Կախի ավանում Սայաթ–Նովայի ձեռքով ընդօրինակված «Սողոմոնի և թուղթք առաքելոց»–ի 170–րդ էջում (որը ընդհանուր է Սայաթ–Նովան) եր իչը թողել է հետևյալ հիշատակարանը. «Ով ընթերցող յիշեալ գՍտեփանոս քահանայս Թլփեցի, ընցավ Կախ ՌՄԺԵ»<sup>97</sup>: Ինչպես տեսնում ենք, 1766 թ. Սայաթ–Նովան իրեն թիֆլիսեցի է համարում:

Այս վկայությունը միան ամայն ու վերջնականապես հերքում է այն անհիմն ենթադրությունները, որ եր չի մայրը եղել է սանահնեցի, կամ իբր թե եր իչն էլ ծնվել է Սանահնում: Չէ՞ որ եթե այդպես լիներ, եր իչը կնշեր, որ իր մայրը եթե ոչ սանահնեցի, ոնե հայաստանցի է և ոչ թե հավլաբարցի, ինչպես որ հոր հայրենիքն է նշում նրա ծննդավայրով հավեացի: Նույնիսկ եր չի ժամանակակիցները, որոնք, իրավամբ պատճառներ ունենալով, նրա հայրենիքը շփոթել են «Հինդ» ու «Համադան»–ի (և ոչ թե Հայաստանի) հետ, ժամանակին ստացել են եր չի միան ամայն ճշ ըիտ պատասխանը, որը և լիակատար պատասխանն է այսօր ամենքիս... Եվ այդ պատասխանը՝ ոչ ավել ոչ պակաս չորսը, կենդանի բառեր են՝ Վաթանըս Թիփլիսն է կողմը՝ Վրաստան... Էլ հարկ կա՞ այսքանից հետո, հենվելով ինչ–որ կողմնակի աղբյուրի վրա, մթա նել եր չի որտեղացի լինելու հարցը: Մեր կարծիքով, հարկ չկա: Իսկ ովքե՞ր են եղել մեր հանճարեղ ուսանի այդքան համեստ «մերն» ու «հերը», որոնցից մեկը հավլաբարցի է, մյուսը՝ հավեացի:

Հետա այում Սայաթ–Նովան իր թողած հիշատակարաններից մեկում ըում է. «Գրեցավ ի կախոյ քարավանսարեն. ո՞վ ընթերցող յիշեալ զ որժող ըոյս մեղապարտ Ստեփանոս քայիանաս, որ Սեաղ Նովա կոչեն և Հայրն իմ մահտեսի Կարապետն է Մայր (ն) իմ Սարրայ...»<sup>98</sup>:

Սայաթ–Նովայի մոր՝ Սառայի մասին, բացի այն տեղեկությունից, որ նա հավլաբարցի է, եր իչը տալիս է ևս մի այլ տեղեկություն: Դա այն է, որ եր չի մայրը, բացի մեր եր չից, ունեցել է մի որդի ևս, որը, սակայն, մահացել է վաղաժամ: Վաղաժամ է մահացել նաև ինքը՝ մայրը՝ փոքրիկ Արուսիկին (Սայաթ–Նովային) թողնելով որբ: Այդ մասին Սայաթ–Նովան թուրքերեն խաղերից մեկում (42) ըում է.

*«Յիս չիմ գիգի էն ով աղ արից,  
Ախպորից ու մորից գրգից, Դաղ՝ արից...»:*

<sup>97</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, գործ № 4270:

<sup>98</sup> Սայաթ–Նովա, Խաղեր, նմանահանություն, հավելված 2–րդ, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1963 թ.:

<sup>99</sup> Դաղ – այրվածք:

Իսկ թե ով է եղել եր չի հայրը՝ Մահտեսի Կարապետը, այս հարցի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի, որովհետև այն խիստ կերպով առնչվում է եր չի կենսա թուրքյան հետ:

1852 թվականին Սայաթ–Նովայի առաջին կենսա իր Գ. Ախվերդյանը եր չի կենսա թուրքյանը սկսում է հետևյալ տողերով. «Հարյուր հիսուն տարի առաջ մեկ խեղճ աննշան հայ ալիս է Հալեպից (երևի բախտ որոնելու) Վրաստան ու բնակվում է Թիֆլիս քաղաքում»:

Ախվերդյանի այս կարծիքը մինչև այսօր սայաթնովա իտության մեջ մնացել է անփոփոխ: Ով որ զբաղվել է եր չի կենսա թուրքյանը, կամ այս կարծիքը հիմք է ընդունել, կամ էլ ուշադրության չի արժանացրել: Մինչդեռ այս հարցը նույնպես պետք է ենթարկվեր խորագրին ուսումնասիրության, ինչպես եր չի կենսա թուրքյանը վերաբերող բոլոր հարցերը, որովհետև եթե հայտնի դառնա եր չի հոր ով լինելը, մասամբ կպարզվի, թե նա ինչպիսի կախում է ունեցել վրացական արքունիքից:

Ախվերդյանը եր չի հորը համարում է «մեկ խեղճ աննշան հայ», որը իբր Հալեպից Թիֆլիս է ալիս՝ «բախտ որոնելու»: Չնայած Ախվերդյանը խոստովանում է նաև, որ «Սիրիայից եկած այդ պանդուխտը պատվանունով Մահտեսի (այսինքն՝ Երուսաղեմ ուխտի նացած...)» էր:

Թե ժամանակին ինչ հիմք է ունեցել Ախվերդյանը եր չի հորը «մեկ խեղճ աննշան հայ» կոչելու, մեզ հայտնի չէ: Սակայն մի բան պարզ է, որ նրա կարծիքը զուրկ է փաստական հիմքից: Նախ պատմությանը հայտնի է, որ հիշյալ ժամանակներում «բախտ որոնելու» համար մարդիկ Անդրկովկասից Հալեպ էին նույն ոչ թե Հալեպից ալիս էին Անդրկովկաս (այդ պատմական փաստը շատ լավ մարմնավորված է «Աշուղ Ղարիպ» ժողովրդական սիրավեպում, որին լավածանոթ էր նաև Սայաթ–Նովան: Նրանում Ղարիբը Թիֆլիսից նույն է Հալեպ՝ «բախտ որոնելու...»): Եթե այդ հան ամանքն էլ հաշվի չառնենք, ապա բավական է նրա «պատվանունով Մահտեսի» լինելը, որպեսզի ժխտվի, որ նա «մեկ խեղճ, աննշան հայ» է եղել, որովհետև, եթե նա «խեղճ, աննշան» վիճակում է եկել Թիֆլիս, այն էլ՝ «բախտ որոնելու», դժվար թե անծանոթ միջավայրում առանց որևէ ստույ հիմքի նրան Մահտեսի «պատվանուն»–ով կոչեին: Իսկ եթե այդ «պատվանունը» տրված լիներ ծաղրանքով (երբեմն՝ խեղճ մարդկանց տրվում են այդպիսի մականուններ), ապա Սայաթ–Նովան իր հիշատակարանում չէր հիշատակի, որ «Հայրն իմ Մահտեսի Կարապետն» է: Այսպիսով՝ մեզ մնում է անել մի պարզ հետևություն, որ Սա-

յաթ–Նովայի հայրը իսկապես եղել է Մահտեսի... մի պատվանուն, որը հպարտությամբ է նշում նաև մեր եր իչը: Իսկ եթե սրան ավելացնենք եր չի խաղերում եղած այն տեղեկությունը, որ իր ծա ունը ընտիր ցեղից է, ապա պարզ կդառնա, որ նրա հայրը Մահտեսի Կարապետը, «մեկ խեղճ աննշան հայ» չի եղել:

Եր իչը իր թուրքերեն խաղերից մեկում (34) րում է.

*«Սայաթին խաս»<sup>100</sup>, Նովային խաս, ցեղըն խաս»*

Իսկ հայերեն 36–րդ խաղում նա րում է.

*«Միռնելուս համա չիմ հոքում, ցիղի համա իմ լալիս»:*

Ինչպես տեսնում ենք, Սայաթ–Նովան իր ցեղը ընտիր (խաս) է համարում և, դրանից բացի, անհան ստանում է նրա ոյատնման համար...

Այսքանից հետո ենթադրել, որ եր չի հայրը «աննշան հայ» է եղել, մեր կարծիքով, արդարացի չէ...

«Խորհրդային Հայաստան» թերթի 1966 թ. հոկտեմբերի 11–ի համարում Մատենադարանի իտնական քարտուղար Վ. Գրի որյանը իր «Հայերեն վիմա իր արձանա ռություններ Սիրիական անապատում» հոդվածում րում է.

«Երկար ժամանակ Հալեպի հայկական «Քառասուն մանկանց» աթոռանիստ եկեղեցում (16–րդ դ.) պահված է եղել ժամանակի կեղտից ու փոշուց համարյա սևացած մի նկար: Եկեղեցու հո աբարձությունը երմանացի մասնա ետների միջոցով մաքրել է տալիս այդ կտավը, և կեղտի տակից հստակորեն երևում է 18–րդ դարի սկզբների հայ եղարվեստի չափազանց հետաքրքրական և ինքնատիպ մի նմուշ: Յուղաներկի վառ ույներով կատարված այդ նկարը, որ մեծ չափսեր ունի՝ 7 մետր բարձրություն, 4,75 մետր լայնություն, պատկերում է «Ահեղ դատաստանը»: Հեղինակը հայ է՝ Մահտեսի Կարապետը: Աշխատանքը կատարված է 1708 թվականին: Նկարի վրական հայերեն և արաբերեն բացատրական ռություններ»:

Ցավոք, հոդվածա իրը չի բերում այդ բացատրա ռի իմաստը: Սակայն, երբ ուշիուշիով համենատում եք այս տեղեկությունը Սայաթ–Նովայի կենսա ռական փաստերի հետ, առաջ է ալիս մի վարկած, ըստ որի՝ կարելի է ենթադրել, որ Հալեպի այդ մեծադիր նկարի հեղինակ Մահտեսի Կարապետը մեր եր չի հայրն է եղել:

---

<sup>100</sup> Խաս – ընտիր:



Որո՞նք են այդ վարկածի օ տին խոսող փաստերը.

**ա)** Մեզ հասած տվյալներով, ինչպես «Ահեղ դատաստան»-ի հեղինակը, այնպես էլ Սայաթ-Նովայի հայրը հալեացի են և կոչվում են Մահուտսի Կարապետ:

**բ)** «Ահեղ դատաստան»-ի վրա «կան հայերեն ու արաբերեն թուրքումներ», որոնց վարժ տիրապետում էր նաև Սայաթ-Նովան: Նա կարող էր սովորել իր հորից:

**յ)** Սայաթ-Նովան ծնվել է 1726 թ. Թիֆլիսում, այսինքն «Ահեղ դատաստան»-ի լույս աշխարհ ալուց շուրջ 18 տարի հետո: Այդ ժամանակ, հանձինս վրաց Թեյմուրազ և Յերակլ թա ավորների, Անդրկովկասում հաստատված էր քրիստոնյա թա ավորական դիմաստիա, որը կարող էր այթակղել հալեացի հայ նկարչին՝ ալ Թիֆլիս՝ իր նախասիրած՝ քրիստոնեական թեմաներով նկարներ անելու և ոչ թե «բախտ որոնելու»... Հենց այդ տարիներին էլ նա ամուսնացել է հավլաբարցի բնակչուհի Սառայի հետ:

**դ)** «Ահեղ դատաստան»-ը նկարված է 1708 թ.: Եթե ընդունենք, որ Մահուտսի Կարապետը այդ տարիներին եղել է 25–35 տարեկան ( ուցե և ավելի մեծ տարիքի) մարդ, ապա 30–40–ական թվականներին, երբ մեր եր իչը դեռևս պատանի էր, նա 60–70 և անց ծերունի է եղել: Գուցե հենց այդ հասակն է պատճառ եղել, որ մեր եր իչը հանձնվել է մեկեմասի (այդ մասին կխոսվի իր տեղում), կան ուցե նա այդ ժամանակ մահացած է եղել... Թուրքերեն խաղերից մեկում (50) եր իչը թում է.

*Մենակ անդիր իմ մնացի, վուրփին բաբա ըլողն գա...*

Այսպես թե այնպես, այս հարցը կարոտ է խիստ լուսաբանման...

Չնայած դրան՝ փաստը մնում է փաստ, որ Սայաթ-Նովան ծնվել է Թիֆլիսում հավլաբարցի մորից և հալեացի հորից:

### **3. Մանկությունն ու պատանեկությունը**

Սայաթ-Նովայից մեզ հասած թվակիր խաղերից ամենաառաջինը նրա կենսա թական խաղն է (թ. 67), որը թված է 1750 թվականին, այսինքն՝ երբ եր իչը եղել է 24 տարեկան: Թերևս դա է պատճառը, որ եր իչը մինչև 20 տարեկան հասակը պարունակող տողերը թել է ըստ տարիների, այնուհետև խաղը շարունակված է կյանքի հն ամյակներով: Առաջին հն ամյակը չհաշված, որն ընդ թկում է

խաղը թելու ժամանակաշրջանը, մնացած հմ ամյակները սոսկ կյանքի տվյալ հասակը բնորոշող կռահումներ են:

Այսպիսով՝ մինչև 25 տարին պարունակող յոթ տները, առանց որևէ կասկածի, հեղինակի կենսա թական փաստերն են:

Այդ խաղում իր մանկության մասին Սայաթ-Նովան թում է.

*Ինը տարիս երբ որ անցավ, դեռ հայտնի չէր, թե ինչ էի.*

*Տասը տարեկան էլ դարձա, դեռ գիժ ու միժ կը շրջեի.*

*Տասնըմեկըս էլ լրացավ, դեռ այնքան էլ խելոք չէի.*

*Տասներկու տարեկանում ինձ հանձնեցին ուստաքարին....*

Սենք առաջին լխում տեսանք, որ մեր եր իչը ի ծնե երաժշտական ընդունակություններ է ունեցել, ուստի անկասկած է, որ նա 12 տարեկան հասակից աշակերտել է երաժիշտ վարպետի (ուստաքարին), որի ով լինելու մասին ինքը կոնկրետորեն չի նշում: Սակայն դրա փոխարեն նա մի ուրիշ բան է հիշատակում: Եր իչն իր հանրահայտ ծանոթա թության վերջում թում է, որ ինքը երաժշտություն է սովորել «պ ս տ ու ց» և այն էլ՝ «Ս ու թ Կ ա թ ա թ ի կ ա թ ո ղ ու թ ե ն ո վ» (այդ միտքը, ինչպես տեսանք առաջին լխում, նա օ տա ործում է իր բազմաթիվ խաղերում):

Երբ համեմատում ենք Սայաթ-Նովայի կենսա թական խաղը (Մշո Սուրբ Կարապետ վանքի մասին) Րաֆֆու տված տեղեկությունների հետ, կասկածի նշույլ ան ամ չի մնում, որ եր իչը յոթ տարի պահել է Սուրբ Կարապետի ուխտի պասը:

Շատ հավանական է, որ պապ ա հանճարեղ ուսանի ծնողները կան նրան ճանաչող որևէ հարուստ մեկը (մեկենաս), տեսնելով մանուկ Արութինի արտակար երաժշտական ընդունակությունները, նրան 12 տարեկան հասակից հանձնել են երաժիշտ վարպետի, և, համաձայն ժամանակի սովորության, նա այդ տարիքից էլ սկսում է ծոմ ու պաս պահել, որպեսզի կարողանա հասնել իր նպատակին: Յոթ տարի ծոմ ու պաս պահելուց հետո, այսինքն՝ 18 տարեկան հասակում, ուղևորվում է Մուշ (Տարոն)՝ Սուրբ Կարապետի վանքից իր մուրատը առնելու համար, որովհետև, ինչպես վկայում է Րաֆֆին, աշուղներից «... ոչ մինը համարձակություն չունեի սագ վեր առնելու և մեյդան (հրապարակ, հանդես) դուրս ալու, մինչև նացած չլինեի այս վանքը և երագի մեջ ստացած չլիներ Սուրբ Կարապետի ձեռքից մի ավաթ էշխի (աշխույժի) ըմպելի, և մինչև նրա սագը օրհնած չլիներ վանքի վանահայր...»:

Այս մասին իր կենսա րական խաղում վկայում է նաև ինքը՝ Սայաթ-Նովան:

*Տասնըեքեք տարիս լրացավ, իմ արհեստը թամամեցի,  
Տասնըչորս տարիս լրացավ, վարպետիս պարզև տվեցի...*

Սակայն:

*Տասնըյոթը տարիս լրացավ, դեռ ես չէի եղել դ ւ ս տ ա ն...*

Այս տողերով Սայաթ-Նովան հուշում է, որ չնայած շատ կարճ ժամանակամիջոցում (3 տարում) սովորեցի նվա ելու և եր ելու արհեստը, բայց և այնպես դեռ աշուղ չէի («դեռ ես չէի եղել դաստան»), որովհետև, համաձայն ավանդույթի, դեռ չէր լրացել սահմանված ծոմ կամ պաս պահելու և ուսումնառության յոթ տարին, չէր օրհնվել կամ «էշխի ըմպելին» չէր խմել:

Տաղանդավոր պատանին, տեսնելով, որ իր բնածին ընդունակությունների շնորհիվ շատ հեռու է հաղթահարում երաժշտական արվեստի դժվարությունները, չի բավարարվում միայն դրանով: Նա սկսում է երաժշտությամբ զու ընթաց սովորել նաև թել ու կարդալ:

Այդ մասին նա րում է:

*Տասնհինգը տարիս լրացավ, սև ու սպիտակը ջոկեցի:*

Շուտով հասնում է ցանկալի ժամանակը: Լրանում է ծոմ ու պասի յոթ տարին, և եր իչը իրավունք է ստանում «սազը վեր առնելու և մեյդան (հրապարակ, հանդես) դուրս ալու»:

*Տասնյոթը տարիս լրացավ, տեսա և՛ վարդ, և՛ վարդաստան:*

Այնուհետև Սայաթ-Նովան րում է:

*Տասնինը տարեկանում ման եկա Հաբաշ, Հինդուստան:*

Սայաթ-Նովայի՝ Չնդկաստան նալու հարցը առ այսօր մնում է վիճելի: Ոմանք պնդում են, որ նա չի եղել Չնդկաստանում, այլ այդ երկրի անունը օ տա ործել է տպավորության կամ հան ու վանկի համար, իսկ ոմանք էլ ենթադրում են, որ նա իսկապես եղել է Չնդկաստանում:

Սայաթ-Նովայի խաղերում եղած տեղեկությունները պացուցում են, որ նա եղել է Չնդկաստանում: Այսպես, օրինակ՝ 1754 թվականին, երբ Սայաթ-Նովային ամբաստանել և հեռացնում էին պալատից, նա իր սիրեկանի անունից թել է մի խաղ (Չ. 23), որի տակ ծանոթա րված է. «Ես Արուբինը և իր սիրեկանը, որ խոսել

էին, էն է. սիրեկանն ասել է ուղղակի Սայաթ–Նովայի էրեսին, քրո-  
նիկոնի 442–ին»:

Այս խաղի երրորդ տան **Գ** տողով եր չի սիրեկանը, դիմելով եր -  
չին, խնդրում է.

*Մի փոքր էսենց դիմացի, շուտով շընգատան մի էհա...*

Այստեղից էլ ենթադրություն. ուրեմն Սայաթ–Նովան երբեմն եղել  
է Յնդկաստանում և այնտեղ նալու հնարավորություն ունի, որ առիթ  
եղածի դեպքում կարող է նորից այնտեղ նալ:

Բացի այդ, եր իչը թուրքերեն մեզ արդեն ծանոթ խաղում (48)  
րում է.

*Սայաթ–Նովու վաթանիցըն հարց կուտան.*

*Մեկը կոսե հինդն է, մեկը՝ համադան...*

Պարզ է, որ այստեղ հինդն ու համադանը պատահական չեն ր-  
ված: Նշանակում է՝ մեր եր իչը ապրել է Յնդկաստանում ու Համա-  
դանում, կամ ուղղակի նրա կենսա րությունը ամբողջ է այս երկու  
տեղանունների հետ, որ առիթ է տվել մարդկանց շփոթելու եր չի վա-  
թանը (հայրենիքը) դրանց հետ:

Սայաթ–Նովան, իր հռչակավոր «Դուն էն ըլխեն» խաղով դիմե-  
լով Յերակլ թա ավորին, րում է.

*Սայաթ–Նովու գերեզմանըն Հինդ, Հաբաշ, Արաբ մի անի:*

Սրանով եր իչը հայտնում է, որ եթե իրեն պալատից հեռացնեն,  
նա անպայման կմեկնի հիշյալ երկրներ ամվերադարձ...

Իսկ թուրքերեն 57–րդ խաղում ավելի պարզ է րում.

*Էս դարդըն ինձ իմ վաթանեն դուրս արավ*

*Վախում իմ, թե մինչի Հալաբ հասցնի:*

Այո՛, մեր եր չի համար Հալաբը (Հալեպը) «օտար» տեղ չէ, այն-  
տեղից է եկել նրա հայրը՝ Մահտեսի Կարապետը: Այս խաղի Հալաբը  
նույն «Դուն էն լխեն»–ի Արաբն է, որը, ինչպես տեսնում ենք, պա-  
տահական չի րված, ուրեմն պատահական չեն րված նաև Հինդն  
ու Հաբաշը...

Այսպիսով՝ մեր ենթադրությունը այն է, որ հիշյալ երկրներում մեր  
հանճարեղ ուսանը եթե ոչ հարազատներ, ոմն բարեկամներ է  
ունեցել, որոնց մոտ նա ամեն դեպքում կարող էր նալ...

Եթե սրան էլ ավելացնենք այն, որ Համադանը միջնադարյան այն քաղաքն է, որի միջոցով հայ վաճառականները կապ էին պահպանում Հնդկաստանի ու Պարսկաստանի, ինչպես նաև Հնդկաստանի ու Անդրկովկասի միջև, ապա անկասկած կլինի մեր այն ենթադրությունը, որ Սայաթ–Նովան եղել է Համադանում ապրող որևէ հայ վաճառականի խնամակալության տակ, որը սերտ կապի մեջ է եղել հնդկահայ աղուքների հետ:

Որ Սայաթ–Նովան եղել է Պարսկաստանում, այն էլ՝ տևական ժամանակով, դա անժխտելի է:

Եր իչը իր կյանքի վերջին տարիներին Հովհան արքայազնին պատմել է հետևյալը.

«Ես լավ չոն ուր (նվա ել) իտեի և միաժամանակ պարսկական հան ի վրացերեն եր եր րեցի, որ դեռևս ընդունված չէր...»<sup>101</sup>:

Այս փաստը վկայում է, որ Սայաթ–Նովան երիտասարդ հասակում երազանց տիրապետել է ոչ միայն պարսկերեն լեզվին, այլև երաժշտությանը: Այս հան ամանքն ապացուցում է, որ նա ապրել է Պարսկաստանում. չէ՞ որ առանց խոսակցական լուրջ միջավայրի անենատաղանդավոր պատանին ան ամ, որևէ մեկից կամ դպրոցում դասեր առնելով, չէր կարող այնպես ազատ տիրապետել որևէ լեզվի, որ կարողանար այդ լեզվով րել այնպիսի բարդ ու ծածկա իր պարունակող խաղեր, ինչպիսիք Սայաթ–Նովայինն են:

Սայաթ–Նովայի՝ Պարսկաստանում լինելու մասին մեր ենթադրությունը այն է, որ նա, մանուկ հասակում զրկվելով մորից («Յիս չեն իդի վըրես էն ով աղ արից, Ախպորից ու մորից զրկից, դաղ արից» (թ–42)) և լինելով շնորհալի երեխա, հայրը նրան հանձնել է որևէ հայ հարուստ վաճառականի խնամակալությանը՝ երեխային կրթություն ու դաստիարակություն տալու համար: Մանավանդ, որ 18–րդ դարում վաճառականները (հատկապես հնդկահայ) զբաղվում էին մեկենասությամբ:

Շատ հավանական է, որ մի այդպիսի հայ մեկենաս, որը ապրելիս է եղել Համադանում և կապ է ունեցել Հնդկաստանի հետ, իր խնամակալության տակ է վերցրել երաժշտական ծիրք ունեցող փոքրիկ Արուֆինին և նրան իր ծախսերով երաժշտություն է սովորեցրել ու կրթության տվել:

---

<sup>101</sup> Մուրադյան Պ. Մ., Սայաթ–Նովա՝ ըստ վրացական աղբյուրների, ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1963, էջ 95:

Եվ երբ նա մինչև 18 տարեկան հասակը տիրապետում է եր ելու և նվա ելու արվեստին, և ինչպես Բաֆֆին է նշում, «իրավունք» է ստանում «մեյդան» մտնելու, նրա խնամակալը նրան իր հետ Յնդկաստան է տանում նոր երկրներ ու աշխարհներ տեսնելու նպատակով. միայն այսպիսի առիթով կարող էր երիտասարդ եր իչը լոկ մի տարով ման ալ «Չաբաշ, Յինդուստան»:

Այնուհետև Սայաթ-Նովան երևի անմիջապես իր խնամակալի հետ վերադառնում է Թիֆլիս, որտեղ որպես եր իչ հանդես է ալիս Թիֆլիսի հասարակության առաջ:

Այդ ժամանակ եր իչը եղել է 20 տարեկան, այսինքն՝ նա Թիֆլիս է վերադարձել 1746 թ. վրաց Յերակլ 2–րդ թա ավորի ահակալության 2–րդ տարում:

#### 4. Կրթությունը

Սայաթ–Նովայի կենսա թության կնճռոտ հարցերից մեկը նրա կրթության ու թա իտության հարցն է: Այդ մասին նույնպես բանասերների կարծիքները հակասական են: Նրանցից ոմանք տնում են, որ տաղանդավոր ուսան–բանաստեղծը բավարար կրթություն չի ունեցել, իսկ հարցին ավելի լուրջ մոտեցողները պնդում են, որ մեր եր ի անզու ական արքան իր ժամանակի թա ետ մարդկանցից մեկն է եղել:

Դժբախտաբար, եր չի առաջին կենսա իր Գ. Ախվերդյանը նրա կրթության ու թա իտության մասին ոչ մի հիշատակություն չի թողել: Անցյալ դարի երկրորդ կեսին այդ հարցը առաջ քաշվեց վրաց թականա իտության կողմից: Վրացի բանասեր Զ.Մթածմենդալին, հիմնվելով բանավոր տեղեկությունների վրա, թում է, որ եր չի «հայրը նրան տվել է Դարիայի վանքը՝ որդուն թա ետ դարձնելու համար»<sup>102</sup>: Վրացի մի այլ բանասեր Գ. Լեոնիժեն, իրավացիորեն հերքում է այդ կարծիքը՝ պատճառաբանելով, որ «Սայաթ–Նովայի մանկության օրերին Դարիայի վանքը դեռևս ոյություն չուներ»<sup>103</sup>, բանասեր Գ. Լևոնյանը, ելնելով վրաց բանասերների այս թեր և դեմ կարծիքներից, հան ում է հետևյալ եզրակացության. «Մենք, թերևս, հավանական համարեինք, որ աղթական

<sup>102</sup> «Դրոբեա», Թիֆլիս, 1878 թ., նո. 119:

<sup>103</sup> Լեոնիժեն Գ., Գուսան Սայաթ–Նովա, Թբիլիսի, 1930 թ., էջ 12, ք ծանոթագրություն:

հայրը՝ Մահտեսի Կարապետն, իր որդուն տված լինել որևէ հայոց վանքի խնամքին: Ինչպես, օրինակ՝ Սանահնի...»<sup>104</sup>: Սակայն Լևոնյանը իր ենթադրությունը նույնպես կասկածելի է համարում, որովհետև, ինչպես ինքն է իրավացիորեն պնդում, «Սայաթ–Նովան վրացերեն ըստ իտալական մեջ ավելի առաջ էր, քան «հայեվարի»...»<sup>105</sup>: Եթե սրան էլ ավելացնենք այն, որ Սայաթ–Նովան առավել վարժ տիրապետում էր նաև թուրքերենին ու պարսկերենին և պարսկերեն (արաբերեն) լուսնանը՝ մի բան, որը բացառում է նրա սահմանում ուսանելու հան ամանքը, ապա մեզ մնում է համաձայնվել Գ. Լևոնյանի այն կարծիքի հետ, որ «Մեր եր չի կրթավարը պետք է որոնել մի ուրիշ տեղ»<sup>106</sup>, այսինքն՝ մի այնպիսի վայր, որտեղ ոչ միայն այդ լեզուների ուսուցման հնարավորություններ, այլև դրանց վարժ տիրապետելու միջավայր է եղել: Չնայած այս որոշակի հան ամանքների՝ մեծավաստակ սայաթնովա ետ Մ. Յասրաթյանը, առանց ստույ հիմքերի, զարմանալիորեն այն միտքն է հայտնում, որ «ըստ երևույթին Արուսիքը երկու ան ան է սովորել Սանահնում»<sup>107</sup>: Մեր ուսումնասիրությունների ընթացքում մենք եկանք այն հաստատ համոզմանը, որ Սայաթ–Նովան, ոչ թե երկու, այլ թեկուզ յոթ ան ան էլ սովորեր Սանահնում, նրան չէր հաջողվի այդքան վարժ տիրապետել չորս լեզուների և լուսնան երեք ձևերի, որ կարողանար այդ լեզուներով անկաշկանդ եր եր հորինել:

Այս ամենով հանդերձ՝ առավել զարմանալի է այն բանասերների կարծիքը, ըստ որի՝ իբրև թե Սայաթ–Նովան բավարար ըստ իտալական չի ունեցել: Բերենք միայն երկու փաստ մեր օրերի ըստականությունից:

Պարույր Սևակը, իր «Սայաթ–Նովա» մենա լուսնան մեջ հիմք ընդունելով աշուղական արվեստի ավանդական հատկանիշներից մեկը, ըստ որի՝ աշուղները իրենց մրցակիցներին պատասխանելու, երբեմն էլ տվյալ պահին որևէ վատ երևույթ ծաղրելու կամ լավը ու վեր ելու համար հանպատրաստից եր եր էին հորինում, ըստ է. «Սայաթ–Նովան, ըստ լուսնան լինելով գտարյուն բանաստեղծ, բնավ էլ բանաստեղծ չէր ըստ պաշտոնի և կենցաղի: Նա չ իտեր էլ, թե ինչ

<sup>104</sup> Լևոնյան Գ., Երկեր, Հայպետհրատ, Երևան, 1963 թ., էջ 335:

<sup>105</sup> Նույն տեղում:

<sup>106</sup> Լևոնյան Գ., Երկեր, Հայպետհրատ, Ե., 1963, էջ 335:

<sup>107</sup> Սայաթ–Նովա, Խաղերի ժողովածու, Կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մ. Հարությունյանը, էջ X:

ասել է ռասեղան, էլ ուր մնաց թե՛ աշխատասենյակ: Իր խաղերից շատ քչերը նա ըստ կլինի նույնիսկ ծնկի վրա: Գերազանցապես նա հորհինել է մտքի մեջ, առանց թուղթ ու ըջի, հանպատրաստից, անսպասելի առիթներով...»<sup>108</sup>:

Ով շատ թե քիչ ծանոթ է Սայաթ–Նովայի ստեղծա ործություններին, կամ ամեն մի ըրա ետ մարդ, կարողալով դրանք, երբեք չի ընդունի Սևակի վերոհիշյալ միտքը, որովհետև Սայաթ–Նովայի, թերևս մեզ հասած, ստեղծա ործությունները չափազանց բարդ են, ու ամենահանճարեղ ստեղծա ործողն ան ամ չէր կարող դրանք ըել «ծնկի վրա», էլ չենք ասում «հանպատրաստից»:

Բարեբախտաբար հանճարեղ ուսանը իր եր երում թողել է տողեր, որոնք այսօրվա թարմությամբ կարող են պերճախոս վկայություն հանդիսանալ այն բանի, որ ինքը սովորական մի հասարակ աշուղ չի եղել և ոչ էլ իր եր երը հորհինել է հանպատրաստից: Նա իր վրացերեն խաղերից մեկում (18) ըում է.

*Դուն չասիս, թե էս խիղճ սազանդարն ով ա.  
Խոսքիս տերն իմ, հունարըս էլ գրով ա...*

Մենք ընդ ծում ենք եր չի «հունարըս էլ ըով ա» արտահայտությունը, որովհետև նրա այդ «հունարը» այնքան մեծ է, որ նրա բանաստեղծությունները չափազանց բարդ են ու նրբահյուս բանվածքներ են հիշեցնում, եթե դրան էլ ավելացնենք այն, որ այդ եր երից շատերը բավականին դժվար ու անվերլուծելի ծածկա - ըրեր են պարունակում, ապա միան ամայն պարզ կդառնա, որ նա ոչ միայն իր խաղերը չի հորհինել հանպատրաստից, այլև ըել է մի այնպիսի բարձր մակարդակով, որի մասին ինքը իրավամբ ըում է.

*Ամեն մարթ չի կանա կարթա՛ իմ գիրըն ուրիշ գրերն է... (Հ–10)*

Եր չի այս վկայությունը բավական է, որպեսզի հերքվեն այն բոլոր ենթադրությունները, ըստ որոնց՝ իբր Սայաթ–Նովան բավարար ըա իտություն չի ունեցել:

Այստեղ հարկ ենք համարում մեջբերել Թեյմուրազ արքայազնի վավերա ըի այն մասը, որտեղ Սայաթ–Նովայի մասին ասված է. «Թեն ըում էր սովորական տեսքի հասարակ բանաստեղծություն-

<sup>108</sup> Սևակ Պ., Սայաթ–Նովա, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1969, էջ 160:



ներ, բայց մեծապես արժանավոր»<sup>109</sup> (ընդ ծունը մերն է — Յ. Ս. )։ Ինչպես տեսնում ենք, ժամանակակիցը վկայում է, որ մեր եր իչը ոչ թե հորինում էր հանպատրաստից՝ «ծնկի վրա», այլ՝ *րում էր* բանաստեղծությունները։

Եր չի մեզ հասած՝ ռական ժառան ությունը ապացուցում է, որ նա եղել է ժամանակի՝ ռա ետ մարդկանցից մեկը. շատ լավ տիրապետել է հայերեն, վրացերեն, թուրքերեն և պարսկերեն լեզուներին, ռել ու կարդացել է այդ լեզուներով։

Իր Դավթարում եղած հայերեն 2–րդ խաղի տակ (Յ. 5) նա ծանոթա ռել է. «Էս դիվանի լավ տեղ ասած, որն՝ ռոց հայերեն *տառ է* (ընդ ծունը մերն է — Յ. Ս.), որն վրաց, թուրքերեն էլ ուզում էի հետը խառնել, բայց չխառնեցի»։

Մենք արդեն մի ան ան նշել ենք, որ այս «թուրքերեն»–ը արաբական այբուբենն է, որը իր ժամանակին օ տա ործել են թուրքերը, և որը շատ լավ իմացել է Սայաթ–Նովան. թերևս այդ են վկայում նրա «ալիֆլամա» ռված թուրքերեն խաղերը։

Վաստակաշատ սայաթնովա ետ Մորուն Յասրաթյանը իր երկարատև ուսումնասիրություններով եկել է հետևյալ ճշ ռիտ եզրակացության. «Եր իչը, ինչպես երևում է նրա Դավթարից ու դեռևս չիրապարակված մի երկու ոտանավորից, հրաշալի իմացել է արաբական այբուբենը, որով այժմ էլ՝ ռում են պարսիկները և Արևելքի ու Աֆրիկայի այլ ժողովուրդներ։ Նրա ձեռա իր Դավթարում կան թուրքերեն «ալիֆլամա»–այբուբենական ոտանավորներ, իսկ անավարտ մի ոտանավորի առաջին տունը ռված է առանց արաբական այբուբենի հայտնի կետերի–նողդասըզ, որը կարող էր ռել շատ ռա ետ մարդը»<sup>110</sup>։

Մ. Յասրաթյանի այս միտքը հաստատող մի փայլուն ապացույց է նաև Սայաթ–Նովայի թուրքերեն 72–րդ խաղը, որը, եր չի ասելով, «Վեճ–թեջնիս» է, և որի նախա իրը անպայման արաբատառ–նողդասըզ է եղել, որովհետև նա իր հակառակորդին առաջարկում է իմանալ, թե իր թեջնիսի բառերից քանիսն է նողդասըզ և քանիսը՝ սովորական։

Եր իչը թեջնիսի 3–րդ տան մեջ ասում է.

*Բաղ բեջարողն է հենց իրավունքի տեր,  
եկ, գոռբա Զալ մի դառ, սիրե գիր–գրքեր.*

<sup>109</sup> Մուրադյան Պ., Սայաթ–Նովան՝ ըստ վրացական աղբյուրների, էջ 99։

<sup>110</sup> Սայաթ–Նովա, Խաղերի ժողովածու, կազմեց Մ. Յասրաթյանը, էջ X։

*Չունքի վերուստ կան գրված գոհար խոսքեր,  
Կեստով, անկեստ քանի՞ քառ կա սրա մեջ:*

Եվ ամենահետաքրքիրն այն է, որ նույն թեջնիսում իրեն համարում է ըստ մարդ: Նա թեջնիսը վերջացնում է հետևյալ հաղթական երկտողով.

*Սիվ–սպիտակը ջոկիս՝ լիզուտ միզրումն է,  
Կարթագոդի արած գործը վունց թե հեջ:*

Բարեբախտաբար սա մեր հանճարեղ ուսանի միակ տողը չէ, որտեղ նա իրեն ըստ մարդ է համարում: Նա հայերեն խաղերից մեկում վկայում է, որ՝

*Այբուբենը կարթացել եմ դասեդաս» (Հ–51):*

Բացի այդ, բնորոշելով ըստ իտալական արժանիքը կյանքում՝ Սայաթ–Նովան իր հայերեն 16–րդ խաղով մարդկանց հաղորդում է, թե՝

*Յիրիք բան կա հոքու մարմնու կարքումն է՝  
Գիր սիրե, դալամ<sup>111</sup> սիրե, Դավթար սիրե:*

Եթե սրանց էլ ավելացնենք եր չի՝ մեզ հասած քառալեզվյան խաղը (էջ 229), ապա կասկածի նշույլ ան ան չի մնա, որ մեր բազմաբանքար եր իչը շատ լավ տիրապետել է հայերեն, վրացերեն, թուրքերեն ու պարսկերեն լեզուներին և այնքան լավ է իմացել նրանց այբուբենը, որ դրանց թվային արժեքներով բազմաթիվ ծածկա իր է կազմել իր խաղերում:

Չնայած այս ամենին՝ 1979 թվականի ՀՍՍՀ ԳԱ «Պատմա–բանասիրական հանդեսի» նո. 1–ում Վ. Ս. Բաղդասարյանը տպա ըել է մի հոդված՝ «Սայաթ–Նովայի Դավթարի և մի քանի խաղերի մասին»<sup>112</sup>, որտեղ իրար կողքի շարելով Սայաթ–Նովայի՝ մեզ հասած Դավթարի (Սայաթ–Նովա, Խաղերի նմանահանություն, Երևան, 1963) 23–72 էջերի վրա եր չի կողմից հայատառ ըված արաբական տառանունների շարքը, որոնց ըելու նպատակը մինչև այսօր չի բացահայտված, հայտարարում է, թե՝ «Սայաթ–Նովայի իմացած արաբական այ–

<sup>111</sup> Ղալամ – գրիչ:

<sup>112</sup> Պատմա–բանասիրական հանդես, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1979, էջ 233:

թուրքները թակահարում էին, նա տառերը թուրքերի լսած–սովորածի ծնով» (էջ 235): Բաղդասարյանը, չբավարարվելով այսքանով, ավելի է «խորացնում» իր տեսությունը. «Եթե երեք լեզուներին բանավոր տիրապետելու ապացույցները կասկած չեն հարուցում, ապա նրա թողած ձեռնա իր մնուչները վկայում են արաբերեն իր չիմանալու մասին: Հակառակ ապացուցող ոչինչ չկա: Եր իչն իր թուրքերեն խաղերը մեզ հասած Դավթարում ըի է առել հայկական, մասամբ էլ վրացական տառերով: Իսկ արաբական տառերի հերթականությամբ վերը բերված էջակալումը, ինչպես նաև հայատառ թուրքերենի արաբական լեզվի վրա հիմնված լեզվի առաջինը: Ոչ մի կասկած չի մնում, որ Սայաթ–Նովայի իմացածը լսած–սովորած է եղել. նա արաբերեն կրթություն չի ստացել» (էջ 236):

Տարօրինակն այն է, որ Բաղդասարյանը, առանց լուրջ հիմնավորման, պնդում է, որ «Հակառակ ապացուցող ոչինչ չկա», և դա այն դեպքում, երբ ինքը իր հողվածի սկզբում առաջարկում է, թե «Եկեք սթափ զննենք...» (էջ 234): Եվ երբ փորձում են հետևել Վ. Բաղդասարյանի այս խորհրդին, պատկերը միան ամայն հակառակն է ստացվում:

Փորձենք հետևել:

Նախ՝ ո՞վ է ասել, որ Սայաթ–Նովան «արաբերեն կրթություն» է ստացել, որ Բաղդասարյանը ուզում է հակառակն ապացուցել: Սայաթնովա իտությանը հայտնի է, որ մեր եր իչը տիրապետել է թուրքերեն, պարսկերեն լեզուներին այնքանով, որքանով պարսիկներն ու թուրքերը ընդ–կարդացել են արաբերեն տառերով, ապա Սայաթ–Նովան այդ միջոցով է տիրապետել արաբական այբուբենին: Իսկ այն հարցին, թե ինչու Սայաթ–Նովայի՝ մեզ հասած Դավթարում արաբատառ խաղեր չկան, դրա պատճառը հասարակ է: Բանն այն է, որ մեզ հասածը եր չի հիմնական Դավթարը չէ, սա, մեր կարծիքով, ընդհանուր առմամբ երևի մեկի պատվերով կամ յուրայինների ընդհանուր առմամբ համար, որոնք հայեր ու վրացիներ էին, և որոնցից շատերը, արաբերեն կարդալ չիմանալով, բնականաբար, պիտի չկարդանային կարդալ արաբատառ թուրքերը, ուստի Դավթարը դյուրընթեռնելի դարձնելու նպատակով, սկզբում եր իչը նպատակադրվում է ընդ միայն հայատառ, բայց հետո այնու, մեզ անհայտ պատճառներով, այն շարունակվում է նաև վրացատառ, մի բան, որը ակնհայտ փաստ է և այսօր հայտնի է շատերին: Այս մասին հան ա–մանորեն կիսուսի հաջորդ լինում:

Վ. Բաղդասարյանի մի փաստն էլ այն է, որ իբր Սայաթ–Նովան «Ադրբեջանական ալիֆլամաները», այսինքն՝ արաբական տառա-նունները հայատառ ընկիս միշտ չէ, որ արտահայտել է դրանց հնչ-յունները: Եթե սթափ գննենք, ապա ոչ միայն Սայաթ–Նովան, այլև ամենամեծ լեզվաբանն ան ամ շատ դժվարությամբ կկարողանար արաբական տառերը ճիշտ հնչմամբ արտահայտել հայկական տա-ռերով: Հետաքրքիր է, թե Վ. Բաղդասարյանը այսօր հայերեն տառե-րով ինչ ճշտությամբ «կհնչեցներ» ռուսերեն **Կ, Ն, Կ** հնչյունները:

Վ. Բաղդասարյանը, առանց որևէ բավարար հիմքի, հայտարա-րում է նաև, որ իբր Սայաթ–Նովան ոչ միայն չի իմացել արաբական այբուբենի թվային արժեքները, այլև լավ չի պատկերացրել տառերի հերթականությունը: Մինչդեռ առկա փաստերը այլ բան են վկայում: Եր չի Դավթարի թուրքերեն խաղերը եզրափակում է «ալիֆլամա դարահեջա» (բանաստեղծության տեսակ, որը ըվում է որևէ այբու-բենի հերթականությամբ և հան ավորվում նույն այբուբենի տառա-խաղերով) եղեցիկ մի խաղ, որտեղ ոչ միայն ամենայն ճշ ըտու-թյամբ օ տա ործված է արաբական (իմա թուրքերեն) այբուբենը, այլև խաղի վերջում տառերի արժեքով ծածկա իր է կազմված:

Անհրաժեշտ ենք համարում խաղը բերել ամբողջությամբ.

**Ալիֆ** ալահի սեվարսան, **Բեի** բանդի Թենիդա,  
Նավար իբի ալիֆ իբի բե.  
**Սեի**, սեվինմա, **Ջին** հարջի գուլինա,  
**Հեի**, **Խեի** խար սիզ **Դալ** ու ալիֆ իբի բե:

**Բելա** դանիչ **Ջալ** գալումլար բիլմասուն,  
**Րեի** բանդիվդան, **Ջեի** Սին սուրաթսուն,  
**Շին** շահարդա աղիլ հեքիմ օլմասուն,  
**Բադա** գեդար **Սաթ** ու ալիֆ իբի բե:

**Ջաթ** գահմարսուզ խեր ու շարի Ղրիշմազ,  
**Թեի** թուանդ նամարդ մարդա գորուշմազ,  
Յուլսզա (.....) յուլա բիլմազ,  
Սորուշմազ սորա չաքար **Ջե** ու ալիֆ իբի բե:

**Աին** ախարուլան աֆարմիզ բուլանզ,  
**Ղեին** դեյրաթ էիլա չաք սոզա զափանզ,

**Փեհի փիր ուստադան դանիշար դաբանդ  
Հարզիզ տուժմազ Ղաֆ ու ալիֆ իքի բե:**

**Կաֆ ալիֆ Լամ ալիֆ Սիմին արինդի,  
Նուն նհալուն սալբու ղայդուն սարինդի,  
Հեյ դան Սահադ-Նովա Վովա վարանդի  
Լամ ալիֆ լա իե (Յ) ուալիֆ իքի բե:**

Որ Սայաթ-Նովան իմացել է արաբական այբուբենի թվային արժեքները, դա շատ պարզ երևում է նաև Դավթարի 25-րդ էջում՝ ղված թուրքերեն խաղի հետևյալ տողից. «Ման Սատաթ-Նովա ամ օխամի-շամ Լամ...» («Ես Սայաթ-Նովան եմ, կարդացել եմ Լամ...»), որը նշանակում է՝ ես Սայաթ-Նովան եմ, կարդացել եմ մինչև 30 (30-ը արաբական Լամ տառի թվային արժեքն է), որով եր իչը ակնարկում է իր 30-ամյա հասակը. այս միտքը կա նրա մի շարք այլ խաղերում և ծանոթա թուրքումներում:

Եվ վերջապես, եթե սթափ զննենք եր չի՝ մեզ հասած Դավթարը, ապա մի ան ամ նս կանդրադառնանք հայերեն 5-րդ խաղի (Դավթարում՝ 2-րդը, էջ 103), որը ղված է հայերեն ու վրացերեն խառը տառերով և որն ունի հետևյալ ծանոթա թուրքումը. «Էսպես դիվանի լավ տեղ ասած, որն՝ ղոց հայերեն տառ է, որն՝ վրաց. թուրքերեն էլ (իմա՝ արաբերեն — Յ. Ս.) ուզում էի հետը խառնել, բայց չխառնեցի»: Իսկ թե ինչու արաբական տառեր չի խառնել, դրա պատասխանը, մեր կարծիքով, դարձյալ նույնն է. եր իչը խուսափել է արաբական տառեր խառնելուց, որպեսզի խաղը հայ և վրացի ընթերցողի համար անընթեռնելի չդարձնի: Բայց կարևորը դա չէ: Կարևորն այն է, որ Սայաթ-Նովան անձամբ վկայում է իր՝ արաբերեն ղել-կարդալ իմանալու մասին:

Իսկ Սայաթ-Նովան որտե՞ղ կարող էր «թուրքերեն» սովորել, այն էլ այնքան լավ, որ իմանար նույնիսկ «թուրքերեն» այբուբենի տառերի հերթականությունն ու թվային արժեքները:

Ինչպես այս հան ամանքը, այնպես էլ նրա շատ լավ ղված թուրքերեն խաղերը ապացույց են այն բանի, որ տաղանդաշատ պատանին մի քանի տարի ապրել է թուրքական միջավայրում: Հակառակ պարա այում նա չէր կարող այնպես տիրապետել թուրքերենին, որ կարողանար այդ լեզվով բանաստեղծություններ հորինել այնպիսի նուրբ բարդություններով ու ծածկա ղերով, որոնք, ինչպես եր իչն ինքն է իրավամբ ասում՝ «ամեն մարթ չի կանա կարթա...»:

Այս բոլոր փաստերը տանում են դարձյալ դեպի մեր այն ենթադրությունը, որ Սայաթ–Նովան որոշ ժամանակ ապրել է Համադանում, որտեղ միջնադարում լայն տարածում ունեւր թուրքերեն լեզուն:

Սայաթ–Նովան շատ լավ տիրապետել է նաև հայերենին: Այդ են վկայում մեզ հասած նրա հայերեն 50–րդ խաղում օ տա որժված այբբենական կար ը, կրոնավոր եղած ժամանակի ընդօրինական ձեռա ըերն ու նրանց հիշատակարանները և մեզ հասած Դավթարի հայատառ թուրքերեն մի շարք խաղերը, որն, անկասկած, եր չի ձեռա իրն է: Եվ վերջապես, եթե այս բոլորն էլ հաշվի չառնենք, բավական է նշել այն փաստը, որ եր իչը թե՛ հայերեն և թե՛ թուրքերեն ու վրացերեն խաղերում ըուն է, որ ինքը ըա ետ է:

Հայերեն 51–րդ խաղում ըուն է.

*Այբուբեմըն կարթացիլ իմ դասեդաս... (կարգերով)*

Թուրքերեն խաղերից մեկում (Դավթարի էջ 25) ըուն է.

*Ես Սայաթ–Նովան եմ, կարդացել եմ մինչև երեսուն...*

Ուրեմն՝ նա մինչև իր 30 տարիքին հասնելը ըել–կարդալ է սովորել:

Եթե հայերեն 5–րդ խաղին և նրա ծանոթա ըությանը ավելացնենք այն հան ամանքը, որ խաղերը ըելու թվականները ըված են վրացական քրոնիկոնով, որի թվանշանները ըված են վրացական տառերի թվային արժեքներով, ապա պարզ կդառնա, որ նա քաջածանոթ է եղել նաև վրացական այբուբենին:

Սայաթ–Նովան իր ժամանակի ըա ետ ու զար ացած մարդկանցից մեկն է եղել. նույնիսկ ավելին՝ նրա խաղերից երևում է, որ նա կարդացել է ժամանակի նշանավոր կրոնական ըերը (Աստվածաշունչ, Ղուրան, Ավետարան և այլն), ծանոթ է Հոմերոսի ստեղծարծություններին, կարդացել է պարսիկ նշանավոր բանաստեղծների, հատկապես Սաադիի որժերը: Նրա «Էշխի ծովի մինչեն հանած... (Թ–1)» խաղը մի յուրահատուկ պատասխան է Սաադու «Գուլիստանի» «Նախեր անք»–ին:

Բայց թե որտեղ կամ ինչ պայմաններում է ձեռք ըերել այդ ըա իտությունը, առայժմ այդ հարցը նույնպես կարոտ է հատուկ ուսումնասիրության:

## 5. Սայաթ-Նովան՝ պալատական եր իչ

Սայաթ-Նովայի՝ մեզ հայտնի կենսա ռական փաստերից մեկն այն է, որ նա եղել է վրաց Յերակլ II թա ավորի պալատական եր իչը: Այդ մասին տեղեկություններ կան ոչ միայն ժամանակակիցների ընդհանուր հիշատակություններում, այլև եր չի՝ մեզ հասած խաղերում: Նա իր վրացերեն խաղերից մեկում (Վ-29) ընդունում է.

*Վրաց թագավորի սագանդարն իմ յիս,  
Ինձ Սայաթ-Նովա-Արութինն ա, կոսին...*

Իսկ թե երբ է նա դարձել «վրաց թագավորի սագանդար», այդ մասին եր իչը իր կյանքի վերջին տարիներին Յաղպատի վանքում Յովհան արքայազնի դասընկեր սարկավա Իոնե Խելաշվիլուն պատմել է հետևյալը. «Ես լավ չոն ուր (նվա ել) իտեի և միաժամանակ պարսկական հան ի վրացերեն եր եր ըեցի, (որը) դեռևս ընդունված չէր, և երբ թա ավոր Յերակլը մեջլիսում էր, մեզ նվառողներին (նրա մոտ) տարան, այն ժամանակ ես պարսկական հանուկ վրացերեն եր եցի: Բատոնին շատ դուր եկավ և ինձ խալաթ էլ շնորհեց: Յետո ուրիշ շատեր (այդպես) եր եցին և ընդօրինակեցին ինձ. ես ամենուր տեղ ունեի ոչ միայն եր ով, այլ նաև կատակ (ասացողությամբ) և աշխարհա ռական ործերով: Շատ բաներով էի զբաղված: Յետո այս հո կորականությունն ընտրեցի և, փաստ եմ ու հենց հո կորականության շրջանում ասած խաղը եր ով ձեզ ներկայացրի»<sup>113</sup>:

Ինչպես տեսնում ենք, Սայաթ-Նովան պալատ է կանչվել Յերակլ II-ի օրոք, իսկ Յերակլը ահ է բարձրացել 1744 թվականին, հետևաբար եր իչը պալատ է կանչվել 1744-ից հետո, բայց թե կոնկրետ որ թվականին, այդ մասին, բարեբախտաբար, նա վկայություն է թողել իր խաղերում: Յայերեն խաղերից մեկում (31), որը ընդունված է 1758 թվականին, եր իչը, դիմելով իր սիրեցյալին, ընդունում է.

*Տաս տարի է մանիմ գալի Փաղիշահի շարիֆի պես.  
Օխտը տարի էլ ման գու քամ սագըն ձեռիս Ղարիբի պես՝  
Բութա Շահասանամըս դուն իս, էլ չունիմ օջով աչքի լուս...*

<sup>113</sup> Մուրադյան Պ., Սայաթ-Նովան՝ ըստ վրացական աղբյուրների, ՀԽՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1963, էջ 95:

Այս խաղից երևում է, որ Սայաթ–Նովան 10 տարի է, ինչ իրեն թա-  
ավորական պաշտոնյա է համարում և այդքան ժամանակ էլ ծանոթ  
է իր սիրո էակին. ուրեմն՝ նա պալատ է կանչվել հիշյալ խաղը՝ ռելուց  
10 տարի առաջ, այսինքն՝ 1748 թվականին, որը Յերակլ 2–րդի ա-  
հակալության 4–րդ և եր չի՝ հնդկաստանյան շրջա այությունից վե-  
րադառնալու 3–րդ տարին է:

Որ Սայաթ–Նովայի սիրո էակը տնվելիս է եղել պալատական  
միջավայրում և ազնվական ծա ում է ունեցել, դա անկասկած է: Բա-  
վական է բազմաթիվ օրինակներից բերել միայն մեկը՝ վրացերեն  
21–րդ խաղի վերջին տունը.

*Յարըս Հնդու Շահի իխտիար*<sup>114</sup> ունե.  
*Ամեն հուքմը*<sup>115</sup> գլուխ բերող ճար ունե.  
*Բրուլե սինով*<sup>116</sup> անգին ակ ու քար ունե.  
*Սըրով, նիզով դուռը պահող ջար*<sup>117</sup> ունե.  
*Ո՞վ իս, Սայաթ–Նովա, մե չարքաշ իս դուն:*

Այսպիսով՝ Սայաթ–Նովան պալատ է կանչվել 22 տարեկան հա-  
սակում:

Պալատական կյանքի վերջին երկու տարում, այսինքն՝ մինչև  
1750 թվականը, թե ինչ է նվա էլ ու եր էլ մեր հանճարեղ ուսանը այդ  
երկու տարում, մեզ ոչինչ հայտնի չէ: Գուցե նա ուրիշ հայտնի ուսան-  
ների եր եր է եր էլ կամ, ինչպես ինքն է հիշատակում, վրացական եր-  
եր է եր էլ պարսկական եղանակներով, այնուամենայնիվ, ինչ էլ որ  
եր էլ է՝ լավ ընդունելություն է տել պալատում: Այդ մասին է վկայում  
եր չի 1750 թ. րած կենսա րական խաղի հետևյալ տողը.

*Քրսանհինգուամ մելդան մըտած և՛ կըլողամ, և՛ կըթռչեմ...*

Սակայն 25–ամյա հայ տաղանդավոր երիտասարդի «լողն» ու  
«թռիչքը» դուր չի ալիս օտարազ ի պալատական ճահճացած մի-  
ջավայրին, որի պատճառով էլ սկսվում է անհավասար պայքար տա-  
ղանդավոր «ղարիբ բըլբուլի» և պալատական ապաշնորհ պայման-  
ների միջև:

<sup>114</sup> Իխտիար – արտոնություն, իրավունք:

<sup>115</sup> Հուքմ – ուժ, հրաման:

<sup>116</sup> Բրուլե սինի – բյուրեղապակյա սկուտեղ:

<sup>117</sup> Ջար – բանակ, զորք:



Վերջիններին հաջողվում է օ տա ործել եր չի աղտնի սերը, որի առարկան, ինչպես տեսանք, տնվում էր պալատական միջավայրում, և դրանով վարկաբեկել նրան:

Նրանք իրենց նպատակին հասնելու համար կան չեն առնում ոչ մի միջոցի առաջ: Որպեսզի պատվազուրկ լինի արդեն համբավ ձեռք բերած երիտասարդ ուսանը, նրանք դիմում են բանասարկությունների: Բոլորին համոզած լինելու համար, որ Սայաթ-Նովան իսկապես կապեր է հաստատել ազնվազարմուհու հետ, հնում շատ տարածված մի սովորության համաձայն՝ դասավորում են այնպես, որ այդ աղջկա «շանան» (սանրը) պատահաբար ընկնում է եր չի ձեռքը, և այդ համարելով փաստ՝ սկսում են հալածել նրան: Բանասարկություններին հաջողվում է այդ առիթով մույնիսկ եր չի սիրած էակին դրդել եր չի դեմ: Սակայն եր իչը ամեն կերպ աշխատում է իր սիրածին համոզել, որ դա բանասարկություն է.

*... Ինձ ավատա՛, չիմ գողացի, յիս գթիլ իմ գըլխիտ շանան.*

*Սուտ ասիլըն յիս չիմ գիգի, էրագուժրտ տեսած բան է...*

Բայց տեսնելով, որ այլևս ոչնչով չի կարող ապացուցել իր անմեղությունը, վշտացած ու հուսահատ բացականչում է.

*Զուր իս լալի, Սայաթ-Նովա էտ խիալը<sup>118</sup> մտքետ հանե.*

*Թավուզի թախտն ով կուտա քիզ, դուն էդ ցավեն չիս դընջանա: (Վ-10)*

Բանն այնտեղ է հասնում, որ թա ավորը ևս փոխում է իր կարծիքը եր չի նկատմամբ: Թերևս այդ է վկայում եր չի հանրահայտ «Դուն էն ըլխեն...» խաղը, որը մի արգ<sup>119</sup> է՝ ուղղված Յերակլ թա ավորին.

*Դուն էն գըլխեն իմաստուն իս, խելքտ հիմարին բաբ<sup>120</sup> մի՛ անի...*

*Թե վոր գիգիմ բեգարիլ իս, ուրիշին սաբաբ<sup>121</sup> մի՛ անի...*

*Մըտի՛կ արա քու ստեղծողին՝ նահախ<sup>122</sup> տիզ ղազաբ<sup>123</sup> մի՛ անի...*

<sup>118</sup> Խիալ – փափագ:

<sup>119</sup> Արգ – խնդրագիր:

<sup>120</sup> Բաբ – հավասար:

<sup>121</sup> Սաբաբ – պատճառ:

<sup>122</sup> Նահախ – անտեղի:

<sup>123</sup> Ղազաբ – ոճիր:

*Դու քու սիրտըն իստակ պահե, յաղի<sup>124</sup> խոսկըն ավտալու չէ...  
Սայաթ–Նովու գերեզմանըն Հինդ, Հաբաշ, Արաբ մի՛ անի:*

Այս տողերից պարզ երևում է, որ եր իչը գրպարտված է և ենթակա է պալատից վտարման: Հատկապես վերջին տողով նա թա ավորից խնդրում է, որ իզուր տեղն իրեն տարա իր չղարծնի, այնպես չանի, որ եր իչը արտաքսվի Վրաստանից ու անհետանա խաղում հիշատակած երկրներում:

Սակայն Սայաթ–Նովան անմիջապես չի վտարվում պալատից: Նա 1753 թվականից հետո, չնայած ենթարկվում է բացարձակ հալածանքների, բայց և այնպես ջանք է ործ դնում՝ պալատից չհեռանալու համար, որպեսզի չհեռանա իր սիրո էակից: Այս մասին շատ պարզ ասված է թուրքերեն 85–րդ խաղում.

*էս վրաց թավաղներու մեջ ջիվան կինքըս մաշեցի,  
էս սիվասիրտ յարի ձեռին արուն–արտասունք թափեցի.  
Անարկվածի նըշան ճակտիս խալխի նամուս քաշեցի,  
Սայաթ–Նովան իմ–բանաստեղծ՝ ոահմի–ջանանի<sup>125</sup> սիրուն:*

Սակայն մեկ տարի հետո՝ 1754 թվականի մարտ ամսին, կտրվում է սիրահար ուսանի հույսի միակ թելը. սիրած աղջիկը երես է դարձնում նրանից և դրժում իրենց սիրո աղտնի պայմանը: Այդ մասին են լված հայերեն 22–րդ խաղի այս տողերը.

*Սայաթ–Նովան ասաց զուլում<sup>126</sup> աչկըս լալիս է արին.  
Հում կաթնակիր–Աթամի գաթ<sup>127</sup>, նալաթ քու էյթիբարին.  
Իզրարեմեն շուտ անցկացար, ուր է յարասուն տարին...*

Այնուհետև եր իչը հայերեն մի ուրիշ խաղում (18) հուսախաբ, բայց վճռական շեշտով բնորոշում է իրենց միջև եղած սերը.

*Սայաթ–Նովեն ասաց՝ շատ ի ջանք դըրի,  
Մե բափա<sup>128</sup> չը տեսա հում կաթնակիրի.*

---

<sup>124</sup> Յադ – օտար:

<sup>125</sup> Ռահմի ջանան – գթոտ հոգյակ:

<sup>126</sup> Չուլում – անգութ:

<sup>127</sup> Աթամի գաթ – Ադամորդի:

<sup>128</sup> Բափա (բաֆա) – հավատարմություն:

*Ովոր ինձ չի սիրի՝ յիս էլ չիմ սիրի.  
Սերըն սեր կու բերե՝ սիրեկան գուքամ:*

Թվում է, թե Սայաթ–Նովան սրանից հետո պետք է որ վերջ դներ իր սիրո անհույս տառապանքներին և կղմեր, եթե մեկ ամիս անց, այսինքն՝ 1754 թվականի ապրիլին, եր չի «հում կաթնակիր» յարը աղտնի չտեսակցեր եր չի հետ և չասեր հետևյալ խոսքերը.

*Ինձ սիրեցիր, էշխըն ընգար, խաղի Դավթար իմ քեզ ամա...  
Ես քու մահըն վունց կու խընդրիմ՝ նուղլ<sup>129</sup> ու շաքար իմ քիզ ամա.  
Թաք ուրիշ գողալը չի սիրիս՝ իղրարով յար իմ քիզ ամա...  
Քու գարզըն ինձի պառվեցուց. ումըն ասիմ, Սայաթ–Նովա...  
Ծալե Դավթարըտ դուլթին<sup>130</sup> դիր՝ անգուր<sup>131</sup> ու քար<sup>132</sup> իմ քիզ ամա:*

Սա հայերեն 23–րդ խաղն է, որի տակ ծանոթա րված է «... Ես, Արութինը և իր սիրեկանը որ խոսել էին, էն է. սիրեկանն ասել է ուղղակի Սայաթ–Նովայի էրեսին, քրոնիկոնի 442–ին»:

Հարց է առաջանում՝ ինչ նպատակ է հետապնդել ազնվագարնուհին՝ այս քայլին դիմելով: Մեր ենթադրությունն այն է, որ նա վախեցել է, թե չլինի հանկարծ եր իչը աշխարհով մեկ պարսավանքի ենթարկի նրան՝ սիրո ուխտը դրժելու համար: Նրա նպատակը շատ պարզ ասված է խաղի վերջին տողում. «ծալե Դավթարըտ դուլթին դիր...», որը մշանակում է՝ այլևս մի՛ եր իր, մի՛ ըրի իմ մասին: Այս տողին մատրոդող մի տողում նա եր չին խնդրում է. «Մի՛ ըցի ձեռնեմն ձիռըն՝ օսկե թաս իմ, Սայաթ–Նովա»:

Եր չի սիրուհու մտադրությունը ավելի լավ է երևում թուրքերեն 82–րդ խաղի մտքից.

*Նազլու յարից խաբար<sup>133</sup> էկավ, թե «էլ չիմ սիրի»,— կոսե.  
«Աչկը լալով մողըս էլ գա, արասունքին տեր չիմ,— կոսե,  
Թաքուն պահած սրտիս սերը չավ<sup>134</sup> է արել աշխարհին՝  
էլ չիմ հիշի, չիմ խղճա, թող գնա կորչի»,— կոսե:*

<sup>129</sup> Նուղլ – արևելյան քաղցրավենի:

<sup>130</sup> Դուլթի – սնդուկ, արկղ:

<sup>131</sup> Անդուր – անդորր:

<sup>132</sup> Քար – փրկություն:

<sup>133</sup> Խաբար – լուր:

<sup>134</sup> Չավ – հայտնի:

Իհարկե, Սայաթ–Նովան որոշ ժամանակ «լռում է»․ այլևս չի խոսում իր «անէթիբար» յարի մասին․

*Բլբլբուլըն ասաց «վարժիս խաթրի»<sup>135</sup> քարեն<sup>136</sup> էրված իմ...  
Տասնուամեկ ամիս մունջ իմ կացի՝ տարեն էրված իմ...*

Բողոքում է նա հայերեն խաղերից մեկում (48)։ Սակայն սիրեցյալի «խաթրը» փրկելու համար այս «մնջությունը» չի փրկում եր - չին․ մեկ տարի անց՝ 1755 թվականին, նրան հեռացնում են պալատից։

Իսկ ինչպե՞ս ենք իմանում, որ Սայաթ–Նովան պալատից հեռացվել է 1755 թվականին։

Այդ մասին շատ պարզ ասում է եր իչը իր 1759 թվականին րած հայերեն խաղերից մեկում (43)․

*Ինչ քիզանից հեռացիլ իմ, իմ ջանումըս ջան չէ մըտի...  
Հենց գիզիմ, թե չուրս տարի է Քաղաքըն քարվան չէ մըտի...*

Եթե եր իչը 1759 թվականին իր սիրո էակից հեռացված է եղել չորս տարի, ապա նա պալատից հեռացվել է 1755 թվականին (1759–4)։

Այստեղ չափազանց ուշա րավ է երկրորդ տողը։ Սայաթ–Նովան, ռելով «Յենց իղիմ, թե չուրս տարի է Քաղաքըն քարավան չէ մըտի», սրանով ուզում է ասել, որ չորս տարի է, ինչ Քաղաքը (Թիֆլիսը) իր համար դատարկ է թվացել։ Ուրեմն անկասկած է, որ եր իչը պալատից վտարվելուց հետո էլ դարձյալ Թիֆլիսում է ապրել։ Յետևաբար Սայաթ–Նովան միայն վտարվել է պալատից և ոչ թե անմիջապես ուղարկվել է վանք, ինչպես ենթադրում են ոմանք։

Իր՝ պալատից վտարվելու մասին վրացերեն 30–րդ խաղում Սայաթ–Նովան րում է․

*Սազը քոքած, ձեռքիս բռնած, հազրված՝  
Թաքավուրի մոտ գնացի զարթըրված.  
Ինձ յիգ տըվին, վունցուր փուշըս կոտըրված.  
էրնեկ լիզուն չիմանայի յիս նըբանց.  
Ասին «գընա՛, երեստ սիվ մուր իս դուն»։*

<sup>135</sup> Խաթր – պատիվ, հարգանք։

<sup>136</sup> Քարեն (քյարի համար) – փրկության համար։

1755 թվականին եր չի՝ պալատից վտարվելու ամենաակնառու փաստն այն է, որ սկսած այդ թվականից նա ընդ է այնպիսի սրտամորմոք խաղեր, որոնցում ս ում է իր այնքան նվիրական, բայց և անհույս սերը՝ մե՛րթ այդ բանում մեղադրելով իրեն ու իր բախտին, մե՛րթ իր «անէթիբար» յարին, և մե՛րթ էլ անհրավ աշխարհին...

Այսպիսով՝ մենք իմանում ենք, որ Սայաթ–Նովան պալատ է կանգվել 1748 թվականին, երբ ինքը 22 տարեկան է եղել: Պալատում մնացել է շուրջ յոթ տարի՝ մինչև 1755 թվականը: Պալատից վտարվելով՝ նա շարունակել է ապրել Թիֆլիսում մինչև 1759 թվականը. այդ եմ վկայում այդ տարիներին ը ված նրա սրտամորմոք խաղերը: Հետևաբար՝ անհիմն է բանասերներից շատերի այն պնդումը, թե Սայաթ–Նովան երկու ան ամ է հեռացվել պալատից: Եր չի կենսա թուքանը վերաբերող այս և մի շարք այլ ոչ ճիշտ կարծիքների պատճառն այն է, որ բանասերներից շատերը, անվերապահորեն ընդունելով Գ. Ախվերդյանի վարկածը՝ եր չի ծննդյան տարեթվի վերաբերյալ (1712 թ.), չեն կարողացել «համաձայնեցնել» եր չի տարիքը (շուրջ 40–46 տարի) նրա խաղերում արտացոլված և այլ աղբյուրներից մեզ հասած հատուկեմտ կենսա ըական տեղեկությունների ու փաստերի հետ:

Որպես մեր խոսքի ապացույց՝ այստեղ հարկ ենք համարում մեջբերել մեծավաստակ իտնական Մորուս Հասրաթյանի միայն մի կարծիքը՝ ընթերցողին ցույց տալու համար, թե երևելի սայաթնովատոր որքան վերապահումներ ու ենթադրություններ է արել, որպեսզի ընթերցողին մի կերպ ապացուցի, որ Սայաթ–Նովան պալատական եր իչ եղած ժամանակ կին ու երեխաներ է ունեցել: Նա նույնպես այն կարծիքին է, որ Սայաթ–Նովան երկու ան ամ է հեռացվել պալատից: «Ուշա ըավ է, — ըում է Հասրաթյանը, — որ 1750–ական թվականների վերջերին եր իչը իր խաղերի դիվանը լրացնելու նպատակով սկսել է իր նոր սևա ըությունների արտա ըությունը մի նոր դիվանի մեջ: Սակայն 20–րդ էջը նույն թանաքով «նախշել է» շուրջ 9–10 տարեկան մի երեխա, այն է՝ իր որդի Մելքոնը՝ շատ անվարժ նկարելով մի ըուխ և «ծաղիկ»: Ավելի վատ է վարվել 70–րդ էջի հետ՝ ամբողջը լցրել ճանկտոցներով՝ չնոռանալով նաև իր անունը, ինչպես և 37–րդ էջում: Հարց է ծա ում՝ մոտավորապես 1747–48 թթ. ծնված Մելքոնը (Մելիքսեթ) է եղել 1810 թ. ծնված Մովսեսի հայրը (+1883), թե՞ եր իչը այրիացել է՝ զրկվելով և՛ կնոջից, և՛ որդուց, ապա կրկին ամուսնացել, այս ան ամ՝ 1768 թ. տապանաքարով հայտնի (լոռեցի) Մարմարի հետ և ունեցել չորս երեխա՝ ավա որդու անունը նույնպես Մելիքսեթ դնելով: Շատ կսազեր, եթե եր չին նրա բուռն սի-

րահարության ժամանակ այրի համարենք, թեև ընտանիք ունեցող 35–45–ամյա մահացած մի ներաշխարհով մարդ կարող էր ևս բուռն թափով սիրել, մահավանդ որ այն ժամանակ բացառիկ երևույթ էր սիրահարությանը ամուսնությունը, իսկ եր չի թոռ տեր Մովսեսի ծնունդը 1810 թվականից մի քանի տարով առաջ համարենք կամ ավելի հավանական համարենք 60–62 տարեկան նույն Մելիքսեթի որդին...»<sup>137</sup>:

Մեր կարծիքով, այստեղ մանրամասն մեկնաբանությունների անհրաժեշտություն չկա, որովհետև, եթե Սայաթ–Նովայի ծննդյան տարեթիվը ընդունենք 1726–ը, ապա ամեն ինչ իր տեղը կորվի, և հարկ չի լինի եր չի թոռ քահանա Մովսեսի հանրահայտ վավերական»<sup>138</sup> ծնունդը 1810 թվականից մի քանի տարով առաջ տանել կամ հորինել նրա հոր՝ Մելիքսեթի «կրկնակը»...

Ով էլ որ ուշադիր կարդա Սայաթ–Նովայի խաղերը, շատ հանիստ կնկատի, որ եր իչը դրանք ըել է երիտասարդ հասակում՝ նախքան կլրանար նրա երեսուն տարին: Նա թուրքերեն 19–րդ խաղում չափազանց պարզ ըլում է.

*Կորցրեցիր յարևտ, խելքից զբզկեցիր...  
Յարսուն տարվա կինքըս մահուն տըվեցիր,  
Խելքըս գլխիս պահիր դուն, Սայաթ–Նովա:*

Իսկ վրացերեն 16–րդ խաղում ըլում է.

*Ջանըս, հոբիս կամով ցավիտ բաշխեցի,  
Ջահել կինքըս ճանապարհիտ մաշեցի...*

Այո՛, Սայաթ–Նովան ջահել է եղել, երբ իր կյանքը սիրո ճանապարհին է մաշել: Դեռ ավելին՝ նա եղել է ամուրի: Նա իր վրացերեն խաղերից մեկում (Վ–30), որը մի խմբրանք է Յերակլ թա ավորին՝ իրեն պալատից չվտարելու համար, ըլում է.

*Վուչ հարսնախոս ունիմ, վուչ էլ կողակից...*

Իսկ հայերեն 14–րդ խաղում դիմելով իր սիրեցյալին՝ ասում է.

*Յիս էլ ուրիշ յար չունիմ, էս գլխեն վաղ իմացի...*

<sup>137</sup> Սայաթ–Նովա, Խաղերի ժողովածու, էջ XXX:

<sup>138</sup> Ջգրաչենի եկեղեցու բակում է գտնվում տեր Մովսեսի գերեզմանը՝ հետևյալ մակագրությամբ շիրմաքարով՝ «Հանգիստ ոսկորեաց Մովսես ավագ քահանայի Սայաթենց 1810–1883»:

Եվ թուրքերեն 66–րդ խաղում հուսահատ եր իչը, դիմելով արարչին, խնդրում է.

*Մեռնիմ արթար քարամաթիտ<sup>139</sup>, կնքում մենակ ինձ մի՛ թող...*

Այս և սրանց նման բազմաթիվ տողեր ապացույց են այն բանի, որ մեր սիրատուչոր եր իչը ամուրի երիտասարդ է եղել և սիրել է կույս մի աղջկա, բայց անհույս սիրով:

Մի պահ ենթադրենք, որ Սայաթ–Նովան, լինելով ոչ սովորական ներաշխարհի տեր անծնավորություն, ներքուստ չի ընդունել ժամանակի բարոյական նորմերը և ղեկավարվել է այն սկզբունքով, թե՛ «Սրտին չես հրամայի», և կին ու երեխաներ ունենալով հանդերձ՝ սիրահարվել է ավելի հրապուրիչ մի ուրիշ կնոջ: Իհարկե, դա հնարավոր է: Սակայն, բարեբախտաբար, եր իչը մեզ թողել է այնպիսի տողեր, որոնցում եղած մտքերը լիովին հերքում են վերոհիշյալ ենթադրությունը, որովհետև այդ տողերում այս ենթադրության լույսի տակ կարդալիս եր իչը դուրս է ավիս իբրև մի շարլատան...

Այսպես, օրինակ՝ իբր կին ու երեխաների տեր, քառասունն անց Սայաթ–Նովան մեկ տասնամյակից ավելի այնպես է սիրահարվում ամուսնացած մի կնոջ, որ նրան կորցնելուց հետո՝ րում է.

*Մեջլումի պես կորավ յարըս,  
Լեյլի ջան, ման իմ գալի յան–յանա... (Հ.27)*

Դեռ ավելին՝ անհաջողություն ունենալով հիշյալ սիրո մեջ՝ եր իչը ուրիշ սեր է փնտրել.

*Մի գուզիմ, թե ուրիշ յարի<sup>140</sup> թուշ ըլիմ<sup>141</sup>,  
Վախում իմ, թե արանքըն բաս<sup>142</sup> գա, գնա... (Ա. 27)*

Ստացվում է, որ կին ու երեխաների տեր, պատկառելի պալատական եր իչը (այն էլ՝ Սայաթ–Նովան) զբաղվել է սիրաբանություններով, այսինքն՝ հանճարեղ ուսանը վարել է թեթևսուլիկ կյանք...

Ի պատասխան այս ամենի՝ մենք դնում ենք մի մեծատառ ՈՉ:

Մարդը պարզապես ամուրի երիտասարդ է եղել և ապրել է սիրո մեծ ողբեր ություն, որի ինքնայրման ար ասիքը այն՝ եղեցիկ խա-

<sup>139</sup> Քարամաթ – գրասրտություն:

<sup>140</sup> Յար – ընկեր, սիրած:

<sup>141</sup> Թուշ լինել – հանդիպել:

<sup>142</sup> Բաս – խոսակցություն, բամբասանք:

դերն են, որոնք թանկա ին քարերի պես զարդարում են հայ բանաստեղծության մար արտաշարը...

Որքա՛ն անարատ, երիտասարդական (նույնիսկ պատանեկան) անկեղծությամբ է ասված այս տողը.

*Թեքիզ ավել յարե՛ 143 յար սիրիմ, ումբրես՝ 144 չանիմ խեր՝ 145,  
նազանի... (չ.45) 146*

Անհրաժեշտ է այս լիսում պարզաբանել նաև այն հարցը, թե Սայաթ-Նովան ինչպիսի կախման մեջ է եղել վրաց արքունիքից: Առ այսօր այդ հարցում իշխող կարծիքն այն է, թե Սայաթ-Նովան Վրաստանի արքունական տանը պատկանող, անձնապես ազատ, բայց պարտադրված կախյալ վիճակում դրված կիսաճորտ լեխի (ռամիկ) է եղել: Այս կարծիքի համար հիմք են ծառայել մեզ հասած հետևյալ տեղեկությունները:

Եր չի որդի Օհանը վրաց Թեյմուրազ արքայազնի համար 1832 թ. Պետրո ըաղում կազմում է եր չի խաղերի մի ժողովածու, որի վրացերեն խաղերից մեկի տակ ծանոթա րել է. «Հիշատակված է, որ Սայաթ-Նովան իր ողորմած, ամենուրեք հայտնի, Վրաստանի բարձրապատիվ տեր թա ավորի կողմից դժ ոհության է արժանացել, և նա խռովել է իր խեղճ ստրուկ Սայաթ-Նովայից և հեռացրել պալատից՝ ասելով. «Եժան առած չկարծես»»:

Ինչպես ասացինք, հիշյալ ժողովածուն կազմվել է Չերակլ II-ի թոռ Թեյմուրազի համար, ուստի ծանոթա րության մեջ եղած «խեղճ ստրուկ»-ը չպետք է հասկանալ բառացի, այլ այն իր ժամանակին ընդունված արևելյան դարձվածք է արքաների մեծությունը մյուս մահկանացուներից վեր դասելու համար: Այս ծանոթա րության մեջ ամենակարևորը «Եժան առած չկարծես»-ն է: Մենք այս մտքին երկու ան ամ հանդիպում ենք նաև եր չի խաղերում:

Վրացերեն 31-րդ խաղում, որը մի բողոք է՝ ուղղված Չերակլ 2-րդին, եր իչը րում է.

*Ե՛կ, մի՛ վիթի իմ արունըս թասերով.  
Թանգ առած իմ քու ահագին ծախսերով...*

<sup>143</sup> Յադ – օտար, ուրիշ:

<sup>144</sup> Ումբր – կյանք:

<sup>145</sup> Խեր – օգուտ:

<sup>146</sup> Սայաթ-Նովա, Խաղերի ժողովածու, կազմեց Մ. Հասրաթյանը, էջ 30:



Եթե իսկապես Սայաթ–Նովան արքունական տան ճորտ է եղել, ապա էլ ի՞նչ խոսք կարող է լինել նրան «ահա ին ծախսերով» ու «թան » առնելու մասին: Իսկ եթե նա ճորտ չի եղել, ապա ո՞ւմ է պատկանելիս եղել, որից «թանկ» «ծախսերով» «առել է» Զերակլ 2–րդ թա ավորը: Կամ եթե այդ «ծախսերը» նման միջոց է եղել, ինչպե՞ս է, որ թա ավորը, առանց որևէ հատուցում պահանջելու, պալատից դուրս է վտարում եր չին...

Այս «թան առած»–ին մենք հանդիպում ենք նաև հայերեն 8–րդ խաղում, բայց այստեղ արդեն մի նոր բառի ուղեկցությամբ, որը նոր, արժեքավոր իմաստ է բերում իր հետ.

*Հենց իմացի, յար, բու ղուլն իմ, թանդ հախով գընած չըրաղ իմ:*

Այստեղ դարձյալ հանդիպում ենք. «թան հախով»–ին, որին լրացնում է չըրաղը: Չըրաղ նշանակում է հովանավորյալ պատանի: Ուրեմն՝ ճիշտ է մեր այն ենթադրությունը, ըստ որի՝ Սայաթ–Նովան ունեցել է իր մեկենասը, որը և հովանավորել է նրան: Զենց այս մեկենասից է, որ թա ավորը Սայաթ–Նովային վերցրել է որպես պալատական եր իչ:

Մենք մի այլ առիթով նշել ենք, որ Սայաթ–Նովան իր մեկենասի շնորհիվ է երաժշտություն սովորել, նրա միջոցներով է աշխարհ շրջել, հասել Զնդկաստան ու այնտեղից էլ՝ Թիֆլիս: Պարզ է, որ այդքան տարիների ընթացքում (չուրջ 10 տարի՝ 1738–1748 թթ.) մեկենասը մեծ ծախսեր է կատարել եր չի վրա: Իսկ որպեսզի Զերակլ 2–րդը իր պալատական «մեջլիսում» ունենար Սայաթ–Նովայի նման տաղանդավոր ուսանի, պետք է որ վարձահատույց լիներ նրա մեկենասին:

Գուցե հենց այդ մեկենասը Զերակլ 2–րդին շատ ծանոթ մի ազդեցիկ հայ վաճառական է եղել: Չէ՞ որ այն ժամանակ հայ վաճառականները շատ մոտիկ հարաբերությունների մեջ էին տնվում Զերակլ 2–րդի հետ: Եվ ուցե Զերակլը այդ նպատակով նրան ուղղակի մի շատ թանկա ին նվեր է ընծայել և ոչ թե եր չի համար ին է վճարել:

Բայց թե ո՞վ է եղել այդ մեկենասը, ցավոք, այդ մասին ոչինչ հայտնի չէ...

Այժմ անդրադառնանք Թեյմուրազ արքայազնի այն վկայա րին, որով Սայաթ–Նովան սանահնեցի է համարվում: Հիշյալ վկայա իրը մի հատված է Ռուսաստանի իտությունների պատվավոր անդամ Թեյմուրազ արքայազնի «Ձեռա րաց նկարա րություն» աշխատությունից, որը վերաբերում է Սայաթ–Նովայի խաղերի վերոհիշյալ ձե-

ռա իր Դավթարին: Հարկ ենք համարում լրիվ մեջբերել այդ հատվածը՝ արևելա ետ Պարույր Մուրադյանի թար մանությանը. «Եր եր Սաադնամայի, որին վրացիները Սավաթնամա են կոչում, մի լրիվ ժողովածու: Սա ապրում էր Հերակլ 2–րդ թա ավորի օրոք, հատկապես Գեոր ի թա ավորի թա աժառան ության ժամանակ: Նա թա ավոր Գեոր իի արքայազնական տարիների ճորտն էր և նրա մոտ էր տնվում: Սակայն հաճախ Հերակլ թա ավորի մոտ էր, որովհետև հիրավի լավ սազանդար էր: Եր ում էր ու նվա ում տարբեր ործիքներով: Բանաստեղծությունն էլ ինքն էր հորինում: Սանահնեցի էր նա, թա ավոր Գեոր ի 13–րդի թա ավորազնական կալվածքի յուղից, Վրաստանի հայերից: Ստեղծա ործում էր նաև հայերեն ու աղբբեջաներեն խաղեր ու բանաստեղծություններ՝ տարբեր դեպքերի պատեհությամբ: Յուրաքանչյուր առիթին համապատասխան խաղը ասում էր եր ով զարմնալի իմաստավոր և ի հան ույն: Թեն րում էր սովորական տեսքի հասարակ բանաստեղծություններ, բայց մեծապես արժանավոր»:

Կասկածի ենթարկել Թեյմուրազ արքայազնի այս վավերա իրը նշանակում է մեղանջել ճշմարտության հանդեպ, որովհետև այն րեթեն ժամանակակցի վկայություն է: Թեյմուրազը ծնվել է 1782 թվին. փաստացի վկայություններ կան այն մասին, որ Սայաթ–Նովան մինչև 1800 թվականը վախճանված չէր, իսկ այդ տարիներին Թեյմուրազը 17–18 տարեկան հասուն պատանի է եղել, եթե սրան էլ ավելացնենք այն, որ Սայաթ–Նովայի որդի Օհանը Պետերբուր ում ապրելիս է եղել Թեյմուրազի հովանու ներքո և 1823 թվականին նրա համար կազմել է Սայաթ–Նովայի՝ մեզ հայտնի պետերբուր յան Դավթարը, ապա կասկածի նշույլ ան ամ չի մնում, որ Թեյմուրազ արքայազնի վերոհիշյալ վկայությունը անհերքելի ճշմարտություն է և շատ արժեքավոր վավերաթուղթ:

Խորազնին ուսումնասիրելով Թեյմուրազ արքայազնի վավերաթուղթը՝ մենք հան եցինք հետևյալ եզրահան ումների.

ա) Թեյմուրազը իր վավերաթղթում Սայաթ–Նովայի մասին վկայում է, որ սանահնեցի էր նա, թա ավոր Գեոր ի XIII–ի թա ավորազնական կալվածքի յուղից», սակայն անմիջապես ավելացնում է նաև, որ նա «Վրաստանի հայերից» էր: Ինչպե՞ս բացատրել այս պարադոքսալ շարադրանքը: Չէ՞ որ Սանահինը հայկական յուղ էր և սոսկ վրացական ահաժառան ի «կալվածքի յուղ» լինելով՝ չէր կարող Վրաստան կոչվել, որպեսզի սանահնեցին էլ կոչվեր «Վրաստանի հայ»: Ուստի մեզ մնում է անել այն հավանական հետևություն-

նը, որ Սայաթ–Նովան ամենից առաջ «Վրաստանի հայ» է և այն էլ՝ թիֆլիսեցի: Այդ մասին, ինչպես իտենք, կան եր չի անհերքելի վկայությունները:

բ) Թեյմուրազ արքայազնի վավերաթղթի վերծանությունը ցույց է տալիս, որ Սայաթ–Նովայի մասին ըված «Սանահնեցի էր նա», որովհետև դրան հաջորդող տողում արքայազնը վկայում է, որ նա ոչ թե Գեոր ի 13–րդի թա ավորական կալվածքի *յուղացի* էր, այլ «յուղից» էր. սրանք որակապես տարբեր հասկացություններ են: Որևէ տեղից լինելը նշանակում է, որ ամծը տվյալ տեղացի է, որ նա ծնվել ու մեծացել է տվյալ վայրում, իսկ որևէ տեղից լինելը ցույց է տալիս, որ նա այդ տեղի ներկայացուցիչն է, որը կարող է տեղացի չլինել: Հետևաբար՝ Սայաթ–Նովան իր ծնունդով բնիկ թիֆլիսեցի էր, սակայն Գեոր ի արքայազնի ժամանակ վրացական արքունիք էր ներկայանում Սանահին յուղից...

Այս միտքը հաստատելու համար դիմենք փաստերի: Թեյմուրազը ըրում է, որ Սայաթ–Նովան «ապրում էր Հերակլ թա ավորի օրոք»։ այս ճշմարտությունը հանրահայտ է: Եր իչն ինքն է վկայում, որ իրեն պալատական էր իչ է դարձրել Հերակլ թա ավորը: Մենք, նախորդ լիտում վերծանելով էր չի մի շարք խաղեր, ցույց տվեցինք, որ նա պալատական էր իչ է եղել 1748–1755 թթ. ընկած ժամանակահատվածում: Դրանից հետո Սայաթ–Նովան հեռացվել է պալատից և մինչև 1759–1960 թթ. (մինչև կրոնավոր դառնալը) ապրել է Թիֆլիսում: Սակայն մինչև այսօր հայտնի չէ, թե նա այդ տարիներին ինչով է զբաղվել...

Այս հարցի պատասխանը մենք տնում ենք Թեյմուրազ արքայազնի՝ մեզ հայտնի վավերաթղթում: Թեյմուրազը ըրում է, որ Սայաթ–Նովան «թա ավոր Գեոր իի **արքայազնական տարիների ճորտն էր և նրա մոտ է տնվում**» (ընդ ծումը մերն է — Գ. Ս.): Այս միտքը հաստատում է ինքը՝ էր իչ Սայաթ–Նովան, իր վրացերեն խաղերից մեկում (21): Նա ըրում է.

*Սայաթ–Նովան Գուրգեն խանի ղուլը կոսին, ճշմարիտ է:*

Իր արքայազնական տարիներին Գուր են խան էր կոչվում Հերակլ II–ի անդրանիկ որդին՝ Գեոր ի թա ավորը (վավերաթղթի հեղինակ՝ Թեյմուրազի հայրը): Նա ծնվել է 1748–1750 թթ., որը 1755 թվին (էր չի՝ պալատից վտարվելու տարին) 5–7 տարեկան արքայազն է եղել: Մեր կարծիքով, հենց այդ տարիներին էլ Հերակլ II–ը իր որդի

Գեոր իին թա աժառան է հռչակել՝ Գուր են խան պատվանունով՝ նրան որպես կալվածք հատկացնելով այդ ժամանակ վրացական արքունիքին պատկանող Լոռին իր յուղերով: Անկասկած Յերակլը հո է տարել անչափահաս ժառան ի կալվածքի բար ավաճման և դրանով իսկ նրա կալվածատիրական իրավունքների ամրապնդման համար: Նման նպատակներ իրականացնելու համար ամենից առաջ անհրաժեշտ էին արքունիքին հավատարիմ ու բանիմաց մարդիկ, իսկ այս պարա այում երադասելի էր, որ այդ մարդիկ լինեին հայեր, որովհետև Լոռին զուտ հայկական բնակավայր էր:

Այս միտքը հաստատելու համար բերենք մի ուշա րավ տեղեկություն: Պրոֆ. Մելիքսեթ-բեկը վկայում է, որ Սայաթ-Նովայի աներ, թիֆլիսաբնակ Շավերդին Լոռու Այ եհատ յուղի բնակիչ է եղել: Բանասեր Մ. Հասրաթյանը, հաստատելով այս փաստը, րում է, որ Շահվերդին եղել է «Այ եհատ յուղի նոր հիմնադիրը: Հավանաբար հենց այդ ժամանակ էլ Շավերդին, եթե ազնվականի կոչում չուներ, ոմե մի ունևոր և ազդեցիկ ընտանիքի տեր մարդ էր, որի ժառան ները հետա այում դարձան ամբողջ յուղի միակ ու միատոհմիկ բնակիչները»<sup>147</sup>:

Այստեղ մնում է անել մի պարզ հետևություն. ինչպես Շավերդին, այնպես էլ Սայաթ-Նովան եղել են վրացական արքունիքներին ծառայա րված այն «Վրաստանի հայերից», որոնք Գեոր ի արքայազնի թա աժառան ության օրոք պետական ծառայողի իրավունքով ու արտոնություններով տնօրինում էին Լոռու յուղերը:

Մեր կարծիքով, Սայաթ-Նովան 1755–1960 թթ. ապրել և ործել է Սանահնում, որովհետև նա այդ տարիներին է (հավանական է՝ 1759 թ.) անուսնացել Շավերդու աղջիկ Մարմարի հետ:

Մ. Հասրաթյանը րում է, որ «Վրաստանում ընդունված կար ով պարտավոր էին կալվածատիրոջ ցուցակում րանցվել որպես լեխի, այսինքն՝ անձնական ազատությունից չզրկված ճորտ կամ կիսաճորտ՝ պարտա րված որոշակի ժամանակով»<sup>148</sup>, որ Սայաթ-Նովան «որոշակի ժամանակով» պարտա րված է եղել Գեոր ի արքայազնի մոտ, դա անկասկած է, սակայն նա պարտա րված չի եղել որպես ճորտ, այլ ունեցել է որոշակի արտոնություններ: Եր իչը իրեն Գուր են խանի Ղուլ է համարում, որը ոչ թե ճորտ է նշանակում, այլ ծառայող (ղուլուղ նշանակում է ծառայություն): Որ ղուլը ճորտու-

<sup>147</sup> Սայաթ-Նովա, Խաղերի ժողովածու, կազմեց Մ. Հասրաթյանը, էջ IX:

<sup>148</sup> Նույն տեղում, էջ 8:

թյուն չէ, այլ ծառայություն է (պաշտոնավարություն), դա երևում է եր չի հանրահայտ «Աշխարհըս մե փանջարա է...» (Յ. 53) խաղի հետևյալ տողից.

*Քրսանըն՝ մե ղուլ չին պահում,— աղերումեն բեզարիլ էմ:*

Այս տողի մտքից պարզ երևում է, որ ղուլը ինչ—որ տեղ նաև արտոնություն է, որի շնորհումը վեր է ապաշնորհ աղաների ուժից...

Ահա թե ինչու Թեյմուրազ արքայազնը, Սայաթ—Նովայի մասին ռելով, թե՛ «Սանահնից էր նա...», չի մոռանում ավելացնել նաև, որ նա Վրաստանի հայերից էր»:

Այսպիսով՝ հերքվում են այն պնդումները, որ Սայաթ—Նովան սանահնեցի ճորտ է եղել: Նա պարզապես մինչև կրոնավոր դառնալը Սանահնում որոշ ժամանակով պետական ծառայող է եղել՝ մի տեսակ արքունական կառավարիչ: Եր իչը այդ տարիների՝ 1758 թ. ըստ իր հայերեն խաղերից մեկում (31) ասում է.

*Տասը տարի է ման իմ գալիս փաղեշահի շարիփի պես:*

Իսկ «Փաղիշահի շարիփ» բառացի նշանակում է արքայի պաշտոնյա:

## **6. Սայաթ—Նովան՝ կրոնավոր**

Սայաթ—Նովայի՝ կրոնավոր դառնալու մասին եղած կարծիքները նույնպես հակասական են ու իրարամերժ: Բանասերներից ոմանք պնդում են, որ նա, աշխարհի դառնություններից բեզարած, հեռացել է աշխարհիկ կյանքից ու իրեն նվիրել է ապաշխարության, իսկ շատերի կարծիքով էլ նա բռնությամբ է կրոնավոր դարձել:

Վերլուծելով Սայաթ—Նովայի խաղերը՝ կարելի է ասել, որ տեղի է ունեցել թե՛ մեկը և թե՛ մյուսը: Բանն այն է, որ տաղանդավոր եր իչը, լինելով իր ժամանակի ըստ անձնավորություններից մեկը, ի սկզբանե մեծ հար անք էր տածում քրիստոնեական դավանանքի նկատմամբ: Նա նույնիսկ իր երաժշտական ունակությունները համարում էր քրիստոնեական հավատի հիմնադիրներից մեկի՝ Սուրբ Կարապետի պար ևս շնորհ, որին իր խաղերում Չան լու Փիր է անվանում: Թուրքերեն 32—րդ խաղում նա այդ մասին րում է.

*Փիրից շընուրք առա, սազըս ածեցի...*

Նույն միտքը տարբեր առիթներով կրկնում է նաև հայերեն ու վրացերեն խաղերում: Մենք այս մասին արդեն հան ամանորեն խոսել ենք առաջին լիտում: Եր իչը հավատում էր քրիստոնեական դավանանքի հրաշա ործություններից: Նա Մուղնու Սուրբ Պետրոս վանքի վերաշինությանը նվիրված իր խաղում (Յ. 63) րում է.

*Հորով ու մարմնով կու սըրփվի, ով քիզ գուքա մոնի<sup>149</sup> նման...*

Իսկ ինչ վերաբերում է քրիստոնեական դավանանքին ընդհանրապես, ապա դրան մի լրիվ խաղ է նվիրել եր իչը, որտեղ ոչ միայն մեծ դրվատանքով է խոսում այդ դավանանքի առավելությունների մասին, այլև հպարտանում է, որ ինքը դավանում է նրան:

Բերենք այդ խաղից (Ա. 65) մի հատված.

*...Փառք արարիչ—ըստիղծողին՝ մեծ պահապանը մերն է,  
Կինքը մերն է, մահը մերն է, դըրախտի բաղը մերն է:  
Իրեք հարուր վաթսուսն ու վեց սուրփի աղոթքը մերն է.  
Հիսուսին միզ տերն է դըրգիլ՝ լուսն ու շափաղը մերն է:*

*Սիրնի սուրփ գերեզմանը, ապրելու տեղը մերն է.*

*էջմիածնա մայր աթոռը և ուղիղ ցեղը մերն է:*

*Սայաթ—Նովա դալը<sup>150</sup> բան չանիս՝ սարաֆ—մատյան<sup>151</sup> ունինք մենք  
— Անկրակ մհլամ<sup>152</sup> դեր վերքիդ՝ գորավոր եղը<sup>153</sup> մերն է:*

Եթե վերոհիշյալ խաղերին էլ ավելացնենք հայերեն 64-րդ «Աստուծ խիալ<sup>154</sup> արից, սվթա»<sup>155</sup> խաղը, որը Ադամ—Եվայի քրիստոնեական պատուհի չափածո վերապատմությունն է, ապա պարզ կդառնա, որ Սայաթ—Նովան ոչ միայն դավանում էր քրիստոնեությունը, այլև, ինչպես ասում են, « ոց» իտեր նրա բոլոր դավանաբանական կանոններն ու պատմության մանրամասները:

Երբ կարդում ենք եր չի այդ տարիներին րած խաղերը, նրանցում տեսնում ենք խոստովանությունների, զղջումների, ցասկոտ բողոքի և

<sup>149</sup> Մոնա — հավատացյալ, ուխտավոր:

<sup>150</sup> Ղալը — կեղծ:

<sup>151</sup> Սարաֆ—մատյան — Ավետարան:

<sup>152</sup> Անկրակ միլամ, գորավոր եղ — մեռոն:

<sup>153</sup> Բեդամաղ — անտրամադիր:

<sup>154</sup> Խիալ — ցանկություն, փափագ:

<sup>155</sup> Սվթա — սկիզբ:

երբեմն էլ աշխարհը թողնելու տրամադրություններ ու մտքեր: Սայաթ–Նովան իր մտածելակերպով ընթե միշտ էլ երկփեղկված է եղել: Նրա աշխարհայացքը Աստվածաշնչի այն դրույթն է, թե՛ «Մի ծառան չի կարող երկու տիրոջ ծառայություն անել, որովհետև կամ մեկին պիտի ստի և մյուսին սիրի կամ մեկին պիտի միանա և մյուսին արհամարհի. չեք կարող ծառայել Աստծուն և Մամոնային...» (Ավետարան՝ ըստ Ղուկասի, Լ. ԺԳ): Ըստ նրա՝ ոյություն ունի երկու կյանք՝ աշխարհիկ (մարմնական) և հո նոր (հո ու փրկության ծառայելը), որոնք հավասար չափով ձ էլ են եր չին: 1758 թվականին ըած հայերեն խաղերից մեկում (37) ասում է.

*Թե վուր հոգուտ կամբըն իս անուամ, մարմնիտ բեղամաղ<sup>156</sup> է ըլում.  
Վուր մե դարդին կու դիմանաս դու ջրատար Սայաթ–Նովա:*

Եր իչը երկար ժամանակ չի կարողանում այս երկընտրանքից լուխ հանել: Այդ է վկայում հայերեն 21–րդ խաղի հետևյալ տողը.

*Մե նոքարըն<sup>157</sup> երկու աղին ի՞նչ անե...*

Ասկայն աշխարհային կյանքը ավելի ուժեղ է ձ ում եր չին, որովհետև նրանում սեր կա, եթե նրանից հեռանում է սերը, ապա երադասելի է «հո ին»: Նույն այդ խաղում եր իչը, դիմելով իր սիրելիին, ըում է.

*Առանց քիզ ինչ կոնիմ աշխարհիս մալըն...<sup>158</sup>  
Կու հաքնիմ մագեղեն, կու հաքնիմ շալըն,  
Կերթամ ու ման գու քամ վանքիրըն մեկմեկ:*

Դեռ ավելին՝ իրեն ճանաչելով «Աստծու արչիվ մեղավուր Սայաթ–Նովա» Վ–216)՝ նա իր տառապանքները վերա ըում է իր «անխոհեմությանը», որ իբր չի կարողացել մինչև իր 30 տարին լրանալը գերծ մնալ աշխարհիկ «մեղքից» և ժամանակից շուտ սիրահարվել է: Այդ մասին իր եռալեզվյան խաղում (Յ. 63) ըում է.

*Յիս մի մեղք իմ արի, նշտար<sup>159</sup> քաչեցի,  
Իմ էն արթար կաթին արուն խառնեցի...*

<sup>156</sup> Բերամաղ – անտարբեր

<sup>157</sup> Նոքար – ծառա:

<sup>158</sup> Մալ – ունեցվածք:

<sup>159</sup> Նշտար – սուր դանակ:

Եվ նրա մեջ ցանկություն է առաջանում քավելու իր «մեղք»-ը.

*Թե էս կենաց փառքըն՝ չուզիս՝ էն կենաց ալմասըն<sup>160</sup> կուտան...  
Թե վուր լալով զըխճուժ անիս՝ անմահացըն մասըն<sup>161</sup> կուտան...  
Խոստովանիս արած մեղկըտ՝ չանիս ինքար<sup>162</sup>, Սայաթ–Նովա: (Հ. 35):*

Այս տողերը Սայաթ–Նովան ըել է 1758 թվականին, երբ արդեն նրա համար պարզ էր, որ այլևս «Յեթիմ ու դատաստան չկա: Մէ դրուստ աղալաթ<sup>163</sup> չըկա» (Յ.33), ուստի նա կորցնում է հույսը նաև ապա այի նկատմամբ. «Էրե լավ էր կանց վոր էսօր – վաղերուժեն բեզարիլ իմ»,— թում է եր իչը մեկ տարի հետո՝ 1759 թվականին (Յ. 53):

Այդ թվականից էլ սիրո եր իչ Սայաթ–Նովան լռում է:

Ոմանք այս լռությունը վերա թում են այն բանին, որ իբր այդ թվականից հետո ըած նրա խաղերը կորել են:

Մենք համակարծիք չենք այդ մտքի հետ: Չէ ո՞ր, ինչպես մենք տեսանք, Սայաթ–Նովայի՝ մեզ հասած Դավթարի վերջին էջի վրա Պենտելենց Յովանեն հիշատակարան է թողել 1765 թվականին, ուրեմն, եթե մինչ այդ եր իչը խաղեր ունենար, անկասկած է, որ Յովանեն կկցեր Դավթարին: Բացի դա, եր չի որդու՝ Օհանի 1823 թ. Պետերբուր ում կազմած Դավթարում նույնպես 1759 թվականից հետո ըած խաղեր չկան (բացառությամբ այն ծածկա իր պարունակող թեջնիսի, որը ըել է եր իչը 40 տարեկան հասակում՝ 1765 թվականին):

Մեր կարծիքն այն է, որ Սայաթ–Նովան աշուղությունը թողել է հետևյալ պատճառներով.

ա) Նա աշուղ լինելը համարում էր իր դժբախտության պատճառը: 1758 թվականին ըած թուրքերեն խաղերից մեկում (43) եր իչը ըել է.

*Աշուղ ըլիլըն ինձ ամա մինձ ցավ դառավ...*

Իսկ նույն թվականին ըած թուրքերեն մի այլ խաղում (40) նա հետևյալ միտքն է արտահայտել.

<sup>160</sup> Այմաս – ալմաստ:

<sup>161</sup> Մասըն – սրբազան մասունք, հաղորդություն:

<sup>162</sup> Ինքար – ուրացում:

<sup>163</sup> Դրուստ աղալաթ – ճշմարիտ արդարություն:



*Տերն իստակին ու անմեղին կու նայե...  
Քանի վուր քու ձեռքին էսօր հընար կա,  
Հոքուտ համա մե տուն շինե ջաննաթում:*

Այստեղից պարզ երևում է, որ եր իչը աղափարապես պատ-  
րաստ է իր «հոքու համար» ձեռ քաշել «մինձ ցավ» աշուղությունից:

բ) Սայաթ–Նովան հիմնականում խաղեր է ըել՝ նվիրված իր ան-  
հույս սիրո էակին, սակայն երբ ամուսնացել է, բնականաբար, դադա-  
րել է այդպիսիք ըելուց:

) Ոչ «դրուստ աղալաթ»–ի դեմ զայրացած եր չի սիրո խաղերը  
սոսնձված էին սոցիալական աֆիշով. եր չի խոսքը միայն սիրո մա-  
սին չէ, այլ նաև այն մասին, որ.

*Էլ հոքեվախ կըրոնավոր, մարթասեր իշխան չմնաց,  
Ջորըն անզորին կերել է, մարթկանց վրա ջան չը մնաց...  
Փիքը<sup>164</sup> ու խիալըս աշխրքի ցավի մասին է,  
Խիղճի, նաչարի, տընանգի, բարի ու լավի մասին է,  
Սայաթ–Նովու խոսկըն իրավ ու անիրավի մասին է... (Հ. 68)*

Բնականաբար, դառնացած ուսանի այս «խոսկըն» թա ավո-  
րի ու իշխող դասի նկատմամբ ստեղծում է անբարենպաստ հասա-  
րակական կարծիք, որից ազատվելու համար վերջիններս պետք է  
որ ելք փնտրեին... Եվ այդ ելքը չէր կարող բացարձակ պատժի ձև  
կրել մայրաքաղաքում այնքան ճանաչված եր չի նկատմամբ, մա-  
նավանդ հնում աշուղները, համարվելով բարեխոս (նույնիսկ՝  
աստվածաընտիր) մարդիկ, ենթակա չէին ոչ մի պատժի: Նրանց  
համար ոչ մի սահմանափակում չկար: Այդ մասին շատ եղեցիկ  
կերպով ըել է Հովհաննես Թումանյանը իր «Թմկաբերդի առումը»  
պոեմում.

*Ուր ահեղ կռվով չի մտնիլ արքան,  
Ղոնաղ է աշուղն իրեն սազի հեա...*

Ինչպես տեսնում ենք, աշուղի համար ար ելված չի եղել նույ-  
նիսկ թշնամու բանակ մտնելը:

Այս մասին պակաս եղեցկությամբ չի բնորոշել նաև ինքը՝ մեր  
սիրելի ուսան–բանաստեղծը.

<sup>164</sup> Փիքը – միտք:

*Աշուղի լիզուն բըլբուլ է, օրհնանք ունե, նալաթ չը կա.  
Շահի մոտ խոսկըն անց կու կենա, սըպանելու ջալլաթ<sup>165</sup>  
չը կա... (Հ. 33):*

Այսպիսով, ըստ օրենքի՝ չէին կարող բացարձակ բռնություն որ-  
ծադրել եր չի նկատմամբ, ուստի հարկավոր էր այնպիսի միջոց որ-  
ծադրել, որպեսզի Սայաթ–Նովային կարողանային մի կերպ լռեցնել:  
Այդ նպատակը իրականացնելու միակ միջոցը նրան հո նոր պաշտո-  
նի նշանակելն էր:

Սակայն, ինչպես տեսանք նախորդ լխում, Սայաթ–Նովան, պա-  
լատից արտաքսվելով, անմիջապես կրոնավոր չի ձեռնադրվել: Նա  
շուրջ 6 տարի (1755–1760 թթ.) պաշտոնավարում է Գեոր ի արքայազ-  
նի մոտ: Այդ տարիներին Սանահնի տնօրեն լինելուց բացի, թե էլ ինչ  
պաշտոններ է վարել տարաբախտ ուսանը, մեզ հայտնի չէ: Միայն  
նրա այդ տարիների ըստ խաղերից երևում է, որ նա դժվար է համա-  
կերպվում իր նոր կացության հետ: Բնականաբար, բանաստեղծական  
խառնվածքի տեր ուսանը, անկասկած, պիտի մատների արանքով  
նայեր իր հո ուն անհարազատ այդ նոր զբաղմունքին: Այդ պատճառով  
էլ նրա նկատմամբ նորից վերսկսվում է հալածանքների նոր շրջան: Այդ  
շրջանում (1759 թ.) ըստ նրա հանրահայտ «Աշխարհըս մե փանջարա  
է...» (Յ. 53) խաղը, որտեղ դառնացած էր իչը բացականչում է.

*Ղուրթըս<sup>166</sup> Կնդուր ճամփա չէ գնում՝ շատացիլ է խալխի սուտըն.  
Քըսանըն՝ մե դուլ<sup>167</sup> չին պահում,— աղերումեն բեզարիլ իմ:*

Շատ հավանական է, որ այդ դուլ չպահող աղաները, այսինքն՝  
վրացական արքունիքում նստածները, գ ալով, որ մեջլիսների գարդ  
ուսանը, իր բանաստեղծական ազնիվ խառնվածքի հետևանքով չի  
կարողանում պետական պաշտոնում ործերը այնպես վարել, ինչ-  
պես ձեռնտու էր արքունիքին, ու քանի որ նրա պալատ վերադառ-  
նալն էլ արդեն բացառվում էր, ուստի նրան առաջարկվում է ստանձ-  
նել հո նոր պաշտոն՝ ի նկատի ունենալով նրա ըստ իտությունն ու  
բանիմացությունը այդ բնա ավառում: Չնայած տարաբախտ ուսա-  
նը փորձ է կատարում հրաժարվել թե՛ մեկից և թե՛ մյուսից, բայց նրան  
այդ չի հաջողվում: Այդ է վկայում նրա վրացերեն 31–րդ խաղը, որը  
«դիմում է» Զերակլ թա ավորին: Ահա մի հատված այդ խաղից.

<sup>165</sup> Չալլաթ – դահիճ:

<sup>166</sup> Դուլթթ – ճշմարտություն:

<sup>167</sup> Դուլ – ծառայող:

*Զիռը վի կալ, վադ մարթուլթին չիմ ուզում.  
Էս աշխարհում փարթամուլթին չիմ ուզում.  
Վադ բան ասիլ, յա վադուլթին չիմ ուզում,  
Յիս մարդ<sup>168</sup> մարթ իմ՝ նամարդուլթին<sup>169</sup> չիմ ուզում...  
Յիս ուամիկ իմ՝ թավադուլթին<sup>170</sup> չիմ ուզում...  
Սիվ կաբայում սըքվորուլթին չիմ ուզում...*

Սակայն այս դեպքում նս արքայի կամքը զորեղ, և վճիռը վերջնական է լինում... Սայաթ–Նովային մնում է ընտրել կրոնավորի սև սքենը: Այս հարցում էլ եր իչը հավատարիմ է մնում իր ազնիվ սկզբունքներին. նա կրոնավորի «սըքվորութինը» երադասում է իշխանավորի «նամարդութինից»...

Այստեղ, իմիջիայլոց, անհրաժեշտ ենք համարում ասել, որ, չնայած այս ամենին, Սայաթ–Նովան ունեցել է բավարար նյութական ապահովածություն: Թե որն է եղել այդ ապահովածության աղբյուրը, այդ մասին որոշակի փաստեր չկան: Մեր կարծիքով, թա ավորը կան նրան է թողել Սանահնի հասույթներից օ տվելու իրավունքը, կան էլ կրոնական ծառայությունների համար բարձր ռոճիկ է նշանակվել թիֆլիսի առաջնորդարանի կողմից: Որ Սայաթ–Նովան իսկապես ունևոր է եղել, դա հաստատվում է հետևյալ փաստերով:

Այսպես՝ չնայած այն բանին, որ 1768 թվին մահանում է նրա կինը՝ Մարմարը՝ թողնելով չորս անչափահաս որբ երեխաների, այնուամենայնիվ, կրոնավոր Ստեփանոսը (Սայաթ–Նովան) կարողանում է խնամքի ու կրթության տալ իր երեխաներին, որոնք հետա այում հնարավորություն են ունենում զբաղվելու վաճառականությամբ: Ապացույցն այն է, որ 1785 թվականին Դվլար քաղաքում հայ վաճառականները նվիրատվություն են կատարել էջմիածնի վանքին: Այդ նվիրատվության «Դավթարի» մեջ հիշատակված են նաև Սայաթ–Նովայի որդիները «Դավթարի» 47–րդ էջում, նվիրատվության մասնակիցների ցուցակում՝ ըված է. «Սայաթնովու որդիքն էստուն ԵՃ դիան»<sup>171</sup> (Սայաթ–Նովայի որդիները տվեցին 5000 դիան): Այս փաստը ցույց է տալիս, որ այն կարողությունը, որից եր չի որդիները նվիրատվություն են կատարել, ավելի շուտ պատկանելիս են եղել եր -

168 Մարդ – վեհանձն:

169 Նամարդ – տմարդի:

170 Թավադ – իշխան:

171 Տե՛ն Մատենադարանի արխիվային բաժին–ֆոնդ «Կաթողիկոսական Դիվան», քղբապանակ նո. 5, վավերագիր 37:

չին, քան նրա որդիներին, որովհետև հիշյալ ցուցակում մնացած նվիրատուները հանդես են ալիս իրենց անուններով («Ասլանի որդի Դապաղ Եփրեմն...», Շաքրոյի աղբեր Ավետիքն... և այլն), իսկ եր - չի որդիները հանդես են եկել սուսկ որպես «Սայաթնովու որդիքն...»: Այլ կերպ էլ լինել չէր կարող. եր չի որդիները այդ ժամանակ հազիվ 20–25 տարեկան են եղել...

Ուշա րավ է նաև, որ այս փաստով հերքվում է նաև այն ենթադրությունը, որ իբր թե Սայաթ–Նովան իր ընտանիքը Մոզդոկ էր տեղափոխել 1795 թվականին Աղա–Մահմադ խանի՝ Թբիլիսիի վրա հարձակվելու նախօրյակին: Չէ՞ որ նրա երեխաներից ամենափոքրը 1795 թվականին առնվազն 23 տարեկան էր...

Այժմ անհրաժեշտ է պարզաբանել, թե Սայաթ–Նովան որպես կրոնավոր ինչով է զբաղվել, կրոնական ինչ կոչում է ստացել և, վերջապես, որտեղ է ծառայել...

Մինչև այսօր այն կարծիքը կա, որ Սայաթ–Նովան սկզբում քահանա է ձեռնադրվել Վրաստանի Կախի ավանում և ապա՝ կնոջ մահից հետո, տեղափոխվել է Հաղպատի վանքը և դարձել վանական:

Այս վարկածի համար հիմք էր ծառայում Սայաթ–Նովայի կողմից Կախի ավանում 1766 թվականին ընդօրինակած «Սողոմոն և թուղթք առաքելոց» ձեռա ռի հետևյալ հիշատակարանը. «Թուին հայոց ՌՄԺԵ... ռեցավ ի Կախոյ քարվանսարեն, ով ընթերցող յիշեայ գ ծող ռոյս Մեղապարտ Ստեփանոս քայհանայս, որ Սաեադ–Նովայ կոչեն, և հայրն իմ Մահտեսի Կարապետն և մայրն իմ Սառայ, և դուք յիշեալ լինիք յառաջի Այ, ամեն»<sup>172</sup>:

Վարկածը առարկություն չէր պահանջում, որովհետև հիշատակարանը իսկապես Սայաթ–Նովայինն էր, որը ղված էր քահանա Ստեփանոսի (Սայաթ–Նովայի) կողմից 1766 թվականին Վրաստանի Կախի ավանում...

Սակայն 1981 թվականին հանկարծ «Խորհրդային Հայաստան» օրաթերթում «Նոր էջեր Սայաթ–Նովայի կյանքից» հոդվածով հանդես եկավ Մաշտոցի անվան Մատենադարանի աշխատակից Բաբկեն Չու ասգյանը և ի լուր ամենքի հայտարարեց, որ տնվել է Սայաթ–Նովայի կողմից ընդօրինակված ևս մի ձեռա իր, որի մասին հոդվածա իրը հետևյալն է ռում. «Նորահայտ ձեռա իրը, որի բովանդակությունը Գրի որ Նարեկացու «Ողբեր ության մատյանն» է՝ ընդօրինակված հայոց ՌՄԺ թվականին (1760

<sup>172</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, գործ նո. 4270:

սեպ. – 1761 սեպ.) իր իսկ (Սայաթ–Նովայի) ձեռքով Պարսկաստանի Գիլան նահան ի Էնգելի (Անգալի) նավահան ստի հայկական եկեղեցուն»<sup>173</sup>:

Այնուհետև հորվածում բերված է ձեռա ըի վերջուն պահպանված Սայաթ–Նովայի թողած այս հիշատակարանը. «Գրեցաւ ի Գիլան Անգալի եկեղեցին թվին ՌՄԺ (1210 551–1761): Ո՛վ ընթերցող, յիշեայ ծող Ստեփանոս Վարդապետս, որ Սաեադ Նովայ ասին, և հայր իմ մա(հ) տիսի Կարապետ և դուք յիշեալ լինիք: Առաջնորդութեան Հաղպատո Ջաքարիա ՎԹ Թիփլիզցի»<sup>174</sup>:

Ինչպես տեսնում ենք, այս ձեռա իրը ընդօրինակված է Կախի քարվանսարայում ընդօրինակված ձեռա ըից 5 տարի առաջ, սակայն այստեղ Սայաթ–Նովան իրեն «Ստեփանոս վարդապետ» է համարում, մինչդեռ, ինչպես տեսանք, նա Կախիի ձեռա ըի տակ ստորա ըել էր որպես «Ստեփանոս քայիանայս»: Ի՞նչ է նշանակում սա:

Չու ասզյանը այդ մասին հետևյալն է ըում. «Սայաթ–Նովան հայոց ՌՄԺ (1760/61) թվականը կրող իր ընդօրինակած ձեռա ըի որոշ էջերում իրեն անվանում է Տեր Ստեփանոս քահանա, իսկ ձեռա–իրը ավարտելիս՝ վարդապետ: Նշանակում է՝ 1761 թվականից մեկերկու տարի առաջ նա քահանա էր ձեռնադրվել և իր բանաստեղծական շնորհքի, ըջության արվեստով զբաղվելու, թերևս նաև լավ քարոզիչ լինելու համար վարդապետ է կոչվել»<sup>175</sup>:

Մենք նույնպես ուսումնասիրել ենք նորահայտ ձեռա իրը և հիմնականում համամիտ ենք Չու ասզյանի կարծիքին: Սակայն այն հան ամանքը, որ Սայաթ–Նովան հիշյալ ձեռա ըից հին տարի հետո Կախի ավանում ընդօրինակած հանրահայտ «Սողոմոն և թուղթք առաքելուց» ձեռա ըի հիշատակարանի մեջ իրեն քահանա է համարում, մեզ ստիպեց հարցը պարզաբանելու համար այլ փաստեր որոնել:

Մեզ հաջողվեց Մատենադարանի ձեռա ըերում տնել երեք վկայա իր, որոնցից երկուսը, մեր կարծիքով, Սայաթ–Նովայինն են, իսկ մեկը անմիջականորեն առնչվում է նրա ործունեության հետ:

Վկայա ըրից առաջինը «Կերակուր քահանայից»<sup>176</sup> ձեռա իր ժողովածուն է, որի մի մասը (կենտրոնական) հար և նման է Սայաթ–

---

173 Չուգասզյան Բ, «Նոր էջեր Սայաթ–Նովայի կյանքից», «Սովետական Հայաստան», 1981 թ. փետրվարի 1:

174 Նույն տեղում:

175 Նույն տեղում:

176 Մաշտոցի անվան Մատենադարան, գործ. նո. 662:

Նովայի հայտնի ձեռա ռերին և տակը հիշատակված է որպես Ստեփան քարտուղարի ըջա ռած: Հետաքրքիրն այն է, որ ձեռա իրը ըջա ռված է 1760 թվականին Կոնստանդինոպոլսում, այսինքն՝ ավելի վաղ, քան Կախի ավանի և Գիլան քաղաքի ընդօրինակած ձեռա ռերը: Եթե ընդունենք, որ ձեռա իրը Սայաթ-Նովայինն է, ապա նա քահանա և վարդապետ- ըջող լինելուց առաջ եղել է քարտուղար- ըջող:

Երկրորդ վկայա իրը Ամիրդովլաթ Ամասիացու «Ան իտաց անպետ»<sup>177</sup> աշխատության ձեռա իրն է, որն ընդօրինակված է 1786–1787 թթ. Թիֆլիսում, այսինքն Կախի ավանի հանրահայտ ձեռա ռից շուրջ 20 տարի հետո: Այս ձեռա ռի հիշատակարանը, չնայած երկու տասնամյակների հեռավորության, շատ քիչ տարբերություն ունի Կախիի և Գիլանի ձեռա ռերի հիշատակարաններից: Այս ձեռա ռի հիշատակարանում բաց են թողնված միայն իր ծնողների անունները, և դա բնական է, որովհետև նա արդեն 60–61 տարեկան տարիքն առած մարդ էր: Բերում ենք հիշատակարանը ամբողջությամբ. «Զ ծողս, որ զտեր Ստեփան անուանել, մեղսակիր երեսս և զծնողքն իմ յիշեցեք ի տեր և դուք յիշեալ լինիք ատեանին Քրիստոսի: Դարծեալ եթե սղալ ինչ տանի (ք) իմո տառ կամ բառ կամ բան, աղերսելով հայցեմ մի՛ մեղադրեք զի (ս), վասնզի ժամավ ծա ռել եղև և զի ժամանակն էր ձմեռային: Յավարտի սա ի թիվն հայոց ՌՄԼԶ-ին, յուլիսի մուսուն: Ի քաղաք Թիֆլիս: Ի թա ավորութեանն քրիստոսագոր արքային Հերակլայ»<sup>178</sup>:

Երրորդ վավերա իրը Գևոր Սկևռացու «Մեկնութիին Եսայեայա» ձեռա ռի տակ եղած հետևյալ մակա ռությունն է. «1773 թ. Նոր Ջուղաց: Գրիչ՝ Գէոր երեց: Ստացող՝ Ստեփաննոս ՎՐԴ»<sup>179</sup>:

Ինչպես տեսնում ենք, Ստեփանոս Վարդապետը այստեղ այլ կերպ է հանդես ալիս: Այս դեպքում, նա միայն ընդօրինակված ձեռա ռի ստացողն է: Ի՞նչ է նշանակում այս ամենը:

Մեր կարծիքն այն է, որ Սայաթ-Նովան, 1759 թ. հրաժարվելով պետական պաշտոնավարությունից, ձեռնադրվել է քահանա՝ Ստեփան անունով, և ստանձնել է կրոնական մի յուրօրինակ պաշտոն. Թիֆլիսի հո նոր առաջնորդ Ջաքարիա վարդապետի հանձնարարությամբ առաջնորդարանի համար ընդօրինակել և հավա-

<sup>177</sup>Նույն տեղում, գործ. նո. 7352:

<sup>178</sup>Մաշտոցի անվան Մատենադարան, գործ. նո. 7352:

<sup>179</sup>Նույն տեղում, գործ. նո. 2974:

քա ըել է կրոնական ըբեր, որոնք չի ունեցել առաջնորդարանը: Ահա թե ինչու նա մեկ ինքն է ըիչ, մեկ էլ մի այլ ըչից է ձեռա իր «ստացող»:

Ակզբում՝ 1760 թ., երբ նա առաջին ան ան ընդօրինակում է «Կերակուր քահանայից»-ը, ձեռա ըի հիշատակարանում իրեն անվանում է քարտուղար Ստեփանոս: Իմիջիայլոց ասենք, որ ձեռա իրն ընդօրինակված է բավականին եղեցիկ և խնամքով: Հավանական է՝ դա եղել է փորձնական ընդօրինակություն, որից հետո նրան վստահել են ավելի պատասխանատու ործի ընդօրինականությամբ: Իսկ այդ ործը Գրի որ Նարեկացու «Մատյան ողբեր ության» հռչակավոր իրքն է, որը տնվում էր ո՛չ Թիֆլիսում, ո՛չ էլ Վրաստանի կամ Հայաստանի սահմաններում, այլ Պարսկաստանի Գիլան քաղաքում: Ուստի այն ընդօրինակելու համար ընդօրինակողը պետք է ունենար որոշակի հո նոր ծանրակշիռ կոչում, իրավունքներ և պաշտոնական վկայաթղթեր: Այդ պայմանները ապահովելու համար, շատ հավանական է, որ առաջնորդարանը արդեն քահանա ձեռնադրված Ստեփանոսին Պարսկաստան է ուղարկում վարդապետի պաշտոնական վկայաթղթերով: Մեր այս մտքի վկայությունն այն է, որ հին տարի հետո Վրաստանի Կախի ավանում ընդօրինակած ձեռա ըի հիշատակարանում նա իրեն քահանա է անվանում:

Այսպիսով՝ մենք իմանում ենք, որ Սայաթ-Նովան կրոնավոր չի եղել բառի իսկական իմաստով, այլ կրոնական սքեմի մեջ ծառայել է մի վեհ ործի՝ ընդօրինակել, բազմացրել և հավաքա ըել է հայկական ձեռա ըերը: Ահա թե ինչու Սայաթ-Նովա Տեր Ստեփանոսին մեկ տեսնում էք Պարսկաստանի Գիլան քաղաքում, մեկ՝ Կոնստանդինապոլսում, մեկ էլ՝ Թիֆլիսում ու Ջակաթալայի Կախի ավանում:

Մի շարք վկայություններ կան այդ մասին եր չի՝ մեզ հասած մատյանի էջերում: Ահա դրանք:

Մատյանի 24-րդ և 84-րդ էջերի վրա ուրիշի ձեռա ըով վրացատառ ու վրացերենով ըված են նույնիմաստ երկու հիշատակարաններ, որոնց հեղինակը երանի է տալիս այն օրվան, երբ Տեր Ստեփանոսը կվերադառնա և հնարավորություն կընձեռի ըելու այս մատյանը, որպեսզի կիսատ չմնա: Բերում ենք հիշատակարանները՝ արևելա ետ Պարույր Մուրադյանի թար մանությամբ. «Երանի Աստված Տեր Ստեփանին խաղաղությամբ վերադարձնի (բառացի՝ բերի), որ այս Դավթարը ինձ կարդալ տա, սրա (Դավթարի) իմաստը (անկատար) չմնա, և իմ լուխը նրան ծառայի» (էջ 24): «Երանի Տեր Ստեփանը խաղաղությամբ ա, ինձ (համար) կարդա այս իրքը և ի ող-

ջությունն իր որդոց, և իմ նպատակը (բառացի՝ միտքը) (անկատար) չմնա, և իմ մեղավոր լուխը նրան ծառայի»<sup>180</sup>:

Հիշատակարանների մտքից պարզ երևում է, որ Տեր Ստեփանոսին (Սայաթ-Նովային) երկու դեպքում էլ բարի վերադարձ են մաղթում: Հետևաբար՝ նա տնվում է օտարության մեջ:

Մատյանի հատուկենտ վկայություններից իմանում ենք, որ Տեր Ստեփանոսի՝ Թիֆլիսից բացակայությունները համընկնում են 60–70–ական թվականների հետ: Այսպես՝ հիշյալ մատյանի թելը ավարտվել է 1765 թ.: Այդ մասին է վկայում մատյանի վերջին՝ 140–րդ էջում ըված Հովհան Պենտելենցի վրացերեն հիշատակարանը: Նշանակում է, որ Սայաթ-Նովան այդ ընթացքում է բացակայել Թիֆլիսից, այն էլ տևական ժամանակով, որի համար էլ ձ ձ վել է մատյանի թելը:

Մատյանում կան նաև ուրիշ ռառումներ, որոնք, չնայած այլ իմաստ ունեն, բայց դարձյալ կողմնակիորեն հաստատում են այս միտքը: Այդ ռառումները պատկանում են Սայաթ-Նովայի աներ Շահվերդուն, որը այդ տարիներին ապրում էր Թիֆլիսում՝ որպես վրացական արքունիքի հպատակ:

Հետաքրքիրն այն է, որ այդ ռառումները Շահվերդու մաղթանքներն են Սայաթ-Նովու որդու, այսինքն՝ իր թոռ անչափահաս Մելիքսեթի (Մելքոյի) հասցեին: Բերում ենք այդ ռառումները՝ Պ. Մուրադյանի թարմանությամբ. «եղի՛ր բարօր, Մելքո»<sup>181</sup>. «Քու պապի՛ Շահվերդու զույ աչքերի լույս աշակերտ Մելքո. հենց որ իմացավ, իսկույն ցույց տվեց իմացած լինելը»<sup>182</sup>: «Թող բարօր լինի քո որդի Մելքոն, ո՛վ Տեր Հիսուս Քրիստոս»<sup>183</sup>: «Թող բարի հիշեն քո որդի Մելքոյին...»<sup>184</sup>: Վերջին ռառման տակ հերթականությամբ ըված են վրացական այբուբենի շուրջ 14 տառեր, առաջ՝ «հազար», «մեկ հարյուր», «հին հարյուր», «վեց հարյուր» արտահայտությունները: Հավանական է, որ Շահվերդին աշակերտ թոռանը՝ Մելքոյին, նստեցրել է դիմացը և ստու էլ նրա ռաճանաչությունն ու թվաբանական իտելիքները: Մենք այս եզրակացության ենք ալիս այն հիմքով, որ ռառման երկրորդ տողը՝ վրացական այբուբենի տառերը, ըված են

---

<sup>180</sup> Պ. Մուրադյան, Սայաթ-Նովա՝ ըստ վրացական աղբյուրների, ՀՄՍՀ ԳԱ, հրատ. 1963, էջ 51:

<sup>181</sup> Սայաթ-Նովա, Խաղեր, մնամահանություն, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, էջ 36:

<sup>182</sup> Նույն տեղում, էջ 61:

<sup>183</sup> Նույն տեղում, էջ 70:

<sup>184</sup> Նույն տեղում, էջ 137:



հակառակ կողմից (Շահվերդին պարզապես մատյանը հրել է դիմացը նստած թռռան առաջ և կար ադրել է ըել):

Այս ամենը վկայում է, որ Սայաթ-Նովայի զավակները մոր մահից հետո (1768 թ.) տնվելիս են եղել իրենց պապ Շահվերդու խնամքի տակ, որի պատճառը ընդ Տեր Ստեփանոսի (Սայաթ-Նովայի) տնական բացակայություններն են եղել:

Իսկ թե երբ է Տեր Ստեփանոսը դարձել Հաղպատի վանքի վանական, այդ մասին վկայություններ չկան: Մեր կարծիքն այն է, որ նա վանական է դարձել, երբ առաջացած տարիքի պատճառով այլևս չի կարողացել զբաղվել ըջությամբ: Դա հավանական է եղել XVIII դարի 90-ական թվականներին, որովհետև, ինչպես տեսանք վերևում, նա 1786–87 թթ. Թիֆլիսում ընդօրինակել է Ամիրդովլաթ Ամասիացու «Ան իտաց անպեր» աշխատությունը...

## 7. Մահը

Սայաթ-Նովայի առաջին կենսա իր Գ. Ախվերդյանը փորձել է իր ըբում պարզաբանել նաև եր չի մահվան հան ամանքներն ու տարեթիվը, բայց ձեռքի տակ չունենալով հավաստի փաստեր՝ հան ել է այն եզրակացությանը, որ իբրև թե նա զոհվել է 1795 թ. պարսիկ Աղա Մահմեդ խանի կողմից Թիֆլիսը ըավելու ժամանակ: Ախվերդյանը իր միտքն ավարտում է հետևյալ կերպ. «... Պարսիկքն մտնում են Թիֆլիս: Հաղբատու առաջնորդարանն հենց բերդի տակն ըլլելով, թշնամիքն տուն են ընկնում՝ ավիթն ու սկսում են կողոպտելն ու կոտորելն...

Էսպես խալիսի նոքարն նահատակված է... սեպտեմբեր ամիսն՝ 1795–ին:

... Մե քանի օրից՝ պարսից՝ Թիֆլիզեն դուրս նալուց հետո, վեր են առնում նրա մարմինն ու թաղում են Մեծ Բերդի եկեղեցու հյուսիսային փոքր դռան առջև: Թեպետ Սայաթ-Նովու երեզմանն չունի քար ցած, բայց էսպես պատմում են նրա թաղման պատահողներն»<sup>185</sup>:

Այն հան ամանքը, որ եր չի նույնիսկ «թաղման պատահողները» կոնկրետ անձնավորություններ չեն, Ախվերդյանի վարկածը մնում է որպես սոսկ ենթադրություն, մանավանդ որ դեպքից անցել է 55–60 տարի: Չնայած դրան՝ այս վարկածը ընդունել են բանաստեղծ

<sup>185</sup> «Սայաթ-Նովա, Լույս գցած աշխատասիրութեամբ Գեորգեայ Ախվերդեան, Մոսկվա, 1852, Յառաջաբան», էջ ԺԲ:

Պոլոնսկին, Եներալ Պոտտոն, պատմաբան Լեոն, բանաստեղծներ Յ. Թունանյանն ու Վ. Բրյուսովը, բանասերներ Կեկելիձեն, Ի. Գրիշաշվիլին, Գ. Ասատուրը և շատ ուրիշներ:

Այս վարկածին առաջին ան ան դեմ են դուրս ավիս բանասերներ Լ. Մելիքսեթբեկյանն ու Գ. Լեոնիձեն՝ այն համարելով առասպել, միննույն ժամանակ պնդելով, որ Սայաթ-Նովան վախճանվել է 1801 թ. բնական մահով: Մելիքսեթբեկյանի և Լեոնիձեի վարկածի համար հիմք է հանդիսացել վրաց պատմա իր Պլատոն Իոսելիանի «Վրաստանի վերջին թա ավոր Գեոր ի 13–րդի կյանքը» աշխատությունը, որտեղ պատմա իրը Գեոր ի 13–րդ թա ավորի (1789–1800 թթ.) ժամանակակից անձնավորությունների շարքում դատում է Սայաթ–Նովային: Գ. Լեոնիձեն այս փաստը հավաստի է համարում պնդելով, որ պատմա իրը չէր կարող սխալվել, որովհետև նա 1809 թ. ծնված է և ընթե ժամանակակից է Գեոր ի 13–րդ թա ավորի ժամանակ ապրած մարդկանց:

Քանի որ պատմա իր Իոսելիանիի ռքում կոնկրետ չի նշված, թե երբ է մահացել Սայաթ–Նովան, Գարե ին Լևոնյանը Գ. Լեոնիձեի վարկածը համարում է անհիմն ու մտացածին և, չ իտես ինչու, մոլեռանդորեն պնդում է Ախվերդյանի վարկածը՝ բնավ հաշվի չառնելով այն հան ամանքը, որ պատմա իրը, ընթե ժամանակակից լինելով, չէր կարող սխալվել թերևս այն հարցում, որ Գեոր ի թա ավորի օրոք (1798–1800 թթ.) Սայաթ–Նովան ողջ է եղել:

Գարե ին Լևոնյանը Սայաթ–Նովայի զոհվելու վարկածը փորձում է հաստատել նրա որդու՝ Օհանի կողմից թողած մի բավականին աղավաղված, վերծանման կարոտ ու անհասկանալի հիշատակարանով: Մենք հարկ չէինք համարի քննարկման առարկա դարձնել Գ. Լևոնյանի կարծիքը, եթե Օհանի հիշատակարանը ինքնին հետաքրքրություն չներկայացներ: Լևոնյանը ռում է. «Վերջապես, նրա սպանումը հաստատող մի այնպիսի խոշոր փաստ կա, որը հիմնահատակ է անում Իոսելիանի–Լեոնիձե–Մելիքսեթբեկյան թեորիան: Ո՞վ կարող էր ավելի լավ իտենալ Սայաթ–Նովայի ինչ կերպ մեռած լինելը, քան իր հարազատ որդին: Եվ ահա նրա վկայությունը:

Ասիական թան արանում տնվող Սայաթ–Նովայի խաղերի 1823–ին ռած Դավթարի մեջ «Խաբար նաց բլբուլի մոտ» եր ին կից, եր երը ռի առնող Օհան Սեյադովը (աշուղի որդին) ունի այսպիսի՝ մեզ համար վերին աստիճանի կարևոր ծանոթություն. «Այս մուխամբազը Սայաթ–Նովան հորինեց, որ Շահը (աղա Մահմեդ Խանը) պետք է ա մեծ ժխորով նրա երեզմանի վրա, այս է պատճառը, որ նրան մաս–մաս արին...»:

Իրո՞ք պատճառը այդ եր մ է եղել, թե՞ չէ. դա այստեղ երկրորդական խնդիր է: Բայց որ որդին իտե, թե իր հարազատ ծնողին մաս–մաս են արել, դա է կարևորը:

Եվ թող հայտնի լինի բանասերներ Մելիքսեթբեկյանին և Լեոնիձեին, որ մաս–մաս անել նշանակում է սպանել դաժանորեն և ոչ թե թողնել, որ նա վեց տարի հետո բնական մահով մեռնի:

**Ուրեմն այսօրվանից հատուկ ուշադրության պետք է առնվի, որ Սայաթ–Նովայի սպանված լինելը հերքելը և նրա 1801 թվին բնական մահով մեռնելը միան ամայն զուր և ավելորդ աշխատանք է»<sup>186</sup>:**

Թե որքան միամիտ է այս «սպանմալիքը», կարելի է ապացուցել թեկուզ այն փաստով, որ Օհանի վերոհիշյալ «ծանոթությունը» բանասեր Մորուս Չասրաթյանը միան ամայն այլ տեսանկյունից է վերծանում: Ահա այն.

«Սա մուխամմազ է, Սայաթ–Նովան կարծեց, որ թա ավորը պետք է նրա երեզմանին ա մեծ ժխորով նրա համար, (որ) պատառ–պատառ անի (այն) ուժը (կամ սիրտը), որը արիություն է ցույց տվել նրա նման տղամարդու մահը (մահով կամ սպանությամբ), բառացի՝ «Կտրիճի ուժը, ով որ մարդկություն (է) ործադրել նրա նման տղամարդու մահը»<sup>187</sup>:

Բացի այն, որ այստեղ եր չին «մաս–մաս» անելու մասին խոսք չկա, Մ. Չասրաթյանը անհասկանալի է համարում ըթթե ամբողջ ծանոթա թությունը: «Բացարձակ կերպով,— թում է նա,— համոզված ոչինչ չի կարելի ասել, *ընդհակառակը, ավելի շատ կարելի է այնպես հասկանալ, որ Սայաթ–Նովային սպանել են ոմանք, և թա ավորը (եթե ընդունենք մի Շահ կամ Աղա Մահմեդ Խան) պիտի ա և այդ «արիություն» ցույց տված ուժը կործանի, կտոր–կտոր անի»<sup>188</sup>:*

Ի պատիվ Մ. Չասրաթյանի՝ պիտի ասենք, որ նա ըթթե ճիշտ է հասկացել ծանոթա թության միտքը, բայց քանի որ նա էլ մյուս բանասերների նման աշխատել է վերծանել միայն ծանոթա թությունը և ոչ թե այն խաղը, որը ծանոթա թված է, ապա արդյունքը ոհացուցիչ չի եղել:

Բանն այն է, որ ինչպես խաղը, այնպես էլ ծանոթա թությունը ոչ մի առնչություն չունեն եր չի մահվան հետ, ընդհակառակը, դրանք ավելի շատ վերաբերում են նրա կյանքին, որ մի ժամանակ մահին հավասար հարված կրեց վրաց արքունիքում...

<sup>186</sup> Գ. Լևոնյան, Երկեր, Հայպետհրատ, Երևան, 1963, էջ 359–360:

<sup>187</sup> Սայաթ–Նովա, Խաղերի ժողովածու, Հայպետհրատ, Երևան, 1983, էջ 250:

<sup>188</sup> Նույն տեղում:

Երբ կարդում ենք խնդրո առարկա «Խաբար ընաց բըլբուլի մոտ...» խաղը, մեր աչքի առաջ իր ամբողջ ողբեր ությամբ հառնում է մեր հաճարեղ սիրահարի կյանքի այն ողբեր ական ժամանակահատվածը, երբ նրան դավադիր պալատականների բանսարկությամբ պատվազրկել և հեռացրել են պալատից՝ գրկելով նրան իր սիրած «վարթի» տեսակցությունից: Խաղի ամբողջ միտքն այն է, որ որքան էլ իր հակառակորդ բանսարկուները ուժեղ լինեն, միևնույնվ է, ճշմարտությունը կհաղթի, և ինքը արդար է, և վերջում հաղթանակն իրենն է: Որ ինքը դավաճանված է, այդ շատ պարզ երևում է խաղի հետևյալ տողերից.

*Չէթող, թե մուրազին հասնին, տես ինչ արավ քավթար Ղարին,  
Փահարազին բըլլունդ սըպանից, Շիրին խանջալուն մընում է:*

Այստեղ «Ղարին» «Ֆահրադ և Շիրին» արևելյան սիրավեպի այն պառավն է, որը դավադրաբար կործանեց ամենդ սիրահարներին: Սակայն Սայաթ–Նովան չի հուսահատվում. նա խաղի երկրորդ տան մեջ հավատում է իր հաղթանակին:

*Քանի գուզե քնած տիղըն իր թշնամին կուռն կապե:  
Էլի վիրջումըն մեյդանըն Բոստամի Զալուն մընում է:*

Չարք է առաջանում՝ ո՞րն է մեր եր չի ուժի աղբյուրը, որին հավատալով՝ նա հավատում է նաև իր հաղթանակին: Յենց սկզբից ասենք, որ նա հավատում է արդարության հաղթանակին: Այդ մտքով է նա ավարտում խաղը, որը ամփոփված է նրա վերջին երկու տողում և մինչև օրս մնալով անհասկանալի՝ տարակարծությունների տեղիք է տալիս: Այդ երկու տողով դիմելով իր սիրեցյալին՝ Սայաթ–Նովան րում է.

*Աչխարումըս քանի սաղ իս, Սայաթ–Նովի գերեզմանըն  
Շահ–Աբասի լալի նման, շահի՛ վրեն գալուն մընում է:*

Սայաթ–Նովան այս տողերով ակնարկում է միջնադարի մի ավանդություն ( ուցե և եղելություն), որը, բարեբախտաբար, պահպանված է Առաքել Դավրիժեցու «Պատմության» մեջ:

Դավրիժեցին պատմում է<sup>189</sup>, որ Շահ–Աբաս 1–ին թա ավորը սովորություն ուներ ծպտյալ մտնել ժողովրդի մեջ... Սի ան ան Խոռոնապատ յուղում հանդիպում է Լալա անունով մի երիտասարդի,

<sup>189</sup> «Պատմություն Առաքել Վարդապետի Դավրիժեցու», Վաղարշապատ, 1896, էջ 171–177:

որը յուրի նախրապանն էր: Երիտասարդը իր խելքով դուր է ալիս Շահ–Աբասին: Վերջինս Լալային պալատ է տանում ու պաշտոններ տալիս: Կարճ ժամանակամիջոցում Լալան բեկի տիտղոսի է հասնում և պալատում բարձր պաշտոն վարում: Սակայն նախանձողները նրան ամբաստանել են շահի առաջ՝ մեղադրելով անհավատարմության մեջ: Շահը, հավատալով դավադիրներին, Լալային զրկում է բեկի տիտղոսից և որոշում է անձամբ վեր թել նրա ունեցվածքը: Լալան հոժարակամ ամեն ինչ հանձնում է շահին, բացի մի ոսկյա կողպեք ունեցող սնդուկից՝ պատճառաբանելով, որ այն բերել է իր հայրական տնից և պատկանում է իրեն և ոչ թե շահին: Շահը ցանկանում է համոզվել դրանում: Լալան բացում է սնդուկը և, ո՛վ գարնանք, նրանում պահված էին Լալայի նախորդական մաշված տրեխներն ու կարկատած շորերը: Շահի այն հարցին, թե Լալան ինչու է պահել դրանք, Լալան պատասխանում է. «Սրանք պահել են, որ ամեն օր նայեմ ու զ ուշանամ ու իմ բարերարին չդավեմ»: Շահը, իմանալով այս, զ ում է, որ Լալան անմեղ է: Իսկույն վերականուրում է բեկի՝ նրա տիտղոսը՝ նրան թողնելով ամբողջ ունեցվածքը, համապատասխան պատժի ենթարկելով նրա հակառակորդներին:

Խաղը թելիս Սայաթ–Նովան հույս է ունեցել, որ Զերակլը նույնպես կվարվի Շահ–Աբասի նման և կվերական մի եր չի իրավունքները պալատում, որը, ավաղ, տեղի չի ունենում:

Այսպիսով՝ մենք իմանում ենք, որ եր չի որդու հիշատակած շահը ոչ թե Աղա–Մահմադ խանն է, որ «մաս–մաս» է արել Սայաթ–Նովային, այլ Զերակլ 2–րդն է, որը պիտի « ար» ու «պատառ–պատառ» աներ նրա հակառակորդին, ու իմանում ենք նաև, որ այն ոչ մի կապ չունի եր չի մահվան հետ:

Ուրեմն՝ ե՞րբ է մահացել Սայաթ–Նովան:

Սայաթ–Նովան ողջ է եղել 1800 թվին. այս փաստը հաստատվում է նաև Զովհան արքայազնի «Կալմաստբա»-ի վկայությամբ, որի մասին մենք արդեն խոսել ենք նախորդ լխում. Զովհանեն Սայաթ–Նովայի հետ Զադպատի վանքում ինի է խմել ընթե այդ նույն ժամանակներում (1798 թ.), այսինքն՝ Աղա–Մահմադ խանի արշավանքներից հետո, իսկ թե երբ է վախճանվել, այդ մասին մենք առաջ ենք քաշում մի շատ հավանական վարկած:

Ակադեմիկոս Ն. Մառը 1889 թ. Լենին ըրդի իտությունների ակադեմիայի Ասիական թան արանի վրաց ձեռա ըերի բաժնում (նյութ 222) հայտնաբերում է Սայաթ–Նովայի խաղերի մի նոր մատ-

յան, որն ունի այսպիսի հիշատակարան. «Այս մատյանը պատկանում է Վրաստանի թա ավորի որդի Թեյմուրազին, որը ընդ Սայաթ-Նովայի որդի Յովանեն իր հայր Սայաթ-Նովայի եր երը՝ իբրև նրան հիշատակ»<sup>190</sup>:

Եր չի որդի Յովանեն (Օհանը) մատյանը ընդ է 1823 թ.: Այն ունի հետաքրքիր կառուցվածք, որը, մեր կարծիքով, աննպատակ չէ: Մատյանը պարունակում է 26 թուրքերեն, 26 վրացերեն, 26 հայերեն, ապա 1 երկլեզվյան և 1 քառալեզվյան խաղեր՝ ընդամենը 80 խաղ:

Մատյանի հիշատակարանից երևում է, որ այն ընդ է ի հիշատակ Սայաթ-Նովայի: Հարց է առաջանում՝ ի՞նչ հարկ կար 1823 թվականին նման կառուցվածքով մի մատյան կազմել եր չի հիշատակի համար: Այս հարցում մեր կարծիքն այն է, որ մատյանը հորելյանական նշանակություն ունի՝ մատյանը ընդ է ի պատիվ Սայաթ-Նովայի ծննդյան 100-ամյակի, որը, ըստ վարկածի, լրանալու էր երկու տարի հետո՝ 1826-ին: Մենք ենթադրում ենք, որ մատյանը կազմողները, նրանում խաղերը 26-ական ընդ է, հիշատակել են եր չի ծննդյան թվականը՝ 1823), իսկ խաղերի ընդ է հանուր քանակով 80-ով, ցույց են տվել նրա ապրած տարիները:

Եթե հետա այում այս ենթադրությունը հաստատվի լրացուցիչ հավաստի փաստերով, ապա այն մի նոր ու շատ կարևոր էջ կբացի մեր անգու ական եր չի դեռևս աղոտ կենսա րության մեջ: Դրանով կբացահայտվի, որ նա մահացել է 1806 թվականին, 80 տարեկան հասակում, այսինքն՝ Հաղպատի վանքում Յովհան արքայազնի հետ հանդիպելուց 5-6 տարի հետո:

---

<sup>190</sup> Տե՛ս Գ. Լևոնյան, Երկեր, էջ 375:

## 8. Գրական ժառանգությունը

Սայաթ-Նովայի րական ժառանգությունը մեզ հասել է հիմնականում երկու Դավթարների միջոցով: Առաջինը ընդհանուր առմամբ էր չի անմիջական մասնակցությամբ (մասամբ՝ իր ձեռքով), որն այժմ պահվում է Հայաստանի րականության թանկարժեքային, իսկ երկրորդը ընդհանուր առմամբ չի որդի Օհանի ձեռքով, որը պահվում է Լեմին րադի Ասիական թանկարժեքային:

Պրպտունների ընթացքում հան եցինք այն եզրակացությանը, որ մեզ հասած այս երկու Դավթարներն էլ արտա ընդհանուր առմամբ չեն նախորդ եղած մի այլ Դավթարից, որը, դժբախտաբար, չի հասել մեզ:

Ահա այդ մասին մի քանի փաստեր:

1. Եր չի մեզ հասած հիմնական Դավթարը ընդհանուր առմամբ 1758 թվականից հետո: Այս բանն անկասկած է, որովհետև Դավթարը կազմված է դիվանի սկզբունքով (խաղերը դասավորված են ըստ նրանց իմաստի), և խախտված է խաղերը ընդհանուր առմամբ հերթականությունը: Դավթարի սկզբունքը զետեղված են 1758 թվականի խաղերը (էջ 43, 52, 54, 55, 58 և այլն) և ապա խառը տարեթվերով:

Ուրեմն, եթե Դավթարը ընդհանուր առմամբ 1758 թվականից հետո, նշանակում է եր իջը ունեցել է նախնական Դավթար կամ առանձին տետրեր, որտեղ ընդհանուր առմամբ են եղել շուրջ 8 տարիների հորինած խաղեր: Մտածել, թե նա կարող էր այդքանը հիշողության մեջ պահել, այն էլ դրանց հորինելու տարիներով ու ամիսներով, կասկածելի է:

Բանն այսպես է եղել. նա ցանկացել է տարիների ընթացքում ընդհանուր առմամբ խաղերը դիվանի վերածել և բոլորը ընդհանուր առմամբ եղեցիկ նոտր ընդհանուր, սակայն, մեզ անհայտ հանձնարարների պատճառով, փոխել է մտադրությունը և խնդրել է, որ ուրիշներն իրեն օ նեն: Երբ ուշադիր նայում ենք Դավթարին, մենք տեսնում ենք, որ բոլոր խաղերը միևնույն ձևա ընդհանուր ընդհանուր: Բացի այդ, Դավթարում կա մի շատ հետաքրքիր փաստ, որը մինչև այժմ աչքաթող է արված: Եր իջը Դավթարում նախորդ սահմանել է խաղերի հերթականությունը իր ձեռք ընդհանուր: Նա 27–45 և 49–72 և ուրիշ այլ էջերի վրա արտա ընդհանուր է խաղերի առաջին տները, այնուհետև հանձնարարել է մեկ ուրիշին այն շարունակելու: Շատ հավանական է, որ երբեմն բարդ խաղերը ինքն է թելադրել: Այդ է վկայում Դավթարի 37–րդ էջում եր չի ձեռք - ընդհանուր խաղի միայն առաջին տունը, որտեղ խաղի շարունակությունը չկա: Պատճառն այն է, որ արտա ընդհանուր նախկին Դավթարից չի կարողացել արտա ընդհանուր այն առանց եր չի օ նության, որովհետև, ինչպես

եր իչն է նշել խաղի սկզբում, «Էս նողդասը է», որը նշանակում է, թե՛ խաղը ընկած է արաբական տառերով, առանց կետերի: Իսկ ամեն մարդ չէր կարող կարդալ ու հասկանալ «նողդասը» խաղերը: Այդ են ապացուցում նաև Դավթարի 24 և 84 էջերի արդեն մեզ ծանոթ վրացերեն լեզվով ընկած երկու նույնիմաստ հիշատակարաններ, որը անհրաժեշտ ենք համարում մեջբերել և այստեղ.

«Երանի Աստված Տեր Ստեփանին խաղաղությամբ վերադարձնի բառացի՝ բ ե ռ ի ), (որ) այս Դավթարը ինձ կարդալ տա, սրա (Դավթարի) իմաստն (ամկատար) չմնա, և իմ լուխը նրան ծառայի»:

«Երանի Տեր Ստեփանը խաղաղությամբ ա, ինձ (համար) կարդա այս իրքը ի ողջույն իր որդոց, և իմ նպատակը (բառացի՝ միտքը) (ամկատար) չմնա, և իմ մեղավոր լուխը նրան ծառայի»<sup>191</sup>:

Այս հիշատակարաններում հիմնականում երկու արժեքավոր միտք կա. առաջինը այն է, որ մեզ հասած Դավթարը ընկած է այն ժամանակ, երբ Սայաթ–Նովան կրոնավոր է եղել, այսինքն՝ այն ընկած է 60–70–ական թվականներին, և երկրորդը, որ հիշատակողը ակնարկում է Դավթարը եր չի կողմից կարդալու և իր լուխը նրան ծառայեցնելու մասին: Այս ծառայությունը ուրիշ բան չի կարող լինել, եթե ոչ՝ Դավթարի արտա ռությունը:

Այս Դավթարի խաղերում կան այնպիսի աղավաղումներ, որոնք ցույց են տալիս, որ խաղեր արտա ռողը կան ռողը (թելադրվածից) ինքը՝ Սայաթ–Նովան չի եղել, հակառակ դեպքում խաղերում այդքան աղավաղումներ չէին լինի:

Եր իչը կան ժամանակ չի ունեցել արտա ընկած խաղերի ճշտությունը ստու ելու, կան էլ ուղղակի վստահել է ռողի ռա իտությանը, թերևս այդ է վկայում այն հան ամանքը, որ մեզ հասած Դավթարում վրացերեն խաղեր չկան. մեր ենթադրությունը այն է, որ նախկին Դավթարում այդ խաղերը ընկած են եղել վրացատառ և թողնված են եղել, որ վերջում խաղեր ռողը արտա ռի առանց եր չի օ նության, սակայն վերջինս մեզ անհայտ պատճառներով չի արտա ռել:

2. Նախորդ լիսում մենք օրինակ բերեցինք թուրքերեն 72–րդ խաղը, որտեղ եր իչը արաբական տառերի կետադրությամբ կազմել էր ընթերցման հանելուկ և հարց է տալիս. «Կետով, անկետ տառեր քանի՞սն է, քանի՞»: Սա նս ապացույց է այն բանի, որ իսկապես եղել է մի Դավթար, որտեղ այս խաղը ընկած է եղել արաբական տառերով:

<sup>191</sup> Պ. Մուրադյան, «Սայաթ–Նովան՝ ըստ վրացական աղբյուրների» ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1963 թ., էջ 51:



3. Եր չի որդու ծեռքով րած Դավթարը պարունակում է 80 խաղ: Այս խաղերը արտա րված չեն եր չի՝ մեզ հասած Դավթարից, որովհետև որդու Դավթարում կան 26 վրացերեն խաղեր, որոնք մեզ հասած Դավթարում չկան, բացի այդ, որդու Դավթարի խաղերի որոշ տողեր տարբերվում են մեզ հասած Դավթարի նույն խաղերի տողերից: Բանասեր Մ. Հասրաթյանը դրա պատճառը համարում է եր չի որդու կողմից կատարած «խմբա թությունները» կամ էլ բանավոր իմացածից ըի առնելու ժամանակով թույլ տված սխալները:

Նախ ասեմք, որ եր չի որդին 50–60 տարեկան հասակում չէր կարող բանավոր հիշել 80 այնպիսի բարդություն պարունակող ու տարբեր լեզուներով րած խաղեր, ինչպիսիք Սայաթ–Նովայինն են:

Մեր կարծիքն այն է, որ եր չի նախնական Դավթարը տնվելիս է եղել որդու մոտ, որից էլ նա արտա ըել է թուրքերեն, հայերեն և վրացերեն 26–ական խաղ (ընդամենը՝ 78) և 1 լեզվյան ու 1 քառալեզվյան՝ վրաց արքայազն Թեյմուրազի պատվերով: Նա խաղերն արտա ըել է այնպես, ինչպես եղել է եր չի նախնական Դավթարում. տողերի տարբերության պատճառը պետք է փնտրել եր չի մոտ:

Մեզ հասած Դավթարը կազմելիս Սայաթ–Նովան ինքն է որոշ տողեր փոխել, որովհետև եր չի որդու Դավթարում եղած տարբերություն տվող տողերում կան բառերում կան այնպիսիք, որոնք իրենց արժեքով չեն զիջում մեզ հասած հիմնական Դավթարում եղած նույն տողերին ու բառերին:

Այսպես, օրինակ՝ եր չի խաղերում «դու ունն» ու «Դաղը» անբաժան են իրարից: Դու ունը այն ուռուցքն է, որը բուժվում է շիկացած երկաթով դաղելու միջոցով: Եր իչը իր վիշտը համեմատում է այդ ուռուցքի հետ և իրավամբ բացականչում է. «Մե դու ունըն երկու դաղին ինչ անե...» (Հ. 21), սակայն որոշ ժամանակ անց իր հանրահայտ «Վշխարհըս մե փանջարա է...» (Հ. 53) խաղում րում է.

*Մըտիկ տըվողըն կու խուցվի,— դաղերումեն բեզարիլ իմ...*

Սա եր չի՝ մեզ հասած Դավթարում եղած խաղի տողն է, որտեղ պարզորոշ չի ասված, թե ինչու է եր իչը դաղվելուց բեզարել: Տողի առաջին կեսը («Մըտիկ տըվողըն կու խուցվի...») ցույց է տալիս այդ «դաղերի» ազդեցության աստիճանը, իսկ դրանցից բեզարելու պատճառը եղել է խաղի նախնական տեքստում, որից նույնությամբ արտա ըել է որդին: Ահա այն.

*Դուգուննիրըն շատացիլ է՝ դաղերումեն բեզարիլ իմ...*

Դժվար թե տնվի մեկը, որ առարկի, թե այս տողը Սայաթ–Նովան չի` րել: Խաղերում մնան տարբերություններ էլի կան...

Սրանք ապացուցում են, որ եր չի որդին իր Դավթարը կազմելիս ունեցել է եր չի եր երի այլ աղբյուր: Եվ հավանական է` դա եղել է այն աղբյուրը, որից եր իչը աննշան խմբա թություններով կազմել է իր` մեզ հասած Դավթարը:

Այստեղ հետաքրքիրն այն է, որ եր չի խաղերի նախնական ու ինքնա իր ժողովածուն կամ նրա տարբերակը 1823 թվականին տնվելիս է եղել իր որդու` Օհանի մոտ` Պետրոս րադում...

## **9. Սայաթ–Նովայի անվան ստու աբանությունը**

Սայաթ–Նովայի կենսա թության բազմաթիվ չպարզաբանված հարցերի հետ միասին առ այսօր վերջնական ստու աբանման կարոտ է գ ում նաև եր չի` րական անունը:

Քանի որ մեզ հասած` րական աղբյուրներում եր չի` րական անունը` րված է տարբեր ծներով, ապա նրա կենսա թությամբ զբաղվող տարբեր բանասերներ տարբեր բացատրություն են տվել: Գ. Լևոնյանը սկզբում այն բացատրել է իբրև «համբավվոր որսորդ»–ի (Սայաթ–որսորդ, Նովա–համբավ), ապա հետա այում հրաժարվելով այդ մտքից` բացատրել է «Սայաթի որդի կամ Սայաթի թոռ (Սայաթ–որսորդ, Նովա–թոռ)»: Մեծահանճար բանաստեղծ Դովի. Թումանյանը, լոկ տրամաբանելով, այն թար մանել է «եր ի–երաժշտության տեր, իշխան», իսկ վրաց բանասեր Ի. Գրիշաշվիլին եր չի ծածկանունը դիտել է իբրև Սեյիդ Նեվի, որը հայերեն նշանակում է նոր ուսուցիչ, նոր ուսուցող և այլն:

Մանրագին ծանոթանալով վերոհիշյալ ստու աբանություններին և ուսումնասիրելով եր չի` մեզ հասած Դավթարը` մենք եկանք այլ եզրահան ման: Մեր կարծիքն այն է, որ հիշյալ մեկնաբանությունները շատ հեռու են իրականությունից, որովհետև հիշյալ հեղինակները եր չի` րական անունը ստու աբանելիս չեն ծավալել բազմակողմանի ուսումնասիրություն, այլ միայն աշխատել են բացատրել, թե ինչ են նշանակում այդ երկու առեղծվածային բառերը, որոնք դարձել են մեր բազմաքանքար ուսանի` րական անունը: Գուցե նրանց ոչ խորագին ուսումնասիրության պատճառը եղել է այն, որ նրանք չեն ունեցել այսօրվա հնարավորությունները, այսինքն` եր չի մասին եղած այսօրվա հսկայական` րականությունը:

Մեր պրպտոււմների ժամանակ մենք մեր առաջ խնդիր դրեցինք ամենից առաջ պարզելու, թե եր իչը իրականում իրեն ինչպես է կոչել: Չէ՞ որ եր չի առաջին կենսա իր Ախվերդյանը ընդունել է եր չի ձեռա իր Դավթարում եղած այդ անվան րության բազմաթիվ ձևերից միայն մեկը (Սայեաթ–Նովա) կարևորություն չտալով այն հարցին, թե դա ինչ է նշանակում:

Եր չի՝ մեզ հասած ձեռա իր Դավթարում մենք եր չի րական անվանը հանդիպում ենք հետևյալ ձևերով՝ Սայիադ–Նովա, Սայեադ–Նովա, Սայեաթ–Նովա, Սայիաթ–Նովա, Սայիաթնովա, Սաաթնովա, սայիաթնովա և այլն:

Չենց սկզբից ասենք, որ եր իչը իրեն անվանել է Սայիադ–Նովա: Մենք այդ եզրակացության եկանք հետևյալ պարզ պատճառով: Եր չի՝ մեզ հասած Դավթարը (ինչպես տեսանք) րված է ոչ մեկ մարդու ձեռքով: Մեր ենթադրությունն այն է (իր տեղում ասվեց), որ եր իչը ունեցել է իր եր երի հիմնական Դավթարը, որից արտա րված է մեզ հասած Դավթարը: Մեզ հասած Դավթարը Սայաթ–Նովան ցանկացել է կազմել անձամբ և մինչև 11–րդ էջը րել է ինքը: Դրանք թուրքերեն խաղեր են, որոնք րված են եր չի կողմից հայատառ (ձեռա իրը համընկնում է Մատենադարանում պահպանված՝ եր չի կրոնավոր եղած ժամանակի ձեռա րերին), այնուհետև եր իչը մեզ անհայտ պատճառներով այն շարունակելու է հանձնել ուրիշի, իսկ վերջինս խաղերը Դավթարում րել է լրիվ վրացատառ մինչև 23–րդ էջը, 23–րդ և 25–րդ էջում րված խաղերը ամբողջապես րել է եր իչը, այնուհետև իր ձեռա րով մինչև 72–րդ էջը րել է խաղերի առաջին մի քանի տողերը, որոնցով եր իչը սահմանել է խաղերի հերթականություն Դավթարում, իսկ խաղերը շարունակված են ուրիշ ձեռա րով՝ մեծ մասամբ հայատառ, ապա վրացատառ, 72–րդ էջի խաղը ամբողջապես նորից եր չի ձեռա իրն է, այնուհետև բոլոր խաղերը րված են ուրիշի կողմից վրացատառ:

Եր չի ձեռքով րված բոլոր խաղերում (բացառությամբ 25–րդ և 72–րդ էջում րված խաղերի) և Մատենադարանում պահված քահանա Ստեփանոսի (նույն ինքը՝ Սայաթ–Նովան), ինչպես նաև 1981 թ. հայտնա ործված Սայաթ–Նովայի ընդօրինակած Նարեկացու «Ողբեր ության մատյան»–ի հիշատակարաններում եր իչը իրեն անվանում է Սայեադ–Նովա: Ուշադրություն դարձնենք՝ Սայիադ և ոչ թե Սայաթ: Այդտեղից էլ կարելի է եզրակացնել, որ անվան մյուս րության ձևերը աղավաղման արդյունք են:

Այժմ պարզենք, թե ինչ է նշանակում Սայիադ–Նովա: Այս բանը պարզելու համար Գ. Լևոնյանը մի եղեցիկ հարցադրում է ձևակերպել, որի լուծման համար, սակայն, ցավոք սրտի, սիրելի բանասերը ոչ ճիշտ ուղղությամբ է նացել, ուստի և հանել է ոչ ճիշտ եզրակացության:

Լևոնյանը ընդ է.

«Որտեղի՞ց է վերցրել մեր եր իչը՝ Արուօինը, իր այդ կեղծանունը: Իրենից առաջ եղե՞լ են արդյոք «Սայաթ» կամ «Նովա» բառերը, կամ դրանցից մեկնումենկն իրենց մեջ ունեցող աշուղական անուններ՝ մեզ հայտնի չէ: Բայց Սայաթ–Նովայից հետո մեզ հայտնի են մի շարք հայ աշուղներ այսպիսի անուններով՝ Սայադ–օղլի, Սայադ Սեյադ–Ջար արօղլի, Քեչիկ Նովա, Գյուրջի Նավե, Սկանդար Նովա և ուրիշներ»<sup>192</sup>:

Որ Սայաթ–Նովան իր հետնորդը կունենար, դա լրիվ բնական է, բայց թե՛ նա իր նախորդն ունեցե՞լ է, թե՛ ոչ՝ Լևոնյանը պատասխանում է, որ «մեզ հայտնի չէ», ու չի փորձել այն իմանալ, որովհետև նրան հետաքրքրել են միայն անուն կազմող բառերի խմբերը...

Երբ մենք սկսեցինք Լևոնյանի հարցադրման ուղղությամբ պրպտումներ կատարել, արդյունքները ոհացուցիչ եղան. եր չի տողերում «թաքնված էր» նրա նախորդը:

Ահա նա՝ մեր եր չի նախորդը.

Նա ընդ է.

*Ամոթ նրան, ով գնացել չի թողել գործ արժանի՝  
Բեռ չի կապել, բայց մեկնելու կանչը հնչեց դամբարանի...*

Սայաթ–Նովան «պատասխանում է».

*Էջիսի ծովի մեջեն հանած լալ ու գոհար է բիրքս...  
Աստծու սիրուն չմոգենաք՝ կու վառե, նար է բիրքս... (Ա–1)*

Եր չի նախորդը ընդ է.

*Այս աշխարհը, ո՛վ իմ եղբայր, չի մնալու ոչ ոքին,  
Ու մի՛ հենվիր աշխարհային հարստության սին փառքին...*

Սայաթ–Նովան կրկնում է նրա խոսքը.

*Դովլաթըն էյթիբար չունի, յիփ որ կերթա ուրուշ–քարով*

---

<sup>192</sup> Գ. Լևոնյան, Երկեր, էջ 362:

*Լավ մարթն էն է՝ գլուխըն պահե աշխարհումըս էլթիբարով.  
Աշխարհըս միզ մնալու է՛ իմաստնասիրած խաբրով... (Հ. 53)*

Նախորդը թում է.

*Ափսոս կյանքըս, որ սպառվեց երազներում անամեջ...*

Նույնը ասում է նաև Սայաթ–Նովան.

*Ումբըս երազի պես գնաց՝ ծառըս չըխերած գիտենաք... (Հ. 57)*

Նախորդը թում է.

*Վատերին էլ միշտ աշխատիր լավություն ու բարիք անել... կամ  
Չար բերանից վատ խոսք կգա անմաքուր,  
Դառը չուզես՝ վատ բերանին քաղցր տուր...*

Սայաթ–Նովան լրիվ համաձայն է իր նախորդի հետ.

*Ով քիզի լիզի պարզևի, դուն տու շաքար, Սայաթ–Նովա... (Հ. 37)*

Նախորդը թում է.

*Տարբերություն թագավորի ու ծառայի մեջ չկա,  
Երբ երկնքից մարդկանց համար ճակատագիրը գետին գա...*

Սայաթ–Նովան «պարզաբանում է».

*... Ձի հարցնի ակատ, հարուստի թաքավուր՝  
Մահը վուր կա առանց կաշառ հասաս է... (Հ. 51)*

Եր չի նախորդը թում է.

*Բայց չի կարող սևամորթը լվացվելով ճերմակել...*

Սայաթ–Նովան չի կասկածում, որ.

*... Թողով չի սպիտակի սիվըն... և այլն:*

Կարելի է նման շատ համեմատություններ բերել, բայց, մեր կարծիքով, այսքանն էլ բավական է, որպեսզի համոզվենք, որ Սայաթ–Նովան ունեցել է իր նախորդը: Եվ այդ նախորդը ոչ այլ ոք է, եթե ոչ պարսիկ հանճարեղ բանաստեղծ Սաադին: Մենք վերևում բերված օրինակներում քաղվածքներ էինք բերում նրա հռչակավոր «Գուլեստան»–ից<sup>193</sup>:

<sup>193</sup> Մուղեհ Էդ–Դին Սաադի, «Գուլեստան», Հայպետհրատ, Երևան, 1958:

Այսպիսով՝ մեր բազմաբանքար ուսանը ոչ միայն լավատեղյակ է եղել պարսիկ հանճարեղ բանաստեղծ Սաադու ործերին, այլև նրա երկրպա ուն է եղել: Անկասկած է նաև այն, որ Սայաթ-Նովան Սաադու ստեղծա ործություններից պատմել է ուրիշներին: Չէ՞ որ նա իր վերջին տարիներին պատմել է, որ ինքը, վրաց արքունիքում պարսկական եղանակներով եր եր ելուց բացի, «աշխարհային ործեր» էլ է կատարել, իսկ ինչու՞ չենթադրել, որ մեր եր իչը պարսիկ այլ բանաստեղծների, հատկապես Սաադու ստեղծա ործությունները, որպես լավ պարսկերեն իմացող, թար մանել է պալատականների համար կամ ուղղակի նրանցից հատվածներ է կարդացել պալատական խնջույքներում: Անկասկած է նաև, որ երիտասարդ ուսանն ունեցել ու պատմել է նաև իր սեփական պատումները:

Հենց այդ է եղել պատճառը, որ նրան անվանել են Սայաադ-Նովա, որը պարսկերեն նշանակում է Նոր Սաադի:

Բացի վերոհիշյալ այս փաստերից, կա նաև մի ուրիշ ավելի կարևոր հան ամանք, որի պատճառով մեր եր իչը կարող էր կոչվել Նոր Սաադի. դա նրանց կյանքի մանկական տարիքի կենսա թուլթյան նմանությունն է: Սաադին մանուկ հասակում կորցնում է ծնողների: Նրա խնամքը իր վրա է վերցնում Շիրազի Աթաբեկ Սաադ իբն Ջան ին: Սաադին նրա միջոցով էլ կրթություն է ստանում: Նույն կերպ է եղել և մեր ուսանի մանկությունը: Նա ևս մանուկ հասակից զրկվում է ծնողներից և կրթություն է ստանում մեկենասի միջոցով, որի անունը դժբախտաբար չի հասել մեզ: Հենց այս մեկենասից է Հերակլ 2-րդը Սայաթ-Նովային վերցնում իր պալատ իբրև պալատական եր իչ...

Այսպիսով՝ մեր եր չի, ինչպես մանկական հասակի կենսա թուլթյան նմանությունը, այնպես էլ նրա աղափարների նմանությունը պարսիկ մեծանուն բանաստեղծ Սաադու հետ առիթ է դարձել, որ մեր ուսանը կոչվի Սայիադ-Նովա, որը պարսկերեն նշանակում է Նոր Սաադի:

## 10. Հավելված

«Ամեն մարթ չի կանա կարթա, իմ իրըն ուրիշ ըրեն է...»,— այսպես է բնորոշել եր իչ Սայաթ–Նովան իր ստեղծա ործությունները: Անսահման քանքարի տեր բանաստեղծը իրավունք ուներ այդպես նահատելու իր ստեղծա ործությունները, որովհետև նրա խաղերը ղված են այնպիսի մեծ վարպետությամբ, որ նրանց մար արտաշար տողերում ու բառերում իրար են միահյուսված բազմաթիվ եղեցիկ մտքեր ու աղափարներ: Այդ է պատճառը, որ մի դարից ավելի է, ինչ րականա ետներն ու բանասերները զբաղվում են նրանով, բայց և այնպես, մինչև օրս էլ նրա ստեղծա ործությունները մնում են որպես նորանոր ուսումնասիրությունների աղբյուր...

Այս առումով էլ Սայաթ–Նովա բանաստեղծին ավելի շատ է վերաբերում այն ասույթը, որ մի բառը մի աշխարհ է:

Իր անհաս սիրո ուժը եր ելիս Սայաթ–Նովան իր խաղերում օ տա ործել է ժամանակին ործածվող բազմաթիվ բարբառային ու օտարազ ի բառեր, որոնցից շատերի իմաստը, այսօր անհայտ լինելով, մեզ զրկում է մի բարձր ու եղեցիկ բավականությունից: Մեծ սիրեր ակի վսեմ խաղերի խոր մտքերի լրիվ ընկալումից: Բավական է ճիշտ չհասկանլ նրա որևէ խաղի ամենափոքրիկ բառի իմաստը, որպեսզի մասամբ կամ ամբողջովին աղոտանա այդ խաղի հիասքանչ միտքը: Սայաթ–Նովայի մեզ հասած Դավթարը հիմնականում ղված կամ արտա ղված է ուրիշի կողմից, որի հետևանքով շատ խաղերում տողեր ու բառեր են աղավաղված, որոնք տեղիք են տվել թյուր բացատրությունների ու լուսաբանումների:

Պրպտումների ընթացքում մենք հանդիպեցինք մի շարք բառերի ու դարձվածքների, որոնք կամ աղավաղված են, կամ էլ մինչև այսօր ճիշտ չեն լուսաբանված: Երկար ու համառոտ հետազոտությունների միջոցով մեզ հաջողվեց տնել դրանցից մի քանիսի իսկական իմաստը, որոնք նոր նյութ են տալիս սայաթնովա իտությանը: Ահա դրանք.

1. Դ ա ր – Այս բառը մինչև այսօր բացատրվում է մի քանի իմաստով, այն է՝ դժվարություն, նեղություն, կախաղան, դեղ, ճար, վիճակ և դրություն:

Երբ հարցին մոտենում ենք տրամաբանորեն, ապա կարելի է ասել, որ ամենաթույլ բանաստեղծն ան ամ միևնույն բառը չէր օտա ործի մի դեպքում կախաղանի, իսկ մի այլ դեպքում՝ դեղի իմաստով. էլ ինչ մնաց՝ այդ բանն աներ Սայաթ–Նովան...

Եր իչն իր հայերեն 53-րդ խաղում րում է.

*Չունիմ վաղվան քաղցր փառքըս, հիմի ԴԱՐԸՆ շատացիլ է...*

Ինչպես տեսնում ենք, այստեղ «ԴԱՐ»-ն հակադրված է «Քաղցր»-ին, ԴԱՐ-ը ԴԱՌՆ բառն է, որը խաղերում րված է փափուկ Ր-ով, որովհետև խաղերը րված են վրացատառ, իսկ վրացերենում կոշտ Ռ չկա:

Բայց ինչ է այդ ԴԱՌՆ-ը: Ստ. Մալխասյանցի բառարանում այն բացատրվում է՝ անախորժ՝ հո եպես, տխրալից, վշտալի... (հատ. 1-ին, էջ 488., հրատ. 1944 թ.):

Սա այն դառն-ն է, որը ռուս նշանավոր րող Մաքսիմ Գորկին, իր վշտալի կյանքը նկատի առնելով, այն դարձրեց իր համար րական անուն:

Մեր անզու ական ուսանի մոտ նույնպես ԴԱՐ-ն կյանքի դառնությունն է՝ ՎԻՇՏ-ը:

Այժմ փորձենք խաղերում ԴԱՐ-ը փոխարինել ՎԻՇՏ-ով:

*Թեզուզ հազար դարդ ունենամ ՎԻՇՏՍ մունաթ չը քաշե... (Չ. 15)*

*Աջաբ փու<sup>ն</sup>ց դիմանամ յիս էս չափ ՎՇՏԻՆ... (Չ. 20)*

*Ոչինչ ՎՇՏՈՎ չլավացավ...*

*Վա՛յ քու ՎՇՏԻՆ դարիբ բլբուլ...*

*Մե մարթ չը կեր ազատիլ էր, Սայաթ-Նովեն ՎՇՏՈՒՄ մնաց... (Չ. 33):*

*Օրըս էսպես անց է կացի ՎՇՏԵՐՈՎ, ՎՇՏԵՐՈՎ... (Չ. 41)*

*Ափսոսալու հազար ափսոս, յիս էս դադա (չափ) ՎԻՇՏ ունենամ... (Չ. 57)*

**2. Ք Ա Ր** – Այս բառը նույնպես ործածվում է մի քանի իմաստով, այն է՝ քարանձավ, կռիվ, ործ, օ ուտ և ազդեցություն:

**Ք Ա Ր** – ը պարսկերեն բառ է, որը նշանակում է՝ օ ուտ, ազդեցություն (Ստ. Մալխասյանց, հատ. 4-րդ, էջ 568, հրատ. 1945):

Ինչպես և պարսկերենից փոխառած մի քանի այլ բառեր, «**Ք Ա Ր**» բառը մեր լեզվում ստացել է այլ իմաստ: Օրինակ՝ ջի յարը լյարդն է, բայց այն մեր լեզվում ործածվում է սրտի իմաստով (անջի յար՝ անսիրտ), կամ խալաթը պարսկերեն «նվեր» բառն է, բայց մեր լեզվում այն վերնագ էստի իմաստ ունի և այլն:

Ուրեմն այսպես՝ երբ մեկը ծանր հիվանդ է լինում և անհույս, նրա մասին խոսելիս մեր մի քանի բարբառներում ասում են. «ծանր է, քար չկա», կամ երբ հիվանդին տրված դեղը չի օ նում, այդ դեպքում ասում են. «դեղը քար չարեց» և այլն:



Այսպիսի դեպքերում մեր լեզվի մեջ ՔԱՐ–ը նշանակում է ՓՐԿՈՒ-  
ԹՅՈՒՆ: Դեռ այս իմաստով էլ օ տա ործել է Սայաթ–Նովան:  
Փորձենք տեղադրել խաղերում.

*Վանք սիրե, անապատ սիրե, ՔԱՐ (փրկություն) սիրե... (Հ. 16)*

(Այստեղ խոսքը հո ու փրկության մասին է):

*Դովլաթըն էյթիբար չունի, յիփոր կերթա ուրուշ ՔԱՐՈՎ...*

Նշանակում է.

Դովլաթըն (ինչքը) էյթիբար (վստահություն) չունի, յիփոր (որով-  
հետև) կ նա ուրուշ քարով (ուրիշ փրկության համար): Այստեղ եր ի-  
չը նկատի ունի մարմնական փրկությունը: Ըստ Սայաթ–Նովայի՝ ինչ-  
քը (դովլաթը) մարդու համար պետք է միայն մարմնական կյանքի  
համար, իսկ մարմնական կյանքը հավերժական չէ, որովհետև «Աշ-  
խարհըս միզ մընալու չէ...»,— եզրակացնում է եր իչը...

*Բըլբուլն ասաց. «Վարթիս խաթրի Քարեն էրվածիմ...» (Հ. 48):* Նշա-  
նակում է. Վարդիս խաթրի (պատվի) քարեն (փրկության համար) էր-  
ված են:

Իսկ ինչպե՞ս է եր իչ–բըլբուլը իր վարդ–սիրածի պատվի փրկու-  
թյան համար վառված. «Տասնումեկ ամիս մունջ իմ կացի...»,— հա-  
ջորդ տողում ասում է նա: Ասել ենք, որ այստեղ եր իչը ի նկատի  
ունի այն հան ամանքը, որ իր սիրածի խնդրանքով (Գ. 23) սիրածին  
նվիրված խաղեր չի րել՝ նրան չվարկաբեկելու նպատակով:

**3. Մուտ – Այս բառը բացատրված է Արևմուտ և Մտիր իմաստնե-  
րով: Այստեղ մասամբ ճիշտ է Արևմուտը: Փաստորեն ՄՈՒՏ–ը ՄՈՒԹ  
բառն է, որը Սայաթ–Նովան օ տա ործել է ԵՐԵԿՈ–ի իմաստով:  
Այժմ տեղադրենք բառը.**

*Ո՞վ կոսե, թե յիս կու ապրիմ առաուտեմեն ինչրու  
ՄՈՒՏԸՆ... (Հ. 53)*

Նշանակում է՝

*Ո՞վ կասի, թե ես կապրիմ առավոտից մինչ եՐԵԿՈ:*

*ՄՈՒՏ բախչեն նազով, քիզ գովիմ սազով, յար, իլթիմազով... (Հ. 29)*

Նշանակում է՝

*ԵՐԵԿՈՅԱՆ այգին նազանքով...*

Սրա ակնառու ապացույցն այն է, որ հիշյալ խաղում եր իչը սիրածին «բախչեն» է հրավիրում («Թաք դու բախչեն աս...»), երբ որ «յիր նային նամով թուփըն թացվիլ է» (խոսքը ցողի մասին է), իսկ հայտնի է, որ «յիր նային նամով» (ցողով) միայն երեկոյան կարող է «թուփըն թացվիլ»:

Այս մասին Սայաթ–Նովան չափազանց պարզ րում է վրացերեն 26–րդ տողում.

*Արի՛, գողալ, բախչեն գընանք ման գալու,  
Բաղն անուչ է, վարթն անուչ է, ծառն անուչ.  
Խոսկ տուր մինչ լուս էնտեղեմեն դուս չգանք,  
Լուսնյակն անուչ, օրն անուչ, դիգարն<sup>194</sup> անուչ:*

Քառյակից պարզ երևում է, որ եր իչը սիրածին երեկոյան է հրավիրում ման ալու, որովհետև երեկոն է, որ «սեյրանի վախտ է» (ման ալու ժամանակ):

4. Հ Ի Դ – Սիրուց վառված մեր ուսանի հայերեն խաղերում 20–ից ավելի ան ամ օ տա ործված է ՀԻԴ բառը: Սակայն եր չի խաղերի բացատրական բառարաններում այն բացատրված է Սուր, Կատաղի, Հետ, ան ամ, Հետևից և Հետո իմաստներով:

Կարելի է ասել, որ վեց բառերից միայն «հետ»–ն ու ան ամ»–ն են, որ 5 թե 6 ան ամ ճիշտ բացատրություն են տալիս, մնացած բոլոր դեպքերում հիշյալ վեց բառերով բացատրելիս խաղերը իմաստազրկվում են:

Այսպես, օրինակ՝ հայերեն 9–րդ խաղում րված է.

*Ման իմ գալի դիլգարի<sup>195</sup> ՀԻԴ,  
Վուսնց դարիբ բըլբուլ խարի<sup>196</sup> ՀԻԴ,  
Դու վարթի ՀԻԴ, յիս յարի ՀԻԴ,–  
Դու մի՛ լաց լի, յիս իմ լալու:*

Այս ՀԻԴ–ը «հետ»–ը չէ, որովհետև հակասում է տողերի մտքին (անտրամաբանական է ման ալ սիրածի հետ և նրա համար լաց լինել), ուստի բառարան կազմողները այն թար մանել են իբրև

<sup>194</sup> Դիդար – դեմք:

<sup>195</sup> Դիլդար – սիրած:

<sup>196</sup> Խար – վարդի վնասատու:

«հետևից»։ Սակայն այս «հետևից»-ը ևս անտրամաբանական է ու անհիմաստ. ինչու՞ պիտի եր իչը ման ար իր սիրեցյալի հետևից այն-պես, ինչպես բլբուլը խարի հետևից, չէ՞ որ խարը վարդի վնասատուն է և բլբուլի թշնամին և ոչ թե սիրածը...

Եթե ոչ այս է և ոչ էլ այն, ապա ի՞նչ է այդ ՀԻԴԸ:

Հայերեն 18-րդ խաղում ղված է.

*Թե դուն էջխի ՀԻԴ, մանգալըն հարցընիս  
Ձի դիմանա Բոստոմ Ձալըն՝ հարցընիս...*

Այստեղ Հիդ-ը Մ. Հասրաթյանի կողմից թար մանված է իբրև «սուր», իսկ «ման ալըն»՝ իբրև ման աղն, և դուրս է բերել, որ սերը սուր ման աղ ունի, այլ կերպ ասած՝ մահվան երանդի ունի...

Նախ ասենք, որ սխալ է վերծանված «ման ալըն» բառը: Մանրագնին ուսումնասիրելով Սայաթ-Նովայի ծեռա իր Դավթարը՝ մեզ պարզ դարձավ, որ բազմաթիվ թուրքերեն բառերում «Ղ» տառի փոխարեն ղված է «Գ» տառը: Նույն բանը տեղի է ունեցել և այս բառի հետ: Եր չի բառն եղել է «Ման Ղալն», որը նշանակում է կրակարան (քուրա, հնոց և այլն): Եվ որ էլիս մանդալ (քուրա) ունի, կարելի է հանդիպել եր չի մի շարք խաղերում: Ահա հայերեն 49-րդ խաղի երկու տողը.

*Մըտա էջխի քուրեն խալիս<sup>197</sup> դառնայու,  
Սիրտըս էլավ Քե ու ԱՅԻԲ, էրկու Բեն... (քաբաբ):*

Հենց այս քաբաբ (խորոված) դառնալուն է, որ չի կարող դիմանալ նույնիսկ Բոստոմ Ձալըն՝ թե որ հարցընիս, իսկ քուրան (մանդալը) ե՞րբ կարող է քաբաբ անել, պարզ, երբ վառված է լինում...

Այսպիսով՝ «Հիդ ման ալըն» նշանակում է ՎԱՌ ՄԱՆՂԱԼՆ:

ՀԻԴ-ը թուրքերեն ՀԻԴԴԵԹ բառի արտաբերվող ձևն է (բանավոր խոսքում), որը Սայաթ-Նովայի խաղերում ղվել է այնպես, ինչպես ասվել է բանավոր խոսքում (սղելով բառի նախավերջին Ե տառը): Այն հայերեն նշանակում է Վառ, Վառված, Ցասկոտ, Պայծառ և այլն:

Եր իչը այս բառն ավելի արտահայտիչ դարձնելու համար երբեմն շաղկապում է «կրակ» բառի հետ:

<sup>197</sup> Խալիս – գուտ:

էջիւր ՎԱՌԻ ԿՐԱԿ Է Էրվելով գու քա. –  
Շարթ մարթ կոսե յիս յարի ՀԻԴ (վառած) ման գու քամ...  
Գընա ՀԻԴ ԸՆ (վառվելու) խաղ մի՛ անի,  
Էտ ԿԸՐԱԿԸՆ չաղ (թեթ) մի՛ անի... (Հ.6)

Աջաբ (արդյոք) միգ ԴԻԴ (վառելով) ի՞նչ իս կամում սրտետ մե խաբար իմանա.

*Դուև ԿԸՐԱԿ, հաքածըտ ԿԸՐԱԿ, վու՞ր մե ԿԸՐԱԿԻՆ  
դիմանամ... (Հ. 35)*

Այժմ մեր բերած նախկին օրինակը, ինչպես նաև մնացած ԴԻԴ պարունակող խաղերը բացատրենք ՎԱՌ բառով.

*Ման իմ գալի դիլգարի ՀԻԴ (վառած),  
Վուեց դարիբ բըլբուլ խարի ՀԻԴ (վառած),  
Դու վարթի ՀԻԴ (վառած), յիս յարի ՀԻԴ (վառած)  
Դու մի՛ լաց լի, յիս իմ լալու:*

(Այս տան նախորդ քառյակում վերջին երկու տողերը այս տան վերջին երկու տողի հայերեն տարբերակն են.

*«Քի վարթն էրից, ինձ իմ յարըն,—  
Դու մի՛ լաց լի, յիս իմ լալու»:*

*Բըլբուլի ՀԻԴ (վառած) լաց իս էլի (լաց ես եղել)...  
Բըլբուլի ՀԻԴ (վառած) լալ իս արի (համբացել ես)... (Հ.3)  
Քի գարթարած տեսնիմ ՀԻԴ (վառ) ծաղկագարթին... (Հ. 20)  
... մըհլամըս (սպեղանիս) հիդ (վառված յարին (վերքին))  
մնաց... (Հ. 33)*

Ամեն մարթ չի կանա մըտընի էջխիտ ջուրըն ՀԻԴ (վառ, տաք) է գալում... (Հ. 39)

*Էրագումըն տեսածի ՀԻԴ (վառած) միգմե (մեղանից) հեսաբ (հաշիվ)  
մի՛ անի (մի պահանջիր),*

*Յիս խոմ էն գըլխես էՐԱԾ իմ, նորմեկանց քաբաբ մի՛ անի...*

Եր իչը այս տողերով ուզում է թա ավորի մոտ արդարանալ այն բանով, որ իր սիրո մեջ ինքը մեղք չունի, որովհետև այն երագով տրված է, այսինքն՝ բուբա է (նախախնամության կողմից տրված)...

5. ԵԿ, ԱՐԻ, ՍԻՐՏ, ՍԻ ԿԵՆԱ ԴՈՒՆ ՍԵ ԴԱՄԱՂԻ.– «Արի ինձ անաճ կալ, այ դիվանա<sup>198</sup> սիրտ» հայերեն խաղում (16) բնա իրը այժմ չկա: Խաղը մեզ հասել է Գ. Ախվերդյանի վերծանմամբ:

Ախվերդյանի վերծանության մեջ խաղի 3–րդ տան առաջին տողը հետևյալ տեսքն ունի.

*Ե՛կ, արի՛, սի՛րտ, մի՛ կենա դուն մե դամաղի.*

Այս տողը, համեմատած խաղի մյուս տողերի հետ, մեկ վանկով ավել է:

Տողի ավել վանկը վերացնելու նպատակով Մորուս Չասրաթյանը փոխել է ամբողջ տողի միտքը և զրկել իր սեփական իմաստից:

*Ե՛կ, արի՛, սի՛րտ, մընա՛ դուն մե դամաղի.*

Եթե Ախվերդյանի վերծանված տողի ավել վանկից տուժել էր տողի միայն ձևը (չափը), ապա Չասրաթյանի մոտ աղավաղված է բովանդակությունը ընդհանրապես:

Այժմ փորձենք պարզել, թե որն է տողի ձևը և որը՝ բովանդակությունը.

ա) Ձևը – Բնա թուև տողը եղել է. «Արի՛, սի՛րտ, մի՛ կենա դուն մե դամաղի»,— այստեղ ավել է տողասկզբի «Եկ» բառը, որը ինքնին մեկ վանկ է, որով և ավել են տողի վանկերը.

«Եկ»–ը ավելորդ է հետևյալ պարզ պատճառներով.

1. Տողում բառի միտքը կրկնվում է (Եկ, Արի), որը ոչ մի նպատակ չի հետապնդում:

2. «Եկ»–ը Սայաթ–Նովայի բառը չէ: Այս բառը բացառություն է եր չի խաղերում, նրան հարազատ է «ԱՐԻ» բառը: Ահա նրանք.

*Արի միզիդ մե լավ կացի... (Չ. 7)*

*Արի, բըլբուլ խոսի բարըն... (Չ. 9)*

*Արի ինձ անգաճ կալ... (Չ. 16)*

*Արի մե ուհամ արա... (Չ. 17)*

*Արի համով դուլուղ արա... (Չ. 37)*

*Արի նըստի Սայաթ–Նովա... (Չ. 25) և այլն:*

բ) Բովանդակությունը — Մորուս Չասրաթյանը իր ծանոթա թույսյան մեջ թուև է. «Ստացվում է այնպես, որ եր իչը դիմում է իր սրտին, որպեսզի այն չմնա մեկ տրամադրությանը (դամաղի) «մի՛ կենա

<sup>198</sup> Դիվանա – խենթ:

դու՛ն մե՛ դամաղի», իսկ սա ամբողջությամբ է հակասում խաղի ո՛րում: Մեզ համար կասկածից վեր է, որ բնա՛րում ըված է եղել. «Մնա դու՛ն մե՛ դամաղի»:

Սակայն ո՞րն է խաղի ո՛րին, որին իբր թե հակասում է «մի կենա՛ դու՛ն մե՛ դամաղի» արտահայտությունը: Խաղի ո՛րին հետևյալն է.

*Արի ինձ անգաճ կալ, այ դիվանա սիրտ...  
էն բանն արա, վուր աստծու շարքումն է...*

Այն է.

*Հպարտութի՛ն չանխ՝ դուր գու քաս Տերիտ,  
Խոնարութի՛ն արա կանց քիզ դեվերիզ...*

Որն այնքան էլ հեշտ չի արվում.

*Սայաթ—Նովա, էրնեկ քիզ, թե էս անխ  
Հոքուտ խաթրի մարմնուտ ումբըը կես անխս...*

Չարց է առաջանում՝ արդյոք տրամաբանակա՞ն է, որ եր իչը իր սրտին հորդորում է, թե՛ «մընա դու՛ն մե՛ դամաղի», այսինքն՝ մնա մեկ տրամադրությամբ, այսինքն՝ անդրժելի, նույնն է, թե՛ համառի, իսկ երեք տող հետո նրանից պահանջում է. «հպարտութի՛ն չանխ...», «խոնարութի՛ն արա...» և այլն: Իհարկե ոչ: Մարդը պարզապես ասել է, որ. «Արի՛, սի՛րտ, մի՛ կենա դու՛ն մե՛ դամաղի...», այսինքն՝ մի՛ մնա մեկ տրամադրությամբ, որը նույնն է թե՛ հպարտություն (այստեղ՝ ոռոզություն) մի՛ արա, խոնա՛րի եղիր, մի՛ համառի...

Եթե մեր բանաստեղծ—փիլիսոփայի մոտ այս միտքը ամփոփված է խաղի մեջ, ձևի ու չափի շրջանակներում, ապա երմանացի փիլիսոփա Յե ելի մոտ այն պարզաբանված է մանրամասն: Յե ելը՝ ըում է. «Համառը համառում է իր կամքի վրա սոսկ այն պատճառով, որ այդ իր կամքն է. նա դրա համար բնական ոչ մի հիմք չունի, այլ կերպ ասած՝ նրա կամքը ինչ—որ համընդհանուր արժանություն ունեցող բան չէ:— Ինչքան անհրաժեշտ է կամքի ուժ ունենալը, որը համառում է մի բնական նպատակի վրա, այնքան ատելի է համառությունը, որովհետև ուրիշների նկատմամբ միան՝ ամայն եզակիական է ու բացառող: Իսկական ազատ կամքը պատահական բովանդակություն չունի: Ոչ պատահական է միայն նա:

Մաքուր կամքին հատուկ չէ հանուն մի որևէ հատուկ բանի որ-  
ծելը: Երբ այդ տեղի է ունենում, ապա կամքը հանդես է ավիս որպես  
կամայականություն, քանի որ վերջինս օժտված է սահմանափակ  
շահա ռուքայամբ և իր որոշարկունները վերցնում է բնական մղում-  
ներից ու հակուններից...<sup>199</sup>»:

Եթե Յե ելը պնդում է, որ «մի բնական նպատակի վրա» համա-  
ռելը ավելի է և «համընդհանուր արժուևություն ունեցող բան չէ»,  
ապա Սայաթ-Նովան ասում է. «հպարտութիև չանիս», «խոնարութիև  
արա», որովհետև «Աստված դիփուևանցըն մին հոքի էրիտ»: Եթե Յե-  
ելի մոտ «Մաքուր կամքին հատուկ չէ հանուն մի որևէ հատուկ բա-  
նի ործելը», ապա Սայաթ-Նովան իր սրտից պահանջում է մաքուր  
լինել («Յալալ մըտիկ արա հացի ու աղի»), կամակորություն չանել,  
«մե դամաղի» (մեկ տրամադրության) չմնալ, Յե ելի բառերով ասած՝  
հեռու մնալ «բնական մղումներից ու հակուններից»...

Այսպիսով՝ մեզ համար կասկածից վեր է, որ տողը բնա թում  
եղել է.

*Աբի՛, սի՛րտ, մի՛ կենա մե դամաղի...*

Մեր ենթադրությունն այն է, որ Ախվերդյանի ձեռքի տակ եղած  
ձեռա իր խաղը թառված է եղել մեկ ուրիշի կողմից, որը սխալմամբ  
տողը սկսել է «Եկ»-ով, սակայն գ ավով, որ սխալ է, թողել է այն և շա-  
րունակել է «Արի»-ով՝ մոռանալով ջնջել նախորդ «Եկ»-ը:

**6. ԹԵ ԿՈՒ ՊԱԿՍԻՄ, ՔԻՉ ԿՈՒ ՊԱԿՍԻՄ...** «Դուն էն ըլխեն...»  
հանրահայտ խաղի բնա իրը նույնպես չի հասել մեզ: Այս խաղը մի  
դիմում է վրաց Յերակլ 2-րդ թա ավորին: Յայտնի է, որ Սայաթ-Նո-  
վան եղել է սոսկ պալատական եր իչ: Երբ նրան ամբաստանել են  
թա ավորի մոտ, նա այս խաղով դիմում է թա ավորին՝ իր անմեղու-  
թյունը ապացուցելու համար.

*Քանի գուզե արբաբ<sup>200</sup> ըլի դուլըն աղին դավ տալու չէ.*

*Դու քու սիրտըն խտտակ պահե, յաղի խոսկըն ավտալու չէ...*

Այս խաղի նախավերջին տողը այժմ մեզ հայտնի է հետևյալ  
տեսքով.

*Թե կու պակսիմ, քիզ կու պակսիմ...*

<sup>199</sup> Հեգել, Փիլ. ներած., Հայպետհրատ, 1964 թ., էջ 71:

<sup>200</sup> Արբաբ – ձեռնահաս, ճարտար:

Թվում է, թե այս տողով եր իչը ուզում է թա ավորին ասել, որ ինքը թա ավորի համար անփոխարինելի է (քեզ կու պակսիմ)։ մի միտք, որը լրիվ հերքվում է հենց նույն տողին նախորդող տողի հմաստով.

*Թեգուզ ըլիմ, թեգուզ չըլիմ, մեջլիսներուն սազ չի պակսի...*

Ուստի թա ավորին ոչինչ չի պակսի Սայաթ–Նովայի լինել–չլինելով, որովհետև նա առանց Սայաթ–Նովայի էլ իր «մեջլիսներ»–ը (խնջույքները) կունենա։ Հապա էլ ի՞նչ կարիք կար ասելու, որ «քիզ կու պակսիմ»:

Երբ մեծ ուշադրությամբ կարդում ենք ամբողջ խաղը, տեսնում ենք, որ այն ավելի շուտ վիրավորված իմաստունի պատասխան է, քան թե խնդրանք կամ բողոք։ Նա նույնիսկ թա ավորին դիմում է որպես հավասարը հավասարին. «Դուն էմ ըլխեն իմաստուն իս, խելքըտ հիմարին բաբ<sup>201</sup> մի՛ անի»։ Դեռ ավելին՝ նա թա ավորի ուժը տեսնում է միայն նրա իրավունքի մեջ, որը, սակայն, բիրտ ուժ է և միայն «սելավի պես» (հեղեղի պես) ավերել իտե ու սելավի պես էլ անցողիկ է, իսկ իր՝ եր չի ստեղծա ործությունները անխորտակելի են, ուստի և՛ հավիտենական.

*Ամեն մարթ չի կա կանա խըմի, իմ ջուրըն ուրիշ ջըրեն է։*

*Ամեն մարթ չի կանա կարթա, իմ գիրըն ուրիշ գըրեն է։*

*Բունիաթըս<sup>202</sup> ավաղ չիմանաս քարափ է, քարուկըրեն է*

*Սելավի պես, առանց ցամքիլ, դուն շուտով խարաբ մի՛ անի...*

Հարց է առաջանում, եթե բանն այսպես է, հապա էլ ի՞նչ է պահանջում եր իչը թա ավորից։ Հարցի պատասխանը խաղի վերջին տողն է.

*Սայաթ–Նովու գերեզմանըն Հիզ, Հաբաշ, Արաբ մի՛ անի։*

Այս տողի միտքն այն է, որ եր իչը իր ործով անմահ է, թա ավորը միայն ֆիզիկապես կարող է նրան տուժել, այն է՝ տարա իր դարձնել, նրա երեզմանը իր ծննդավայրից հեռու թողնել...

Այսպիսով խաղի նախավերջին տողի միտքն այն չէ, որ եր իչը կպակասի պալատի ու թա ավորի համար, այլ այն, որ ինքը՝ եր իչը, կպակասի միայն ֆիզիկապես (աշխարհից), որը, ինչպես երևում է

<sup>201</sup> Բաբ – հավասար:

<sup>202</sup> Բունիաթ – հիմք:



խաղի մտքից, այնքան էլ եական չէ, որովհետև իր որժը կմնա աշխարհում...

Տողը բնա թում եղել է.

*Թե կու պակսիմ ՅԻՍ կու պակսիմ, աշխարհիս մե մազ չի պակսի...*

7. ԳիՉՆԻՑ– Գայերեն 43–րդ խաղը սկսվում է հետևյալ տողով.

*«Աջաբ քու սիրտըն ո՞վ շինից խոնարից ՀիՉՆԻՑ բեղամաղ»:*

Մ. Գասրաթյանը, այս տողի «շինից» (շինեց) բառի միտքը վերցնելով բառացի (պատրաստեց), **հիզնից** բառը թար մանել է իբրև ՊԱՅԱՆԳ (հեմակ), մի բառ, որը ոչ մի տրամաբանական կապ չունի այս խաղի մտքի հետ:

Նախ ասենք, որ Սայաթ–Նովայի մոտ այս «շինից» բառը, ինչպես մի շարք այլ խաղերում, այնպես էլ այստեղ ԴԱՐՁՐԵՑ–ի իմաստ ունի, Ահա այդ բառը.

*Ածողիս էրկու կու ՇԻՆԻՍ (կղարձենեմ)... (Հ. 1)*

*Տեսնողին Մեջլում կու ՇԻՆԻՍ (կղարձենեմ)... (Հ. 13)*

*... «Բի գարար ՇԻՆԵՑԻՐ (գարձրիր)... (Հ. 26)*

*Դոստիրըս դուշման ՇԻՆԻՑԻՐ (գարձրիր)... (Հ. 31) և այլն:*

«Աջաբ քու սիրտըն ո՞վ շինից խոնարից, ԳիՉՆԻՑ բեղամաղ» տողի միտքը հետևյալն է. «Արդյոք քո սիրտն ո՞վ դարձրեց ԽՈՆԱՐ–ԳԻՑ, ԳԵՉԻՑ անտրամադիր (բեղամաղ)»:

Այս ԽՈՆԱՐՉԸ և ԳԵՉԸ ինքը եր իչն է, որից սիրուհու սիրտը անտրամադիր է դարձել ուրիշների դրդմամբ (Աջաբ քու սիրտըն ո՞վ շինից...):

Այդ է ապացուցում եր չի կողմից իր յարին ուղղած հարցը՝ մեկ տող հետո.

*Յար, յիս քեզ ի՞նչ գեթ<sup>203</sup> իմ արի՝ նստած իս միզնից բեղամաղ...*

Այո՛, ԽՈՆԱՐՉ և ԳԵՉ եր իչը իր յարին ոչ մի վատություն ( եթ) չի արել, սակայն նա եր չից բեղամաղ է եղել, այնինչ, ընդհակառակը, եր իչը պետք է բեղամաղ լիներ նրանից.

«Քամեցիր էշխտ ման անով<sup>204</sup>, յիս պիտիմ քիզնից բեղամաղ»,— թում է եր իչը:

<sup>203</sup> Գեթ – վատություն:

<sup>204</sup> Մանգանա – մամուլակ:

Այսպիսով՝ ՀիՋՆԻՑ–ը հայերեն ՀեՁ բառն է՝ հոլովված (բաց.) ՀեՁ–ից:

**8. ՍԱՅԱԹ–ՆՈՎԱՆ ՄԵԿՆ Է...** – Սայաթ–Նովան այն եզակի ստեղծա ործողներից է, որոնք, շատ լավ իտակցելով իրենց արվեստի հմայքն ու ուժը, անծամբ տվել են իրենց նահատականը և բնորոշել իրենց տեղը պատմության մեջ:

Եթե Հորացիոսը իր մասին րում է.

*Կերտեցի Հուշարձանն իմ, անագից ավելի պինդ,  
Բարձրաբերձ, ավելի քան բուրգերն արքաների...*

Իսկ Պուշկինը՝

*Բարձրացրի անձեռակերտ ես Հուշարձանն իմ վեհ,  
Ձի մամուռովի դեպ այն տանող, ժողովրդի ճամփան,  
Անհնազանդ գլխով նա խոյացավ ավելի վեր  
Հուշայունից այլքսանդրյան...*

Ապա Սայաթ–Նովան, դիմելով վրաց արքային, րում է.

*Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ գիրըն ուրիշ գրբեն է:  
Բունիաթըս ավազ չիմնաս՝ քարափ է, քարուկրբեն է...*

Սակայն, ցավոք սրտի, Սայաթ–Նովայի րական ժառան ությունը մեզ է հասել մեծ մասամբ ուրիշի կողմից րի առած տեքստերով, հետևաբար՝ որոշ աղավաղումներով, որը մեզ երբեմն առիթ է տալիս այսօր Սայաթ–Նովայի մասին անելու ոչ ճիշտ դատողություններ:

Խորեն Սար սյանը, իր «Սայաթ–Նովա» րքի (ՀԽՍՀ ԳԱ հրատ. 1963 թ.) 3–րդ լխում վերլուծելով Սայաթ–Նովայի դեռևս լրիվ չվերծանված ու լավ չուսումնասիրված թուրքերեն էշխի ծովի մեջեն հանած... (1) Դավթարի 77 էջի խաղը, խաղի՝ աղավաղումներից առաջացած հակասական մտքերը, հան ում է հետևյալ եզրակացությանը.

«Սուտ է ամեն ինչ,– հանկարծակի ու զայրացած ասում է Սայաթ–Նովան՝ ծայրահեղ ու ևորությունից թեքվելով ծայրահեղ հուսահատության կողմը.– ոչինչ չկա իմ մեջ՝ ո՛չ կրակ, ո՛չ անձ: Չհավատա՞ք իմ ասածներին: Իմ սրտի քուրեն վաղուց մարել է: Միակ իսկը, միակ ճշմարտությունը այն է, որ բեռս արևի դեմ դնելուց կհավլի, կանձանա, որովհետև այն ավելի չէ, քան սովորական ծյունը»:

Պարզ է, եթե նախօրոք լավ ուսումնասիրված ու վերծանված լի-  
ներ մեր իմաստուն եր չի այս խաղը, անկասկած, նրա մասին այս-  
պիսի տողեր չէին ըվի, այն էլ վաստակաշատ բանասերի կողմից,  
որովհետև Սայաթ–Նովան հենց իր աղափարախոսությամբ բացա-  
սում է վերոհիշյալ եզրակացությունը.

*Եկ մի պըտրե մե ախպըրում էրկու ջուր՝  
Մեկը քաղցըր, մեկն էլ ըլի դառնահամ... (Ա. 75)*

Իսկապես, երբ մենք հնարավորությունների սահմաններում վեր-  
ծանցցինք «էշիի ծովի մեչեն հանած...» խաղը, նրանում իր վեհու-  
թյամբ վեր բարձրացավ դարձյալ մեր հանճարեղ ուսանը իր անսա-  
սան համոզմունքներով... Խաղում եղած «ծայրահեղությունները»  
միայն ու միայն աղավաղումների արդյունք են:

Խաղի բովանդակությունը հետևյալն է. իր ստեղծա ործություն-  
ները համարելով թանկարժեք ու ան երազանցելի բեռ ( անձ) Սա-  
յաթ–Նովան րում է.

*Բիւրս էնքան մինձացի է վիլը<sup>205</sup> տանիլ չի կանա.  
Վուչ մե սարափ<sup>206</sup> մե հետ լալիս<sup>207</sup> գինը ճարիլ չի կանա...*

Սակայն խաղը այնքան աղավաղված է, որ նույնիսկ խաղի՝ իրար  
հաջորդող տողերը իրարամերժ են: Այսպես, օրինակ՝ խաղի 3–րդ  
տան 3–րդ տողում ըված է.

*Ամեն հուջրիս<sup>208</sup> հազար կապ կա, էլ բաց անիլ չին կանա.*

Սակայն երկու տող հետո.

*Է՛՛, աղանի՛ր, վախենում իմ յիս թալանչեմեն ու գողեն...*

Մի՞թե հազար կապով կապված ու չբացվող բեռի տերը ողից  
կվախենա... Ամենաանտրամաբանականն այն է, որ թալանվելուց  
վախենալով հանդերձ՝ այս տողից անմիջապես հետո ըված է.

*Բիւրս մեկ–մեկ բաց իմ անում շանց իմ տալիս եկողին...*

---

<sup>205</sup> Փիլը – փիղ:

<sup>206</sup> Սարափ – ասյրանքագետ:

<sup>207</sup> Լալ – սուտակ:

<sup>208</sup> Հուջրա – զանձարկղ:

Ինչպե՞ս կարող է թալանից վախեցող մարդն իր ունեցվածքը բացել և ցույց տալ ամեն եկողի:

Սաստիկ հակասական ու անընդունելի է նաև այն, որ իբր Սայաթ-Նովան խաղի 3-րդ տան մեջ իր ստեղծած ործությունները կրակ է անվանում («նար է բիռըս»), իսկ 5-րդ տան մեջ՝ ձյուն («ձյուն է բիռըս»):

Ոչ միայն անհարմար, այլև աններելի է այս ամենը վերա դել Սայաթ-Նովային, որովհետև նա երբեք մի բանին միաժամանակ չէր անվանի և՛ կրակ, և՛ ձյուն...

Դեռ ավելին իբր եր իչը իր խաղի վերջին տողում րել է.

*Սայաթ-Նովուն չհավատաք...*

Պարզ է, որ սա Սայաթ-Նովան չէ, այլ խաղը րի ամնողն է, որովհետև իր մասին Սայաթ-Նովան կասեր.

*Սուտ ասիլըն յիս չիմ գիդի, հրազումըտ տեսած բան է... (Վ. 10)*

Բանից դուրս է ալիս, որ մենք ունենք երկու Սայաթ-Նովա՝ «Քարուկըրեն» հիմքերով, «ամբերում ձեն» հանոց, «սուտ ասիլըն» չիմացող Սայաթ-Նովա և «ձյունե բեռով» իր արվեստի նկատմամբ թերահավատ ու ոչ ճշմարիտ Սայաթ-Նովա...

Իհարկե ոչ: Մենք ունենք միայն առաջինը, երկրորդը սոսկ աղավաղումների արդյունք է:

Ահա այդ աղավաղումները:

Խաղի 4-րդ տան առաջին տողը մեզ է հասել հետևյալ տեսքով.

*Էյ աղալար գորխարամ քի յուքում գերսուն թալանա...*

*(Էյ աղանիր ՉիՄՎԱԽՈՒՄ, վուր բիռըս գընա թալանով):*

Բանն այն է, որ թուրքերենում « որխարամ» բառ չկա, կա « որխուրամ», որը նշանակում է՝ վախենում եմ, և « որխմարամ», որը նշանակում է՝ «չեմ վախենում», հետևաբար բնա րում բառը եղել է « որխմարամ», որից վրիպած է «մ» տառը: Նույն խաղի միայն նախավերջին տան մեջ վրիպած են «էի» (էյ) բառի «ի», «սաթարամ» բառի «ա» «ալմանա վա ալանա» դարձվածքի «վա» շաղկապը (որը գ ացվում է մտքի և վանկի պակասությունից), «շարբաթ» բառի «ա» տառերը:

Ուրեմն տողը բնա րում եղել է հետևյալ կերպ.

*Էյ աղալար ՂՈՐԽԱՐԱՄ քի յուքում գեթսուն թալանա.*

*Գյալ աչարամ թայի-թայի գյորսաթարամ գյալանա...*

*(Էյ աղանիր, ՁԻՄ ՎԱՆՈՒՄ, վուր բիուրս գընա թալանով  
եկեք բացեմ հակ—հակ ցուլց տամ եկողին...):*

Վերևում ասվեց, որ խաղի նախավերջին տողը թար մանված է «Սայաթ—Նովուն չրիավատաք...» ձևով:

Չեռա թուն տողը ըված է.

*Սայաթ—Նովամ դյար, աղալար, ինան մաուն սուզունա.*

Ինչպես տեսնում ենք, այս տողում խաթարված է շարահյուսությունը: Բանն այն է, որ խաղը ըված է ուրիշի կողմից, որը նախավերջին «մանուն» բառը, որը թուրքերենում նշանակում է «իմ», աղավաղել և ըել է կրճատ՝ «Մաուն» ձևով՝ «Ն»-ի վրիպակով:

Տողը հայերեն թար մանելիս թար մանիչը, չգ ալով այս ամենը, մեխանիկորեն այս «իման»-ին է միացրել նրան հաջորդող անիմաստ «մաուն» բառը և ենթադրել, որ դա թուրքերեն «իմանմա» (չիավատաք) բառն է և թար մանել է այդ իմաստով, մինչդեռ բնա թուն տողը եղել է հետևյալ կերպ.

*Սայաթ—Նովայամ, աղալար, ինան մանուն սուզանա.*

Որը հայերեն նշանակում է.

*Սայաթ—Նովան եմ, աղանե՛ր, հավատացե՛ք իմ խոսքին:*

Այստեղ պարզապես խաղը արտա թողը «մանուն» բառի միջից վրիպել է «Ն» տառը, ինչպես որ վրիպել է նույն խաղի վերջին տողի «ար» բառի «ա»-ն, ներքևից 6-րդ տողի «դոշաք» բառի «ա»-ն, որոնցից առաջինի վրիպակները նույն ըջողի կողմից վերական մվել են, իսկ խնդրո առարկա բառերը՝ ոչ:

Եվ իսկապես, Սայաթ—Նովան այլ կերպ չէր կարող ըել, նա թուրքերեն մի այլ խաղում (66) ասում է.

*Է՛յ, աղանիր...*

*Թե սուտ խոսիմ, լեզուս կըտրեք, գուզե արեք բանհոքի,*

*Վերեն Աստված, ներքեն յիս—լեզվիս սուտ չի մոտենա:*

*Էլ ի՞նչ մնաց՝ «Սայաթ—Նովուն չհավատաք...»:*

Սակայն իր «խոսքը», որին հավատալու կոչ է անում մեր սիրելի եր իչը, խաղի վերջին տողն է, որը դժբախտաբար մեզ է հասել ավելի աղճատված ու աղավաղված, քան խաղի մնացած տողերը:

Չնայած դրան՝ հայերենում այդ տողը վերծանված է ու թար - մանված է համեմատաբար լավ: Ահա այն.

*Չլի թե արևուն դընիք, կու հալվե ձյուն է բիռըս:*

Բայց... բայց, ինչպես վերևում ասացինք, Սայաթ-Նովան իր «բիռ»-ը, որն արդեն կրակ է համարել, մի քանի տող հետո այն ձյուն էր համարի:

Մենք ենթադրում ենք, որ խաղ ըի առնողը այստեղ ևս մեխանիկորեն կրկնել է մնացած տների վերջին «բիռըս» բառը:

Ուրեմն, եթե բնա ղում «բիռըս» չի եղել, ապա ի՞նչ է եղել: Բարեբախտաբար մեզ է հասել այս խաղի հայերեն տարբերակը (15), որով, թերևս քիչ տարբերությամբ, եր իչը դարձյալ ովում է իր «բիռըն»:

Բերում ենք հայերեն տարբերակի վերջին տունը.

*Շատ մարթ էստունք կու իմանա, կոսե. «Հալբաթ սա զանգին ա»<sup>209</sup>,*

*Չին գիդի, թե ուշկ ու միտկըս հազար մե բաբաթ»<sup>210</sup> հանգին ա.*

*Մարիփաթով»<sup>211</sup> քաղցըր լիզուն դիփունի»<sup>212</sup> վըրա անգին ա.*

*Սայաթ-Նովեն էնդուր գու լա գըլուխըն մահու ճանգին ա,—*

*Աստված սիրողն ինձ ազատե յարըս մունաթ չը քաշե:*

Ինչպես տեսնում ենք, այս տարբերակում նույնպես «մարիփաթով քաղցըր լիզուն», որն իր եր ն ու խաղն է, իր «բիռըն» իր հարստությունը «դիփունի վրա ան ին ա»՝ ամեն մի հարստությունից թանկ է ու բարձր: Եր իչը դրա նկատմամբ ոչ մի վախ չունի... Ապա ինչի՞ց է վախենում Սայաթ-Նովան՝ «Սայաթ-Նովան էնդուր ու լա լուխըն մահու ճան ին ա»:

Այսպիսով՝ եր իչը իր «բեռի» հավերժության ու կայունության վրա չի կասկածում (և ընդհանրապես մեզ հասած նրա ոչ մի խաղում այդպիսի միտք չկա), նրա ցավն այն է, որ կյանքն է կարճ, որ « լուխըն մահու ճան ին ա» (այս միտքը նրա խաղերում՝ ինչքան ուզեք):

209 Չանգի – հարուստ:

210 Բաբաթ – հարմար:

211 Մարիփաթ – շնորհք:

212 Դիփուն – ամենքի:

Հայերեն 57–րդ խաղում այդ մասին շատ պարզ րում է.

*Ումբրըս հրազի պես գընաց ծառըս չըխերած գիտենաք:*

Հենց այս «ումբր» (իսկական ձևը՝ օմուր), արտասանվում է յու-մուր) բառի փոխարեն և սխալմամբ րված «բիռըս» (թուրքերեն՝ յու-քում) բառը:

Ահա այդ խաղի տների վերջին համ ակապ հատվածները.

*... սաբը<sup>213</sup> վա դարար<sup>214</sup> դուր իուքում (սաբը ու դարար է բեռըս)*

*... դանդու շաքար դուր իուքում (դանդ ու շաքար է բեռըս)*

*... հըրնուր կա դուր իումուր (կհավլի ճյուն և կյանքս):*

Ինչպես տեսնում ենք, համ ավորումը կատարված է բառախա-ղով:

Կա մի ավելի զորեղ փաստ ևս՝ այս ամենը հաստատելու համար:

Մեր պրպտումների ժամանակ հարց առաջացավ ինչո՞ւ է Սա-յաթ–Նովան իր ստեղծա ործությունները ԲեՌ անվանում և ոչ թե անձ, որն ավելի բնորոշ բառ է: Կամ եղե՞լ է ուրիշ մեկը, որ դարձյալ բեռը օ տա ործել է այդ իմաստով:

Պարզվեց, որ այդ բառի օ տա ործման նախապատվությունը պատկանում է մեր հռչակավոր եր չից շուրջ վեց դար առաջ ապրած պարսիկ մեծատաղանդ Սաադիին:

Նա իր «Գուլեստան»–ի «Նախաբան»–ում րում է.

*Ամոթ նրան, ով գնացել, չի թողել գործ արժանի՝*

*Բեռ չի կապել, բայց մեկնելու կանչը հնչեց գամբանի...*

Երբ համենատում ենք Սայաթ–Նովայի խաղը այս տողերի հետ, տեսնում ենք, որ մեր եր իչը քաջածանոթ է եղել Սաադու ստեղծա-ործություններին, որովհետև Սայաթ–Նովայի խաղը մի յուրահա-տուկ պատասխան է Սաադու այս «Նախաբան»–ին:

Շարունակում ենք կարդալ այդ «Նախաբան»–ը, որպեսզի իմա-նանք՝ կա՞ այնտեղ այդ ԲեՌ–ի մասին անհարատևության կասկած, բայց ապարդյուն. Սաադին մեզ «օ նելու» համար ուրիշ բան է ասում.

---

213 Սաբը – համբերություն:

214 Դարար – հանգիստ:

ԿՅԱՆՔԸ ՁՅՈՒՆ Է հուլիսի բորբ արե ակի աչքի տակ...  
Յենց Սաադու այս տողն է դրված եր չի հիշյալ խաղի վերջում.

*Զըլի թե արևուն դընիք, կու հալվե ՁՅՈՒՆ Է ԿԻՆՔԸՍ:*

Բերում ենք խաղի վերջին երկու տունը՝ մեր ուղղումներով.

*է՛յ, աղանե՛ր, ՁԻՄ ՎԱԽՈՒՄ յիս թալանչեմեն ու գողեն*

*Բիուրս մե մեկ բաց իմ անում, շանց իմ տալիս եկողին.*

*Իմ գըլուխըս մատաղ ըլի առնողին ու չառնողին.*

*Համն ու հուտըն աշխարք բըռնից, խիստ դուր գու քա խըմողին*

*Դոշաք<sup>215</sup>, շարբաթ<sup>216</sup>, նուղլ<sup>217</sup> ու նաբաթ<sup>218</sup>, դանդու շաքար է բիուրս:*

*Ժեռ քարիըն ալմաս դառնան, աչկըս վըրեն չի մնա.*

*Թե մարթիք իմ տիսըն չը գան՝ ուրիշի մոգ չեմ գընա.*

*Հեստի<sup>219</sup> էշխի կըրակ ունիմ, ինձ մոգենալ չին կանա,*

*Սայաթ–Նովան եմ, ՊԱՐՈՆՆԵ՛Ր, ՀԱՎԱՏԱՅԵ՛Ք՝ ՃԻՇՏՆ Է՛ն ա՛*

*Զըլի թե արևուն դընիք, կու հալվե ՁՅՈՒՆ Է ԿԻՆՔԸՍ:*

Ինչպես տեսնում ենք, այս խաղում ևս Սայաթ–Նովան դարձյալ «քարուկըրեն» հիմքերով է, նա չի վախենում իր ԲեՌ–ի «հալվելուց» ու թալանվելուց և այն կարող է ամենքին ցույց տալ համարձակ ու ընդմիջտ...

Այո՛, մենք երկու Սայաթ–Նովա չունենք:

Ս Ա Յ Ա Թ – Ն Ո Վ Ա Ն Մ Ե Կ Ն Է . . .

---

215 Դոշաք – եփած մրգահյութ:

216 Շարբաթ – օշարակ:

217 Նուղլ – կոնֆետ:

218 Նաբաթ – բյուրեղաշաքար:

219 Հեստի – այնպիսի:





## ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Հրաչիկ Եզեկիմի Սևոյանը՝ բանաստեղծ, թարգմանիչ, գրականագետ, ՀՀ գրողների միության անդամ, մասնագիտությամբ՝ տնտեսագետ-մանկավարժ, ծնվել է 1931 թվականի սեպտեմբերի 27-ին ՀՀ Մարտունու շրջանի Վարդենիկ գյուղում: Կրթությունը ստացել է գյուղի միջնակարգ դպրոցում: 1950 թվականին ավարտել է դպրոցը և 1951-ին ընդունվել Երևանի ֆինանսական տեխնիկում: Նույն տարում զորակոչվել է Խորհրդային բանակ: Ջորաջրվելուց հետո շարունակել է ուսումը և տեխնիկումն ավարտելուց հետո՝ 1954-ին, ընդունվում էր Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: 1959-ին, երբ ավարտում է համալսարանը, ամուսնանում է և կազմում մի հրաշալի հայկական ավանդական ընտանիք: Ունենում է երեք զավակ՝ մեկ որդի և երկու դուստր, որոնց մվիրվում է անմնացորդ:

1959-ին աշխատում է ՀՍՍՀ ֆինանսների նախարարությունում՝ որպես ավագ տնտեսագետ, այնուհետև՝ Շինարարության նախարարությունում՝ որպես ֆինբաժնի, սպա՝ պլանբաժնի վարիչ: Ճիշտ է, մասնագիտությամբ տնտեսագետ էր, սակայն ոգով և սրտով բանաստեղծ ու մանկավարժ էր Հ. Սևոյանը: 1969 թվականից սկսվում է նրա մանկավարժական գործունեությունը: Սկզբում դասավանդում է Երևանի ֆինանսական տեխնիկումում և ստանձնում վերջինիս հեռակա ուսուցման բաժնի վարիչի պաշտոնը: Այդ տարիներին ստանձնում է նաև «Հայաստանի ժողովրդական տնտեսություն» ամսագրի պատասխանատու քարտուղարի պաշտոնը: 1970-1975 թթ. աշխատում է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում՝ որպես քաղտնտեսության ամբիոնի դասախոս, միաժամանակ քաղտնտեսություն է դասավանդում Երևանի պետհամալսարանում, Ժողովրդական տնտեսության և Գեղարվեստաթատերական ինստիտուտ-

ներում: Նա եղել է նաև գիտաշխատող ՀՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում: 1978–1980 թթ. աշխատել է Հայիրատպետկոմում, սկզբում որպես ավագ, ապա՝ առաջատար խմբագիր: 1980 թվականից «Սովետական գրող» հրատարակչության պլանավորման բաժնի վարիչն էր:

Չնայած իր աշխատանքային ծանրաբեռնվածությանը՝ Հ. Սևոյանը թողել է հրաշալի գրական ժառանգություն, որի մի մասը այսօր ընթերցողին է մատուցվում այս ժողովածուով: Նրա բազմաթիվ ստեղծագործությունները, որոնք լույս են տեսել տարբեր գրքերով, թարգմանությունները, Սայաթ–Նովայի կյանքին վերաբերող գրականագիտական աշխատությունը, նույնիսկ դիսերտացիայի թեման վկայում են այն մասին, որ Հ. Սևոյանը կոչումով բանաստեղծ էր:

Ծանր հիվանդությունը ընդհատեց նրա կյանքը 62 տարեկան հասակում: Աճյունը ամփոփված է Երևանում: Նա իր կյանքի ողին անցավ անբիծ՝ մաքառելով ազնվության, արդարության ու բարու հաղթանակի համար:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՓՐԿՈՒԹՅԱՆ ԽԱՐԻՍԽ

Գլուխ Ա. ԵՐԿՈՒ ԿՐԱԿԻ ԱՐԱՆՔՈՒՄ	5
Գլուխ Բ. ՍԻՐՈ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ	18
Գլուխ Գ. ՍԵԾ ԲԱՔԲԻՆ	32
Գլուխ Դ. ՊԱՐՏՔԻ ՉԱՅՆԸ	44
Գլուխ Ե. ՏԻՋԲՈՆՈՒՄ	57
Գլուխ Ջ. ԱԿԱՍԱ ՎԱՐԴԱՊԵՏԸ	67
Գլուխ Է. ՍԵՐ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ	80
Գլուխ Ը. ՀԱՄՈՋՄԱՆ ԵՎ ԵՐԴՈՒՄԻ ԳԻՇԵՐ	89
Գլուխ Թ. ՍԿՐՏՈՒԹՅՈՒՆ	103
Գլուխ ժ. ԱՌԱՋԵԼՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԳՈՂԹՆ	110
Գլուխ ժԱ. ԴԵՎԻՆ՝ ԴԺՈՒՔ...	124
Գլուխ ժԲ. ԱՇԽԱՐՀԱՀՈԳ ԺՈՂՈՎԸ	141
Գլուխ ժԳ. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԵՐԸ	153
Գլուխ ժԴ. ՆՈՐ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ	172
Գլուխ ժԵ. ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԸ	180
Գլուխ ժՋ. ՏՈՆԱԿԱՆ ՕՐԵՐԸ	206
Գլուխ ժԷ. ՆՈՐ ՄԱՋԱՌՈՒՄՆԵՐ	214
Գլուխ ժԸ. ՍՐԲԱՋԱՆ ԵՐԴՈՒՄ	233
<b>ՀԱՎԱՏԸ</b>	<b>239</b>

### ՆՈՐ ԷՋԵՐ ՄԱՅԱԹ–ՆՈՎԱՅԻ ԿՅԱՆՔԻՑ

<b>ՆԱԽԱԲԱՆ</b>	<b>297</b>
1. Ե՞րբ է ծնվել Սայաթ–Նովան	299
2. Ծագումն ու ծննդավայրը	332

3. Մանկությունն ու պատանեկությունը .....	337
4. Կրթությունը .....	342
5. Սայաթ-Նովան՝ պալատական երգիչ .....	351
6. Սայաթ-Նովան՝ կրոնավոր .....	365
7. Մահը .....	377
8. Գրական ժառանգությունը .....	383
9. Սայաթ-Նովայի անվան ստուգաբանությունը .....	386
10. Հավելված .....	391

ՀՐԱՉԻԿ ՍԵՎՈՅԱՆ  
ՓՐԿՈՒԹՅԱՆ  
ԽԱՐԻՍԽ

Հրատարակչության տնօրեն	Էմին Մկրտչյան
Գեղարվեստական խմբա իր և նկարիչ՝	Արա Բաղդասարյան
Սրբա թուրքունը՝	Լիանա Միքայելյանի
Համակար չային ձևավորումը՝	Վիտալի Արիևի
Համակար չային շարվածքը՝	Լիանա Հարությունյանի

Տպա թուրքունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16:  
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 26 տպ. մանուկ + 1 թերթ կավճ. ներդիր:  
Տպաքանակը՝ 300 օրինակ: Գինը՝ պայմանա թային:



«ԶԱՆԳԱԿ-97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2  
Հեռ.՝ (+37410) 23 25 28  
Ֆաքս՝ (+37410) 23 25 95  
Էլ. փոստ՝ info@zangak.am  
Էլ. կայք՝ www.zangak.am



